Հ. Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

I

ԵՐԵՎԱՆ

ՀՍՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

О. Д. МУРАДЯН

ИСТОРИЧЕСКАЯ ГРАММАТИКА АРМЯНСКОГО ЯЗЫКА

ТОМ I

ФОНЕТИКА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1982

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ I

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

A 11/68644

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1982

ԳՄԴ 81.2 Հ
Մ 992

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս
Է. Բ. ԱՂԱՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
բանասիրական գիտ. դոկտոր Վ. Դ. ԱՌԱՔԵԼՅԱՆ,
բանասիրական գիտ. թեկնածու Մ. Ա. ԱՂԱԲԵԿՅԱՆ

Մուրադյան, Հ. Դ.
Մ 992 Հայոց լեզվի պատմական քերականություն.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982։
Վերնախորագր՝ ՀՍՍՀ ԳԱ, Հ. Աճառյանի անվ. լեզվի ին-տ. Զուգահեռ վերն.՝ ռուս.
Հ. 1, Հնչյունաբանություն /Պատ. խմբ.՝ Է. Բ. Աղայան, 347 էջ.

Աշխատությունը հայոց լեզվի պատմական հնչյունաբանության ամբողջական շարադրանքի առաջին փորձն է։ Նրանում հնչյունական երևույթները քննվում են հայոց լեզվի պատմության բոլոր դրսևորումներում։ Աշխատությունը գրված է այս բնագավառում կատարված ուսումնասիրությունների, գրավոր աղբյուրների ու ժամանակակից հայ բարբառների լեզվական հարուստ նյութի օգտագործմամբ։

Գիրքը օգտակար կարող է լինել բարձրագույն ուսումնական հաստատությունների բանասիրական ֆակուլտետների ուսանողության, ասպիրանտների, ուսուցչության և բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են հայոց լեզվի պատմական քերականության հարցերով։

4603010200
Մ ——————— 58—82 ԳՄԴ 81.2 Հ
703 (02)—82 4 Ար

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1982

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Լեզուների պատմությունը սովորաբար սկսում են նրանց գրի առման շրջանից, թեև հայտնի է նաև, որ ամեն մի լեզու, անկախ այն բանից՝ ունի, թե չունի գրավոր ավանդույթներ, ենթադրում է անընդհատ զարգացմամբ անցած երկարատև ուղի։

Գրավոր ավանդույթներից զուրկ, նոր գրի առնված լեզուների իրաշի պատմությունը փաստորեն թաղված է խոր մթության մեջ։ Այդտեղ գրավոր աղբյուրների բացակայության պատճառով հնարավոր չէ հետևել անցած փուլերում նրանց կառուցվածքի մեջ կատարված փոփոխություններին։ Ճիշտ է, որոշ դեպքերում հնարավոր է ինչ-որ չափով մոտավոր պատկերացում կազմել դրանց հեռավոր անցյալի մասին և այն էլ այն ժամանակ, երբ այդ լեզուները մեկուսացած չեն և ազգակցական կապերի մեջ են այլ լեզուների հետ, սակայն վերջիններիս հետ կատարվող համեմատությունները ի վիճակի չեն ամբողջական գաղափար տալու ոչ միայն նրանցում կատարված փոփոխությունների, այլև նրանց ընդհանուր կառուցվածքի մասին։ Ըստ որում նման համեմատական ուսումնասիրություններն էլ, իրենց հերթին, նպատակ չունեն ներկայացնելու տվյալ լեզվի պատմական զարգացման ընթացքը, այլ լավագույնս աշխատում են, հնարավորության սահմաններում, ուրվագծել կառուցվածքային այն զուգադիպումները, որոնք խարսխված լինելով ծագումնաբանական ընդհանրությունների վրա, այս կամ այն չափով բնորոշում են նրա հնագույն վիճակը։ Նման հիմքի վրա է կառուցվում ամեն մի լեզվի համեմատական քերականությունը։ Այս նույն մեթոդով է կատարվում նաև հին գիր ու գրականություն ունեցող լեզուների նախագրային պատմության ուսումնասիրությունը։

Գիր ու գրականությունից զուրկ լեզուների պատմական անցյալի մասին որոշ պատկերացում կարելի է կազմել նաև նրանց բարբառների (եթե այդպիսիք կան) համեմատական ուսումնասիրության միջոցով։ Այս դեպքում տվյալ լեզվի համեմատական բարբառագիտությունը միաժամանակ նրա լեզվի պատմությունն է։

Վերը ասածից հետևում է, որ լեզվի լիարժեք պատմություն առհասարակ կարելի է ստեղծել միայն այն դեպքում, երբ հետազոտողի ձեռքի տակ կան այդ լեզվի անցած փուլերը ներկայացնող գրավոր աղբյուրներ։

Հին գիր ու գրականություն ունեցող լեզուները այդ հնարավորությունը ընձեռում են այն պարզ պատճառով, որ դրանք իրենց գրավոր հուշարձանների ամբողջության մեջ արտացոլում են իրենց զարգացման պատմական ընթացքը՝ մի կողմից, ամենավաղ հուշարձաններում ներկայացնելով առաջին փուլի՝ գրի ստեղծման շրջանի, լեզվական կառուցվածքը և, մյուս կողմից, այլ աղբյուրներում իրենց մեջ անդրադարձնելով այդ կառուցվածքի հետագա փոփոխությունների պատկերը։

Լեզվի պատմական քննությանը անդրադառնալիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդ պատմությունը ըստ իր նպատակային ուղղվածության կարող է լինել տարբեր բնույթի։ Մի դեպքում այն կարող է կառուցված լինել որպես գրական լեզվի պատմություն, երբ ուսումնասիրության կենտրոնում բացառապես գրական լեզուն է իր հասարակական, քաղաքական ու մշակութային դերով, իր հաղորդակցման ֆունկցիայով (ժողովրդի պատմության տարբեր շրջաններում)։ Մի այլ դեպքում այդ պատմությունը կարող է կառուցված լինել որպես գրավոր լեզվի պատմություն, երբ ուսումնասիրության առարկան առհասարակ գրավոր աղբյուրների լեզուն է, ներառյալ տեղային խոսվածքների առանձնահատկությունները և անհատական, սուբյեկտիվ նորամուծությունները։ Այս դեպքում այն, ինչ-որ չափով, իր մեջ անդրադարձնում է այդ լեզվի բանավոր տարբերակների պատմությունը։ Վերջապես, մի երրորդ դեպքում այն կարող է կառուցվել որպես տվյալ լեզվի ընդհանրական պատմություն, որն իր մեջ կներառի գրական ու գրավոր լեզուների և այդ լեզվի բանավոր տարբերակների պատմությունը, այսինքն՝ այդ լեզվի դրսևորման բոլոր ձևերը։ Այս (ընդհանրական) պատմությունն իր մեջ կարող է ներառել նաև այդ լեզվի նախագրային պատմությունը, այսինքն՝ գրի ստեղծման շրջանից առաջ ընկած փուլերի պատմությունը։ Հնարավոր է նաև այդ պատմությունից առանձնացնել տվյալ լեզվի բանավոր խոսակցական տարբերակների՝ բարբառների պատմությունը, որով կստեղծվի այդ լեզվի պատմական բարբառագիտությունը:

Նպատակայնությունից բացի պետք է նկատի ունենալ նաև լեզվի պատմական ուսումնասիրության բովանդակությունը։ Չափազանց կարևոր է լեզվի բուն պատմությունը որոշակիորեն սահմանազատել պատմական քերականությունից։ Սխալ է այդ երկուսի միավորումը մի գիտակարգի մեջ։ Նման մոտեցման դեպքում շփոթվում են լեզվի պատմության և պատմական քերականության խնդիրներն ու նպատակները, որից և տուժում է բուն առարկայի ուսումնասիրությունը։

Լեզվի պատմության նպատակն է, ժամանակագրական հաջորդականությամբ, տալ տվյալ լեզվի՝ որպես տվյալ հասարակության հաղորդակցության միջոցի, ամբողջական պատմությունը՝ սկսած նրա գրավոր

առաջին վկայություններից մինչև նրա ներկան։ Այդ պատմությունն իր ուսումնասիրության ոլորտում պիտի ունենա առնվազն հետևյալ հիմնական հարցերը. գիր ու գրականության սկզբնավորումը և պատմական այն հանգամանքները, որոնցով պայմանավորվում է դրանց առաջացումը. գրական ու գրավոր լեզուների փոխհարաբերությունը. գրական լեզվի բանավոր-խոսակցական հիմքը, խոսակցական ու գրական լեզուների փոխհարաբերությունը հաղորդակցման պրոցեսում. գրական ու խոսակցական լեզուների հասարակական ֆունկցիաները. գրական լեզվի մշակման հարցերը՝ կապված լեզվի ֆունկցիոնալ պահանջների և արտալեզվական գործոնների հետ. գրական լեզվի մշակման հետ կապված տեսական ու գործնական հարցերի քննարկումը՝ արծարծված պատմության տարբեր շրջաններում, այդ հարցերի գործնական արտահայտությունը գրական լեզվի մեջ. գրական լեզուն և լեզվական ավանդույթը. գրական լեզվի վերաբերմունքը դեպի բանավոր լեզվի բնականոն զարգացումը. գրական լեզվի հասարակական ֆունկցիաների մեջ կատարված փոփոխությունները՝ կապված ժամանակի, տարածության և այլ գործոնների հետ. ժամանակի մեջ գրական լեզվի հիմքի փոփոխությունը՝ պայմանավորված հասարակական կյանքում տեղի ունեցած քաղաքական-տնտեսական, ինչպես նաև լեզվի ֆունկցիոնալ փոփոխություններով. տվյալ տարածքում խոսվող լեզվի բարբառային բաժանվածության հարցերը ժամանակային տարբեր կտրվածքներում, այդ բարբառային բաժանվածության աստիճանը ժամանակի մեջ և բազմաթիվ այլ հարցեր, որոնք անմիջապես կապվում են լեզվի արտաքին պատմության հետ։ Ինքնին հասկանալի է, որ այս հարցերի քննությունը կատարվում է ժամանակի մեջ։

Սրան հակառակ, լեզվի պատմական քերականության խնդիրն է ուսումնասիրել ու ներկայացնել (նկարագրել) լեզվի տարբեր մակարդակներում հանդես եկող միավորների անցած պատմական ուղին, նրանց փոփոխությունը ու կյանքը, նոր առաջացող երևույթների գործառության ոլորտները, դրանց տարածման սահմանները. լեզվական երևույթների գործառության սահմանափակման կամ ընդլայնման նկատվող միտումները... Այլ կերպ ասած՝ պատմական քերականությունը վերաբերում է լեզվի ներքին կյանքին, արտահայտության ու բովանդակության պլաններում հանդես եկող նրա միավորների ժամանակային շարժմանը և այն պայմանավորող գործոնների բացահայտմանը։

Պատմական քերականությունը, քանի որ ընդգրկում է լեզվի բոլոր մակարդակների ուսումնասիրությունն առանձին-առանձին, ուստի և կարող է տրոհվել համապատասխան բաղկացուցիչ մասերի՝ Պատմական հնչյունաբանության, Պատմական բառագիտության, Պատմական ձևաբանության, Պատմական շարահյուսության, որոնք և միաժամանակ կազմում են Պատմական քերականության բովանդակությունը։

* * *

Այս աշխատությունը նվիրված է հայերենի պատմական հնչյունաբանությանը։ Նրա նպատակը հայոց լեզվի պատմական բոլոր փուլերի, այդ թվում նաև նրա ժամանակակից փուլի կենդանի դրսևորումների հնչյունաբանական ուսումնասիրությունն է։ Իր ընդգրկմամբ թեև դա մի մեծ ժամանակահատված է, որտեղ հայերենը հանդես է գալիս ժամանակային ու տարածական տարբեր կտրվածքներում և դրանցով պայմանավորված՝ ամենատարբեր հնչյունաբանական առանձնահատկություններով, բայց և այնպես՝ նյութի մատուցման տեսակետից այն չի ներկայացնում գրաբարի (հին հայերենի), միջին հայերենի, նոր հայերենի ու նրա բարբառների հնչյունաբանական ուսումնասիրությունների մեխանիկական գումարը։ Այստեղ նպատակ է դրվում հնչյունաբանական ամեն մի երևույթ դիտարկել ու քննել իր առաջացման ու զարգացման ընթացքի մեջ՝ առանց կաշկանդվելու լեզվի պատմության շրջանաբաժանմամբ պայմանավորված ժամանակագրության սահմաններում։ Այլ կերպ ասած, հնչյունական ու հնչյունաբանական երևույթների քննությունը կատարվում է ժամանակային առանցքի վրա, պատմականորեն և այդ երևույթները դիտվում են որպես պատմական զարգացման միասնական շղթայի բաղկացուցիչ մասերը։ Այլ հարց է, թե ինչ չափով է հաջողվել հեղինակին հասնելու առաջադրված նպատակին։

Բնականաբար, ուսումնասիրության հիմքում դրված են որոշակի սկզբունքներ, ուսումնասիրության եղանակներ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Լեզվական երևույթների ուսումնասիրության ընթացքում կարելի է կիրառել հետազոտական տարբեր մոտեցումներ։ Մի դեպքում (1) լեզուն կարելի է վերցնել մի որոշակի ժամանակահատվածում, երբ այն դիտարկվում է հարաբերականորեն կայուն ու անփոփոխ վիճակում և նկարագրվում է իր բաղկացուցիչ մասերի ձևաիմաստային միավորների փոխհարաբերության մեջ։ Մի այլ դեպքում (2) այն, որպես ուսումնասիրության առարկա, վերցվում է փոփոխվող ժամանակի սահմաններում, որտեղ նույն ձևաիմաստային միավորները դիտվում են իրենց շարժման ու փոփոխման մեջ։ Բնականաբար, այս երկու մոտեցումներից յուրաքանչյուրը հետապնդում է մի որոշակի նպատակ։ Մի դեպքում (1) նպատակը լեզվի կայուն վիճակի նկարագրությունն է, մյուս դեպքում (2)՝ ժամանակի մեջ նրա ձևերի ու իմաստների փոփոխությունների վեր հանումը։ Առաջին մոտեցումը հատկապես (և առաջին հերթին) կիրառելի է կենդանի, խոսակցական լեզուների նկատմամբ (թեև ոմանց կողմից կիրառվում է նաև անցյալ մի որևէ ժամանակահատվածի նկա-

մամբ), երբ ուսումնասիրողը, առանց որևէ միջնորդավորման՝ անմիջականորեն, գործ ունի կենդանի խոսքի արտասանելի-լսելի միավորների հետ։ Այս դեպքում, որ հատկապես կարևոր է, ուսումնասիրությունը կատարվում է կենդանի խոսքի անմիջական վերլուծությամբ, նրա բաղկացուցիչ մասերի համադրությամբ ու համեմատությամբ, որով և ապահովվում է լեզվի բոլոր բաղադրամասերի, այն է՝ նախադասությունների, խոսքի մեջ բառերի կապակցման օրենքների, հոլովման ու խոնարհման շարքերի, ձևույթների, հնչույթների ու նրանց տարբերակների ճանաչումն ու դասդասումը։ Այստեղ հետազոտողն ու հետազոտվողը գտնվում են ժամանակային միևնույն կտրվածքում, մի հանգամանք, որը և ապահովում է դիտարկվող առարկայի իրական, ճիշտ և օբյեկտիվ նկարագրությունը։

Կենդանի խոսքի հնչյունական կողմի ուսումնասիրության համար նման մոտեցման ժամանակ օգտագործվում են նաև փորձարարական միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ավելի ճշգրտորեն (քան լսողական ընկալումներն են) որոշելու յուրաքանչյուր հնչյունի արտասանության տեղի, եղանակի, բնույթի առանձնահատկությունները։ Այստեղ օգտվում են նաև բաշխումնային մեթոդի ընձեռած հնարավորություններից, նպատակ ունենալով պարզելու տվյալ լեզվին հատուկ հնչույթների համակարգը, նրանց բաշխման առանձնահատկությունները, հնարավոր զուգորդումները և հնչույթաբանական այլ հարցեր։

Այս տեսակետից ավելի պակաս արդյունավետ (իսկ որոշ դեպքերում՝ լրիվ անարդյունավետ) կարող է լինել այս նույն մոտեցման կիրառումը լեզվի պատմական անցյալի մի որոշակի ժամանակահատվածի ուսումնասիրության համար (էլ չենք ասում՝ ամբողջ պատմական ժամանակաշրջանի համար), մանավանդ, եթե այդ ժամանակահատվածը ընտրված է պատմական մի այնպիսի շրջանից, որը հաջորդել է գրավոր մի այլ փուլի և շարունակում է այդ փուլի գրավոր ավանդույթները։ Այս դեպքում այդ ժամանակահատվածի լեզուն անխուսափելիորեն իր վրա կունենա անցյալ շրջանի գրավոր ավանդույթների կնիքը։ Այդ մեթոդի կիրառման պակաս արդյունավետությունը պայմանավորված է հենց միայն նրանով, որ այս դեպքում հետազոտողն ու հետազոտվողը գտնըվում են ժամանակային տարբեր հատվածներում, երբ հետազոտողն այլևս գործ ունի լեզվի ոչ թե կենդանի խոսակցական, արտասանելի ու լսելի միավորների, այլ նրա գրավոր արտահայտության՝ նշանացի ու տեսանելի պատկերների հետ, մի հանգամանք, որ դժվարացնում է ուսումնասիրվող օբյեկտի ճանաչումը։

Հայտնի է, որ լեզվի գրավոր ամեն մի արտահայտություն կաշկանդված է սուբյեկտիվ հանգամանքներով։ Եթե դեռ մի կողմ թողնենք բանավոր խոսքի և նրա գրավոր արտահայտության հարաբերական համա-

պատասխանության կամ անհամապատասխանության վիճելի հարցը, ապա դրանից անկախ, ակնհայտ է, թե անցյալի գրական ավանդույթը (եթե այդպիսին, իհարկե, գոյություն ունի) ինչպես է մեծապես ազդում հաջորդ ժամանակների լեզվական միավորների արտահայտության ձևերի վրա։ Գրական հին ոճերի, բառակապակցական կաղապարների, քերականական որոշ ձևերի, հնչյունների գրավոր արտահայտման հին եղանակների (ուղղագրության) պահպանումը և դրանց տուրք տալը, մի ժամանակահատվածի լեզվի մեջ ստեղծում են արտահայտության հին ու նոր, մեռած ու կենդանի ձևերի զուգահեռ դրսևորումներ, որոնք խախտում են ժամանակի կենդանի լեզվի իրական պատկերը և ուսումնասիրողին զրկում տվյալ ժամանակի լեզվի առանձնահատկությունները հըստակորեն ընկալելու ու տարբերակելու հնարավորությունից։ Մյուս կողմից, գրավոր անցյալի լեզվական նյութը հնարավոր չէ ենթարկել փորձարարական հետազոտությունների։ Այստեղ պայմանական նշաններով (տառերով) արտահայտվածի և կենդանի խոսքի միջև գոյություն ունի միայն հարաբերական համապատասխանություն, որը բավարար հիմք չէ ուսումնասիրության մեքենական մեթոդներին անցնելու ճանապարհին։ Գրավոր տեքստերում արտահայտված տառերի հնչյունական արժեքների ավանդական վերարտադրությամբ չի կարելի փորձարարական ուսումնասիրություններ կատարել։ Լեզվի գրավոր արտահայտության հենքի վրա հնարավոր չէ նաև կատարել հնչյունաբանական ու հնչույթաբանական ճշգրիտ վերլուծություններ, քանի որ հնչույթաբանական ուսումնասիրությունների համար նվազագույն հակադրությունների հիմքը այս դեպքում խախտում է՝ գրի և հնչյունի ոչ լրիվ համապատասխանության պատճառով։

Այսպիսով, լեզվի ուսումնասիրության մեջ, այսպես կոչված՝ համաժամանակյա հետազոտության սկզբունքներ կիրառելիս առավել ցանկալի արդյունքներ կարելի է սպասել կենդանի, ժողովրդի բերանում խոսվող լեզվի քննության ժամանակ և ավելի պակաս՝ գրավոր անցյալի մի որևէ կտրվածքում։ Այստեղ թերևս բացառություն կարող է կազմել (այն էլ խիստ վերապահությամբ) միայն գիր ու գրականության սկզբնավորման շրջանը, որտեղ ենթադրվում է, թե անցյալի գրավոր ավանդույթների բացակայության պայմաններում նոր գրի առնվող լեզվի գրավոր արտահայտությունը հիմնականում պետք է որ համընկնի իր բանավոր դրսևորման հետ։ Սակայն այստեղ էլ, ինչպես արդեն ասվեց, այդ համապատասխանությունը պետք է ընդունել հարաբերականորեն, այն էլ այն վերապահությամբ, եթե նախապես արդեն ապացուցված է այդ համապատասխանության իսկությունը։

Հարկ է նշել նաև, որ լեզվի ուսումնասիրության այս մեթոդը կյանքի է կոչվել առավել գործնական նպատակների դրդմամբ, երբ անհրա-

ժեշտություն է առաջացել կիրառական նշանակություն ունեցող մի շարք գործնական հարցերի լուծման համար (լեզվի ուսուցում, մեքենական թարգմանություն և այլն) գտնել ավելի ռացիոնալ մեթոդներ։

Երկրորդ մոտեցման դեպքում, ինչպես արդեն ասվել է, լեզուն վերցվում է իր գոյության ողջ պատմական ժամանակաշրջանում, կամ էլ՝ ժամանակային որևէ կտրվածքում՝ նայած այն բանին, թե ուսումնասիրողը հետազոտական ինչ նպատակներ է հետապնդում։

Տարբեր լեզուներում պատմական ժամանակաշրջանը տարածականորեն տարբեր է, սակայն ամեն տեղ էլ այն ընդգրկում է գիր ու գրականության սկզբնավորման շրջանից մինչև ժամանակակից փուլը։ Ժամանակի մեջ լեզվական ձևերի ու իմաստների շարժման ու փոփոխման, նրանց գրավոր արտահայտման նոր եղանակների, ինչպես նաև ամեն մի ժամանակահատվածում հին ու նոր, մեռած ու կենդանի օրինաչափությունների հաշվառմամբ էլ հնարավոր է լինում ոչ միայն նկարագրել ու մեկնաբանել պատմական զարգացման ընթացքը, այլև որոշակի պատկերացում կազմել պատմական շրջանի յուրաքանչյուր ժամանակահատվածի առանձնահատկությունների մասին։

Այսպիսով, եթե համաժամանակյա մոտեցման դեպքում մեր պատկերացումները լեզվի անցյալ էտապի մի որևէ հատվածի վերաբերյալ շատ պակասավոր ու թերի են, ապա այդ բացը լրացվում է տարաժամանակյա ուսումնասիրությունների միջոցով, երբ պատմական պրոցեսի ճանաչմամբ կոնկրետանում ու մասնավորվում է նաև ցանկացած ժամանակի ընդհանուր պատկերը։ Սակայն, այնուամենայնիվ, ժամանակի մեջ լեզվի հետազոտության հիմնական նպատակը նրա պատմության ստեղծումն է։

Այս ընդհանուր կողմնորոշումից հետևում է, որ հայերենի պատմական հնչյունաբանության ուսումնասիրությանը նվիրված այս աշխատությանը առավել համապատասխանում են գիտաքննական այն եղանակներն ու մեթոդները, որոնք սովորաբար օգտագործվում են լեզվական երևույթների տարաժամանակյա ուսումնասիրությունների ժամանակ։ Դրանք հիմնականում դասական լեզվաբանության մեջ կիրառվող հետազոտության եղանակներն ու մեթոդներն են, որոնք այստեղ օգտագործվում են քննվող նյութին ու հետազոտության խնդիրներին համապատասխան։ Այդ եղանակների էությունը ավելի հստակ կերևա ստորև, երբ անդրադառնանք գրավոր աղբյուրների լեզվաբանական բնութագրմանը և նրանց նկատմամբ կիրառելի այն չափանիշներին, որոնց հաշվառմամբ միայն նրանք կարող են օգտակար լինել պատմական ուսումնասիրությունների համար։

ժամանակի տեսակետից պատմական շրջանը ընդգրկում է շուրջ 1600 տարի։ Այդ ժամանակաշրջանի մեծագույն մասում հայերենը մեզ ներկայանում է գրավոր վիճակում և միայն արդի էտապում է, որ նա հանդես է գալիս իր կենդանի, խոսակցական արտահայտություններով։ Հասկանալի է, որ արտահայտության այս երկու ձևերը՝ բանավորը և գրավորը, հետազոտության համար ստեղծում են միանգամայն տարբեր պայմաններ։

Հայերենի արդի խոսակցական տարբերակների լեզվաբանական ուսումնասիրությունը համեմատաբար մեծ դժվարություններ չի ներկայացնում, եթե նկատի ունենանք, որ կենդանի խոսքի լեզվական իրողությունների ուսումնասիրությունը այս դեպքում կատարվում է այդ լեզուն կրողների միջոցով։ Նման հետազոտությունը մեծ դժվարություններ չի հարուցում նաև այն դեպքում, երբ ուսումնասիրությունը կատարվում է գրավոր աղբյուրների հիման վրա։ Տվյալ դեպքում անհրաժեշտ է միայն, որ հետազոտողը ճիշտ կողմնորոշվի դեպի լեզվական այն տարբերակը (գրական, խոսակցական, բարբառային), որին տվյալ գրավոր աղբյուրը ներկայացնում է։ Էլ չենք խոսում այն գրավոր աղբյուրների մասին, որոնք կատարված լինելով գիտական նպատակներով (բարբառագիտական ուսումնասիրություններ)՝ իրենց մեջ պարունակում են ոչ միայն ուսումնասիրվող բանավոր խոսքին համարժեք ինֆորմացիա, այլև այդ ինֆորմացիայից բխող ընդհանրացումներ։

Նյութի օգտագործման տեսակետից առավել մեծ դժվարություններ ներկայացնում են հատկապես անցյալից ավանդված գրավոր աղբյուրները և դրանց մեջ նրանք, որոնք վերաբերում են ավելի վաղ ժամանակներին։

Գրավոր աղբյուրների արժեքավորման հարցում անհրաժեշտ է ելնել այն օբյեկտիվ իրողությունից, որ պատմական հետազոտությունների ժամանակ «...ուսումնասիրության հաջողությունը և ամենից առաջ նրա օբյեկտիվությունը, կախված է ոչ միայն, իսկ երբեմն էլ՝ ոչ այնքան նոր մեթոդների կիրառությունից ու հների կատարելագործումից, այլ նաև նրանից, թե ինչ աղբյուրների վրա է այն կառուցված և թե՝ ինչ ատիճանի են յուրացված այդ աղբյուրները»[1]*։*

Գրավոր աղբյուրների օգտագործման մեթոդիկային ու նրանցում առկա լեզվական նյութի իմաստավորման եղանակներին նվիրված հե-

---

[1] *С. И. Котков,* Об источниковедческом аспекте в исследованиях по истории русского языка. В сб.: «Восточнославянские языки, источники для их изучения», М., 1973, стр. 4.

տագա շարադրանքը ցույց կտա, որ այդ դժվարությունները իրոք կան և որ առանց դրանց հաղթահարման հնարավոր չէ կառուցել լեզվի պատմական և ո՛չ մի ուսումնասիրություն։

Ծանոթանանք այն հիմնական սկզբունքներին, որոնցով առաջնորդվելով միայն հնարավոր կլինի պատմական ուսումնասիրությունը դարձնել օբյեկտիվ ու փաստական տեսակետից վստահելի։

Առաջին հերթին նկատի պիտի ունենալ, որ տպագիր այն բոլոր աղբյուրները, որոնք գիտական հրատարակություններ չեն և հարազատորեն չեն ներկայացնում ձեռագրային բնագրերը, լեզվաբանական ուսումնասիրությունների համար վստահելի չեն։ Նման տեքստերի քննությունը ցույց է տալիս, որ այդ կարգի աղբյուրներն իրենց մեջ ունեն բնագրային լուրջ շեղումներ[2]։ Այդտեղ կարելի է նկատել ուղղագրական «սխալների» սրբագրումներ, «անհասկանալի» թվացող բառերի խմբագրումներ, քերականական անսովոր ձևերի շտկումներ և այլն, որոնք կատարվել են հրատարակիչների կողմից։ Ըստ էության այդ նշանակում է, որ նման տպագիր տեքստերում ջնջված են լեզվի պատմաբանին հետաքրքրող լեզվական շատ երևույթներ, համահարթեցված են «անկանոնությունները»։ Պարզ է, որ այսպիսի ընդմիջարկությունների ենթարկված բնագրերը դադարում են ուսումնասիրության վստահելի աղբյուրներ լինելուց։

Ասվածից հետևում է, որ լեզվաբանական հետազոտությունների համար վստահելի կարող են լինել առաջին հերթին ձեռագրերը, որովհետև նրանք են, որ առանց միջնորդավորման ներկայացնում են իրենց ժամանակի լեզվական վիճակը։

Ձեռագրերից հետո միայն՝ աղբյուրագիտական տեսակետից վստահելի կարող են լինել այն տպագիր աղբյուրները, որոնք գիտական հրատարակություններ են։ Դրանց վստահելիությունը ապահովվում է հրատարակության ընթացքում կիրառվող որոշակի գիտական սկզբունքներով, որոնց նպատակն է երաշխավորել ձեռագրի ու հրատարակված տեքստի համարժեքությունը։ Սակայն այսքանը, գրավոր աղբյուրների օգտագործման հարցում ճիշտ կողմնորոշվելու համար, դեռևս քիչ է։ Ձեռագիրը կամ նրա գիտական հրատարակությունը դեռևս ոչինչ չեն ասում տվյալ բնագրի նախնականության, այդ ձեռագրի ու նրանում արձանագրված լեզվի ժամանակի նույնության մասին։ Այս դեպքում արդեն խիստ կարևոր է, որ գրավոր աղբյուրների օգտագործման ժամանակ հաշվի առնվի այն, թե տվյալ բնագիրը բուն սկզբնագի՞ր է, թե ընդօրինակություն (անկախ այն բանից՝ գործ ունենք ձեռագրի, թե գիտական հրատարակության հետ)։ Բանն այն է, որ գրավոր աղբյուրները մեզ հա-

---

2 «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Ա., Երևան, 1972, էջ 52։

ակլ են հիմնականում արտագրությունների միջոցով։ Դրանց մանրամասն համեմատությունն ու քննությունը ցույց է տալիս, որ նրանցում կան ոչ միայն ուղղագրական սխալներ, այլև բնագրային այնպիսի շեղումներ (բառային, քերականական, հնչյունաբանական), որոնք ակնհայտորեն չեն կարող վերաբերել տվյալ երկի ստեղծման ժամանակի լեզվին[3]։ Հասկանալի է, որ այս կարգի ձեռագրերից քաղած լեզվական փաստերի վրա չի կարելի անառարկելի դատողություններ անել, ասենք, V դարի այս կամ այն երկի լեզվի առանձնահատկությունների մասին, երբ մեր ձեռքի տակ այդ երկի XII դարի ընդօրինակությունն է։ Այդ առավել վերաբերում է հնչյունաբանական ուսումնասիրություններին, որոնց մեջ արվող եզրակացությունները բացառապես հենվում են բնագրերում տեղ գտած ուղղագրական սխալների և փոխառյալ բառերի գրության ձևերի վրա։

Հետևաբար պատմական ուսումնասիրությունների համար ամենահավաստի գրավոր աղբյուրները բուն սկզբնագրերն են։ Սրանք են, որ հետազոտողին հնարավորություն են տալիս վստահորեն դնելու և քննելու լեզվի պատմական ուսումնասիրության հետ կապված հարցերը։

Հայերենի համար նման արժեքավոր սկզբնագիր աղբյուրներ են վիմական արձանագրություններն ու ձեռագրերի հիշատակարանները (թեև կան նաև ավելի ուշ շրջանից ավանդված նման այլ սկզբնագրեր ևս)։

Վիմարձանագրությունների ու հիշատակարանների լեզվաբանական արժեքը կայանում է ոչ միայն նրանում, որ նրանք որպես հեղինակային բնագրեր վստահելի են և ըստ այնմ ճիշտ պատկերացում են տալիս իրենց գրության ժամանակաշրջանի լեզվի առանձնահատկությունների մասին, այլև նրանում, որ՝ գրված լինելով տարբեր վայրերում ու տարբեր ժամանակներում, նրանք հնարավորություն են տալիս ժամանակի ու տարածության մեջ հետևելու ինչպես լեզվական նոր երևույթների առաջացման ու զարգացման, այնպես էլ հին երևույթների մահացման ու անհետացման ընթացքին։ Այս սկզբնաղբյուրները միաժամանակ հնարավորություն են տալիս ժամանակային նույն կտրվածքում քննելու հայերենի՝ տարբեր վայրերում ունեցած արտահայտությունները, վեր հանելու բարբառային տարբերությունները, մի բան, որ դժվար է անել այլ գրավոր աղբյուրների օգնությամբ։

Սակայն վիմարձանագրություններին դիմելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալը։ Լեզվի պատմաբանը դրանցից սովորաբար օգտվում է տպագիր վիճակում, մի բան, որ կարող է իջեցնել օգտագործվող փաստերի հավաստիության աստիճանը։ Որպեսզի այդ տեղի չունենա, պետք է դիմել միայն և միայն գիտական հրատարակությունների, որոնք իրենց մեջ արձանագրությունների գծապատկերների և վերծանություն-

---

[3] Նույն տեղում, էջ 48։

ների հետ միասին ունեն նաև նրանց լուսանկարները։ Այս դեպքում պարտադիր է դառնում արձանագրություններից վերցված յուրաքանչյուր լեզվական փաստ ստուգել լուսանկարներում։ Այդ անհրաժեշտ է, քանի որ վերծանված արձանագրությունների տեքստերում հնարավոր են ամեն տեսակի վրիպումներ և նույնիսկ բառերի ու բառաձևերի ոչ ճիշտ վերծանություններ։

Սակայն այս բոլորից չպետք է այն հետևությունն անել, թե պատմական ուսումնասիրությունների համար բացարձակապես պիտանի չեն այն գրավոր աղբյուրները, որոնք սկզբնագրեր չեն։ Վերն արդեն ասվել է, որ լեզվի պատմության համար բացարձակապես պիտանի են բոլոր աղբյուրները, եթե նրանք իրենց մեջ պարունակում են օգտակար տեղեկություններ։ Միայն թե՝ ոչ հեղինակային, հետագա ընդօրինակություններով հասած բնագրերի օգտագործման ժամանակ պետք է հանդես բերել զգուշություն՝ նրանցում նկատված լեզվական երևույթները չվերագրելու այն ժամանակներին, որոնց դրանք չեն վերաբերում։ Նման զգուշություն պետք է հանդես բերել, քանի որ նույն ձեռագրում կարող են շերտավորված լինել ինչպես տարբեր վայրերի, այնպես և տարբեր ժամանակների լեզվական երևույթներ՝ առաջացած հաջորդական արտագրությունների հետևանքով։ Այդ բոլորը իրարից ջոկելու և ամեն մեկը իր ժամանակին ու տարածքին հատկացնելու համար, անշուշտ, անհրաժեշտ է կատարել մանրակրկիտ բանասիրական-տեքստաբանական աշխատանք։

Այնուհետև. գրավոր աղբյուրների արժեքը կայանում է ոչ միայն նրանում, որ նրանք օգնում են պարզելու լեզվական երևույթների հետ կապված ժամանակագրական հարցերը, այլև նրանում, որ նրանց միջոցով հնարավոր է դառնում նաև որոշել այն տարածքները, որոնցում կատարվել են լեզվական փոփոխությունները։ Այստեղ ևս՝ գրավոր աղբյուրների օգտագործման ժամանակ պետք է հանդես բերել տարբերակված մոտեցում, քանի որ ոչ բոլոր աղբյուրները կարող են հավասարապես ու հաջողությամբ ծառայել այդ նպատակին։ Այս դեպքում ևս վիմարձանագրությունները գրավում են առաջին տեղը, քանի որ նրանցում գրանցված է հենց այն վայրերի լեզուն, որտեղ նրանք գտնվում են։ Նույնը, որոշ վերապահությամբ, պետք է ասել նաև ձեռագրերի հիշատակարանների մասին, միայն այն տարբերությամբ, որ այստեղ ձեռագրերի մեջ հանդիպող լեզվական երևույթները միշտ չէ, որ պետք է հատկացնել այն վայրի լեզվին, որտեղ կատարված է ձեռագրի ընդօրինակությունը։ Շատ հաճախ գրիչը (արտագրողը) ծնունդով այլ միջավայրի ներկայացուցիչ է և հասկանալի է, որ նրա արտագրած ձեռագրում թույլ տված լեզվական շեղումները ոչ մի առնչություն չունեն ձեռագրի արտագրության վայրի լեզվի հետ։ Նման դեպքերում, տվյալ ձեռագրի լեզվական

փաստերը տեղայնացնելիս, անհրաժեշտ է կողմնորոշվել ո՛չ թե դեպի ձեռագրի գրչության վայրը, այլ դեպի լեզվական այն միջավայրը, որին պատկանում է ձեռագրի արտագրողը։

Լեզվական փաստերի տեղայնացման գործը ավելի դժվարանում է հատկապես այն աղբյուրների օգտագործման ժամանակ, որոնք մեզ հասել են բազմատիճան ընդօրինակությունների միջոցով։ Հասկանալի է, որ դրանց լեզվական նյութը օգտագործելիս նախ՝ անհրաժեշտ է եղած փաստերը տարբերակել ժամանակագրորեն և հետո միայն մտածել նրանց տեղայնացման մասին։ Վերջին դեպքում խիստ կարևոր է կողմնորոշվել դեպի մեր ժամանակակից բարբառների լեզվական առանձնահատկությունները և ըստ այդմ՝ ստուգել ու ճշգրտումներ կատարել տարածքային հատկացումների մեջ։

Բոլոր դեպքերում, ինչպես ժամանակային, այնպես և տարածքային հարցերը պետք է լուծվեն բանասիրական, տեքստաբանական մանրամասն վերլուծությունների միջոցով, այդ նպատակի համար օգտագործելով հնարավոր բոլոր միջոցներն ու եղանակները։

Մինչև այժմ մեր խոսքը եղել է գրավոր աղբյուրների այսպես կոչված՝ արտաքին կողմի մասին, այն մասին, թե աղբյուրագիտական տեսակետից նրանցից որը ինչ արժեք կարող է ունենալ պատմական ուսումնասիրությունների համար և թե ինչ չափով նրանք կարող են օգնել լուծելու ժամանակագրական ու տարածքաբանական այն հարցերը, որոնք բնականաբար պիտի ծագեն նրանցից քաղված լեզվական նյութի օգտագործման ընթացքում։ Թեև այս և նման հարցերը պատմական ուսումնասիրությունների համար ունեն ոչ երկրորդական նշանակություն, բայց, այնուամենայնիվ, պետք է համաձայնել, որ գրավոր աղբյուրների ամենահիմնական արժեքը կայանում է նրանում, թե նրանք ի՞նչ են պարունակում իրենց մեջ և թե արդյոք այդ պարունակածի հիման վրա կարելի՞ է կառուցել պատմական ուսումնասիրություն։

Այստեղ մենք ընդհուպ մոտենում ենք այն հարցին, թե ինչպես պետք է օգտագործել գրավոր աղբյուրների լեզվական նյութը և ինչպես պետք է արժեքավորել այն՝ պատմական ուսումնասիրությունների համար։ Կասկածից դուրս է, որ պատմության համար կարևոր են լեզվական այնպիսի փաստեր, որոնք իմաստի կամ ձևի արտահայտման տարբերություններ ունեն տարբեր աղբյուրներում։ Ըստ որում՝ այդ տարբերությունները կարող են լինել ինչպես ժամանակային նույն, այնպես էլ հաջորդական կտրվածքների գրավոր աղբյուրներում։ (Ժամանակային նույն կտրվածքում արձանագրվող լեզվական տարբերությունները պատկերացում կտան տվյալ ժամանակի լեզվի բարբառների մասին, իսկ հաջորդական կտրվածքներում գրանցվող տարբերությունները կներկայացնեն լեզվական երևույթների պատմական զարգացման ընթացքը)։ Հակառակ դեպքում,

այսինքն՝ տարբերությունների բացակայության դեպքում, պատմական քննության հարցը մեջտեղից վերանում է։

Տարբերությունների հայտնաբերումը կատարվում է համեմատությունների միջոցով։ Մի դեպքում համեմատությունները խարսխվում են ընդունված որևէ կաղապարի վրա։ Որպես այդպիսի կաղապար սովորաբար վերցվում են լեզվական հին ձևերը։ Գրավոր աղբյուրներում դրանից շեղվող ձևերը և իմաստներն էլ հենց մեր փնտրած տարբերություններն են։ Մի այլ դեպքում, հատկապես երբ բացակայում է համեմատելի եզրը (կաղապարը), պարզապես համեմատվում են ձեռքի տակ եղած գրավոր աղբյուրների լեզվական իրակությունները և այդ համեմատությունների միջոցով արձանագրում տարբերությունները։

Հայոց լեզվի համար որպես համեմատության եզր ծառայում է հին գրական հայերենի (գրաբարի) լեզվավիճակը՝ որպես պատմական շրջանի ամենավաղ արտահայտություն։

Լեզվական երևույթների տարբերությունների երևակման ժամանակ համեմատաբար հեշտ է կողմնորոշվել բառային ու քերականական մակարդակներում։ Այստեղ բառային նոր միավորի կամ հին բառի նոր իմաստի, ինչպես նաև քերականական նոր ձևերի ու իմաստների կիրառությունները անմիջապես աչքի են ընկնում։ Դրանց հայտնաբերման համար այլ բան պետք չէ, քան սուր աչք և լեզվական նուրբ զգացողություն։

Այլ է պատկերը հնչյունական տարբերությունների երևակման ժամանակ։ Այստեղ էլ, եթե, այնուամենայնիվ, ձայնավորների և երկբարբառների մեջ կատարված փոփոխությունները դեռևս արտահայտվում են հենց այն ձայնավորները արտահայտող տառերով, որոնց նրանք փոխարկվել են, ապա պատկերը միանգամայն փոխվում է բաղաձայնների արտահայտման ժամանակ։

Արտաքնապես թվում է, թե բաղաձայնների արտահայտման մեջ էլ էական ոչ մի տեղաշարժ չի կատարվել։ Պատմական ամբողջ շրջանի ընթացքում բառերը ունեն գրության իրենց կայուն ձևերը, և բաղաձայններն էլ բառի մեջ գրված իրենց բոլոր դիրքերում պահում են հին ուղղագրական նորմաները։ Միակ բանը, որ երբեմն աչքի է ընկնում՝ այն է, որ հատկապես պայթական ու պայթաշփական բաղաձայնները արտահայտող տառերը թույլ են տալիս շեղումներ հին ուղղագրական կանոններից։ Այդ շեղումներն էլ կարող են որակվել որպես սովորական վրիպումներ, ինչպես հաճախ լինում են անփույթ արտագրությունների ժամանակ, եթե ուշադիր աչքը չնկատի, որ այդ ուղղագրական շեղումները կրում են ոչ թե խառնիխուռն ու անկանոն վրիպումների բնույթ, այլ միանգամայն օրինաչափ են, որտեղ հերթագայվում են հնչյունական նույն շարքը ներկայացնող բ : պ : փ, գ : կ : f, դ : տ : թ, ձ : ծ : ց, ջ : ճ : չ տառերը։ Եվ

2—687

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ …
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

որ ավելի ուշագրավ է, այդ հերթագայությունները համընկնում են այն փոփոխությունների հետ, որոնք այսօր արձանագրվում են մեր բարբառներում։

Այդ դիտարկումներից դժվար չէ եզրակացնել, որ ուղղագրական այդ շեղումներում արտահայտված են մեր բարբառների պայթականների մեջ կատարված պատմական փոփոխությունները։ Եվ այն, որ ասենք, բ-ի փոխարեն գրված է պ, կարծես թե հիմք է տալիս ասելու, որ այդտեղ մենք գործ ունենք ձայնեղների խլացման հետ։ Բայց այդ շեղումները խսկապե՞ս արտահայտում են հենց այն փոփոխությունը, որը դրսևորվում է տվյալ տառով, թե այդ տառի տակ պետք է հասկանալ հնչյունական այլ արժեք։

Փաստերը ցույց են տալիս, որ միշտ չէ, որ տվյալ ուղղագրական շեղման տակ տառացիորեն պետք է հասկանալ այն հնչյունը, որով արտահայտված է շեղումը։ Ընդհանրապես, ուղղագրական այդ շեղումների, ինչպես նաև օտար բառերի գրության ձևերի քննությունը ցույց է տալիս, որ այդ շեղումները իրենց գերակշիռ մասով նշում են միանգամայն այլ փոփոխություններ։

Այս միտքը պարզաբանելու համար ուշադրություն դարձնենք հետևյալ օրինակի վրա։ Մեր ձեռքի տակ է սկզբնագիր մի ձեռագիր. նրանում հանդիպում են ուղղագրական վրիպակներ ու օտար բառերի այնպիսի տառադարձություններ, երբ սպասելիք շնչեղ խուլերի փոխարեն գրության մեջ առկա են ձայնեղներ։ Արձանագրվում են գրության այսպիսի ձևեր՝ **բոռձել**, **դրչել**, փոխանակ ավանդական **փոռձել**, **թրչել** ձևերի. օտարլեզվյան t´at´ar (թուրքալեզու ժողովրդի անուն), t´aza («նոր») բառերը մերթ տառադարձված են **դադար**, **դաժա** և մերթ **թաթար**, **թաժա** ձևերով։ Կարելի՞ է արդյոք գրության **բոռձել**, **դրչել**, **դադար**, **դաժա** ձևերի հիման վրա եզրակացնել, թե տվյալ ձեռագրի հիմքում ընկած հայերենում շնչեղ խուլերը ձայնեղացել էին[4]։ Անշուշտ, չի կարելի։ Չի կարելի՝ երկու հիմնական պատճառով։ Նախ՝ հայերեն բառերում հին շնչեղ խուլերի դիմաց ձայնեղ գրությունը չի կարող նշանակել շնչեղ խուլի ձայնեղացում, քանի որ հայերենի համար բացառված է հնչյունական այդպիսի փոփոխությունը։ Հայերենի ժամանակակից բարբառները բառասկզբի շնչեղ խուլերը պահում են անփոփոխ։ Եթե այդպես է, ապա **բոռձել**, **դրչել** և նման այլ հայերեն բառերի այս կարգի գրությունը նշում է ոչ թե շնչեղ խուլերի ձայնեղացում, այլ մի այլ երևույթ, որը դեռ պետք

---

[4] Որոշ ուսումնասիրողներ հենց այդպես էլ անում են։ Տառացիորեն հասկանալով բաղաձայնական համակարգում կատարված փոփոխությունները, նրանք ամեն մի նման փոփոխության տակ հասկանում են հենց տվյալ տառի հնչյունական արժեքը։ Տե՛ս, օրինակ, Ս. Ղազարյան, Միջին հայերեն, 1960, էջ 174 և այլուր։

է բացահայտել։ Երկրորդ՝ խիստ տարօրինակ է նաև այն, որ օտարլեզվյան շնչեղ խուլերը ևս արտահայտված են ձայնեղների տառերով։ Այստեղ սպասելի էին միայն **քաքար, քազա** կամ **քաժա** (վերջինս՝ գ-ի բարբառային այլ արտասանությամբ) գրության ձևերը, ինչպես որ հանդիպում են հենց այդ ձեռագրում։ Պարզ է, որ այստեղ էլ **դադար** և **դաժա** տառադարձությունների տակ պետք է հասկանալ հնչյունական այլ արժեքներ։ Իսկապես. դժվար չէ նկատել, որ այդ օտար բառերի գրության մեջ հին ձայնեղ դ-ի միջոցով արտահայտված է շնչեղ խուլ [թ] հնչյունը։ Կասկածից դուրս է նաև այն, որ տառադարձության ու ուղղագրության մեջ արձանագրվող այս շեղումները անդրադարձումներն են այն փոփոխությունների, որոնք կատարվել էին ձեռագրի հիմքում ընկած հայերենի բաղաձայնական համակարգում։ Ըստ որում՝ տվյալ դեպքում նման փոփոխություն կատարվել էր ոչ թե շնչեղ խուլերի, այլ ձայնեղ պայթականների ու պայթաշփականների հետ։ Այդ նրանք էին, որ փոխարկվել էին շնչեղ խուլերի և այդ փոփոխության հետևանքով էր, որ գրության մեջ շնչեղ խուլ հնչյունները այժմ կարող էին արտահայտվել ոչ միայն իրենց ավանդական փ, ք, թ, ց, չ, այլ նաև բ, գ, դ, ձ, ջ տառերով։ Որ դա իսկապես այդպես է, ապացուցվում է նաև վերը բերված հայերեն բառերի օրինակով, որտեղ **բոռձել, դռջել** ձևերում բառասկզբի բ-ի և դ-ի միջոցով արտահայտված են շնչեղ խուլ [փ] և [թ] հնչյունները։

Այս և նման փաստերի կողքից անցնել, անշուշտ, չի կարելի, քանի որ գրությամբ արտահայտված հնչյունի սխալ արժեքավորումը բոլոր դեպքերում կհանգեցնի սխալ եզրակացությունների։

Ուղղագրական շեղումների հնչյունաբանական իմաստավորման հարցում իսկապես անհրաժեշտ է դառնում հանդես բերել խիստ զգուշություն, երբ խոսքը վերաբերում է հատկապես պայթական ու պայթաշփական հնչյուններն արտահայտող տառերի արժեքների վերականգնմանն ու գնահատմանը։

Այս հարցում մեր հիմնական ուղղեցույցը հայերենի ժամանակակից բարբառներն են և նրանցում արձանագրվող բաղաձայնական փոփոխությունները։

Եթե ընդունենք, որ մեր այսօրվա բարբառներում արձանագրվող բաղաձայնական տեղաշարժերը գոյություն ունեին նաև ուղղագրական շեղումներ ունեցող ձեռագրերի ժամանակաշրջանում, ապա պետք է ընդունել, որ նրանցում առկա ուղղագրական շեղումները հետևանք էին հայերեն տառերի արժեքների փոփոխության։ Ավելի պարզ ասած՝ պայթական ու պայթաշփական բաղաձայնների տեղաշարժերը խախտել էին գրավոր արտահայտության հին ձևերը, և ուղագրական շեղումներում արտահայտվում էին տառերի նոր արժեքները։ Այսինքն՝ եթե հին խուլերի շարքը տեղաշարժվել ու փոխվել էր ձայնեղների, ապա ավանդական ուղ-

ղագրությամբ արտահայտվող խուլերը (պ, կ, տ, ծ, ճ) արդեն կարտահայտեին ձայնեղ հնչյուններ (b, g, d, j, ǰ)։ Այսպես նաև մյուս փոփոխությունների դեպքում։ Այս կարևոր հանգամանքի հաշվառմամբ, վերը նշված տեղաշարժերի բնույթը նկատի ունենալով՝ կարելի է որոշել, թե գրավոր աղբյուրներում պայթական ու պայթաշփական հնչյունները հայերենի այբուբենի ի՞նչ տառերով կարող էին արտահայտվել։ Եթե դա հնարավոր լինի անել, ապա ինքնըստինքյան կարժեքավորվեն նաև ուղղագրական շեղումները։

ա) Նախ՝ շնչեղ խուլ բաղաձայնների մասին։ Այստեղ հնարավոր է երկու դեպք։ Սրանք մի դեպքում կարող էին արտահայտվել այբուբենի փ, ք, թ, ց, չ տառերով։ Քանի որ ամբողջ հայերենում շնչեղ խուլերի շարքը որևէ փոփոխության չի ենթարկվել, ուստի և փ, ք, թ, ց, չ տառերով այլ հնչյուններ չէին կարող արտահայտվել, քան միայն շնչեղ խուլերը։ Երկրորդ դեպքում՝ շնչեղ խուլերի նույն շարքը կարող էր արտահայտվել հին ձայնեղները ներկայացնող բ, գ, դ, ձ, ջ տառերով։ Սա գրության մեջ կարող էր դրսևորվել այն վայրերի գրավոր աղբյուրներում, որոնց բարբառներում հին ձայնեղները փոխարկվել էին շնչեղ խուլերի։ Վերը նշված t'at'ar անունը տառադարձված է դադար հենց այս սկզբունքով։ Այս նույն հիմքի վրա է կատարվում նաև հայերեն բառերի ուղղագրական շեղումները, երբ շնչեղ խուլի փոխարեն գրվում է ձայնեղի տառ (դրջել)։ Որ այս համակարգում ձայնեղներն իսկապես տեղաշարժվել էին շնչեղ խուլերի շարքը, երևում է նաև ավանդական բառերի ձայնեղների շնչեղ խուլ գրությամբ, օրինակ՝ Դաւիթ անձնանունը գրվում է Թաւիթ։ Մի գրավոր աղբյուրում այս երևք օրինաչափությունների առկայությունը որևէ տարակույս չի թողնում կատարված փոփոխության վերաբերյալ։

բ) Խուլ հնչյունների արտահայտման համար ևս հնարավոր է երկու դեպք։ Մի կողմից նրանք կարող էին արտահայտվել հենց բուն խուլերը ներկայացնող գրերով (պ, կ, տ, ծ, ճ), երբ տվյալ համակարգում այս շարքի հնչյունները տեղաշարժված չեն. մյուս կողմից՝ հին ձայնեղների տառերով (բ, գ, դ, ձ, ջ), երբ դրանցով արտահայտված հնչյունները տեղաշարժված են դեպի խուլերը։ Այս երևույթը բացահայտելու համար միայն հայերեն բառերի ուղղագրական շեղումները հաշվի առնելը բավական չէ, քանի որ դրանք կարող են նաև արտացոլել խուլերի ձայնեղացումը (կատու>գադու=gadu)։ Հետևաբար այստեղ հիմնական շեշտը պետք է դնել փոխառյալ բառերի վրա։ Այդ երևույթն են արտահայտում, օրինակ, եվրոպական լեզուներից անցած հետևյալ բառերը. prince>բրինձ, contestabile>գունդստապլ, cane>գան և այլն, որոնց մեջ օտարլեզվյան խուլ հնչյունները արտահայտված են հին ձայնեղներն արտահայտող տառերով։

գ) Զայնեղ պայթականներն ու պայթաշփականները նույնպես կարող էին արտահայտվել երկու ձևով. կամ բուն ձայնեղների տառերով (բ, գ, դ, ձ, ջ), երբ այս շարքը մնում է անփոփոխ, կամ խուլերի տառերով (պ, կ, տ, ծ, ճ), *երբ վերջիններս տեղաշարժված լինելով դեպի ձայնեղները՝ կարող էին արտահայտել ձայնեղ հնչյուններ։ Այս երևույթը ևս, բացի հայերեն բառերում կատարվող ուղղագրական շեղումներից (որոնցով միայն առաջնորդվելը բավարար չէ), արտահայտվում էր օտար բառերի տառադարձման ընթացքում։ Այսպես, օրինակ՝* baron>պարոն, burj >պուրճ *և այլն, որոնց մեջ խուլերի միջոցով արտահայտված են ձայնեղները, որը իր հերթին նշանակում է, թե խուլերը տեղաշարժվել էին դեպի ձայնեղները։ Խուլերի տեղաշարժը դեպի ձայնեղները հայերեն բառերում մատնվում է* մ, ն *ռնգայիններից հետո ընկած դիրքում, որտեղ հին ձայնեղները ներկայանում են խուլ* պ, կ, տ, ծ, ճ *տառերի միջոցով՝* ժանկ, լինտ, ճամպերել, տանծ, ականճ *և այլն, փոխանակ՝* ժանգ, լինդ, ճամբերել, տանձ, ականջ *ձևերի։*

դ) Շնչեղ ձայնեղ հնչյունները կարող էին արտահայտվել միայն բ, գ, դ, ձ, ջ *շարքի գրերի միջոցով, քանի որ պայթականների մյուս շարքերից ոչ մեկը չի փոխարկվում այս շարքի հնչյուններին։ Այդ շարքի բաղաձայնների գոյությունը լավ երևում է օտար բառերից կատարված փոխառություններում, երբ փոխատու լեզվի բառասկզբի և բառամիջի (բառավերջի) ձայնեղները հայերենում տառադարձվում են այլ սկզբունքներով՝ բառասկզբում դրսևորվելով* բ, գ, դ, ջ, *իսկ բառամիջում ու բառավերջում՝* պ, կ, տ, ճ *տառերով (առաջինները արտահայտում են* b', g', d', j'ǰ', *շնչեղ ձայնեղներ, իսկ երկրորդները՝* b, g, d, j, ǰ *պարզ ձայնեղներ)։*

Արդ, այս վերլուծություններից արված հետևությունն այն է, որ գրավոր աղբյուրներում հանդիպող ուղղագրական շեղումները թեև արտացոլում են բաղաձայնների մեջ կատարված փոփոխությունները, բայց այդ փոփոխությունների արդյունքները չպետք է հասկանալ տառացիորեն, այլ դրանց իրական պատկերը բացահայտելու համար պետք է թափանցել դրանց էության մեջ։ Ըստ որում՝ վերլուծությունները պետք է անել, մի կողմից, լեզվի ավանդական ձևերից կատարվող շեղումների և, մյուս կողմից, օտար աղբյուրներից կատարված բառերի տառադարձման սկզբունքները պարզելու միջոցով։

Ինքնին հասկանալի է, որ այդ փոփոխությունների բացահայտումը տարածական ու ժամանակային արժեք կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ գրավոր աղբյուրները նման նպատակային վերլուծության են ենթարկվում առանձին-առանձին։ Միայն այս դեպքում հնարավոր կլինի ճշգրիտ կերպով պարզել տվյալ ժամանակում ու տվյալ վայրում բաղաձայնական համակարգում կատարված փոփոխության էությունը։

Սակայն միշտ չէ, որ հնչյունափոխական այս կամ այն երևույթը դրսևորվում է ուղղագրական շեղումներով։ Կան դեպքեր, երբ գրավոր լեզվի ամբողջ գոյության ընթացքում տվյալ գիրը իր արժեքի մեջ կատարված փոփոխության վերաբերյալ արտաքին որևէ նշան հանդես չի բերում, և միայն պատմական ու բանասիրական մանրամասն քննությունները են բացահայտում նրանում կատարված տեղաշարժերը։ Այդպիսի դեպքեր կտեսնենք հետագա շարադրանքում։

Գրավոր աղբյուրներից բացի հայերենի պատմական ուսումնասիրության համար օգտակար աղբյուրներ են նաև նրա ժամանակակից բարբառները։

Աշխատության մեջ լայնորեն օգտագործվում են բարբառների աղբյուրագիտական հնարավորությունները։ Նրանց լեզվական փաստերի օգտագործման ժամանակ հաշվի է առնվում, որ բարբառները ծագումնաբանորեն միևնույն նախահիմքից պատմականորեն առաջացած տարբերակներ են, որոնք միաժամանակ իրենց մեջ ունեն այլածին նստվածքներ և փոխադարձ ու օտար ներթափանցումներ։ Նման ծագումնաբանական ելակետը հնարավորություն է տալիս կատարել բարբառների լեզվական փաստերի համեմատական քննություններ, որոնց նպատակն է՝ վերականգնել համեմատվող ձևերի նախատիպերը։ Այդ վերականգնումների արդյունքները՝ զուգակցված պատմական շրջանից ավանդված գրավոր աղբյուրներում վկայված լեզվական տվյալների հետ, հնարավորություն են տալիս նախ՝ հաստատելու վերականգնվող նախաձևի նույնականությունը գրավոր ավանդված հնագույն ձևի հետ և պատմական շրջանում նրան առնչվող տարբերակները դիտել իբրև նորաբանություններ։ Այնուհետև. նման մոտեցման դեպքում հնարավոր է լինում նաև որոշել նորաբանության առաջացման բացարձակ կամ հարաբերական ժամանակը, որը պատմական երևույթների քննության հիմնական խնդիրներից մեկն է։ Եվ վերջապես, որ նույնպես կարևոր է, պայմաններ են ստեղծվում լեզվական այս կամ այն հատկանիշի գործառության սահմանները տարածականորեն տեղայնացնելու։ Վերջին դեպքում հաշվի են առնվում ոչ միայն մատենագրական վկայությունները ու գրավոր աղբյուրների տեղագրությունը, այլև համեմատական բարբառագիտության տվյալները։

Եվ վերջապես, բնական է, որ սույն ուսումնասիրության մեջ օգտագործված պիտի լինեն նաև հայագետ լեզվաբանների աշխատությունները, այդ աշխատություններում արված շահեկան դիտողությունները ու արտահայտած օգտակար մտքերը, որոնք հատկապես առնչվում են այս աշխատության մեջ քննարկվող հարցերին։

Անցյալի ժառանգության յուրացման տեսակետից՝ շեշտը դրված է մասնավորապես անվանի հայագետ Հ. Աճառյանի աշխատությունների վրա, նկատի ունենալով այն, որ այդ աշխատություններն իրենց մեջ

ամփոփում են ժամանակի լեզվաբանական-հայերենագիտական մտքի նվաճումները (ներառյալ Հ. Հյուբշմանի, Ա. Մեյեի, Յ. Կարստի աշխատությունները) և ներկայացնում են դասական լեզվաբանության մակարդակը: Ինքնին հասկանալի է, որ այդ ժամանակից հետո հայերենի պատմական ուսումնասիրության մեջ կատարվել են որոշակի քայլեր՝ կապված նոր մեթոդների կիրառման կամ հին մեթոդների կատարելագործման, լեզվական փաստերի վերաիմաստավորման ու նոր աղբյուրների օգտագործման հետ[5]: Բայց այնուամենայնիվ, առ այսօր ստեղծված չէ հայերենի պատմական քերականության սիստեմատիկ շարադրանք, թեև վերջին տարիների ընթացքում հրապարակվեցին աշխատություններ՝ նվիրված մեր լեզվի առանձին փուլերի[6] կամ աղբյուրների առանձին տեսակների լեզվի պատմական ուսումնասիրությանը[7]:

Այս բոլորից հետո հարկ է նշել նաև հետևյալը: Հայերենի պատմական հնչյունաբանության հիմքում դրվող վերը նկարագրված սկզբունքները մեր կարծիքով այն լավագույնն են, որոնցով կարելի է ապահովել պատմական հետազոտության օբյեկտիվությունը, հետևապես և գիտականությունը: Սակայն ոչ բոլոր դեպքերում է մեզ հաջողվում հետևողական լինել այդ սկզբունքների կիրառման մեջ: Եվ այդ ոչ այնքան սուբյեկտիվ, այլ որքան օբյեկտիվ պատճառներով, քանի որ շատ դեպքերում պատմության այս կամ այն օղակի երևույթների ուսումնասիրության ընթացքում սկսում են պակասել, չբավականացնել անհրաժեշտ փաստերը՝ հսկայածավալ աղբյուրների ոչ բավարար ուսումնասիրվածության պատճառով:

---

5 Այս առումով ուշագրավ են, օրինակ, Է. Բ. Աղայանի «Գրաբարի քերականություն», հ. 1, գ. Ա, 1964, Գ. Բ. Ջահուկյանի «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» 1954, «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» 1964, Ա. Ա. Աբրահամյանի «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» 1953, «Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ» («Տեղեկագիր», 1957, № 4), Ս. Ս. Ղազարյանի «Միջին հայերեն», 1960, աշխատությունները:

6 «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Բ, 1972—1974:

7 Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն (X—XIV դդ.), 1973:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀԱՅԵՐԵՆԻ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ

ՀԱՅԵՐԵՆԻ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՍԿԶԲՈՒՄ

Հայերենն իր այսօրվա դրությամբ (եթե նկատի ունենանք միայն ժամանակակից գրական լեզուները) ունի հետևյալ ձայնավոր հնչույթները՝ a, e, i, ə o, u։ *Դրանք գրական լեզվում համապատասխանաբար արտահայտվում են հայկական այբուբենի հետևյալ տառերով՝* ա, է *(կամ* ե), ի, ը, օ *(կամ* ո*)*, ու: *Ըստ որում* ե*-ն և* ո*-ն միայն բառամիջում ու բառավերջում կարող են արտահայտել* e *և* o *հնչույթները, բառասկզբում նրանցով արտահայտվում են* ye *և* vo *երկհնչյուններ։ Այսօր պատմական շրջանից հասած բնագրերի ընթերցման ժամանակ ևս բառասկզբի* ե *և* ո *տառերին տալիս ենք երկհնչյունային արժեք, իսկ բառի մեջ գրված դիրքերում* է*-ն և* ե*-ն,* օ*-ն և* ո*-ն արտասանությամբ չենք տարբերում*[1]*։*

Գրաբար հին տեքստերի արտաքին մակերեսային դիտարկումը ոչինչ չի ասում նրանցում օգտագործված գրերի հնչյունական արժեքի մասին[2]*։ Ակնհայտ են միայն մի շարք ուղղագրական շեղումներ, իսկ հին ձեռագրերում նաև* օ *գրի լիակատար բացակայություն, որին փոխարինում է* աւ *գրությունը։*

Բնականաբար, ինչպես գրության այսօրվա ձևերը, այնպես և ավանդաբար նրանց տրվող հնչյունական արժեքները, հիմք չեն կարող տալ որոշելու պատմական շրջանի սկզբում հայերենի ձայնավորների համակարգը։ Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ են այլ միջոցներ, որոնց և դիմում են հետազոտողները։

---

[1] *Դրությունը այլ է հայերենի բարբառներում, ուր այդ նույն* ե*-ն և* ո*-ն իրացվում են այլ ձայնավոր հնչյուններով։*

[2] *Այստեղ նկատի ունենք միայն ձայնավորները։*

Հայերենագիտական հետազոտություններում գրաբարի ձայնավորների համար ավանդաբար առանձնացվել են հետևյալ միավորները՝ ա, ե, է, ո, ի, ու, ը, որոնք փաստորեն, այսօրվա դրությամբ, համընկնում են գրական լեզվում ձայնավորներն արտահայտող տառերին։

Սակայն հարկ է նշել, որ այդ շարքի միավորների նկատմամբ տարբեր ուսումնասիրողներ հանդես են բերել (և այժմ էլ հանդես են բերում) տարբեր մոտեցում։ Մեյեն, օրինակ, իր Esqulsse-ում (§ 16) թեև դասական հայերենի համար ընդունում է ձայնավորների վերը նշված շարքը, բայց նրա մեջ է-ն և ե-ն տարբերակում է ըստ ձայնի տեմբրի, գտնելով, որ է-ն ե-ից ավելի փակ է և ծագում է մի հին ey երկբարբառից։ Այս հարցը ավելի մանրամասն քննում է Հ. Աճառյանը իր «Հայոց գրերը» աշխատության մեջ։ Այստեղ նա հիմնվելով Հյուբշմանի „Über Ausspreche und Umschreibung des Altarmenischen“ հոդվածում բերված փաստական նյութի վրա, միաժամանակ օգտագործելով նաև այլ օժանդակ միջոցներ, աշխատում է պարզել մեսրոպյան այբուբենի միավորների, այդ թվում նաև ձայնավորներն արտահայտող գրերի հնչյունական արժեքը։ Այս նպատակով նա նախ համեմատում է հայերենի, հունարենի և հին վրացերենի համապատասխան հնչյունները, որոնց համարժեքությունը պարզվում է համեմատվող լեզուների այբուբեններում հնչյունների տառերի նույնատիպ դասավորությամբ, այսինքն՝ երբ այդ լեզուների այբուբենների այբբենական կարգի համապատասխան տեղում զետեղված են համարժեք հնչյուններ։ Ձայնավորների այդ նույն արժեքականությունը երևում է նաև Թրակացու քերականության հայ թարգմանության այն հատվածներում, որտեղ հայ թարգմանիչը հունարեն ձայնավորների դիմաց դնում է հայերենի համապատասխան ձայնավորները։ Հ. Աճառյանը քննում է նաև օտար լեզուներից հայերենում և հայերենից օտար լեզուներում տառադարձված բառերը, որոնք նույնպես հնարավորություն են տալիս պարզելու հայոց այբուբենի ձայնավորներն արտահայտող տառերի հնչյունական արժեքը[3]։

Այս բոլոր փաստերի հաշվառմամբ ու գնահատմամբ Հ. Աճառյանը գալիս է այն եզրակացության, որ հին հայերենի ա, ի, ու, ը տառերը իրենց արժեքով համապատասխանում էին այսօրվա հնչմանը (a, i, u, ə), ո-ն բոլոր դիրքերում նույն պարզ [o] ձայնավորն էր, իսկ ե-ն և է-ն որպես e ձայնավորի տեսակներ, իրարից տարբերվում էին միայն արտաբերության եղանակով։ «Կը մնա ուրեմն ընդունիլ,—գրում է նա,—թե մեր այս երկու գրերուն (ե և է—Հ. Մ.) տարբերությունը Ե դարուն կկա-

---

[3] Ավելորդ ենք համարում այստեղ բերել Հ. Աճառյանի փաստարկների շարադրանքը։ Ավելի մանրամասն տե՛ս նրա «Հայոց գրերը» (Վիեննա, 1928) գրքի 289—312 էջերում։

յանար լոկ բերնի բացվածքի մեջ, ե կարտասանվեր ավելի բաց, է կարտասանվեր ավելի գոց»[4]։

Առհասարակ, որ ե և է տառերով արտահայտված հնչյունները տարբեր բաներ են եղել, հայագիտության մեջ ոչ ոք կասկածի չի ենթարկել, և այդ ոչ միայն այն պատճառով, որ դրանք նույնը լինելու դեպքում՝ ոչ մի անհրաժեշտություն չէր լինի դրանց համար տարբեր տառեր ստեղծել, այլև այն պատճառով, որ դրանցից ամեն մեկն առանձին վերցրած, դեռևս դասական հայերենում, խոսքի շղթայում իրեն այլ կերպ էր դրսևորում։ Այսպես. շեշտազրկությունից է-ն հնչյունափոխվում էր ի-ի (գէշ—գիշոյ, էջ—իջոյ), այն դեպքում, երբ ե-ն նույն պայմաններում որևէ փոփոխության չէր ենթարկվում (գետ—գետոյ, բեփ—բեփոյ)։ Մյուս կողմից, հայերենի պատմական զարգացման ընթացքում դրանց փոփոխությունները գնացել են տարբեր ուղղություններով։ Օրինակ՝ հայերենի մի շարք բարբառներում, ինչպես Մշո, Վանի, Շատախի և այլն, հին հայերենի ե-ն շեշտի տակ պատմականորեն զարգացել է երկբարբառային ïė-ի, այն դեպքում, երբ նույն դիրքում հին է-ն վերածվել է պարզ e ձայնավորի։ Այդ բանը շատ լավ երևում է հետևյալ բառաշարքերի համեմատությունից. մի կողմից՝ հին հայ. բեռն > Մշ. բ՛եռ, Վն. Շտ. պեռ, բերել > Մշ. բ՛էրել, Վն. Շտ. պիրել, գետ > Մշ. գ՛ետ, Վն. Շտ. կետ, գիշեր > Մշ. գ՛իշեր, Վն. Շտ. կիշեր, երես > Մշ. էրես, Վն. իրես, Շտ. ճիրես և այլն, իսկ մյուս կողմից՝ հին հայ. դէզ > Մշ. դ՛էզ, Վն. Շտ. տէզ, երէկ > Մշ. էրէգ, Վն. էրէկ, Շտ. ճէրէկ, կէս > Մշ. Վն. Շտ. կէս, տէր > Մշ. Վն. Շտ. տէր և այլն[5]։ Այսպիսով ե-ի և է-ի պատմական զարգացման տարբեր ընթացքն ինքնին հաստատում է, որ դրանց տակ հանդես են եկել տարբեր հնչյուններ[6]։ Ուրեմն ամեն մի առարկությունից դուրս է, որ նախապես ե և է տառերով արտահայտվում էին տարբեր որակի հնչյուններ։ Տարակարծություններ առաջանում են միայն այն հարցում, թե դրանք տարբերվում էին

---

4 Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 301։ Մենք այստեղ կանգ չենք առնում ա, ո, ի, ը տառերի հնչյունական արժեքների վրա, քանի որ դասական հայերենի համար դրանք բոլոր ուսումնասիրողների կողմից էլ ընդունվում են որպես պարզ ձայնավորներ՝ այսօրվա հնչյունական արժեքներով (միայն այն տարբերությամբ, որ հին հայերենում ո-ն բառի մեջ դրված բոլոր դիրքերում էլ ուներ նույն արժեքը՝ o)։ Ավելի մանրամասն տե՛ս Հ. Աճառյանի «Հայոց գրերը» և Է. Բ. Աղայանի «Գրաբարի քերականություն» աշխատությունների համապատասխան բաժիններում։ Մենք այստեղ հատկապես կանգ կառնենք ձայնավորներն արտահայտող այն տառերի հնչյունական արժեքների քննության վրա, որոնց պարզ ձայնավորներ լինելու հարցը վիճարկվում է։

5 Հայ բարբառագիտության մեջ ընդունված տառադարձությամբ ե-ով արտահայտված է ïe երկբարբառ, իսկ է-ով՝ պարզ e ձայնավորը։

6 Ինչպես կտեսնենք հայերենի ձայնավորների պատմական փոփոխություններին նվիրված շարադրանքում, այդ երկու հնչյունների տարբերությունը արտահայտվում էր նաև այլ բառբառներում՝ հնչյունափոխական այլ օրինաչափություններով։

միայն բերանի բացվածքո՞վ, ձայնի տեմբրո՞վ, թե՞ մի այլ առանձնահատկությամբ։ Մի քանի էական հանգամանքներ, համենայն դեպս, խոսում են ոչ այդ վարկածի օգտին։

Միանգամայն հիմնավորված կարելի է համարել այն կարծիքը, ըստ որի է-ն ե-ից տարբերվում էր իր երկբարբառային արտասանությամբ։ Այս միտքը, ինչպես տեսանք, արտահայտել էր դեռևս Մեյեն։ Նորագույն ուսումնասիրողներից այդ կարծիքին են նաև Ա. Ա. Աբրահամյանը և Է. Բ. Աղայանը։ Ա. Ա. Աբրահամյանը ձայնավորների վերը նշված շարքից առանձնացնում է է և ու տառերով հնչյունները, որոնց մասին նկատում է. «է տառի համապատասխան հնչյունը երկբարբառային է եղել՝ եյ, ուստի այն զգալապես տարբերվել է ե ձայնավորից, այլապես դրանց համար առանձին տառեր չէին կարող ստեղծվել... Գրաբարում սկզբնապես ու պարզ ձայնավոր չի եղել, նրա դիմաց եղել է ու երկբարբառ՝ ոու (ou) արտասանությամբ, որը գրության մեջ արտահայտված է ո և ւ տառերի համադրությամբ»[7] Մյուս ձայնավորներից զանազանելու համար՝ Ա. Ա. Աբրահամյանը է-ն և ու-ն անվանում է երկբարբառային ձայնավորներ՝ ի հակադրություն բուն երկբարբառների։ Այսպիսով, ըստ Ա. Ա. Աբրահամյանի հին հայերենի պարզ ձայնավորների շարքը սահմանափակվում էր ա, ե, ի, ո, ը (թվով 5) միավորներով։

Է-ի հարցում նույն կարծիքին է նաև Է. Բ. Աղայանը, որը գրաբարի ձայնավորների քննությունը կատարում է հնչույթաբանական վերլուծությունների միջոցով, օգտագործելով նաև դասական լեզվաբանության արդյունքները։ Նրա վերլուծությունների մեջ որպես ձայնավորներ են արժեքավորվում ա, ո, ու, ե, ի, ը միավորները (թվով 6)։ Նա նույնպես է-ն առանձնացնում ու դիտում է որպես երկբարբառակերպ ձայնավոր[8]։ Է. Բ. Աղայանի հիմնական փաստարկը հետևյալն է։ Շեշտազրկությունից հնչյունափոխվող երկբարբառները վերածվում են պարզ ձայնավորների, այն դեպքում, երբ միևնույն պայմաններում հնչյունափոխվող ձայնավորները սղվում կամ վերածվում են ը-ի։ Է-ն պարզ ձայնավոր լինելու դեպքում հնչյունափոխությամբ ոչ թե պետք է փոխվեր ի-ի, այլ պետք է սղվեր կամ դառնար ը։ Եվ քանի որ նա իր այդ փոփոխությամբ հարում է ոչ թե պարզ ձայնավորներին, այլ երկբարբառներին, հետևաբար պարզ ձայնավոր չէր։

Դիտելի և ուշագրավ է, որ է տառով արտահայտվող հնչյունի երկբարբառային բնույթը պարզելիս հաշվի են առնվում նաև մի շարք ներքին օրինաչափ երևույթներ, որոնք արտահայտված են գրաբարի ուղղագրության մեջ։ Այսպես. դասական հայերենի համար օրինաչափ չէ բառն

7 Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, 1958, էջ 4—5։

8 Է. Բ. Աղայան, Գրաբարի քերականություն, հ. I, էջ 140,

ավարտել ա, ո, ե ձայնավորներով։ Այնտեղ, որտեղ այսօրվա արտասանությամբ (նաև գրությամբ) բառավերջում ունենք այդ ձայնավորները, հին շրջանում ա-ից և ո-ից հետո կա յ (արքայ, տղայ, երեկոյ, գետոյ), իսկ ե-ի փոխարեն՝ է (եթէ, երէ, մարգարէ)։ Վերջին դեպքում միանգամայն տրամաբանական է մտածել, որ այդ է-ն կարող էր առաջանալ ե-ի և յ-ի զուգորդումից։ Նման եզրակացություն մակաբերվում է ոչ միայն ա և ո ձայնավորներից հետո յ-ի առկայության հանգամանքով, որ ինքնին վերցրած թույլ փաստարկ կարող է համարվել, այլ նաև բայական որոշ ձևերում նույն երևույթի առկայությամբ։ Դիտարկենք այսպիսի մի օրինակ։ Համեմատենք ա խոնարհման բայերի ներկայի հարացույցի աղամ, աղաս, աղայ, աղամք, աղայք, աղան ձևերը՝ ե խոնարհման բայերի նույն ժամանակի սիրեմ, սիրես, սիրէ, սիրեմք, սիրէք, սիրեն ձևերի հետ։ Համեմատությունը ցույց է տալիս, որ ե խոնարհման բայերի տվյալ հարացույցում խոնարհիչ ե-ն փոխված է է-ի այն դեմքերում, որոնք ա խոնարհման բայերում խոնարհիչից հետո ունեն յ։ Այլ կերպ ասած՝ ե խոնարհման բայերի ներկա ժամանակի եզակի թվի երրորդ դեմքի է-ն և հոգնակի թվի երկրորդ դեմքի էք-ի է-ն այլ բան չեն կարող լինել, քան ե խոնարհիչ+յ (եյ=է՝ երրորդ դեմքում) և ե+յք (եյք=էք՝ երկրորդ դեմքում)։ Նույն միտքը հուշվում է նաև ա և ե խոնարհման բայերի անցյալ անկատարի ձևերի համեմատությունից, երբ մի կողմից ունենք՝ աղա-յի, աղա-յիր, աղա-յր, աղա-յաք, աղա-յիք, աղա-յին և մյուս կողմից՝ գրե-յի=գրէի, գրե-յիր=գրէիր, գրե-յր=գրէր, գրե-յաք=գրէաք, գրե-յիք=գրէիք, գրե-յին=գրէին։ Օրինակներ կարելի է բերել նաև բայական այլ ձևերից, որոնց մեջ նույնպես է-ն արտացոլում է ե-ի և յ-ի զուգորդման փաստը։

Ճիշտ է, հին ձեռագրերը որոշ դեպքերում հանդես են բերում է-ի և ե-ի գրության զուգաձևություններ (եթե-եթէ, թե-թէ, խաւսեին-խաւսէին և այլն), բայց դրանք հանդիպում են ետդասական շրջանից հասած ձեռագրերում, որոնք որպես գրչության մասնակի արտահայտություններ՝ արդյունք են հայերենի տեղային բանավոր-խոսակցական լեզվի որոշ դրսևորումներում է-ի մենաբարբառային հատկության ձեռք բերման և այդ հիմքի վրա հին ե-ի հետ նույնանալուն։ Այդ երևույթի վառ ապացույցն են նաև այդ նույն ձեռագրերում հանդիպող գրության հակառակ ձևերը, երբ ե-ի փոխարեն հանդես է գալիս է-ն[9]։ Այնպես որ դասական

[9] Օրինակ՝ Լազարյան ճեմարանի 887 թ. գրչությամբ ավետարանում, ուր ե-ի և է-ի գրության գրքային կիրառությունները օրինաչափ են, այնուամենայնիվ հանդիպում են ընդունված ուղղագրությունից որոշակի շեղումներ։ Տվյալ բնագրում հետևողականորեն եթէ և թէ շաղկապները գրված են եթե և թե ձևով։ Օժանդակ բայի էին ձևը միշտ գրվում է եին՝ ի նաւն եին, եին արք, բազմեալ եին, եին անուանք, եղեալ եին և այլն. սրանց նմանությամբ նաև անցյալ անկատարի հոգնակի երրորդ դեմքում՝ աղաչեին, առնեին,

շրջանի համար, այնուամենայնիվ, բնորոշ են է-ի դիրքային այն օրինաչափ կիրառությունները, որոնք վերականգնվում են ուղղագրության ընդհանուր կանոնների հաշվառմամբ և ունեն բացարձակ հաճախականություն։ Միաժամանակ դժվար է ենթադրել, թե ե խոնարհման բայերի վերը բերված ձևերում, ե-ի ուղղագրության հարցը որոշելիս, V դարում դիմում էին նման վերլուծությունների։ Ե-ի փոխարեն է գրությունը նման դիրքերում պարզապես գրանցվել է ըստ արտասանության, և միայն վերը բերված փաստերի համադրությունն է, որ մեզ այժմ հիմք է տալիս խոսելու նրա երկբարբառային բնույթի մասին։

Ինչ վերաբերում է ո և ւ գրերի զուգորդությամբ (ու) կազմված տառակապակցությանը, ապա մենք նույնպես հակված ենք կարծելու, որ այն, հայերենի գրի ստեղծման ժամանակ, ուներ ոչ թե երկբարբառային օu-ի, այլ պարզ u ձայնավորի արժեք։ Այն պնդումը, թե քանի որ մեսրոպյան այբուբենում ընդունված է մի հնչյունին մի գիր հատկացնելու սկզբունքը, ուստի և երկու գրով արտահայտված հնչյունը պարզ լինել չի կարող, բավարար փաստարկ չէ, քանի որ, ինչպես հունական, այնպես և նրա հետևողությամբ կազմված այլ ժողովուրդների այբուբեններում նույնպես այն արտահայտված է երկու տառով (համա. հուն. ου, հին սլավ. оу, հին վրաց. ႭჃ)։ Ինչպես նշում է Աճառյանը, գրության այդ ձևերը ընդօրինակված են հունարենից[10]։ Աճառյանը բերում է նաև ու=u համապատասխանության օրինակներ։ Ու տառի պարզ ձայնավորական արժեքը հաստատում են, մի կողմից, փոխատու լեզվի u-ի դիմաց հայերենում ու-ի գործածությունը և մյուս կողմից՝ հայերենի ու-ի դիմաց այլ լեզուներում պարզ u ձայնավորի կիրառությունը։ Այսպես. պրսկ. Sūrēn անձնանունը. որը հայերենում համապատասխանաբար արտահայտված է Սուրէն ձևով, հունարենում տառադարձված է Σουρήνας, լատիներենում՝ Surena, պահլ. Šapuhr>Շապուհ, պահլ. պրսկ.

ասեին, բժշկեին, գայթագղեին, խաւսեին, ունեին, տեսանեին և այլն, այն ժամանակ, երբ եզակի երրորդ դեմքի ձևերում արձանագրվում են աղաչէր, ասէր, բժշկէր, երկիր պագանէր, ուսուցանէր և նման գրության ձևերը։ Փեսայ բառում ե-ի դիմաց գրված է է՝ փէսայ (երկու անգամ նույն էջում) և այլն։ Անկախ այն հանգամանքից, սրանք գրչագրական շեղումներ են, թե գալիս են հին բնագրից, երկու դեպքում էլ կարող են բացատրվել որպես ե-ի դիրքային որոշակի կիրառություններ։ Գրության եբե, րե ձևերը, եթե գրչագրական նորամուծություններ չեն, կարող են ենթադրել տալ, որ հնում բառավերջում հնարավոր էր նաև ե գրությունը։ Օժանդակ բայի եին և նույնի նմանությամբ բայի դիմային վերջավորություններում է-ի փոխարեն ե գրությունը նույնպես, եթե գրչագրական չէ, կարելի է համարել արտասանական տարբերակ (առանց երկու ձայնավորների միջև մուծվող յ-ի)։ Անկախ այս բոլորից, մեր կարծիքով, այս և նման շեղումները վճռական ոչինչ չեն կարող ասել բայական ձևերի վերջավորությունների նախնական գրության ու արտասանության մասին։

10 Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 307—312։

zur>զուր, հուն. ραββουνι>ռաբունի և այլն: Այսպես նաև հայերեն բառերի տառադարձությունները հունարենում և վրացերենում. Արծրունեաց—'Αρτσουρουνων, Ուտեացոց—Ουτιῶν, խախուտ>վրաց. խախուտի, բուրդ>վրաց. բուրդի, պտուղ>վրաց. պտուղի, առու>վրաց. րու և այլն, բոլորի մեջ էլ ու=u համապատասխանությամբ[11]:

Ու-ով արտահայտված հնչյունի պարզ ձայնավոր լինելու օգտին է խոսում նաև հետևյալ դիտողությունը, որ անում է Է. Բ. Աղայանը: Հայտնի է, որ գրաբարի այն երկբարբառները, որոնք շեշտազրկության հետևանքով հանդես են բերում փոփոխություններ, երկբարբառային վիճակից վեր էին ածվում պարզ ձայնավորի: Այսպես էին, օրինակ, եա, ոյ երկբարբառները, որոնք համապատասխանաբար հնչյունափոխվում էին ե-ի և ու-ի (մատեան-մատենագիր, գոյն-գունատ): Նկատի ունենալով ինչպես այս, այնպես և այն, որ առհասարակ գրաբարի բոլոր երկբարբառները հետագայում՝ պատմական զարգացման ընթացքում, մեր բարբառներում վերածվում են պարզ ձայնավորների, կարելի է ընդհանրացնել երկբարբառների փոփոխության այդ առանձնահատկությունը, արձանագրելով, որ դրանք զարգանում են միաբարբառների (պարզ ձայնավորների): Եթե ընդունելու լինենք, որ ու-ն երկբարբառ էր, ապա այն ևս պետք է ենթարկվեր ընդհանուր օրինաչափությանը: Բայց ու-ն չի կարող հարել երկբարբառներին նախ՝ հենց այն պարզ պատճառով, որ եթե ոյ երկբարբառի շեշտազրկությունից առաջացած հնչյունը պարզ ձայնավոր է, ապա ու-ն հենց այդպիսին է, քանի որ ընդհանուր օրինաչափությամբ երկբարբառից երկբարբառ չէ, որ զարգանում է, այլ պարզ ձայնավոր: Մյուս կողմից՝ բուն ու-ն, հենց գրաբարում, շեշտազրկությունից փոխվում է ը-ի (ջուր-ջրոյ) կամ պարզապես սղվում է (գարուն-գարնան), մի հատկություն որից զուրկ են բոլոր երկբարբառները: Ընդհակառակն, իր այս առանձնահատկությամբ ու-ն հարում է ի ձայնավորին, որը նույնպես շեշտազրկությունից սղվում կամ փոխվում է ը-ի (սիրտ-սրտի, ամիս-ամսոյ): Պարզ է, որ նկատի ունենալով ու-ով արտահայտված հնչյունի այս հատկությունները, ինչպես նաև օտար լեզուներից հայերենում և հայերենից օտար լեզուներում կատարված տառադարձությունները, ու-ն երկբարբառ չի կարելի համարել, չնայած որ գրությամբ արտահայտվում է երկու տառով:

Այսպիսով, գրաբարի դասական ենթաշրջանի համար կարելի է առանձնացնել հետևյալ պարզ ձայնավորները՝ a, e, o, u, i, ə , որոնք համապատասխանաբար արտահայտվում են ա, ե, ո, ու, ի, ը, տառերով: Գրական լեզվի հիմքում ընկած այս համակարգի գոյությունը հաս-

---

11 Նույն տեղում, էջ 309:

տատվում է ինչպես հետագա շրջանի գրավոր աղբյուրների, այնպես և ժամանակակից բարբառների լեզվական տվյալներով (տե՛ս էջ 56)։

Պատմական ամբողջ շրջանի ընթացքում հայերենի ձայնավորները շարունակվում են գրանցվել գրային նույն համակարգով, իրենց նախնական հնչյունային արժեքներով։ Միայն դասական շրջանից հետո, բանավոր-խոսակցական լեզվում կատարված հնչյունափոխական երևույթների հողի վրա, e *ձայնավորը սկսում է արտահայտվել նաև* է *գրի միջոցով, վերջինս կորցնելով իր երկբարբառային արտասանությունը, ստանում է պարզ* e *ձայնի արժեք։ Շրթնային* o *ձայնավորի արտահայտման համար,* ո*-ին զուգահեռ, միջին դարերում, որոշակի հնչյունական դիրքերում, սկսում է կիրառել լատիներենից փոխառված* o *տառը, որը հիմնականում փոխարինելու է գալիս հին ու երկբարբառից հնչյունափոխված* o*-ին։ Եվ չնայած այս ժամանակների հայերենի բանավոր-խոսակցական որոշ տարբերակներում հին* ե*-ի և* ո*-ի՝ որոշակի դիրքերում ստացած երկբարբառային կամ երկհնչյունային արտասանությանը, այնուամենայնիվ, դրանք շարունակում են ավանդաբար կատարել իրենց ձայնավորական դերը։*

Միջին դարերում հայերենի մեջ մուտք գործած բազմաթիվ փոխառյալ բառերի գրության ձևերը վկայում են ձայնավորներն արտահայտող տառերի հնչյունական արժեքների կայունության մասին։ Եվ նշանակալից է այն, որ եթե փոխառյալ բառերում բաղաձայն հնչյունների տառադարձությունները միօրինակ չեն, կապված դրանց փոխառման ժամանակի ու տեղային արտասանության առանձնահատկությունների հետ, ապա ձայնավորները տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում արտահայտվում են նույն գրանշաններով՝ համաձայն փոխատու լեզվի ձայնավորների հնչման։ Բազմաթիվ օրինակներից նշենք մի քանիսը. *պրսկ.* sarsam=սարսամ, *արբ.* xabar=խապար, խաբար, *արբ.* γarib=կարիբ, խարիբ, ղարիպ, *հ. ֆր.* lige=լիճ *«ստրուկ»*, *արբ.* ǰulāb=ջուլապ, ճուլապ, *արբ.* qurs=կուրս, ղուրս, *հ. ֆր.* bɔron=բարոն, պարոն, *հ. ֆր.* sol=*սոլ*, *լտ.* comes=կոմս, *հ. ֆր.* frére=ֆրէր *և այլն։*

Հատկանշական է նաև այն, որ այս նույն ժամանակներում օտար աղբյուրներում տառադարձված հայերեն բառերը նույնպես ի հայտ են բերում համապատասխանությունների նույն օրինաչափությունը։ Որպես այդպիսի համապատասխանությունների մի օրինակ կարելի է հիշատակել 13-րդ դարի արաբ աշխարհագիր Յակուտ Ալ-Համավիի «Աշխարհագրական բառագիրք» աշխատությունը, որից քաղում ենք հայկական մի շարք տեղանունների գրության ձևերը (բերում ենք բնորոշ օրինակներ)։ Այսպես՝ Ալիս *(գետի անուն)*=آلس, Խլաթ=خلاط, Անի=آنى, Արճէշ=آرجش, Արտաշատ=اردشاط, Բասէն=باسين, Բալու=بالو, Տա-

մախի = شماخی, Տարոն=طرون, Մոկս=مكس, Մուշ=موش, Վան=وان, Հիզան=حيزان և այլն[12]։

Բերված օրինակներում միշտ չէ, որ հայերենի e, o, ə հնչյունները արտահայտված են հստակորեն՝ արաբերենում դրանց բացակայության պատճառով, բայց a, u, i ձայնավորների համապատասխանությունը որևէ տարակույս չի առաջացնում։

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Պատմական շրջանի սկզբում հայերենի ձայնավորների ունեցած բնույթի և նրանց հնչույթաբանական առանձնահատկությունների մասին կարևոր տեղեկություններ են տալիս հայերենի ժամանակակից բարբառները։ Դրանց լեզվական փաստերը օգտակար են երկու առումով։ Նախ՝ դրանց միջոցով կարելի է իմանալ, թե հայերենի ժամանակակից բարբառները հին գրական հայերենի համեմատությամբ ձայնավորների ինչ համակարգեր են երևան բերում և ապա՝ այդ համակարգերի համեմատությամբ ու համադրությամբ հնարավո՞ր չէ արդյոք ճշգրտել հին հայերենի ձայնավորների որակական առանձնահատկությունների մասին մեր պատկերացումները։ Այս գործում մեզ համար հիմք կարող են ծառայել մեր բարբառներին նվիրված մենագրական ուսումնասիրությունները, ինչպես նաև առանձին բարբառների հնչյունական համակարգերի նկարագրությունները, որոնք ներկայացված են առանձին հոդվածներում։ Ճիշտ է, դրանցից ոչ բոլորի մեջ է ապահովված ուսումնասիրության հնչույթաբանական մակարդակի պահանջները, բայց, այնուամենայնիվ, դրանք իրենց մեջ պարունակում են պատմական ուսումնասիրությունների համար օգտակար տեղեկություններ։

Արդ, օգտվելով այդ ուսումնասիրություններից, աշխատենք եղած հնարավորությունների սահմաններում պատասխանել վերը առաջադրված հարցերին։

Կատարվող համեմատությունների ընթացքում առաջին բնորոշ առանձնահատկությունը, որ աչքի է ընկնում՝ այն է, որ բարբառներում արձանագրվող ձայնավոր հնչյուններն իրենց միավորների թվով միատարր չեն. նրանց քանակը 6-ից տատանվում է մինչև 12-ի։

Ուշադրության արժանի հանգամանք է այն, որ անկախ այդ միավորների քանակի, բոլոր բարբառներն էլ անխտիր ունեն հայերենի համար ընդհանուր վերը նշված վեց ձայնավորները՝ a, e, i, o, u, ə (կամ՝

---

12 Տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Երևան, 1965։

ըստ բարբառագիտական աշխատություններում ընդունված տառադարձության՝ ա, է, ի, օ, ու, ը), որոնք ըստ բոլոր ուսումնասիրողների հավաստիացումների՝ իրենց արտասանական առանձնահատկություններով չեն տարբերվում ժամանակակից գրական հայերենի համապատասխան հնչույթներից։ Դրանք փաստորեն այն ձայնավորներն են, որոնք վերականգնվում են նաև հին գրական հայերենի համար։

Այն ձայնավորները, որոնց համապատասխանները չկան գրական հայերենում և արձանագրվում են միայն բարբառներում, հետևյալներն են (ըստ բարբառագիտական աշխատանքներում ընդունված տառադարձության) ա̈, ö ու̈, ի̈, ըէ, է̈, ը̈, ա̊, ա̱, ը̈ի ‖ ը̇ի[13]։

Ինքնին հասկանալի է, որ գիտության համար հետաքրքիր է իմանալ, թե այդ հնչյունները պատմականորեն առաջացած կատեգորիանե՞ր են, թե՞ եղել են «ի սկզբանե»՝ հին գրական հայերենի ձայնավորական համակարգին զուգահեռ։

Սակայն մինչև այս հարցերի քննության անցնելը՝ անդրադառնանք այդ ձայնավորների հնչյունաբանական բնութագրմանը։

Սրանց մեջ ամենատարածվածները ա̈, ö, ու̈ ձայնավորներն են, որոնք հատուկ են հատկապես Վասպուրականի, Սյունիքի ու Արցախի (Լեռնային Ղարաբաղ) տարածքի բարբառներին։ Այս հնչյունները բնութագրվում են որպես առաջնային շարքի այնպիսի ձայնավորներ, որոնք իրենց արտաբերությամբ տարբերվում են լեզվի բարձրացման տարբեր աստիճաններով, ու̈-ն վերին բարձրացման է, ö-ն միջին ա̈-ն ստորին։ Սրանց ընդունված է անվանել նաև քմային ձայնավորներ։

Մյուս ձայնավորը՝ ի՝-ն, առաջին անգամ գրանցում է Է. Աղայանը իր «Մեղրու բարբառը» ուսումնասիրության մեջ։ «...ի՝-ն ներկայացնում է,— գրում է նա,— ը և ի ձայնավորների միջին աստիճանը, այսինքն վերին բարձրացման ը է»[14]։ Այդ պայմանական նշանով (ի՝) ձայնավոր այնուհետև արձանագրում են Ղարաբաղի և Հադրութի բարբառները ուսումնասիրողները։

---

13 Հ. Աճառյանի բարբառագիտական մենագրություններում, տպագրական հարմարություններից ելնելով, ա̈, Ö, ու̈ տառանշանների փոխարեն օգտագործված են ਲ, եօ, իւ տառերն ու տառակապակցությունները։

Որոշ հետազոտողներ, աշխատելով ավելի «բարեխիղճ» երևալ և օբյեկտիվ լինելու ձգտումով աշխատում են իրենց ուսումնասիրությունների մեջ արձանագրել լսողությամբ ընկալելի ձայնական ամենաաննշան ելևէջները, որոնք սակայն էական նշանակություն չունեն մեզ հետաքրքրող հարցի քննության համար։ Այստեղ մենք բերում ենք միայն այն ձայնավոր հնչյունները, որոնք առավել տարածված են հայերենի բարբառներում և նրանց հնչույթներ լինելու կամ չլինելու հարցը էական նշանակություն ունի հայերենի պատմական հնչյունաբանության ուսումնասիրության համար։

14 Էդ. Աղայան. Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 17,

Պետք է կարծել, որ այս հնչյունի (իՙ) հետ նույնն է Ուրմիայի և Մարաղայի բարբառներում արձանագրվող այն ձայնավորը, որը նշանակվում է ըՙ կամ ը̈ՙ պայմանական նշաններով և բնութագրվում է որպես «կոշտ ի, *որը համապատասխանում է ռուսերեն* ы *հնչյունին»*[15]*։ Քանի որ ռուսերենի* ы*-ն միջին շարքի վերին բարձրացման ձայնավոր է, որին և համապատասխանում են Ուրմիայի և Մարաղայի ըՙ-ն և ը̈ՙ-ն, իսկ Մեղրու բարբառի* իՙ*-ն վերին բարձրացման* ը *է, ուստի պետք է կարծել, որ այստեղ տարբեր տառադարձություններով արտահայտված է նույն հնչյունը։*

*Ըէ -ն բնութագրվում է որպես «*է *և* ը *ձայնավորների միջին ատաճանը»*[16]*։ Արձանագրվում է Մեղրու, Կարճևանի, Ջանգեզուրի տարածքի, Ղարաբաղի, Հադրութի և այլ բարբառներում։*

Էՙ*-ն բնութագրվում է որպես* է *և* ա̈ *ձայնավորների միջին արտասանություն ունեցող հնչյուն*[17]*, որ տարածված է արևմտահայ մի շարք բարբառներում (օր. Երզնկայում)։*

Ը̊ *-ն ներկայանում է որպես միջնալեզվային «ստորին բարձրացման կամ կոշտ* ը*»*[18]*, որը արձանագրվում է Շամախիի, Կաղենի, Զեյթունի, Ղարաբաղի և այլ բարբառներում։*

Ա̱*-ն դիտվում է որպես ռնգային* a *և արձանագրվում է Պոլսի բարբառում (թեև Աճառյանը բարբառի ուսումնասիրության Ձայնախոսություն բաժնում այն չի մտցնում ձայնավորների շարքի մեջ)*[19]*։*

Վերջապես ա̈ *-ն համարվում է «ստորին բարձրացման կամ կոշտ* ա*», որը որոշակիորեն ունի շրթնայնացման երանգ և արձանագրվում է Բայազետի և Մարտունու շրջանի գյուղերի խոսվածքներում*[20]*։*

Բարբառների ձայնավորների մեջ ոմանք ենթադրում են նաև բաց և փակ զույգերի առկայություն։ Այդ հատկապես շեշտվում է e *ձայնավորի համար, հիմնականում նկատի ունենալով հին սեր և սէր, և առհասարակ* ե : է *հին հակադրությունները։ Այդ ենթադրությունը առավելապես հենված է նշված ձայնավորների տարբերակման ավանդական ըմբռնման վրա, քանի որ բարբառները բաց և փակ ձայնավորների հակադրություններ չեն ստեղծում։ Հայտնի է, որ բարբառների մեծագույն մասում այդ երկուսը (*ե*-ն և* է*-ն) այժմ միավորվում են մի պարզ* e *ձայ-*

---

15 Ա. Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 45։* Մ. Ասատրյան, *Ուրմիայի (Խոյի) բարբառը, Երևան, 1962, էջ 19։*

16 Է. Աղայան, *նշվ. աշխ., էջ 17։ Ա. Ղարիբյանը այդ հնչյունը բնորոշում է որպես «երկբարբառային կոշտ է»։ Տե՛ս նշվ. աշխ., էջ 45։*

17 Գ. Կոստանյան, *Երզնկայի բարբառը, Երևան, 1979, էջ 19։*

18 Ա. Ղարիբյան, *նշվ. աշխ., էջ 45։*

19 Հ. Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941, էջ 63։*

20 Ա. Ղարիբյան, *նշվ. աշխ., էջ 45։*

նավորի մեջ։ Միայն որոշ բարբառներում հին ե-ն շեշտի տակ, իսկ որոշ վայրերում նաև շեշտից դուրս, ստացել է երկբարբառային արտասանություն։ Այդ երկբարբառային արտասանությունից է, որ ինչպես մի շարք բարբառներում, այնպես և դրանց հիմքի վրա բարձրացած գրական հայերենում, բառասկզբի ե-ից զարգացել է երկհնչյունային je։ Նկատելի է նաև, որ բառամիջում ե-ի երկբարբառայնության աստիճանը բարբառից բարբառ տարբեր է։ Որոշ բարբառներում այն արտահայտված է խիստ ընդգծվածությամբ, այն դեպքում, երբ այլ բարբառներում այն արտահայտվում է այնքան թույլ, որ չի տարբերվում սովորական e-ից։ Թերևս հենց այս վերջին դեպքում է, որ ստեղծվում է բաց և փակ e-ի գոյության պատրանք։

Մյուս ձայնավորների հակադրությունը ըստ բաց և փակ հատկանիշների բարբառներում չեն արձանագրվում, թեև դրանք, որպես ոչ համակարգային միավորներ, տեսականորեն կարող են գոյություն ունենալ։

Մալաթիայի բարբառի համար մի անվստահ ակնարկ է արվում «բաց և ավելի բաց» ձայնավորների գոյության մասին, որոնք իբր թե առաջանում են բուն շնչեղ խուլերի և ձայնեղներից առաջացած շնչեղ խուլերի մոտ հանդես եկող ձայնավորների տարբերակման համար[21]։ Զննած այդ տեսակետը «Մալաթիայի բարբառը» մենագրության հեղինակը չի պաշտպանում և բերում է որպես բարբառախոսներից մեկի կողմից արտահայտած հնարավոր վարկած, սակայն, մյուս կողմից, երկընտրանքով այդ հարցը դեռևս բաց է համարում և դրա վրա է հրավիրում փորձառական հնչյունաբանության մասնագետների ուշադրությունը։

Բանն այն է, որ Մալաթիայի բարբառում բաղաձայնների տեղի ունեցած տեղաշարժերի հետևանքով, մի շարք տարբեր բառաձևեր արտահայտության պլանում նույնանում են. այսպես, օրինակ՝ դաս>թաս և թաս>թաս, դեւ>թէվ և թեւ>թէվ, դող>թօղ և թող>թօղ, դուռն>Թօռ և թոռն>թօռ, ջուր>չօր և չուր>չօր և այլն։ Այս զույգերի տարբերակման համար ենթադրվում է, թե հին շնչեղ խուլերի մոտ ձայնավորները ավելի բաց են հնչվում, քան ձայնեղներից առաջացած շնչեղ խուլերի մոտ։ Անշուշտ, այս վարկածը առաջ է քաշված վերը բերված նույնանունների տարբերակման համար որևէ հնչյունաբանական հիմք գտնելու նպատակով, սակայն հաշվի չի առնված, որ նույնանուններ առաջացել են նաև նույն շարքի բաղաձայնների փոփոխությամբ, ինչպես՝ գալ>ֆալ և գայլ>ֆալ, որտեղ երկու դեպքում էլ շնչեղ խուլը առաջացել է հին ձայնեղից, հետևաբար և վերը բերված «օրենքով» սպասելիք հետևանքը նույնը պիտի լիներ։ Դեռ ավելին, Մալաթիայի բարբառում նույնանուններ առաջանում են նաև խուլերի ձայնեղացմամբ, ինչպես՝

---

21 Թ. Դանիելյան, *Մալաթիայի բարբառը*, Երևան, 1967, էջ 22։

պագ > բաf, պահf > բաf, կաթ > գաթ «կաթիլ», կաթն > գաթ, տալ(գ) > դալ, տալ(բ) > դալ, կամ(բ) > գամ, կամն > գամ *և այլն, որոնց մեջ ձայնավորները իրենց որակով իրարից տարբերվել չեն կարող, քանի որ հանդես են գալիս նույն խուլից առաջացած ձայնեղի մոտ։ Հետևաբար և «բաց ու ավելի բաց» ձայնավորների գոյության ենթադրությունը որևէ իրական հիմք չունի, մի բան, որ ինքնըստինքյան պարզ է առանց որևէ փորձառական ուսումնասիրության։ Մալաթիայի բարբառում վերը նըշված նույնանունների տարբերակումը թերևս կատարվում է հին շնչեղ խուլերի և ձայնեղներից առաջացած շնչեղ խուլերի արտասանական նըրբին տարբերությամբ, որի մասին նշում են ուսումնասիրողները։ Իսկ եթե այս բարբառում այնուամենայնիվ կան նույնանուններ, ապա պարտադիր չէ, որ նրանց տարբերակումը կատարվի հնչյունաբանական մակարդակում. դրանց իմաստային տարբերակումը կարող է կատարվել խոսքի մեջ՝ շարահյուսական մակարդակում։*

Այսպիսով, չնայած արձանագրվող հնչյուններին տրվող ու այնքան հստակ սահմանումներին, այնուամենայնիվ, հայերենի ա, է, ի, օ, ու, ը *ձայնավորներից բացի, ուսումնասիրողների կողմից, միայն որպես բարբառներին հատուկ ձայնավորներ, արձանագրվում են հետևյալները՝ ա̈, Ö, ու̈, ըէ, է̆ ի̆ (ըʻ, ը̊ʻ), ը̊. ա̊, ա̱, որով ժամանակակից բարբառների ձայնավորների ընդհանուր քանակը հասնում է 15—16 միավորների (ըʻ-ն և ը̊ʻ-ն ի̆-ի հետ նույնացնելու կամ տարբերակելու դեպքում)։*

Անշուշտ, այս ձայնավորները ամբողջությամբ վերցրած հատուկ չեն բոլոր բարբառներին, և ոչ էլ բոլորն են, որ ամենուրեք ունեն հնչույթային արժեք։ Ամենուրեք հնչույթային արժեք ունեն a, e, o, u, i, ə *ձայնավորները, որոնք անկախ բարբառներում պատմականորեն կատարված հնչյունափոխական երևույթների, հանդես են բերում ինքնուրույն հընչույթներին հատուկ գործառություն։*

Բարբառներում առկա մյուս ձայնավորների մասին կարելի է ասել հետևյալը։

Այն բարբառներում, ուր արձանագրվում են ըէ, ի̆ (ըʻ ‖ ը̊ʻ). ը̊, ա̊ հնչյունները, վերջիններս հանդես են գալիս այնպիսի դիրքերում և հընչյունական այնպիսի միջավայրում, որտեղ բացառվում է է, ը, ի, ա *հնչյունների կիրառությունը։ Այդ նշանակում է, որ այդ հնչյունները գործառում են որպես հայերենի* է, ը, ի, ա *հնչույթների դիրքային տարբերակներ և ինքնուրույն հնչույթի արժեք չունեն։*

Քննենք այդ հնչյունների հնչույթներ լինելու կամ չլինելու հարցը ըստ էության։ Նախ ըէ -ի մասին։ Որպես քննության օբյեկտ վերցնենք Մեղրու բարբառը։ Այստեղ թեև այս հնչյունը պատմականորեն հանդես է գալիս հին հայերենի ե, է, ի *ձայնավորների և մասնակիորեն՝* այ *երկ-*

բարբառի դիմաց, բայց ինչպես ցույց է տալիս Է. Բ. Աղայանը, բարբառում այն զարգացել է e *հնչույթից և գործառում է միայն որոշ դիրքերում։*

Մեղրու բարբառում ըէ-ն նախ հանդես է գալիս հին ե-*ի դիմաց հետևյալ բառերում՝* փեսայ>փըէսև, սերմն>սըէրմ, վեց>վըէց, սեպ>սըէպ, կերպ>կըէրպ, կեղ>կըէղ, կեմ>կըէմ, կեռ>կըէռ, տես>տըէս, տեսանել>տըէսնիլ, տնտես>տընդըէս: *Եթե նկատի ունենանք, որ վերջին երկու երկվանկ բառերը* ե-*ի դիմաց ըէ ունեն* տես>տըէս *բառի ազդեցությամբ կամ նրա մեջ կատարված փոփոխության գիտակցմամբ, ապա բացի* փեսայ>փըէսև *բառից, մյուսները միավանկ են։ Այլ կերպ ասած՝* ե-*ըէ համապատասխանությունը օրինաչափ կարելի է համարել (միայն) միավանկ բառերի համար։ Սակայն Մեղրու բարբառում «Մեկ ու մեկուկես վանկանի բառերի մեջ* ե-*ն սովորաբար դառնում է* է, *ինչպես՝* բեռն>բէռնը, գետ>գէտ, տեղ>տէղ, ցեխ>ցէխ, փեղկ>փէխկ, նեղ>նէղ, ճետ>ճէտ, ըրճէտ, ծեփ>ծէփ, ներկ>նէրկ, դեղք>դէխկ *«թույն»,* նեղք>նէխկ, ներքս>նէս, նէքսէվ, սերտ>սէրտ *«սիրտ» և այլն*[22]*։ Քանի որ Մեղրու բարբառում մեկ ու մեկուկես վանկանի բառերի մեջ* ե-*ին հիմնականում համապատասխանում է* է-*ն և միայն մի շարք բառերում է, որ այն արտահայտվում է ըէ-ի միջոցով, ապա վերջինս հնչույթային արժեք կարող է ունենալ միայն այն դեպքում, եթե նույն հնչյունական միջավայրում ու դիրքում հակադրվի* է-*ին։ Սակայն վերը նշված բառերը (*վըէց, սըէպ, կըէրպ *և այլն) ոչ միայն չունեն իրար հակադրվող զույգեր, այլև այդ նույն բառերի* է-*ով արտասանությունը (*վէց, սէպ, կէրպ *և այլն) չի մեղանչում բարբառի ուղղախոսության դեմ։*

Այնուհետև՝ Մեղրու բարբառում ըէ-ն հանդես է գալիս հին է-ի դիմաց, այն էլ միայն ձէթ>ձըէթ, կէս>կըէս, կէտ>կըէտ *բառերում։ Այս դեպքում ևս միավանկ բառերը հին է-ի դիմաց ունեն նաև է, ինչպես՝* գէշ>գէշ *«վատ»,* խէժ>խէժնը, պէտք>պէթկ, շէն>շէն, դէզ>դէզ, սէր>սէր, դէմք>դէմք, տէր>տէր *«քահանա»,* քէն>քէն *(թեև վերջին չորսը դիտվում են որպես գրական լեզվից մուտք գործած բառեր)։ Սակայն ինչպես վերջինները, այնպես էլ առաջինները չեն ստեղծում ըէ-ի և է-ի այնպիսի հակադրություններ, որոնք առաջացնեին իմաստային տարբերություններ, այսինքն՝* ձըէթ *և* ձէթ, կըէս *և* կէս, կըէտ *և* կէտ *զույգերի գոյությունը թեև բացառված չէ, բայց դրանց* է-*ով կամ* ըէ-*ով արտասանությունը հնչույթաբանական արժեք չունի։*

Բարբառային ըէ *հանդես է գալիս նաև հին* ի *ձայնավորի դիմաց։*

---

22 Է. Աղայան, *Մեղրու բարբառը, էջ 32—33։*

Սակայն բարբառի համար օրինաչափ է շեշտի տակ և շեշտից հետո գտնվող ի-ի դիմաց հանդես բերել է. *նման օրինակների թիվը անցնում է հարյուրից։ Միայն մի քանի բառեր են, որոնք հին ի-ի դիմաց ներկայացնում են* ըէ: *Դրանց համար Է. Բ. Աղայանը սահմանում է հետևյալ կանոնը. «Միավանկ և բազմավանկ բառերում շեշտված* ի-ն ծ-*ից հետո կամ* ս, զ-*ից առաջ դառնում է ըէ։ Եղած օրինակներն են՝* ծիծ>ծըէծ, ծիճ>ծըէճ «ըճկեrf», ծիտ>ծըէտ, ծիrտ>ծըէrտ, ծիծաղ>ծըէծաղ, ծիrաճ>ծըէrաճ, ծիr>ծըէr *«ծայր, եզր, գիծ»*, կծիկ>կըծըէկ, միս>մըէս, fիստ>fըէստ, սիսեռճ>սըէսառճը, պիսակ>պըէսակ *«կետ»*, սիճձ>սըէզճը (պտուղը), վիզ>վըէզ, տիզ>տըէզ»[23]: *Սրանց վրա պետք է ավելացնել այս օրենքից դուրս գտնվող մի շարք բառեր, որոնք նույնպես հին* ի-*ի դիմաց ունեն* ըէ. կիr>կըէr, կիճ>կըէճ *(խայթոց)*, *(գետա)* կից>*(գըտը)* կըէց *(տեղանուն է)*, fիթ>fըէթ, fիթկալ>fըէթկալ: *Այստեղ ես* է-ն *և* ըէ-ն *նվազագույն հակադրություններ չեն ստեղծում և հանդես են գալիս որպես* e *հնչույթի ազատ տարբերակներ։ Թերևս միակ բացառությունը կարելի էր համարել* կիr>կըէr *և* կեr>կէr (ուտել *բայի հրամայականը) հակադրությունը, ուր թվում է, թե* ըէ-ն *և* է-ն *ստեղծում են իմաստային տարբերություն, սակայն այս օրինակն էլ հաշվի չպետք է առնել, նկատի ունենալով հեղինակի տողատակում արած հետևյալ դիտողությունը՝ «Մի քանի մեղրեցիներ պնդում են, որ այդ դեպքում էլ ունենք* «ըէ» (կեr>կըէr), *ոմանք ժխտում են*[24]։

Հին հայերենի այ *երկբարբառի դիմաց բարբառում* ըէ *է միայն* ճայս>ճըէս *«մանր ալյուր, խորխոխ» բառում, այն դեպքում, երբ հին* այ-*ի դիմաց հիմնականում* է *է (բացառությամբ որոշ ցուցական դերանունների և մասնակի այլ բառերի)։*

Ի՞նչ կարելի է եզրակացնել այս բոլորից։

Միանգամայն ճիշտ է նկատում Է. Բ. Աղայանը, երբ գրում է. «Այս բոլորից հետևում է, որ ե, է, ի *ձայնավորները (պետք է ավելացնել նաև* այ *երկբարբառը— Հ. Մ.) նախ համապատասխան կանոններով դարձել են* է, *և ապա՝* է-*ն, ըստ այս կանոնի դարձել է* ըէ, *այսպես՝* կեռ>կէռ>կըէռ, կէս>կըէս, կիr>կէr>կըէr *և այլն։ Այդ հաստատվում է նաև արդի խոսակցական լեզվով, որ այժմ բոլոր հնչյունական փոփոխությունները վերափոխում ու վերականգնում է իսկական ձևը, սակայն այս բառերը վերափոխվելով, չեն վերականգնում իրենց* ի, ե *ձայնավորները, այլ նրանց դիմաց ըէ-ից միշտ էլ վերականգնում են* է, *ինչպես՝* կեղ>կէղ>կըէղ>կէղ, կիճ>կէճ>կըէճ>կէճ, կիr>կէr>կըէr>կէr *և այլն.*

23 *Նույն տեղում, էջ 38—39,*

24 *Նույն տեղում, էջ 45։*

այսինքն՝ վերականգնվում է այդ բառերի ոչ թե նախաձևը, այլ միջին ձևը»[25]։

Հեղինակի վերջին դիտողությունը ևս հաստատում է, որ կիր>կըէր և կեր>կէր զույգերը հնչույթային հակադրության արժեք չունեն և որ առհասարակ ըէ-ով արտահայտված ձայնավորը է հնչույթի տարբերակներից մեկն է, որը, եթե նկատի ունենանք «միջին ձևերի» վերականգնումները, նույնիսկ դառնում է e հնչույթի ազատ տարբերակ։

Մեղրու բարբառի ըէ հնչյունի մասին ասվածները վերաբերում են նաև մյուս բարբառներին (Ղարաբաղ, Կարճևան, Կաքավաբերդ, Հադրութ և այլն)։ Դրանց մեջ, անշուշտ, ըէ-ն կարող է հանդես գալ այլ բառերում, ընդգրկելով նման այլ դիրքեր կամ բացառելով որոշ բառեր, բայց այնուամենայնիվ, այն ամենուրեք էլ հանդես է գալիս որպես հայերենի e հնչույթի տարբերակ և ինքնուրույն հնչույթի արժեք չի ստանում։ Դրա լավագույն ապացույցն է նաև այն, որ Ղարաբաղի և Հադրութի բարբառներին նվիրված ուսումնասիրություններում, նույն բառերում այդ հնչյունը՝ ուսումնասիրող հեղինակներից մեկը տառադարձել է ըէ-ով, մյուսը՝ է-ով, կամ հակառակը[26]։ Եվ այդ ոչ թե տարբեր խոսվածքների պատկանող բառերում, որ միանգամայն բնական կարելի էր համարել, այլ նույն Հադրութի բարբառի բառերը գրանցելու ժամանակ։ Այդ նշանակում է, որ խկապես է-ն և ըէ-ն հայերենի նույն e ձայնավորի ազատ տարբերակներն են։

Վերը նշված բարբառներում հնչույթի արժեք չունի նաև ի՛-ով արտահայտված ձայնավորը։ Մենք արդեն ասել ենք, որ այն բնորոշվում է որպես ը-ի և ի-ի միջին արտասանությամբ արտաբերվող մի հնչյուն, որն ունի միջին շարքի վերին բարձրացման հնչարտաբերում և լսողական ընկալմամբ որոշակիորեն հարում է i ձայնավորին, և թերևս այդ է պատճառը, որ բարբառագիտական գրառումներում այն պարզապես արտահայտվում է նաև ի-ի միջոցով։

Այս հնչյունը հանդես է գալիս նախաշեշտ դիրքերի այն ը-ի դիմաց, որը, եթե գաղտնավանկային չէ, ապա այլ ձայնավորներից հնչյունափոխված ը է։ Ըստ որում՝ այս դեպքում ը-ի փոխարեն ի՝-ի հանդես գալը կախված է մի շարք գործոններից, այդ թվում նաև շեշտյալ վանկի ձայնավորից, որը սովորաբար լինում է առաջնալեզվային։ Վերջին դեպքում ի՝-ի գոյությունը կարելի է բացատրել որպես առնմանական հնչյունափոխության արդյունք, երբ շեշտյալ վանկի ձայնավորի ազդեցությամբ նախաշեշտ ը-ի արտաբերությունը մի փոքր բարձրանում է և այդ պատճա-

---

25 Նույն տեղում։

26 Հմմտ. Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, 1966 և Ա. Պողոսյան, Հադրութի բարբառը, 1965։

ռով էլ ը-ի փոխարեն լսվում է ի-ին մոտ հնչյուն։ Այդ բանը լավ երևում է ստորև բերվող օրինակներում, որ քաղված են Մեղրու բարբառից։ Այստեղ մի կողմից ունենք՝ բուճակալ>բի'ճա̈կիլ, բուսած>փի'սա̈ծ, գառնարած>գի'ռնա̈րա̈ծ, գերեզմանատուն>գի'րի'զմա̈տօն, գերմակացուցանել>գի'րմի'կցա̈նիլ և այլն, իսկ մյուս կողմից՝ գլխացաւ>գըլխա̈ցավ, խռովել>խըռա̈վիլ. ծխանոտ>ծըխա̈նուտ, մոռանալ>մըռա̈նիլ, ուրախանալ>ըրխա̈նիլ, սատակել>սըտա̈կիլ և այլն։

Բերված օրինակներում, ինչպես կարելի է նկատել, շատ որոշակիորեն երևում է զաղտնավանկի (կամ նախաշեշտ վանկի) ը-ի փոփոխության մեջ շեշտյալ վանկի ձայնավորի դերը։ Երկրորդ բառաշարքի օրինակներում նախաշեշտ դիրքի ը-ն մնում է անփոփոխ, երբ շեշտյալ և հաջորդ վանկի ձայնավորները ետին շարքի են, մինչդեռ առաջին բառաշարքի բառերի հնչյունափոխված ձայնավորի դիմաց ի՝ է, հաջորդ վանկերի առաջնային շարքի ձայնավորների շնորհիվ։

Այսպիսով, չնայած այն բանին, որ ի́-ն առաջանում է ը-ից (որոշ դեպքերում փոխարինում է նաև հին ի-ին, ինչպես՝ գիշեր>ֆի`շէր), սակայն իր դիրքային բաշխվածությամբ, հնչյունական նույն միջավայրում, հակադրվում է ոչ թե ի-ին, այլ ը-ին և այս տեսակետից էլ հանդես է գալիս ոչ թե ը-ի, այլ ի ձայնավորի ազատ տարբերակը։ Այդ բանը որոշակիորեն երևում է այն գրանցումներում, որ կատարված են Ղարաբաղի և Հադրութի բարբառներին նվիրված ուսումնասիրություններում։ Այստեղ հանդիպում են նույն բառի և́ ի`-ով, և́ ի-ով գրության ձևեր՝ քրինձ>պի`րինձ, պիրինձ, փրաւ>կյի'րա̈'վ, գ'իրա̈'վ, շրէշ>շի`րիշ, շիրիշ և այլն։ Միևնույն բառի երկգրություններ կան նաև Մեղրու բարբառին նվիրված ուսումնասիրության մեջ, ինչպես գզել>գի`զիլ, գիզիլ, գզիր>գի`զիր, գիզիր և այլն, որոնք նույնպես ապացուցում են, որ ի`-ն ի հնչույթի ազատ տարբերակն է։

Նույն պատճառաբանություններով հնչույթի արժեք չունի նաև ը̊ ձայնավորը, որը որպես ը-ի արտասանական տարբերակ՝ իմաստակիր չէ և չի կարող ստեղծել նվազագույն հակադրություններ։ ը̊ -ն հիմնականում հանդես է գալիս միավանկ բառերում[27]։ Եվ քանի որ հայերենի ը-ն միշտ գործառում է անշեշտ վանկերում և որպես թույլ ձայնավոր ունի խիստ սուղ արտասանություն, ապա բնական է, որ միավանկ բառերում, երբ նա միակ վանկարարն է, արտաբերվում է ավելի լիահունչ։ Բարբառներում այդ ը̊-ն զարգանում է շեշտի տակ գտնվող ը-ից, որն իր հերթին սերում է այլ ձայնավորների հնչյունափոխությունից. այսպես, օրինակ, Ղարաբաղի բարբառի որոշ խոսվածքներում ունենք՝ ծը̊տ<ծիտ,

27 Այդպես է նաև երկվանկ բառերում, երբ նա շեշտի տակ է, ինչպես Ղարաբ. պը̊նգըլ<բանկն. Շատախ-Խծաբերդ՝ տը̊ռալ<դառնալ և այլն։

տը̈ղ<տեղ, մը̈ծ<մեծ, ճը̈ղ<ճեղ, սը̈վ<սեւ<սեաւ, սօ̈րտ<սիրտ և այլն։ Նույնը մենք տեսնում ենք նաև Կողբնի բարբառում՝ մօ̈տք<միտք, պը̈նչ<պինչ, սը̈րտ<սիրտ, բը̈խ<բեղ և այլն։ Եվ քանի որ նման միավանկ բառերում բացառված է հայերենի ը-ի կիրառությունը, ու սա է և հնչյունական նույն պայմաններում ը-ն և ը̈-ն իրար չեն հակադրվում։

Նոր Բայազետի (Կամոյի) ու Մարտունու շրջանի գյուղերի խոսվածքներին հատուկ ա̊ ձայնավորը ա-ի արտասանական ազատ տարբերակն է, որ կարող է հանդես գալ համարյա բոլոր դիրքերում, որպես այդ խոսվածքների արտասանական բազային հատուկ ձայնավոր։ Համենայն դեպս այն չի հակադրվում չշրթնայնացած ա-ին և որպես նշանակիր անդամ՝ փոխարինում է հայերենի ա ձայնավորին։ Այս հընչյունը, սակայն, որոշ վայրերում կարող է ստանալ նաև հնչույթի արժեք, երբ այն պարզապես գործառում է հին հայերենի ա-ի փոխարեն։ Այդպես է, օրինակ՝ Մոկաց բարբառում (հնարավոր է նաև այլ վայրերում), որտեղ գոյություն ունեն միայն ա-ի շրթնայնացած (ա̊) և քմայնացած (ա̈) տեսակները, որոնք և որպես հնչույթներ հակադրվում են միմյանց փա̊լ «լեռան թեքություն» և փա̈լ«կայծ», տա̊տ «տատիկ» և տա̈տ «դատ» ՛և այլն)[28]։

Այսպիսով վերը քննված ը̈, ի̈, օ̈ ձայնավորները բարբառներում հանդես են գալիս ոչ թե որպես ինքնուրույն հնչույթներ, այլ գործառում են որպես հայերենի հիմնական ձայնավորների դիրքային կամ ազատ տարբերակներ և որպես այդպիսիք ավելի հին, քան դասական հայերենի ձայնավորներն են, չեն կարող լինել։ Դրանք բոլոր դեպքերում զարգացել են հայերենին հատուկ ձայնավոր հնչույթներից՝ պատմական շրջանի տարբեր փուլերում, երբ հայերենի տեղային խոսվածքներում, արտաքին ու ներքին տարբեր գործոնների ազդեցությամբ, դրանց զարգացումը գնացել է միանգամայն ուրույն ճանապարհով։ Այդ միտքը ապացուցվում է ոչ միայն բարբառների ձայնավորների համեմատական քննության արդյունքներով, այլև յուրաքանչյուր բարբառի ներսում կատարված հնչյունափոխական երևույթների հաշվառմամբ։ Վերը բերված օրինակները և նրանց մեջ կատարված ձայնավոր հնչյունների փոփոխությունների քննությունն արդեն հաստատում են այդ միտքը։ Այստեղ որպես լրացուցիչ փաստարկ կարելի է ավելացնել նաև այն, որ եթե դասական հայերենում փոխառված բառերը իրենց արտահայտության պլանում լիովին համընկնում են փոխատու լեզվի ձևերին, ապա ժամանակակից բարբառներում դրանք ի հայտ են բերում այն օրինաչափ փոփոխությունները, որոնք առհասարակ բարբառները դրսևորում են դասական

28 Տե՛ս Մ. Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի, «Հայերենի բարբառագիտական ատլաս» 1, 1982, էջ 116։

հայերենի բառերի նկատմամբ։ Այդ նշանակում է, որ հիշյալ փոփոխությունները բացառապես պատմական են։ Այսպես օրինակ. վերը նշվեց, որ որոշ բարբառներ հին հայերենի ի*-ի դիմաց օրինաչափորեն ունեն* է, *որոշ գիրքերում նաև՝* ըէ, *մի քանի բառերում նաև* ը̈*։ Ո՞րն է սրանցից նախնականը։ Նախնականը և հինը* ի*-ն է, քանի որ հին հայերենից ավանդված փոխառյալ բառերը ևս մայր ձևի* i*-ի դիմաց ունեն* ի*։ Այսպես՝ պրսկ.* āgiš> *հին հայ.* ակիշ> *ժամանակակից բարբառ.* ակէշ, *պրսկ.* dink> *հին հայ.* դինգ>*ժամ. բարբ.* դէնգ, *պհլ.** karmīr, *սոգդ.* karmir> *հին հայ.* կարմիր> *ժամ. բարբ.* կարմէր, *պրսկ.* panir> *հին հայ.* պանիր> *ժամ. բարբ.* պանէր *և այլն։ Այս նույն բարբառային* է*-ն է (զարգացած* ի*-ից կամ* e*-ից), որ որոշ գիրքերում փոխվում է* ըէ*-ի կամ* ը̈*-ի, ինչպես՝ պարթ.* siyāv> *հին հայ. սեաւ>ժամ. բարբ.* սէվ, սըէվ, սը̈վ, *պհլ,* kerp>*հին հայ.* կերպ>*ժամ. բարբ.* կէրպ, կըէրպ, *հուն.* kemos> *հին. հայ.* կէմ>ժամ, *բարբ.* կէմ, կըէմ, *վրաց.* čitl>*հին հայ.* ծիտ>*ժամ. բարբ.* ծէտ, ծըէտ, ծը̈տ *և այլն։*

Անկախ այն բանից, թե բարբառային ըէ*-ն,* ը̈*-ն և* ը̈*-ն ծագումնաբանորեն ինչ ակունք ունեն, նրանք ամեն մի դեպքում՝ տվյալ համակարգում դառնում են համապատասխանորեն* է, ի, ը *հնչույթների դիրքային կամ ազատ տարբերակները։*

Իհարկե, սրանից բնավ չի հետևում, թե քանի որ ըէ, ը̈, ը̈ *հընչյունները զուրկ են հնչույթային արժեքից, ապա և ավելորդ է նրանց նկարագրությունը և բարբառագիտական ուսումնասիրություններում դրանց տեղ հատկացնելը։*

Յուրաքանչյուր բարբառի ձայնավոր հնչյունների արտահայտումը միայն հնչույթային արժեք ունեցող միավորներով ճիշտ չէր լինի և իրական պատկերացում չէր տա ինչպես մոտ կանգնած բարբառների արտասանական տարբերությունների, այնպես էլ նույն բարբառի ներսում առանձին բառերի հնչական առանձնահատկությունների մասին։ Մինչդեռ հայտնի է, որ արտահայտության պլանում բարբառների տարբերությունները խարսխված են հենց նրանց արտասանական առանձնահատկությունների վրա, որոնք շատ հաճախ չեն ստանում հնչույթային հատկանիշի արժեք։ Բայց հայտնի է նաև, որ ձայնավոր հնչույթների դիրքային կամ ազատ տարբերակները բարբառներում կատարված հնչյունափոխական երևույթների յուրօրինակ միջանկյալ օղակներն են, որոնք, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, օգնում են թափանցելու այդ փոփոխությունների մեխանիզմի մեջ։ Այնուհետև, պետք է հաշվի առնել նաև այն, որ լեզուներում ու բարբառներում նոր հնչույթների առաջացումը թեև պայմանավորված է լինում հնչույթաբանական մի շարք գործոններով, սակայն նորի առաջացումը, համենայն դեպս, տեղի է ունենում լեզվում գոյություն ունեցող արտասանական տարբերակների

հիմքի վրա։ Երբ լեզվում տեղի ունեցող այս կամ այն հնչյունափոխական օրենքի հետևանքով սկսում է խախտվել հնչույթների համակարգային փոխհարաբերությունը, վերջինիս հավասարակշռության պահպանման համար որպես հնչույթներ կարող են կյանքի կոչվել հենց այդ տարբերակները։ Հայերենի որոշ բարբառներում այս ճանապարհով են հնչույթի արժեք ստացել ա̈, Ö, ու̈, է́, օ̈ ձայնավորները, որոնք այլ բարբառներում սոսկ ա, օ, ու, է *ձայնավորների արտասանական աղատ կամ դիրքային տարբերակներն են։ Դրանցից* օ̈ *-ի մասին վերն արդեն խոսք եղավ։ Մյուսների մասին կարելի է ասել հետևյալը։*

Ռնգային ա *ձայնավորը, ինչքան մեզ հայտնի է, արձանագրված է միայն Պոլսի բարբառում։ Աճառյանը նկատում է, որ այդ ձայնավորը հանդես է գալիս մասնավոր մի դեպքում, երբ «***ն** *ձայնը* **r**, **ռ** *բաղաձայններից առաջ գտնված ժամանակ՝ միանալով նախորդ* **ա** *ձայնավորի հետ՝ կազմում է ռնգային* ա̄ *հնչյունը. եղած օրինակներն են՝* **ծանr**>ձա̄րը, մանր>մա̄րը, սանտր>սա̄րը, ժանգառ>ժա̄ղռը, խանգարել>խա̄ղռել»[29]*։ Աճառյանը իր ուսումնասիրության «Ձայնախոսություն» բաժնում, ձայնավորների շարքում այս հնչյունը չի դնում, թերևս նկատի ունենալով այն, որ* ա̄ *-ի դրսևորումը զուտ դիրքային է և ընդգրկում է սակավաթիվ բառեր։ Սակայն չնայած այդ հանգամանքին* ա̄*-ն ստանում է հնչույթի արժեք, քանի որ եղած օրինակներից մի երկուսը կարող են հակադրվել ոչ ռնգային* ա *ունեցող այլ բառերի, ինչպես՝* **ծանr**> ձա̄րը, ձա̄ր *և* ծայr>ձառ, մանr>մա̄րը *և* մայr>մարը *(որոշյալ առումով)։ Ինչ խոսք, որ պատմական տեսակետից այս հնչյունը չի կարելի վերագրել հին շրջանին։ Բարբառում իսկ նրա գոյությունը պայմանավորված է փոխազդեցական հնչյունափոխության գործոնով։*

Ինչպես վերն արդեն ասվել է, ա̈, Ö, ու̈ *հնչյունները հայ բարբառներում բնորոշվում են որպես առաջնային շարքի ստորին, միջին և վերին բարձրացման ձայնավորներ։ Անշուշտ, այդ բնորոշման հիմքում ընկած են արտասանական ու ձայնաբանական այն առանձնահատկությունները, որ դրանք ունեն գրական հայերենի* ա, օ, ու *ձայնավորների համեմատությամբ։ Արտասանական հենց այդ տարբերությունների հիմքի վրա է, որ բարբառագիտական ուսումնասիրություններում ձայնավորների շարքում գրվում են նաև* ա̈, Ö, ու̈ *միավորները։ Սակայն այդ ուսումնասիրություններում հնչույթաբանական վերլուծությունների բացակայության պատճառով շատ անգամ անհայտ է մնում, թե դրանցից որոնք են, որ ունեն հնչույթի արժեք և ի՞նչ հարաբերություն գոյություն ունի սրանց և գրական հայերենի համապատասխան ձայնավորների միջև։ Հետազոտողների մեծ մասը արձանագրում է միայն այդ շարքի ձայ-*

---

29 Հ. Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի, Երևան,* **1941**, *էջ* **63**։

նավորների գոյությունը տվյալ բարբառում, երբեմն էլ տալիս դրանց գործառության ոլորտները։

Հայտնի է նաև, որ չնայած գրային արտահայտման ընդհանուր ձևին, տարբեր բարբառային խմբերում դրանք ունեն «քմայնացման» տարբեր աստիճաններ։ Նկատելի է, որ այդ «քմայնացումը» ավելի ուժեղ է արտահայտվում հատկապես արևելյան տարածքի բարբառներում (Ղարաբաղ, Զանգեզուր, Վան, Շատախ և այլն), այն դեպքում, երբ արևմտյան տարածքի մի շարք բարբառներում (Տիգրանակերտ, Մալաթիա, Կեսարիա և այլն) այն ունի ավելի թույլ արտահայտություն։ Այս հանգամանքը թեև հնչույթաբանական էական նշանակություն չունի՝ տեղային արտասանության առանձնահատկություն լինելու պատճառով, սակայն կարևոր է պատմական հնչյունափոխության առանձին երևույթների մեկնաբանության համար։

Որոշել, թե ա̈, օ̈, ու̈ ձայնավորները հայերենի որ բարբառներում ունեն հնչույթի արժեք և որ բարբառներում՝ ոչ, մեր նպատակից դուրս է։ Դա հնարավոր էլ չի անել բոլոր բարբառների համար՝ նյութի սակավության պատճառով։ Մեզ հետաքրքրող հարցի լուսաբանման տեսակետից առավել կարևոր և սկզբունքային նշանակություն ունի այն, թե կա՞ն ընդհանրապես հայերենի այնպիսի բարբառներ, որոնց մեջ ա̈, օ̈, ու̈ ձայնավորները արժեքավորվում են որպես հնչույթներ, եթե՝ այո, ապա այդ հնչյունները առաջացել են պատմականորե՞ն, թե՞ ավանդված են հնից և գոյություն ունեին հենց հին հայերենի գրի առման շրջանում։

Աշխատենք պատասխանել այս հարցերին, շեշտը հատկապես դնելով այն բարբառների վրա, որոնք տվյալ հարցի լուսաբանման համար բավարար նյութ են տալիս։

Նախ ասենք, որ չնայած այն բանին, որ ա̈, օ̈, ու̈ ձայնավորները հայ բարբառներում առավել տարածված հնչյուններ են, բայց այնուամենայնիվ, նրանք տիպական են ոչ բոլոր բարբառների համար։ Քմային ձայնավորների այդ շարքը առավել հատուկ է հայերենի եզրային բարբառներին։ Կենտրոնական և հարակից, ինչպես նաև դրանցից անջատված բարբառները հիմնականում կամ չեն ճանաչում այդ հնչյունները, կամ եթե ճանաչում էլ են, ապա միայն փոխառյալ բառերում և այն էլ, շատ հաճախ, դրանցից միայն մեկը կամ մյուսը։ Այսպես է Արարատյան, Մուշի, Կարնո, Նոր Ջուղայի, Սասունի, Թբիլիսիի, Արդվինի, Մալաթիայի և այլ բարբառներում։ Սրանց մեջ, թերևս ամենատիպականը Նոր Ջուղայի բարբառն է, որը ունի միայն հայերենի վեց ձայնավորները (ա, է, ի, օ, ու, ը)։ Քմայինների մասին Աճառյանը հատուկ նշում է իր ուսումնասիրության մեջ. ա̈, օ̈, ու̈ ձայնավորները, որ շատ սովորական են մի խումբ հայ բարբառների մեջ, չկան այստեղ, օ̈ բնավ գոյություն չունի, ու̈ ձայնավորը երևում է միայն փու̈, թու̈ ձայնարկություններ մեջ,

որոնք սակայն պատկանում են նոր սերնդին, հին սերունդը այդ ձայնարկությունները արտասանում է փու, բու ձևով: Իբրև փոխառություն գրական լեզվից՝ կա նաև ճաղորդութա̈ն բառի մեջ»[30]: Նոր Ջուղայի բարբառին անծանոթ է նաև ա̈ ձայնավորը, որը հայերեն բառերում չի հանդիպում: Այն հանդիպում է միայն պարսկերենից փոխառյալ բառերում, այն էլ միայն նոր սերնդի ներկայացուցիչների մոտ. այստեղ էլ հին սերունդը փոխառյալ բառերի ä-ի դիմաց հնչում է հայերենի սովորական ա-ն[31]: Այս նշանակում է, որ Նոր Ջուղայի բարբառը, չնայած լեզվական նոր միջավայրին և նրա ազդեցություններին, հարազատորեն է պահում հայերենի ձայնավորների համակարգը:

Այս տեսակետից համեմատաբար «մաքուր» է նաև Մշո բարբառը, որը հայերենի վեց հիմնական ձայնավորներից դուրս ճանաչում է միայն ա̈ հնչյունը, այն էլ միայն մի քանի փոխառյալ բառերում:

Այս խմբի մյուս բարբառները քմային ձայնավորներ հանդես են բերում հիմնականում փոխառյալ բառերում: Հնարավոր է, որ այդ բարբառներից մի քանիսում փոխառյալ բառերում հանդես եկող այդ քմայինները իմաստային հակադրություններ ստեղծեն հայերենի սովորական ձայնավորների հետ, ինչպես օրինակ, այդ պատմականորեն առաջացել է Սասունի բարբառում: Այս բարբառը թեև չի ճանաչում Ö հնչյունը ո՛չ հայերեն և ո՛չ էլ փոխառյալ բառերում, իսկ ու̈ հանդիպում է միայն մի քանի բառերում (ակնհայտորեն փոխառյալ), սակայն ա̈-ն նրանում սովորական հնչյուն է և կիրառության հաճախականությամբ չի զիջում հայերենի ա-ին: Թերևս հենց այդ պատճառով էլ մի շարք բառերում ա-ն և ա̈-ն հակադրվում են իրար՝ ստեղծելով իմաստային հակադրություններ: Այսպես. բա̈շ «անասունների ճակատի սպիտակ մազերը» և բաշ «լավ, վարպետորդի», բա̈ս «բավական» և բաս «պահք» (պահս), խա̈զ «մետաքսյա գործ» և խազ «գիծ», շա̈վլի «անասուններին գիշերը արածացնելը» և շավլի «ջրավետ՝ խոտավետ վայր», տա̈լ «թաքստոց» և տալ «խիժ, առաջին կաթը, դալ» և այլն, գուցե գտնվեն և այլ օրինակներ[32]:

Այն բարբառները, որոնք ա̈, Ö, ու̈ ձայնավորները ունեն միայն (կամ հիմնականում՝ միայն) փոխառյալ բառերում, հնարավոր է, որ արդի էտապում ունենան նաև ա: ա̈, օ: Ö, ու: ու̈ հակադրություններով բառեր: Անշուշտ, նման հակադրությունների առկայության դեպքում այդ բարբառներում ա̈-ն, Ö-ն, ու̈-ն կստանան հնչույթի արժեք: Սակայն հայերենի պատմական շրջանի սկզբի ձայնավորների շարքը որոշելու համար դրանք արժեք չունեն, քանի որ օտարամուտ են, բարբառների մեջ են թափանցել

30 Հ. Աճառյան, Քննություն Նոր Ջուղայի բարբառի, 1940, էջ 45:

31 Նույն տեղում, էջ 46:

32 Օրինակները քաղված են Վ. Պետոյանի «Սասունի բարբառը» (1954) գրքի բառարանից:

պատմական շրջանի հետագա էտապներում՝ փոխալյալ բառերի հետ միասին։ Եթե այս խմբի բարբառների բառապաշարից հանենք այս փոխառյալ բառերը իրենց ա̈, ö, ու̈ հնչյուններով, ապա այստեղ կմնան միայն հայերենի բոլոր դրսևորումների համար ընդհանուր վեց ձայնավորները, որոնք նույնանում են հին գրական հայերենի ձայնավորների հետ։ Կարելի՞ է արդյոք սա պատահական համարել։ Կարծում ենք, որ ոչ։ Չէ որ հենց Արարատյան, Մշո, Կարնո, այլ խոսքով կենտրոնական Հայաստանի խոսվածքների հնչյունական համակարգի հիմքի վրա է գրի առնվել հին գրական հայերենը։

Մեզ հետաքրքրող հարցի լուսաբանման տեսակետից կարևոր է նաև քննել ա̈, ö, ու̈ ձայնավորների գործառական արժեքը եղրային բարբառներում, երբ դրանք հատկապես հանդես են գալիս հայերեն բառերում։

Ընդհանրապես ա̈-ն հայերեն բառերում դրսևորվում է հնչյունական տարբեր պայմաններում։ Եթե վերանանք հնչյունափոխական մասնակի դեպքերից և առանձին բարբառներից (որ տվյալ դեպքում էական նշանակություն չունի քննարկվող հարցի համար), ապա ա̈-ի դրսևորման հիմնական օրինաչափությունները կարելի է գտնել հետևյալ կետերի տակ։

ա) Որոշ բարբառներում այն օրինաչափորեն հանդես է գալիս ձայնեղ պայթականներին ու պայթաշփականներին (կամ նրանցից առաջացած խուլերին) հաջորդող ա-ի փոխարեն։ Այսպես, օրինակ՝ բան>բա̈ն, պա̈ն, դաշտ>դա̈շտ, տա̈շտ, գառն>գ'ա̈ռ, կ'ա̈ռ, ձագ>ձա̈գ, ծա̈ք և այլն (Աճառյանի օրենք)։

բ) Ա-ի դիմաց ա̈ դրսևորվում է նաև հին ձայնորդներից առաջ ընկած դիրքում (աւել>ա̈վէլ, ա̈վիլ, արտասուք>ա̈րցունք, արժել>ա̈ժիլ, ա̈րժէլ և այլն)։

գ) Այլ բարբառներ ա̈ ունենում են այ երկբարբառի դիմաց, ինչպես՝ լայն>լա̈ն, մայր>մա̈ր, գայլ>գա̈լ և այլն։

դ) Որոշ վայրերում ա̈-ն հանդես է գալիս ռ-ից առաջ գտնվող ե-ի դիմաց, ինչպես՝ բեռն>բա̈ռ, եռ>ա̈ռք, թեռ>թա̈ռ, ձեռն>ձա̈ռք և այլն։

ե) Մի շարք վայրերում (ներառյալ նաև այն վայրերը, որոնք հանդես են բերում վերը նշված օրինաչափություններից որևէ մեկը) ա̈-ի գոյությունը պայմանավորված է ձայնավորների ներդաշնակությամբ, երբ բառի մեջ առկա առաջնային շարքի ձայնավորների առնմանությամբ նույն շարքի է փոխվում նաև ետնալեզվային ա-ն (բանալի>բիլա̈նի, պիլա̈նիք)։

Նկատենք, որ ա̈-ի հնչյունական դրսևորման այս պայմանները ամեն տեղ չէ, որ հանդես են գալիս անխառն ու «մաքուր» ձևով։ Նախ՝ լինում են բացառություններ՝ պայմանավորված այլ հնչյունական օրինաչափու-

թյուններով, մյուս կողմից՝ բարբառների փոխադարձ ներթափանցումները և պատմական տարբեր էտապներում գրական լեզուների ազդեցությունը որոշակի խախտումներ են առաջացնում այդ օրինաչափ անցումներում։ Սակայն, չնայած այդ բոլորին, այնուամենայնիվ, վերը նշված հնչյունական պայմանները ա̈-ի դրսևորման համար որոշակի են և իզուր չէ, որ բարբառագիտական ուսումնասիրություններում հնչյունափոխական այդ երևույթները դիտվում են որպես կանոնիկ փոփոխություններ։

Ինչ վերաբերում է ա̈-ի հնչույթային արժեքին, ապա պետք է ասել, որ այն որոշ բարբառներում նվազ կամ չափավոր ծանրաբեռնվածությամբ (նայած բարբառին) արժեքավորվում է նաև որպես ինքնուրույն հնչույթ։ Չմտնելով մանրամասնությունների մեջ և հնարավոր չհամարելով քննել եզրային բոլոր բարբառներում ա̈-ի հնչույթային գործառության բոլոր դեպքերը, նպատակայնորեն դիտարկենք նրա հնչույթավորման մի քանի դեպքերը առավել տիպական օրինակներով։

Արևմտյան խմբակցությունից վերցնենք, օրինակ, Կեսարիայի բարբառը։ Այստեղ ա̈-ի՝ որպես հնչույթի գոյությունը, թեև պայմանավորված է վերը նշված հնչյունական որոշակի պայմաններից մի քանիսով միայն, բայց նրա հնչույթավորումը առավելապես կախված է հնչյունափոխական գործոններից։ Այստեղ ա̈-ն թեև ունի գործառական նվազ ծանրաբեռնվածություն, բայց հակադրվում է ա-ին հետևյալ բառերում՝ գալ<կալ (ցորենի) և գա̈լ<գայլ, բառ<բառ (հավի) և բա̈ռ<բեռ «բրդյա թել», դար<դար և դա̈ր<տայր (բայ), գար<կար (գոյ.) և գա̈ր<կայր (բայ) և այլն[33]։ Ինչպես կարելի է նկատել, բերված օրինակներում ա̈-ն առաջացել է այ երկբարբառի և ե ձայնավորի որոշակի դիրքում կատարված փոփոխությունից (այստեղ ե-ն ռ-ից առաջ օրինաչափորեն փոխվում է ա̈-ի, ինչպես և այ-ը՝ ա̈-ի) և հնչույթի արժեք է ստացել այն բանի շնորհիվ, որ խուլերն էլ իրենց հերթին ձայնեղացել են (բացի բեռ>բա̈ռ բառից, որտեղ բառ:բա̈ռ հակադրությունը ստեղծվել է ե>ա̈ հնչյունափոխության հետևանքով)։ Քանի որ երկբարբառի ու ձայնավորի փոփոխությունները այստեղ պատմականորեն կատարված երևույթներ են, ուստի ա̈-ն նախնական լինել չի կարող

Այժմ վերցնենք արևելյան խմբակցությունից Ուրմիայի (Խոյի) բարբառը։ Այստեղ առկա են ա:ա̈ հակադրության այսպիսի օրինակներ՝ տալ<տալ (բայ) և տա̈լ<դալ, տաշտ<տաշտ և տա̈շտ<դաշտ, տաս<տաս (բայ) և տա̈ս<դաս, պարկ<պարկ և պա̈րկ<բարկ և այլն[34],

---

33 Օրինակները քաղված են Ս. Անթոսյանի «Կեսարիայի բարբառը» (1961 թ.), աշխատությունից (ապակետիպ)։

34 Օրինակները քաղված են Մ. Ասատրյանի «Ուրմիայի (Խոյի) բարբառը» աշխատությունից։

(թեև ա̈-ն կարող է հանդես գալ նաև հնչյունական այլ պայմաններում)։ Նման տարբերակիչ հատկությամբ, հնչյունական նույն դիրքում, ա̈-ն հանդես է գալիս նաև Վանի, Շատախի, Ղարաբաղի (որոշ վայրերի), Զանգեզուրի բարբառներում։

Նկատելի է, որ այս տարածքի բարբառներում ա̈-ն հանդես է գալիս որոշակի դիրքում և ապա արժեքավորվում է որպես հնչույթ՝ հատկապես ձայնեղ պայթականների խլացումից հետո։ Դիտելի է, որ այդ ա̈-ն պատմականորեն առաջացել է ձայնեղ պայթականների ու պայթաշփականների հարևանությամբ՝ նրանցից անմիջապես հետո ընկած դիրքում և սկզբնապես՝ մինչև ձայնեղների խլացումը, եղել է ա-ի դիրքային տարբերակը (դաշտ>դա̈շտ և տաշտ>տաշտ)։ Այդ նախնական էտապում ա̈-ն դեռևս գործառական արժեք չի ունեցել, քանի որ դա̈շտ և տաշտ տիպի բառերի իմաստատարբերակումը կատարվել է ձայնեղության ու ոչ ձայնեղության հակադրությամբ (ինչպես հին գրական հայերենում)։ Սակայն երբ կատարվել է ձայնեղների խլացումը և ձայնեղ–խուլ հակադրությունը կորցրել է իր գործառական արժեքը (չեզոքացվել է), «նույնանունների» տարբերակման դերը իր վրա է վերցրել ա-ի դիրքային տարբերակը՝ ա̈-ն, որով և վերջինս ստացել է ինքնուրույն հնչույթի արժեք. օրինակ՝ տալ:տա̈լ (<դա̈լ<դալ), տաշտ:տա̈շտ (<դա̈շտ<դաշտ), տաս:տա̈ս (<դա̈ս<դաս) և այլն։ Անցումնային վիճակը այժմ էլ պահպանված է Կողենի բարբառում, որտեղ ա̈-ն հանդիպում է բացառապես ձայնեղ բաղաձայններից (ներառյալ՝ շփականներից ու ձայնորդներից) հետո, որոնք այս բարբառում պահպանում են իրենց ձայնեղությունը (խոսքը այս դեպքում՝ պայթականների ու պայթաշփականների մասին է)։ Այդ ա̈-ն նշված դիրքում Կողենի բարբառի համար դիրքային տարբերակ է, քանի որ ձայնեղներից հետո բացառված է ոչ քմայնացած ա-ի կիրառությունը[35]։

Ի՞նչ կարելի է եզրակացնել այս քննությունից. այն, որ եթե Վանի, Ուրմիայի և այս խմբի մյուս բարբառներում ա̈-ն հնչույթի արժեք է

---

35 Այստեղ հարկ է հիշել, որ որոշ թուրքագետներ հայերենի բարբառներում առկա քմային ձայնավորների (այդ թվում նաև ա̈-ի) գոյությունը աշխատում են բացատրել թուրքերենի և նրա բարբառների ազդեցությամբ, մի բան, որ սխալ է և սոսկ մակերեսային դիտարկման հետևանք (Աճառյանը ևս նախապես այդպես էր կարծում, բայց հետագայում վերանայեց իր կարծիքը)։ Ա̈-ի և մյուս քմային ձայնավորների գոյությունը հայերենի բարբառներում այլ լեզվական ազդեցությունների արդյունք կարելի է համարել միայն այն դեպքում, եթե այդ հնչյունները առկա են միայն փոխառյալ բառերում և չունեն դիրքային պայմանավորվածություն։ Հայերենի այն բարբառներում, որոնց մեջ քմային ձայնավորների գոյությունը պայմանավորված է որոշակի դիրքերով, դրանք օտար ազդեցությունների հետևանք լինել չեն կարող և կարող են բացատրվել միայն հայերենի ներքին զարգացման օրինաչափություններով։

ստանում հատկապես ձայնեղների խլացման հետևանքով, հետևաբար այն որպես հնչույթ նախնական լինել չի կարող։ Այն, պատմական շրջանի ինչ-որ էտապում, եղել է ա-ի դիրքային տարբերակը, երբ ձայնեղները դեռևս պահպանում էին իրենց որակը։ Այս տեսակետից մոտենալով խնդրին՝ կարելի է ենթադրել, որ հին հայերենի գրի առման շրջանում այս նույն վայրերում խոսվող հայերենի տարբերակներում հնարավոր էր քմային ա̈-ի արտասանությունը՝ ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո ընկած դիրքում։ Ա-ի դիրքային այդպիսի մի տարբերակի գոյության վերաբերյալ հնագույն աղբյուրները օրինակներ չեն տալիս և դա բնական է, եթե նկատի ունենանք, որ հին գրական հայերենի հիմքում ընկած լեզվական տարբերակում ևս չկար այդ հնչյունը։ Այդ բանը մենք տեսանք նաև ժամանակակից հայերենի կենտրոնական բարբառների մեջ, որտեղ ա̈-ն ոչ միայն չուներ հնչույթային արժեք, այլև օտարամուտ էր։

Սակայն մյուս կողմից, բացառված չէ քմային ա̈-ի դիրքային որոշակի կիրառությունը հին գրական հայերենին ժամանակակից եզրային մի շարք բարբառներում։ Այդ բանը հաստատվում է Թրակացու քերականության թարգմանության մեջ թարգմանչի կողմից գալ բայի համար բերվող գամ, գոմ, գեամ բառաշարքի վերջին բառաձևով։ Այդ օրինակները հանրահայտ են, մեկնաբանվել են շատ լեզվաբանների կողմից[36] և այժմ ոչ մի կասկած չի կարող լինել, որ դրանցով արտահայտված են նույն բառի բարբառային տարբեր արտահայտությունները, մանավանդ եթե նկատի ենք ունենում նաև ժամանակակից բարբառներում դրանց համապատասխան դրսևորումները։ Այսպես. գամ («գալիս եմ») բայը, որը հենց հին գրական հայերենի բառաձևն է և ավանդված է պատմական շրջանի գրավոր բոլոր աղբյուրներում որպես նորմատիվ ձև, կենդանի է նաև ժամանակակից գրական հայերենում ու նրա բարբառների մեծագույն մասում (ըստ նրանցում կատարված բաղաձայնական տեղաշարժերի՝ գ՛ամ, գամ, կամ, fամ): Գոմ բառաձևը այսօր էլ կենդանի է Նոր Ջուղայի, Կողենի, Մեղրու, Ագուլիսի, Կարճևանի բարբառներում։ Ըստ որում դրանցից յուրաքանչյուրում ո-ի դիմաց հանդես եկող ձայնավորը բացատրվում է տվյալ բարբառի հնչյունափոխական կանոններով. այսպես՝ Ն. Ջ. գոմ՝ երկբարբառային արտասանությամբ, Կող. մ, Մ ղր. Ագլ. գ՛ո̈մ, Կարճ. գում: Չպետք է կարծել, թե արդի բարբառներում կենդանի այդ ձևերը առաջացել են հին գրական հայերենի գամ ձևից՝ իբր թե ա-ի հետագա փոփոխությամբ։ Այդ ճիշտ չէ, քանի որ այս բարբառներին հատուկ չեն ա>ո, ա>ö, ա>ու̈, ու անցումները։ Ընդհակառակը, դրանցից յուրաքանչյուրում կատարված փոփոխու-

36 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս Բ, էջ 384—385։

թյունը օրինաչափորեն բխում է գոմ ձևից, որը հաստատվում է բազմաթիվ այլ օրինակներով, որոնց մեջ ևս ռ-ն ենթարկվում է նույն հնչյունափոխությանը։

Անշուշտ բարբառային մի ձև է նաև գեամ-ը, որի գրության մեջ ենթադրվում է, թե իբր ե-ով արտահայտված է գ-ի քմայնացումը։ Սակայն ավելի ճիշտ կլիներ ասել, որ այդ գրով նպատակ էր դրվում նշել ա-ի քմայնացումը, մի բան, որ համընկնում է մեր ժամանակակից բարբառների տվյալների հետ։ Ժամանակակից հայերենի բարբառների այն մասում (Վան, Ուրմիա, Շատախ և այլուր), ուր ձայնեղ գ-ից ունենք քմայնացած կ', այդ կ'-ն արդյունք է առաջնային շարքի ա̈ ձայնավորի ազդեցության։ Հիշյալ բարբառներում ա>ա̈ անցումը դիտվում է հատկապես հին ձայնեղներից հետո ընկած դիրքում։ Այստեղ միանգամայն օրինաչափորեն ունենք՝ բակ>պա̈կ, բան>պա̈ն, բանալ>պա̈նա̈լ, բարակ>պա̈րա̈կ, բարկ>պա̈րկ, բարձ>պա̈ռց, դալ>տա̈լ, դալար>տա̈լա̈ր, դաղձն>տա̈խց, դանակ>տա̈նա̈կ, դաշտ>տա̈շտ, դաս>տա̈ս և այլն, որոնք ա>ա̈ ունեն հին ձայնեղներից առաջացած խուլերի մոտ։ Ինքնին հասկանալի է, որ գազան>կ'ա̈զան, գալ>կ'ա̈լ, գալար>կ'ա̈լա̈ր, գանգատ>կ'անգ'ա̈տ և նման այլ ձևերում ձայնեղ գ-ից հետո ա̈-ի գոյությունը պետք է բացատրել նույն օրինաչափությամբ։ Տարբերությունն այստեղ միայն այն է, որ այս դեպքում ձայնեղից առաջացած խուլը միաժամանակ քմայնացած է։ Բայց ետնալեզվային պայթական բաղաձայնի քմայնացումը այդ դիրքում ինքնին հասկանալի մի բան է՝ պայմանավորված առաջնային շարքի ձայնավորի ազդեցությամբ։ Եվ եթե այդ տեսանկյունից նայելու լինենք հնագույն բարբառային գեամ ձևին, ապա կարելի չ ասել, որ նրանում, եթե ե-ով արտահայտված է քմայնացում, ապա այն վերաբերում է ոչ միայն գ-ին, այլև՝ ա-ին։ Դեռ ավելին. վերը բերված օրինաչափությունը նկատի ունենալով՝ քմայնացումը առաջին հերթին պետք է վերագրել ա-ին, որովհետև այն հանդես է գալիս ձայնեղի մոտ նույն օրինաչափությամբ, ինչ որ նկատվում է այսօրվա բարբառներում։ Այդ հնագույն բարբառային գեամ ձևին այսօր համապատասխանում է Ղարաբաղի, Զանգեզուրի, Վանի բարբառների կ'ա̈մ-ը։ Այդ երկու՝ հին ու նոր բարբառային ձևերի տարբերությունը կայանում է միայն նրանում, որ նոր բարբառներում ձայնեղի դիմաց այսօր խուլ է։ Այդ ձևերի համեմատությունը ցույց է տալիս նաև, որ ա>ա̈ փոփոխությունն ավելի հին երևույթ է, քան ձայնեղի խլացումը։ Գեամ բառաձևը ակնարկում է հենց այդ նախնական վիճակը, երբ ձայնեղի մոտ ա-ն քմայնացել էր, բայց ձայնեղը դեռևս խուլի չէր վերածվել։

Այս բոլորից արվող բնական հետևությունն այն է, որ հայերենի եզրային մի շարք բարբառներում (հատկապես արևելյան) բացառված չէր քմայնացած ա̈-ի գոյությունը և ժամանակագրորեն այն հարում է պատմական շրջանի սկզբին (թեև առաջացած կարող էր լինել ավելի վաղ շրջանում)։

Բացի դիրքային այս կիրառությունից, ա̈-ի հնչյունային գործառությունը հնում ենթադրելի է նաև այլ հանգամանքներում, մասնավորապես ձայնորդների հարևանությամբ և առաջնային շարքի ձայնավորների առնմանությամբ։ Ա̈-ի նման կիրառություն նույնպես ենթադրվում է եզրային բարբառներում, սակայն դրանց իրական գոյությունը հնարավոր չէ ապացուցել ո՛չ ժամանակակից բարբառների նյութով, ո՛չ էլ հին հայերենի գրավոր տվյալներով։

Այժմ դառնանք ո̈ւ հնչյունին։

Բարբառներում առաջնային շարքի ո̈ւ-ն հայերեն բառերում հիմնականում գործառում է հետևյալ պայմաններում։

ա) Մի շարք բարբառներում նրա գոյությունը պայմանավորված է որոշակի դիրքով. հանդես է գալիս հին ու-ի դիմաց՝ հատկապես ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո ընկած դիրքում. ինչպես, օրինակ՝ բուրդ>բո̈ւրդ, բո̈ւրթ, պո̈ւրթ[37], գունդ>գ՛ո̈ւնդ. կ՛ո̈ւնդ, դուր>դո̈ւր, տո̈ւր, դուրս>դո̈ւս, տո̈ւս, ձու>ձո̈ւ, ծո̈ւ, ջուր>ջո̈ւր, ճո̈ւր, և այլն (ավելի մանրամասն տե՛ս էջ 92 «Աճառյանի օրենքը»։ Դիրքային այս դրսևորման օրինաչափ լինելը հաստատվում է խուլերից հետո ու-ի անփոփոխ մնալով կամ ու>օ հնչյունափոխությամբ. ինչպես) օրինակ՝ կուլ>կուլ, կօլ, կուծ>կուծ, կօծ, պուկ>պուկ, պօկ, տուն>տուն, տօն և այլն։

բ) Հայերենի որոշ բարբառներում ո̈ւ-ն հանդես է գալիս իւ երկբարբառի դիմաց. ինչպես, օրինակ՝ արիւն>ա̈րո̈ւն, ալիւր>ա̈լո̈ւր, ձիւն>ձո̈ւն, ծո̈ւն, ձիւթ>ձո̈ւթ, ծո̈ւթ, սիւն>սո̈ւն և այլն։

գ) Որոշ բարբառներ ո̈ւ հանդես են բերում նաև հին ոյ երկբարբառի դիմաց. ինչպես, օրինակ՝ բոյն>բո̈ւն, պո̈ւն, բոյլ>բո̈ւլ, լոյս>լո̈ւս, ծոյլ>ծո̈ւլ, գրոյց>գո̈ւրո̈ւց, գըրո̈ւց, շոյտ>շո̈ւտ, քոյր>քո̈ւր և այլն։

դ) Որոշ բարբառներում ո̈ւ-ն հանդես է գալիս հին ո-դիմաց. այդպես է, օրինակ, Սվեդիայի բարբառում (թեև ոչ խիստ օրինաչափությամբ). ինչպես՝ բոլոր>պո̈ւլո̈ւր, բոլորել>պո̈ւլո̈ւլել, գործ>կո̈ւրծ, գորտ>կո̈ւրտ, դող>տո̈ւղ, լող>լո̈ւղ, խոթ>խո̈ւթ, խոտ>խո̈ւդ, կողք>գո̈ւխկ, կոճ>գո̈ւջ, ճոտ>ճո̈ւդ, ճոր>ճո̈ւր, որթ>ճո̈ւրթ և այլն։

Եզրային բարբառներում ո̈ւ-ն թեև տարածված հնչյուն է, բայց

37 Ըստ տարբեր բարբառներում բաղաձայնների կրած փոփոխությունների։

ամեն տեղ չէ, որ նա ստանում է ինքնուրույն հնչույթի արժեք, քանի որ միշտ չէ, որ ու-ն և օ̈-ն հակադրվում են միմյանց։ Դա բացատրվում է նրանով, որ այդ հնչյունները մի շարք բարբառներում բաշխվում են փոխադարձաբար բացառող դիրքերում և այնտեղ, ուր կարող էր հանդես գալ օ̈-ն, ու-ի համար անհնար դիրք է։ Այդպես է, օրինակ, Կողբի բարբառում[38]։

Մյուս կողմից՝ ձայնավորների, երկբարբառների և բաղաձայնների պատմական փոփոխությունները ոչ բոլոր դեպքերում են խախտում տվյալ բարբառի հնչույթային համակարգի հավասարակշռությունը և այնտեղ, որտեղ օ̈-ն և ու-ն չեն հակադրվում որպես հնչույթներ, պարտական են այդ համակարգի հավասարակշռության պահպանմանը։ Այդպիսի դեպքերում շատ հաճախ գործում են այլ օրինաչափություններ, որոնք և կանխում են այս կամ այն հնչույթի ինքնուրույն ձևավորումը։ Բերենք մի օրինակ. Վանի բարբառում տու‖տուր<տուր (տալ բայի հրամայական) և տօ̈<դու, տօ̈ր<դուր հակադրությունները, հետևապես և օ̈-ի հնչույթավորումը իրականացել է ձայնեղից հետո ու>օ̈ անցմամբ և այնուհետև՝ ձայնեղի խլացմամբ։ Ղարաբաղի բարբառի խոսվածքներում թեև առկա են նույն հնչյունափոխական օրինաչափությունները (ձայնեղների մոտ ու>ու̈ անցում և ապա ձայնեղների խլացում), բայց վերը նշված կարգի բառերում չի ստեղծվում ու:օ̈ հակադրություն՝ հին խուլերից հետո ու-ի կրած հնչյունափոխական այլ օրինաչափության հետևանքով։ Ճիշտ է, այստեղ էլ դու դառնում է տօ̈, իսկ դուր>տօ̈ր- բայց տուր-ը հնչյունափոխվում է տօ ‖ տօր ձևերի, որոնք այլևս չեն ստեղծում նվազագույն հակադրություններ։

Մի այլ օրինակ. Մեղրու և Կարճևանի բարբառներում ունենք ձօ̈ն <ձիւն, և ձու<ձուն (որոշյալ առումով), մինչդեռ Ղարաբաղի բարբառում երկու դեպքում էլ օ̈ է (ձիւն>ծօ̈ն, ձու>ծօ̈ն)։ Կարճևանի բարբառում տարբերակվում են գ'օ̈լ<գայլ և գուլ<գոլ<գալ, բայց Մեղրիում երկուսի համար էլ, առանց տարբերակման, նույն գ'օ̈լ ձևն է։ Այս նշանակում է, որ օ̈-ի հնչույթավորման պայմանները բարբառից բարբառ տարբեր են։ Այնուամենայնիվ, ինչպես երևում է բերված օրինակներից, որոշ բարբառներում ու-ն և օ̈-ն ստանում են ինքնուրույն հնչույթների արժեք, թեև տվյալ դեպքում օ̈-ի գործառական ծանրաբեռնվածությունը տվյալ բարբառներում բարձր չէ։ Վերը բերված օրինակների վրա կարելի էր ավելացնել նաև հետևյալները. Ուրմիայի բարբառի համար՝ տուր>տուր և տօ̈ր<դուր. Մեղրիում և Կարճևանում՝ ճուր<ճոր և ճօ̈ր<ոյր, Կեսարիայի բարբառում՝ գուզ<կուզ և գօ̈զ<ողկոյզ, դուր<տուր և դօ̈ր<դիւր։ Հնարավոր է, որ նշված և

---

38 Տե՛ս Ռ. Բաղրամյան, Կողբի բարբառը (ապակետիպ), Երևան, 1961։

չնշված այլ բարբառներում էլ լինեն ուրիշ օրինակներ, բայց դրանցով հարցի էությունը չի փոխվում։ Կարևորը տվյալ դեպքում այն է, որ ու։ու̈ հակադրության պայմաններում դրանք ստանում են հնչույթի արժեք։

Ինչ վերաբերում է պատմական շրջանի սկզբում եզրային որոշ բարբառներում ու̈ քմային տարբերակի գոյությանը, ապա այդպիսին կարելի է ենթադրել միայն ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո ընկած դիրքերում՝ որպես ու-ի դիրքային տարբերակ։ Հին հայերենի ոյ, իւ երկբարբառների և ո ձայնավորի դիմաց այսօրվա որոշ բարբառներում քմային ու̈-ի (իսկ այլ բարբառներում՝ պարզ ու-ի) առկայությունը ակնհայտորեն ետգասական շրջանում կատարված փոփոխություններ են, քանի որ այն բառերը, որոնք իրենց մեջ ունեն այդ փոփոխությունները, դասական շրջանի իրենց գրության ձևերով մատնանշում են ավելի հին վիճակ, քան բարբառային արդի ձևերը։ Դա հաստատվում է պատմահամեմատական լեզվաբանության տվյալներով և այն փոխառյալ բառերի օրինակներով, որ հայերենը կատարել է նախագրային շրջանում։ Այսպես, օրինակ՝ դասական հայերենի այծ բառաձևը, որ ծագում է հնդեվրոպական aig´-ից, իր այ երկբարբառով ավելի մոտ է նախաձևին, քան բարբառային ա̈ձ, ա̈ծ, ած, էծ ձևերը։ Նույնը վերաբերում է նաև այ ունեցող այլ բառերի, ինչպես հայր, մայր, եղբայր և այլն, որոնք օրինաչափորեն գալիս են հնդեվրոպական *pətér, *mātér, *bhrater նախաձևերից, որոնցում կատարված հնչյունափոխական երևույթները ունեն գիտական մեկնաբանություն, հակառակ մար, հար, ախպար||մէր, հէր, ախպէր և այլ բարբառային ձևերի, որոնք կարող են բխեցվել միայն դասական հայերենի ձևերից։

Նույն բանն են ասում նաև փոխառյալ բառերը։ Դրանցից կարելի է հիշել, օրինակ, ձիւթ բառը, որը հայերենում փոխառություն է ասորերենից և իր հնչյունական դրությամբ մոտ է փոխատու լեզվի zifta ձևին։ Այստեղ օտար բառի if կապակցությունը հին հայերենում արտահայտվել է իւ երկբարբառով, որը ավելի հարազատ է, քան արդի բարբառների ձու̈թ, ծու̈թ ձևերում ու̈-ն։

Ավելորդ է թերևս ասել, որ այդ հին ժողովրդական փոխառության մեջ ասորական f-ին հայերենում փոխարինել է նրա լծորդ v-ն, քանի որ հայերենը չի ճանաչել f հնչյուն։ Հայերենի գրի առման շրջանում այդ հնչյունակապակցությունը փակ վանկում գիտակցվել է որպես երկբարբառ iw (իւ)։ Նման օրինակներ կարելի է բերել նաև հնչյունափոխական մյուս դեպքերի համար, որոնք ցույց կտան, որ դասական հայերենի ձևերը ավելի հին ու ավելի հարազատ են փոխատու լեզուների կամ հնդեվրոպական ընդհանրության շրջանի համար վերականգնվող բառերի հնչյունական դրությանը, քան ժամանակակից բարբառներում արձանագրվող

ձևերն են[39]։ Այս բոլորը ապացուցում են մի բան, որ եզրային բարբառներում էլ՝ հատկապես այնտեղ և այն դեպքերում, երբ ու̈-ն հանդես է գալիս հին ոյ, իւ երկբարբառների և ո ձայնավորի դիմաց, նախնական լինել չի կարող, այլ առաջացել է պատմականորեն։

Միակ դիրքը, որի վերաբերյալ անվերապահ բացասական պատասխան տալ հնարավոր չէ, ձայնեղներին հաջորդող դիրքն է, որտեղ կենտրոնական բարբառների ու-ին զուգահեռ հին եզրային որոշ բարբառներում ենթադրելի է քմայնացած ու̈-ի գոյությունը։ Այդ ենթադրությունն ինքնին մակաբերվում է արդի բարբառներում առկա ընդհանուր օրինաչափությունից։ Այստեղ հին ձայնեղ բաղաձայններից հետո առկա է ոչ միայն ա>ա̈, այլև ու>ու̈, ո>ö համապատասխանությունները։ Եվ եթե ճիշտ է, որ V դարի եզրային որոշ բարբառներում ձայնեղ բաղաձայններից հետո ա-ն ուներ քմային արտասանություն (դիրքային տարբերակ), ապա այդ նույն վայրերում բացառված չպետք է համարել նաև ու̈ և ö հնչյունների գոյությունը։

Քմային ö-ն ավելի քիչ հաճախականությամբ հանդես եկող հնչյուն է (նույնիսկ եզրային բարբառներում)։ Եթե նկատի չունենանք նրա մասնակի դրսևորման դեպքերը (ինչպես, օրինակ՝ հին ու-ի դիմաց որոշ բառերում փոխազդեցական հնչյունափոխությամբ առաջացած ö-ն), ապա նրա դրսևորման հիմնական պայմանը մնում է հին ձայնեղներից հետո ընկած դիրքը։ Այսպես է, օրինակ, Կողբնի բարբառում. բողկ> բöլխկ, գոգ>գʻöք, գող>գʻöղ գողանալ>գʻöղանալ, գողութիւն>գʻö-ղութուն, գոմէշ>գʻöմէշ, գովել>կʻöվէլ, գործել>գʻöրծէլ, գորտ> գʻöրտ, դող>դöղ, դորակ>դöրակ, ջոկ>ջöկ, ջորի>ջöրի, ճöրի և այլն[40]։ Նույն բանը նկատելի է նաև Ղարաբաղի բարբառի մի շարք խոսվածքներում՝ բոխի>պöխի, պöխէ, բողկ>պöլխկ, բոռ>պöռնը, գոգ>կʻöք, գող>կʻöղ, դոխն>տöղ, դորակ>տöրա̈կ, ձող>ծöղ, ձոր>ծöր, ջոկ> ճöկ, ջոկել>ճöկէլ, ջորի>ճöրի, ճöրէ և այլն[41]։

Հայերենի զարգացման արդի փուլում՝ նրա բարբառներում, այնտեղ ուր ö-ն գրանցված է որպես հնչյուն, մեծ մասամբ հանդես է գալիս որպես օ-ի դիրքային կամ ազատ տարբերակ և միայն մի քանի բարբառներում է, որ հնչյունափոխական որոշակի ազդակների հետևանքով առաջացած նույնանունների տարբերակման համար ö-ն հակադրվում

39 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, 1951, 364 և հաջորդ էջերը։ Թեև Աճառյանը այդտեղ խոսում է Ագուլիսի բարբառի մասին, բայց այն հավասարապես վերաբերում է հայերենի բոլոր բարբառներին։

40 Ռ. Բաղրամյան, Կողբնի բարբառը (ապակետիպ), 1961, էջ 37—38։

41 Օրինակները քաղված են Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» (1966) գրքի բառացանկից։

է օ-ին։ Այս դեպքերում, անշուշտ, օ-ն և ö-ն ստանում են ինքնուրույն հնչույթների արժեք։ Այսպես է, օրինակ, Ղարաբաղի բարբառի խոսվածքների մի մասում՝ դող>տօղ և տöղ<դոխն, ծոր<ծօր «ծորվածք» և ծöր<ձոր, ճոլ>ճօլ և ճöլ<ուլ, կող>կօղ և կ՛öղ<գող և այլն։ Այսպես նաև Կարճևանի, Կաքավաբերդի բարբառներում՝ ճոլ>ճօլ և ճöլ<ուլ, բօզ «փուշ» (փոխառյալ բառ) և բöզ<բուզ։ Այսպիսի հակադիր զույգեր հնարավոր են նաև արևելյան տարածքի այլ բարբառներում։ Սակայն այստեղ կարևորը օրինակների քանակը չէ և ոչ էլ այն բարբառների թվարկումը, որոնց մեջ ավյալ հնչյունները արժեքավորվում են որպես հնչույթներ։ Առավել կարևոր է այն, որ հայերենի որոշ բարբառներ իրենց ժամանակակից էտապում ä, ö, ü ձայնավորներին տալիս են գործառական արժեք և որոշակիորեն հակադրում են ա, օ, ու հնչույթներին, այն դեպքում, երբ բարբառներում առկա ըէ, յ́, ը̊, ä հնչյունները, ինչպես տեսանք, պարզապես հանդես են գալիս որպես ե, ի, ը, ա ձայնավորների գիրքային կամ ազատ տարբերակները։

Հայերենի արևմտյան մի շարք բարբառներում (Երզնկա, Եդեսիա և այլն) հնչույթի արժեք ունի նաև է՝-ն, որը հակադրվում է հայերենի համար սովորական է-ին։ Այս հակադրությունը ևս առաջանում է այն բանի հետևանքով, որ նախապես՝ արտահայտության պլանում հանդես եկող տարբեր ձևերը պատմական շրջանում ենթարկվելով հնչյունափոխության՝ ձգտում են տարբերակել այդ հիմքի վրա ստեղծված նույնանունները։ Այսպես, Երզնկայի բարբառում այդ հնչյունները հակադրվում են հատկապես բառավերջի դիրքում, երբ բացառական հոլովի է-ին հակադրվում է հրամայականի է՝-ն. այսպես՝ ճըրէ (ջրից) և ճըրէ՝ (ջրի՛ր)[42]։ Եվ քանի որ հրամայականի է՝-ն առաջանում է հին եա երկբարբառային վերջավորությունից, ուստի և նշված հակադրությունը պատմականորեն առաջացած երևույթ է։

Ի՞նչ ընդհանուր եզրակացություններ կարելի է անել վերը շարադրվածից։

ա) Հին գրական հայերենի հիմքում ընկած հայերենի տարբերակին (կամ՝ տարբերակներին) ոչ միայն անծանոթ էին ä, ö, ü առաջնային շարքի ձայնավորները, այլև, դատելով մեր այսօրվա բարբառների ձայնավորական համակարգերից, նրա հիմքում ընկած է եղել Հայաստանի կենտրոնական գավառների խոսվածքներին հատուկ հենց այն հնչյունական համակարգը, որն իր հիմնական գծերով այսօր էլ պահպանված է նույն տարածքի այժմյան բարբառներում։ Եվ քանի որ այդ բարբառներում ä, ö, ü հնչյունները պատմական շրջանում միայն նոր փոխառությունների միջոցով մուտք գործած օտարամուտ տարրեր են, ապա և

42 Տե՛ս Դ. Կոստանդյան, Երզնկայի բարբառը, էջ 20։

հնչույթային արժեք ունեցող ձայնավորները այն վեցն են, որոնք և արձանագրվում են պատմական շրջանի սկզբում։ Մյուս կողմից, ինչպես այսօրվա կենտրոնական բարբառները, այնպես և եզրային բարբառները, ձայնավորների և երկբարբառների մեջ կատարած իրենց փոփոխություններով հաստատում են, որ հայերենի ձայնավորական ընդհանուր համակարգը բաղկացած է եղել a, e, o, u, i, ə միավորներից, որոնք առանց բացառության ընդհանուր են հայերենի բոլոր դրսևորումների համար։

բ) Հնարավոր կարելի է համարել, որ գրական հայերենին և նրա հիմքում ընկած տարբերակին զուգահեռ՝ եզրային բարբառներում, նույն ժամանակներում գոյություն ունենային ä, ö, ü հնչյունները՝ հատկապես ձայնեղներից հետո ընկած դիրքում։ Բայց դրանք պատմական շրջանի սկզբում դեռևս չունեին հնչույթային արժեք, այլ սոսկ a, o, u ձայնավոր հնչույթների դիրքային տարբերակներն էին։

գ) Վերը շարադրվածից կարելի է անել նաև հետևյալ հետևությունը։ Պատմական ամբողջ շրջանում՝ ընդհանուր հայերենին հատուկ ձայնավորական համակարգը մնացել է անփոփոխ։ Պատահական չպետք է համարել, որ ձայնավոր հնչույթների a, e, i, o, u, ə միավորները հատուկ են ոչ միայն հին գրական հայերենին ու արդի արևելահայ ու արևմտահայ գրական լեզուներին, այլև, առանց բացառության, հայերենի բոլոր տարբերակներին։ Եվ չնայած բարբառներում տեղի ունեցած հնչյունափոխական երևույթներին, այդ համակարգը, այնուամենայնիվ, պահպանվել է անաղարտ։

Որոշ բարբառներում առաջնային շարքի ä, ö, ü և ə, է՝ ա հնչյունների հնչույթի արժեք ստանալը նոր երևույթ է, ձևավորված պատմական շրջանում՝ այլ և այլ հնչյունափոխական գործոնների ազդեցությամբ։ Դրանց հնչույթավորումը դիտելով որպես նոր երևույթ, հայերենի պատմական շրջանի սկզբի բոլոր դրսևորումների համար հաստատվում է ձայնավորական մի ընդհանուր համակարգի գոյությունը։ Եվ քանի որ այդ համակարգի միավորները բոլոր բարբառներում ընդահնուր են և իրենց արտասանությամբ համընկնում են արդի գրական հայերենի ձայնավորների հետ, ուստի և դրանք կարելի է նկարագրել մի ընդհանուր հիմունքով։

ՀԱՅԵՐԵՆԻ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայերենի ձայնավոր հնչույթներն ունեն էական հատկանիշներ, որոնցով և տարբերվում են իրարից։ Այդ տարբերացումը կատարվում է արտաբերության տեղի, լեզվի դիրքի և շրթնայնացման ու ոչ շրթնայնացման հատկանիշների հակադրությամբ։

Ըստ արտաբերման տեղի գրական հայերենի ձայնավորները բաշխվում են երեք շարքերում՝ ետին, միջին և առաջնային։ Ետին շարքի ձայնավորները երեքն են՝ ա, օ, ու, *միջին շարքինը միայն՝* ը, *առաջնային շարքում երկուսը՝* է, ի: *Ամեն մի շարքի մեջ մտնող միավորները իրարից տարբերվում են նախ՝ ըստ քիմքի նկատմամբ լեզվի ունեցած բարձրության աստիճանների և ապա նաև՝ արտաբերության ժամանակ շրթունքների մասնակցության կամ ոչ մասնակցության։ Լեզվի բարձրացման աստիճանները երեքն են՝ ստորին, միջին և վերին։ Ըստ այդմ՝ ետին շարքի ձայնավորները ըստ լեզվի բարձրացման աստիճանների բաշխվում են հետևյալ կերպ. ստորին՝* ա, *միջին՝* օ, *վերին՝* ու: *Առաջնային շարքի ձայնավորները ունեն միայն միջին բարձրացում՝* է *և վերին՝* ի: *Միջին շարքի* ը *ձայնավորը ունի լեզվի բարձրացման միջին աստիճան։ Շրթնայնացում ունեն միայն ետին շարքի* օ, ու *ձայնավորները։ Հայերենի ձայնավորների տարբերակիչ այդ հատկանիշները կարելի է արտահայտել պարզ աղյուսակով. այսպես՝*

Շարքերը / *Բարձրացումները*	*Ետին*		*Միջին*		*Առաջնային*	
	ոչ շրթն.	*շրթն.*	*ոչ շրթն.*	*շրթն.*	*ոչ շրթն.*	*շրթն.*
Վերին	—	ու	—	—	ի	—
Միջին	—	օ	ը	—	է	—
Ստորին	ա	—	—	—	—	—

Ի՞նչ է երևում այս աղյուսակից։

Նախ, որ ետին շարքի ոչ շրթնայինների մեջ հայերենը ունի միայն ստորին բարձրացման ա, *որն իր հերթին չունի իր շրթնայնացած զույգը։ Այդպես են նաև ետնալեզվային միջին և վերին բարձրացման շրթնայնացած* օ *և* ու *ձայնավորները, որոնք չունեն իրենց համապատասխան ոչ շրթնայինները։ Միջին շարքը ներկայացված է միայն միջին բարձրացման ձայնավորով։ Այստեղ բացակայում են ոչ միայն ստորին ու վերին բարձրացման միավորները, այլև դրանց համապատասխան շրթնայինների շարքը։ Առաջնային շարքում բացակայում է ոչ միայն ստորին բարձրացման միավորը, այլև ոչ շրթնայինները չունեն հակադիր՝ շրթնայինների շարքը։*

Այս աղյուսակը միաժամանակ ցույց է տալիս, որ հայերենի ձայնավորների համակարգը պոտենցիալ հնարավորություն ունի համալրվելու նոր միավորներով. նրանում կան բաց վանդակներ։

Ձայնավոր հնչույթների այս համակարգը, ինչպես ասվեց, հատուկ է ինչպես արդի գրական հայերենին, այնպես էլ նրա բարբառներին, և

կարծում ենք, որ այն բնորոշ է եղել նաև պատմական շրջանի սկզբի հայերենի բոլոր դրսևորումներին։

Մենք վերը տեսանք, որ հայերենի եզրային մի շարք բարբառներում, գրական լեզվի վեց ձայնավորներից բացի, հնչույթային արժեք ունեին նաև ա̈, Ö, ու̈, ա̊ ձայնավորները։ Եթե հաշվի առնենք նաև այս միավորները, ապա բարբառների համար ձայնավորների համակարգը կընդունի հետևյալ տեսքը.

Շարքերը / Բարձրացումները	Ետին		Միջին		Առաջնային	
	ոչ շրթն.	շրթն.	ոչ շրթն.	շրթն.	ոչ շրթն.	շրթն.
Վերին	—	ու	—	—	ի	ու̈
Միջին	—	օ	ը	—	է	ö
Ստորին	ա	ա̊	—	—	ա̈	—

Աղյուսակում կարելի է տեսնել, թե ինչպես բաց վանդակների մասնակի լրացում է կատարվել։ Առաջնային շարքի ոչ շրթնային ձայնավորների շարքը համալրվել է ստորին բարձրացման ա̈ ձայնավորով։ Ոչ շրթնայինները այստեղ ունեն նաև իրենց նույն շարքի շրթնայինները, թեև դեռևս բացակայում է ստորին բարձրացման միավորը։

Քմայինների շարքի ավելացումը փոփոխություններ չի մտցնում տարբերակիչ հատկանիշների քանակի մեջ։ Ինչպես վերևի, այնպես և այս համակարգի միավորները իրարից տարբերվում են՝ առավելագույն երեք և նվազագույն մեկ հատկանիշով։ Այսպես. օ-ն և ի-ն առանձնանում են որպես ետին և առաջնային շարքի, միջին և վերին բարձրացման, շրթնայնացած և ոչ շրթնայնացած ձայնավորներ (երեք տարբերակիչ հատկանիշ)։ Ու-ն և ի-ն հակադրվում են որպես ետին և առաջնային շարքի, շրթնայնացած և ոչ շրթնայնացած ձայնավորներ (երկու տարբերակիչ հատկանիշներ. սրանց համար ընդհանուր է վերին աստիճանի բարձրացումը)։ Ու-ն և ու̈-ն հակադրվում են միայն մի հատկանիշով՝ որպես ետին և առաջնային շարքի ձայնավորներ։ Նրանց համար ընդհանուր է շրթնայնացումը և լեզվի բարձրացման վերին աստիճանը։ Այսպես նաև համակարգի մյուս միավորները։

Կարելի է նման աղյուսակ կազմել՝ նկատի ունենալով հայերենի բարբառների ոչ միայն հնչույթային, այլ առհասարակ, հնչյունական համակարգը։ Այդ դեպքում աղյուսակը կընդունի հետևյալ տեսքը (էջ 59)։

Եթե համեմատելու լինենք այս աղյուսակը նախորդների հետ, ապա կարելի է նկատել, որ այստեղ լրացված են նախորդների մի շարք բաց վանդակները։ Թեև այստեղ նշված հնչյունների մի մասը դեռևս չունի

ինքնուրույն հնչույթի արժեք, բայց, ինչպես ցույց տրվեց վերևում, դրանք ժամանակի ընթացքում հնչյունաբանական ու հնչյունափոխական որոշ գործոնների ազդեցությամբ ու հետևանքով կարող են վերածվել ինքնուրույն հնչույթների։

Շարքերը / *Բարձրացում.*	*Ետին*		*Միջին*		*Առաջնային*	
	ոչ շրթն.	*շրթն.*	*ոչ շրթն.*	*շրթն.*	*ոչ շրթն.*	*շրթն.*
Վերին	—	ու	ի́	—	ի	ու̈
Միջին	ըᵉ	օ	ը	—	է	ö
Ստորին	ա	օ̈	ը̊	—	ա̈	—

Հնչյունական տարբերակների արձանագրումը և իմաստավորումը կարևոր նշանակություն ունի. նրանք օգնում են հասկանալու պատմության ընթացքում հնչյունների մեջ կատարված փոփոխությունների ներքին մեխանիզմը։ Այսպես, օրինակ. ա-ի դիմաց շրթնային օ-ի կամ ու-ի առկայությունը որոշ բարբառներում կարող է բացատրվել այն միջանկյալ օղակով, որը աղյուսակում ներկայացված է ետին շարքի ստորին բարձրության շրթնային երանգ ունեցող օ̈ *ձայնավորի միջոցով։ Վերջինս* ա > օ̈ > օ > ու *պատմական փոփոխությունների շղթայի մեջ կապող օղակ է։*

ԲԱՌԻ ՄԵՋ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԴԻՐՔԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենի ոչ բոլոր ձայնավորներն են, որ պատմական շրջանի բոլոր փուլերում ունեցել են բառի մեջ դիրքային բաշխման նույն օրինաչափությունները։ Դրանցից միայն ի *և* ու *ձայնավորներն են, որ բառի մեջ ունեցած իրենց դիրքային կիրառություններով ընդհանուր են ինչպես հին ու նոր գրական լեզուներին, այնպես և ժամանակակից բարբառներին։*

Մյուս ձայնավորները՝ ա, է, օ, ը, *ունեն բաշխումնային այլ օրինաչափություններ։*

ա) Հայերենի ձայնավորների մեջ իր կիրառությամբ ամենահաճախականը թեև ա*-ն է, բայց հին հայերենի դասական շրջանում նրա կիրառությունը բացառապես ընկնում էր բառասկզբի և բառամիջի դիրքերին։ Իր բառասկզբային հաճախականությամբ* ա *ձայնավորը գերազանցում է բոլոր հնչույթներին։ Բավական է նշել, որ Աճեռն բառարանում ընդգրկված բառերի մոտ 20%-ը սկսվում է* ա *ձայնավորով։ Մյուս ձայնավորների համեմատությամբ* ա*-ի կիրառությունը գերազանցում է նաև բառամիջի դիրքում։*

Սրանց հակառակ՝ ա-ն բառավերջի դիրքում ուներ սակավ կիրառություն: Բառավերջում ա-ի գործածությունը սահմանափակվում էր մի քանի մասնակի դեպքերում միայն, որոնց մասին նշում են նաև քերականության դասագրքերը: Այսպես. ա-ն կարող էր հանդես գալ մի շարք բայերի հրամայական եղանակի ձևերում՝ աղա՛, իմա՛, ասա՛, արա՛ և այլն. սա, դա, նա դերանուններում և սրանց սեռական, տրական ու հայցական հոլովաձևերում՝ նորա, դորա, սորա, նմա, դմա, սմա, նոքա, դոքա, սոքա, նոցա, դոցա, սոցա, նոսա, դոսա, սոսա. փոխառյալ հատուկ անուններում՝ Շաղիտա, Կատինա, Արաբիա, Աննա, Գալիլիա, Եղիա, Մակեդոնիա, Նիկիա, Եդեսիա և այլն, ինչպես նաև անա և ապա բառերում[43]:

Սակայն այս բոլոր դեպքերում էլ հին ձեռագրերը ուղղագրական միասնականություն հանդես չեն բերում, և հաճախ այդ բառերը բառավերջում ա-ից հետո ունենում են յ կիսաձայն:

Պետք է կարծել սակայն, որ հին գրական հայերենում ա-ի բառավերջյան կիրառությունը (նույնիսկ նշված դեպքերում) համեմատաբար նոր երևույթ էր և որ ավելի հին ժամանակներում ա-ն բառավերջում ունեցել է ավելի՛ սահմանափակ գործածություն: Որ դա այդպես է, երևում է նրանից, որ, օրինակ, վերը նշված հրամայականի ձևերի համար նախապատմական շրջանում վերականգնվում են բաղաձայն վերջավորություններ՝ ասա՛ց>ասա՛, արա՛ր>արա՛, աղա՛ց>աղա՛ և այլն[44], որոնցից և ենթադրում են, որ հետագայում, բառավերջի բաղաձայնի անկմամբ (թերևս հրամայականը անցյալ կատարյալից տարբերակելու համար), առաջացան ձայնավորահանգ վերջավորությունները:

բ) Նույնը կարելի է ասել ո ձայնավորի մասին: Այն ևս հիմնականում հանդես էր գալիս բառասկզբում և բառամիջում. բառավերջում նրա կիրառությունն ա-ի համեմատությամբ ավելի սահմանափակ էր. ունենք միայն պատճառական բայերի հրամայականի եզակիի ձևերում, ինչպես՝ հեռացո՛, զարմացո՛, հնչեցո՛, անցո՛, հասո՛, ուսո՛, մածո՛ և այլն, ինչպես նաև դու դերանվան քո ձևում:

գ) Ձայնավոր է-ն նույնպես հանդես էր գալիս միայն բառասկզբում և բառամիջում. բառավերջում նրա կիրառությունը, գոնե ըստ ուղղագրական կանոնների, բացառված էր: Պատմական շրջանից առաջ, ինչպես արդեն ասվել է, բառավերջում է-ն միանալով յ-ին՝ տվել էր երկբարբառակերպ Է: Ենթադրվում է, որ բառավերջի դիրքում միայն Է գրության առկայությունը ուղղագրական կանոնի ընդհանրացման ար-

43 Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 4: Է. Աղայան, Գրաբարի քերականություն, էջ 100 և այլք:

44 Է. Աղայան նշված աշխ., էջ 99—100:

դյունք է, հետևապես հնարավոր է համարվում որոշ բառերում հին ե-ի (պարզ ձայնավորի) առկայությունը հատկապես միավանկ բառերի վերջում (քե, եքե), թեև այդ բանը ապացուցել հնարավոր չէ հին ձեռագրերի տվյալներով։

դ) Ձայնավորներից ը-ի համար ևս բացառված էր բառավերջի դիրքը։ Այդ ձայնավորը կարող էր հանդես գալ միայն բառասկզբի և բառամիջի դիրքերում, առավել հաճախականությամբ՝ բառամիջում։ Վերջին դեպքում կարող էր գրային արտահայտություն ստանալ կամ չստանալ։ Բառասկզբում պարտադիր կերպով գրային արտահայտություն էր ստանում մի քանի միավանկ բառերում, որոնց մեջ միակ վանկարարն էր (ըստ, ընդ) և բազմավանկ բառերում, որոնց մեջ հանդես էր գալիս հիմնականում ղ, մ, ն ձայնորդներից առաջ, ինչպես՝ ըղձալի, ըմբիշ, ընտանի, ընկեր, ընծայ, ըմբոստ, ըմպել և այլն։ Սրանց մի մասի մեջ ը-ն առաջանում էր ի, ու ձայնավորների հնչյունափոխությունից (իղձ–ըղձալի, ումպ–ըմպել)։ Բառամիջում ը-ն գրավոր արտահայտություն էր ստանում, երբ ածանցման կամ բառաբարդման ժամանակ բաղադրիչներից երկրորդը սկսվում էր ը-ով։ Մյուս դեպքերում, այսինքն՝ երբ այն գտնվում էր բաղաձայնների միջև, սովորաբար գրով չէր արտահայտվում, թեև հին ձեռագրերում հաճախ են այն դեպքերը, երբ այդ դիրքում էլ ը-ն գրվում էր։ Մեսրոպյան շրջանի գրչությամբ ձեռագրերի բացակայության պատճառով այժմ դժվար է որոշակիորեն ասել, թե բառամիջում լսվող ը-ն նախապես գրով արտահայտվո՞ւմ էր, թե՞ ոչ։ Մի բան պարզ է, որ այդ դիրքում (անկախ նրա գրային արտահայտությանը կամ չարտահայտվելուն) ը-ն արտասանվում էր և որոշակիորեն կատարում էր վանկարար ձայնավորի դեր։ Այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ՝ գրել, կրել, սրել, կռել, գնալ, մնալ և այլն, ունեին երկվանկ բառերի արժեք, քանի որ վանկատվում էին գը–րել, կը–րել, սը–րել, կը–ռել, գը–նալ, մը–նալ բաղադրիչների։ Այդ բանը ապացուցված է գիտնականների կողմից, հատկապես միավանկ և երկվանկ բայերի խոնարհման առանձնահատկությունների հաշվառմամբ։ Այսպես, օրինակ, միավանկ և երկվանկ (բազմավանկ) բայերի անցյալ կատարյալի (նաև երկրորդ ապառնու) ձևերի համեմատությունը ցույց է տալիս, որ միավանկ հիմքերը անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքում ստանում են ե նախահավելվածը (եբաց, եկեաց, եթող, եցոյց և այլն), իսկ երկրորդ ապառնու երկրորդ դեմքից սկսած արմատի և վերջավորության ցց զուգորդությունը մնում է անփոփոխ (բացցես, բացցէ և այլն), այն դեպքում, երբ երկվանկ (բազմավանկ) հիմքերը անցյալ կատարյալի նույն ձևերում նախահավելված չեն ստանում (գրեաց, կռեաց, սրեաց և այլն),

ֆիկ ապառնիում ցց *կապակցության առաջին* ց-*ն տարնմանությամբ փոխվում է* ս-*ի* (գրեսցես, գրեսցէ..., կռեսցես, կռեսցէ... *և այլն*)[45],

Նշված գաղտնավանկային դիրքը, որ հատկապես առաջանում է բառասկզբի երկու բաղաձայնների միջև, հայերենի ամենաբնորոշ արտասանական առանձնահատկություններից մեկն է, որը խարսխված է այդ լեզուն կրողների արտասանական բազայի վրա։ Երկու բաղաձայնով բառ չսկսելու այդ հատկությունը հայերենը պահպանել է իր գոյության ամբողջ շրջանում՝ ներառյալ նաև ժամանակակից բարբառները։

Այս տեսակետից բառասկզբի համար առանձնանում է մի դեպք ևս, ուր ենթադրվում է ը-*ի առկայությունը, որը, սակայն, նույնպես գրավոր արտահայտություն չի ստանում։ Դա* սոււլական–շշական+պայթական *կապակցություններով սկսվող բառասկիզբն է, որտեղ* ը-*ի արտասանությունը ենթադրվում է ո՛չ թե առաջին բաղաձայնից հետո, այլ անմիջապես բառասկզբում։ Այսպես,* սպանանել, ստանալ, ստեղծանել, ստոյգ, զգալ, զգածութիւն, շտապել *և նման բառերում* ը-*ն ենթադրվում է* սպ, ստ, զգ, շտ... *կապակցություններից առաջ* (ըսպ, ըստ, ըզգ, ըշտ): *Որ հայերենը երկու և ավելի. բաղաձայններով բառ չի սկսում, բացառություն չընդունող օրենք է, և այստեղ էլ բայական ձևերը նույն օրինաչափությամբ հաստատում են նման բայաբների երկվանկությունը (այսպես՝* սպանանել *բայի անցյալ կատարյալը՝* սպան, ստեղծանել-*ինը՝* ստեղծ՝ *առանց նախահավելվածի.* ստանալ *բայի երկրորդ ապառնին՝* ստացյց, ստասցիս *և այլն՝* ց-*երի տարնմանությամբ և այլն), սակայն հարց է, թե այդ վանկարար* ը-*ն հանդես էր գալիս բառասկզբո՞ւմ, թե՞ առաջին բաղաձայնից հետո։ Հարցը առաջինի օգտին են լուծում հետևյալ մի քանի փաստարկները։ Նախ, որ նման բաղաձայնական կապակցություններից առաջ այժմ էլ գրական հայերենում, թեև ոչ հետևողականորեն, արտասանվում է* ը *(որ համարվում է ավանդական արտասանության հետևանք)։ Երկրորդ՝ հին ձեռագրերում (այստեղ էլ՝ թեև ոչ հետևողականորեն) բոլոր այն դեպքերում, երբ գաղտնավանկի* ը-*ն արտահայտվում է գրով, հանդես է գալիս միայն բառասկզբում։ Եվ երրորդ՝ հայերենի մի շարք բարբառներ այսօր էլ պահպանել են այդ հատկությունը և բաղաձայնական այդ կապակցություններից առաջ ունեն կամ* ը, *կամ դրանից զարգացած* ի: *Այսպես, օրինակ՝ հին* սպանանել-*ի դիմաց ունեն՝ Սվ.* ըսբանիլ, *Պոլ.* ըսպաննէլ, *Մուշ* ըսպանել, *Ծմխ.* ըսպանիլ, *Ուրմ.* ըսպանել, *Ագլ.* ըսպանիլ *և այլն.* սպիտակ *բառի դիմաց՝ Սվ.* իսբըդըգ, *Պոլ.* իսպիդակ, *Կրն.* ըսպիտագ, *Կես.* ըսբիդագ, *Ագլ.* ըս–

---

45 *Այս մասին մանրամասն տե՛ս* Մեյե, Esqulsse, *էջ 52—54, Հ.* Աճառյան, *Լիակատար քերականություն, Ներածություն, էջ 261—262, Է.* Աղայան, *Գրաբարի քերականություն, էջ 84—85 և այլն։*

պայտակ և այլն: Բայց որոշ բարբառներ էլ, ընդհանուր օրինաչափությամբ, ը-ն դնում են առաջին բաղաձայնից հետո: Հմմտ., օրինակ, նույն բառերը հետևյալ բարբառային ձևերի հետ՝ Մեղր. սըպանիլ, Վն. սպանել, Շատ. սըպանել, Կրճ. Կաք. սըպանիլ, Ղարաբաղում զուգահեռաբար սըպանիլ և ըսպանիլ (տարբեր վայրերում) և այլն:

Հաշվի առնելով ժամանակակից բարբառներում սուլական-շչական+պայթական կապակցություններում ը-ի դիրքային արտասանության երկվությունը, կարելի է ենթադրել, որ այդ երևույթը հին է և հնարավոր է, որ հին գրական հայերենի իսկ գրի առման շրջանում հայերենի տարբերակների մի մասում ը-ն արտասանված լինի ընդհանուր օրինաչափությամբ (առաջին բաղաձայնից հետո), իսկ մյուս մասում առաջին բաղաձայնից առաջ՝ բառասկզբում:

Բառամիջի այլ դիրքերում ը-ի հանդես գալը պայմանավորված է այն բանով, թե ըստ հայերենի արտասանական հնարավորությունների տվյալ բաղաձայնների զուգորդումը մի վանկում հնարավո՞ր է, թե՞ ոչ: Բառի մեջ բաղաձայնների կուտակման ժամանակ, եթե այդ բաղաձայնները բաշխվում են տարբեր վանկերի վրա, ապա գաղտնավանկի անհրաժեշտությունը վերանում է, հետևաբար այդ բաղաձայնների միջև ը չի արտասանվում: Ընդհակառակը, եթե բառի մեջ բաղաձայնների շղթայական հաջորդականությունն այնպիսին է, որ նրանք բոլորը մի վանկում արտասանվել չեն կարող, ստեղծվում է լրացուցիչ վանկ՝ ը վանկարարով: Գրաբարի վանկի կառուցվածքի և նրանում բաղաձայնների օրինաչափ բոլոր զուգորդումների քննությունը կատարել է Է. Բ. Աղայանը իր «Գրաբարի քերականություն» աշխատության մեջ[46]: Պետք է ասել, որ այն բոլոր օրինաչափությունները, որ բացահայտված են այդ քննության ընթացքում, բնորոշ են ոչ միայն դասական հայերենին, այլև գրական հայերենի բոլոր տարբերակներին:

Այսպիսով, մեր լեզվի պատմության առաջին փուլում ոչ բոլոր ձայնավորներն են, որ կարող էին հանդես գալ բառի մեջ բոլոր դիրքերում: Այդ հատկությունը ունեին միայն ի և ու ձայնավորները, որոնք միավորվում էին նաև երկու այլ հատկանիշներով. երկուսն էլ վերին բարձրացման սուղ ձայնավորներ էին, որոնք շեշտազրկությունից սղվում կամ հնչյունափոխվում էին ը-ի: Հայերենի մյուս ձայնավորներից Ե-ի և ը-ի համար բացառված էր բառավերջի դիրքում հանդես գալը. երկուսն էլ միջին բարձրացման ձայնավորներ էին: Ա և ո ձայնավորները կարծես թե միջին դիրք էին գրավում այս երկու զույգերի միջև. բառավերջը սրանց համար թեև սահմանափակված, բայց բացառված դիրք չէր:

Բառի մեջ ձայնավորների բաշխման վերը նկարագրված այն օրի-

---

[46] Է. Աղայան, նշված աշխ. 247 և հաջորդ էջերը:

նաչափությունները, որոնք հատուկ էին հին գրական հայերենի դասական շրջանին, հետագայում՝ պատմական շրջանում, ենթարկվում են փոփոխությունների։ Այդ հատկապես վերաբերում է ա, ո, ե, ը ձայնավորներին, որոնց բաշխումնային կիրառությունները, ինչպես տեսանք, պատմական շրջանի սկզբում սահմանափակվում էին միայն բառասկզբի ու բառամիջի դիրքերով։

ա) Բառավերջի դիրքում ա-ի և ո-ի կիրառության այն դեպքերը, որոնք նկարագրվեցին վերը, դասական հայերենի համար դիտվում են որպես ընդհանուր օրինաչափությունից կատարվող շեղումներ, քանի որ դրանք քանակապես մեծ թիվ չեն կազմում այն բազմաթիվ բառերի համեմատությամբ, որոնք այսօրվա արտասանությամբ վերջանում են ա կամ ո ձայնավորներով, իսկ դասական շրջանում իրենցից հետո ունեին յ (արքայ, տղայ, աբեղայ, զարմանայ, աղայ, խաղայ, երեկոյ, սիրոյ, գետոյ և այլն)։ Բացառությունների առկայությունը արդեն ապացույց է այն բանի, որ հին գրական հայերենի գրի առման շրջանում արդեն հնարավոր էր դառնում բառավերջում ա և ո ձայնավորների կիրառությունը։ Այն հանգամանքը, որ փոխառյալ հատուկ անունների գրության մեջ բառավերջի ա-ից հետո յ այլևս չի գրվում, խոսում է ընդհանուր օրինաչափության ոչ գործուն լինելու մասին։ Եվ հենց այս հիմքի վրա է, որ հետագայում բառավերջի յ-ն, աստիճանաբար դուրս մղվելով, ստանում է համր գրի արժեք, որի հետևանքով էլ ա-ն և ո-ն սկսում են հանդես գալ բառավերջի դիրքում։ VI—VII դարերի վիմական արձանագրություններում արդեն արձանագրվում է այդ երևույթը, այնուհետև բազմաթիվ օրինակներով վկայվում է հետագա դարերի գրավոր աղբյուրներում, թեև ավանդաբար դեռևս շարունակվում են գրության հին ձևերը։ Այնպես որ միջին հայերենի շրջանում արդեն ա և ո ձայնավորները հանդես են գալիս բառի մեջ գրված բոլոր դիրքերում՝ առանց որևէ սահմանափակման։

Բառի մեջ ա-ի և ո-ի դիրքային բաշխման այդ օրինաչափությունը հարատևում է մինչև մեր օրերը՝ դրսևորվելով աշխարհաբարում և նրա գրական լեզուներում։ Այս տեսակետից բացառություն չեն նաև բարբառները։ Միայն թե այստեղ բառավերջյան օ-ի կիրառությունը ամեն տեղ նույն հաճախականությունը չունի։ Դա բացատրվում է նրանով, որ բարբառները ոչ բոլոր դեպքերում են հնից ժառանգել օ-ի բառավերջյան կիրառությունը և մյուս կողմից՝ փոխել են բառավերջյան ո-ի և ոյ-ի հին արտասանությունը։ Այսպես. պատճառական բայերի հրամայական ձևերը, որոնք հին հայերենում վերջավորված էին ո-ով, բարբառներում հանդես են գալիս միանգամայն այլ հիմքակազմությամբ. ըստ որում բառավերջի ո-ն այստեղ հնչյունափոխված է ու-ի, կամ ա-ի, իսկ որոշ վայրերում էլ ունի բաղաձայն վերջավորություն (հասո > հասցրու, հաս-

ցուր, ճասցրա)։ Թեև ոյ-ը հիմնականում հնչյունափոխված է ու-ի (երեկոյ>իրիկուն, ըրակու, սիրոյ>սիրու, մատանոյ>մատանու և այլն), բայց, այնուամենայնիվ, բարբառները այս կամ այն չափով բառավերջում ունեն օ (կըռօ, ղըմբօ. հատուկ անձնանուններում՝ Մարօ, Արշօ, Կարօ, Մարգօ և այլն)։

բ) Նույնը կարելի է ասել նաև e ձայնավորի մասին։ Արդեն իսկ հին գրական հայերենի ետդասական շրջանում գրաբարյան է-ն կորցնելով իր երկբարբառային բնույթը՝ նույնանում է ե ձայնավորի հետ։ Այս հիմքի վրա e-ն սկսում է հանդես գալ նաև բառավերջի դիրքում։ Գրական լեզվում դիրքային այդ նոր կիրառությունը, որ իր հիմքերն ուներ բանավոր-խոսակցական լեզվի որոշ տարբերակներում, ավանդաբար շարունակվում է գրաբարի գործառության ամբողջ ընթացքում և այնուհետև փոխանցվում է նոր գրական լեզուներին։

Արդի էտապում նոր գրական հայերենում e-ի կիրառությունը բառավերջում սովորական է ինչպես հնից ավանդված բառերում, այնպես էլ նոր փոխառություններում (մարգարե, ճասցե, ոռեէ, երբեէ, կոմիտե և այլն, որոնց բառավերջի ե, է գրերը ժամանակակից ուղղախոսությամբ հավասարապես ունեն e-ի արժեք)։ Այս տեսակետից բարբառները ևս բացառություն չեն կազմում։ Այստեղ էլ e-ի բառավերջյան կիրառությունը մեկ գալիս է հին է-ի մենաբարբառային արտասանությունից, երբեմն էլ այն պայմանավորված է պատմական հնչյունափոխության այլ գործոններով ու նորագույն փոխառություններով և այլն։ Միայն թե դիրքային այդ կիրառության հաճախականությունը բարբառից բարբառ տարբեր է։

գ) Ը ձայնավորի բառասկզբի և բառամիջի հին կիրառությունները (ներառյալ գաղտնավանկայինը) պահպանվում են հայերենի գործառության բոլոր ժամանակներում ու դրսևորումներում։ Դեռ ավելին. որոշ բարբառներում դրա բառասկզբային կիրառության շրջանակները ավելի ընդլայնվել են՝ կապված հատկապես այդ բարբառներում սուր շեշտի ազդեցության հետ, որի հետևանքով բառասկզբի ձայնավորները հնչյունափոխվել են ը-ի (աղաման>ըղաման, ուղեղ>ըղօղ, երեկոյ>ըրակու, և այլն)։ Այս երևույթը առավել հատուկ է Ղարաբաղի, Զանգեզուրի տարածքի բարբառներին, թեև նման հնչյունափոխված կիրառություններ բացառված չեն նաև այլ բարբառներում։

Որոշ պրոբլեմատիկություն ունի ը ձայնավորի բառավերջյան կիրառությունը։ Այսօրվա դրությամբ ը-ն բառավերջում հանդես է գալիս ինչպես նոր գրական լեզուներում, այնպես և բարբառների մեծագույն մասում։ Այդ դիրքում ը-ի կիրառությունը բարբառներում հիմնականում արտահայտվում է որոշիչ հոդով, թեև կան նաև առանձին բառեր, որոնք ը ունեն իրենց ուղիղ ձևերում։ Վերջիններս հիմնականում այն բառերն

են, որոնք հին հայերենում ունեին բաղաձայն+ն վերջավորություն։ Պատմական շրջանում դրանցում ն-ի անկումից հետո որոշ բառերում պահպանվել է գաղտնավանկի ը-ի արտասանությունը։ Ահա այդ ը-ն է, որ հանդես է գալիս բառավերջում։ Նման բառեր են, օրինակ՝ ինն>ինը, ինքն>ինքը, դառն>դառը, սառն>սառը, տասն>տասը և այլն։ Սրանց մի մասը առկա է նաև նոր գրական հայերենում։ Որոշ բարբառներում նման ը զարգացել է առհասարակ բաղաձայն+ն կազմության բառերի մեծ մասում՝ ձուկն>ձուգը, ծուկը, գառն>գառը, բոռն>բօռը և այլն։

Բառական ուղիղ ձևերում, նույն հին հայերենյան բաղաձայն+ն կազմության բառերում, բառավերջում ը ունեն նաև Ղարադաղ-Ղարաբաղ տարածքի բարբառների մեծ մասը։ Սակայն ի տարբերություն վերը նշված բարբառների, այստեղ ը-ն բառավերջում հայտնվել է ոչ թե ն-ի անկումից հետո, այլ գաղտնավանկի ը-ի դրափոխությամբ դեպի բառավերջ՝ ն-ի պահպանմամբ։ Հին հայերենյան այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ՝ եզն, բոռն, ձուկն, մուկն, գառն և այլն, այստեղ ունեն յէզնը, իզնը, բօռնը, ձուկնը, ծöկնը, մուկնը, մօկնը, գ'öռնը, կ'öռնը արտասանությունը։

Կարևոր է նշել, որ ուղիղ ձևերում ը ունեցող բառերը միանգամայն անտարբեր են որոշյալության ու անորոշության նկատմամբ, այսինքն՝ նույն ձևով գործածվում են ինչպես անորոշ, այնպես և որոշյալ առումներով. այսպես, օրինակ՝ «խանութից ձուգը բէր», «խանութան ծöկնը պէր» (անորոշ). «էս ձուգը հօտէլ ա», «էս ծöկնը վըէտէլ ա» (որոշյալ)։ Բացի սրանից՝ երբ ը-ին հաջորդում է ձայնավորով սկսվող բառ, ը-ն փոխարինվում է ն-ով՝ բարբառների առաջին խմբում (նաև գրական լեզվում, ինչպես՝ ձուգն է ուտում, էս ձուգն էսօր առա), կամ ընկնում է՝ բարբառների երկրորդ խմբում (ինչպես՝ ծöկն ա օտըմ, էս ծöկն ըմ öզöմ, էն մինը öզöմ չիմ):

Ենթադրվում է, որ բառավերջյան այս ը-ն է, որ բարբառների մի մասում գիտակցվել և այնուհետև ընդհանրացել է որպես որոշիչ հոդ՝ հատկապես բաղաձայնով վերջացող բառերի համար։ Դրան, թերևս, նպաստել է այն հանգամանքը, որ բաղաձայնից հետո բառավերջում ավելի դյուրին է ձայնավորի արտասանությունը, քան ն ձայնորդի, որի արտաբերությունը բաղաձայնից հետո պահանջում է ավելորդ ճիգ ու ջանք։

Հայերենի որոշ բարբառներում ը-ի բառավերջյան կիրառությունը ավելի ծավալվելով՝ տարածվել է նաև հոլովական վերջավորությունների վրա (բացառական, գործիական, ներգոյական հոլովներում՝ գետիցը, գետովը, գետումը)։ Կան նաև բարբառներ (օր. Բայազետի), որտեղ որոշիչ հոդի դերը կատարում է միայն և միայն ը-ն, նույնիսկ այն դեպքում, երբ բառը վերջանում է ձայնավորով։ Վերջին դեպքում բառին ավելա-

նում է ն, որից հետո նաև՝ ը (ինչպես՝ ձի–ձինը, լու–լունը)։ Արտաքնապես այն տպավորությունն է ստացվում, թե այստեղ մենք ունենք կրկնահոդություն։ Իրականությունն այն է, որ այս բարբառում որոշյալ հոդի դերը կատարում է միայն ը-ն։ Ձայնավորահանգ բառերի վերջում ը-ից առաջ ն-ի հավելումը կատարվում է երկու ձայնավորների միջև առաջացող հորանջի կանխման համար։

Սակայն ը-ի բառավերջյան կիրառությունը ժամանակակից բարբառներում ընդհանուր օրինաչափություն չէ։ Կան հայերենի այնպիսի տարբերակներ (ինչպես, օրինակ, Սասունի, Բոգդանովկայի շրջանի որոշ խոսվածքներ և այլն), որոնց մեջ որպես որոշիչ հոդ մինչև այժմ էլ կիրառվում է միայն ն-ն, ներառյալ նաև բաղաձայնով վերջացող բառերում։ Հետաքրքիր է նշել, որ այս խոսվածքներում կան այնպիսիները (հատկապես Բոգդանովկայի)[47], որոնց մեջ բաղաձայնից հետո ն հոդի արտասանությունը չափազանց թույլ է, երբեմն լսողությամբ դժվար ընկալելի, և որ չափազանց կարևոր է՝ նրա և նախորդ բաղաձայնի միջև ը չի արտաբերվում (գաղտնավանկի բացակայություն)։ Սա, թերևս, հին հայերենյան վիճակից այն բարբառներին անցնելու միջին օղակն է, որոնց մեջ ն-ի անկումից հետո բառավերջում ը ձայնավոր չի արտաբերվում (ձուկն>ձուկ), հակառակ այն բարբառների, որոնց մեջ ն-ի անկումից հետո մնացել է ը, որը կարող է բացատրվել բաղաձայն+ը կապակցության մեջ գաղտնավանկի գոյությամբ (ձուկըն>ձուկը)։

Այսպիսով հայերենի ձայնավորները իրենց դիրքային կիրառությունների մեջ որոշակի զարգացում են ապրել, մի բան, որ պայմանավորված է պատմական հնչյունափոխության որոշակի ազդակներով։

Հայերենի ձայնավորների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ շեշտի տակ արտասանվելով լիահունչ, շեշտից զրկվելով՝ ստանում են սուղ արտասանություն և ենթարկվում հնչյունափոխության։ Ըստ որում՝ պատմական շրջանի տարբեր փուլերում նման փոփոխություններ կրում են ոչ բոլոր ձայնավորները։ Քանի որ այդ փոփոխությունները բացառապես կապված են շեշտի հետ, ուստի անհրաժեշտ է նախ քննել շեշտի դրսևորման առանձնահատկությունները և ապա անցնել նրա ազդեցությամբ կատարվող հնչյունափոխական երևույթներին։

ՇԵՇՏԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Եթե հաշվի առնենք հայերենի ժամանակակից բոլոր տարբերակներում բառական շեշտի դիրքային հիմնական (տվյալ լեզվական հանրության համար օրինաչափ) կիրառությունները, ապա կարելի է ասել, որ

---

[47] Համապատասխան նյութերը տե՛ս ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում, Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի ֆոնդում։

այսօրվա գրությամբ ա) ժամանակակից գրական հայերենում և բարբառների մի մասում (հիմնականում՝ արևմտյան) այն վերջնավանկային է, այսինքն՝ ընկնում է բառավերջի վանկի ձայնավորի վրա (բացառությամբ բառավերջի բաց կամ փակ վանկի ը-ի), բ) բարբառների մյուս մասում (հիմնականում՝ արևելյան) շեշտը վերջընթեր է, գտնվում է վերջից երկրորդ վանկի ձայնավորի վրա (նույն բացառությամբ)։ Հետագա շարադրանքի հարմարության համար պայմանականորեն այդ խմբերը անվանենք **արևմտյան** և **արևելյան**, թեև շեշտադրության իրենց բնույթով որոշ բարբառներ և արևելահայ գրական լեզուն ըստ այդ բաժանման չեն համապատասխանում իրենց աշխարհագրական տեղաբաշխմանը։

Բարբառների արևմտյան և արևելյան խմբերի շեշտի առանձնահատկությունը կարելի է բացահայտել ձայնավորների նախաշեշտ դիրքերում կատարված պատմական փոփոխությունների դիտարկմամբ, փոփոխություններ, որոնք տեսանելի են բարբառային բառաձևերը գրաբարյան բառաձևերի հետ համեմատելու միջոցով[48]։

Գրաբարյան	Արևմտյան	Արևելյան
բաժանել	*բաժնե՛լ*	*բըժա՛նիլ*
հարսանիք	*հարսնի՛ք*	*հըրսա՛նիք*
հաւատալ	*(հ)ավտա՛լ*	*հըվա՛տալ*
մատանի	*մատնի՛ք*	*մըտա՛նի*
մոռանալ	*մոռնա՛լ*	*մըռա՛նիլ*
շալակել	*շալկե՛լ*	*շըլա՛կիլ*
պակասել	*պակսե՛լ*	*պըկա՛սիլ*
պառաւել	*պառվե՛լ*	*պըռա՛վիլ*
սատակել	*սատկե՛լ*	*սըտա՛կիլ*
	և այլն	

Այս շարքերի համեմատությունը նախ ցույց է տալիս, որ դրանց մեջ բառակազմական տեսակետից և ստուգաբանորեն նախնական են գրաբարյան բառաձևերը։ Իսկապես, բարբառային երկու շարքերի համեմատությունը ցույց է տալիս, որ մի շարքում սղված կամ հնչյունափոխված ձայնավորը վերականգնվում է մյուս շարքի բառերում, այն դեպքում, երբ գրաբարյան բառաձևերն ընդհանրապես ունեն և այս, և այն շարքի ձայնավորները։ Այս օրինաչափությունն այնքան պարզ է ու հստակ, որ հին բառաձևերի բացակայության պայմաններում, երբ հայտնի են բար-

48 Բարբառային ձևերը բերվում են յուրաքանչյուր խմբին հատուկ ընդհանուր և ավելի տիպական օրինաչափությունների հաշվառմամբ, առանց նկատի ունենալու առանձին բարբառներում նախաշեշտ ձայնավորների սղման կամ հնչյունափոխության չենթարկվելը, բաղաձայնների համակարգային փոփոխությունները, բայական լծորդությունների տարբերությունները և այլն։

բառային զուգաձևությունները (սատկել և սըտակել), կարելի է վերականգնել նախնական ձևը (սատակել):

Այս միաժամանակ նշանակում է, որ բարբառային ձևերը պատմականորեն առաջացած նորաբանություններ են և ժամանակագրորեն հաջորդում են հին գրական հայերենից ավանդված ձևերին։

Ակնհայտ է նաև այն, որ տարբեր բարբառային միավորներում կատարված այս հնչյունափոխական երևույթները պայմանավորված են ոչ այնքան շեշտի դիրքով, որքան շեշտի բնույթով։ Իսկապես, թեև երկու դեպքում էլ բարբառային բառաձևերում հնչյունափոխությունը կատարվել է շեշտից դուրս ընկած դիրքում, բայց միանգամայն տարբեր վանկերում։

Արևմտյան խմբի բարբառներում շեշտը թեև վերջին վանկում է, բայց փոփոխություն է կրել ոչ թե առաջին վանկի ձայնավորը, որը հեռու լինելով շեշտակիր վանկից, ավելի էր ենթակա փոփոխության, այլ միջինը՝ շեշտակիրին անմիջապես նախորդողը (որը բերված օրինակներում ընկել է։ Սակայն այլ կարգի բառերում միջին վանկի ձայնավորը կարող է փոխվել ը-ի, մի երևույթ, որ կապված է այն բանի հետ, թե հնչյունափոխությունից հետո իրար մոտ ընկնող բաղաձայնները կարո՞ղ են զուգորդվել մի վանկում կամ բաշխվել տարբեր վանկերի վրա, թե՞ ոչ):

Արևելյան խմբում շեշտը վերջից երկրորդ վանկում է (վերջընթեր է) և հնչյունափոխված է նրանից առաջ գտնվող ձայնավորը։ Արտաքնապես թվում է (հատկապես բերված օրինակներից), թե այստեղ էլ առկա է նույն օրինաչափությունը, այսինքն՝ հնչյունափոխությունը կատարվել է շեշտակից վանկում։ Սակայն, ինչպես ցույց են տալիս քառավանկ բառերը, այս խմբի առավել տիպական բարբառներում հնչյունափոխությունը ընդգրկում է առհասարակ շեշտից առաջ ընկած ձայնավորները՝ դրանք սղելով կամ փոխելով ը-ի. այսպես, օրինակ՝ աղքատանալ>ըխկըտա՛նիլ, աղքատութիւն>ըխկըտո՛թին, ուրախութիւն>ըրխո՛թին և այլն, այն դեպքում, երբ արևմտյան խմբում առաջին վանկի ձայնավորները նման փոփոխության չեն ենթարկվում։

Պատմական փոփոխությունների այս երկվությունից բնական է եզրակացնել, որ այստեղ մենք գործ ունենք բառական շեշտի բնույթի տարբեր դրսևորումների հետ։ Եվ եթե ընդունելու լինենք, որ արևելյան բարբառների մի մասում շեշտանախորդ ձայնավորների սղումը կամ ը-ի փոխարկվելը պայմանավորված է շեշտի սուր բնույթով, ապա սրա համեմատությամբ արևմտյան բարբառների համար իրավացի կլիներ կարծել, թե բազմավանկ բառերում հիմնական շեշտից բացի կար նաև մի երկրորդական շեշտ, որը լինելով առաջին վանկում, թույլ չէր տալիս այդ վանկի ձայնավորի փոփոխություն։ Արևմտյան խմբի շեշտի համար արված այս մեկնաբանությունը, որը գալիս է դեռևս Մեյեից, մեր կար-

ծիքով, ճիշտ է արտահայտում կատարված փոփոխությունների էությունը և պատմականորեն արդարացվում է։

Մենք վերը ասացինք, որ համեմատության մեջ դրված երեք սյունակների բառերից նախնական են գրաբարյան ձևերը, որոնք մյուս շարքերի համապատասխան բառերի համեմատությամբ պահպանում են ազված ու հնչյունափոխված ձայնավորները։ Այդ նույն բառաշարքերի համեմատությունից երևում է նաև, որ գրաբարյան բառերում շեշտը իր բնույթով չէր նույնանում մյուս խմբերի բառական շեշտին։ Եթե, ասենք, գրաբարյան հաւատ, պակաս *և նման երկվանկ բառերը արդի բարբառների նշված երկու խմբերում դեռևս մնում են անփոփոխ (թեև տարբեր շեշտադրությամբ՝* հավա՛տ||հա՛վատ, պակա՛ս||պա՛կաս), *ապա ածանցման դեպքում, երբ գրաբարյան* հաւատալ, պակասել *ձևերի դիմաց առկա են* (հ)ավտա՛լ||հըվա՛տիլ, պակսե՛լ||պըկա՛սիլ, *չէ որ դրանք նշում են շեշտի նախնական բնույթի փոփոխության մասին։*

Կասկածից դուրս է, որ հին գրական հայերենում և նրա հիմքում ընկած բանավոր-խոսակցական լեզվի տարբերակում առկա է եղել ուժգնության շեշտը՝ իր վերջնավանկային դիրքով[49]*։ Բայց այդ շեշտը իր բնույթով չէր նույնանում ժամանակակից հայերենի ո՛չ արևմտյան, և ո՛չ արևելյան շեշտերին, որոնք պատմականորեն հաջորդել էին հին հայերենի շեշտին։*

Պետք է ենթադրել, որ նախապատմական շրջանում, հնդեվրոպական առնիկ շեշտից հայերենի շեշտին անցնելիս՝ այն իր սրությունը պահպանում էր, քանի դեռ վերջընթեր դիրքում էր։ Ենթադրվում է, որ ուժգնության շեշտի այդ դիրքով է պայմանավորված եղել բառական և քերականական ձևերում շեշտահաջորդ հնչյունների անկումը և կորուստը։ Սակայն, երբ այդ պրոցեսի ավարտի արդյունքում շեշտը մնաց բառավերջի վանկի լի ձայնավորի վրա, նրա ուժգնությունը զգալապես սկսեց թուլանալ։ Հայերենի գրի առման շրջանում, երբ նա արդեն վեր-

---

49 Հայերենի դասական շրջանում վերջնավանկային դիրքից բացի՝ բառական շեշտը որոշակի պայմաններում հանդես էր գալիս նաև նախավերջին վանկում, իսկ որոշ դեպքերում նաև սկզբնավանկային դիրքերում, Վերջընթեր շեշտ կրում էին հատկապես բաղաձայն+ձայնորդ *վերջավորությամբ բառերը, որոնք բառավերջում ունենալով ը-ով գաղտնավանկ՝ շեշտում էին ոչ թե այդ, այլ վերջընթեր վանկի լի ձայնավորը* (ատա՛մն, ախե՛ռն, ասե՛ղն, դո՛ւստր, ա՛ստղ *և այլն)։ Սա բխում էր հայերենի այն ընդհանուր օրինաչափությունից, ըստ որի ը-ն շեշտակիր լինել չէր կարող։ Իսկ մի շարք բարդություններում, որոնց առաջին բաղադրիչը դերանուն էր, շեշտը ընկնում էր դերանվան վրա* (ա՛յսպէս, ա՛յդպէս, ա՛յնպէս, ա՛յսօր նո՛յնպէս, դո՛յնպէս, սո՛յնպէս, նո՛յնչափ. նո՛յնժամայն *և այլն)։ Սրանք ամենայն հավանականությամբ նախապես եղել են հարադրություններ։ Նման շեշտադրության արդյունք է համարվում նաև* այժմ *բառը՝ առաջացած նախնական* այսժամ *բարդությունից՝ նախավանկի շեշտադրությամբ և երկրորդ վանկի ձայնավորի հնչյունափոխությամբ։*

չին վանկում էր, իր ուժգնությամբ զիջում էր նախորդ շրջանի վերջընթեր դիրքի շեշտին։ Թերևս հենց սրանով էր պայմանավորված նախաշեշտ ձայնավորների լիահունչ արտասանությունը մի կողմից՝ և շեշտազըրկությունից միայն ամենաթույլ ձայնավորների (ի, ու) հնչյունափոխությունը՝ մյուս կողմից։

Պատմական հետագա շրջանում հայերենի բանավոր-խոսակցական տարբերակների մի մասում շեշտը վերջնավանկից տեղափոխվում է վերջընթեր վանկը։ Այս դիրքում այն նախապես պահպանում էր իր ոչ սուր բնույթը, որը և շարունակում է մնալ այդպիսին այս խմբի բարբառների մի մասում։ Սակայն նույն խմբի մի շարք այլ բարբառներում այն աստիճանաբար սկսում է ուժգնանալ, և նրա սրությունը հասնում է այն աստիճանի, որ նրա ազդեցությամբ սկսում են ընկնել կամ ը-ի փոխվել նախաշեշտ վանկերի ձայնավորները։ Ըստ որում, եթե հին գրական հայերենի շեշտի ազդեցությամբ փոփոխության էին ենթարկվում միայն թույլ ձայնավորները (ի, ու), ապա այս դեպքում հնչյունափոխությունն ընդգրկում է նաև «ուժեղ» ձայնավորները (ա, ո, ե)։

Պատմական նույն շրջանում հայերենի բանավոր-խոսակցական տարբերակների մյուս մասում, շեշտը թեև շարունակում է մնալ վերջին վանկում, բայց այստեղ էլ նրա ուժգնությունը հին շեշտի համեմատ աճում է։ Մյուս կողմից՝ ենթադրվում է, որ այստեղ առաջին վանկն էլ ստանում է մի թույլ շեշտ (գուցե այդպիսի շեշտ եղել է նաև հին հայերենո՞ւմ), որի հետևանքով էլ, եթե հիմնական շեշտի սրության ազդեցությամբ բառամիջի ձայնավորները (այն էլ ուժեղ ձայնավորները) սղվում կամ փոխվում են ը-ի, ապա առաջին վանկի ձայնավորները մնում են անփոփոխ (մոռանալ>մ՝ոռնա՛լ, ժողովել>ժ՝ողվե՛լ, վախենալ>վ՝ախնա՛լ)։

Ժամանակակից բարբառներում բառական շեշտի այդ յուրահատուկ կիրառությունները առաջանում են պատմական շրջանում և իրենց որոշակի արտահայտությունն են ստանում վաղ միջինհայերենյան սկզբնագիր աղբյուրներում։ Դրանք դրսևորվում են հատկապես ձայնավորների սղման ու հնչյունափոխության այն նույն օրինաչափություններով, ինչպես որ արձանագրվում են ժամանակակից բարբառներում։ Նշելի է միայն, որ եթե արևելյան շեշտադրության գոյությունը հաստատող փաստերը անհամեմատ քիչ են, ապա արևմտյանը վկայվում է ամենատարբեր սկզբնաղբյուրների բազմաթիվ փաստերով։ Դա բացատրվում է նրանով, որ մեր լեզվի միջին շրջանում գրական լեզվի դերը սկսում էր իր վրա վերցնել կիլիկյան հայերենը, որն իր զարգացման օրինաչափություններով հարում էր հայերենի արևմտյան բարբառներին, և այս լեզվի օրինաչափություններն են, որ որպես գրական լեզվի նորմա դրսևորվում են գրավոր աղբյուրներում։

Ժամանակակից գրական հայերենի համար ընդունված է ասել, որ նա ժառանգել է հին հայերենի շեշտի ինչպես բնույթը, այնպես և դիրքը։ Սա ճիշտ է միայն մասամբ, եթե, իհարկե, նկատի ունենանք, որ արդի գրական հայերենում շեշտը իրոք վերջնավանկային է, կայուն-շարժական, և որ բառաբարդման, ածանցման ու բառաթեքման ժամանակ բառերի մեջ նկատելի են շեշտազրկված ձայնավորների հնչյունափոխական այն նույն երևույթները, ինչը հատուկ էր հին գրական հայերենին։ Բայց ինչ վերաբերում է շեշտի բնույթին, ապա պետք է կարծել, որ հին հայերենի համեմատությամբ ժամանակակից գրական հայերենի շեշտը ավելի թույլ է։ Դա թերևս երևում է հենց այն բանից, որ եթե հին հայերենում շեշտազրկությունից մի շարք թույլ ձայնավորներ ու երկբարբառներ հնչյունափոխվում էին, ապա նոր գրական հայերենում այդ օրինաչափությունը այլևս գործուն չէ, չի տարածվում նորակազմ ու փոխառյալ բառերի վրա։ Հնչյունափոխական հին երևույթները նոր գրական հայերենում պահպանվել են միայն մասամբ, այն էլ որպես քարացած ու պատրաստի կաղապարներ՝ ժառանգված կամ փոխառված հին գրական հայերենից (ավելի մանրամասն՝ իրենց օրինակներով, տե՛ս հաջորդ բաժնում)։

Ժամանակակից գրական հայերենի բազմավանկ բառերի առաջին վանկում ենթադրելի է նաև մի երկրորդական շեշտի գոյությունը, որը լսողությամբ ընկալվում է հատկապես բարդ բառերում։ Դրանց մեջ առաջին վանկը ավելի լիահունչ է, քան նրան հաջորդողները, բայց ոչ այնքան շեշտված, ինչպես վերջին վանկը, որը կրում է հիմնական շեշտը։ Թերևս հենց այս երկու շեշտերի հավասարակշռությամբ է, որ ժամանակակից գրական հայերենում պարզորոշ զատորոշվում են բազմավանկ բառերի բոլոր վանկերը՝ նրանց վանկարար ձայնավորների հստակ արտասանությամբ։

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊՎԱԾ ՇԵՇՏԻ ՀԵՏ

Ինչպես արդեն ասվել է, հին գրական հայերենում ու նրա հիմքում ընկած բանավոր-խոսակցական տարբերակում շեշտը ուժգնության էր և իր դիրքով վերջնավանկային։ Այն միաժամանակ կայուն շարժական էր, որ նշանակում է, թե բառաթեքման, բառաբարդման ու ածանցման ժամանակ իր հին դիրքից տեղափոխվում էր դեպի բառավերջի վանկի լի ձայնավորը։ Այդ տեղափոխության հետևանքով շեշտազրկված վանկերի ձայնավորի արտասանությունը որոշակիորեն թուլանում էր, որը և առաջացնում էր անկայուն ձայնավորների հնչյունափոխություն։ Այս տեսակետից շեշտի նկատմամբ զգայուն էին հատկապես ի և ու հնչյունները։

Շեշտազրկությունն առանձնապես չէր ազդում ա, ո, ե ձայնավոր-

ների վրա։ Այդ ամենից շատ վերաբերում է ռ-ին, որը ինչպես բառաթեքման, այնպես էլ բառաբարդման ու ածանցման ժամանակ շեշտից զրկվելով մնում էր անփոփոխ. ինչպես, օրինակ՝ խոռ-խոռոյ-խոռոց, խոռաբուռ, խոռաճամբար. բոլոր, բոլորակ, բոլորակութիւն, բոլորեմ. բազմոց-բազմոցի-բազմոցաց. բողոք-բողոքոյ-բողոքով. դրոշմ, դրոշմեմ և այլն։

Շեշտից զրկվելիս չէր հնչյունափոխվում նաև ա ձայնավորը. ինչպես՝ քաղաք-քաղաքի-քաղաքաց, քաղաքաբնակ, քաղաքացի, քաղաքամէջ, քաղաքանիստ և այլն։ Սրա հնչյունափոխության համար նշվում են միայն հետևյալ երկու օրինակները. աստուած, սեռ.—տրակ. աստուծոյ և արմատ, հոգն. ուղղ. արմտիք։ Ըստ որում վերջինս ունի ոչ միայն անհնչյունափոխ արմատիք ձևը, այլև չհնչյունափոխված հիմքը պահպանվում է նաև թեքված ու բարդված ձևերում. ինչպես՝ արմատոյ, արմատախիլ, արմատակեր, արմատեղէն և այլն։ Այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ արմտիք հնչյունափոխված բառաձևը կա՛մ ետին դարերի գրչությամբ ավանդված տարբերակ է, որ մուտք է գործել գրավոր լեզվի մեջ ձեռագրերի ընդօրինակությունների ժամանակ, կամ էլ հին բարբառային մի ձև է։ Նույն կամ նման մեկնաբանություն տրվում է նաև աստուած բառի սեռ.—տրակ. աստուծոյ ձևին։ Աճառյանը այս մասին գրում է. «Մեր քերականությունների մեջ ավանդաբար գրվում է, թե այս բառը, եթե նշանակում է քրիստոնյաների Աստվածը, սեռական լինում է Աստուծոյ ձևով, իսկ կռապաշտների աստվածը լինում էր աստուածոց ձևով։ Իրականությունն այն է, որ մեր հայերեն ձեռագրերում Աստուած, Աստուծոյ ձևերը երբեք ամբողջությամբ չեն գրված, այլ միշտ պատվով ~ համառոտված ձևով՝ Ա̅ծ̅, Ա̅յ̅։ Մեյե հայագետը ի նկատի ունենալով այս վերջին կետը, հայտնաբերեց, թե հին հայերենը լինում էր Աստուածոյ, որ ապա միջին հայերենում, միջին ա ձայնավորի կորուստով դարձավ Աստուծոյ, և այս ձևը այնուհետև անցավ գրականության»[50]։ Այս մեկնաբանության երկրորդ մասը, մեր կարծիքով, այնքան էլ ճիշտ չէ։ Եթե միջնավանկի ա-ի կորուստը ետդասական շրջանում կատարված երևույթ պետք է համարել, ապա այդ առավել կարող է վերաբերել արմտիք բառաձևին։ Նախ, ինչպես ասվել է, այս բառաձևը զուգահեռաբար ունի նաև չհնչյունափոխված արմատիք տարբերակը։ Այնուհետև միջնավանկի ա-ն պահպանվում է ինչպես թեքված արմատոյ, այնպես և ածանցված ձևերում ու բարդություններում։ Մյուս կողմից՝ այդ եռավանկ բառի միջնավանկի ա-ի անկումը, որ դիտվում է մի բացառիկ երևույթ հին գրական հայերենի դասական շրջանի համար, միանգամայն օրինաչափ է միջին հայերենի շրջանում, հատկապես նրա արևմտյան

---

50 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, հ. 6, էջ 603։

տարբերակների համար և այսօր էլ կենդանի է այդ նույն տարածքի շատ բարբառներում։ Այնպես որ արմտիք հնչյունափոխված բառաձևը վըս-տահորեն կարելի է համարել միջին հայերենյան տարբերակ, որ մուտք է գործել հին գրականության մեջ ձեռագրերի արտագրությունների ըն-թացքում։ Սակայն նույնը դժվար է ասել աստուած բառի աստուծոյ սե-ռականի մասին։ Բանն այն է, որ նրանում կատարված հնչյունափոխու-թյունը չի կարելի բացատրել միջին հայերենի հնչյունափոխական օրի-նաչափություններով։ Միջին հայերենի շրջանում ուա ձայնավորական կապակցությունը արտասանվում էր va, ըստ այդմ աստուած բառը ուներ աստված հնչումը։ Սեռականի ենթադրյալ աստուածոյ ձևից (որը միջին հայերենում, ի դեպ, պիտի արտասանվեր աստվածո(յ), ա-ի անկմամբ չէր կարող առաջանալ աստուծոյ ձևը։ Այստեղ ա-ի անկումից հետո սպա-սելի էր աստվծոյ. և դժվար է համոզվել, թե այս դեպքում կատարվել է վ>ու անցում, մի բան, որ հավանական չէ։ Ավելի ճիշտ կլինի ենթադրել, որ սեռականի աստուծոյ ձևը բարբառային գոյացություն է, չնայած որ դրա համար չկան ձեռագրական հին վկայություններ, բայց մյուս կող-մից, բարբառներում առկա աստուծ, աստուծ ուղիղ և թեքված աստծու, ասու և նման ձևերը կարող են հիմք տալ վերը բերված ենթադրությանը։

Սակայն անկախ այս երկու բառերում կատարված հնչյունափոխու-թյան վաղեմության կամ ոչ վաղեմության, ա ձայնավորը հին հայերենի գասական շրջանում միշտ կայուն և չհնչյունափոխվող ձայնավոր էր։

Ե ձայնավորի հնչյունափոխությունը ևս սահմանափակվում էր մաս-նակի դեպքերում։ Մի բառի, այն է՝ դեւ-ի, թեքված ու ածանցված ձե-վերում ունենք դիւի, դիւաց, դիւական, դիւաճար և այլն, որոնց մեջ ե>ի փոփոխությունն, ըստ էության, հարում է է-ի հնչյունափոխության օրի-նաչափությանը (սէր–սիրոյ, սիրեմ և այլն)։ Է. Աղայանը ենթադրում է, որ այդ բառի ե-ն ունեցել է է-ի արժեք, որի հետևանքով էլ կատար-վել է ե>ի հնչյունափոխությունը։ Բայց քանի որ հայերենում էւ կա-պակցություն չի եղել, ուստի և այն գրվել է եւ (դեւ)[51]։ Միանգամայն իրավացի է Է. Աղայանը, երբ դեւ բառում ե>ի հնչյունափոխությունը կապում է ե-ի նախնական մի այնպիսի որակի հետ, երբ այն ունեցել է է երկբարբառակերպի արժեք։ Բայց մյուս կողմից, պարտադիր չէ այդ-տեղ եւ գրությունը արդարացնել հայերենում էւ գրության բացակայու-թյամբ։ Այստեղ փաստորեն մենք գործ ունենք փոխված ձայնավորի մի հին ռեֆլեքսի հետ, որը պահպանվել է նախաշեշտ դիրքում։

Նման երևույթ է նաև ե-ի սղումը։

Մի շարք բառերում ե-ն սղվում է բառաթեքման ժամանակ։ Այդ սղումը տեղի է ունենում հատկապես ղ և ռ ձայնորդներից առաջ, այն

---

51 Է. Աղայան, Գրաբարի քերականություն, էջ 137։

էլ ոչ կատարյալ հետևողականությամբ. մի կողմից ունենք՝ ասեղն-ասղան, թիթեղն-թիթղան, մժեղն-մժղան, պճեղն-պճղան, Բարսեղ-Բարսղի, Կիւրեղ-Կիւրղի, թիթեռն-թիթռան, լիսեռն-լիսռան, ծիծեռն-ծիծռան, սիսեռն-սիսռան և այլն, բայց և մյուս կողմից՝ մժեղան, սիսեռան, աղեղն-աղեղան, բաղեղն-բաղեղան, գեղմն-գեղման և այլն[52]։ Ենթադըրվում է, որ այդ ե-ն, հատկապես ղ-ից առաջ, նախապես ունեցել է i-ի արժեք, որի սղմամբ էլ առաջացել են սեռական-տրականի վերը բերված ձևերը (*ասիղն-ասղան)[53]։ Այդպես ենթադրելու դեպքում հնչյունափոխված ձևերը պետք է համարել ավելի հին, դեռևս այն ժամանակաշրջանի ծնունդ, երբ ղ-ից առաջ ի էր, որը և հայերենի շեշտի ազդեցությամբ սղվում էր։ Հետևաբար նշված դիրքում ե-ն առաջացել է i-ից՝ նախապատմական շրջանում, միաժամանակ պահպանելով i-ի հնչյունափոխական հատկությունը։ Կարելի է նաև ենթադրել, որ ե-ի սղումը նշված բառերում (անկախ այդ հնչյունի ծագումնաբանությունից) բարբառային մի ինչ-որ տարածքի առանձնահատկություն էր, որ դրսևորվում էր ղ և ռ ձայնորդներից առաջ, եթե մանավանդ նկատի ունենանք նրա հնչյունափոխության անհետևողականությունը։

Ձայնավորների մեջ ը-ն թույլ հնչյուն է և շեշտի նկատմամբ անտարբեր է։ Միակ փոփոխությունը, որ նրա հետ կատարվում էր, արտասանական շղթայից դուրս ընկնելն էր։ Այս դեպքում էլ տվյալ հընչյունափոխությունը ոչ թե կապվում էր շեշտի հետ, այլ պայմանավորված էր հնչյունական շղթայում բաղաձայնների մի վանկում զուգորդվելու հնարավորության հետ։ Բառամիջում, քանի որ ը-ն հանդես էր գալիս գաղտնավանկերում և հատկապես այնպիսի դիրքերում, երբ տվյալ բաղաձայնների խումբը մի վանկում զուգորդվել չէր կարող, այդ հիմունքով էլ ստեղծվում էր ը-ով լրացուցիչ վանկ։ Բառաբարդման ու ածանցման ժամանակ այդ ը-ն կարող էր ընկնել, երբ վերանում էր նրանով վանկ կազմելու անհրաժեշտությունը։ Օրինակ. գառն բառում, քանի որ ռ և ն հնչյունները մի վանկում զուգորդելի չեն, առաջանում էր ը-ով լրացուցիչ վանկի պահանջ՝ գա-ռըն: Սակայն այդ ը-ն վերանում էր գառնալեզու, գառնենի, գառնութիւն և նման բարդ ու ածանցավոր բառերում, քանի որ հնչյունական շղթայի նոր պայմաններում ռ-ն և ն-ն բաշխվում էին տարբեր վանկերի վրա՝ գա-ռըն. բայց՝ գառ-նալեզու, գառ-նենի, գառ-նութիւն, որով վերանում էր ը վանկարարի անհրաժեշտությունը։ Գաղտնավանկի ը-ի անկման այս երևույթը հատուկ է ոչ միայն հին գրական հայերենին, այլև հայերենի բոլոր դրսևորումներին՝ նրա պատմական զարգացման բոլոր փուլերում։ Այսօր էլ գրական նոր

52 Ս. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, էջ 12։
53 Նույն, նշված աշխ., էջ 18։

հայերենում նույն օրինաչափությամբ ը-ն ընկնում է, երբ բառաթեքման, ածանցման ու բառաբարդման ժամանակ վերանում է գաղտնավանկի պահանջը։ Այսպես ունենք՝ մե-ղր, *բայց՝* մեղ-րի, մեղ-րից, մեղ-րամոմ, մեղրահաց, մեղրաջուր, ծա-նր, *բայց՝* ծան-րություն, ծանրանալ, ծան-րորդ *և այլն։*

Շեշտի նկատմամբ առավել զգայուն էին ի *և* ու *ձայնավորները։ Սրանք շեշտազրկությունից կամ հնչյունափոխվում էին ը-ի, կամ դուրս ընկնում հնչյունական շղթայից։ Առաջինը վերաբերում էր փակ միավանկ բառերում հանդես եկող* ի-*ին և* ու-*ին. ինչպես՝* գին-գնոյ, գնգնոց, գնից. գիծ-գծի, գծոյ-գծից, գծաց, գծոց, գծեմ, գծագրեմ. լինդլնդի-լնդոց. լիրբ-լրբի-լրբից, լրբաբար, լրբախօս, լրբութիւն. դուռնդրան, դրունք-դրանց, դռնապան, դռնաբաց. դուստր-դստեր. դուրգնդրգան. դուր-դրոյ, դրի. բուխ-բխոյ-բխոց, բխամոր, բխանամ, բխութիւն. բուղբ-բղբոյ, բղբի, բղբաբեր, բղբատար *և այլն։ Բազմավանկ բառերի բառավերջի փակ վանկի* ի-*ն և* ու-*ն շեշտազրկությունից ընկնում էին, եթե բարդության միավանկ բաղադրիչի մեջ չէին, ինչպես՝* մարմինմարմնոյ-մարմնոց, մարմնական, մարմնապաշտ, մարմնեղ. արարիչ, արարչի-արարչաց, արարչագործ, արարչակից. ամիս-ամսոյ-ամսոց, ամսական. ամուսին-ամուսնի, ամուսնոյ, ամուսնական, ամուսնանամ, ամուսնութիւն. գլուխ-գլխոյ-գլխոց, գլխաւոր, գլխացաւ. երդումն-երդման. բազում-բազմի-բազմաց, բազմանամ, բազմատեսիլ *և այլն։ (Եթե բազմավանկ բառը բարդ էր և նրա երկրորդ բաղադրիչը միավանկ, ապա վերջինիս մեջ հանդես եկող* ի *և* ու *ձայնավորները շեշտազրկությունից հնչյունափոխվում էին ը-ի՝ միավանկ բառերին հատուկ օրինաչափությամբ)։*

Բառաբարդման ու ածանցման ժամանակ մի շարք բազմավանկ բառերում բառավերջի ի-*ի և* ու-*ի պահպանումը կամ անկումը շատ դեպքերում ունի բառակազմական կամ քերականական նշանակություն և կապված չէ շեշտի հետ*[54]*։*

Շեշտից անկախ փոփոխություն է նաև ի *նախդիրի յ-ի փոխվելը ձայնավորով սկսվող բառերից առաջ (հմմտ.* ի լենէ *և* յայսմանէ):

Հայերենի ձայնավորների շեշտի հետ կապված վերը նշված հնչյունափոխական երևույթները պատմական շրջանի ընթացքում կրում են փոփոխություններ։ Այդ տեսակետից բնորոշ են հետևյալ տեղաշարժերը։

ա) Եթե դասական հայերենում ա-*ն համեմատաբար կայուն ձայնավոր էր և շեշտազրկությունից չէր հնչյունափոխվում, ապա ետդասական և հատկապես միջին հայերենի շրջանից սկսած խախտվում է նրա*

---

54 *Այդ բոլորի մասին ավելի մանրամասն տե՛ս* Է. Աղայան, *Գրաբարի քերականություն, էջ 298—307։*

այդ հատկությունը։ Ըստ որում, միջին հայերենի արևմտյան տարբերակներում և մասնավորապես կիլիկյան հայերենում, հնչյունափոխությունը ընդգրկում է հատկապես երեք և ավելի վանկանի բառերը։ Երկվանկ բառերի թեքման ժամանակ վերջնավանկի ա ձայնավորը ընկնում կամ փոխվում է ը-ի. այսպես, օրինակ՝ քաղաք-սեռ. քաղքի, բացառ. քաղքէն, հգն. սեռ. տրակ. քաղքնոյն. խանդակ-խանդկի-խանդկով, խանդկէն. դարպաս-դարպսի-դարպսով-դարպսէն. ջաղաչ (<չրաղաց)-ջաղչի-ջաղչէն. դատաստան>դատստան-դատստաններոյն և այլն։ Այս փոփոխությունը տեղի է ունենում հայերենի այն տարբերակներում, որոնք վերջնավանկային հիմնական շեշտից բացի ունեին առաջին վանկում նաև երկրորդական շեշտ, և վերջինիս պատճառով է, որ երկվանկ բառերի թեքման ժամանակ առաջին վանկի ա-ն մնում է անփոփոխ։ Այդ նույն օրենքով ա-ն փոփոխության չի ենթարկվում նաև միավանկ բառերի թեքված ձևերում, քանի որ նրանք այդ դեպքում մնում են առաջին վանկում, ուստի և ստանում են երկրորդական շեշտ։

բ) Պետք է կարծել, որ միջին հայերենի շրջանում բառաթեքման ընթացքում նման հնչյունափոխություն կատարվում էր նաև ո և ե ձայնավորների հետ, երբ նրանք շեշտազրկվում էին։ Ե-ի համար արձանագրվող ասեղն>ասեղ-սեռ. ասղան||ասխան, սխեռն>սխեռ-սխռան, ուղեղ>(ը)ղեղ-(ը)ղղան տիպի փոփոխությունների մասին վերն արդեն խոսվել է։ Բառաթեքման ժամանակ ո-ի փոփոխություն թեև չի արձանագրվում, բայց կան պատմական հնչյունափոխությամբ ավանդված ժողովել>ժողվել, կոտորել>կոտրել, պոպոզեալ>պոպզեալ, բորբոսեալ>բորբսեալ և այլ նման ձևեր, այն ժամանակ, երբ նույնարմատ պոպոզ, բորբոս բառերը նույն սկզբնաղբյուրներում բառաթեքման ժամանակ պահպանում են ո ձայնավորը՝ պոպոզի բորբոսոյ։ Այնուամենայնիվ, ենթադրելի է, որ ո և ե ձայնավորները միջին հայերենի որոշ դրսևորումներում շեշտազրկությունից հնչյունափոխվում էին ը-ի կամ սղվում, ինչպես այդ բանը գոյություն ունի մեր ժամանակակից բարբառների մի մասում։ Իսկ որ այդ հնչյունափոխության համար մատենագրական վկայությունները սակավ են, այդ էլ պայմանավորված է այդ հնչյունների գիրքային կիրառության սահմանափակությամբ, պահանջվող դիրքում նրանց հանդես գալու նվազ հաճախականությամբ։ Բայց եթե նկատի ունենանք, որ ժամանակակից բարբառների մի մասում ա-ի հետ միասին նույն հնչյունափոխությանը ենթարկվում են նաև ո և ե ձայնավորները, ապա այդ երևույթը բացառված չի կարելի համարել նաև միջին հայերենի շրջանում։ Ժամանակակից բարբառներից, օրինակ, կարելի է հիշել Վանի բարբառը, որտեղ՝ ի և ու ձայնավորներից բացի, շեշտազրկությունից հնչյունափոխվում են նաև ա, ո, ե ձայնավորները. ահա մի քանի օրինակներ. խալիվոր-խալիվրու, աղվէս-աղվսու, անձրէվ-

անձրվու, աճառ-աճռու, ծարավ-ծարվու, կապոտ-կապտու, կաֆյավ-կաֆյրվու, կեղծավոր-կեղծավրու, կօղօվ-կօղվու, պառավ-պառվու, ֆյացախ-ֆյացխու, ասեղ-ասղան||ասղի, ատամ-ատման||ատմի և այլն, և այլն[55]։ Վանի բարբառը այս տեսակետից բացառություն չէ։

Բառամիջի ձայնավորների անկման առաջին վկայությունները գալիս են XI դարից։ Այստեղ հիմնականում ունենք ա ձայնավորի սղման կամ հնչյունափոխության օրինակներ՝ վկայված Անիի, Սանահինի, Հաղբատի վիմական արձանագրություններում։ Այսպես, օրինակ. Անիի Աբլղարիբ Պահլավունու եկեղեցու կամարներից մեկի արձանագրության մեջ, որը գրված է 1036 թվականին, ունենք Աշնակ տեղանվան սեռական Աշնկի վկայությունը («...կամ եղեւ ինձ, տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի, տալ զայգին Աշնկի... և այլն. ԴՀՎ, 1, էջ 48)։ Այս օրինակի վրա մատնացույց է անում նաև Ս. Ավագյանը իր «Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն» աշխատության մեջ, թեև «Դիվան հայ վիմագրության առաջին պրակում այդ արձանագրությունը բերված է ըստ Սարգսյանի, Ալիշանի ու Բասմաջյանի հրատարակությունների՝ առանց լուսանկարի։

Մի քիչ ավելի ուշ, 1067 թվականին գրված ձեռագրի մի հիշատակարանում նույնպես ունենք ա-ի հնչյունափոխության օրինակներ. այսպես՝ «...յնղերդուտէն փոխէն տան, երբ պիտենայ իւր ջաղցտեղն... (ԳՀ Հձ, 250)։ Նույն ժամանակներում (1067 թ.) գրված Հաղբատի մի արձանագրության մեջ Սաճակ անձնանվան սեռականում ունենք Սճակա («...պշաբաթն աւրն Սճակա եւ... իւր ամուսնոյն... ժամ առնենք» ԿՂ, Հաղբատ, 157), որտեղ հնչյունափոխվել է ոչ թե միջնավանկի, այլ առաջին վանկի ձայնավորը։ (Դրանից կարելի էր ենթադրել, որ տվյալ դեպքում շեշտը եղել է վերջընթեր)։ Այնուհետև, հաջորդ դարերի գրավոր աղբյուրներում ավելի հաճախանում են նման օրինակները։ Հիշենք Սանահինի 1191 թ. մի արձանագրության հետևյալ հատվածը՝ «... որդիք Սմբատա, որդո Համզսպա մարծպանի, տվաք զՄանրշա կէսն ի մեր հայրենեացս, ի մեր հողս Տայքս՝ ի Սանճինս» (ԿՂ, Սանահին, 105—106), որտեղ ա-ի հընչյունափոխություն ունենք Համազասպ-Համզսպա, Մանրաշ-Մանրշա սեռականի և Սանաճին-Սանճին հայցականի ձևերում։

Ժամանակակից արևելահայ գրական հայերենում ա, ե, ո ձայնավորները բառաթեքման ժամանակ շեշտափոխությունից փոփոխության չեն ենթարկվում։ Առանձին, հատ ու կենտ բառերում արձանագրվող փոփոխությունները (բերան-բերնի, ճակատ-ճակտի և այլն) գալիս են կամ

---

55 Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի։ Չնայած այս բարբառում ե-ն և ո-ն ունեն երկբարբառային արտասանություն, բայց այս դեպքում էլ նրանք սղվում կամ հնչյունափոխվում են ը-ի։

բարբառներից կամ միջին հայերենից։ Այսպես է նաև հին աստուծոյ ձևի դիմաց գրական հայերենում գործածական աստծու, աստծո հնչյունափոխված ձևերը։ Սակայն այստեղ սեռական-տրականի աստծու(ն), աստծո տարբերակները ոչ թե Աստված ձևից հնչյունափոխված (իբր թե՝ վա-ի կորստով) առաջացած ձևեր են, այլ անմիջականորեն գալիս են հին գրական լեզվից ավանդված աստուծոյ ձևից՝ ու-ի սղմամբ, և կենդանի են նաև հայերենի բանավոր-խոսակցական տարբերակների մեծ մասում։

Ժամանակակից գրական հայերենը չի պահպանել նաև որոշ բարբառներում դեռևս կենդանի ե ձայնավորի սղման հին օրինաչափությունը։ Այստեղ ունենք առանց տատանումների՝ ասեղ–ասեղի, թիթեղ–թիթեղի, մժեղ–մժեղի, աղեղ–աղեղի, սխեռ–սխեռի, ուղեղ–ուղեղի և այլն։ Նույնիսկ հին դեւ–դիւի դիմաց այժմ ունենք դև–դևի անհնչյունափոխ ձևը, թեև ածանցման ու բառաբարդման դեպքում դեռևս կենդանի է ե>ի հնչյունափոխությունը (դիվական, դիվային, դիվահար, դիվապաշտ և այլն), որը, սակայն, պետք է դիտել որպես ավանդական հնչյունափոխություն, այն էլ միայն բառակազմական ոլորտում։

Ժամանակակից գրական հայերենում չի պահպանված նաև հին է երկբարբառի հնչյունափոխական հատկությունը։ Այդ է-ն այժմ գրական լեզվում բառամիջի ու բառավերջի դիրքերում նույնացել է հին ե-ի հետ, և ժամանակակից ուղղագրությամբ էլ դրանք իրարից չեն տարբերվում։ Եվ թեև այդ է-ն բառակազմության մեջ դեռևս ավանդաբար պահպանում է իր հնչյունափոխական հատկությունը, բայց բառաթեքման ժամանակ արդեն կորցրել է այն։ Այդ բանը լավ երևում է ստորև բերվող բառերի համեմատությունից։

Հին գրական հայերեն	Նոր գրական հայերեն
դէղ—դիղի	դեղ—դեղի
դէմք—դիմաց	դեմք—դեմքի
դէպք—դիպաց	դեպք—դեպքի
հանդէս—հանդիսի	հանդես—հանդեսի
էշ—իշոյ	էշ—էշի
էգ—իգի	էգ—էգի
էջ—իջի	էջ—էջի
պարտէզ—պարտիզի	պարտեզ—պարտեզի
վէճ—վիճի, վիճոյ	վեճ—վեճի
վէպ—վիպի	վեպ—վեպի
ձէթ—ձիթի	ձեթ—ձեթի
մէջք—միջաց	մեջք—մեջքի
մէգ—միգի	մեգ—մեգի
մէզ—միզի	մեզ—մեզի
տգէտ—տգիտի	տգետ—տգետի և այլն։

Միայն մի քանի բառեր ավանդաբար պահպանել են թեքման ժամանակ հին է>ի հնչյունափոխությունը: Դրանք են. սեր(սէր)–սիրո–սիրու(ն), *որ գալիս է հին* սէր–սիրոյի(ն) *ձևից և զուտ գրական փոխառություն է:* Տեր–տիրոջ, *որը հին հայերենում թեև ունի թեքման այլ ընթացք* (տեառն) *բայց որպես է-ով բառ* (տէր), *օրինաչափորեն շեշտից առաջ կրել է* է>ի *փոփոխությունը, մի բան, որ վկայվում է դեռևս միջին հայերենի շրջանից և այժմ էլ տարածված է բարբառների մեծագույն մասում, այդ թվում նաև այն բարբառներում, որոնք ընկած են արևելահայ գրական լեզվի հիմքում (որտեղից և մուտք են գործել գրական լեզվի մեջ):* Մեջ–միջի–միջից–միջով *ձևերը գալիս են դեռևս հին հայերենից՝* մէջ–միջոյ *(բայց նաև* միջի. *հմմտ.* ի միջի այլոց). *պահպանված է նաև բարբառներում, որտեղից և անցել է գրական լեզվին: Անհաստատ է* քեն (<քէն) *բառի հնչյունափոխությունը: Հին հայերենը ունի* քէն–քինու: *Քանի որ նոր հայերենում այդ բառի չհնչյունափոխված ձևերը* (քենի, քենու *և այլն) պիտի նույնանային* քենի *«կնոջ քույրը» բառին ու նրա սեռական-տրական բառաձևին* (քենու), *ուստի օգտագործվում է հին ձևը* (քինու): *Սակայն բացառական, գործիական հոլովներում մերթ լինում է* քենից, *և մերթ՝* քինով:

Այսպիսով ժամանակակից գրական հայերենում բառաթեքման ընթացքում հին է-ի հնչյունափոխությունից միայն որոշ հետքեր են մնացել: Այստեղ հիմնական օրինաչափությունն այն է, որ նշված ձայնավորը մնում է անփոփոխ: Սակայն այլ է դրությունը ածանցման ու բառաբարդման ժամանակ, երբ նույն բառաշարքերի բառերի համար ունենք դեզ–դիզել, հանդես–հանդիսավոր, էգ–իգական, էջ–իջնել, պարտեզ–պարտիզպան, վեճ–վիճել վիճաբանություն, վեպ–վիպական–վիպասան, ձեթ–ձիթենի–ձիթապտուղ, մեգ–միգապատ–միգամածություն, մեզ–միզել–միզապարկ, տգետ–տգիտություն *և այլն, և այլն, որոնց մեջ առկա է* ե>ի *հնչյունափոխությունը: Սակայն գիտելի է, որ այդ բոլոր բառերում էլ հնչյունափոխության ենթարկվել է հին է-ն, որն այդ հատկությունն ուներ դեռևս հին հայերենում: Հետևաբար ածանցման ու բառաբարդման ժամանակ* e>i *հնչյունափոխությունը ժամանակակից հայերենը ժառանգել է հին գրական հայերենից՝ այն ածանցված բառերի ու բարդ բառերի միջոցով, որոնց մեջ հին օրինաչափությամբ կատարվել է այդ փոփոխությունը: Նկատելի է նաև, որ այս դեպքում հնչյունափոխություն կատարվում է նաև նորակազմություններում և այդ էլ այն դեպքում, երբ* ի-*ի փոխվող* ե-*ն ծագում է հին* է-*ից: Դա թերևս բացատրվում է նրանով, որ այդ հնչյունափոխությամբ ժամանակակից հայերենին անցած ածանցավոր և բարդ բառերը գտնվում են նրա ակտիվ բառապաշարի ոլորտում, որով և գիտակցել են տալիս այդ օրինաչափությունը: Այս առումով՝ հնում* է *ունեցող բառերի համար* e>i *անցումը, ածանցման ու բառաբարդման ժա-*

մանակ, արդի գրական հայերենում կարելի է գործուն օրինաչափություն համարել։

Է-ն իր հնչյունափոխական հատկությունը պահպանում է հայերենի պատմության ամբողջ շրջանում։ Սակայն պետք է կարծել նաև, որ միջնադարում հայերենի ոչ բոլոր տարբերակներին էր հատուկ նրա հնչյունափոխությունը։ Մենք անմիջական վկայություն ունենք այդ մասին քերականագիտական աշխատություններում։ Ահա, օրինակ, Գրիգոր Տաթևացու վկայությունը. «Տես զհոլովդ է-ով ասէ և ոչ ինով կամ եչով, այսպէս՝ Արիստակէսի, Վրթանէսի, Մովսէսի, Ներսէսի զի այս ստոյգ է և հայեցի, քան զայն՝ Արիստակիսի, Վրթանիսի, Ներսիսի և այլն, զի այն աշխարհական է և արցախային»[56]։

Հին հայերենի է-ի՝ շեշտի հետ կապված հնչյունափոխությունը որոշ չափով պահպանված է նաև հայերենի մի շարք բարբառներում։ Նրանցում այդ հնչյունափոխությունը ընդգրկող բառերի քանակը վայրից վայր տարբեր է, իսկ արևմտյան մի շարք բարբառներում առհասարակ այն փոփոխության չի ենթարկվում։ Նկատելի է, որ հին է-ի հնչյունափոխությունը ժառանգորդաբար պահպանում են հատկապես եզրային բարբառները։ Այստեղ նույնիսկ նկատելի է, որ այդ հնչյունափոխությունը ընդգրկում է նաև բարբառային է-ն, որը ծագում է հին ե-ից կամ ա-ից։ Այսպես, օրինակ, Ղարաբաղի բարբառի որոշ խոսվածքներում շեշտի տակ ունենք էշ–է՛շէr, խէժնը–խէ՛ժնէr, կէս–կէ՛սէr, ծէթ (<ձէթ)–ծէ՛թէr, շէն–շէ՛նէrf, ինչպես նաև՝ դաճակ>տէ՛ճակ, շալակ>շէ՛լակ և այլն, իսկ շեշտից առաջ՝ իշէ՛rու, խիժնէ՛rու, կիսէ՛rու, ծիթէ՛rու, շինէ՛rfու... տինա՛կու, շիլա՛կու և այլն։ Նույն երևույթը նկատելի է նաև Կարճևանի բարբառում և նրան հարող տարածքի խոսվածքներում, ինչպես՝ ճակատ> ճէ՛կ՛ատ—ճիկ՛ա՛տու, շալակ>շէ̈լակ—շիլէ̈կու, բաժին>բէ̈ժինք — բիժէ̈նիլ, դադար>դէ̈թար—դիթէ̈րիլ և այլն[57]։

Ի և ու ձայնավորների հնչյունափոխական հատկությունը առավել կամ նվազ հետևողականությամբ շարունակվում է նաև եռդասական շըրջանում։ Պատմական էտապի առանձին դրսևորումներում այն շարունակում է գործառել որպես կենդանի օրինաչափություն, մյուս կողմից էլ, այլ դրսևորումներում այն դադարում է այդպիսին լինելուց և մնում է որպես անցյալի ժառանգություն։

ա) Ինչպես միջին հայերենում, այնպես և ժամանակակից հայերենի բարբառների մեծ մասում ի-ն շեշտազրկությունից սղվում կամ փոխվում

---

56 Լ. Գ. Խաչերյան, Գրչության արվեստի լեզվական քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 324։

57 Այս երևույթի ավելի մանրամասն ուսումնասիրությունը մնում է հայերենի պատմական բարբառագիտությանը։

է ը-ի։ Ի-ի այդ հատկությունը, եթե մի կողմից ավանդական է ու ժառանգված հին լեզվից, ապա մյուս կողմից էլ գործուն օրինաչափություն է հայերենի դրսևորումների մի ճնշող մասում։ Միջին հայերենում այդ բանը երևում է ոչ միայն ավանդական բառաձևերի հնչյունափոխության մեջ, այլև նոր ու փոխառյալ բառերի թեքված ձևերում, որոնց մեջ ի-ն *շեշտից զրկվելով փոխվում է ը-ի կամ ընկնում, այսպես, օրինակ՝* խիսմ *(արբ. «դատի մեջ հակառակորդ»)—սեռ.* խսմին, տիարքիկ *(հուն. «կտակ»)—գործ.* տիարքկով, լին *(հ. ֆր. «ճորտ»)*—լնին, լնուքին *և այլն։*

բ) Այս նույն շրջանում նման փոփոխության է ենթարկվում նաև ու *ձայնավորը։ Սակայն երբ նկատի ենք ունենում այս շրջանում կատարված փոխառյալ բառերը, որոնց թեքման ու ածանցման ժամանակ* ու-ն *մեկ սղվում է և մեկ պահպանվում, ապա ենթադրելի է, որ այս ժամանակներում* ու-ի *հնչյունափոխության հին օրենքը հայերենի ոչ բոլոր տարբերակների համար էր օրինաչափ։ Այսպես, մի կողմից ունենք* կուրս *կամ* ղուրս *(արբ. «դեղահաբ»)—հոգն.* կուրսեր, ղուրսեր, ճափուր *կամ* ճաֆուր *(արբ. «կամֆորա»)—սեռ.* ճափուրի, ճաֆուրի, շաւուշ *(թրք. «սուրհանդակ»)—սեռ.* շաւուշի, դուկ *(լատ. «դուքս, իշխան»)*—դուկի, բուրչ-բուրչներ *և այլն, իսկ մյուս կողմից՝* բուրչ-բրչներ, ջալունչ *(հ. ֆր. «զանգատ»)*—ջալնչել *«զանգատվել» և այլն։*

Պետք է կարծել, որ միջին հայերենի ժամանակաշրջանում ոչ միայն ու-*ի, այլև մյուս ձայնավորների շեշտից հնչյունափոխվելու հատկությունը տիպական ու գործուն էր հայերենի ոչ բոլոր տարբերակների համար։ Այդ ենթադրությունը մակաբերվում է ժամանակակից հայերենի բարբառների մեջ առկա օրինաչափությունների հաշվառմամբ։ Այստեղ, այն դեպքում, երբ բարբառների հիմնական մասը այս կամ այն չափով ավանդաբար պահպանում է* ի *և* ու *ձայնավորների փոփոխության հին հատկությունը, իսկ որոշ վայրերի բարբառներ էլ այդ օրինաչափությունը տարածել են նաև մյուս ձայնավորների վրա, հայերենի այլ բարբառներ բառաթեքման ժամանակ անփոփոխ են պահում ձայնավորները, այդ թվում նաև* ի-*ն և* ու-*ն։ Այսպես է, օրինակ, Պոլսի բարբառում։ Աճառյանը, որ կատարել է իր մայրենի բարբառի մանրամասն ուսումնասիրությունը, այդ կապակցությամբ նշում է. «Ձայնավորների ու երկբարբառների սղման և ամփոփման օրենքը, որ այնպես ընդարձակ գործածություն ուներ հին հայերենում և որ այժմ էլ բավական խորությամբ պահվում է Երևանի բարբառում, վերացված է Պոլսի բարբառից։ Ուղղականի ձևը իր կերպարանքը ամբողջությամբ պահում է հոլովման բովանդակ ընթացքում. այսպես, ասում ենք* ջուրի *«ջրի»,* միսի *«մսի»,* քիթի *«քթի»,* մուգի *«մկան»,* ձուգի *«ձկան»,* սիրդի *«սրտի»,* դունի

«տան», չուճի «չան», մոխիրի «մոխրի» դէրօշ «տիրոջ», դէրօշմէ «տիրոջից» և այլն»[58]:

Անշուշտ, ավանդական հնչյունափոխությունից կատարված այս շեղումները ունեն պատմական հիմքեր և հասկանալի է, որ դրանք իրենց արմատներն ունեին միջին հայերենի շրջանում:

գ) Ժամանակակից գրական հայերենի համար կարելի է ասել հետևյալը: Այստեղ շեշտազրկությունից ի-ի և ու-ի հնչյունափոխությունը բացառապես ավանդական է և ընդգրկում է այն բառերը, որոնք ժառանգված են հնից: Բառաթեքման ժամանակ սիրտ–սրտի, մարմին–մարմնի, ջուր–ջրի, տուն–տներ և նման տիպի փոփոխությունների կենսունակությունը թերևս պայմանավորված է նրանով, որ դրանք կենդանի են ժամանակակից բարբառներում և այդ հիմքի վրա նաև ժողովրդախոսակցական լեզվում: Այն հանգամանքը, որ նոր փոխառություններում վերջնավանկի ի և ու ձայնավորները շեշտազրկությունից այլևս չեն հնչյունափոխվում, խոսում է այն մասին, որ տվյալ օրենքը այլևս դադարել է գործուն լինելուց: Հիշենք գրական հայերենում գործածական այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ՝ ալյումին, անալիզ, անարխիստ, ասպիրին, արխիվ, բանկիր, բենզին, բրիգադիր, գրիպ, կարբիդ, մարգարին, պարուսին, ավտոբուս, բամբուկ, ինստիտուտ, կաուչուկ, կորպուս, մինուս, մոդուս, մոլեկուլ, պլենում և այլն, և այլն, որոնց վերջնավանկի ի-ն և ու-ն փոփոխության չեն ենթարկվում ոչ միայն թեքման, այլև ածանցման ու բառաբարդման ժամանակ: Այսպես, օրինակ՝ դրանցից ունենք կազմված՝ գրիպային (վիճակ), արխիվային (նյութեր), ալյումինագործ, կարբիդագործ, ավտոբուսային (կայան), կաուչուկագործ, մոլեկուլային (արժեք) և այլն՝ առանց հնչյունափոխության: Եթե ժամանակակից գրական հայերենում նշված ձայնավորների հնչյունափոխությունը կենդանի ու գործուն օրինաչափություն լիներ, ապա մենք պետք է ունենայինք՝ գրիպ–*գրպի, *գրպային, արխիվ–*արխվի, *արխվային, կարբիդ–*կարբդի, *կարբդագործ, *ավտոբսային, *մոլեկլային և այլ նման ձևեր: Այդ օրենքի ոչ գործուն լինելով պետք է բացատրել նաև այն, որ հնից ավանդված որոշ բառերի թեքման ժամանակ էլ զուգահեռաբար օգտագործվում են ինչպես հնչյունափոխված, այնպես և չհնչյունափոխված ձևերը, որոնք գրական լեզվի արտասանական (ուղղախոսական) նորմայի խախտում չեն համարվում: Այսպես՝ զուգահեռաբար գործածվում են ճատկանշի և ճատկանիշի, ոռոշլի և ոռոշիլի, ճատշի և ճատիշի և բազմաթիվ այլ բառեր: Դիտելի է նաև, որ բազմավանկ բառերի վերջնավանկի

58 Հ. Աճառյան, Քննություն Պոլսահայ բարբառի, 1941, էջ 100—101: Թեև Պոլսի բարբառը ևս որոշ հետքեր պահել է ձայնավորների աղման հին օրինաչափությունից, բայց այստեղ տիպականը այժմ դրանց անփոփոխ մնալն է:

ի-ն և ու-ն, եթե թեքման ժամանակ հնչյունափոխվում են եզակի ձևերում, ապա հոգնակիում անփոփոխ են. այսպես՝ ժողովուրդ-ժողովրդի, ժողովրդից, ժողովրդով, բայց՝ ժողովուրդներ, ժողովուրդների, ժողովուրդներից և այլն։ Այսպես նաև՝ մարմին-մարմնի և մարմիններ, մարմինների, խորհուրդ-խորհրդի և խորհուրդներ, խորհուրդների։ Նույնիսկ կան նորակազմություններ, որոնք և՛ եզակի, և՛ հոգնակի ձևերում մնում են անփոփոխ. ինչպես՝ անուրդ-անուրդի, անուրդներ, անուրդների, պարապուրդ-պարապուրդի, պարապուրդներ, պարապուրդների, խառնուրդ-խառնուրդի, խառնուրդներ, խառնուրդների և այլն։ Սակայն կան նաև իմաստային այնպիսի խմբեր, որոնց մեջ մտնող միավորները անալոգիական կազմությամբ ունեն հնչյունափոխվող ձևեր. ինչպես, օրինակ՝ -ում (հին ումն)-ով վերջավորվող գոյականները։ Այստեղ նույնիսկ նորակազմությունները ենթարկվում են հնչյունափոխության. ինչպես՝ աքսորանում-աքսորանման, տեղակայում-տեղակայման, վերացարկում-վերացարկման, երևակում-երևակման և այլն։

Ինչ վերաբերում է բառակազմության ընթացքում ու-ի և ի-ի հնչյունափոխությանը, ապա այստեղ ավանդական օրինաչափությունը ավելի պահպանողական է։ Մի կողմից հնչյունափոխված բառաձևերը որպես պատրաստի կաղապարներ գալիս են հնից (գիր-գրել, գրական, գրագիր, գրագրություն, գրագետ, ջուր-ջրել, ջրառատ, ջրահեղձ, ջրամբար, ջրային, ջրասույզ, ջրարբի և այլն) և մյուս կողմից՝ այդ և նման բառերում կատարված հնչյունափոխության գիտակցմամբ կազմվում են նոր բառեր՝ անալոգիական կազմությամբ (գրապահարան, գրականագետ, գրականագիտություն, ջրաբաժան, ջրաբերություն, ջրահարս և այլն)։ Այս օրենքը կենդանի է միայն հնից ավանդված այն բառերի մեջ, որոնք հնում էլ ենթարկվում էին հնչյունափոխության։ Ինչպես տեսանք վերևում՝ հնչյունափոխությունը չէր ընդգրկում նոր փոխառությունները, որոնց մեջ ի-ն և ու-ն մնում են անփոփոխ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԵՐԵՆԻ ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախորդ գլխում մեր նպատակն էր ցույց տալ հայերենի զարգացման պատմական տարբեր փուլերում ձայնավոր հնչույթների շեշտի հետ կապված հնչյունափոխության ու բառի մեջ նրանց բաշխման առանձնահատկությունները, նրանց կազմի մեջ տեղի ունեցած փոփոխությունները՝ հատկապես նկատի ունենալով ժամանակակից բարբառները, երբ դրանց մեջ առաջացած հնչույթային տարբերակները հնչյունաբանական այս կամ այն գործոնի ազդեցության տակ վերածվում են ինքնուրույն հնչույթների։ Փաստորեն նախորդ գլխում քննված հնչյունաբանական և հնչույթաբա-

նական երևույթները դիտված են ստատիկ վիճակում, թեև այնտեղ փորձ արվեց նաև բարբառների ձայնավորների համեմատական ուսումնասիրությամբ թափանցել պատմական շրջանի խորքերը և պարզել, թե ձայնավոր հնչյունների ի՞նչ համակարգ կարելի է վերականգնել հին գրական լեզվի հիմքում ընկած տարբերակի համար։

Այս գլխում նպատակ է դրվում ուրվագծելու պատմական շրջանում ձայնավորների կրած փոփոխությունները։ Այդ փոփոխությունների քննությունը կտարվի պատմական շրջանի սկզբից դեպի մեր օրերը։ Փոփոխությունների ընթացքը և օրինաչափությունները ցուցադրելու համար կօգտագործվեն ինչպես բարբառների, այնպես և մատենագրական տվյալները։ Մեր գործը բավականին դժվարանում է հենց միայն նրանով, որ առ այսօր մենք չունենք ոչ համեմատական բարբառագիտություն և ոչ էլ պատմական բարբառագիտություն։ Հետևաբար այն փաստական նյութը, որ մեզ պիտի տային այդ երկու բնագավառներում կատարված հետազոտությունների արդյունքները, պետք է հայթայթվեն եղած նկարագրությունների շրջանակներում։

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ՇԵՇՏԻ ԴՐՈՒԹՅԱՆ

Նախորդ գլխում մենք տեսանք, որ ձայնավորների այն տեսակները, որոնք բացակայում են գրական լեզուներում, պատմականորեն առաջացած միավորներ են։ Հետևաբար այն, ինչ առաջացել է պատմական շրջանում, բնականաբար ունի և իր առաջացման ժամանակը և հետագա զարգացման ընթացքը։

Ձայնավորների փոփոխությունները պատմական շրջանում տեղի են ունեցել տարբեր դրդապատճառներով ու գործոնների ազդեցությամբ։ Այստեղ բացի արտաքին ազդեցության հանգամանքներից, որը, մեր կարծիքով, ոչ բոլոր դեպքերում կարող է էական լինել, առավել կարևոր են զարգացման այն տենդենցները, որոնք երբեմն թաքնված, երբեմն բացահայտ գործում են ամեն մի լեզվի գոյության ամբողջ շրջանում։

Հայերենում ձայնավորների պատմական փոփոխությունների հիմնական գործոններից (ազդակներից) մեկը շեշտն է։ Վերևում արդեն խոսք է եղել շեշտի դիրքի և պատմական շրջանում նրա ուժգնության չափի փոփոխության մասին։ Որ շեշտը իսկապես կարևոր գործոն է եղել ձայնավորների պատմական փոփոխությունների համար, ապացուցվում է ոչ միայն վերը նշված՝ նախաշեշտ ձայնավորների հնչյունափոխությամբ ու սղմամբ, այլև նրանով, որ ձայնավորների, այդ թվում նաև երկբարբառների մի մասի փոփոխությունները հիմնականում պայմանավորված են շեշտով և նրա դիրքով։ Պատահական չպետք է համարել այն, որ բարբառների մի մասում ձայնավորների փոփոխությունը շեշտի

տակ ունենում է շեշտից դուրս ընկած դիրքից միանգամայն տարբեր ընթացք։ Երկբարբառների մենաբարբառացման ընդհանուր շարժման մեջ, տարբեր վայրերում դրանց՝ այս կամ այլ կարգի փոփոխություններ ըը ևս կապված են շեշտի, ինչպես նաև նրա հիմքի վրա ձևավորված հնչերանգի հետ։

Շեշտի ազդեցությամբ առաջացած պատմական հնչյունափոխության ամենաաչքի ընկնող երևույթը ձայնավորների սղումը կամ ը-ի փոխվելն է։ Այս փոփոխությունը կատարվում է հնչյունաբանական մակարդակում, երբ շեշտի տակ գտնվող ձայնավորը մնում է անփոփոխ, իսկ շեշտից դուրս գտնվողը, թույլ արտասանության հետևանքով, դուրս է ընկնում հնչյունական շղթայից։

Մենք վերը արդեն ասել ենք, որ շեշտի բնույթով և նրա զբաղեցրած տեղով է պայմանավորված ձայնավորների հնչյունափոխության ընթացքը։ Այսպես, արևմտյան բարբառներում վերջնավանկային շեշտադրությամբ պետք է բացատրել միջնավանկային ձայնավորների սղումը (կամ ը-ի փոխարկվելը) և առաջին վանկի ձայնավորների անվթար պահպանումը։ Այս երևույթը, որ մեր ժամանակակից հայ բարբառների արևմտյան խմբակցության ներկայացուցիչների առանձնահատկություններից մեկն է, վկայվում է նաև մատենագրական տվյալներով, որ նշանակում է, թե այն ունի որոշակի հնություն։ Ըստ որում այդ հնչյունափոխության վկայությունները արդեն խիստ հաճախական են միջին հայերենի շրջանում և որոշ չափով դառնում են գրական լեզվի համար արտասանական նորմա։ Հին գրական հայերենից ավանդված այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ՝ հասկանալ, բաժանել, վաճառական, ժողովել, վայելել և այլն, այս ժամանակների գրավոր աղբյուրներում արձանագրվում են միջնավանկի ձայնավորի (ձայնավորների) սղմամբ, ինչպես՝ հասկնալ, բաժնել, վաճռական, ժողվել, վայլել և այլն։ XII—XIV դարերի սկզբնաղբյուրներում արդեն վկայվում են նման հնչյունափոխության ենթարկված բազմաթիվ բառեր, ինչպես՝ հաւանել>հաւնել, մեռանել>մեռնիլ, պահանջել>պահնջիլ, ճանաչել>ճանչնալ, թագաւոր>թագւոր||թագվոր, գանգատաւոր>գանգտւոր, սպանանել>սպաննել||սպանել, դատարկել>դարտկել, խորանալ>խորնալ, անցանել>անցնել, հարցանել>հարցնել, հաւատալ>աւտալ, ելանել>ելնել, հասանել>հասնել, հատանել>հատնիլ, կատաղել>կատղիլ, սպիտակուց>սիպտկուց, ցամաքել>ցամքել, պատառոտել>պատռտել, բորբոսել>բորբսել, խոցոտել>խոցտել, կոտորել>կոտրել և այլն։ Այն հանգամանքը, որ այդ հնչյունափոխված ձևերը առատորեն վկայվում են միջին հայերենի շրջանում, կարող են հիմք տալ կարծելու, թե երբ դրանք կյանքի են կոչվել նախամիջինհայերենյան շրջանից շատ ավելի առաջ։ Իրականությունն այն է, որ ինչքան գնում ենք դեպի ետ, այնքան սկզբ-

նագիր աղբյուրներում հնչյունափոխությամբ վկայվող օրինակները պակասում են։ Հետաքրքիր է նկատել, որ X—XI դարերի վիմական արձանագրություններում ու ձեռագրերի հիշատակարաններում վկայվող այն օրինակները, որոնք վերաբերում են բառամիջի ձայնավորների սղմանը՝ առավելապես վերաբերվում են բառաթեքմանը։ Բառական ուղիղ ձևերում ձայնավորների կորստի հնագույն վկայությունները (այն էլ եզակի օրինակներով) XI դարից այն կողմ չեն անցնում[1]։ Դիտելի է, որ Ս. Ավագյանի վերը նշված աշխատության մեջ բերվող նման օրինակների գերակշռող մասը ձայնավորի սղում ունեն բառաթեքման ընթացքում, իսկ այն օրինակները, որոնց մեջ այդ երևույթը առկա է բառական ուղիղ ձևերում, ավանդված են ավելի ուշ շրջանից։

Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ բառական ուղիղ ձևերում միջնավանկի ձայնավորի անկման երևույթը հաջորդել է բառաթեքման ժամանակ շեշտափոխությունից կատարվող հնչյունափոխությանը։ Այսինքն՝ այստեղ նախնականը բառաթեքման ընթացքում կատարված փոփոխությունն է, որը այնուհետև նմանությամբ տարածվել է նաև բառական ուղիղ ձևերի վրա։

Հայերենի տարբերակների մի մասում այդ օրինաչափությունը հետագայում դառնում է գործուն և տարածվում է նաև փոխառյալ բառերի վրա։ Այսպես, օրինակ՝ հ. ֆրանսերենից փոխառած պարոն (<baron) բառի ածանցմամբ՝ պարոնութիւն ձևի կողքին ունենք նաև պարնութիւն, որը այն բարբառների առանձնահատկության դրսևորումն է, որոնց մեջ խիստ օրինաչափ է միջնավանկի ձայնավորի կորուստը։

Շեշտի հետ կապված և նրանով պայմանավորված միջնավանկի ձայնավորների անկումը դառնում է մի շարք արևմտյան բարբառների առանձնահատկությունը և այդ ճանապարհով էլ հետագայում թափանցում արևմտահայ գրական լեզվի սահմանները։ Արևմտահայ գրական լեզվում օգտագործվող ավտալ, բաժնել, ճասկնալ, ժողվել և նման բազմաթիվ այլ բառերի գոյությունը, որոնք միջնավանկում ունեն ձայնավորների կորուստ, պետք է բացատրել հենց այդ օրինաչափությամբ։

Արևմտահայերենի համեմատությամբ՝ արևելահայ գրական լեզվի մեջ քիչ են սղման ենթարկված նման բառերը, բայց, այնուամենայնիվ, կան։ Դրանց մի մասը նույնպես գալիս է ժողովրդական լեզվից։ Բայց այստեղ այդ բառերի ակունքները շատ հաճախ դժվար է որոշել։ Պետք է կարծել, որ դրանց մի մասը գրական լեզվի մեջ թափանցել է գրավոր աղբյուրներից, հատկապես բոլոր այն դեպքերում, երբ դրանք դիտվել են որպես հին կամ միջին գրական հայերենների բառաձևեր։ Այդպիսի բառեր կարելի է համարել, օրինակ, արմտիք, չարկամութիւն, սպանել

---

[1] Տե՛ս Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, 1973, էջ 83—84, ինչպես նաև գրքի վերջում բերվող աղյուսակում։

(<սպանանել) և նմանները։ Բառերի մի այլ խմբի, հատկապես բայական միավորների հնչյունափոխված ձևերի գոյությունը արևելահայերենում կարող է մեկնաբանվել քերականական համակարգի ներքին օրինաչափություններով։ Այսպես, օրինակ. հին հարցանել-ի դիմաց ժամանակակից հայերենում (ինչպես նաև նրա հիմքում ընկած բարբառներում) հարցնել ձևի առկայությունը պետք է բացատրել նրանով, որ պատճառական բայերի մեջ քանի որ կերպածանցը -ցն- է և հարցանել բայն էլ իր խոնարհման ու դերբայական ձևերում ունի պատճառական բայի առանձնահատկություններ, ապա այդ հիմքի վրա էլ կատարվել է համահարթեցում նաև անորոշ դերբայում։ Այդ ենթադրությունը ճշտվում է, երբ հաշվի ենք առնում մեր ժամանակակից բարբառներում նույն ածանցի և այդ բայի դրսևորման ձևերը։ Այստեղ ևս հարցանել բայը տարբեր վայրերում ենթարկվում է այն հնչյունափոխությանը, որը հատուկ է նաև պատճառական կերպածանցին (այսպես՝ թըըցանիլ, ճըրցանիլ և թոցունել, հարցունել, թռուցել, հարցուցել և այլն)։

Ժամանակակից արևելահայ գրական հայերենում մի շարք բայեր ունեն միջնավանկի ձայնավորի կորուստ՝ տեսնել (<տեսանել), մտնել (<մտանել), իջնել (<իջանել), հագնել (<ագանել), մեռնել (<մեռանել), ելնել (<ելանել), հասնել (<հասանել), անցնել (<անցանել) և այլն, հակառակ ընդհանուր օրինաչափության, երբ առհասարակ հին հայերենից ավանդված եռավանկ (և ավելի վանկ ունեցող) բայերը պահում են իրենց միջնավանկի ձայնավորը՝ հասկանալ, բաժանել, մոռանալ, մոռանալ, զարմանալ, հեռանալ և այլն։ Ինչո՞վ կարելի է բացատրել այս երկվությունը։ Կասկածից դուրս է, որ հնչյունափոխված ձևերը գրական լեզվի մեջ են թափանցել ժողովրդախոսակցական լեզվից ու բարբառներից, բայց ինչո՞ւ գրական լեզուն այն չի մերժել, երբ այն հակասել է ընդհանուր օրինաչափությանը։ Մեզ թվում է, որ այստեղ կարևոր դեր է խաղացել քերականական գործոնը։ Ինչպես կարելի է նկատել, վերը նշված բայերը ունեն խոնարհման տիպի ընդհանրություններ։ Սրանք բոլորն էլ անցյալ կատարյալի, վաղակատարի և հարակատարի ձևերում ունեն արմատական հիմք և նույնատիպ խոնարհման շարքեր (տեսա, մտա, իջա, տեսել, մտել, իջել, տեսած, մտած, իջած և այլն), այն դեպքում, երբ միջնավանկի ձայնավորը պահած բայերի նույն ժամանակաձևերը ունեն ցոյական հիմք (հասկացա, մոռացա, հասկացել, մոռացել, հասկացած, մոռացած և այլն) կամ էլ՝ ե պարզ բայերին հատուկ հիմքակազմություն և խոնարհում (բաժանեցի, բաժանել, բաժանած և այլն)։ Ձևաբանական հենց այս հիմունքով էլ պայմանավորված է այդ բայերի հնչյունափոխված ձևերի գոյությունը արևելահայ գրական լեզվում։ Որ այդ միավորման հիմունքը ձևաբանական համակարգն է, երևում է և նրանից, որ որոշ բարբառներում չ սոսկածանցավոր բայերը փոխարկվել են ն ածանցա-

վորների՝ հիմքակազմության ու խոնարհման նույնատիպության նույն սկզբունքով (փախչել>փախնել, թռչել>թռնել, ճանգչել>ճանգնել և այլն)[2]։ Այդ անցումը կատարվում է այդ երկու տիպի բայերի ձևաբանական կառույցների ընդհանրության հիմքի վրա։

Այս օրինաչափություններից դուրս արևելահայ գրական լեզուն միջնավանկի ձայնավորները առհասարակ չի կորցնում։ Իսկ եթե, այնուամենայնիվ, գտնվեն ինչ-ինչ օրինակներ, ապա դրանք ներթափանցումներ են կամ բարբառներից, կամ արևմտահայ գրական լեզվից։

Սակայն, ինչպես արդեն ասվել է շեշտի քննությանը նվիրված բաժնում, հայերենի գոյության պատմական շրջանում, նրա տարբերակների մի մասում, շեշտը տեղակայվում է վերջընթեր վանկում և ստանում է բավական սուր բնույթ։ Վերջին հանգամանքը հատկապես պատճառ է դառնում, որ նրանից առաջ գտնվող ձայնավորները՝ թուլանալով ընկնեն կամ հնչյունափոխվելով դառնան ը։ Այդ երևույթը շատ ընդգծված կերպով արտահայտված է Ղարաբաղի, Զանգեզուրի տարածքում գտնվող բարբառներում։ Այստեղ հին հայերենից ավանդված բազմավանկ բառերը ձայնավորների համատարած կորուստ ունեն՝ շեշտից առաջ գտնվող վանկերում։ Այսպես, օրինակ, այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ շալակել, բարձրանալ, ուրախութիւն, աղաման և այլն, այստեղ ունեն հետևյալ հնչյունափոխված ձևերը՝ ըըլակել, պըցրանալ, ըրխօթին, ըղաման։ Այս օրինաչափությունը արմատապես տարբերվում է այն օրինաչափությունից, որ նկարագրվեց վերը որպես արևմտյան բարբառների առանձնահատկություն։ Արևելահայ այս բարբառների շեշտադրության և դրանից առաջացող նախաշեշտ ձայնավորների կորստի վերաբերյալ միջնադարյան գրավոր աղբյուրները որոշ վկայություններ տալիս են։ Թեև այդ վկայությունները սակավաթիվ են, բայց նշված օրինաչափությունը հաստատելու տեսակետից խիստ տիպական են։ Այսպես, օրինակ, Հաղբատի վանքի վիմական արձանագրություններում հանդիպում են պկասցանել և պկսուցանել պատճառականի ձևերը, որոնցից առաջինում ձայնավորի (ա-ի) կորուստը առաջին վանկում է, իսկ երկրորդ բառաձևում ա-ն ը-ի է փոխվել առաջին երկու վանկերում (սրանց վկայությունները տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» մեջ, է 75)։ Այս նույն արձանագրություններում նման փոփոխություն ունեն նաև՝ Սահակ անձնանվան սեռական-տրականի Սհակա ձևը. խափանողք>ղփանողք բառը և այլն։ Ըստ որում՝ վերը նշված պկասցանել և պկսուցանել բառաձևերը վկայված են XI դարի արձանագրություններում (առաջինը՝ 1061 թվականի գրչությամբ)։ Այսպիսով, ժամանակակից մեր բարբառների նախաշեշտ ձայնավորների անկման կամ ը-ի փոխվելու օրինաչափու-

---

2 Մի երևույթ, որ սկսում է թափանցել նաև գրական լեզվի սահմանները։

թյունը ժամանակագրորեն հասնում է մինչև XI դարը։ Սրանք առաջին վկայություններն են, բայց պետք է ենթադրել, որ հնչյունափոխական այս երևույթն ավելի վաղ շրջանում է սկսել ձևավորվել։

Այս բոլորից դուրս կան բարբառներ էլ, որոնք ձայնավորների կորուստ չեն ունենում։ Դրանցից են հատկապես Արարատյան բարբառի մի շարք խոսվածքներ (Երևան, Աշտարակ, Փարպի, Էջմիածին և այլն), որոնք թեև ունեն վերջընթեր շեշտ, բայց նրանցում նախաշեշտ վանկի ձայնավորները այնպիսի համատարած փոփոխության չեն ենթարկվում, ինչպիսին գտնվում էր Ղարաբաղի և մյուս վայրերի բարբառներում։ Այստեղ պատահում են միայն հատ ու կենտ բազմավանկ բառեր, որոնց առաջին վանկի ձայնավորը փոխվում է ը-ի. ըստ այդմ՝ այս խոսվածքներում հիմնականը ձայնավորների անվթար մնալն է։ Դա թերևս կարելի է բացատրել նրանով, որ այս խոսվածքներում շեշտը սուր չէ, ինչպես այդ հատուկ էր վերը հիշատակված բարբառներին։ Արարատյան բարբառի նշված խոսվածքներում ևս միջնավանկի ձայնավորների անկման դեպքերը պայմանավորված չեն շեշտով, այլ բացատրվում են ձևաբանական համակարգի առանձնահատկություններով, ինչպես այդ բացատրվեց գրական հայերենում առկա նման բառաձևերի քննության ժամանակ։ Այդտեղ կարևորը, թերևս, եղել է այն, որ տվյալ բայը իր խոնարհմամբ հարելով որոշակի տիպի, իր հնչյունական ձևավորմամբ ևս նմանվել է այդ տիպի մեջ մտնող բայերին։

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ ԿԱՄ ՍՂՈՒՄԸ ԲԱՌԱՍԿԶԲՈՒՄ

Հնչյունափոխական այս երևույթը պայմանավորված է ոչ այնքան շեշտով, որքան այն պայմաններով, որոնց մեջ գտնվում են ձայնավորները։ Շեշտը թերևս կարող է ունեցած լինել այն նշանակությունը, որ սղվող կամ ընկնող ձայնավորները գտնվում են բառասկզբում, հետևաբար և շեշտից դուրս են։ Բայց այն հանգամանքը, որ որոշ բառերում բառասկզբի ձայնավորների սղումը կամ անկումը տեղի է ունենում ինչպես վերջադրական (արևմտյան), այնպես էլ վերջընթեր (արևելյան) շեշտի պայմաններում, խոսում է այն մասին, որ հնչյունափոխական այս երևույթի համար շեշտը վճռական նշանակություն չի ունեցել, թեև, ինչպես ասվեց, չի ժխտվում նաև նրա մասնակի մասնակցության փաստը։

Հնչյունափոխական այս երևույթի դրսևորման համար կարևոր պայմաններ են դառնում ձայնավորների բառասկզբում լինելը՝ մի կողմից, և ինչ բաղաձայններից առաջ գտնվելը՝ մյուս կողմից։ Անշուշտ, ոչ բոլոր դեպքերում է, որ այս դիրքում ու պայմաններում գտնվող ձայնավորները անպայմանորեն ընկնում կամ սղվում են։ Այդ փոփոխությունը վերաբերում է միայն մի խումբ բառերի։ Եվ երբ նկատի ենք ունենում մատենագրության մեջ, ինչպես նաև ժամանակակից բարբառներում վկայվող հըն-

չյունափոխված այդ բառաձևերը, նկատելի է, որ այդ փոփոխությունը կատարվում է հատկապես ձայնորդների հարևանությամբ։ Ըստ որում հիշյալ երևույթը ավելի ինտենսիվ է դրսևորվում ղ և ր, իսկ ավելի սակավ՝ ն և մ ձայնորդներից առաջ։

Ժամանակակից գրական հայերենում հնչյունափոխական այդ օրենքը չի գործում և բնականաբար նման բառերը մերժվում են որպես բարբառայնություններ։ Արևմտահայ գրական լեզվում գործածվում է նման հնչյունափոխության ենթարկված մի բառ՝ ղրկել, որը գրական լեզվի մեջ է մտել նրա հիմքում ընկած բարբառներից։ Այդ ղրկել ձևը առաջացել է հին ուղարկել (յուղարկել) բառաձևից՝ մինջավանկի ա-ի և ղ-ից առաջ բառասկզբի ու-ի անկմամբ։ Նշելի է նաև, որ ղրկել բառաձևը բավական տարածված բառաձև է ժամանակակից հայ բարբառներում, թեև մերժված արևելահայ գրական հայերենի կողմից։ Այն վկայվում է նաև պատմական շրջանի սկզբնաղբյուրներում՝ սկսած XII—XIII դարերից։

Արևելահայ գրական լեզուն բառասկզբի ձայնավորի հնչյունափոխությամբ ունի անկանել>ընկնել (արևմուտքում՝ իյնալ), որտեղ բառասկզբի ա-ն դարձել է ը (ն-ից առաջ), իսկ բառամիջի ա-ն ընկել է (թերևս ն սոսկածանց ունեցող բայերի նմանությամբ, որոնք ունեն նմանատիպ խոնարհում)։

Ձայնավորների անկումը կամ սղումը բառասկզբում, ձայնորդներից առաջ, առավել հատակորեն դրսևորվում է բարբառներում։ Կարելի է հիշել հետևյալ օրինակները՝ ըրիգուն||րիգուն, ռակու (<երեկոյ), ռախա, ռախէ (<երեխայ), Րէվան (<Երևան), ղօրմի (<ողորմեա), ղարկել||ղուրկիլ||ղրկել (<ուղարկել), ղօրդ (<ուղղորդ), ղանձել (<աղանձել), ղանձուտ (<աղանձ-ուտ), ղաչանք (<աղաչանք) ղունի (<աղունի), ռըէխ, ռէխ (<երախ), ըղօղ||ըղուղ||ղուղ (<ուղեղ), ղօրմացիկ (<ողորմած-իկ) և այլն, և այլն։ Այս երևույթը, իհարկե, համատարած բնույթ չի կրում, այլ տիպական է հատկապես Լոռի—Զանգեզուր—Ղարաբաղ տարածքի խոսվածքներին։

Ժամանակակից բարբառներում արձանագրվող այս երևույթը իր վկայություններն ունի պատմական շրջանի գրավոր աղբյուրներում։ Այստեղ առավել ինտենսիվությամբ հանդիպում են ղ-ից առաջ կատարվող փոփոխությունները, ինչպես՝ ղորդ ըղորդ (<ուղղորդ), (ը)ղորդել (<ուղղորդել), (ը)ղորդութիւն (<ուղղորդութիւն), ըղուղ, ըղեղ, ղուղ (<ուղեղ), ղունկ (<եղունգն), ղորկութիւն (<ողորկութիւնն) և այլն։ Մյուս ձայնորդներից առաջ կատարվող փոփոխությունները այդ աստիճան հաճախական չեն, ինչպես՝ ընգնել (<անկանել), ընգողին (<անկողին), Ըրստակէս (<Արիստակէս), ընել (<անել<առնել), ըմմէն (<ամէն) և այլն։ Սրանց մի մասն էլ (հատկապես վերջինները) հանդես են գալիս ավելի ուշ շրջանում։ (Օրինակների համար վկայությունները տե՛ս «Ակ-

նարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության մեջ՝ ձայնավորների փոփոխություններին նվիրված բաժնում)։

ԱՃԱՌՅԱՆԻ ՕՐԵՆՔԸ

Նախքան ձայնավորների պատմական փոփոխությունների մյուս տիպերին անցնելը՝ հարկ է անդրադառնալ հնչյունական մի օրենքի, որը մեր մասնագիտական գրականության մեջ հայտնի է «Աճառյանի օրենք» անունով։ Այս օրենքի հետ ծանոթանալը կարևոր է այնքանով, որ նրա հետ առնչվում են նաև մի շարք այլ հնչյունական երևույթներ։

Հնչյունական այս օրենքը ձևակերպված է Վանի բարբառին նվիրված ուսումնասիրության մեջ և անմիջապես վերաբերում է այդ բարբառում առկա քմային ա̈ ձայնավորի գոյության մեկնաբանությանը։ Քննելով Վանի բարբառի լեզվական նյութը, Աճառյանը նկատել էր, որ «Գրաբարյան բ, գ, դ, ձ, ջ *բաղաձայնները Վանի բարբառում բառասկզբում դառնում են* պ, կ՛, տ, ծ, ճ *և նրանց կողքին գտնվող* ա *ձայնավորը դառնում է* ա̈, *իսկ* պ, կ, տ, ծ, ճ *մնում են անփոփոխ և նրանց կողքին գտնվող* ա *ձայնավորն էլ մնում է անփոփոխ»*[3]*։ Այդ դիտարկման ավելի ընդհանրացված ու սեղմ ձևակերպումը հետևյալն է. «Վանի բարբառում* ա *ձայնավորը գտնվելով գրաբարյան թրթռուն պայթականից առաջացած խուլի մոտ, դառնում է* ա̈, *իսկ խուլից առաջացած խուլի մոտ մնում է* ա*»*[4]*։ Աճառյանը այս օրենքը տարածում էր Մարաղայի, Խոյի, Սալմաստի, Ղարաբաղի, Շամախիի, այսինքն՝ բոլոր այն բարբառների վրա, որոնք գրաբարյան ձայնեղ պայթականները խլացրել էին և նրանց մոտ գտնվող* ա*-ն դարձրել քմային* ա̈*։*

*Հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ «Աճառյանի օրենքը» իրոք գործում է բավականին մեծ տարածքի վրա՝ Վասպուրականից դեպի Սյունիք՝ մինչև Արցախ, և որ այդ օրենքը հատուկ է ոչ միայն այն բարբառներին, որոնց մեջ ձայնեղ պայթականները փոխվել են խուլերի (*բաճ>պա̈ճ, դաճակ>տա̈ճա̈կ, գարի>կ՛ա̈րի *և այլն), այլև նրանց, որոնց մեջ ձայնեղ պայթականները մնացել են անփոփոխ (*բաճ>բա̈ճ, դաճակ>դա̈ճա̈կ, գարի>գ՛ա̈րի *և այլն)։ Ըստ որում՝ պարզացվեց, որ նշված դիրքում* ա*-ի քմայնացումը կապված է ոչ թե ձայնեղների խլացման հետ (ինչպես այդ ձևակերպված է օրենքում), այլ ժամանակին պայմանավորված է եղել տվյալ ձայնեղների արտասանական բնույթով, և որ ձայնավորների քմայնացումը ժամանակագրորեն նախորդել է ձայնեղ պայթականների խլացմանը*[5]*։ Աճառյանը նկատել էր նաև, որ քմայնաց-*

---

3 Հ. Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*, էջ 20։

4 *Նույն տեղում*։

5 *Տե՛ս* Հ. Դ. Մուրադյան, *Ինչպե՞ս հասկանալ «Աճառյանի օրենքը»*, «Բանբեր Երև-

ման երևույթը այդ նույն դիրքում ընդգրկում է մասամբ նաև ո ձայնավորը, որը չնայած իր երկբարբառային արտասանությանը՝ ձայնեղ պայթականների մոտ ստանում էր քմային երանգ (ô)։ Այլ բարբառների լեզվական նյութի դիտարկումները ցույց տվեցին, որ «Աճառյանի օրենքը» վերաբերում է ոչ միայն ա ձայնավորին, այլ առհասարակ ետին շարքի բոլոր ձայնավորներին, որոնք ձայնեղ պայթականներից հետո համապատասխանաբար դառնում են առաջնային շարքի ձայնավորներ (ո>ö, ô, ու>ու̈)։ Դեռ ավելին, հետագա ուսումնասիրությունները բացահայտեցին այս օրենքի հետ կապված այլ օրինաչափություններ։ Պարզվեց, որ Ղարաբաղի բարբառի մի շարք խոսվածքներում, ինչպես նաև Մեղրու, Կարճևանի բարբառներում այդ նույն դիրքում հին ա ձայնավորի դիմաց ոչ թե ա̈ է, այլ է ձայնավոր (բան>բէն, պէն, դանակ>դէնակ, տէնակ, դատարկ>դէտակ, տէտակ և այլն), որը անշուշտ, զարգացել էր ա>ա̈ փոփոխությունից, այսինքն՝ նույն օրենքի ազդեցության արտահայտությունն էր։

Այսպիսով «Աճառյանի օրենքը» ստանում է ընդհանրական բնույթ և այն կարելի է ձևակերպել այսպես. Վասպուրական—Սյունիք—Արցախ տարածքի բարբառներում հին հայերենի բառասկզբի ձայնեղ պայթականներից հետո գտնվող ետին շարքի ձայնավորները (ա, ո, ու) փոխարկվում են առաջնային շարքի (ա̈ ‖ է, ö ‖ ô, ու̈) համապատասխան ձայնավորների։

Այս օրենքը տվյալ տարածքի բարբառների համար խիստ բնութագրական է և շատ անգամ նրանով են բացատրվում հնչյունական այլ օրինաչափություններ։ Հետագա շարադրանքում մենք կտեսնենք, թե ինչպես ձայնավորների պատմական փոփոխությունների մեջ, երբ ընդհանուր կանոնով ավելի նեղ (փակ) արտասանություն ունեցող ձայնավորները աստիճանաբար փոխարկվում են ավելի լայն (բաց) ձայնավորների, այս նույն դիրքի ձայնեղ պայթականները խոչընդոտում են այդ ընդհանուր օրինաչափությանը և որպես ընդհանուր կանոն պահանջում են, որ իրենցից հետո լինեն ավելի նեղ (փակ) ձայնավորներ։

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԵՐԿԲԱՐԲԱՌԱՑՈՒՄ

Հայերենի ձայնավորների պատմական փոփոխությունների մեջ, վերը նկարագրված հնչյունափոխական երևույթներից բացի, կարելի է առանձնացնել երկու հիմնական երևույթներ, որոնք և բնութագրում են բարբառներում արձանագրվող ձայնավորների հնչյունափոխական մյուս բոլոր երևույթները։ Դրանցից մեկը պարզ ձայնավորների երկբարբառացումն

վանի համալսարանի», 1973, № 2։ Նույնի՝ Հ. Աճառյանի բարբառագիտական ժառանգությունը, «Լեզվի և ոճի հարցեր», № 5, Երևան, 1978։

է, երկրորդը՝ բաց՝ լայն ձայնավորների արտասանության անցումը դեպի ավելի փակ՝ նեղ արտասանության, կամ հակառակը՝ փակ ձայնավորների փոխարկումը ավելի լայն բացվածքի ձայնավորների։ Այս երևույթները փոխադարձաբար պայմանավորված են մեկը մյուսով և ներկայացնում են միևնույն հնչյունափոխական ընդհանուր երևույթի տարբեր կողմերը։

Ձայնավորների երկբարբառացման մեջ առավել հայտնի երևույթ է հին **ո** և **ե** պարզ ձայնավորների փոփոխությունը։ Հայտնի է, որ հին հայերենի գրի առման շրջանում այս տառերով արտահայտվող հնչյունները միանշանակ էին բառի մեջ գրված բոլոր դիրքերում։ Այսօր այդ տառերի հնչյունական միարժեքությունը արդեն խախտված է։ Դրանք բառասկզբի ու բառամիջի դիրքերում այժմ միարժեք չեն։ Հին **որ, որդի, եփեմ, երես** և այլ նմանատիպ բառերը, որոնք արտասանվում էին or, ordi, ephem, eres և այլն, այժմ ունեն vor, vorthi, yephem, yeres արտասանությունը։ Ակնհայտ է, որ այդ ձայնավորները բառասկզբի դիրքում կրել են փոփոխություն՝ պարզ ձայնավորից վերածվելով երկհնչյունների (**ո**>vo, **ե**>ye)։ Պատմական այդ փոփոխությունը, անշուշտ, տեղի է ունեցել ոչ միանգամից, այլ աստիճանաբար։ Ըստ որում՝ պարզ ձայնավորից դեպի երկհնչյունային արտասանությունը կատարվել է **ե** և **ո** ձայնավորների երկբարբառացմամբ։ Այդ ձայնավորների երկբարբառացումը սկզբնապես սկսվել է առանց դիրքի սահմանափակման, այսինքն՝ ընդգրկել է ինչպես բառասկիզբը, այնպես էլ բառամեջը, միայն թե՝ միշտ շեշտյալ վանկում։ Հետագայում է միայն, որ միավանկ բառերի բառասկզբի ձայնավորների հնչյունափոխությունը ընդգրկել ու համաբանությամբ տարածվել է նաև բազմավանկ բառերի բառասկզբի դիրքի վրա։ Ժամանակակից հայերենի բարբառները դեռ այսօր էլ իրենց մեջ պահում են այդ փոփոխությունների ամբողջական պատկերը։

Նախ **ո**-ի մասին։ Փոփոխությունը սկսվում է այս ձայնավորի ավելի սուղ (նեղ, փակ) արտասանության միտումով, որի հետևանքը լինում է այն, որ **ո**-ն իր արտաբերման սկզբում ստանում է u ձայնավորի մի թույլ երանգ։ Այդ երանգը սկսում է ավելի ու ավելի ընդգծվել, որը շեշտի տակ **ո** պարզ ձայնավորին տալիս է **ուօ** երկբարբառի արժեք։

Նկատված է, որ **ո**-ի **ուօ** երկբարբառային արտասանությունը բարբառից բարբառ (վայրից վայր) ունի հնչման որոշակի տարբերություններ՝ թույլ երկբարբառացումից մինչև ուժեղ, ընդգծված երկբարբառացում։ Այն ավելի որոշակի է դրսևորվում, օրինակ, Վանի, Խոյի, Մարաղայի, Շատախի, Դիադինի և հարակից այլ վայրերի խոսվածքներում, իսկ ավելի թույլ, օրինակ, Արարատյան բարբառի Աշտարակի, Օշականի խոսվածքներում։ Հենց այդ տարբերություններն էլ ներկայացնում են **ո**-ի երկբարբառացման տարբեր աստիճանները։

Կարևոր է նշել նաև, որ նույն **ո** ձայնավորի երկբարբառացման

դրսևորումը բառասկզբի դիրքում որոշակիորեն տարբերվում է բառամիջի դիրքի երկբարբառացումից: Բառամիջում այն պարզապես հանդես է գալիս իբրև ու և օ ձայնավորների սերտ միացություն՝ որպես երկբարբառ (բարդ ձայնավոր), ինչպես՝ խոտ (=խուօտ. ո գրով հայ բարբառագիտության մեջ նշանակվում է երկբարբառային ուօ-ն), կ՛ո̂ղ[6], կոկ, կոթ, կոպ, ճող||խող||փող և այլն: Բառասկզբի դիրքում երկբարբառից առաջ հնչվում է մի թույլ w կամ v, որի ընդգծվածության աստիճանը նույնպես վայրից վայր տարբեր է. այսպես՝ ւորփ, վորփ<որբ, ւոր, վոր<որ, ւոտ, վոտ<ոտն և այլն: Այս w կամ v-ի գոյությունը ինքնին հասկանալի մի բան է, եթե նկատի ունենանք, որ այն առաջանում է ձայնավորից առաջ գտնվող u-ի արտասանությունից:

Այս երկբարբառը ունի արտասանական մի այլ տարբերակ, որի մեջ երկբարբառի երկրորդ բաղադրիչը e է (անշուշտ զարգացած օ-ից). այսպես՝ խուէղ «ճող», կուէպ<կոպ և այլն[7]: Հետագա շարադրանքում մենք կտեսնենք, որ ո-ի երկբարբառային այս երկու տարբերակներից տարբեր վայրերում առաջանում են տարբեր հնչյուններ:

Ո ձայնավորի երկբարբառացման այս պրոցեսը կատարվել է ամբողջ հայերենում, միայն այն տարբերությամբ, որ նախապես որոշ վայրերում այն ընդգրկել է միայն շեշտակիր վանկերը. հետագայում է, որ այլ վայրերում այն տարածվել է անխտիր բոլոր դիրքերի վրա: Նման երկբարբառացմամբ էլ բացատրվում են ո-ի կրած փոփոխությունները:

Այս նախնական փոփոխությունից հետո՝ հետագա զարգացումը գնում է երեք ուղղություններով. որոշ վայրերում երկբարբառացման սկզբնական դրությունը (իր թույլ կամ ուժեղ ընդգծվածությամբ) շարունակվում է մինչև մեր օրերը (ա), այլ վայրերում երկբարբառացումը վերանում է՝ թողնելով որոշակի հետևանք (բ), մի երրորդ տարածքում ո ձայնավորի ձգտումը դեպի ավելի սուղ արտասանություն (որից առաջացել էր ուօ երկբարբառը) հասնում է իր ավարտին, վերածվելով ավելի նեղ (փակ) բացվածքի ձայնավորի (գ): Սրանցից առաջինի մասին արդեն խոսք է եղել վերևում, մյուսների մասին կարելի է ասել հետևյալը: Պատմական զարգացման ընթացքում, հայերենի որոշ տարածքի բարբառներում սկսված երկբարբառացումը աստիճանաբար վերանում է (ունակության կորստի, այլ բարբառների կամ գրական լեզվի ազդեցության պատճառով և այլն): Եթե այդ բանը ոչ մի հետք չի թողնում բառամիջի դիրքի վրա, քանի որ այստեղ ո-ի երկբարբառային տարրի (ու-ի)

6 Ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո ո երկբարբառը ստանում է քմայնացման երանգ: Ո-ի վրա դրված նշանը դրա արտահայտությունն է:

7 Ա. Ղարիբյան ո-ի երկբարբառային արտասանության մեջ առհասարակ դնում է ուէ հնչումը, որը բոլոր վայրերի համար ընդհանրացնել չի կարելի: Տե՛ս նրա «Հայ բարբառագիտություն, 1953, էջ 116:

վերացմամբ արդյունքում մնում է նախնական ձայնավորը (ո ~ օ), այն բառասկզբի դիրքում, որտեղ երկբարբառից առաջացել էր բաղաձայնական տարր (վ, ւ), երկբարբառացման վերացումից հետո վ-ն պահպանվում է բառասկզբում, որով և այդ դիրքի հին ո-ն ստանում է երկհնչյունային vo-ի արժեք: Այսպես է առաջացել գրական լեզվի բառասկզբի ո-ի վօ երկհնչյունային արտասանությունը, որը, անշուշտ, գրական լեզու է եկել կենտրոնական բարբառներում առկա օրինաչափություններից: Ժողովրդախոսակցական լեզուներից ո-ն այդպիսի զարգացում ունի, օրինակ, Երևանի խոսվածքում, որտեղ բառասկզբի ո-ի դիմաց ունենք վօ (վօրթի<որդի, վօր<որ, վօշխար<ոչխար և այլն), իսկ բառամիջի դիրքում օ (կօպ<կոպ, ֆօղ «ճող», գ՛օղ<գող և այլն:)

Զարգացման նման ընթացք է ունեցել և նույնպիսի բացատրություն ունի Ղարաբաղի ու Սյունիքի տարածքի որոշ խոսվածքներում բառասկզբի ո-ի դիմաց հանդես եկող վէ||վըէ հնչյունակապակցությունը (ըէ-ն տվյալ դեպքում զարգացել է բարբառային է-ից): Այդ համապատասխանությունը տվյալ դեպքում ծագում է ո-ի ուէ երկբարբառային տարբերակից, որը այստեղ բառասկզբում օրինաչափորեն տվել է վէ (ապա և վըէ). վէխճար||վըէխճար<ոչխար, վէճիլ||վըէչիլ<ոչիլ, վէռ||վըէռ<ոռ, վէսկի||վըէսկի<ոսկի, վէսկըռ||վըէսկըէռ<ոսկր, վէճճը||վըէճճը<ոտճ, վէր||վըէր<որ, վէրթի<որդի, վէրթնը<որդն, վէրց>որձ, վէրցակ>որձակ վէրս<որս և այլն, և այլն: Նույն կերպ պիտի բացատրել նաև այս խոսվածքներում բառամիջի ո-ի դիմաց հանդիպող է(ըէ) ձայնավորը, ինչպես՝ խընէցի<խնոցի, կ՛էրթնուկ<գորտնուկ, ճուլէռնը<ոլոռն, լէղ<լող, սըվէրիլ<սովորել, թըէավէր<թագավոր, փէր<փոր, փըէս<փոս և այլն[8]: Եվ թեև այս դիրքում ո ~ է(ըէ) համապատասխանությունն ունեցող բառերը նույն հաճախականությունը չունեն, ինչ բառասկզբի դիրքում, բայց եղածներն էլ ապացույց են այն բանի, որ բառասկզբի օրինաչափությունը (ո>ուէ) ժամանակին գործել է նաև բառամիջի դիրքում, միայն այն տարբերությամբ, որ երկբարբառի (ուէ) վերացումից հետո արդյունքում մնացել է e-ն, թեև այդ օրինաչափությունը բառամիջում այժմ խախտված է անհայտ պատճառներով:

Հայերենի բարբառների գրաված մի այլ տարածքում, երբ ո-ի երկբարբառային արտասանությունից անցում է կատարվում դեպի մենաբարբառացում, մենաբարբառի մեջ սկսում է աստիճանաբար գերիշխել նրա առաջին բաղադրիչը (ու-ն), որից և մենաբարբառացումը գնում է ուօ||ուէ >ու ճանապարհով: Դա կատարվում է այն ժամանակներում, երբ բառասկզբի դիրքում ուօ||ուէ-ից առաջ դեռ չէր առաջացել վ բաղաձայնը

---

8 Այս և վերի օրինակները քաղված են Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» (Երևան, 1966) աշխատությունից:

(կամ ւ ձայնորդը)։ Այս տարածքում երկբարբառի պարզման ազդակը թերևս եղել է նախնական ձայնավորի (ո-ի) ավելի սուղ (նեղ, փակ) արտասանության հասնելու ձգտումը, որը կատարվում է շրթնայնության սահմաններում։ Այս հիմքի վրա է, որ այս բարբառներում ո-ի *դիմաց այժմ ունենք* ու||ö *պարզ ձայնավոր։ Այս անցումը հատուկ է Մեղրու, Կարճևանի, Ագուլիսի և նրանց հարող վայրերի խոսվածքներին (թեև կարող են լինել և այլ վայրերում. օրինակ, այն մասամբ տարածված է նաև Ղարաբաղի ու Սյունիքի խոսվածքներում՝ հատկապես բառամիջի դիրքում)։ Առավել հատակ ու հետևողականորեն օրինաչափությունը դրսևորվում է Մեղրու բարբառում, որտեղ հին* ո-ի *դիմաց* ու||ö *է ոչ միայն բառասկզբում, այլև բառամիջում՝ նաև շեշտից դուրս ընկած դիրքում. այսպես օրինակ՝ բառասկզբում.* ճու/վ<ով, ճöլլöր<ոլոր, ուղնը<ողն, ուչ<ոչ, ուխչար<ոչխար, ճöջöլ<ոջիլ, ուռ<ոռ, öռնիլ<ոռնալ, ուսկէ<ոսկի, ուսկուռ<ոսկր, öռնը<որդն, ճուռնը<որն, öռծ<ործ, öրձ<որձ, öրձöկ<որձակ, ճուրմ<որմն *և այլն. բառամիջում.* բուխ <բոխ(ի), գուղ<գող, դուղ<դող, թուռնը<թոռն, խուզ<խոզ, խուտ <խոտ, ծում<ծոմ··· ախուռ<ախոռ, խաղու<խաղող, ճէպուտ< ճիպոտ, թափուր *«հանդես»*<թափոր *և այլն։ Այստեղ թեև բառասկզբի դիրքի համար կան մի քանի բացառություններ, ինչպես՝* վօխ<ոխ, վօղջ<ողջ, վօղօրմիլ<ողորմել. *բայց գրական փոխառություններ են*[9]*։*

Կարճևանի բարբառում ևս գործում է նույն օրինաչափությունը, բայց ոչ նույն հետևողականությամբ։ Այստեղ ինչպես բառասկզբում, այնպես և բառամիջում կան և՛ Ղարաբաղի, և՛ Մեղրու բարբառին հատուկ փոփոխություններ։ Օրինակ, վերը՝ բառասկզբի համար բերված օրինակներից Կարճևանում շեղում են տալիս հետևյալները՝ վըէչ<ոչ, վըէռ<ոռ, վըէսկի<ոսկի, վըէսկըռ<ոսկր, վըէր<որ, վըէրթ *«հորթ»*<որթ, ճըէրմը<որմն: *Բառամեջը հիմնականում մնում է* օ *(որոշ դիրքերում՝* ö*), կան նաև* ո>ու *փոփոխությամբ բառեր, ինչպես՝* խուզ<խոզ, ծում< ծոմ, ծուպ<ծոպ, կուճ<կոճ, կուպ<կոպ, կուրկուտ<կորկոտ, կուփիլ<կոփել, ջուկիլ<ջոկել, խարտուց<խարտոց, մուռում<մեռոն, լակուտ<լակոտ *և այլն, որոնք, սակայն, քանակային տեսակետից զիջում են այն բառերին, որոնց մեջ* ո-ն *մնում է անփոփոխ։ Այստեղ հետաքրքիր են նաև այն բառերը, որոնք բառամիջի* ո-ի *դիմաց ունեն* է *կամ* ըէ, *ինչպես այդ նշվեց Ղարաբաղի ու Սյունիքի տարածքի որոշ խոսվածքների համար. այդ նշանակում է, որ հիշյալ հնչյունափոխական երևույթի ալիքները հասել են մինչև այս վայրերը։ Ահա այդ բառերը.* բէղ *«բոխի բույսը»* <բող, բէխկ<բողկ, խմըէր<խմոր, խինէցի <խնոցի, մըէխըր< մոխիր, մըէրթիլ<մորթել, մըէրթի<մորթի, պըէրտ<պորտ, փըէր<

---

9 *Օրինակները քաղված են Է. Աղայանի «Մեղրու բարբառը» աշխատությունից։*

7—687

փոթ, փէխ<փոխ, փէխիլ<փոխել, փէխփէխիլ<փոփոխել, փըէր<փոր: *Ուշադրության արժանի հանգամանք է, որ այդ փոփոխությունը հիմնականում արձանագրվում է շրթնային բաղաձայններից հետո, մի դիրք, որտեղ* ո-*ն առավել հակված է երկբարբառայնացման: Այստեղ* ո-*ի փոխարեն* ըէ *է նաև բառասկզբի հո հնչյունակապակցության դիմաց՝* վըէղ՝ *հող,* վըէտ՝ *հոտ,* վըէտիլ՝ *հոտել,* վըէր՝ *հոր (այս մասին տե՛ս նաև էջ 267):*

*Ագուլիսի բարբառը որոշ իմաստով միջին դիրք է գրավում Մեղրու և Ղարաբաղի բարբառների խոսվածքների միջև, թեև ունի նաև ինքնատիպ երևույթներ: Այստեղ, եթե բառամիջի և բառասկզբի հիմնական օրինաչափությունը Մեղրու բարբառի նման է (*ո>ու *փոփոխությամբ), ապա այդ օրինաչափությունից շեղվող բառերը բառասկզբում մի այլ փոփոխության արդյունք են: Այստեղ ունենք հետևյալ շեղումները՝* էխշար<ոչխար, էջիլ<ոջիլ, էռնիլ<որղնել, էռծակ<որձակ: *Սրանց պետք է ավելացնել նաև* ասկի<ոսկի, առթուկ *«հորթ»*<որթ, արուճ<որոճ *բառերը, որոնք թեև բառասկզբի* ո-*ի դիմաց* ա *ունեն, բայց այդ* ա-*ն եկել է՝ առաջացած բարբառային* է-*ից (*է>ա *հնչյունափոխությունը այստեղ օրինաչափ է. հմմտ.* մէջ>մանջ, մէջք>մաշկ, խլէզ>խըլազ, խըլայզ *և այլն): Կարելի էր, թերևս, ենթադրել, թե այդ վերականգնվող ու վերևի բառերում առկա* է-*ն առաջացել է վերը նշված* ո>վէ *հնչյունափոխությունից՝ բառասկզբի* վ *բաղաձայնի անկումով, բայց դա միայն արտաքնապես է այդպես թվում, իրականում այստեղ մենք գործ ունենք երկբարբառային* ուէ-*ից զարգացած* է-*ի հետ, ինչպես այդ հատուկ էր Ղարաբաղի, Սյունիքի խոսվածքներին՝ բառամիջի դիրքում: (Այդպիսի մի ձև էլ արձանագրվում է Կարճևանի բարբառում. հմմտ. վերը բերված* ճըէրմը<որմն. *միայն թե այստեղ ձայնավորից առաջ ավելացել է* ճ*): Առհասարակ Ագուլիսի բարբառում բառասկզբի* ո-*ի դիմաց* վ-*ով ձևեր ունեն երկու բառ.* վօրթի<որդի *և* վառ<ոռ: *Սրանցից առաջինը ակնհայտորեն գրական փոխառություն է, երկրորդը իր բառասկզբի* վ-*ով թեև հարում է Սյունիքի խոսվածքներին, բայց* ո>վէ *հնչյունափոխության մեջ* է>ա *անցումով զուտ ագուլիսյան է):*

Այսպիսով ո-*ի երկբարբառացումը հայերենի զարգացման ընթացքում հասցնում է տարբեր արդյունքների՝ տարբեր վայրերում, տարբեր ժամանակային կտրվածքներում: Դա կարելի է արտահայտել այսպես.* *(տե՛ս հաջորդ էջում)**:*

Այս բոլոր անցումների համար գրավոր աղբյուրներում շատ քիչ տեղեկություններ կան: Ընդհակառակը, նրանցում ավելի շատ են այն փաստերը, որոնք ապացուցում են, որ հին ո-*ն բառի մեջ գրաված բոլոր դիրքերում էլ հանդես էր գալիս հնչյունական միևնույն արժեքով: Հիշենք, թեկուզ, միջնադարյան փոխառություններում օտարլեզվյան* o-*ի և հայե-*

ընի ռ-ի համապատասխանության բազմաթիվ դեպքերը (baron-պարոն, comes-կոմս, ακολουθος- ակոլութ և այլն), օտար բառերի, այդ թվում և անձնանունների, բառասկզբի vo-ի հայերենյան տառադարձությունները՝ վույթ «համայնքի ընտրովի առաջնորդ», վոյվոտայ «նահանգապետ ձեռնատանում», Վոյթոս, Վոլոշին, Վոյթովսկիյ և այլն՝ բոլորն էլ փոխառյալ լեհերենից (Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական համայնքի դատարանի արձանագրություններում)[10], որոնց մեջ օտարլեզվյան vo հնչյունախմբի արտահայտումը հայերենում վո հնչյունակապակցությամբ ապացույց է ռ-ի մեջ vo արժեքի բացակայության. կամ՝ Աւշին, Օշին անձնանունների կողքին Ոշին տարբերակը, Յովհաննէս, Յովանէս, Օրբելեանց անունների կողքին Ովանէս, Ոհանէս, Որպիլեանց գրության ձևերը. միթե կարելի՞ է կարծել, որ դրանց մեջ բառասկզբի ռ-ն արտասանվում էր որպես վո երկհնչյուն։



Բայց այս բոլորը, այնուամենայնիվ, չի նշանակում թե ռ ձայնավորի մեջ փոփոխություն չէր կատարվել։ Այդ բոլորը մի ավելորդ անգամ խոսում են այն մասին, որ հայերենի տարբեր դրսևորումներում ռ-ին տրվում էր տարբեր արժեքներ (ինչպես և այսօրվա բարբառներում)[11]։

Փաստեր, թեև քիչ, բայց և այնպես կան։

Ո-ի կրած փոփոխության մասին առաջին հերթին մեզ հուշում է այն իրողությունը, որ չնայած հայերենի այբուբենում (օ) հնչույթին համապատասխան ռ տառի գոյությանը, X—XI դարերում անհրաժեշտություն է առաջանում հայերենի այբուբենը համալրել մի նոր օ տառով։ Այբուբենում նոր տառի ընդունումը ապացույց է այն բանի, որ ռ-ն այլևս չուներ իր հին արժեքը։

Բառասկզբի դիրքում ռ-ի կրած հնչյունափոխությունը հաստատող փաստերից ուշագրավ է հետևյալը։

Կոստանդին Երզնկացու տաղերից մեկում ունենք այսպիսի մի նախա-

---

10 Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները, աշխատասիրությամբ Վ. Ռ. Գրիգորյանի, Երևան, 1963։

11 Այն, որ բառասկզբի դիրքում ռ ձայնավորի vo հնչյունափոխության մասին գրավոր աղբյուրները համապատասխան վկայություններ չեն տալիս, դա դեռ չի նշանակում, թե «այդ հնչյունափոխությունը տեղի է ունեցել ավելի ուշ, քան կարծվում է», որովհետև՝ այնտեղ, որտեղ ռ-ն բառասկզբում հնչյունափոխվել է վռ-ի, ոչ մի անհրաժեշտություն չկար այն ինչ-որ նոր ձևով արտահայտելու, քան հենց ռ-ի միջոցով։

դասութիւն. «Բլբուլն ասէ չիս խօսելով, թէ՝ դու վանց վո՞ւր ես խև եղել»[12]։ Այստեղ՝ բնագրում մեզ հետաքրքրողը ընդգծված վո՞ւր բառաձևն է։ Ոչ մի կասկած չի կարող լինել, որ այն հին հայերենի ո՞, ո՞վ հարցական դերանվան սեռականի ոյ՞ր-ից առաջացած բարբառային ձև է (ինչպես երևում է նաև իմաստից՝ վանց վու՞ր «ու՞մ համար»)։ Նրանում կատարված փոփոխությունները միանգամայն օրինաչափ են և բացատրելի, բայց պետք է որոշել նաև այդ փոփոխությունների հաջորդականությունը։ Ակնհայտ է, որ այստեղ նախ պետք է կատարված լիներ ո>վո անցումը (ոյր>վոյր) և հետո միայն ոյ>ու հնչյունափոխությունը (ոյր>վոյր>վուր), հակառակ դեպքում անբացատրելի է մնում բառասկզբի վ-ի գոյությունը։ Եթե այդ այդպես է, ուրեմն մենք այստեղ գործ ունենք հնչյունափոխական երկու տարբեր երևույթների հետ, որոնք միաժամանակ կատարվել չէին կարող և որոնցից մեկը անպայմանորեն հաջորդել (կամ նախորդել) է մյուսին։ Ինչքա՞ն ժամանակ է պահանջվել, որ դրանք ձևավորվեն որպես գործող օրինաչափություններ։ Այս հարցին, իհարկե, դժվար է ճշգրիտ պատասխան տալ, բայց, մյուս կողմից՝ հայտնի իրողություն է, որ լեզվի մեջ ամեն մի նոր օրինաչափություն ձևավորվում է ոչ միանգամից, այլ դանդաղ, սերունդների համար աննկատ փոփոխությունների միջոցով։ Տվյալ դեպքում Երզնկացին XIII դարի հեղինակ է։ Եթե նրա լեզվում արձանագրված բառաձևի մեջ առկա են հնչյունափոխական երկու տարբեր օրինաչափություններ, որոնցից ամեն մեկի ձևավորման ու գործառության համար կպահանջվեր մի քանի սերունդների կյանքի տևողություն, ուրեմն այդ փոփոխություններից առաջինը (ո>վո) հավանաբար առաջացած պիտի լինի իր վկայությունից առնվազն 250—300 տարի առաջ։

Բառասկզբի ո-ի հնչյունափոխության վերաբերյալ մեզ հավաստի տեղեկություններ կարող էին տալ հատկապես փոխառյալ բառերը, բայց այս դեպքում նրանք, ցավոք, լռում են։ Այն օրինակները, որ հնարավոր է եղել բառացիորեն պեղել սկզբնաղբյուրներից, հետևյալներն են։

Միջնադարյան գրավոր աղբյուրներում, հատկապես հայերեն ձեռագրերի հիշատակարաններում, հանդիպում են նույն բառի հետևյալ գրչությունները՝ ոխվ, ողֆ, ողբ (նաև վախմ)։ Թեև սրանք բառամիջում ունեն բաղաձայնների տարբեր համապատասխանություններ՝ կապված տվյալ վայրի արտասանական առանձնահատկությունների հետ, բայց բոլորի մեջ էլ բառասկիզբը ո է (բացառությամբ վախմ ձևի)։ Այս բառը ծագում է արբ. vaqf բառից, որի իմաստն է՝ «հոգևորական կալվածք»։ Ճիշտ է, տվյալ դեպքում հայերենի ո-ն գտնվում է արբ. va երկհնչյունի

12 Կոստանդին Երզնկացի, *Տաղեր, աշխատասիրությամբ Արմենուհի Սրապյանի, 1962, էջ 120։*

դիմաց, բայց այստեղ կարևորը բառասկզբի v-ն է, քանի որ հայերենի ռ-ի մեջ կատարված փոփոխությունը բացատրելու տեսակետից որոշիչը այն է[13]։

Մի այլ օրինակ, որ հանդիպում է Գրիգորիս բժշկապետի «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» աշխատության մեջ։ Այստեղ կարդում ենք. «Եւ այս արիւնս յերբ կապի, ոչ չյելնէ և չյվայթի, նայ շատ ցաւեր ընծայէ ի մարդոյն մարմինն. և ցաւերն այս են՝ արծվիք, և բարակցաւ, և ռսուաս, որ է ցնոր և պղտորել մտաց և խելաց»[14]։ Այստեղ ընդգծված բառը, որ հեղինակը բացատրում է «ցնոր և պղտորել մտաց և խելաց»՝ արբ. وسواس «ցնորք, մտքի պղտորում» բառն է[15], որի բառասկզբի و -ի դիմաց հայ հեղինակը (կամ գրիչը) դնում է հայերենի ռ-ն։ Այստեղ ևս կասկած չկա, որ հայերենի ռ-ն արտահայտում է մի երկհնչյուն, որ սկսվում է արբ. و (վ)-ով։

Ավելի դժվար է օրինակներ գտնել բառամիջի դիրքի ռ-ի համար։ Այստեղ առանց որևէ լրացուցիչ միջոցի ռ-ն կարող է արտահայտել և՛ երկբարբառի, և՝ պարզ ձայնավորի արժեք։ Այս դիրքի համար Հ. Աճառյանը բերում է այսպիսի մի փաստ. «1355 թվականին գրված մի ճառընտիրում կատարյալի եզակի 3-րդ դեմքի եցոյց, կացոյց և այլ ձևերը գրված են եցւոյց, կացւոյց և այլն (ըստ Սարգսյան, Անանիա Թրգմ. էջ 19 Ծան.), ես կարծում եմ, թե սա ռ>ուօ արտասանության պատկերն է»[16]։ Ձեռագրերի հիշատակարաններում հանդիպում են նմանօրինակ գրության ձևեր։

Ուշադրության արժանի փաստ է նաև ձեռագրերում հանդիպող ուղղագրական հետևյալ շեղումը, որի ժամանակ գրության մեջ հապավվում է -աւոր (-ւոր) ածանցի ւ տառը։ Այս բանը առկա է, օրինակ, Գրիգորիսի վերը նշված աշխատության ձեռագրերից մեկում, որի մեջ հետևողականորեն կիրառվում է ուղղագրական այդ շեղումը. այսպես, օրինակ՝ ուժոր-նայ (=ուժւորնայ «ուժեղանա»՝ միջին հայերենյան ձև), թիւնայոր՝ փոխ. թունաւոր, կարէոր՝ փոխ. կարևոր, ամուսնայոր՝ փոխ. ամուսնաւոր «ամուսնացած», ձգեցւոր և այլն։ Մենք կարծում ենք, որ ւ-ի բաց թողումը այստեղ պայմանավորված է ռ-ի երկբարբառային արտասանությամբ, որը և ավելորդ է դարձրել ւ-ի գործածությունը գրության մեջ։ Հատկանշական է, որ Գրիգորիսի այս աշխատության այդ նույն

---

13 Այստեղ va-ի դիմաց ռ (=vo)-ն կարելի է բացատրել կամ արաբերենի բարբառային vo տարբերակով, կամ, պարզապես, շրթնաատամնային v-ի մոտ a-ի շրթնայնացմամբ՝ հայերենում։

14 Գրիգորիս. Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց, աշխատասիրությամբ Ա. Ս. Կծոյանի, Երևան, 1962, էջ 144. նաև էջ 185-ում։

15 Նույն տեղում, էջ 227։

16 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, էջ 599։

ձեռագրում օրինակներ կային նաև բառասկզբի ո-ի հնչյունափոխության վերաբերյալ։

Ս. Ավագյանը իր «Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն» աշխատության մեջ օրինակներ է բերում նաև ո>է փոփոխության վերաբերյալ, որոնք վկայվում են ինչպես բառասկզբում, այնպես և բառամիջում։ Բառասկզբի համար բերվող օրինակները բացառապես վերաբերում են Յովհաննէս անվանը, որը վիմագրություններում (և ոչ միայն վիմագրություններում) հանդես է գալիս տարբեր ու խիստ փոխված ձևերով։ Այդ ձևերից մեզ հետաքրքրում են հատկապես հետևյալ զուգաձևերը. Եհանէս‖Էհանէս, Եվանէս‖Էվանէս‖Եւանէս‖Էւանէս (բառասկզբի Ե և Է, և բառամիջի ւ ու վ տառերը այստեղ հնչյունաբանորեն միանշանակ են. նրանք համապատասխանաբար ունեն e և v հնչյունների արժեք)։ Այս բառաձևերը վկայված են տարբեր վայրերում (Վանեվան, Անի, Տեկոր և այլուր)՝ սկսած X դարից։ Ամենահին վկայությունը Վանեվանի տաճարի 903 թ. արձանագրության մեջ հիշատակված Եւանէս ձևն է[17]։ Սակայն այս բառերում ո-ի դիմաց է(Ե)-ի առկայությունը վերը նկարագրված ո>ու է>է հնչյունափոխության արտահայտությունը չէ։ Այստեղ, ավելի շուտ, մենք գործ ունենք մի այլ հնչյունափոխական օրինաչափության հետ։ Ամենից առաջ աչքի է զարնում այն, որ այս ձևերը (Եհանէս, Եւանէս և այլն) առաջացել են ոչ թե անմիջապես Յովհաննէս սկզբնաձևից, այլ Ովանէս, Ոհանէս միջանկյալ ձևերից (որոնք հենց այդպես էլ վկայվում են միջնադարյան գրավոր աղբյուրներում)՝ բառասկզբի նախաշեշտ ո-ի հնչյունափոխությամբ։ Կարծում ենք, որ այստեղ գործել է վերջընթեր շեշտ ունեցող այն բարբառների օրինաչափությունը, որոնց մեջ շեշտից առաջ գտնվող ձայնավորները փոխվում են ը-ի։ Այդ օրինաչափությամբ պետք է որ առաջացած լինեին նախ՝ Ըվանէս (<Ովանէս), Ըհանէս (<Ոհանէս) բարբառային տարբերակները և ապա՝ բառասկզբի ը-ի որոշ լիահնչությամբ՝ Էվանէս, Էհանէս։ Որ այդպիսի անցում հնարավոր է, ապացուցվում է նաև նրանով, որ մեր արդի բարբառներում վկայվում են ոչ միայն ը-ով այդպիսի ձևեր, այլև դրանցից զարգացած Վանէս, Հանէս ձևերը։

Բառասկզբի դիրքի համար Ս. Ավագյանի բերած օրինակներից առավել հետաքրքիր է XIII դարից բերվող nf(մին) դերանվան բարբառային էf(մին) վկայությունը։ Այստեղ արդեն ո-ն գտնվում է շեշտի տակ և նրանում կատարված ո>է անցումը այլ կերպ չի կարող բացատրվել, քան ո>ու է>է հաջորդական հնչյունափոխությամբ։

Եվ վերջապես, վիմական արձանագրությունների իր հավաքածուից Ս. Ավագյանը մի հետաքրքիր վկայություն էլ բերում է բառամիջի դիրքի

17 Տե՛ս Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, էջ 136։

համար։ Դա փոքրաւոր բառի բարբառային փոքրաւէր հնչյունափոխված ձևն է («Ոչ ամիրայ, ոչ ձեռնաւոր, ոչ հայր փոքրաւէր». 1317 թվ.), որի մեջ կատարված ո>է հնչյունափոխությունը կապվում է Ղարաբաղի և Սյունիքի տարածքի այսօրվա բարբառներում արձանագրվող հնչյունափոխության հետ[18]։

Այսպիսով, գրավոր աղբյուրները իրենց հերթին հաստատում են ո ձայնավորի բառասկզբի և բառամիջի դիրքերում կրած այն փոփոխությունները, որոնք այսօր արձանագրվում են մեր բարբառներում և միաժամանակ օգնում են մոտավոր պատկերացում կազմելու դրանց առաջացման ժամանակի մասին։

Այժմ ե-ի մասին։ Այստեղ ևս գործել է նույն օրինաչափությունը։ Ե-ի ավելի սուղ արտասանության միտումը նրա արտաբերության մեջ առաջացրել է երկբարբառային հնչման երանգ (ie)։ Այս երանգը աստիճանաբար (կապված տեղի ու ժամանակի հետ) վերաճում է երկբարբառային ie-ի, որը նախ ընդգրկում է շեշտակիր վանկերը և հետո միայն տարածվում նաև շեշտից դուրս ընկած վանկերի վրա։ Այստեղ նույնպես՝ երկբարբառացման ընթացքում բառասկզբի ու բառամիջի դիրքերի միջև առաջանում են արտասանության տարբերություններ։ Բառասկզբի դիրքում ie երկբարբառի արտաբերության ընթացքում, նրանում առաջանում է y կիսաձայնի որոշակի երանգ, որը այլ վայրերում սկսում է ավելի ընդգծվել և ie-ն փոխարկվում է ye երկհնչյունի։ Առանձին բարբառներում, երբ հակադարձ միտումով վերանում է երկբարբառացումը, բառասկզբի դիրքում ե-ի դիմաց մնում է ye երկհնչյունը, իսկ բառամիջում ե-ն վերստանում է իր e պարզ ձայնավորի արժեքը։ Այդպես է, օրինակ, Երևանի խոսվածքում, որտեղ, չնչին բացառություններով, ե-ի դիմաց բառասկզբում յէ է, իսկ բառամիջում՝ է։

Համարյա նույն տարածքներում, որտեղ ո-ն փոխվում էր ու-ի, ե-ի դիմաց էլ առաջանում է ի։ Այդ փոփոխությունը գրանցվում է ինչպես բառասկզբի, այնպես էլ բառամիջի դիրքերում։ Այսպես, օրինակ, Կարճևանի բարբառում ունենք՝ բառասկզբի դիրքում՝ եզն>իզնը, ելանել>ի́լիլ, ես>իս, երես>ի́րիս, երևալ>ի́րիվա́լ, երեք>ի́րիք՛, եփ>իփ, եփել>իփիլ, բառամիջում՝ թել>թիլ, թեւ>թիվ, խելք>խիլք՛, ծեփ>ծիփ, մեք>միք՛, բերել>բիրիլ, աւել>ա́վլիլ, շերեփ>շիրիփ, քերել<քիրիլ և այլն։ Պետք է ենթադրել, որ այստեղ էլ ե-ի՝ ավելի նեղ ի ձայնավորի արժեք ձեռք բերելը կատարվել է ե-ի երկբարբառացման միջին օղակով, երբ երկբարբառի առաջին բաղադրիչը գերիշխող դիրք է ստացել երկրորդի նկատմամբ և մենաբարբառացումից հետո արդյունքում մնացել է ի-ն։

---

18 Նույն տեղում, էջ 137։

Ե-ի երկբարբառացման ամբողջական պատկերը կարելի է տեսնել հետևյալ գծագրում.



Այժմ անդրադառնանք պատմական աղբյուրներում ե-ի հնչյունափոխության վկայություններին։

Ե-ի հնչյունական արժեքում կատարված փոփոխության մասին առաջին հերթին կարելի է կռահել ուղղագրական այն տարընթացություններից, որոնք նկատվում են նրա ավանդական գրության շեղումներում։ Այս տեսակետից ուշագրավ է այն, որ ձեռագրերում հաճախ հանդիպում են նույն բառի ե-ով և է-ով գրության ձևեր. այսպես, օրինակ. բառասկզբում՝ եկեղեցի‖էկեղէցի, երէց‖էրէց, Երուսաղէմ‖Էրուսաղէմ, Երեկ‖Էրէկ *(«եկավ»՝ միջին հայերենյան բայաձև) և այլն, բառամիջում՝* ամեն‖ամէն, մեն‖մէն, աղեկ‖աղէկ, ճաժել‖ճաժէլ, սեբեֆիկ‖սէբէֆիկ, ֆրեր‖ֆրէր, պողլեր‖պողլէր *(վերջին երեքը՝ փոխառություններ) և այլն։*

Այս զուգագրությունները ոչ միայն կարող են նշանակել ե *և* է *տառերի հնչյունական արժեքների նույնություն, այլև հակառակը։ Հնարավոր է, որ է-ով ձևերը ներկայացնում են* ե-*ի* e *արժեքը, իսկ* ե-*ով ձևերը՝ նրա երկհնչյունային կամ երկբարբառային արժեքը։ Այլ կերպ ասած՝* ե *և* է *ձայնավորների ուղղագրական անկայունությունը կարող է միաժամանակ նրանց մեջ կատարված փոփոխությունների արձագանքը լինել։ Սակայն այս ենթադրությունը խիստ թեական է, քանի որ դա ոչ միայն հնարավոր չէ ապացուցել, այլև հնարավոր է նաև, որ այդ զուգաձևությունների հիմքը իսկապես այդ երկու տառերի հնչյունական արժեքների նույնացումը լինի։*

Այս հարցում ճիշտ կողմնորոշվելու համար մնում է նորից հենվել օտար բառերի տառադարձությունների վրա։

Բառասկզբի ե-*ի հնչյունափոխության ամենահին վկայությունը թերևս կարելի է տեսնել* ԵԶԵԿԻԷԼ *անձնանվան տառադարձության մեջ։ Այս բառը իր ծագումով թեև եբրայական է (*yahezqēl*), բայց հայերենը այն տառադարձել է հունարեն* ιεζεκιηλ *ձևից։ Այստեղ, ինչպես կարելի է նկատել, հայերենի* Ե-*ն դրված է հունարեն* ιε *երկհնչյունի դիմաց, որ նշանակում է, թե մեր* Ե-*ն ուներ երկհնչյունային արժեք։ Եվ քանի որ Աճառյանի վկայությամբ (տե՛ս «Անձնանունների բառարանը»)* ԵԶԵԿԻԷԼ *անունը հայոց մեջ սկսել է գործածվել 540 թվականից, ստացվում է, որ բառասկզբի* Ե-*ի հնչյունափոխության վկայությունը գնում է մինչև VI դարը։ Բայց կարելի՞ է արդյոք վստահել այս փաստին։ Բանն այն է,*

որ մեզ հայտնի չէ, թե այդ անունը հայոց մեջ առաջին անգամ գործածելիս (գրանցելիս) ինչպիսի տառադարձություն է ունեցել՝ Յեզեկիէ՞լ, թե՞ Եզեկիէլ: Ճիշտ է, առաջին հայը, որ կրել է այդ անունը, ապրել է VI դարում, բայց նրա անունը մատենագրության մեջ առաջին անգամ հիշատակվում է Կաղանկատվացու մոտ, որը XII դարի հեղինակ է։ Եթե այդպես է, չէ՞ որ հնարավոր է, որ հին Յեզեկիէլ գրությունը սրբագրվեր հետագայում՝ ըստ Ե-ի բառասկզբյան նոր արտասանության և գրվեր Եզեկիէլ: Դեռ ավելին, այս անվան Եզեկիէլ գրության համար Կաղանկատվացին էլ ժամանակագրական սահման լինել չի կարող, քանի որ նրա աշխատությունը մեզ հասել է հետագա դարերի ընդօրինակությունների միջոցով։

Ավելի վստահելի կարելի է համարել հունարենից կատարած մի այլ փոխառյալ բառի վկայությունը։ Դա ԵՌԵՒՍ «քահանա» բառաձևն է, որ ստուգաբանորեն կապվում է հուն. ιερευς նույնիմաստ բառի հետ[19]։ Այստեղ էլ հուն. ιε հնչյունների դիմաց հայերենը դնում է Ե, որ նշանակում է, թե նա ուներ երկհնչյունային արժեք։ Այս բառը առաջին անգամ վկայված է «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց» աշխատության մեջ, ուստի և երևույթի վկայությունը հասնում է մինչև VIII դարը։ Այս օրինակին կարելի է վստահել. նախ, որ Եռեւս բառը շատ էլ հայտնի ու սովորական մի բառ չէր, որ հետագա գրիչների կողմից սրբագրվեր՝ ըստ Ե-ի հետագա արտասանության. որ դա իսկապես գրիչների համար ոչ սովորական բառ էր, երևում է հենց միայն նրանից, որ այդ բառը ձեռագրերում հանդիպում է Եռեւս, Եռիէս, Երեւս, Երեփս գրչությունններով։ Մեզ համար ամենակարևորն այն է, որ այդ բոլոր գրչությունններում հունարենի բառասկզբի ιε երկհնչյունի դիմաց հայերենում Ե է, որ նշանակում է, թե Ե-ի հնչյունափոխության սկիզբը հասնում է մինչև VIII դարը։

Հետագա դարերում արդեն հաճախանում են Ե-ի հնչյունափոխության վկայությունները, որոնք արտահայտվում են փոխառյալ անձնանուններում՝ Եզդին (պրսկ.Yazdin)՝ 1033 թ., Եմենիկ (արբ. Yemen երկրանունից)՝ XII դար, Եզդանշահ (պրսկ. yezdān+šah)՝ XIII դար և այլն։

Բառամիջի դիրքում Ե-ի երկբարբառային արտասանության վերաբերյալ հավաստի տվյալներ չկան։ Յ. Կարստը մի շարք հայերեն բառերի՝ օտար և օտար բառերի՝ հայերեն տառադարձությունները նկատի ունենալով գտնում էր, որ կիլիկյան հայերենում բառամիջի Ե-ն շեշտի տակ ուներ երկբարբառային ie արտասանություն։ Ահա այդ բառերը. Մանծկերտ→Μαντζικιερτ, ասպետ→Ασπετης, պարոն Օշին Վասիլենց→baro -

19 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան։

ne Ossino Bassiliensi, հ. ֆր. banier→պանիր, chancelier→ջանցլեր՝ solier→սօլեր և այլն[20]։

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այժմ դառնանք հայերենի ձայնավորների պատմական փոփոխությունների երկրորդ միտումին։ Այս փոփոխությունները կատարվում են երկու հակադիր ուղղություններով. մի կողմից՝ ավելի լայն բացվածքի արտաբերություն ունեցող ձայնավորները փոխվում են ավելի նեղ (փակ) արտաբերություն ունեցող ձայնավորների և մյուս կողմից՝ հակառակը, նեղ արտաբերություն ունեցող ձայնավորները փոխվում են ավելի լայն արտաբերության ձայնավորների։ Այս փոփոխությունները մենք անվանում ենք ձայնավորների համակարգային փոփոխություններ։

Ինքնին հասկանալի է, որ այդ անցումները ամեն տեղ նույն որոշակիությամբ ու հետևողականությամբ չեն կատարվում։ Եթե որոշ վայրերում ձայնավորների փոփոխության այդ հակադիր միտումները ընդգրկում են բոլոր ձայնավորները և նրանց բոլոր դիրքերը, ապա այլ վայրերում դրանք տարածվում են միայն ձայնավորների մի մասի և նրանց որոշ դիրքերի վրա։ Եթե մի վայրում տվյալ հնչյունափոխական երևույթը ավարտուն օրինաչափություն է, մի այլ վայրում այն կիսավարտ է և այլն։ Եվ դա ինքնին հասկանալի է, որովհետև ինչքան էլ որ լեզվի մեջ զարգացման միտումները լինեն ընդհանուր, այնուամենայնիվ նրանք ամենուրեք նույնական լինել չեն կարող, քանի որ գոյություն ունեն ժամանակի և տարածության մեջ։

Լայն բացվածքի ձայնավորների մեջ առաջին հերթին աչքի են ընկնում ետին շարքի ձայնավորները, որոնց փոփոխության հիմնական միտումը՝ ձգտումն է դեպի առաջնային շարքի արտաբերություն։

Այս շարքի ձայնավորներից ա-*ն նախ փոխում է իր արտաբերության շարքը (ետինից դեպի առաջնայինը)՝* ա-*ից վերածվելով* ա̈-*ի։*

Ա>ա̈ *փոփոխության դրդապատճառները միշտ չէ, որ հայտնի են։ Դեռ ավելին. միշտ չէ, որ հնարավոր է լինում պարզել այն դեպքերը, որոնք պատճառ են դառնում* ա>ա̈ *փոփոխության։ Միայն մի որոշակի տերիտորիայի, այն է՝ Վասպուրական—Սյունիք—Արցախ տարածքի բարբառներում է, որ այդ փոփոխությունը պատճառաբանվում է։ Այստեղ այն կատարվել է հին ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո ընկած դիրքում և պայմանավորված է այդ բաղաձայնների երբեմնի ունեցած հնչարտասանական մի ինչ-որ առանձնահատկությամբ (տե՛ս էջ*

[20] *J. Karst*, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901, s. 19:

92, «Աճառյանի օրենքը»), որը մեզ անհայտ է։ Այդ բանը շատ պարզորոշ երևում է այնպիսի բառերի համեմատությունից, որոնց մեջ ա-ն մի դեպքում գտնվում է ձայնեղ, մի այլ դեպքում խուլ պայթականներից հետո։ Ըստ որում՝ ձայնեղ պայթականներից հետո ա-ն փոխվում է ա̈-ի, ինչպես՝ բան>բա̈ն, գառն>գա̈ռ, դանակ>դա̈նակ, ձախ>ձա̈խ, ջրաղաց>ջա̈ղաց և այլն, այն դեպքում, երբ խուլերից հետո ա-ն մնում է անփոփոխ պատ>պատ, կաթն>կաթ, տանձ>տանձ, ծալ>ծալ, ճակատ>ճակատ և այլն։ Այսպես է նաև այն բարբառներում, որոնց մեջ հին ձայնեղները խլացել են՝

բան>պա̈ն	պատ>պատ
գառն>կ՚ա̈ռ	կաթն>կաթ
դանակ>տա̈նակ	տանձ>տանձ
ձախ>ծա̈խ	ծալ>ծալ
ջրաղաց>ճա̈ղաց	ճակատ>ճակատ և այլն

Եվ այն, որ այդ նույն օրինաչափությունը գործում է նաև այն բարբառներում, որոնց մեջ հին ձայնեղ պայթականներն ու պայթաշփականները խլացել են, խոսում է այն մասին, որ ա>ա̈ անցումը այս տարածքի բարբառներում իսկապես պայմանավորված է եղել նրանցում ձայնեղ պայթականների ու պայթաշփականների հնչարտասանական առանձնակի հատկությամբ։

Հնչյունական նույն շրջապատում ա-ի փոփոխությունը մի աստիճան էլ առաջ է անցնում (ա>ա̈>է) վերը նշված տարածքի մի շարք վայրերում։ Դա հատկապես տեղի է ունենում Մեղրու, Կարճևանի, Կաքավաբերդի և Ղարաբաղի բարբառի մի շարք խոսվածքներում, որոնց մեջ այդ նույն դիրքի ա-ի դիմաց գտնվող է-ն զարգացել է վերը նշված ա>ա̈ փոփոխությունից հետո։ Սակայն այստեղ ա(>ա̈)>է անցումը պայմանավորված է ոչ թե ձայնեղների բնույթով, այլ ձայնավորների վերը նշված լայնից դեպի նեղ արտասանության անցնելու միտումով։ Դա երևում է նրանից, որ ա>է փոփոխություն արձանագրվում է ինչպես ձայնեղները պահպանած բարբառներում (բան>բէն, դատարկ>դէռտակ, ջրաղաց>ջէղաց), այնպես և այդ ձայնեղները խլացրած բարբառներում (բան>պէն, դատարկ>տէռտակ, ջրաղաց>ճէղաց)։ Հասկանալի է, որ այստեղ նախ ձայնեղների հարևանությամբ տեղի է ունեցել ա>ա̈ անցումը (բան>բա̈ն, դատարկ>դա̈ռտակ, ջրաղաց>ջա̈ղաց), որից հետո որոշ բարբառներում ձայնեղները խլացել են (բա̈ն>պա̈ն, դատարկ>տա̈ռտակ, ջրաղաց>ճա̈ղաց) և ապա՝ այդ երկու տարբերակներից էլ անցում է կատարվել դեպի է-ն (պա̈ն>պէն, բա̈ն>բէն, ճա̈ղաց>ճէղաց, ջա̈ղաց>ջէղաց)։ Ինչպես արդեն ասվել է, այդ փոփոխությունը այժմ հա-

տուկ է Մեղրու, Կարճևանի, Կաքավաբերդի և Ղարաբաղի բարբառի մի շարք խոսվածքների։ Սրանց մեջ նույնպես հին խուլերից հետո ա ձայնավորը փոփոխության չի ենթարկվում։

Հնչյունական նույն շրջապատում ու պայմաններում կատարված ա>ä>է հաջորդական անցումները նույն հնչյունափոխական երևույթի տարբեր աստիճաններն են։ Պիտելի է, որ այդ անցումներից յուրաքանչյուրում ձայնավորներից մեկը մյուսից տարբերվում է իր արտաբերության բացվածքի՝ լայնության կամ նեղության, տարբերությամբ։ Իսկապես, ա-ն ավելի լայն բացվածքի արտաբերություն ունի, քան ä-ն, իսկ վերջինս էլ ավելի լայն է, քան է-ն։

Մեր քննարկած անցումներից ա>ä փոփոխության համար մատենագրության մեջ վկայություններ չկան։ Վերը արդեն ասվել է, որ ա>ä անցումը ժամանակային տեսակետից շատ հին է։ Ձայնեղ պայթականների ու պայթաշփականների մոտ նրա առկայությունը ենթադրվում է դեռևս դասական հայերենի շրջանում։ Բայց գրությամբ այն չի արտահայտվել, որովհետև հնչույթի արժեք չի ունեցել (ä-ն եղել է ա-ի դիրքային տարբերակը)։ Այս առումով՝ պետք է ենթադրել, որ պատմական շրջանում ա-ն կարող էր արտահայտել նաև տեղային (բարբառային) արտասանության ä-ն։

Միջնադարյան գրավոր աղբյուրներում թեև հանդիպում են ա>է հնչյունափոխության օրինակներ, սակայն դրանց մեծ մասը փոխազդեցական հնչյունափոխությամբ առաջացած ձևեր են և որևէ կապ չունեն վերը քննարկված ա>է փոփոխության հետ։ Այդպիսիք են, օրինակ՝ **երեխտաւոր**||**երեճտաւոր**՝ փոխ. **երախտաւոր** (վկայվում է մի քանի անգամ XIV—XV դարերի ձեռագրերի հիշատակարաններում), **էլեֆսան**՝ փոխ. **Ալեֆսան**, **յերջև**՝ փոխ. **յարջև** (<**յառաջեաւ**), **յեմել**՝ փոխ. **յամել**, **սերկեւագ**՝ փոխ. **սարկաւագ** (ավանդված XIII—XIV դարերից) և այլն։ Այստեղ կարելի է հիշել նաև այս նույն ժամանակներից ավանդված **խէչ**|| **խեչ** «խաչ» ձևը, բայց սա էլ չի կապվում մեր քննարկած օրինաչափության հետ։ Դեռ ավելին, ենթադրվում է, թե հայերենում նախապես եղել են ձայնդարձով **խաչ**, **խեչ**, **խոչ** ձևերը[21], հետևաբար ձեռագրերում հանդիպող **խեչ**-ը այդ տարբերակներից մեկի արտահայտությունն է։

Մեզ զբաղեցնող հնչյունափոխական երևույթի տեսակետից հետաքրքիր են հետևյալ օրինակները։ Դրանցից մեկը **դեճեկան** բառն է, որ գործածվում է բազմիցս սովորական **դաճեկան** ընդունված ձևին զուգահեռ։ Այստեղ քանի որ ա-ի փոխարեն ե-ն գտնվում է ձայնեղ դ-ից հետո, կարծես համապատասխանում է ձայնեղներից հետո ա>է հնչյունափոխությանը։ Բայց այստեղ հնարավոր է նաև, որ գործ ունենք կամ ետըն-

---

21 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան։

թաց առնմանության հետ, կամ պարզապես դեճեկան-ը դաճեկան-ի և նույն բառի ժողովրդական դեկան բառի կոնտամինացիայով առաջացած ձև է (դեկան բառաձևը գործածական է՝ սկսած Շնորհալուց)։ Այս տեսակետից ավելի արժեքավոր են հետևյալ օրինակները. «Գնեցի զս̅բ նշանս եւ զջեղացակն (<զջաղացակն) եւ տվի վանք» (Մեծարանց, 1293 թ.), «Ես՝ Աղբէրիկ տվի... ջեղացն (<ջաղացն<ջրաղացն)» (Արդանիշ, 1216 թ.), «Խիլայս ջեղացն (<ջաղաց) ի վանքս տվի..., ով զջեղացս խլէ, յա̅յ նզովեսցի» (Հայրավանք, XII դար)։ Այս օրինակները բերում է Ս. Ավագյանը՝ դրանցից առաջինը քաղելով Խ. Դադյանի 1901 թ. «Բանասերում» հրատարակած հոդվածից, իսկ մյուսները՝ իր և Ս. Բարխուդարյանի անտիպ հավաքածուներից[22]։

Կարծում ենք, որ այս օրինակները հավաստի են, հետևաբար ա>է հնչյունափոխության առաջին վկայությունը հասնում է մինչև XII դարը։

Ա ձայնավորը ենթարկվում է նաև մի այլ փոփոխության, որի համար էական նշանակություն է ունեցել շրթնայնացումը։ Վերջինս, որ նախապես ունեցել է արտահայտության թույլ երանգ, հետագայում ուժգնանալով պատճառ է դարձել ա>ա̊>օ>ու հաջորդական անցումներին։ Այստեղ նույնպես, ինչպես կարելի է նկատել, ա ձայնավորի փոփոխությունը լայնից գնում է դեպի ավելի նեղ բացվածքի արտաբերություն, միայն թե այդ անցումը այս դեպքում կատարվում է նույն շարքում՝ բարձրացման աստիճանների փոփոխությամբ և շրթնայնացման նույն ոլորտում։ Այսպես. ու-ն որպես վերին բարձրացման ձայնավոր, ավելի նեղ է իր արտաբերության բացվածքով, քան միջին աստիճանի օ-ն, իսկ վերջինս էլ՝ ավելի նեղ, քան ստորին բարձրացման ա-ն (այդ թվում նաև շրթնայնացած ա̊-ն)։

Անցման այդ բոլոր օղակներն էլ այսօր առկա են ժամանակակից հայերենի բարբառներում։ Շրթնայնացած ա̊ ձայնավոր ներկայացնում են Բայազետի և Մոկսի բարբառների որոշ խոսվածքներ։ Ա>օ փոփոխության օրինակներ տալիս են Հաջընի, Ագուլիսի և Համշենի բարբառները։ Ա>ու արձանագրվում է, օրինակ, Սվեդիայի բարբառում։

Թեև վերը նշված բարբառներում ա>օ>ու հնչյունափոխությունը գործում է ոչ միաչափ ինտենսիվությամբ ու ոչ համանման պայմաններում, բայց համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք նույն օրինաչափության կոնկրետ դրսևորումներն են։

Հաջընի բարբառում ա>օ հնչյունափոխությունը (եթե անտեսենք բացառությունները, որոնք ամենուրեք էլ լինում են) տեղի է ունեցել բացառապես շեշտի տակ՝ ա) բառասկզբի դիրքում՝ աղ>օղ, աղբ>օխբ, աղտ>օղդ, ամպ>օմբ, ազգ>օզկ, առ>օռ և այլն. բ) բառամիջի դիր-

22 Ս. Ավագյան, նշված աշխ., էջ 96։

քում (և՛ միավանկ, և՛ բազմավանկ բառերում հավասարապես)՝ բարձ>պօյծ, բան>պօն, գալ>կօլ, լար>լօր, ծառ>ձօռ, ճամ>ճօմ, ճաւ>ճօվ, բակ>պօզ, դատ>տօդ, թագ>թօf, ծակ>ձօզ, մազ>մօզ, ամառն>ամօռ, գազան>կազօն, գանգատ>կանգօդ, ճակատ>ջագօդ, ծիծաղ>ձըձօղ, ուրախ>ույօխ, դանակ>տանօզ, աման>ամօն *և այլն*[23]*։*

Ագուլիսի բարբառում ա>օ *հնչյունափոխությունը տեղի է ունեցել միայն միավանկ բառերում (և՛ բառասկզբում, և՛ բառամիջում)՝* ակն>օկն, աճ>օճ, աշf>օշկ, արջ>օռջ, արտ>օռտ, թաս>թօս, խազ>խօզ, խաշ>խօշ, ծափ>ծօփ, կաթ>կօթ, կախ>կօճ, կապ>կօպ, կար>կօr *և այլն*[24]*, որ նշանակում է, թե փոփոխությունը նույնպես կատարվել է շեշտի տակ, բայց միայն միավանկ բառերում։ Ագուլիսի բարբառում հետաքրքիրն այն է, որ ռնգայիններից առաջ* ա-*ի փոփոխությունը մի աստիճան էլ առաջ է անցել՝ փոխվելով* ու-*ի՝* բան>բուն, բանկ>բունգ, ժամ>ժում, ծամ>ծում, ծանր>ծունդր, ճամ>ճում, ճանճ>ճունջ, սանդ<սունդ, վանf<վունf, տանձ<տունձ *և այլն*[25]*։*

Սվեդիայի բարբառը ա>ու *հնչյունափոխությունը ունի ոչ միայն ռնգայիններից առաջ, այլ առհասարակ՝ բոլոր բաղաձայններից առաջ, այն էլ միայն շեշտյալ դիրքում։* Ա-*ի փոփոխությունը այստեղ կատարվել է այն նույն պայմաններում, որը նշվեց Հաջընի բարբառի համար, և փաստորեն այստեղ կատարված փոփոխությունը* ա>օ *հնչյունափոխության հաջորդ աստիճանն է։ Մի շարք օրինակներ Սվեդիայի բարբառից. ա) բառասկզբի դիրքում՝* աղբ>ուխպ, ամպ>ումբ, ազբն>ուսպ, աղտ>ուղդ, արջ>ուրճ, ափն>ուփ *և այլն. բ) բառամիջի դիրքում (և՛ միավանկ, և՛ բազմավանկ բառերում հավասարապես)՝* բարձ>պուրծ, բարձր>պունձր, զարկ>զուրկ, թաթ>թութ, թաղ>թուղ, թառ>թուռ, թաս>թուս, ժամ>ժում, լար>լուr, խազ>խուզ, աղանձ>ը̈ղունձ, աղfատ>ը̈խfուդ, աման>ը̈մուն, ամառն>ամուռ, ամբար>ամբուr, առանց>առունց, աստառ>ասդուռ, արծաթ>արձութ, բերան>պիրուն, գդալ>տիկուլ, դադար>տատուr, երազ>իրուզ, թացան>թացուն, իշխան>իշխուն, խաւար>խավուr *և այլն և այլն*[26]*։*

Այս փոփոխությունների վրա որոշակի լույս է սփռում Համշենի

23 Հ. Գասպարյան, *Հաջընի բարբառը, 1966, էջ 22։*

24 Հր. Աճառյան, *Քննություն Ագուլիսի բարբառի, 1935, էջ 22։*

25 *Նույն տեղում, էջ 24։ Ագուլիսի բարբառում* ա-*ի դիմաց առկա է նաև* ö *և* ու՝ *ձայնեղ պայթականներից հետո «Աճառյանի օրենքով»* (բան>բüն, բան>բöն, բարձ>բöնձ, բարձր>բöձըր *և այլն), որոնք, սակայն, տվյալ դեպքում,* ա>օ *հնչյունափոխության քննության համար էական չեն։*

26 *Օրինակները քաղված են Տ. Անդրեասյանի «Սվեդիայի բարբառը» աշխատության բառացանկից։*

բարբառում կատարված փոփոխությունը: Այստեղ ա>օ հնչյունափոխությունը տեղի է ունեցել միայն և միայն ռնգային բաղաձայններից առաջ (ինչպես շեշտի տակ, այնպես էլ շեշտից առաջ), այսպես՝ ականջ>օնգօջ, անալի>օնլի, աման>օմօն, ամաչել>օմչընուշ, ամառն>օմառ, ամբար>օմբար, ամիս>օմիս, ամպ>օմբ, անիծ>օնիծ, բան>պօն, բանալ>պօնուշ, բանալի>պօնլիր, բանջար>պօնջար, բերան>պէրօն, գաւազան>կավազօն, գերան>գէրօն, գերեզման>գէրէզմօն և այլն, և այլն[27]:

Վերը բերված օրինակների համեմատությունից կարելի է կռահել, որ ա>օ հնչյունափոխությունը նախապես կատարվել է մ ռնգայինից առաջ՝ հենց այդ երկշրթնային բաղաձայնի անմիջական ազդեցությամբ: Այդ միտքը մեզ հուշում է ոչ միայն Համշենի բարբառը, որտեղ ա>օ փոփոխությունը գոյություն ունի միայն և միայն ռնգայիններից առաջ ընկած դիրքում, այլև Ագուլիսի բարբառը, որի մեջ ռնգայիններից առաջ կատարված ա>ու հնչյունափոխությունն առանձնանում է այլ բաղաձայններից առաջ կատարված ա>օ փոփոխությունից: Միաժամանակ Ագուլիսի բարբառում գործող օրինաչափությունը հիմք է տալիս կարծելու, որ ռնգայիններից առաջ ա>օ փոփոխությունը սկզբնապես հատուկ է եղել միայն միավանկ բառերին և հետագայում է, որ այդ օրենքը իր ուժը տարածել է նաև բազմավանկ բառերի վրա:

Այս բոլորի հիման վրա կարելի է ուրվագծել տվյալ հնչյունափոխական երևույթի զարգացման ու տարածման հետևյալ ընդհանուր պատկերը:

Ա-ի շրթնային արտասանությունը սկսել է զարգանալ նախ մ շրթնային բաղաձայնից առաջ, այն էլ, սկզբնապես՝ միավանկ բառերում: Դրան այնուհետև հետևել է ա-ի փոփոխությունը նաև ն-ից առաջ ընկած դիրքերում, որից հետո օրինաչափությունը գիտակցվել է որպես ռնգայիններից առաջ կատարվող փոփոխություն: Մինչև այստեղ փոփոխության այս ընթացքը ընդհանուր է եղել ցայսօր ա>օ>ու հնչյունափոխությունը արձանագրող բարբառների համար: Հետագայում՝ պատմության ընթացքում, տարբեր վայրերում զարգացումը գնացել է որոշ շեղումներով: Որոշ վայրերում (օր. Համշենում) առաջին պլան է մղվել ա>օ հնչյունափոխությունը ռնգայիններից առաջ կատարված լինելու հիմունքը և անտեսվել է վանկաքանակը: Այս հիմունքով էլ այստեղ ա>օ փոփոխության ազդեցության ոլորտը ընդարձակվել է՝ տարածվելով մ, ն ռնգայիններից առաջ ընկած բոլոր դիրքերը՝ անկախ բառի վանկաքանակից և շեշտի նկատմամբ ունեցած դիրքից: Այլ վայրերում (օր. Ագուլիսում) որպես հնչյունափոխության էական հատկանիշ գիտակցվել է միավանկությունը, որի հիման վրա էլ ա>օ փոփոխությունը, մ, ն

27 Հր. Անառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947, էջ 22:

ռնգայիններից բացի, տարածվել է նաև այլ բաղաձայնավոր միավանկ բառերի վրա։ Բայց այստեղ (Ագուլիսում) դեռևս պահպանվել է հին օրինաչափության նախադրակը. ռնգայիններից առաջ ա-ի փոփոխությունը տարբերվում է մյուս բոլոր դիրքերի փոփոխությունից. այստեղ ա-ի դիմաց ու է, որը, իհարկե, զարգացել է ա-ից հնչյունափոխված օ-ից։ գ) Մի երրորդ վայրում (օր. Հաչընում, Սվնդիայում) էական է դիտվել հնչյունափոխության շեշտի տակ լինելու հանգամանքը և այս հիմունքով ռնգայիններից առաջ կատարված ա>օ փոփոխությունը տարածվել է այլ բաղաձայններից առաջ ընկած ա-ի վրա (բայց միայն շեշտյալ դիրքում)։ Այդ ընդհանուր անցումից հետո Սվեդիայի բարբառում օ-ից զարգացել է ու:

· Այսպիսին է մեր պատկերացմամբ ա>օ>ու հնչյունափոխության ընդհանուր պատկերը։

Հնչյունափոխական նույն շարժմանը (լայնից դեպի նեղ արտաբերություն) ենթարկվում են նաև ետին շարքի ո և ու ձայնավորները։ Ճիշտ է, սրանց անցնելիք «տարածությունը» քիչ է, քանի որ արդեն գտնվում են իրենց արտաբերության միջին և վերին աստիճաններում, բայց, այնուամենայնիվ, այդ անցումը նրանք կատարում են եղած հնարավորությունների սահմաններում։

Ու-ն, քանի որ գտնվում է վերին բարձրացման աստիճանում և այդ ուղղությամբ այլևս տեղաշարժվելու հնարավորություն չունի, փոխվում է իր արտաբերության խորքով՝ ետինից տեղափոխվելով դեպի առաջնային շարքը։ Արդյունքում ստացվում է առաջնային շարքի վերին բարձրացման ձայնավոր ü։ Մեր բարբառագիտական գրականության մեջ այդ ձայնավորը կոչվում է նաև քմային ü, որը շրթնային ձայնավորների շարքում ունի ամենանեղ արտաբերությունը և առաջնային շարքի ձայնավորների մեջ, ի-ի հետ միասին, գտնվում է իր բարձրացման ամենավերին աստիճանում։

Այս ձայնավորը այժմ արձանագրվում է ժամանակակից հայերենի եզրային մի շարք բարբառներում։ Նրա գոյությունը ենթադրելի է նաև միջին հայերենի շրջանում և նույնիսկ հին հայերենի որոշ տարբերակներում։

Թե որոնք են այն հիմնական ազդակները, որոնց ներգործությամբ ու-ն տեղաշարժվել է դեպի առաջնային շարքի ձայնավորները, բոլոր վայրերի համար չէ, որ հնարավոր է պարզել։ Միայն մի որոշակի տերիտորիայի բարբառներում, հատկապես Սյունիք—Արցախ տարածքում, այդ երևույթը նորից առնչվում է «Աճառյանի օրենքի» հետ և պայմանավորված է ու-ի՝ հին ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո ընկած դիրքով։ Դիրքային այդ պայմանավորվածությունը շատ լավ երևում է այնպիսի բառերի համեմատության ժամանակ, երբ մի դեպքում

ու-ն գտնվում է ձայնեղ պայթականներից հետո, իսկ մյուս դեպքում՝ խուլերից հետո. այսպես՝

բուրդ>բüրդ[28], պöէրթ	պուկ>պօկ
դուշ>դ'üշ, կ'üշ	պռուկ>պըռօկ
դու>դու, տü	կուժ>կօժ
դուռն>դուռք, տüռնը	կուռն>կօռնը
դուրս>դüրս, տüրս	տուն>տօն
դուր>դüր, տüր	ծուծ>ծօծ
ձու>ձու, ծü	ծուռ>ծօռ
ձուկն>ձուկուն, ծüկնը	ծունկն>ծօնգնը
ջուր>ջüր, ճüր	ճուտ>ճօտ և այլն։

Այստեղ թեև բուն ձայնեղներից հետո մի քանի բառերում ու-ն մնացել է անփոփոխ, բայց դա չի խախտում ընդհանուր օրինաչափությունը, քանի որ ի հակադրություն հին խուլերից հետո ընկած դիրքի, որտեղ ու-ն ենթարկվում է այլ փոփոխության (ու>օ), դրանցում այն պահպանում է իր նեղ (փակ) արտասանությունը։

Վերը ասվեց, որ ու ձայնավորի քմային ü արտասանությունը ենթադրելի է նաև հին հայերենի որոշ տարբերակներում։ Այդ ենթադրությունը արվում է պարզապես այն բանի հիման վրա, որ որոշ լեզվական փաստեր խոսում են հնում «Աճառյանի օրենքի» գործառության մասին (տե՛ս էջ 49—51)։ Եթե դա ճիշտ է, ապա ենթադրելի է նաև, որ ու ձայնավորը ևս կարող էր ենթարկված լինել այդ օրենքին։

Մատենագրությունը առհասարակ ու>ü փոփոխության համար անմիջական տեղեկություններ չի տալիս։ Նման փոփոխության հավանականության մասին կարելի է խոսել միայն մեր այսօրվա բարբառներում առկա վիճակը նկատի ունենալով։ Գրավոր աղբյուրներում հանդիպող գրության այնպիսի ձևեր, ինչպիսիք են, ասենք, ու-ի փոխարեն իւ-ով գրչությունները (զիւգակից՝ փոխ. զուգակից, ձիւն՝ փոխ. ձուն, ձու բառի որոշյալը) ոչինչ չեն տալիս այս հարցի լուսաբանման համար, քանի որ նման գրչությունների մեջ իւ-ը պարզապես կարող է նշանակել ւ ձայնավորը։ (Նկատենք, որ ոյ>ու, իւ>ու հնչյունափոխությունների պայմաններում ւ ձայնավորը, բացի ու գրից, կարող էր արտահայտվել նաև ոյ, իւ գրակապակցություններով, ինչպիսիք և հանդիպում են գրավոր աղբյուրներում)։

բ) Վերը՝ ձայնավորների երկբարբառացմանը նվիրված շարադրանքում արդեն մանրամասն խոսվել է ո-ի կրած այն հիմնական փոփոխությունների մասին, որոնք այսօր հանդիպում են մեր բարբառներում։ Այդ

28 Ձայնեղներով բառաձևերը հատուկ են Մեղրու և Կարճևանի բարբառներին, խուլերով ձևերը՝ Ղարաբաղի բարբառի խոսվածքներին։

բոլորը նորից չկրկնելու համար այստեղ կանգ կառնենք միայն ո-ի երկու կարգի փոփոխությունների վրա և ըստ այդմ, հնարավորության սահմաններում, մատենագրական վկայությունների հիման վրա, կաշխատենք որոշել դրանց առաջացման մոտավոր ժամանակը։

Ո-ի փոփոխություններից մեկը նրա «քմայնացումն» է (ö), որի ընթացքում այս ձայնավորը տեղաշարժվել է ետին շարքից դեպի առաջնային շարքը։ Այդ անցումը հիմնականում կատարվել է ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո ընկած դիրքում։ Այսինքն՝ այս դեպքում էլ, ինչպես այդ նշվել է ա և ու ձայնավորների համար, ո> ö փոփոխությունը կապվում է «Աճառյանի օրենքի» հետ։ Սակայն նկատելի է, որ «Աճառյանի օրենքին» ենթարկված մյուս ձայնավորների համեմատությամբ, ո-ի այս փոփոխությունը գործել է ավելի փոքր տարածքի վրա և նույնիսկ այդ տարածքի սահմաններում էլ, ամեն տեղ չէ, որ այն գործառում է հետևողականորեն։ Այս հանգամանքը հիմք է տվել ենթադրելու, որ ո-ի «քմայնացումը» (ö) սկսվել է ավելի ուշ շրջանում, որին խանգարել են այլ հնչյունական օրենքներ[29]։

Այս փոփոխության վերաբերյալ մատենագրական տեղեկություններ չկան։ Պետք է միայն ենթադրել, որ ավանդական ո-ի տակ որոշ դիրքերում, որոշ ձեռագրերում, հնարավոր է ö արտասանություն։

Ո>ու անցումը այսօր արձանագրվում է կիլիկյան և արևելյան տարածքի մի շարք բարբառներում։ Այս հնչյունափոխությունը չունի դիրքային պայմանավորվածություն, եթե նկատի չունենանք, որ կիլիկյան բարբառներում այն կատարվում է շեշտի տակ։ Այն չեզոք է նաև իր հնչյունական շրջապատի նկատմամբ, այսինքն՝ գործում է համարյա բոլոր բաղաձայնների հարևանությամբ։ Կան նաև այնպիսի բարբառներ (Մեղրի, Կարճևան),որոնց մեջ ո>ու փոփոխությունը, բառամիջից բացի, տեղի է ունեցել նաև բառասկզբում, երբ այլ բարբառներում այդ դիրքի ո-ի դիմաց այլ համապատասխանություններ են (տե՛ս էջ 96)։

Ո>ու փոփոխությունը, անշուշտ, պատմական երևույթ է։ Այն, ինչպես արդեն ասվել է, զարգացել է ո>uo երկբարբառային արտասանությունից։ Պատմական շրջանի ինչ-որ մի էտապում այդպիսի մի արտասանություն տարածված է եղել հայերենի բանավոր-խոսակցական տարբերակների մի մասում։ Այնուհետև այդ երկբարբառի մենաբարբառացման ընթացքում գերակշռություն է ստացել նրա u բաղադրիչը՝ հատկապես այն բարբառներում, որոնց մեջ վերացել են երկբարբառները։

Որոշ վայրերի համար ենթադրելի է նաև անմիջական անցում ո-ից դեպի ու։ Դա կատարվել է այն վայրերի հայերեններում, որոնց մեջ ո-ն

---

29 Տե՛ս Հ. Մուրադյան, Ինչպե՞ս հասկանալ Աճառյանի օրենքը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, № 2, էջ 164—166։

ունեցել է (o)-ի և (u)-ի միջին արտասանություն։ (Կարստը, օրինակ, ո-ի այդպիսի արտասանություն ենթադրում էր միջին հայերենի կիլիկյան տարբերակի համար)[30]։

Ընդհանուր առմամբ՝ ո>ու անցումը հնչյունափոխական հին երևույթ է, որի համար գրավոր վկայություններ կան միջին հայերենի սկզբնագիր աղբյուրներում։ Ամենահին վկայությունները վերաբերում են XI դարին։ Օրինակ՝ ...Աստուած թուղու (<թողու) զուր (<զիր) զանցանքն (Գ. Հովս. հձ 235, 1058 թ.), յառաջնորդութեամբ Թումասու (<Թովմաս) (Ն. տ. 246, 1064 թ.)։ Ընդգծված բառերում ավանդական ո-ի դիմաց ու գրությունը արտահայտում է նշված հնչյունափոխական երևույթը։

Հաջորդ դարերում ավելի հաճախանում են այս երևույթի վկայությունները՝ ինչպես ձեռագրերի հիշատակարաններում, այնպես էլ վիմական արձանագրություններում[31]։ Դրանց մեջ հատկապես հետաքրքիր են ժողովրդախոսակցական լեզվում գործածվող այն բառաձևերը, որոնց մեջ լրիվ մթագնված է դրանց՝ նախաձևի հետ ունեցած կապը, ըստ այդմ՝ նաև նրանցում կատարված հնչյունափոխական երևույթը։ Այդպես են, օրինակ, հին՝ մինչ որ կապակցությունից առաջացած և միջին հայերենի շրջանում լայն գործածություն ստացած մինչուր, ինչուր, ինչուրվի բառաձևերը իրենց կիրառություններով («մինչև» կապի իմաստով)։ Սրանցից առաջինը (մինչուր) դեռևս պահպանում է իր անմիջական կապը նախաձևի (մինչ որ) հետ, թեև բաղադրիչների կցմամբ՝ այն արդեն ունի մի բառի արժեք՝ մի միասնական բառական շեշտով։ (Ի միջի այլոց, հենց այդ հանգամանքն էլ պայմաններ է ստեղծել ո>ու հնչյունափոխության համար)։ Նախաձևի հետ այդ բառի կապը թուլանում է, երբ ընկնում է բառասկզբի մ-ն (մինչուր>ինչուր) և առավել ևս, երբ ավելանում է վի վերջածանցը (ինչուրվի)։ Այս ձևերն արդեն չեն գիտակցվում որպես գրական լեզվի մինչ որ կապակցության բարբառային տարբերակներ և ըստ այդմ էլ, առանց ուղղագրական շեղումների, կիրառվում են որպես նորմատիվ ձևեր։ Սրանցից առաջինը (մինչուր) լայն գործածություն ունի, օրինակ, Գրիգորիս բժշկապետի «Քննութիւն բնութեան մարդո...» աշխատության մեջ. կենայ ցան՝ մինչուր ակռայն հանեն (47), մինչուր հասնի ի սիրտն (10), մինչուր լուսանայ (67), և այլն։ Ինչուր, ինչուրվի ձևերը (ինչվի տարբերակի հետ միասին) տարածված են կիլիկյան գրական հուշարձաններում, մասնավորապես «Անսիզք»-ում, Սմբատ Սպարապետի աշխատություններում, ապա նաև Անիի արձանագրություննե-

---

[30] *Karst*, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, էջ. 21.

[31] *Տե՛ս*, «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Ա, էջ 85։ Ս. Ավագյան, Վիմական արձանագրութ. հնչյունաբանություն, էջ 143։

րում, այսպես՝ ...ինչուր աղէկ վկայք չինէ (Անս. 33), ինչուրվի հատ Բ. Բ. ասցած է յարութեան հարցներն... դու ինչուր ի վառ հարցն Բ. Բ. ասա ու սահմանէ (Գ. Հովս.հձ 665, ԺԲ դար), ինչուրվի Գլիձորի դուռն (ԴՀՎ 1, Անի, 63, 1215 թ.) և այլն։

Ժողովրդախոսակցական լեզվում օգտագործվող այսպիսի մի բառ է նաև ցուր կապը (նույնպես «մինչև» իմաստով)՝առաջացած նախավոր *ցոր ձևից, որ կազմված է ց նախդիրից և որ հարաբերականից։ Այստեղ նույնպես հնչյունափոխությունը կատարվել է այն բանից հետո, երբ մթագնվել է այս բառի ծագումնաբանական կապը ց նախդիրի և որ դերանվան հետ։ Այս բառաձևը կիրառված է Մխ. Հերացու «Ջերմանց մխիթարություն» աշխատության մեջ. օր. ..եփէ, ցուր ջուրն հատանի (48ա), եփէ, ցուր մնա Բ լիտր (48բ) և այլն։

Վերը նշված բառաձևերի ամենահին վկայությունները թեև հասնում են մինչև XII դարը, բայց կասկած չի կարող լինել, որ սրանք ավելի հին գոյացություններ են։

Ո>ու հնչյունափոխության հնությունը հաստատվում է նաև մի այլ կարգի հնչյունափոխական փաստով։ X դարից մենք ունենք օրինակներ, որոնց մեջ աւ երկբարբառի դիմաց արձանագրվում է աւ>ու փոփոխություն (աստանաւր>աստանուր, տաւն>տուն, յաւժարիլ>յուժարիլ և այլն. տե՛ս էջ 174)։ Փաստերը ցույց են տալիս, որ այդ փոփոխությունը կարող էր կատարվել միայն աւ>օ անցումից հետո, օ>ու ընդհանուր հնչյունափոխության պայմաններում։ Եթե այդ այդպես է, ապա ո>ու հնչյունափոխության առաջացման ժամանակը գնում է X դարից այն կողմ, հավանաբար VIII—IX դարերը, եթե ոչ ավելի վաղ։

Տարածական տեսակետից՝ ո>ու փոփոխությունը նախապես հատուկ է եղել (հավանաբար) կիլիկյան հայերենի բարբառներին։ Սակայն ավելի ուշ շրջանի գրավոր աղբյուրներում այդ հնչյունափոխությունը շատ որոշակիորեն ուրվագծվում է Գողթան գավառի տարածքում ստեղծված գրավոր հուշարձաններում։ Այստեղ XV դարի ձեռագրերի հիշատակարաններում հանդիպում են նման հնչյունափոխությամբ բառեր՝ Գուհար<Գոհար, Թումա<Թովմա, Մուսէս<Մովսես, Գուղթան<Գողթան, Շմաւուն<Շմաւոն, պարուն<պարոն, ծածկուց<ծածկոց, ումն< ոմն և այլն։ Այսօր այդ հնչյունափոխական երևույթը Գողթան գավառից դուրս տարածված է նաև Մեղրի-Ղափան-Ղարաբաղ տարածքի, Թբիլիսի, Անտիոքի շրջանի բարբառներում։

Առաջնային շարքի ձայնավորներից ի-ն ունի ամենանեղ բացվածքի արտաբերություն։ Նա, կարծես, այն սահմանն է, որին ձգտում, հասնում են մյուս ձայնավորները՝ լայն բացվածքի արտաբերությունից դեպի ավելի նեղը փոխարկվելիս։ Թերևս հենց այս պատճառով է, որ հայերենի ի-ն այս ուղղությամբ որևէ փոփոխության չի ենթարկվում։

Առաջնային շարքի ձայնավորներից մյուսը՝ ե-ն, որ միջին բարձրացում ունի, տեսականորեն դեռևս շարժման հնարավորություն ունի և կարող է իր բարձրացման աստիճանը փոխելով՝ տեղաշարժվել դեպի ի ձայնավորը։ Ժամանակակից հայերենի բարբառներում ե-ն կատարել է այդ առաջընթաց քայլը՝ փոխարկվելով ի-ի։ Հնչյունական այդ օրենքը թեև բոլոր վայրերում չէ, որ գործել է նույն խտենսիվությամբ ու հետևողականությամբ, բայց եզրային բարբառներում այն ընդգրկել է իրեն ենթակա համարյա բոլոր բառերն ու բառաձևերը՝ կրելով ընդհանուր համակարգային բնույթ, և միայն որոշ վայրերում է, որ օրինաչափությունը գործել է միայն մի խումբ բառերում, այն էլ մի որոշակի դիրքում (բառասկզբում՝ ր-ից առաջ)։ Ուշադրության արժանի հանգամանք է, որ այդ մի խումբ բառերը, որոնցում կատարվել է ե>ի փոփոխությունը, ընդհանուր են բարբառների մեծագույն մասում։ Ահա այդ բառերը իրենց բարբառային համապատասխանություններով.

երիկամն>իրիկամ, իլիգոմօն	երեք>իրէք, իրիք
երեկոյ>իրիկուն, իրիգուն	երէց>իրից
երես>իրէս, իրիս	երիցակին>իրիցկին, իրիսկին

Այն հանգամանքը, որ այս մի խումբ բառերում կատարված ե>ի փոփոխությունը այժմ գոյություն ունի ժամանակակից հայերենի մի շարք բարբառներում, խոսում է այն մասին, որ բառասկզբի ր-ից առաջ ե-ի կրած փոփոխությունը եղել է հնչյունափոխական միասնական պրոցես և որ այն, ինչպես ցույց են տալիս նաև գրավոր աղբյուրները, բավական հին երևույթ է։

Այդ հնչյունափոխության գրավոր առաջին վկայությունները հասնում են մինչև X դարը։ Դրանցում իր հաճախականությամբ աչքի է ընկնում հատկապես երէց բառը, որը իր թեքված ու բարդված ձևերում հանդես է բերում բառասկզբի ե-ի փոփոխություն։ Այստեղ ավանդական երիցու կամ երիցոյ սեռական-տրականի ձևերին զուգահեռ հանդիպում են նաև իրիցու, իրիցոյ, իրիցանու (վերջինս հոգն.) և այս հիմքից նաև՝ իրիցակին, իրիցկին, իրիցորդի և նման այլ բառաբարդություններ, որոնց բառասկզբի ե-ի դիմաց ի ձայնավոր է։ Սկզբնագրերից բերենք մի քանի օրինակներ. ...իրիցուն տեղն մասն մի բաժին նորայ տան (Սմբ. Դատ. 35), Յոհանէս իրիցու (ԺԴ հձհ 36, 1305 թ.), իրիցուն որդոյն (ԿԴ Հաղբ. 217, 218, ԺԳ դար), Գագիկ իրիցոյ (ԴՀՎ 3, Վայոց ձոր, 49, 1149 թ.), բարձաք ի յԱնո իրիցանուս զբաժն (ԴՀՎ 1, Անի, 24, 1280 թ.), իրիցակին Վախճանի (Ն. տ. 17, 1220 թ.), այրի իրիցկին (Սմբ. Դատ. 34), Ստեփանոս իրիցորդի (ԺԴ հձհ 124, 1317 թ.) և այլն։

Ընդունված է այս բառերում կատարված ե>ի փոփոխությունը բացատրել է-ից հնչյունափոխված ի-ի առնմանությամբ, այսինքն՝ իբր թե

բառասկզբի **ե>ի** *անցումը կատարվել է* **երէց** *բառի թեքված* **երիցու** *ձևի* *ի-ի ներնթաց առնմանությամբ* (**երիցու>իրիցու**): *Այս բացատրությունը ընդունելի կարելի էր համարել, եթե* **ե>ի** *փոփոխությունը կատարված լիներ միայն այդ բառում։ Բայց սրա կողքին կան նաև այլ բառեր, որոնց մեջ բառասկզբի* **ե**-*ի հնչյունափոխությունը հնարավոր չէ բացատրել առնմանությամբ կամ փոխազդեցական հնչյունափոխության մի այլ երևույթով։ Ահա այդ բառերը իրենց վկայություններով.* **երեք>իրեք.** *...յամսեանն յունուարի* **յիրեք** *աւրն (ԺԴ ՀձՀ 77, 1311 թ.), եւ այլ յիշեմ* **զիրեգ** *գինութիւն, թէ որպէս է (Ամիրդ. Ուս. բժշկ. լա),* **երեկոյ>իրիկուն.** *...համբերեաց մինչև* **յիրիկուն** *(Սմբ. Տարեգ. 107), թէ դատըստնելն* **յիրիկունն** *լինայ լել... ինչվի* **յիրիկունն** *(Անս. 27), քանզի զառջի* **իրիկունն** *(Ամիրդ. Ուս. բժշկ. խղ),* **երիկամն>իրիկամն.** *գուշակէ, որ պեղծ խառնուածքն* **իրիկամն** *հոտել է (Ն. տ. կը), գուշակէ, որ* **իրիկմին** *եղն կու հալի (Ն. տ. կղ) և այլն։ Սրանց բոլորի մեջ ընդհանուրը, թերևս, այն է, որ բոլորում էլ* **ե**-*ն գտնվում է բառասկզբում՝* **ր**-*ից առաջ։ Հիշեցնենք նաև, սրանք այն բառերն են, որոնք այսօր էլ* **ե>ի** *փոփոխությունը ունեն ժամանակակից հայերենի բարբառներում։*

Սակայն չպետք է կարծել, որ բառասկզբի **ր**-*ից առաջ կատարված այս հնչյունափոխությունն է, որ որոշ վայրերում տարածվել ու ընդհանրացել է որպես համակարգային օրինաչափություն։ Առ այսօր դեռևս անհայտ են այն պատճառները, որոնք խթան են հանդիսացել այդ փոփոխության համար։*

Եթե **ե>ի** *հնչյունափոխության հիմնական շարժիչ ուժը լիներ նրա դիրքային պայմանավորվածությունը* **ր**-**ից**, *ապա հնչյունական այդ օրենքի ընդհանրացումը պետք է կատարվեր առաջին հերթին* **ր**-*ից առաջ գտնվող դիրքերում, որից հետո միայն՝ կարող էր տարածվել այլ դիրքերի վրա։ Սակայն, ինչպես ցույց են տալիս փաստերը,* **ե>ի** *հնչյունափոխությունը չի ընդհանրացել այդ ճանապարհով։ Օրինակ, Վանի բարբառում, որի համար Աճառյանը նշում էր, թե «այստեղ էլ* **ե>ի** *ձայնափոխությունը մեծ մասամբ* **ր** *բաղաձայնից առաջ է, և այն էլ շատը բաց վանկում»,* **ե>ի** *հնչյունափոխությունը չի կարելի բացատրել վերը բերված պատճառաբանությամբ, քանի որ այստեղ իրականում նման օրինաչափություն գոյություն չունի.* **ե>ի** *հնչյունափոխությամբ բառեր այստեղ արձանագրվում են ինչպես* **ր**-*ից առաջ գտնվող դիրքում, այնպես էլ այլ բաղաձայններից առաջ՝ հավասարապես։ Ահա Աճառյանի բերած օրինակները, որ մենք դասավորել ենք ըստ դիրքային պատկանելիության՝*

աւերել>ավիրել	*աւելել>ավիլել*
բերել>պիրել	*աւելորդ>ավիլօրթ*
երեկոյ>իրիկուն	*զենուլ>զինել*
ճերիւն>խիրուն	*ծեփել>ծիփել*

հերկել>խիրկել
ներկել>նիրկել
շերեփ>շիրեփ
սերկևիլ>սիրկևիլ
քերել>ք'իրել

սկեսուր>կիսուր
տեսանել>տիսանալ
փետել>փիտել
փետուր>փիտուր

Բացի այդ՝ Վանի բարբառում բազմաթիվ բառեր, որոնց մեջ ե-ն գտնվում է r-ից առաջ, չեն ենթարկվել այդ փոփոխության (օր. բերան>պէրան, բերդ>պէռթ, գերան>կ'էրան, գերանդի>կ'էրընդի, գերի>կ'էրի, կեր>կէր, հերիք>խէրիք' և այլն), էլ չենք խոսում բառասկզբի դիրքի մասին, որտեղ հիմնական օրինաչափությամբ ե-ի դիմաց շեշտի տակ յէ է, շեշտից առաջ՝ է (երազ>էրազ, երամ>էրամ, երբ>յէփ, երդիք>էրտիս, երևիլ>էրէվալ, երեկ>էրէկ, երթալ>էրթալ և այլն):

Նույն բանը նկատելի է նաև Սյունիք-Արցախ տարածքի որոշ խոսվածքներում, որոնց մեջ, Վանի բարբառի համեմատությամբ, թեև ավելի շատ են այն բառերը, որոնց մեջ առկա է ե>ի հնչյունափոխությունը, բայց այստեղ այն պայմանավորված չէ r-ից առաջ ընկած դիրքով, որովհետև այդ փոփոխությունը ավելի շատ արձանագրվում է այլ բաղաձայններից առաջ և ընդհակառակը՝ ղ, խ, r, ռ բաղաձայններից առաջ այն կանխվում է:

Ե>ի հնչյունափոխությունը համեմատաբար հետևողական կիրառություն ունի Թբիլիսիի բարբառում: Այստեղ այդ փոփոխությունը հիմնականում առկա է շեշտի տակ՝ անկախ ե-ից հետո եկող բաղաձայնի բնույթի. այսպես՝ բեռն>բիռ, դեղ>դիղ, թեւ>թիվ, թեփ>թիփ, խելք>խիլք, խեղճ>խիղճ, հեշտ>հիշտ, ձեռն>ձիռ, ձեւ>ձիվ, մեծ>մինձ, մեղր>միղր, մեղք>միխկ, մենք>մինք, յետ>հիդ, նեղ>նիղ, նետ>նիտ, սեաւ>սեւ>սիվ, վեր>վիր, տեղ>տիղ, ցեց>ցից և այլն, և այլն: Այսպես նաև դերանուններում՝ քեզ>քիզ, ձեզ>ձիզ, ձեր>ձիր, մեզ>միզ, մեր>միր. հոգնակի վերջավորության մեջ՝ ծով-ծովիր, քար-քարիր, մազ-մազիր, խաղ-խաղիր և այլն. վաղակատար դերբայում՝ պահիլ է, բերիլ է, ծեփիլ է, տեսիլ է և այլն:

Այս հնչյունափոխության ընդգրկումը ավելի լայն է Սվեդիայի բարբառում, որտեղ այն հանդես է գալիս նաև շեշտից դուրս ընկած դիրքերում. այսպես՝ դեղ>տիղ, դեղել>տիղիլ, դեղին>տիղէյն, դեղձ>տիղծ, դեղնուց>տիղնէց, զենուլ>զինիլ, զերծ>զիրծ, ընկեր>ինգիր, ընկերք>ինգիրք, թեթև>թիթիվ, թել>թիլ, թեւ>թիվ, թեփ>թիփ, ծեծ>ձիձ, ծեծել>ձիձիլ և այլն. հոգնակիի մեջ՝ մայր>մար-միրիր, աւր>օր>ուր-ուրիր, տայգր>դակր-դիկրիր, տէր>դուր-դիրիր և այլն. բայական ձևերում՝ իլուց<ելաց, իպիր<եբեր, իպուց<եբաց, իլէց<ելից, իթաուղ<եթող և այլն:

Սվեդիայի և Թբիլիսիի բարբառներում ե>ի *հնչյունափոխության այսպիսի լայն ընդգրկումը համեմատաբար նոր երևույթ է։ Այդ երևում է թեկուզ հենց նրանից, որ այդ հնչյունափոխությանը ենթարկվել են ոչ միայն բուն* ե *ունեցող բառերը, այլև այն բառերը, որոնք նախապես ունեցել են* եա *երկբարբառ։ Հասկանալի է, որ այդ բառերում էլ* ե>ի *հրնչյունափոխությունը կատարվել է* եա>ե *փոփոխությունից հետո։ Թերևս հենց այդ երևույթի ոչ հնությամբ է բացատրվում այն հանգամանքը, որ մատենագրության մեջ վկայություններ չեն հանդիպում ընդհուպ մինչև XVI—XVII դարերը։*

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք ձայնավորների համակարգային այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել լայն բացվածքի արտաբերությունից դեպի ավելի նեղ արտաբերություն, ապա կունենանք հետևյալ օրինաչափ անցումները՝

ա>ա̈>է, ու>ու̈, ե>ի, ո / ö \ ու

Այստեղ նկատի չենք ունենում որոշ ձայնավորների անցման օղակներում առկա երկբարբառային միավորները (իէ, ուօ, ուէ *և այլն)։*

Ձայնավորների առաջընթաց այս շարժմանը հակադրվում է նրանց փոփոխությունների հակառակ ընթացքը, երբ ավելի նեղ բացվածքի ձայնավորներին փոխարինելու են գալիս ավելի լայն բացվածքի ձայնավորները։ Այս շարժման ժամանակ ձայնավորները փոխում են կամ իրենց արտաբերության շարքը՝ առաջնայինից գնալով դեպի ետինը, կամ իջեցնում են լեզվի բարձրացման աստիճանները՝ վերինից դեպի ստորինը։ Այդ հակադիր շարժումը կատարվում է նախորդ երևույթի անմիջական ազդեցությամբ՝ հնչույթային համակարգում ստեղծված անհավասարակշռությունը վերականգնելու նպատակով։

Քննենք ձայնավորների այս կարգի փոփոխությունների կոնկրետ դրսևորումները։

ա) Նախ ի *ձայնավորի մասին։ Այս ձայնավորին հատուկ է փոփոխությունների հետևյալ ընթացքը՝* ի>է>ա̈>ա>այ։ *Այս շարժման մեջ* ի*-ի փոփոխությունը կատարվել է նախ արտաբերության ընթացքում լեզվի բարձրացման աստիճանների փոփոխությամբ՝ վերինից դեպի միջինը* (է), *հետո նաև միջինից՝ ստորինը* (ա̈), *որից հետո արդեն փոխվել է արտաբերության շարքը՝ առաջնայինից դեպի ետինը* (ա):

Ի *ձայնավորի մեջ կատարված այս փոփոխությունները այժմ արձանագրվում են հայերենի եզրային մի շարք բարբառներում՝ ընդգրկելով մասնավորապես Սյունիք-Արցախի և Անտիոքի շրջանի մի շարք վայրերի խոսվածքները։ Փոփոխության առաջին աստիճանը* (ի>է, *որը հանդես է գալիս նաև* ըէ *արտասանական աղատ տարբերակով) հատուկ է, օրինակ,*

Մեղրի—Ղափան—Գորիս—Սիսիան—Ղարաբաղ տարածքի խոսվածքներին, որոնցում տվյալ օրինաչափությունը գործում է ինչպես շեշտի տակ, այնպես էլ շեշտից դուրս ընկած դիրքերում. այսպես՝ ամիս>ամէս, անիծ>ճանէծ, անօթի>նօթէ, լիրբ>լէրփ, խիղճ>խէղճ, խինճ>խէնճ, խլինք>խըլէնք, խնամի>խընամէ, խնոցի>խընըցէ, ծիծ>ծէծ, ծիծաղ>ծէծաղ, ծին>ծէն, ծիտ>ծէտ, ծիրան>ծէրան, ծիրտ>ծէրտ և այլն, և այլն[32]։ Միակ սահմանափակումը, որի ժամանակ կանխվում է ի>է հնչյունափոխությունը՝ ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո եկող դիրքն է, ուր ի-ն մնում է անփոփոխ։ Դա բացատրվում է նրանով, որ այս տարածքի բարբառներում, «Աճառյանի օրենքի» ուժով, ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո պահանջվում են ավելի նեղ բացվածքի ձայնավորներ։ Քանի որ է-ն ի-ի համեմատությամբ ոչ թե նեղ, այլ ավելի լայն բացվածքի ձայնավոր է, ուստի և ի-ն մնում է անփոփոխ։ Բերենք մի շարք օրինակներ՝ բիր>բիր, պիճր, գիժ>գիժ, կ՛իժ, գին>գին, կ՛ին, գինի>գինի, կ՛ինի, գինձ>գինձ, կ՛ինձ, գիր>գիր, կ՛իր, ձի>ձի, ծի, ձիգ>ծիք՛, ջիլ>ճիլ և այլն։ Այս սահմանափակումը հատուկ է միայն Սյունիք-Արցախ տարածքի բարբառներին։ Անտիոքի շրջանի խոսվածքները ի>է հնչյունափոխությունն ունեն առանց նման սահմանափակման, բայց օրինաչափությունը կատարվում է միայն շեշտի տակ ու բացառապես փակ վանկում (այստեղ էլ ի>է հնչյունափոխության ժամանակ է-ին որոշ բառերում երբեմն փոխարինում կամ զուգահեռաբար հանդես է գալիս էյ երկհնչյունը). օրինակներ՝ ամիս>ա̈մէս, անիծ>ա̈նէծ, արճիճ>արջէջ, գին>կէն և կէյն, գիր>կէր և կէյր, գիրք>կէրք, դեղին>տիղէյն, թոնիր>թինէր, լիցք>լէցք, խաւիծ>խավէց, խիճ>խէջ, ծիծ>ձէյձ, ծին>ձէն, կարմիր>գա̈րմէր, կրկին>գըրգէն, ճանճիտ>ճա̈նգէտ, ճաւկիթ>ճավգէթ, ձի>ձէն, միտք>մէյդք, մոխիր>մա̈խէր, ոջիլ>իճէլ և այլն[33]։

Հաջորդ աստիճանում ի-ի դիմաց ա̈ կամ ա ձայնավոր է, որոնք, անշուշտ, զարգացել են նախորդ աստիճանում կատարված փոփոխությունից (ի>է>ա̈>ա>այ)։ Այս օրինաչափությունը հատուկ է Կարճևանի, Կաքավաբերդի բարբառներին՝ Սյունիքում և Սվեդիայի բարբառին՝ Անտիոքում։ Կարճևանի բարբառում այդ օրինաչափությունը արտահայտվում է հիմնականում այն բառերում, որոնք, ինչպես վերը տեսանք, ունեին ի>է փոփոխությունը փակ վանկում (շեշտի տակ), ինչպես՝ ծիծ<ծա̈ծ,

32 Օրինակները քաղված են՝ Է. Աղայան, *Մեղրու բարբառը*, Ալ. Մարգարյան, *Գորիսի բարբառը*, Կ. Դավթյան, *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*, աշխատություններից։

33 Տե՛ս Տ. Անդրեասյան, *Սվեդիայի բարբառը* (բառացանկում)։

ծին>ծա̈ն, կիր>կ՛ա̈ր, միս>մա̈ս, վիզ>վա̈զ, տիզ>տա̈զ, քիթ>ք՛ա̈թ, սիրտ>սա̈րտ, թրիք>թըրանք՛, կծիկ>կըծագ՛, կնիկ>կընագ՛ ճինգ>ճանգ՛, միտք>մատք՛, պիրկ>պարկ՛, տիկ>տագ՛ և այլն: Կաքավաբերդի բարբառում, ընդհակառակը, օրինաչափությունը հանդես է գալիս շեշտից հետո՝ ինչպես փակ, այնպես և բաց վանկերում. օրինակ՝ ա) դեղին>դեղան, տեղան, եղին>խաղանջ, երինջ>նէրանջ, թոնիր>թոնրան, ծոթորին>ծընթօրա̈ն, կաղին>կաղամ, կացին>կացան, ննջեքին>նընջէքյան (այսպես նաև բոլոր անձնական դերանուններում) և այլն. բ) գարի>գ՛ա̈րա̈, կ՛օրա̈, եկեղեցի>գիղէցա, խնոցի>խընէցա, կորի>կօրա, մատանի>մըտանա, մորթի>մութթա, ջորի>ջօրա̈, նօրա̈ տարի>տարա, քանի>քանա. քենի>քէնա, քեռի>քէռա և այլն:

Սվեդիայի բարբառում ի-ի դիմաց ա̈-ն գոյություն ունի ետնալեզվային պայթականներից (գ, կ, f) և ն ռնգայինից առաջ, իսկ ոչ քմային ա-ն՝ բառավերջի բաց վանկում. այսպես՝ ա) աղիք>ա̈ղղա̈ք, բշտիկ>փըշտա̈ք, բռինչ>փըռա̈նչ, երկինք>իրգա̈նք, զատիկ>զա̈դա̈գ, թի>թա̈ն, թրիք>թըրա̈ք, ժանիք>ժա̈նա̈ք, ինն>ա̈ննը, ինքն>ա̈նք, խլինք>խըլա̈նք, ծաղիկ>ծա̈ղա̈ք, կծիկ>գծա̈ք, հինգ>հա̈նգ, մարմին>մա̈րմա̈նք և այլն. բ) աղունի>աղըվնա, աչքի>իկկա, անօրի>անուրա, բարդի>պարդա. գարի>կարա, գինի>կինա, զոտի>կուդա, եկեղեցի>գիղիցա, ընտանի>ընդանա, լեղի>լիղա, խնամի>խընամա, կաղնի>գաղնա, կաշի>գիշա, մատանի>մադնա և այլն, և այլն:

Եվ վերջապես՝ ի-ի փոփոխության վերջնակետը ներկայացնում է Ագուլիսի բարբառը, որտեղ շեշտի տակ գտնվող ի-ի դիմաց երկհնչյուն այ է. այսպես՝ թի>թայն, ինն>այնը, սիրել>սայրիլ, սխեռն>սայառնը, սպիտակ>սպայտակ, տտիպ>տըտայպ, ցին>ցայն, fիթ>fայնթ, fիստ>fայստ, պղինձ>պղայնձ, միտf>մայտf, միս>մայս, մթին>մըթայն, ծլիկ>ծըլայգ՛, ճին>ճայն, կծիկ>կըծայգ, կիր>կայր, ծիծ>ծայծ, ծիծաղ>ծայծաղ և այլն: Այստեղ կան նաև ա-ով ձևեր, ինչպես՝ սիրտ>սառռ, տիկ>տագ՛, հինգ>հանգ՛, կնիկ>կընակ՛, բռինչ>բըռաշնը, սինձ>սազնը, ծիրան>ծա̈րա̈ն և այլն[34], որոնք փաստորեն ներկայացնում են ի>է>ա>այ հնչյունափոխության միջին օղակը:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ի>է>ա>այ փոփոխությունն ամբողջությամբ վերցրած՝ հնչյունափոխական մի միասնական պրոցես է, որի հնչույթաբանական հիմքը՝ ձայնավորական համակարգի ներսում հավասարակշռության պահպանումն է:

---

34 Հ. Աճառյան, Քննություն Ագուլիսի բարբառի, էջ 59—60:

Ինչ վերաբերում է գրավոր աղբյուրներին, ապա նրանցում վկայություններ կան միայն i>e *հնչյունափոխության համար՝ այն էլ ոչ այնքան վաղ ժամանակներից։ Կատարված փոփոխությունը արտահայտված է պարզապես ըստ հնչյունական դրության՝* ե *գրի միջոցով։ Առաջին հավաստի օրինակները վերաբերում են XIII—XIV դարերին։ Ավելի վաղ ժամանակներից հասած գրավոր աղբյուրներում* ի*-ի փոխարեն* ե *գրություն հանդիպում է հիմնականում հատուկ անուններում, բայց թե դրանցում* ե*-ն իսկապես արտահայտո՞ւմ էր, թե ոչ* ի>ե *հնչյունափոխությունը, պարզ չէ (դրանք սովորական վրիպակներ լինելուց բացի, կարող են լինել նաև այդ անունների օտարահունչ արտասանության արտահայտություններ՝ օր.* Գրիգոր*-ի փոխարեն՝* Գրեգոր. *համաբանությամբ գրված ձևեր՝ օր.* Սարգիս*-ի փոխարեն* Սարգէս, Վարդգէս *անվան նմանությամբ և այլն)։*

1045 թվականին գրված մի հիշատակարանում ունենք յափտեան *բառի* ի*-ի դիմաց* ե *գրություն՝ ...փառք ամենասուրբ երրորդութեանն ի* *բարձունս* յաւետեանս *ամէն (Գ. Հովս. հձ 225), բայց այստեղ էլ հնարավոր է, որ այդ բառում* ե*-ն գրվել է* յաւէտ *բառի ձայնավորի գիտակցմամբ։*

Հաջորդ դարերից ունենք ավելի վստահելի հետևյալ օրինակները՝ շառաւիղ>շառաւեղ՝ *... զբարի* շառաւեղն *(Գ. Հովս. հձ 814, 1221 թ., Կիլիկիա, Տարսոն),* մինչեւ>մենչեւ՝ *... երէկ ընդ Միջագետաց աշխարհս ի վայր* մենչեւ *Յեղեսա (Ն. տ. 878 1231 թ., Հռոմկլա),* ուղիղ>ուղեղ՝*... վասն վկայ լինելոյ* ուղեղ *քարոզութեանն (Մանր ժմնկգր. II, 39, XIII դար, Կիլիկիա),* ուղեղ *հաւատով (Ձեռ. 8029, 232 բ, 1376 թ.), ճշմարիտ է այս բանս,* ուղեղ, *հաւատայ (Ն. տ. 233 բ),* լուսաւիգձ>լուսաւեղձ՝ *... Աստանաւր սկզբնաւորեալ* լուսաւեղձ *և շնորհագիր տառս այս (ԺԴ հձհ 93, 1212 թ., Աղթամար), ցանկացաւղ եղաք այսմ* լուսաւեղձ*... բանից (Ն. տ. 98, 1313 թ., Կիլիկիա),* պիղծ>պեղծ *(Ձեռ. 8029, 232ա, 236ա և այլն)։ Վերջինս այս ժամանակներում բավական տարածված բառաձև է և հանդես է գալիս տարբեր գրավոր աղբյուրներում. այսպես՝ զամէն* պեղծ *խաւսք (Ձեռ. 8030, 64բ, 107ա, 1341 թ.) ...ի* պեղծէն *փախչի (Անս. 29), իւր* պեղծ *ազգն (Գրիգ. 49), երևնայ ի մարդն* պեղծ *նշանն (Ն. տ. 50, 56 և այլն), լցեալ* պեղծ *հոգով (Մանր ժմնկգր. II, 39, XIII դար, Կիլիկիա) և այլն։ Վկայված այս օրինակներում* ի>ե *հնչյունափոխությունը արձանագրվում է հիմնականում* ղ*-ից առաջ (բացառությամբ մի օրինակի)։ Մի քիչ ավելի ուշ, Ամիրդովլաթ Ամասիացու աշխատություններում և հատկապես նրա «Ուսումն բժշկության» անտիպ ձեռագրում (Մաշտոցի անվան Մատենադարանի № 8871 ձեռագիր, գրչ. թվ. 1459 թ.) հանդիպում են նաև այլ բառեր, որոնց մեջ* ի>ե *փոփոխությունը արձանագրվում է նաև այլ բաղաձայններից առաջ, ինչպես՝ ... չորս բաժին ջուր ի վ̂ր* լեց

(<լից) և եփէ, որ կէսն մնայ (ճբ), Գիտացիր, որ հաքմնին ի վերայ պահրանին շատ խաւսք են ասցել և շատ գրանք են շննել (<շինել), եւ զամէնն կարգաւ յիշեմ (հգ), … գիտացիր, որ ծեծերն (<ծիծ՝ ծծեր) թուլ միս է (լգ), բէշ (<բիշ) մի շաքար խառնէ (ղթ, հա)։ Այստեղ նույնպես հանդիպում է պեղծ բառաձևը (ժե, խե, հգ, խղ, հբ, կը և այլն), ինչպես նաև ղ-ից առաջ՝ նույն փոփոխությամբ ջիղ>ջեղ բառը. «…եւ թիւն ու ջղացն մարդուն Հէ ջեղ է (լգ, լե, լա, և այլն)։

բ) Ետադարձ նույնպիսի շարժում հատուկ է նաև է ձայնավորին, որի է>ա>այ անցումը արձանագրվում է համարյա այն նույն վայրերում, որտեղ կատարվել է ի>է>ա>այ փոփոխությունը։ Միայն թե այդ փոփոխությունը առկա է այս տարածքի ոչ բոլոր բարբառներում։ Անտիոքի շրջանի բարբառներում, օրինակ, է-ն նման հնչյունափոխության չի ենթարկվել։ Դրա պատճառը թերևս այն է, որ այստեղ, լեզվի պատմության մի որոշակի էտապում ե-ն և է-ն իրենց հնչյունական արժեքով նույնացել են և ենթարկվել մի ընդհանուր օրինաչափության՝ e>i։ Եվ քանի որ այդ փոփոխությունը կատարվել է ի>է անցմանը զուգընթաց, այս պատճառով էլ հին է-ն դուրս է մնացել ի>է>ա>այ հնչյունափոխական շղթայից։

Մյուս վայրերում՝ է-ի արտաբերության մեջ եղընթաց շարժումը թերևս սկսվել է այն բանից հետո, երբ ի ձայնավորի մեջ կատարվել է ի>է հնչյունափոխությունը. այնուհետև այս երկու ձայնավորների հետագա փոփոխությունը գնացել է մի միասնական ճանապարհով (է/ի > է>ա>այ)։ Այս երևույթը այսօր արձանագրվում է Կարճևանի, Մեղրիի, Ագուլիսի, Ղարաբաղի տարածքի որոշ խոսվածքներում. այսպես՝

Հին հայերեն	Կարճևան-Մեղրի-Ղարաբաղ	Ագուլիս
տէր	տար, տäր	տայր
պէտք	պատք՛, պատկ	պայտք՛
թէ	թա, թä	թä
մարգարէ	Մարքարա, Մäրքäրä	Մարքարա
առնէտ	ըռնատ	ըռնայտ[35]
խլէդ	խըլադ, խըլադնը	խըլայդ
մէջ	մանջ, մաջ, մաչ	մաջ
մէջք	մաշկ	մաշկ
ամէն	օմման, ամման	ամման
էգ	(էգ՛, էգ՛	ագ՛
է	ա, ä	ա, ä (օժանդակ բայի երրորդ դեմքը)

35 Այս բառը հայերենում փոխառություն է ասորերենից։ Փոխատու լեզվում մեզ հետաքրքրող ձայնավորի դիմաց այդ բառը arnā'ā ունի երկար ā։ Ենթադրվում է, որ հայերենը այս բառը փոխ է առել այն ժամանակներում, երբ ասորերենում ատամնային

Օրինաչափությունը, կարծես, շատ էլ հետևողական չէ, քանի որ է ունեցող մի շարք բառեր շեշտի տակ մնացել են անփոփոխ (շէկ>շէկ, շէնf>շէնf, ձէր>ձ'էր, ծէր, կէս>կէս, կըէս, էշ>էշ և այլն), մյուս կողմից էլ՝ Ագուլիսի բարբառը մի քանի բառերում (մէջ, մէջf, ամէն, էգ) սպասվելիք այ-ի դիմաց հանդես է բերում ա։ Բայց այս անկանոնությունները խոսում են միայն այն մասին, որ տվյալ հնչյունական օրենքը դեռևս «տատանվել» վիճակում է, չի կարողացել ընդգրկել է-ի գրաված բոլոր դիրքերը և վերածել ընդհանուր օրինաչափության։ Բայց չնայած այս բոլորին, է>ա>այ հնչյունափոխությունը ընդհանուր առմամբ համընթաց է ձայնավորների զարգացման ընդհանուր տենդենցին։

Բերված օրինակների մեջ ժամանակի տեսակետից հին պետք է համարել օժանդակ բայի երրորդ դեմքում է>ա համապատասխանությունը։ Դրա հնությունը ենթադրելի է հենց միայն նրանով, որ այն տարածված է շատ ավելի ընդարձակ տերիտորիայի վրա, քան առհասարակ է>ա հնչյունափոխության գործողության շառավիղն է։

Գրավոր աղբյուրներում է>ա>այ հնչյունափոխության առաջին վկայությունները արձանագրվում են XIII դարում։ Այստեղ նախ ունենք օժանդակ բայի երրորդ դեմքի է-ի դիմաց ա, որը գրության մեջ արտահայտված է այ-ով (յ-ն այս դեպքում հնչյունական արժեք չունի և չի նշանակում է>այ հնչյունափոխություն)։ Հատկանշական է, որ այս փոփոխության օրինակները հանդիպում են Սյունիքի և Վայոց ձորի տարածքում ստեղծված գրավոր աղբյուրներում։ Այսպես, օրինակ. Սյունիքում՝ Հալիձորի «Խաչին խութ» վայրի մի խաչքարի պատվանդանի արձանագրության մեջ, (գրված շուրջ 1265 թվականին) Տարսայիճ իշխանի նվիրատվական բնագրի վերջում ասվում է. «Ով զայս գիրս խափանելոյ ջանա՝ յիմոց կամ աւտարաց, ։ՅժԸ։ հայրապ(ետ)ացն նզաված եղ(իցի), մասն ոյ բաժին Յոդայի առցէ. հաստատ այ գիրս» (ԴՀՎ 2, 52)[36]։ Մի օրի-

---

է-ն դեռևս չէր ընկել։ Կարելի էր ենթադրել, որ այս բառի a-ն է, որ հայերենի նշված վայրի բարբառներում արտահայտվել է ա-ի միջոցով։ Բայց մենք կարծում ենք, որ բարբառային բռնատ, բռնայր ձևերը զարգացել են ասորերենից փոխառած և նախահայերենում ընդհանրացած առնէտ ձևից՝ է>ա>այ հնչյունափոխությամբ։ Դրա համար ապացույցներ կարող են լինել. ա) հայերենի բարբառային բոլոր ձևերում ատամնականի առկայությունը. բ) բարբառներում առնէտ, բռնատ, բռնայտ ձևերի գոյությունը, որոնք ներկայացնում են նախնական է-ի օրինաչափ անցումները, ինչպես այդ առհասարակ հատուկ է այդ կարգի բառերին. գ) փոփոխության առկայությունը շեշտի տակ, որ նույնպես այդ տարածքի բարբառների համար կարևոր է. վերջընթեր շեշտի տակ ձայնավորը չէր հնչյունափոխվի ը-ի, իսկ է-ն կփոխվեր ի-ի՝ առնիտ (հմմտ. աղուէս>ա՛ղվիս, անէծf>ա՛նիսկ՛)։

36 Արձանագրությունն ունի լուսանկար, որտեղ շատ պարզ գծագրված է մեզ հետաքրքրող բառաձևը իր խոսքային շրջապատում։ Հրատարակիչ Ս. Բարխուդարյանը արձանագրության այս հատվածը վերծանել է՝ հաստատայ գիրս, առանց բառանջատման,

նակ էլ Վայոց ձորի վիմագիր աղբյուրներից։ Այստեղ այն արձանագրված է մի տապանաքարի վրա. «ի Թ(ւ)ին ՉԽԴ (1295) այս այ հանգիստ Ովանիսի» (ԴՀՎ 3, 24)։

Բառավերջի բաց վանկում է-ի հնչյունափոխության համար կարելի է հիշել մարգարէ բառի՝ միջնադարյան գրավոր աղբյուրներում հանդիպող Մարգարայ անձնանվան գործածությունը, որի մեջ նույնպես է-ի դիմաց ա է (այստեղ ևս յ-ն չունի հնչյունական արժեք). օրինակներ՝ «...հոգևոր եղբայրս մեր Մարգարայ» (ԺԵ ՀՁՀ I, 5, 1401 թ., Տաթև), ... տէր Յովհաննէս եպիսկոպոսի և Մարգարայ վարդապետի (ն. տ. 619, 1448 թ., Վան) և այլն։ Այս բառաձևը համընկնում է բարբառներում այսօր օգտագործվող Մարքարա, Մäրքäրä անվան հետ[37]։

Բառամիջում կատարված հնչյունափոխության օրինակներ կարող են լինել Ներսէս անձնանվան Ներսայս գրության ձևերը (եթե, իհարկե, դրանք հավաստի են), որ վկայակոչում է Ս. Ավագյանը վիմական արձանագրությունների իր և Ս. Բարխուդարյանի անտիպ հավաքածուներից (տես նշվ. աշխ. էջ 111)։ Այս փոփոխությունը լրիվ համընկնում է Ագուլիսի բարբառում գործող օրինաչափության հետ։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, մեր բարբառներում արձանագրվող հնչյունափոխական նույն երևույթը այս դեպքում ևս իր վկայությունն ունի գրավոր աղբյուրներում։ Հարկ է շեշտել միայն, որ է>ա>այ հնչյունափոխությունը վերաբերում է հայերենի այն e ձայնավորին, որը գրավոր աղբյուրներում արտահայտված է է տառով և հին հայերենում հայտնի է որպես երկբարբառակերպ ձայնավոր։ Այդ նշանակում է, որ փոփոխությունը չի վերաբերում ե-ով արտահայտված ձայնավորին։ Բոլոր այն դեպքերում, երբ հին ե-ի դիմաց հանդիպում է ա, մենք գործ

որից կապակցության առաջին մասը ընկալվում է որպես պարզ բայաձև՝ անցյալ կատարյալի իմաստով («հաստատեցի»), բայց կարծում ենք, որ ճիշտ է վարվել Ս. Ավագյանը, երբ այ-ը անջատել է որպես օժանդակ բայ (տե՛ս նշվ. աշխատությունը)։ Ի միջի այլոց, մեր բերած հատվածում անջատման ենթակա է նաև ոյ-ը՝ մասնոյ բառաձևից։ Այդ ոյ-ը իրականում ու շաղկապն է։ Ըստ այդմ՝ այդ մասը պետք է կարդալ՝ մասն ոյ (ու) բաժին Յողայի (<Յուդայի) առցէ, ինչպես հանդիպում է այլ ձեռագրերում կամ արձանագրություններում։ (Մասն և բաժին հոմանիշներ են)։

37 Այս դիրքում է>ա հնչյունափոխության հնագույն վկայությունը կարելի էր համարել Եղիշէ անձնանվան Եղիշա գրությունը, փորագրված Գնդեվանքի 931 թվականի մի արձանագրության մեջ։ Ահա այդ հատվածը՝ «ՅՁ Թկիս ես Եղիշա ի ։Ջ։ կարգես առաջ արարի» (ԴՀՎ 3, 14), բայց քանի որ այդ անձնանունը ունի եբրայական ծագում (Elīsa) և հայերենի մեջ էլ մուտք է գործել ասորերենի միջնորդությամբ (ասոր. Eliša) հետևաբար՝ վստահորեն չի կարելի պնդել դրա մեջ կատարված հնչյունափոխության վրա։ Աճառյանը նույնիսկ գտնում է, որ հայերենում հնագույնը Եղիշա տառադարձությունն է, որից հետո գալիս է Եղիշէ, և ապա նաև Եղիսէ՝ վերջինս հունարենից (տե՛ս Հայոց անձնանունների բառարան)։

ունենք կամ փոխազդեցական հնչյունափոխության, կամ բարբառային մի հին երևույթի հետ։ Այսպես է, օրինակ, բառասկզբի դիրքում գրական լեզվի և մի շարք բարբառների ե-ի փոխարեն ա-ի արտահայտությունը։ Այդ համապատասխանությունը, ճիշտ է, առկա է միայն մի խումբ բառերում, ինչպես՝ եղբայր>ախպէր, ախպ‘ար, եղին>աղինջ, ճաղէնջ, երազ>արազ, երաշտ>արաշտ, երկաթ>արկաթ, երկան(f)>արկան(f) և այլն, բայց այդ բոլորը, ինչպես ցույց են տվել ուսումնասիրողները[38], իրենց ե~ա համապատասխանությամբ բարբառային հին գոյացություններ են՝ առաջացած դեռևս նախապատմական շրջանում։ Դրանցից միայն եղբայր բառն է, որ ախպէր, ախփար ձևերով տարածված է հայերենի համարյա բոլոր բանավոր-խոսակցական տարբերակներում (առաջինը՝ հիմնականում արևելյան, երկրորդը՝ արևմտյան տարածքում), իսկ մյուսները հատուկ են Գողթն, Սյունիք, Արցախ տարածքի բարբառներին (Ագուլիս, Կարճևան, Մեղրի, Գորիս, Ղափան և այլն)։

Սրանցից գրավոր աղբյուրներում վկայություններ կան միայն եղբայր բառի աղբար և աղբէր տարբերակների համար։ Դրանք վկայվում են ինչպես ձեռագրերի հիշատակարաններում, այնպես և վիմական արձանագրություններում։ Այդ բառաձևերի լայն տարածվածությունը, ածանցված ձևերում հանդես գալը, անձնանվանական կիրառությունները խոսում են այն մասին, որ դրանք իսկապես հին գոյացություններ են։ Եվ իրոք, դրանց հնագույն վկայությունը հասնում է մինչև XI դարը։ Բերենք մի քանի օրինակներ. «...զքուրն զՏիկին եւ զաղբարն Սիրն» (Գ. Հովս. հձ 235, 1058 թ.), ոչ որդի ունէր, ոչ աղբէր (ԴՀՎ 3, Վայոց ձոր, 59, 1296 թ.), զհարազատ եղբայրն իւր զԱղբարիկն (ԺԴ հձհ 156, 1319 թ.) և այլն։

գ) Ձայնավորների ետադարձ շարժման նույն օրինաչափությանը ենթարկվել է նաև ու ձայնավորը՝ փոխարկվելով օ-ի։ Այս դեպքում ու-ից օ-ին անցնելը կատարվել է ու ձայնավորի արտաբերության ժամանակ լեզվի բարձրացման աստիճանի փոփոխությամբ՝ վերինից դեպի միջինը։

Ու>օ հնչյունափոխությունը հիմնականում արձանագրվում է այն բարբառներում, որոնց մեջ տեղի է ունեցել ո>ու փոփոխությունը։ Օրինակ, Մեղրու, Կարճևանի, Գորիսի, Ղարաբաղի և հարակից այլ վայրերի խոսվածքներում այդ օրինաչափությունը դրսևորվում է բացառապես այն դիրքերում, որոնց մեջ ու-ն չի հաջորդում ձայնեղ պայթականների ու պայթաշփականների. այսպես՝ թուզ>թօզ, թօզնը, թութ>թօթ, թուղբ>թօղբ, թօխպ, թուղթ>թօխտ, թումբ>թօմբ, խունկ>խօնգ, խուրձ>

---

38 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մասն Բ, 1951, էջ 414—415, Է. Աղայան, Բարբառային հնագույն տարբերությունները հայերենում, «ԳԱ Տեղեկագիր», 1958, № 5, էջ 67—72։

խօրծ, խօրքնը, ծուխ>ծօխ, ծունկն>ծօնգուն, ծօնգրնը, ծունր>ծօնդուր, ծուռ>ծօռ, կուզ>կօզ, կուժ>կօժ, կունդ>կօնդ, կուռն>կօռնը, կուտ>կօտ, կուրծք>կօրծ, մուկն>մօկնը, մօկուն, նուռն>նօռնը և այլն։ Հակառակ սրանց՝ ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից հետո ու-ն կամ մնում է անփոփոխ, կամ «քմայնանում է». օրինակ՝ դուռն>դüրք, տüռնը, դուրս>դüս, տüս, դուր>դüր, տüր, ձուկն>ձուկուն, ծüկնը, ջուր>ջüր, նüր և այլն։ Այս նշանակում է, որ այս դիրքում ևս որոշակի դեր են խաղում ձայնեղ հպականները, որոնք իրենցից հետո պահանջում են առավել նեղ բացվածքի ձայնավորներ և այդ պատճառով էլ արգելակում են ու-ի ձգտումը դեպի ավելի լայն արտաբերություն։ Այս երևույթը, ինչպես արդեն նշվել է, առնչվում է «Աճառյանի օրենքի» հետ։ Մատենագրության մեջ վկայություններ կան ու>օ հնչյունափոխության վերաբերյալ՝ արտահայտված ո գրով։ Ամենահին օրինակները X դարից են։ Այսպես. Մլքե թագուհու ավետարանի հիշատակարանում Թագուհի բառի ու-ն գրված է ո. «Ես Մլքէ... Թագոհի» (Գ. Հովս. հձ 109, 912 թ.)։ Դա անշուշտ վրիպում չէ, քանի որ գրության նման ձևեր հանդիպում են նաև այլ սկզբնագրերում։ Այսպես, մի քիչ ավելի ուշ, 990 թվականին Վայոց ձորում գրված մի արձանագրության մեջ ունենք. «...բազում աշխատութեամբ ու մեծ յուսով բերի դոռն (<դուռն) եկեղեցոյս, կանգնեցի նշան սուրբ խաչիս ղաւակաց արեւշատոքեան» (ԴՀՎ 3, 41—42)։ Հետագա դարերում այդ հնչյունափոխության համար վկայվող օրինակները տեղայնանում են հատկապես Վայոց ձորում, Գողթան գավառում, Սյունիքում, Լոռիում։ «...յանուն սրբոնու ածածնին» (ԴՀՎ 2, 30, 1365 թ., Տաթև), ...բառնայ ի մենջ տէր աստուած զսով, զսուր, զմարախ, զբոբոռ, զչորաւկ (ջորեակ), զդալոկ» (ԺԵ ՀՁՀ II, 256, 1467 թ., Գողթան գավառ, գ. Ցղնա) և այլն։ Կարևոր է նշել, որ Ցղնայում գրված սույն հիշատակարանում արձանագրվում են ոչ միայն ու>օ հնչյունափոխության օրինակներ, այլև ո>ու փոփոխությամբ բառեր (տե՛ս վերը՝ էջ 116), որոնք այսօր էլ տիպական են այդ վայրերի խոսվածքներին։

Այսպիսով, եթե ընդհանրացնելու լինենք ձայնավորների ետադարձ շարժման վերը նկարագրված դեպքերը, ապա դրանք արտահայտվում էին հետևյալ օրինաչափ անցումներով՝

ի>է>ա(ä)>այ, է>ա(ä)>այ, ու>օ:

Ընդհանուր առմամբ՝ ձայնավորների ինչպես առաջընթաց, այնպես էլ ետընթաց շարժմամբ կատարված փոփոխությունները միասնական չեն հայերենի բոլոր դրսևորումների համար։ Առհասարակ՝ ձայնավորների փոփոխությունները, եթե նկատի ունենանք նրանց այսօրվա վիճակը, տիպական են միայն եզրային և ոչ բնավ կենտրոնական բարբառներին։

Դրանով է թերևս պայմանավորված այն հանգամանքը, որ այդ փոփոխությունները որևէ հետք չեն թողել գրական լեզուների վրա և այդ պատճառով էլ մատենագրության մեջ սակավ են նաև նրանց վկայությունները։ Եվ այն, ինչ արտացոլված է պատմական շրջանի գրավոր աղբյուրներում, հիմնականում՝ շնորհիվ վիմական արձանագրությունների ու ձեռագրերի հիշատակարանների։ Սրանք են, որ տեղեկություններ են տալիս արևելյան (եզրային) բարբառներում կատարված ձայնավորական փոփոխությունների մասին։

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԸ. ՀԻՆ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենում, ձայնավորներից բացի, վանկարար հնչյունների արժեք ունեն նաև ձայնավորների այնպիսի կապակցություններ, որոնք մի միասնական արտասանությամբ հանդես են գալիս մի վանկում։ Դրանք երկբարբառները և եռաբարբառներն են։ Նման կապակցություններում սովորաբար ձայնավորներից մեկը իր վրա է վերցնում վանկարարության հիմնական դերը և այդ դեպքում մյուս բաղադրիչը ստանալով սուղ արտասանություն՝ վերածվում է ձայնորդ տարրի։

Հայերենը իր պատմական զարգացման տարբեր էտապներում ունեցել է նման բարդ հնչյուններ։ Երկբարբառներ ու եռաբարբառներ հատուկ են եղել հին գրական հայերենին. երկբարբառներ կան նաև հայերենի ժամանակակից մի շարք բարբառներում։ Դրանց գոյությունը, ինչպես տեսանք, չի ժխտվում նաև մեր լեզվի միջին շրջանում։ Սակայն ժամանակակից բարբառների երկբարբառները հին երկբարբառների ոչ ուղղագիծ շարունակությունն են և ոչ էլ նրանց հետագա զարգացումը։ Այսօրվա բարբառներում առկա երկբարբառները նոր գոյացություններ են և ծագումնաբանորեն ոչ մի կապ չունեն հին երկբարբառների հետ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԸ

ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԸ ՀԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հին գրական հայերենում երկբարբառների ու եռաբարբառների գոյության հարցը վիճարկման ենթակա չէ։ Վիճելի է միայն այն, թե ձայնավորների ի՞նչ կապակցություններ կարելի է համարել երկբարբառներ ու եռաբարբառներ։ Բոլոր դեպքերում դրանց տարբերակման համար պետք է լինեն ինչ-որ հստակ չափանիշներ։ Թվում է, թե հիմնական չափանիշներից մեկը կարող է լինել գրության ձևը։ Այնտեղ, որտեղ գրու-

թյան մեջ ունենք մեկից ավելի ձայնավորների կամ դրանց ու կիսաձայն յ-ի և ւ-ի զուգորդություններ, առկա են երկբարբառներ ու եռաբարբառներ։ Թերևս հենց այս հիմունքով է առաջնորդվել Հ. Աճառյանը, երբ հին գրական հայերենի համար տվել է երկբարբառների ու եռաբարբառների հետևյալ շարքերը. այ, ոյ, աւ, եւ, իւ, եա, եի, էա, էի, էօ, էու, իա, իե, իէ, իօ, իու, ուա, ուե, ուէ, ուի, ուօ, ուու, եայ, էայ, օյ, ուօյ, եաւ, էիւ, ուաւ[1]։ Ինչպես կարելի է նկատել, այստեղ՝ ըստ վերը նշված սկզբունքի, ներկայացված են համարյա այն բոլոր դեպքերը, որոնք կարող են հանդիպել գրության մեջ։

Սակայն պետք է կարծել, որ միայն նման չափանիշով առաջնորդվելը դեռևս բավարար չէ։ Ճիշտ է, գրության ձևը պետք է հաշվի առնել, բայց տվյալ դեպքում այն կարող է լինել միայն որպես օժանդակ միջոց։

Գրաբարի դասական շրջանի երկբարբառների և եռաբարբառների առավել հաջող քննությունը կատարել է Է. Աղայանը իր «Գրաբարի քերականություն» աշխատության մեջ։ Կիրառելով ուսումնասիրության նորագույն մեթոդներ, մասնավորապես շեշտը դնելով հնչույթաբանական վերլուծությունների վրա և առանձնացնելով վանկաբնային հնչույթները ու դրանք հակադրելով միմյանց, միաժամանակ քննադատաբար կիրառելով նաև դասական լեզվաբանական մեթոդները, Է. Աղայանը վերանայում է Հ. Աճառյանի կողմից բերված երկբարբառների ու եռաբարբառների շարքերը։ Նա իրավացիորեն դրանց միջից հանում է երկբարբառներ համարված գրության այն ձևերը, որոնք հայերենում պարզապես կամ ձայնավորների կապակցություններ են, կամ թարգմանական գրականության մեջ բնագրերից կատարված ուղղակի գրադարձություններ։ Է. Աղայանի ընդհանուր եզրակացությունն այն է, որ դասական հայերենին հատուկ են եղել երկբարբառներ՝ եա, ուա, ուե, ուի, ուօ, այ, աւ, եւ, ոյ, իւ. երկբարբառակերպ՝ է. եռաբարբառներ՝ եաւ, եայ, ուայ, ուաւ, ուոյ. եռաբարբառակերպ՝ ուէ[2]։

Է. Աղայանի մոտ երկբարբառակերպ և եռաբարբառակերպ անվանումները հիմնված են նրա այն ըմբռնման վրա, ըստ որի՝ քանի որ հինգերորդ դարի երկրորդ կեսից հետո է-ն ստանում է պարզ ձայնավորի արժեք, ապա այն մեսրոպյան շրջանում, եթե չուներ երկբարբառային լրիվ արժեք, ապա գոնե արտասանվում էր որպես երկբարբառակերպ մի հնչյուն։ Այս հիմքի վրա էլ ուէ-ն նույն շրջանի համար դիտվում է որպես եռաբարբառակերպ վանկարար։

Քանի որ Աղայանի հետ մենք հիմնականում համաձայն ենք Հ. Աճառյանի բերած երկբարբառների ու եռաբարբառների գնահատման հար-

---

[1] Հ. Աճառյան, *Հայոց գրերը*, Վիեննա, 1928, էջ 314, 335։

[2] Է. Աղայան, *Գրաբարի քերականություն*, հ. 1, 1964, էջ 140։ Ավելի մանրամասն տե՛ս էջ 102—140։

ցում՝ հատկապես հայերենին ոչ հատուկ ձայնավորական կապակցությունները երկբարբառներ ու եռաբարբառներ չդիտելու տեսակետից, ուստի և կքննենք միայն նրա կողմից բերվող միավորները։

Եթե այդ միավորներից դեռևս մի կողմ թողնենք երկբարբառակերպ է-ն և «եռաբարբառակերպ» ուէ-ն, ապա մյուսներից եա, այ, աւ, եւ, ոյ, իւ, եաւ, եայ կապակցությունները համընկնում են գրաբարի դասագրքերում բերվող երկբարբառներին ու եռաբարբառներին[3]։ Մյուսները փաստորեն նախադաս ու-ով սկսվող կազմություններ են (ուա, ուե, ուի, ուո, ուայ, ուաւ, ուոյ)։ Աղայանը գտնում է, որ այս կապակցություններում ու-ն ձայնորդ w-ի արժեք ունի և ըստ այնմ ձայնավորների հետ կազմում է երկբարբառներ ու եռաբարբառներ։

Նկատենք, որ դեռևս Աճառյանը այս կապակցությունների վերաբերյալ անում էր հետևյալ դիտողությունը. «Առանձնապես նկատողության արժանի են ու ձայնավորով կազմված երկբարբառները, ասոնք վանկատության մեջ կհաշվեին առանձին-առանձին, այսպես՝ ուա երկու վանկ էր, հմմտ. լուայ, լուար, լուաւ կամ տուայ, տուար, տուաւ և այլն, բոլորն ալ առանց ե հավելվածի։ Երկվանկ ըլլալու էին նաև ուի, ուէ, ուե, ուու, որոնց համար դժբախտաբար օրինակներ չունինք»[4]։

Ինչպես կարելի է նկատել, իր այս դիտողությամբ Հ. Աճառյանը փաստորեն բացառում էր ու-ով կազմությունների երկբարբառ լինելը։ Եվ իսկապես, եթե ուա, ուե, ուի... երկվանկ էին, ապա երկբարբառներ չէին, որովհետև երկբարբառների տարբերությունը ձայնավորների այլ կարգի միացություններից կայանում է հենց նրանում, որ նրանք արտասանական մի միասնությամբ հանդես են գալիս մի վանկում և չեն բաշխվում տարբեր վանկերի վրա։

Աճառյանի մտքի այս հակասությունը նկատել է Է. Աղայանը։ Նա իր «Գրաբարի քերականություն» աշխատության մեջ, երկբարբառների քննությանը հատկացված բաժնում, գրում է. «...Երկբարբառները հենց այն դեպքում են լինում, երբ մեկ վանկի մեջ միանում են երկու ձայնավորներ, որոնցից մեկը կորցնում է իր վանկարար դերը։ Այս սկզբունքով դասական հայերենի երկբարբառներից յուրաքանչյուրը մեկ վանկ պետք է կազմեր։ Այս բանն ապացուցելու համար Հ. Աճառյանը բերում է մի հիանալի տվյալ. «Կեամ բայը,— գրում է նա,— կատարյալի մեջ կուտա կեցի, կեցեր, կեաց կամ եկեաց՝ ե հավելվածով, ասկե կերևա, որ միավանկ է և հետևաբար եա երկբարբառն ալ միավանկ է։ Ուրիշ երկբարբառներու համար հարմարավոր օրինակներ չկան, բայց այս միակ օրինակը

---

3 Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, 1958, էջ 7։ Պ. Շարաբխանյան, Գրաբարի դասընթաց, Երևան, 1974, էջ 133 և այլուր։

4 Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 335։

ինքնին բավական է խնդրին լուծման համար»: Այս հիանալի ապացույցից հետո,— շարունակում է Է. Աղայանը,— ի հակառակն դատելով, զարմանալիորեն պնդում է, թե ուա, ուի, ուե երկու վանկ են կազմել, բերելով նույնպիսի փաստարկ դրանց համար էլ»[5]:

Ասենք, որ Հ. Աճառյանից բերված հատվածում խոսքը վերաբերում է միայն եա երկբարբառին և ոչ ուա, ուե, ուի և այլ կապակցություններին, որոնց մեջ, ինչպես տեսանք վերը, Աճառյանը տեսնում է երկու վանկ: Իրոք, կարելի է զարմանալ, թե ինչու Հ. Աճառյանը ու-ով կապակցությունները երկվանկ դիտելուց հետո էլ, դրանք համարում է երկբարբառներ:

Այս հակասությունը Աճառյանի մոտ առաջանում է, թերևս, այն պատճառով, որ նա հիմնվելով գրության ձևերի վրա, երկբարբառներ է տեսնում բոլոր այն դեպքերում, երբ գրության մեջ զուգորդվում են ձայնավոր արտահայտող երկու տառեր:

Ուշագրավ է նաև այն, որ Աղայանը, թեև ու-ով կազմություններից երկբարբառ է համարում միայն ուա, ուե, ուի, ուո(ւօ) զուգորդումները, բայց լրացուցիչ փաստեր է բերում դրանց երկվանկային արտասանության համար: Չնայած այս դեպքում նա նախահավելվածը հաստատուն կռվան չի համարում, քանի որ «ուաց ձևն էլ նախահավելված չի ստանում, բայց չենք կարող ասել, թե դա երկու վանկից է բաղկացած: Ավելի կարևոր է այն, որ լուանամ ապառնիում ունի լուացից և քուիմ՝ քուեցի, այսինքն՝ կրում են ց>ս հնչյունափոխությունը, որին միավանկ բառերը երբեք չեն ենթարկվում: Վերջապես դրանց ավելանում է նաև լուաց ձևն առանց հավելվածի: Սրանցից ամեն մեկն առանձին վերցրած չի կարող դիտվել անառարկելի, բայց բոլորը միանալով՝ զորավոր կռվան են դառնում»[6]:

Հարցի լուծման դժվարությունը կայանում է նրանում, որ ուա, ուե, ուի կապակցությունները չեն պարփակվում մի վանկում, և նրանցով ձևավորված հիմքերը չեն պահպանում միավանկության հատկանիշները (նախահավելվածի բացակայություն, ց>ս հնչյունափոխություն): Եվ բնական է, որ այս հակասությունը հաղթահարելու համար կամ պետք է ընդունել, որ դրանք երկբարբառներ չէին, կամ էլ, եթե երկբարբառներ էին, ապա պետք է հիմնավորել, թե ինչու այդ երկբարբառները պարունակող բառաձևերը չունեն միավանկ հիմքերին հատուկ նախահավելվածը

---

5 Է. Աղայան, Գրաբարի քերականություն, էջ 128—130: Աճառյանը բերում է կեամ բայի օրինակը և նշում է, թե «ուրիշ երկբարբառների համար համապատասխան օրինակներ չկան»: Հիշենք երկբարբառավոր հետևյալ օրինակները՝ ցուցանել՝ եցոյց, մուծանել՝ եմոյծ, լուծանել՝ ելոյծ:

6 Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 130:

և ցց կապակցությունը։ Աղայանն ընտրում է երկրորդը և տալիս հետևյալ բացատրությունը. «Ստեղծանեմ բայի կատարյալն է ստեղծ, որը երկվանկ է և նախահավելված չպիտի ստանար, բայց ունենք եստեղծ ձևը, այդպես էլ սպանանեմ–եսպան, սրանք այնքան տարածվել են, որ հետագայում դիտվել են իբրև ճիշտ ձևեր և նույնիսկ Հ. Աճառյանը գրում է, թե «Մենք վարժված ենք ասելու եսպան, եստեղծ»: Բայց ինչպես վերը ասել ենք, Մեյեն և Աճառյանը ապացուցել են, որ հին և ճիշտ են ստեղծ (=ըստեղծ), սպան (=ըսպան) ձևերը։ Սխալ ձևերն առաջացել ու տարածվել են այն բանի հետևանքով, որ ուշ դարերում այդ բառերի սկզբում ը կամ չի արտասանվել կամ չափազանց թուցիկ, աննկատելի արտասանություն է ունեցել, ինչպես այժմ է։ Արդեն դասական գրաբարում էլ կապակցված խոսքում նախորդ բառի վերջնահանգ ձայնավորից հետո այդ ը–ն չէր արտասանվում (հմմտ. օր. արգելականի ձևերը, մի՛ սպանաներ ևն)։ Արդ, եթե այս դեպքում հետին դարերի արտասանության պատճառով առաջացած սխալն ընդհանրացել է, ապա նույնը կարող ենք ասել նաև լուայ, տուար, բուեցի և նման ձևերի մասին։ Այստեղ հավանականությունն ավելի շատ է այն պատճառով, որ ձայնավորից առաջ ու>վ փոփոխությունն սկսվել էր արդեն հինգերորդ դարում, թերևս հենց Մեսրոպի ժամանակ էլ՝ ժողովրդական լեզվում, դրա համար իբր ապացույց կարելի է հիշել Փարպեցու մոտ հիշատակված Վրիւ անձնանվան Վրվայ սեռականը կանոնագրքում, ինչպես և՝ Վրվայր իգական անունը։ Մենք կարծում ենք, ուրեմն, որ դեռևս հինգերորդ դարում կամ գոնե վեցերորդ դարի սկզբներում ու>վ փոփոխությունը բավական տարածված է եղել. սրա հետևանքով էլ տուաւ, լուաւ, բուեցի և նման ձևերն սկսել են արտասանվել տըվավ, լըվավ, բըվեցի և այլն, որպես երկվանկ բառեր։ Քանի որ այդ ժամանակ գրաբարի խոնարհումը դեռևս շատ կենսունակ էր իր նախահավելվածի և ց>ս հնչյունափոխության տեսակետից, ապա նախնական ետուայ, ելուաց, լուացցուք, բուեցցի ձևերը վերածվեցին տուայ, լուաց, լուասցուք, բուեսցի ձևերին, ինչպես որ հակառակ ընթացքով սպան, ստեղծ ձևերն էլ դարձան եսպան, եստեղծ և իրենք մոռացության մատնվեցին»[7]։

Ինչպես կարելի է դիտել այս ընդարձակ մեջբերումից, այստեղ ու-ով սկսվող կապակցությունների երկբարբառներ լինելու հարցը լուծվում է ոչ այնքան փաստական նյութի հիման վրա, որքան տրամաբանության ուժով և անալոգիական կազմությունների հաշվառմամբ, որոնք համոզիչ կարող էին լինել, եթե չհակասեին այլ փաստերի։ Նշենք նաև, որ հեղինակը իր այս բացատրությունը ներկայացնում է որպես ենթադրու-

7 Նույն տեղում, էջ 131—132։

թյուն, ավելի վճռական խոսք ասելու հնարավորությունը թողնելով իր աշխատության պատմական մասին[8]։

Ու-ով կազմությունների, ինչպես և առհասարակ բոլոր երկբարբառների համար կարևոր է այն, որ նրանք անպայմանորեն հանդես պիտի գան մի վանկում, հակառակ դեպքում, այսինքն՝ երկբարբառների բաղադրիչները տարբեր վանկերի վրա բաշխվելու դեպքում, դրանք դադարում են երկբարբառ լինելուց և վերածվում են ձայնավորական կապակցությունների։ Եվ քանի որ գրաբարի երկբարբառավոր հիմքերի միավանկությունը որոշելու հիմնական միջոցը այնուամենայնիվ բայերի անցյալ կատարյալի և ապառնիի որոշ ձևերում նախահավելված ընդունելը և ցց զուգորդումն է, քննենք այդ երևույթները ըստ էության։

Հայտնի է, որ նախահավելվածը հայերենում հանդես է գալիս միայն միավանկ բայաձևերում, այն էլ միայն անցյալ կատարյալի և նրա հիմքից կազմվող ապառնիի որոշ ձևերում։ Ըստ որում, եթե բացառենք անկանոն կոչված բայերը, ապա նախահավելվածի ամենաընդհանրական և հետևողական կիրառությունը անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքում է։ Նկատված է նաև, որ այդ դեմքում նախահավելվածը պատմական շրջանի սկզբում (հայերենի դասական շրջանում) հատուկ է եղել միայն բաղաձայնով սկսվող միավանկ բայերին, այն դեպքում, երբ ձայնավորով սկսվող միավանկ հիմքերը զուրկ են եղել դրանից[9]։

Այդ բանը ավելի ակնառու դարձնելու նպատակով ավելորդ չենք համարում այստեղ դնելու մի քանի հին բնագրերի վրա կատարած որոշ վիճակագրական տվյալներ։ Այսպես, օրինակ, Հին կտակարանի Ծննդք բաժնում օգտագործված են անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքի 350 միավանկ ձևեր, որոնցից 236-ը բաղաձայնավոր սկիզբ ունեն և անպայմանորեն հանդես են գալիս միայն նախահավելվածով։ Այդ բայաձևերն են՝ նվազող հաճախականությամբ. **եռես**—*62*, **եկեաց**—*39*, **եմուտ**—*24*, **եհան**—*23*, **եգիտ**—*16*, **ելաց**—*11*, **եհար**—*9*, **եպագ**—*8*, **եբաց**—*7*, **եհարց**—*7*, **եցոյց**—*5*, **եբեր**—*4*, **եկեր**—*4*, **եհաս**—*4*, **եթող**—*4*, **եկաց**—*3*, **ելից**—*3*, **եբարձ**—*3*, **եքերծ**—*1*, և ոչ մեկը առանց նախահավելվածի։ Նույն ընդհանուր թվից 114-ը սկսվում են ձայնավորով և երբեք չունեն նախահավելված. այսպես՝ **առ**—*45*, **ել**—*38*, **արկ**—*10*, **ած**—*8*, **էջ**—*6*, **անց**—*5*, **արբ**—*2*, և ոչ մի բայաձև նախահավելվածով։ Ըստ որում այստեղ հաշվի չեն առնված **տալ** և **դնել** բայերը, որոնք իրենց դասական ձևերով որևէ կասկած չեն հարուցում։

Նույն բանը տեսնում ենք նաև Եզնիկի «Եղծ աղանդոց» աշխատության մեջ։ Այստեղ օգտագործված է 73 միավանկ բայաձև, այդ թվից

8 Նույն տեղում։

9 Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, 1959, էջ 308։

46-ը բաղաձայնավոր սկիզբ ունեն և բոլորն էլ կիրառված են նախահավելվածով։ Այսպես՝ ետես—7, եհան—6, եկաց—6, եբող—6, եմուտ—4, եբարձ—3, եհար—3, եհաս—2, եկեր—2, եցոյց—2, եմոյծ—1, ելից—1, ելոյծ—1, եհարց—1, եգիտ—1։ Ձայնավորական սկզբով օգտագործված է 27 բայաձև, դրանցից 26-ը առանց նախահավելվածի՝ ած—8, արկ—6, առ—5, ել—4, եղծ—2, անց—1 և միայն մեկը՝ էառ, նախահավելվածով (5 աննախահավելվածավոր ձևի դիմաց)։ Կասկած լինել չի կարող, որ այդ մի ձևում էլ է-ն հետագա ընդօրինակությունների ժամանակ է ավելացել (քանի որ Եղնիկի երկը ավելի ուշ գրչությամբ է հասել մեզ)։ Նույնպիսի պատկեր ներկայացնում են նաև այլ ստեղծագործությունները։

Այսպիսով, չնայած այն բանին, որ արդի քերականությունների մեջ ընդունված է ասել, թե գրաբարի անցյալ կատարյալի 3-րդ դեմքի միավանկ ձևը կարող է լինել և հավելվածավոր և առանց հավելվածի, իրականում նախահավելվածը հատուկ է եղել բաղաձայնով սկսվող միավանկ հիմքերին։ Աճառյանը նույնպես նշում է. «...հետին ժամանակի կազմություններ են էած, էօծ ձևերը և Ավետարանի հին ձեռագրերը այդպիսի ձև չեն ճանաչում»[10]։ Ասենք նաև, որ ձայնավորասկիզբ հիմքերում է հավելվածի կիրառությունը անալոգիական կազմություն լինելով հանդերձ, նպատակ է ունեցել ըստ ձևի տարբերակել անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքը բուն հրամայականի եզակի ձևից, քանի որ դրանք նույնաձև էին։

Նախահավելվածի կիրառությունը դնել ու տալ բայերի անցյալ կատարյալում ավելի ակնառու օրինակներ է տալիս։ Այսպես, օրինակ, դնել բայի անցյալ կատարյալի հարացույցում ունենք.

եդի	եդաք
եդիր(եդեր)	եդիք
եդ	եդին

Եթե նկատի ունենանք, որ կանոնավոր բայերի անցյալ կատարյալի միավանկ երրորդ դեմքը և հրամայական եղանակի եզակիի ձևը համընկնում են, և այդ հիմքից են կազմվում մյուս դիմավոր ձևերը կատարյալում, ապա այստեղ սպասելի էր դիր հիմքը, որից վերջավորությունների հավելմամբ պիտի ունենայինք՝

դրի (<*դիրի)	դրաք (<*դիրաք)
դրիր (<*դիրիր)	դրիք (<*դիրիք)
եդիր	դրին (<*դիրին)

Այսպիսի համակարգ արձանագրվում է միջին հայերենի շրջանում։ Սակայն գրաբարյան հարացույցում դիր հիմքը մաշված է այն աստի-

10 Նույն տեղում, էջ 277—278։

ճան, որ նրանից մնացել է միայն դ բաղաձայնը, որը ոչ միայն առանձին հանդես գալ չի կարող, այլ նույնիսկ դիմային վերջավորությունների հավելմամբ (միավանկ լինելուց բացի) կարող է շփոթվել այլ բառաձևերի հետ (դի, դիք, դին և այլն)։ Ուստի այստեղ նախահավելվածը ավելանում է ոչ միայն միավանկությունը կանխելու համար, այլև այլ նման հնչյունախմբերով կազմված բառերից սահմանազատելու համար։

Քննարկվող հարցի տեսակետից ավելի տիպական է **տալ** բայի անցյալ կատարյալի հարացույցը, որտեղ ունենք՝

ետու	տուաք
ետուր	ետուք
ետ	ետուն

Եթե մի կողմ թողնենք այս հարացույցում հանդես եկող միավորների քննությունը, որոնք կարող են մեկնաբանվել դնել բայի նման, ապա այստեղ նախահավելվածը առկա է ոչ բոլոր ձևերում։ Ինչպես երևում է, նախահավելվածը հանդես է գալիս այն դեմքերում, որտեղ առանց հավելվածի բառաձևը միավանկ է։ Եվ հոգնակի թվի առաջին դեմքի տուաք ձևում հավելվածը բացակայում է նրա երկվանկության պատճառով։ Եթե այդ բայաձևում ուա կապակցությունը երկբարբառ լիներ, ապա բառաձևը ամբողջությամբ վերցրած կգիտակցվեր միավանկ և հարացույցի մյուս անդամների նման կունենար նախահավելված։ Ենթադրվում է, թե իբր այն նախապես ունեցել է (*ետուաք), սակայն հետագայում, երբ կատարվել է ու>վ հնչյունափոխությունը, և բառաձևը գիտակցվել է երկվանկ, ե-ն ընկել է։ Բացի այն, որ այդ ենթադրությունը չի հիմնավորվում դասական հայերենի և հին ձեռագրերի ոչ մի օրինակով, նկատի պետք ունենալ նաև այն, որ նման մի հարացույցում, որտեղ վեց անդամներից հինգը ունեն այդ նախահավելվածը, վեցերորդը հենց մյուսների ազդեցությամբ չպետք է կորցներ այն։ Նույնիսկ եթե ընդունելու լինենք այդ ենթադրությունը, ապա սպասելի էր, որ մատենագրության մեջ պահպանված լինեին նման նախահավելվածավոր ձևերի կիրառության հետքեր։ Սակայն այդ հետքերը չկան ոչ միայն տուաք բառաձևում, այլև նույն տիպի «երկբարբառով» կազմված այլ ձևերում, ինչպես՝ տուայ, տուար, տուաւ, տուան, լուայ, լուար, լուաւ, լուաք, լուան և այլն։ Վերջապես հաշվի պետք առնել, որ գրաբարի բայի անցյալ կատարյալի և ապառնիի բոլոր միավանկ ձևերը ունեն նախահավելված, հետևաբար վերը նշված ուա կապակցությամբ ձևերը միավանկ լինելու դեպքում բացառություն կազմել չէին կարող։ Միակ «բացառությունը» տաց ապառնիի ձևն է, որի նախահավելված չունենալը ունի իր բացատրությունը։ Աճառյանը այդ մասին ասում է հետևյալը. «...և եթե ապառնիում էլ է դրվում (ե նախահավելվածը—Հ. Մ.), այդ նրանից է, որ մեր ապառնին կատարյալից է շին-

վում ընդհանրապես, իսկ երբ ապառնին անկախ է, թեև միավանկ, բայց չունի ե նախահավելվածը, ինչպես տաց (ոչ թե ետաց)»[11]։ Եվ իսկապես, տալ բայի ապառնին ընդհանուր օրինաչափությամբ պետք է լիներ ետուց, սակայն այն կազմված է այլ հիմքից, որի պատճառով էլ զուրկ է նախահավելվածից։ Դրան հակառակ դնել բայի ապառնին կազմվում է կատարյալից՝ եդից, որտեղ առկա է նախահավելվածը, մինչդեռ ապառնիի մյուս դեմքերը (դիցես, դիցէ, դիցուք, դիջիք, դիցեն), որոնք արդեն երկվանկ են՝ չունեն նախահավելվածը։

Այս բոլորը խոսում են այն մասին, որ ուա, ուե, ուի ձայնավորական կապակցությունները հին հայերենում երկբարբառներ չէին, քանի որ նրանք չէին միավորվում մի վանկում։

Ու-ով կապակցությունների մի վանկում հանդես գալու օգտին չեն խոսում նաև այնպիսի բառաձևեր, ինչպիսիք են մի կողմից՝ լուաց, նուաց և մյուս կողմից՝ թուեսցի, լուասցի, չուեսցի և այլք։ Առաջինները միավանկ լինելու դեպքում անպայմանորեն պետք է ունենային նախահավելված, ինչպես այդ հատուկ է բաղաձայնով սկսվող միավանկ հիմքերին։ Երկրորդներում ունենք ց>ս հնչյունափոխությունը, որը հատուկ չէ միավանկ հիմքերին։ Եվ եթե ենթադրվում է, որ դրանք նախապես եղել են *ելուաց, *ենուաց, *թուեցցի, *չուեցցի, *լուացցի և հետագայում են սրբագրվել, ապա դժվար է համոզվել, թե այդ սրբագրությունը կատարված լինի այնպիսի հետևողականությամբ, որ հնից ոչ մի հետք մնացած չլինի, այն էլ այն դեպքում, երբ ձեռագրերի արտագրությունների ժամանակ գրիչները ամենայն բարեխղճությամբ էին վերարտադրում հին ձեռագրերը՝ պահպանելով հին ուղղագրության բոլոր մանրամասները։ Այս տեսակետից սպանանեմ և ստեղծանեմ բայերի սպան և ստեղծ ձևերին զուգահեռ, ետին դարերից ավանդված եսպան և եստեղծ գրչությունները զորավոր կռվան լինել չեն կարող։ Դասական հայերենի մատենագրությանը հատուկ են ոչ թե սխալ, այլ ճիշտ ձևերը։ Ձեռագրերում սպրդած հատ ու կենտ վրիպակները գալիս են ոչ թե դասական շրջանից, այլ հետագա ընդօրինակություններից, երբ գրաբարը այլևս դադարել էր խոսակցական լեզու լինելուց[12]։

Հին կտակարանի վերը նշված Ծնունդք բաժնում չորսական անգամ օգտագործված սպան և ստեղծ ձևերից և ոչ մեկը չունի նախահավելված։

---

[11] Նույն տեղում, էջ 278։

[12] Այս տեսակետից ուշագրավ է լեզվաբան-վիմագրագետ Ս. Ավագյանի աշխատությունը, որտեղ նա լեզվական փաստերով ցույց է տալիս, թե ինչպես միջին դարերի արձանագրություններում ե նախահավելվածի կարելի է հանդիպել նաև այնպիսի բառաձևերում (և ոչ միայն կատարյալի 3-րդ դեմքում՝ էգրեցի, էգրեցին և այլն), որոնց բազմավանկության վերաբերյալ ոչ մի կասկած լինել չի կարող։ Տե՛ս նրա Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, էջ 20—21։

Եզնիկի «Եղծում» սպան-ը օգտագործվում է հինգ անգամ՝ նույնպես առանց հավելվածի, ստեղծ-ը՝ չորս անգամ, որից միայն մեկը եստեղծ ձևով, որը, ինչ խոսք, ետին դարերում կատարված նորամուծություն է։ Սակայն այստեղ կարևորն այն է, որ եթե ետին դարերում առաջացած սխալ ձևերը այս կամ այն չափով սկսել են մուտք գործել նաև հին մատենագրության մեջ (ընդօրինակությունների ընթացքում), ապա դրանք լրիվ չափով չեն փոխարինել և մոռացության չեն մատնել հին ձևերը, այլ զուգահեռաբար գործածվել են հին ձևերի կողքին։ Այս իսկ տեսակետից բնական էր սպասել, որ լուար, տուար, լուաց, նուաց, լուասցի, թուեսցի և նման ձևերը զուգահեռաբար ունենային նաև *ելուար, *ետուար, *ելուաց, *ենուաց, *լուացցի, *թուեցցի գրչությունները, եթե իսկապես դրանք եղել են դասական շրջանում։ Բայց քանի որ նման զուգագրություններ չկան և ամբողջ մատենագրությունը տալիս է միայն մի կարգի գրության ձևեր, հետևաբար և վերը նշված հավելվածավոր և ցց ձևերի գոյությունը բացառվում է, որով և հաստատվում է դրանց հիմքերի երկվանկությունը և այն, որ ու-ով կազմվող կապակցությունները երկբարբառներ չէին։

Վերը շարադրվածին պետք է ավելացնել նաև հետևյալը։ Հայտնի է, որ հին գրական հայերենի է-ն շեշտազրկությունից հնչյունափոխվում է ի-ի, երկբարբառակերպ ձայնավորից վերածվելով պարզ ձայնավորի։ Անկախ այն բանից, ուէ կապակցությունը դիտում ենք երկբարբառ, թե եռաբարբառ, նրա մեջ կատարվում է նույն փոփոխությունը, ինչ հատուկ է է-ի հնչյունափոխությանը ընդհանրապես։ Ավելի պարզ՝ նուէր–նուիրել, պատուէր–պատուիրել բառերում է>ի հնչյունափոխությունը նույնական է սէր–սիրոյ–սիրել, հանդէս–հանդիսի և նման բառերում է-ի փոփոխության հետ։ Այլ կերպ ասած՝ փոփոխությունը վերաբերում է միայն է-ին, որը երկու դեպքում էլ հանդես է գալիս ինքնուրույնաբար։

Դիտենք նաև թուել, չուել, խուել բայերի որոշ թեքված ձևերը։ Նախ ասենք, որ բերված ուղիղ ձևերում ոչ ոք չի կարող կասկածել, թե -ել-ը դերբայական վերջավորություն չէ՝ նման ե լծորդության բոլոր բայերին։ Որպես անորոշ դերբայի ձևաբանական ցուցիչ՝ ել-ը, անշուշտ, բերված բայերում ունի արտասանական-հնչընկալական նույն որակը, ինչ որ նույն վերջավորությամբ մյուս բայերում։ Եթե այդպես է, ապա այդ վերջավորության ե-ն արմատական ու-ի հետ երկբարբառ չի կազմում, հակառակ դեպքում նա կկորցներ իր ձևաբանական ֆունկցիան։ Այս բանը ապացուցվում է նաև այդ նույն բայերի թեքված ձևերի համեմատությամբ։ Վերցնենք, օրինակ, թուել բայի ներկան՝ թուի, անցյալ անկատարը՝ թուէր, անցյալ կատարյալը՝ թուեաց, ապառնին՝ թուեսցի։ Արդ, սրանց համեմատությունից երևում է, որ նույն բառի քերականական տարբեր ձևերում ունենք ուե, ուի, ուէ երկբարբառները (եռաբարբառակերպը) և ուեա եռաբարբառը։ Սակայն, ինչպես կարելի է նկատել, եթե այս ձև-

րում ու-ն առանձնացնենք, ապա մյուս փոփոխությունները պայմանավորված են հայերենի խոնարհման համակարգի ընդհանուր առանձնահատկություններով։ Այսպես՝ թուել ձևում ե-ն լծորդության ձայնավորն է և լ-ի հետ կազմում է անորոշի դերբայական ցուցիչը, ինչպես առհասարակ ե լծորդության բայերում։ Թուի բայաձևում ի-ն խոնարհիչ ձայնավորն է, որ այս դեպքում հանդես է գալիս նաև որպես երրորդ դեմքի ցուցիչ, ներկա ժամանակի հարաբերությամբ, ինչպես խօսի, նստի և նման բայերում։ Նույնը կարելի է ասել թուէր անցյալ անկատարի մասին, որտեղ էր-ը որոշակիորեն առանձնանում է որպես երրորդ դեմքի ցուցիչ՝ որոշակի ժամանակի հարաբերությամբ, ինչպես գրէր, խօսէր, նստէր և նման այլ բայերում։ Այս համեմատություններից երևում է, որ նշված բառաձևերում թու-ն առանձնանում է որպես արմատական հիմք, ինչպես աս—, խօս—, սիր—, նստ— հիմքերը ասել, խօսել, սիրել, նստել բայերում, և այդ արմատական հիմքն է, որին միանում են ձևաբանական ցուցիչները ընդհանուր հիմունքներով։ Նույն ձևով բացատրվում է նաև թուեաց բառաձևը, որտեղ եաց-ը նույնն է, ինչ որ սիրեաց, գրեաց բառաձևերում և հնչյունափոխվում է նույն օրինաչափությամբ, եա-ն դարձնելով ե՝ թուեաց-թուեցի։ Ասենք նաև, որ եթե թուեաց, չուեաց, խուեաց ձևերում վանկարար հնչյունները պարզելու համար հիմնվենք միայն գրության ձևերի վրա, ապա գրաբարում պետք է ընդունել նաև ուեա եռաբարբառ։ Այդ նույն հիմունքով գրաբարում կարելի է առանձնացնել նաև քառաբարբառ՝ ուեայ, ինչպես օրինակ՝ պրտուեայ բառաձևում (Աստվածաշնչում՝ «...առ մայրն նորա պրտուեայ, եւ ծեփեաց զնա կպրաձիւթով». Ելք Բ 3)։ Սակայն նման եռաբարբառներ ու քառաբարբառներ ոչ ոք չի ընդունում։ Այստեղ առաջին օրինակում իրականում ունենք եա երկբարբառ (թուեաց, չուեաց, խուեաց), իսկ երկրորդում՝ եայ եռաբարբառ, որոնք և հնչյունափոխվում են այդ երկբարբառներին հատուկ օրինաչափությամբ (թուեաց-թուեցի, պրտուեայ-պրտուէի)։

Ու-ով սկսվող ձայնավորային կապակցությունների երկբարբառներ չլինելը ապացուցելի է նաև մի այլ տեսանկյունից։ Հայտնի է, որ հայերենի երկբարբառների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրանք իրենց պատմական զարգացման ընթացքում փոխվել են պարզ ձայնավորների։ Այժմ չկա հայերենի մի բարբառ, որտեղ հին երկբարբառները պարզված չլինեն. ամենուրեք այժմ նրանց փոխարեն ունենք պարզ հնչյուններ։ Այսպես՝ այ-ի փոխարեն այժմ ա կամ է է, իւ-ի փոխարեն՝ ու(ü) կամ ի, եա-ի փոխարեն՝ է կամ ա, աւ-ի փոխարեն՝ օ կամ ու (զարգացած օ-ից) և այլն։ Հակառակ երևույթը՝ երկբարբառների դիմաց երկբարբառներ կամ երկհնչյուններ, բարբառները չունեն, եթե դրանք նորագոյացություններ կամ գրական լեզվից փոխառություններ չեն։ Եթե բարբառներում դրանց փոխարեն կան երկբարբառներ (օրինակ՝ եա-ie),

ապա դրանք ավելի նոր գոյացություններ են՝ առաջացած պարզ ձայնավորներից։ Երկբարբառների դիմաց երկհնչյուններ ունեն միայն գրական լեզուները։ Այստեղ էլ երկհնչյունային արտասանությունը ոչ թե կենդանի բանավոր-խոսակցական լեզվում կատարված փոփոխության արդյունք է, այլ երկբարբառների վերանալուց հետո՝ դրանց գրային արտահայտության հիման վրա գրական լեզվում ձևավորված արտասանություն (եա=յա, իւ=իու=յու, այ=այ,ոյ=ույ և այլն)։ Այս իսկ տեսակետից, եթե ուա, ուե, ուի և այլ կապակցությունները եղած լինեին երկբարբառներ, բարբառներում պետք է ենթարկվեին երկբարբառների պատմական փոփոխության ընդհանուր օրինաչափությանը, այն է՝ պիտի պարզվեին ու վերածվեին պարզ ձայնավորների։ Սակայն, ինչպես գիտենք, իրականում այդպես չի եղել։ Ամենուրեք այդ կապակցությունների մեջ ու-ն «փոխվել է» v-ի, իսկ նրան հաջորդող ձայնավորները ենթարկվել են տվյալ բարբառում այդ ձայնավորներին հատուկ փոփոխություններին։ Որոշ բարբառներում կարծես թե պահպանվել են հին արտասանության հետքերը. ինչպես, օրինակ՝ չուան>չուվան, տուեալ>տուվալ բառերում[13]։ Սակայն այդ ու-ն կարող է լինել նաև գաղտնավանկի ը-ի (չըվան, տըվալ) լիաձայնության արտահայտություն, մի բան, որ շատ սովորական է այդ բառերն արձանագրող բարբառներում։ Մյուս կողմից, ու-ի նախնականության դեպքում այն պետք է լիներ շեշտակիր, քանի որ տվյալ բարբառներում որպես կանոն շեշտը վերջընթեր է։ Այդ բառերում շեշտը վերջին վանկում լինելը ժխտում է ու-ի նախնականությունը։

Կարևոր է նաև այն, որ եթե երկբարբառներից առաջացած երկհընչյունները գրական լեզվում պահպանում են իրենց միավանկությունը (մի վանկում հանդես գալու հատկությունը), ապա ու-ով կապակցություններից առաջացած երկհնչյունները ինչպես գրական լեզվում, այնպես և բարբառներում երկվանկ են, այսինքն՝ երկհնչյունի բաղադրիչները բաշխվում են տարբեր վանկերի վրա։ Այդ բանը երևում է ոչ միայն այդ բառերի վանկատման ժամանակ, այլև նման կապակցություններ ունեցող բառերի հոգնակի ձևերի կազմության մեջ։ Ժամանակակից հայերենը և նրա բարբառները տարբերակում են միավանկ և բազմավանկ բառերի հոգնակիի կազմության միջոցները։ Սայլ, կեանf>կյանf, սիւն>սյուն, գոյն>գույն և նման բառերում երկհնչյուն վանկարարները պահպանում են բառի միավանկությունը, հետևաբար և ստանում են եր հոգնակերտ, ինչպես՝ սայլեր, կյանfեր, սյուներ, գույներ և այլն։ Բայց այդպես չեն հին ուա, ուե, ուի կապակցություններից առաջացած երկհնչյուններով

---

13 Այդպես է, օրինակ, Ղարաբաղի բարբառի մի շարք խոսվածքներում։ Տե՛ս Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966, Ալ. Մարգարյան, Գորիսի բարբառը, 1975, և այլն։

բառերը, որոնք բազմավանկ բառերի նման ստանում են ներ հոգնակերտ. ինչպես՝ լուացք>լվացք>լվացքներ, նուէր>նվեր—նվերներ, սուին>սվին—սվիններ և այլն։ Պարզ է, որ եթե ուա, ուե, ուի կապակցություններ ունեցող այդ բառերը նախապես միավանկ լինեին, կամ այլ կերպ ասած՝ եթե ուա, ուե, ուի կապակցությունները երկբարբառներ լինեին, ապա բարբառներում նրանք նախ՝ պետք է որ վերածված լինեին պարզ ձայնավորների և երկրորդ՝ գրական լեզվում էլ, մյուս կարգի երկհնչյունների նման պետք է հանդես գային մի վանկում և ընդունեին եր հոգնակերտ։ Իսկ քանի որ այդպես չէ, ապա հիշյալ կապակցությունները նախապես էլ երկբարբառներ չէին։

Վերը բերված փաստարկները միասին վերցրած համոզիչ կռվաններ կարող են լինել հաստատապես ասելու, որ ու-ի և մի այլ ձայնավորի միացությամբ կազմված ձայնավորական զուգորդումները գրաբարում երկբարբառներ չէին։ Դա հավասարապես վերաբերում է նաև ուէ, ուայ, ուաւ, ուոյ կապակցություններին, որոնք ոչ թե եռաբարբառներ էին, այլ ու-ի և է, այ, աւ, ոյ երկբարբառների զուգորդություններ։

Հարցը այստեղ միայն այն է, թե գրային այդ զուգորդություններում (ուա, ուե, ուի...) ու-ն հնչյունական ի՞նչ արժեք ուներ։

Այդ հարցի մանրամասն քննությունը թողնելով հետագային (տե՛ս էջ 233), այստեղ ասենք միայն, որ լեզվական փաստերը և դրանց հիման վրա արվող տրամաբանական հետևությունները յուրովի հիմնավորում են ուա, ուե, ուի... կապակցություններում ու բաղադրիչի ձայնավոր հնչյունի արժեք ունենալու տեսակետը, բայց, մյուս կողմից, համանման լեզվական փաստեր և դրանցից բխող եզրահանգումներ նույնպիսի հաջողությամբ ժխտում են այդ տեսակետը։ Ըստ որում՝ երկրորդ դեպքում (առաջինի համեմատությամբ) լեզվական փաստերը ավելի առարկայական են ու համոզիչ, թեև ամբողջ վարկածը թվում է խիստ արտառոց. սա էլ հատկապես այն պատճառով, որ հակասում է դասական հայագիտության ավանդական ըմբռնումներին։

Սակայն անկախ այն բանից, թե ու-ով կապակցությունները ձայնավորակա՞ն, թե՞ բաղաձայնական միացություններ են, ուա, ուե, ուի... զուգորդությունները երկբարբառներ չեն և չպետք է մտցնել հին հայերենի երկբարբառների կազմի մեջ։

Այսպիսով, եթե բացառենք ու-ով կապակցությունների երկբարբառ ու եռաբարբառ լինելը, ապա գրաբարի դասական շրջանի համար երկբարբառներ ու եռաբարբառներ կլինեն հետևյալ կապակցությունները. եա (իա), այ, աւ, եւ, իւ, ոյ, է (երկբարբառակերպ). եաւ, եայ (իայ):

Վերը տեսանք, որ հին գրական հայերենի երկբարբառներն ու եռաբարբառները այնպիսի բարդ հնչյուններ էին, որոնք կազմված լինելով ձայնավորներից կամ ձայնավոր ու ձայնորդ տարրերից, հանդես էին գա-

լիս մի վանկում՝ մի միասնական արտասանությամբ։ Թեև հին երկբարբառների ու եռաբարբառների հնչյունախոսական առանձնահատկությունների մասին դժվար է սպառիչ բան ասել, սակայն հաշվի առնելով ներքին ու արտաքին մի շարք հանգամանքներ, պետք է ընդունել, որ գրության ձևերը հարաբերականորեն ճիշտ էին արտահայտում դրանք կազմող բաղադրիչների հնչյունական էությունը։

Դասական հայերենի եա-ն այսօր արժեքավորվում է որպես երկհընչյուն յա: Գրաբարի դասագրքերը սովորեցնում են, որ հին լեզվի այնպիսի բառաձևերում, ինչպիսիք են, օրինակ՝ պատանեակ, որդեակ, սեան, ձեան, կատարեալ, հանգուցեալ և այլն, եա-ն արտասանվում է յա, և նոր ուղղագրությունն էլ ժամանակակից հայերենի համար ընդունել է այդ արտասանությանը համապատասխան գրության ձևեր (պատանյակ, որդյակ, սյան, ձյան, կատարյալ, հանգուցյալ և այլն)։ Սակայն, եթե դեռևս մի կողմ թողնենք եա-ի հին հայերենյան արտասանությունը, որը մեզ հայտնի չէ, նույնիսկ ժամանակակից հայերենի համար էլ պետք է նկատել, որ սյան, ձյան և նման բառերի մեջ յ-ն չի նույնանում Հայաստան, արքայական և նման այլ բառերում առկա յ-ի հետ, ուր այն հանդես է գալիս երկու ձայնավորների միջև և որոշակիորեն ունի բաղաձայն հընչյունի արժեք, այն դեպքում, երբ սյան, ձյան և նման բառերում յ-ն այլևս բաղաձայն հնչյուն չէ, իրենից առաջ չի ստեղծում գաղտնավանկ և հաջորդ ա-ի հետ հանդես է գալիս մի միասնական արտասանությամբ։ Եվ որ առավել կարևոր է՝ միավորվում է մի վանկում։ Այդ երկու յ-երը իրարից տարբերվում են ոչ միայն արտասանությամբ, այլև լսողությամբ։ Հին եա-ի արտասանության մեջ առաջին բաղադրիչը ավելի շուտ ընկալվում է որպես e-ի և i-ի միջին արտաբերությամբ մի հնչյուն։ Ինչ վերաբերում է դասական հայերենի եա-ին, եթե այն փակ վանկում ունեցել է երկբարբառային արտասանություն, ապա նրա առաջին բաղադրիչը, հիմնական վանկարարը չլինելով հանդերձ, այնուամենայնիվ ունեցել է e ձայնավորի արտասանությանը մոտ արժեք, որի պատճառով էլ գրության մեջ արտահայտվել է ե տառով։ Այս տեսակետից կարևոր է հետևյալ հնչյունափոխական երևույթի հաշվառումը։

Հայտնի է, որ ի-ով վերջացող բառերի ածանցման ժամանակ, երբ այդ ի-ն հանդիպում է ա ձայնավորին, փոխարկվում է ե-ի։ Շեշտի տակ այն ա-ի հետ կազմում է եա կապակցություն, որը դիտվում է որպես երկբարբառ։ Այսպես, օրինակ՝ որդի+ակ=որդեակ, պատանի+ակ=պատանեակ, հոգի+ակ=հոգեակ, աղաւնի+ակ=աղաւնեակ և այլն։ Ենթադրվում է, թե նման դեպքերում, քանի որ ի-ն ձայնավորից առաջ զրկվում է իր ձայնավորական հատկանիշից, ուստի և վերածվում է կիսաձայնի։ Ըստ այդմ՝ ե-ով արտահայտվում է i ձայնավորի ոչ վանկառար տարբերակը։ Ըստ այդմ ե-ն, եթե ոչ ամբողջությամբ, ապա գոնե

մասնակիորեն նույնանում է յ կիսաձայնի հետ։ Այս ենթադրության հավանականությունը ավելանում է, երբ, մանավանդ, նկատի են առնվում, որ յա գրությունը իսպառ բացակայում է բառամիջի փակ վանկում։ Այս ենթադրությունը և նրա մեկնաբանությունը միայն մասնակիորեն կարող է ընդունելի լինել, այն էլ այնքանով միայն, որ ի-ն իսկապես ա-ից առաջ ենթարկվում էր փոփոխության։ Սակայն, եթե այդ փոփոխությունը հանգեցնելիս լիներ յ-ին, ապա ոչ մի արգելք չկար այն իր տառով արտահայտելու։ Հիշենք թեկուզ ի նախդիրի յ արտահայտությունը ձայնավորով (այդ թվում նաև ա-ով) սկսվող բառերից առաջ։ Մյուս կողմից՝ եթե նույնիսկ ընդունելու լինենք, որ յ-ն որպես բաղաձայն հնչյունի տառ, այդ դիրքում չէր կարող արտահայտել ի-ից առաջացած նոր հնչյունը, ապա թերևս ավելի նպատակահարմար էր այդ կապակցության մեջ i-ն արտահայտել իր իսկ արժեքի՝ ի-ի միջոցով (*ողիակ, *պատանիակ), որը ավելի մոտ կլիներ i-ի ձայնորդային հնչմանը, քան ե-ն։ Սակայն վերջինիս միջոցով արտահայտվելը, մեր կարծիքով, ավելի էր համապատասխանում նրա իրական վիճակին։ Ա-ից առաջ ի>ե անցումը հնչյունաբանորեն լրիվ բացատրելի է, որով և արդարացվում է նշված դիրքում ի+ա=եա գրությունը։ Բանն այն է, որ ի-ն լինելով առաջնային շարքի վերին բարձրացման ձայնավոր, արտասանական շղթայում անմիջապես ընկնելով ետին շարքի ստորին բարձրացման ա ձայնավորից առաջ, վերջինիս ազդեցությամբ մի աստիճան իջեցնում է իր արտաբերության տեղը, վերին բարձրացումից իջնելով միջինը։ Ա-ի առնմանական ազդեցությամբ է, ուրեմն, որ ի-ն իր բարձրացման մի աստիճանը փոխելով դառնում է e (ե)։

Ուշադրության արժանի հանգամանք է նաև այն, որ այս երկբարբառի հնչյունափոխության ժամանակ ստացվում է պարզ ե ձայնավոր (ատեան-ատենի, սենեակ-սենեկի, պատեան-պատենի, պատանեակ-պատանեկիկ և այլն), որ նույնպես խոսում է այն մասին, որ եա գրության մեջ ե-ն առավելապես համապատասխանում էր իր գրային արժեքին, թեև որպես երկբարբառի բաղադրիչ պիտի ունեցած լիներ սուղ արտասանություն։

Եա-ն դասական հայերենի այն երկբարբառների թվին է պատկանում, որոնք հանդես էին գալիս շեշտի տակ, իսկ շեշտից զրկվելիս հնչյունափոխվում էին։ Ինչպես վերը ասվեց՝ եա-ն շեշտազրկությունից փոխվում էր ե-ի։ Այդ փոփոխությունը տեղի էր ունենում ինչպես բառաթեքման, այնպես և բառաբարդման ու ածանցման ժամանակ, երբ շեշտի տեղափոխությունից հետո՝ երկբարբառը ընկնում էր շեշտանախորդ վանկը։ Այս կարգի փոփոխության օրինակներ վերը բերվել են տարբեր առիթներով։ Լոկ երևույթի ցուցադրման նպատակով նշենք մի օրինակ ևս. այսպես. լեառն բառը թեքված ձևերում շեշտից առաջ ունենում է

եա>ե. լերին, լեռնէ, լերամբ, լերինք, լերանց. ածանցված ձևերում՝ լեռնակ, լեռնական, լեռնանամ, լեռնային. բարդ բառերում՝ լեռնակարկառ, լեռնաբնակ, լեռնակողմն, լեռնակոյտ, լեռնաձև և այլն։ Հնչյունափոխական այս երևույթը տեղի է ունենում բոլոր այն բառերում, որոնք շեշտի տակ ունեն եա և կարող են թեքվել, ածանցվել կամ բարդվել։

Ինչպես արդեն ասվել է, այս նույն օրինաչափությամբ է, որ ի-ով վերջացող բառերի ածանցման ու բառաբարդման ժամանակ՝ ա-ից առաջ՝ ի>ե հնչյունափոխությամբ առաջացող եա երկբարբառը շեշտից առաջ դառնում է ե. այսպես՝ այգի+ա+գործ=այգեգործ, այգեգործութիւն, այգեկութ, այգեստան, այգետեղ. հոգի+ա+հանճար=հոգեհանճար, հոգեհարուստ, հոգեհրաշ, հոգեմարտ, հոգեմուխ, պատանեակ, պատանեկութիւն, որդի+ա+կորոյս=որդեկորոյս և այլն, և այլն։ Կան, իհարկե, նաև բացառություններ, որոնք, սակայն, բացատրելի են։ Այսպես. բարեասաց, բարեխորժ, բարեանուն, բարեատեաց բառերում եա-ն գտնվում է շեշտից առաջ, բայց չի հնչյունափոխվել ե-ի։ Պատճառն այն է, որ նշված բառերում եա-ն երկբարբառ չէ, և նրա բաղադրիչները որպես ինքնուրույն վանկարարներ բաշխվում են տարբեր վանկերի վրա։ Այս օրինակները հետաքրքրական են նաև նրանով, որ այս բարդությունների առաջին բաղադրիչի ի-ն ևս (բարի) հաջորդ ա-ի ազդեցությամբ փոխվել է ե-ի, սակայն նրա հետ երկբարբառ չի կազմել։ Հետևաբար եա գրության մեջ ե-ն ոչ թե i ձայնավորի ոչ վանկարար տարբերակի արտահայտությունն է, այլ ի-ից առաջացած ե-ի, որը հնչյունաբանորեն համապատասխանում է լի ձայնավորի իր գրային արժեքին։

Որպես եա երկբարբառի տարբերակ իա-ն հանդես է գալիս միակ բառում։ Այն հանգամանքը, որ այս բառը միակն է, որի մեջ առկա է իա երկբարբառը, խորհել է տալիս, թե արդյոք ժամանակին նա չի եղե՞լ եա երկբարբառի ազատ տարբերակը։ Այդ միտքը թելադրվում է նաև նրանով, որ իա-ն շեշտից զրկվելով հանդես է բերում եա-ին հատուկ հնչյունափոխություն (իա>ե)՝ մի+ա+կոյս+ի=միակուսի=մեկուսի, մեկուսանալ, մեկուսել, մեկուսաբար և այլն։ Բայց հնարավոր է նաև ենթադրել, որ այդ բառում իա կապակցության առկայությունը պայմանավորված է բառի բաղադրիչների որոշակի գիտակցմամբ (մի-ակ), իսկ շեշտազրկությունից հնչյունափոխվելը հետագա ժամանակների գործ է։

Երկբարբառներից այ և ոյ-ը, դատելով գրության ձևերից, կազմված են ա, ո ձայնավորներից և յ կիսաձայնից։ Ենթադրվում է, որ այդ կապակցությունների մեջ յ-ն ունեցել է ոչ վանկարար i-ի արժեք։ Նման ենթադրությունը փաստարկվում է մի կողմից՝ այդ երկբարբառների հետագա պատմական փոփոխությունների այնպիսի ընթացքով, որոնց մեջ թվում է, թե երկրորդ բաղադրիչը իսկապես պետք է ունեցած լինի i-ին մոտ արժեք (այ>է, ոյ>ի). իսկ մյուս կողմից՝ հնդեվրոպական ծագ-

ման և օտար լեզուներից անցած որոշ բառերում ևս առկա է այդ համապատասխանությունը։ Այսպես, օրինակ՝ այ-ի համար կարելի է բերել հնդեվրոպական հետևյալ զուգահեռները. այծ<*aig', խայթ<*khait, խայտ<*khaid, կայծ<*g^{2}əid և այլն, որոնց մեջ այ-ը համապատասխանում է ai-ին։ Իրանական փոխառություններից՝ պայման<պահլ. paimān, պրսկ. phaimān, պայքար<ն. պհլ. paykār ձևերում այ-ի դիմաց կամ ai է, կամ ay։ Հատկանշական է նաև, որ վերջին բառաձևը հայերենից վրացերենին անցնելով՝ ստացել է პაეკრობა «վեճ», სპაეკრო «մենամարտի տեղ», მეპაეკრე «կռվող» արտահայտությունները, որոնց մեջ հայերենի այ-ի դիմաց վրացերենը ունի აე[14]։ Սակայն չնայած վերը բերված համապատասխանություններին, այնուամենայնիվ, հայերենի գրի առման ժամանակ այ երկբարբառը իր հնչյունական արժեքով համապատասխանում էր գրության ձևին, այսինքն՝ այն կազմված էր ա ձայնավորից և յ կիսաձայնից և ուներ իջնող երկբարբառի արժեք։ Հայերենի այ-ի վրացական აე տառադարձությունը մեր երկբարբառի արժեքավորման համար էական նշանակություն ունենալ չի կարող, քանի որ վրացերենում y կիսաձայնի բացակայության պատճառով օտար ay-ը այդտեղ արտահայտվել է այդ լեզվի գրության հնարավորությամբ։

Այ երկբարբառը բառի մեջ կարող էր հանդես գալ բոլոր դիրքերում, ինչպես բառասկզբում, բառամիջում ու բառավերջում, այնպես էլ շեշտի տակ ու շեշտանախորդ վանկերում։ Ըստ որում՝ շեշտի տեղափոխությունից հնչյունափոխության չէր ենթարկվում։ Այսպես, օրինակ՝ **այր**, **այրաբար**, **այրական**, **այրանամ**, **հայր**, **հայրական**, **հայրախնամ**, **հայրապետ**, **հայրասպանութիւն**, **եղբայր**, **եղբայրութիւն**, **եղբայրատեաց**, **եղբայրաբաժին** և այլն։ Բառավերջի բաց վանկում այ-ը հավանաբար երկբարբառ չէր, բայց հոդավորման և ք հոգնակերտի հավելման ժամանակ, պետք է կարծել, որ ստանում էր երկբարբառի արժեք։ Այսինքն՝ **արքայ**, **ընծայ**, **քահանայ**, **տղայ** և նման ձևերում այ-ը երկբարբառ չէր, բայց **արքայն**, **արքայք**, **ընծայն**, **ընծայք**, **քահանայն**, **քահանայք**, **տղայն**, **տղայք** և նման ձևերում՝ երկբարբառ։ Այս ենթադրությունը հենվում է այն իրողության վրա, որ հետագայում՝ պատմական զարգացման ընթացքում, բարբառներում այ երկբարբառի հնչյունափոխությունն ընդգրկում է նաև բառավերջի այն փակ վանկը, որ ստեղծվում է հոդերի և ք հոգնակերտի միջոցով. ինչպես՝ **քահանայն**>**քահանէն**, **քահանայք**>**քահանէք**, **աբեղայն**>**աբեղէն**, **աբեղայք**>**աբեղէք**, **տղայն**>**տղէն**, **տղայք**>**տղէք** և այլն։ Եվ այդ այն դեպքում, երբ բառավերջի բաց վանկում այդ փոփոխությունը չի կատարվում՝ **քահանայ**>**քահանա**, **տղայ**>**տղա**, **աբեղայ**>**աբեղա** և այլն։

---

14 Նշված համապատասխանությունները տե՛ս Հ. Աճառյանի Արմատական բառարանում։

Ոյ երկբարբառի դիմաց այսօր գրական լեզվում ունենք ույ երկհըն-չյունային արտասանություն, որը թեև ավանդական է, բայց առաջացել է պատմականորեն. այսպես՝ լոյս>լույս, բոյս>բույս. թոյն>թույն, գոյն>գույն, կապոյտ>կապույտ, ճամբոյր>ճամբույր և այլն:

Թեև հին հայերենը ույ գրակապություն չի ունեցել և դրա հիման վրա էլ կարելի է ենթադրել, թե ոյ-ով արտահայտվել է երկբարբառային ui-ն, սակայն ոյ-ի այդ արժեքի դեպքում ոչ մի խոչընդոտ չկար այն արտահայտելու իր հնչմանը համապատասխան՝ ույ-ով: Որ ոյ գրությունը այդ երկբարբառի առավել համապատասխան արտահայտությունն էր, երևում է հետևյալից: Ոյ-ով այն բոլոր բառերը, որոնք իրանական ծագում ունեն, փոխատու լեզվում ունեն երկար ō. դա ինքնին նշանակում է, որ ոյ կապակցության մեջ էական է ո=o համապատասխանությունը: Բերենք մի շարք օրինակներ. աճոյշ<պհլ. anōš, բոյժ<պհլ. bōž, (զ)գոյշ<պհլ. gōš, դոյլ<պհլ. dōl, թակոյկ<պհլ. takōk, կապոյտ<պհլ. kapōt, կոյտ<պհլ. *kōt, պրսկ. kōd, կոյր<պհլ. kōr, զենդ. kōr, պրսկ. kōr, մակոյկ<պրսկ. makōk, մոյկ<պհլ. պազ. mōk, պատրոյգ կամ պատրոյկ<պհլ. *patrōk, սամոյր<պհլ. samōr կամ samūr, սպոյժ (աճ-սպոյժ, սպուժել, սպուժումն բառերում)<պհլ. spōž, տոյժ<պհլ. tōž և այլն: Մեկ-երկու բառերում միայն ոյ-ի դիմաց u է. ինչպես վերը նշված սամոյր<samūr-ից բացի նաև գոյն<gun: Հատկանշական է, որ հայրենից փոխառյալ բառերում վրացերենը հայերենի ոյ-ի դիմաց հանդես է բերում o, ինչպես՝ ճամբոյր>ամբորի (նույն նշանակությամբ), ամբորեբա (համբուրել): Էական կարելի է համարել նաև հետևյալ հանգամանքը: Եթե ոյ երկբարբառը հետագայում հայերենի բարբառներում զարգանում է ու-ի և ի-ի (լոյս>լուս ‖ լիս), ապա որոշ բարբառներում նրանից զարգանում է երկբարբառային uo, որը այդ բարբառներում համընկնում է հին ո-ից առաջացող նույնատիպ երկբարբառային արտասանությանը: Այստեղ կարելի էր ենթադրել, որ այդ բարբառներում ոյ-ը նախ պարզվում և վերածվում է o(ո)-ի, որը նույնանում է հին ո-ի հնչյունական արժեքի հետ և ապա՝ սրանցից հավասարապես զարգանում է երկբարբառային uo:

Սակայն այս բոլորի հետ միասին ոյ երկբարբառի համար ենթադրելի է ո բաղադրիչի մեջ u ձայնավորի թույլ արտահայտված երանգ, եթե ընդունելու լինենք, որ առհասարակ այդ երանգը պարունակել է նաև ո-ով արտահայտված ձայնավորը: Նման ենթադրությունը բխում է մի կողմից պատմական այն իրողությունից, որ հայերենի որոշ բարբառներում հին ո-ից զարգանում է ուօ, ու, և մյուս կողմից՝ հենց դասական հայերենում ոյ-ը շեշտազրկությունից (ավելի թույլ դիրքում) հնչյունափոխվում է ու-ի (լոյս-լուսաւոր, գոյն-գունաւոր և այլն): Այդ ենթադրության օգտին է խոսում նաև հետևյալ իրողությունը: Գրաբարում ու խոնարհման բայերի

անցյալ անկատարի եզակի առաջին և երկրորդ դեմքերի ճեղուի, ճեղուիր ձևերին համապատասխան է երրորդ դեմքի ճեղույր ձևը, որտեղ, անցյալ անկատարի կազմության ընդհանուր օրինաչափությունը նկատի ունենալով, սպասելի էր *ճեղույր (հմմտ. խաղայի, խաղայիր, խաղայր)։ Սակայն սպասվելիք ույ-ի փոխարեն ունենք ոյ։ Հենց այս փաստը նկատի ունենալով Մեյեն կարծում է, որ բուն հայկական կազմություններում ոյ-ը ներկայացնում էր y-ի առջև գտնվող u-ն[15]։ Այլ կերպ ասած, նման կազմություններում ոյ-ը արտասանվում էր uy։ Նման վարկած ընդունելու դեպքում՝ պետք է ընդունել նաև, որ ոյ-ը ուներ հնչյունական կրկնակի արժեք. մի դեպքում oy, մի այլ դեպքում uy։ Սակայն այս իր հերթին հակասում է ուղղագրության ընդհանուր սկզբունքներին, և ավելի ճիշտ կարելի է համարել այն ենթադրությունը, ըստ որի՝ ոյ-ի մեջ առաջին բաղադրիչը ունեցել է u ձայնավորի մի թեթև երանգ, բայց ոչ լրիվ նույնական u-ի հետ, ինչպես ենթադրվում է հայկական կազմությունների համար։

Դասական հայերենում ոյ-ը որպես երկբարբառ հանդես էր գալիս փակ վանկում և այն էլ միայն շեշտի տակ։ Հակառակ այ երկբարբառի, որը շեշտի նկատմամբ անտարբեր էր, ոյ-ը, ընդհակառակը, շեշտի նկատմամբ զգայուն էր և բառաբարդման ու ածանցման, ինչպես նաև բառաթեքման ժամանակ, երբ շեշտազրկվում էր, հնչյունափոխվում էր ու-ի. ինչպես՝ լոյս–լուսոյ, լուսաւոր, լուսատու, լուսազգեստ, լոյծ, լուծական, լուծանել, ճամբոյր–ճամբուրի, ճամբուրել, կոյս–կուսի, կուսածին, կուսական, կուսամայր, կուսութիւն, կոյր–կուրի, կուրաբար, կուրամիտ, կուրացուցանել, կուրութիւն և այլն, և այլն։ Այստեղ ևս՝ բառավերջի դիրքում հոդավորման ժամանակ՝ ոյ-ը արժեքավորվում է որպես երկբարբառ և այդ հիմքի վրա էլ, լեզվի զարգացման հաջորդ էտապներում հնչյունափոխվում է ու-ի (մարդոյն > մարդուն, ճոգւոյն > ճոգոյն > ճոգուն և այլն)։

Աւ, եւ, իւ երկբարբառները, դատելով գրության ձևերից, կազմված էին ա, ե, ի ձայնավորներից և ւ ձայնորդից։ Քանի որ այս կապակցությունների մեջ ւ ձայնորդը ուներ u ձայնավորին մոտ հնչում, ուստի և վերը նշված երկբարբառները կունենային au, eu, iu արտասանությունը։

Այս երկբարբառները շեշտի նկատմամբ զգայուն չէին և բառի մեջ կարող էին հանդես գալ ինչպես բառամիջում, այնպես էլ բառավերջում, ինչպես շեշտի տակ, այնպես էլ շեշտից դուրս։ Հետևաբար շեշտազրկությունից նրանք հնչյունափոխության չէին ենթարկվում։

Նշված երկբարբառներից եւ և իւ դասական հայերենի բնագրերում հանդես են գալիս որպես ազատ տարբերակներ և մի շարք բառերում փո-

---

15 Մեյե, նշված աշխ., էջ 19։

խարինում են իրար՝ առանց իմաստի տարբերակման. այսպես, օրինակ՝ հարեւր||հարիւր, աղբեւր||աղբիւր, երկեւղ||երկիւղ, գեւղ||գիւղ, եւղ||իւղ, ալեւր||ալիւր, արեւն||արիւն և այլն։ Ընդունված է ասել, որ եւ-ով ձևերը ավելի հին են ու տիպական դասական շրջանի հայերենի համար։ Սակայն պետք է կարծել, որ արդեն իսկ հին հայերենի գրի առման շրջանում եւ||իւ գրության ձևերի տակ թաքնված էին բարբառային տարբերություններ, որոնք հետագայում՝ պատմական շրջանի հաջորդ էտապներում, իրենց դրսևորեցին ավելի որոշակիորեն։ Ինչպես կտեսնենք երկբարբառների պատմական փոփոխություններին նվիրված շարադրանքում, այդ նախնական բարբառային տարբերությունների հիմքի վրա է, որ, օրինակ, եւղ, գեւղ, երկեւղ և նման ձևերից զարգանում են եղ, գեղ, երկեղ ձևերը, և մյուս կողմից՝ դրանց տարբերակներ գիւղ, երկիւղ ձևերից՝ գուղ, երկուղ բարբառային ձևերը։ Ժխտելով այն փաստը, որ դասական հայերենի համակարգին ավելի հարազատ են եւ-ով ձևերը, այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ հին հայերենի տարբերակներում զուգահեռաբար գոյություն ունեին նաև իւ-ով ձևերը։

Երկբարբառների մասին վերը ասվածները վերաբերում են նաև եայ և եաւ եռաբարբառներին։ Հնչյունաբանական տեսակետից սրանք բնութագրվում են որպես բարդ ձայնավորներ՝ eay, eau հնչյունական արժեքներով։ Սրանք նույնպես հանդես էին գալիս միայն շեշտի տակ և շեշտի նկատմամբ ղգայուն էին։ Շեշտազրկությունից եայ-ը հնչյունափոխվում էր է երկբարբառակերպի, իսկ եաւ-ը՝ եւ-ի։

Է երկբարբառակերպի մասին արդեն խոսվել է վերը։ Այն բացառապես հանդես էր գալիս շեշտի տակ, իսկ շեշտից զրկվելով՝ հնչյունափոխվում էր ի պարզ ձայնավորի. այսպես՝ վէճ-վիճի, վիճաբան, վիճաբանել, վէմ-վիմի, վիմաբուխ, վիմախառն, վիմակարկառ, վիմաձև և այլն։ Բառասկզբի դիրքում բացառություն են կազմում մի շարք գրական կազմություններ, ինչպես՝ էակ, էական, էապես, էութիւն և նմանները, որոնց մեջ է-ն գիտակցվում է որպես արմատ («արարիչ, աստված» իմաստով) և այդ պատճառով էլ մնում է անհնչյունափոխ։ Մինչդեռ բառասկզբի դիրքի է-ն, երբ գալիս է ժողովրդական լեզվից, շեշտազրկությունից օրինաչափորեն փոխվում է ի-ի, ինչպես՝ էգ-իգի-իգաց, իգական. էշ-իշոյ-իշոց կամ իշու, իշուց. էջ-իջի-իջից, իջանել և այլն։ Բառավերջի դիրքում ևս է-ն մնում է անփոփոխ՝ հավանաբար զուտ գրական բառերում (որոնց մի մասը՝ փոխառյալ), ինչպես՝ մարգարէ-մարգարէի, մարգարէաբար, մարգարէական, մարգարէանալ և նման այլ կազմություններում։ Բառամիջում որոշ բառերում շեշտազրկությունից հետո ունենք է>ե՝ աղուէսաղուեսու, աղուեսադրոշմ (բայց և աղուէսուկ) ձևերում։ Այստեղ (բառավերջի փակ վանկում) ենթադրելի է նախնական ուղղագրության խախտում կամ շեղում, եթե նկատի ունենանք, որ եռդասական շրջանում բա-

ռամիջի ու բառավերջի դիրքերում ե-ի և է-ի արտասանության նույնության պատճառով կարող էին տեղի ունենալ ուղղագրական շեղումներ։

Հայերենի երկբարբառների պատկերը ամբողջականացնելու նպատակով հարկ է այստեղ համառոտակի խոսել նաև ժամանակակից հայերենի բարբառներում առկա երկբարբառների մասին։

ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Երկբարբառներ կան նաև այսօրվա հայերենի մի շարք բարբառներում։ Դրանք հիմնականում տարածված են կենտրոնական, հարավ-արևմտյան և հարավ-արևելյան բարբառախմբերի խոսվածքներում։ Երկբարբառներից զուրկ են մասնավորապես Սյունիք-Արցախ տարածքի բարբառները։ Նկատելի է նաև, որ եթե մի շարք բարբառներում երկբարբառները արտասանվում են շատ որոշակի և տվյալ վայրի խոսվածքի արտասանական առանձնահատկության բնորոշ գիծն են կազմում, ապա այլ վայրերում դրանց արտասանությունն այնքան թույլ է, որ դժվար է նույնիսկ տարբերել սովորական ձայնավորներից։ Երկբարբառներով հարուստ են առանձնապես Անտիոքի շրջանի բարբառները, որտեղ ձայնավորների երկբարբառացման ընթացքը առհասարակ չի համընկնում մյուս բոլոր հայաբնակ վայրերի ձայնավորների փոփոխությունների հետ։

Հայերենի բարբառներում եռ երկբարբառները իրենցից ներկայացնում են ձայնավոր հնչյունների այնպիսի միացություններ, որոնք մի միասնական արտասանությամբ հանդես են գալիս մի վանկում։ Այստեղ երկբարբառացման պրոցեսին մասնակցում են համարյա բոլոր ձայնավորները, այդ թվում նաև յ և ւ (w) ձայնորդները։ Դրանց զուգորդումներով կազմվում են հետևյալ երկբարբառներն ու եռաբարբառները (բերվում է ոչ լրիվ ցանկը. (ւ)ուօ, (ւ)ŏö, (ւ)ուէ, իէ, այ(ӑյ), էյ, աու(ӑŭ) ŏու, էու(էŭ), ուայ, ըա, իյ, աօ(աö), ըու և այլն։ Այս երկբարբառներից և ոչ մեկը չի հանդիսանում հին հայերենի երկբարբառներից որևէ մեկի շարունակությունը կամ նրա հետագա զարգացումը. դրանք բոլորն էլ նոր գոյացություններ են՝ առաջացած հայերենի պարզ ձայնավորներից։

Նույնիսկ Ագուլիսի բարբառի այ-ը, որ լրիվ համընկնում է հին հայերենի այ երկբարբառի հետ (հայր>հայր, մայր>մայր, այծ>այծ և այլն), ինչպես ցույց է տվել Աճառյանը[16], ոչ թե հին հայերենի այ-ի պահպանումն է այս բարբառում, այլ եռադարձ հնչյունափոխության արդյունք է։ Այստեղ այ-ը նորագոյացություն է և հանդես է գալիս ոչ միայն հին հայերենի այ-ի դիմաց, այլև հին է-ի և ի-ից առաջացած բարբառային է-ի դիմաց։ Այնպես որ այծ, մայր և նման բառերի այ-ը Ագու-

---

16 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, 1951, էջ 364 և հաջորդները։

Ախի բարբառում զարգացել է բարբառային է-ից՝ այդ թվում նաև այ>է հնչյունափոխությունից առաջացած է-ից (այսինքն՝ ինչպես՝ միս>մէս մայս, ƒիր>ƒէնր>ƒայնր, կիր>կէր>կայր, տիկ>տէկ>տայգ և այլն, այնպես էլ՝ մայր>մէր>մայր, այծ>էծ>այծ)։

Վերը նշված երկբարբառներից ամենատարածվածները՝ հին ո-ից և ե-ից առաջացած ուօ, ուէ, իէ երկբարբառներն են, որոնք բառասկզբի դիրքում հանդես են գալիս ւուօ, ւուէ, յիէ տարբերակներով[17]։ Սրանց առաջացման ընթացքի մասին արդեն խոսվել է վերը՝ ձայնավորների պատմական փոփոխությունների քննությանը նվիրված բաժնում (տե՛ս էջ 96—105)։ Այստեղ անհրաժեշտ է միայն ավելացնել, որ ուօ, ուէ, իէ երկբարբառները հիմնականում հանդես են գալիս շեշտի տակ (թեև այդ օրինաչափությունը այժմ շատ վայրերում խախտվել է), իսկ շեշտից զրկվելիս՝ վերածվում են պարզ ձայնավորի։ Ահա մի քանի օրինակներ Հաջընի բարբառից։

Եզակի	Հոգնակի
խոտ>խուէդ	խուդիէյ «խոտեր»
հող>ֆուեղ	ֆուղիեյ
գող>կուէղ	կուղիէյ և այլն[18]։

Վերն ասվեց, որ երկբարբառներով հարուստ են հատկապես Անտիոքի շրջանի բարբառները։ Դրանց մեջ հատկապես աչքի է ընկնում Սվեդիայի (Յողուն Օլուկի) բարբառը, որը հայ բարբառների մեջ առանձնանում է ոչ միայն իր երկբարբառների առատությամբ, այլև այդ երկբարբառների զարգացման յուրօրինակ ընթացքով։ Այստեղ երկբարբառներ կան ինչպես հին հայերենի պարզ ձայնավորների, այնպես և մի քանի հին երկբարբառների դիմաց։ Բերենք մի շարք տիպական երկբարբառներ՝ իրենց օրինակներով[19]։

էու		էյ	
տուն>դէուն	յո>յէու, «ուր»	գրոյց>գըրէյց	գիր>կէյր
թուղթ>թէուղտ	մոտ>մէուդ	հին>հէյն	ծիծ>ձէյձ
լեզու>լիզէու	մաղ>մէուղ	հետ>հէյդ	ծիլ>ձէյլ

աու		այ	
փուռ>փաուռ	դդում>տատաում	ձուն>ծայն	թոյլ>թայլ
շուն>շաուն	լուրջ<լաուրճ	ձութ>ծայտ	բոյթ>պայնտ
քուրդ>քաուրտ	կուրծք>գաուծք	լոյս>լայս	բոյն>պայն

17 Բարբառագիտական աշխատություններում (ւ)ուօ և (յ)իէ երկբարբառները սովորաբար արտահայտվում են (ւ)ո և (յ)ե գրանշաններով։

18 Տե՛ս Հ. Գասպարյան, Հաջընի բարբառը, Երևան, 1966, էջ 68։

19 Օրինակները քաղված են Տ. Անդրեասյանի «Սվեդիայի բարբառը» (Երևան, 1967) աշխատությունից։

իյ　　　　　　　　　　　աօ (աö, էօ)

մէջ>միյճ　　առաջեաւ>առճիյվ　　ուռ>աօռ　　մութ>մաöթ || մէöթ
մէջք>միյճք　　սէր>սիյր　　ուս>աöս　　մուխ>մէöխ
տէր>դիյր　　նեղ>նիյղ　　նուռ>նաօռ

ըօ (ըու)　　　　　　　　　　ուայ

ուղեղ>ղըօղ　　ուշք>ըօշք　　քույր>քուայր
ուղտ>ըօղդ　　ով>ըուվ

Ինչպես կարելի է նկատել, ոչ բոլոր դեպքերում է, որ տվյալ երկբարբառը «ծագում է» միևնույն ձայնավորից։ Այստեղ միաժամանակ մի քանի ձայնավորներ կարող են փոխվել նույն երկբարբառին։ Այդ նրանից է, որ այդ բառերում իրար վրա շերտավորված են մի քանի հնչյունափոխական օրինաչափություններ, որոնք գործել են պատմական տարբեր ժամանակներում։ Օրինակ՝ էյ *երկբարբառը հիմնականում հանդես է գալիս հին հայերենի* ի *ձայնավորի դիմաց (տե՛ս վերի օրինակները, որոնք եզակի չեն), բայց այս օրինաչափությանը ենթարկվել է նաև* գրոյց>գըրէյց *բառը, որի* էյ*-ը սակայն գալիս է* ոյ*-ից։ Բայց այդ անցումը բացատրելի չէ, եթե չընդունենք, որ այս բառում* էյ*-ը կարող էր առաջանալ նույն* ի>էյ *օրինաչափ փոփոխությամբ։ Իսկ այդպիսի մի հնչյունափոխության համար նախ պետք է ենթադրել* գրոյց>գըրից *անցումը, որից հետո միայն,* ի>էյ *ընդհանուր օրինաչափությամբ, սպասելի կլիներ* գըրէյց *բառաձևը։ Կամ՝* էու *երկբարբառ ունեցող բառերը։ Այստեղ հիմնական օրինաչափությունն այն է, որ* էու*-ն հանդես է գալիս հին հայերենի* ու*-ի դիմաց (նման անցման համար կան բազմաթիվ օրինակներ՝* ճուշ>ճէուշ, ճուրբ>ճէուրփ, մուր>մէուր, թունդ>թէունդ, թուշ>թէուշ, թուր>թէուր, թուփ>թէուփ *և այլն) և եթե այս օրինաչափությանը հարել են նաև* ո*-ով,* օ*-ով և* ա*-ով բառեր (ոչ միայն բերվածները), այդ նշանակում է, որ նրանք նախ դարձել են* ու *և ապա, ընդհանուր օրինաչափությամբ, փոխվել* էու*-ի։ Նկ իսկապես. այս բարբառում հին հայերենի բառամիջյան* ո*-ն հնչյունափոխվում է* ու *(ü)-ի* (գոգ>կüկ, գոլ>կüլ, գողանալ>կուղնիլ, գողութիւն>կուղըթէն, գովել>կուվիլ, գովք>կուվք, դող>տüղ, դողալ>տուղիլ, թոզոյլ>թույլիլ, թոռն>թուռըն, լողալ>լուղիլ *և այլն), նաև հին* աւ *երկբարբառից առաջացած* օ*-ն* (օձիտ>ուձէդ, օժտել>ուժդիլ, օծել>ուծիլ, օղակ>ուղագ, օր>ուր, օտար>ուդըր *և այլն), ինչպես նաև* ա*-ն է փոխվում* ու*-ի* (ժամ>ժում, լար>լուր, թաս>տուս, թանձր>թունձր, թաղ>թուղ, բան>պուն||պէուն, խաղ>խուղ *և այլն)։ Այնպես որ նման բառերում նախ կատարվել է* ա>ու, օ>ու, ո>ու *հնչյունափոխություն և ապա այդ ընդհանուր* ու*-ն է, որ վերածվել է երկբարբառ* էու*-ի (իհարկե, օրինաչափությունը չի ընդգրկել նման բոլոր բառերը)։*

Սվեդիայի բարբառը երկբարբառների օգտագործման մեջ այնքան առաջ է անցել, որ երկբարբառացումը օգտագործում է նաև որպես քերականական միջոց։ Այս տեսակետից հետաքրքրական են հետևյալ կիրառությունները։

Հայերենում ընդհանուր օրինաչափություն է, որ երբ գոյականը գործածվում է որոշյալ առումով, քերականական այդ իմաստը արտահայտվում է որոշիչ հոդի (ն կամ ը) միջոցով։ Սվեդիայի բարբառը չի օգտվում այդ միջոցից։ Գոյականի որոշյալությունը արտահայտելու համար նա դիմում է ձայնավորների երկբարբառացմանը, իսկ եթե այդ ձայնավորը արդեն երկբարբառացված է, ապա երկբարբառի առաջին բաղադրիչը արտաբերվում է սովորականից ավելի երկար։ Բերենք մի քանի օրինակներ։

Անորոշ	Որոշյալ
քիթ > քէնթ	*քա̈յնտ «քիթը»*
աղջիկ > աշգէն	*ա̈շգա̈յնս «աղջիկս»*
մարդ > մուրտ	*մո̈ւրտ «մարդը»*
վարդ > վուրտ	*վո̈ւրտ «վարդը»*
սիրտ > սիրդ	*սա̈յրդ «սիրտը»*
լեառն > լուռ	*լո̈ւռ «լեռը»*
բեռն > պուռ	*պո̈ւռ «բեռը» և այլն*[20]*։*

Եվ ոչ միայն որոշյալ առման դեպքում, այլև երբ գոյականը գործածվում է որպես ստորոգելական վերադիր, վերադիրի ձայնավորը նույնպես ստանում է երկբարբառային արտասանություն. այսպես՝

մարդ > մուրտ	*մո̈ւրտ ի=մարդ է*
վարդ > վուրտ	*վաուրտ ի=վարդ է և այլն։*

Այս բարբառում ձայնավորի երկբարբառացումը և հնչերանգը որոշակի նշանակություն ունեն նաև հոլովման համակարգում. դրանց միջոցով հոլովաձևերը տարբերակվում են իրարից։ Այսպես, օրինակ՝

Ուղղ. շո̈ւն (շուն)	*Բաց. ը շէուն մընի*
Սեռ. Տրկ. շէուն	*Գործ. շըննու*
Հայց. զ շո̈ւն	*Ներգ. ը շո̈ւն*[21]

Եվ շատ հաճախ ստացվում է այնպես, որ նույն բառը խոսքի մեջ հանդես է գալիս երեք և ավելի հիմքերով. ուղղականի որոշյալ (ձաուռ «ծառը»), ուղղականի անորոշ (անկախ բառաձև, ձուռ<ծառ), սեռականտրականի (ձառէն), երբ ձայնավորը վերականգնվում է իր նախնական որակով։

Բայց չպետք է կարծել, որ ձայնավորների երկբարբառացումը խոր

---

20 Տ. Անդրեասյան, *նշվ. աշխ. էջ 13—14։*

21 *Նույն տեղում, էջ 56։*

հնություն ունի։ Այն, որ վերը բերված օրինակներում նկատելի է հնչյունափոխական տարբեր երևույթների շերտավորում, ինքնին խոսում է այն մասին, որ այստեղ մենք գործ ունենք համեմատաբար նոր երևույթի հետ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԻՆ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդեն իսկ գրաբարի դասական շրջանում նկատելի են որոշ երկբարբառների փոփոխություններ։ Մի քանի բառերի թեքված ձևերում երկբարբառները վերածվում են պարզ ձայնավորների։ Ըստ որում՝ այդ փոփոխությունը պայմանավորված չէ քերականական իմաստով (առանց երկբարբառների փոփոխության էլ՝ թեքույթներով լրիվ արտահայտվում են քերականական իմաստները)։ Այդ բառերից են, օրինակ, հայր, մայր, եղբայր, որոնց հոգնակի ուղղական՝ հարք, մարք, եղբարք, հոգնակի սեռական-տրական՝ հարց կամ հարանց, մարց, եղբարց, եզակի և հոգնակի գործիական՝ հարբ, հարբք, մարբ, մարբք, եղբարբ, եղբարբք ձևերում այ երկբարբառի փոխարեն ա պարզ ձայնավոր է։ Այս բառաձևերում երկբարբառի փոփոխությունը պատճառաբանելով ձևաբանական գործառության հանգամանքներով, ինչպես վերը ասվեց, ճիշտ չի լինի։ Պարզ չէ, թե արդյոք այն պայմանավորվա՞ծ է ծագումնաբանական հանգամանքներով։ Կարելի է ենթադրել միայն, որ այդ բառերում այ երկբարբառի մենաբարբառացումը հին երևույթ է, թեև ուսումնասիրվող (դասական) շրջանի համար ինչ-որ չափով ոչ օրինաչափական (ամենայն հավանականությամբ այլ համակարգի մնացորդ)։

Միանգամայն այլ պատկեր է ներկայացնում համանման մի այլ բառաձև, որը իր բնույթով նույնպես շեղում է համընդհանուր օրինաչափությունից, բայց իր մեկնաբանությամբ միանգամայն մատչելի։ Այդ բառաձևը ԸՆԿԵՆՈՒՄ «ձգել, նետել» բայի անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքի ԸՆԿԷՑ բայաձևն է։ Ըստ հայերենի բայի համակարգային օրինաչափությունների՝ առաջին ու երկրորդ դեմքերի ընկեցի, ընկեցեր ձևերից հետո, երրորդ դեմքում սպասելի էր (և ոչ միայն սպասելի, այլև պարտադիր) *ընկեաց բառաձևը, բայց բնագրերում ունենք երկբարբառի պարզեցմամբ՝ ընկէց։ Այս դեպքում բառարանները թեև այդ բայի հարացուցային միավորների շարքում դնում են ընկէց կամ ընկեաց, սակայն իրականում երկրորդ ձևը կեղծ է, կամ ավելի ճիշտ՝ համաբանությամբ ստեղծված գրչագրական տարբերակ, քանի որ հին մատենագրության մեջ այդ բառաձևը հանդես է գալիս բացառապես ընկէց ձևով։ Այս նշանակում է, որ երկբարբառների մենաբարբառացումը իր լինելության

ընթացքի մեջ էր արդեն դասական հայերենի շրջանում և ինչ-որ չափով արտահայտված էր նաև գրական լեզվի մեջ։

Հետագայում պատմական զարգացումը գնում է դեպի երկբարբառների պարզեցում՝ համընդհանուր կարգով։ Այն նախ ընդգրկում է հայերենի բանավոր-խոսակցական բոլոր տարբերակները։ Այնուհետև՝ երկբարբառների վերացմամբ և նրանց՝ պարզ ձայնավորների վերածվելու ընթացքին զուգահեռ, հին երկբարբառների մի մասը, գրական հին տեքստերի բանավոր վերարտադրության ժամանակ, վերաարժեքավորվում է որպես երկհնչյուններ, և այդ արտասանությունն է, որ սկսվում է օգտագործվել գրական լեզուների մեջ և ավանդաբար հարատևում է մինչև մեր օրերը։

Պետք է նշել նաև, որ երկբարբառների փոփոխություններն իրենց հիմնական տենդենցով (մենաբարբառացմամբ) միասնական լինելով հանդերձ, իրենց մանրամասներով միասնական չեն։ Հենց սկզբից ևեթ նկատելի է զարգացման երկու ուղղություն, որ մենք, այսօրվա վիճակը նկատի ունենալով, անվանում ենք արևմտյան և արևելյան։ Ավելի պարզ ասած՝ երկբարբառների պատմական փոփոխությունների երկվությունը՝ նույն օրինաչափություններով, ինչ մենք դիտում ենք այսօրվա բարբառներում, նկատելի է նաև մատենագրական վկայություններում։ Ըստ որում՝ մատենագրական տվյալներով ևս, փոփոխությունների այդ երկու ուղղությունները տարածականորեն բաշխվում են արևմտյան և արևելյան հատվածների վրա։

Անշուշտ, երկբարբառների օրինաչափ փոփոխություններից կան նաև շեղումներ, սակայն դրանք չեն հակասում ընդհանուր օրինաչափություններին և իրենց վկայությունների սակավությամբ և սահմանափակ տարածվածությամբ առանձին բառերում կատարված փոփոխությունների արժեք ունեն, ինչպես այդ արձանագրվում են նաև ժամանակակից բարբառներում։

ԱՅ-Ի ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից հայերենի բարբառներում հին այ երկբարբառի դիմաց այսօր ունենք ա, կամ է։ Նկատելի է, որ այ>ա փոփոխությունը տարածված է հատկապես արևմտյան բարբառներում, այն դեպքում, երբ արևելյան բարբառների մեծ մասին հատուկ է այ>է փոփոխությունը։ Քանի որ պատմական շրջանում տեղի են ունեցել բնակչության պարբերական գաղթեր ու տեղահանություններ, որոնց հետևանքով լեզվական որոշ երևույթներ ընկել են տերիտորիալ բաշխմամբ այլ լեզվական միջավայրի մեջ, ինչպես նաև այն, որ հայերենի բարբառները ունեցել են փոխադարձ ազդեցություններ, բնական է, որ այ>ա և այ>է հնչյունա-

փոխությունները նշված հատվածներում օրինաչափ լինելով հանդերձ՝ ունեն նաև փոխադարձ ներթափանցումներ[1]*:*

Պատմական շրջանի գրավոր հուշարձանները ևս այ>ա *երկբարբառի փոփոխությունը արձանագրում են երկու ուղղությամբ: Եվ դա միանգամայն բնական է, քանի որ ժամանակակից բարբառներում արձանագրվող փոփոխությունները պետք է որ իրենց արտահայտությունը ստանային պատմական շրջանի առանձին գրավոր աղբյուրներում: Թեև ոչ այնքան հստակորեն, բայց այնուամենայնիվ գրավոր աղբյուրներում* այ>ա *փոփոխությունն առավելապես վկայվում է Արևմտյան Հայաստանի մշակութային օջախներում գրված ստեղծագործություններում ու ձեռագրերում, այն ժամանակ, երբ* այ>է *փոփոխությունը հիմնականում դիտվում է Արևելյան Հայաստանի տարածքում ստեղծված գրավոր աղբյուրներում՝ հատկապես վիմական արձանագրություններում և ձեռագրերի հիշատակարաններում: Մատենագրական սկզբնաղբյուրների ավելի մանրամասն ու հանգամանալից մի ուսումնասիրություն, որ պետք է կատարվի հատկապես այն աղբյուրների միջոցով, որոնց գրչության տեղը և ժամանակը հայտնի են, ճշգրտորեն երևան կհանի այն տարածքները, որոնցում խոսվող բարբառները ենթարկվել են այդ փոփոխություններին: Այժմ, բարբառային այդ երկու հնչյունափոխությունների տարածման մոտավոր սահմանները ուրվագծելու նպատակով, այստեղ կբերենք միայն մի քանի մատենագրական տեղեկություններ:* Այ>ա *հնչյունափոխությունը արձանագրվում է այնպիսի գրավոր աղբյուրներում, ինչպիսիք են, օրինակ, Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարություն», Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրք», Գրիգորիս բժշկապետի «Քննություն բնության մարդո...», Ամիրդովլաթ Ամասիացու բժշկագիտական աշխատություններում, Կիլիկիայում, Ղրիմում, Երզնկայում և Արևմտյան Հայաստանի այլ վայրերում գրված ձեռագրերում և նրանց հիշատակարաններում: Այսպես.* այ>ա *հնչյունափոխության օրինակներ՝ իրենց վկայության թվականներով.* աղբար *(Գ. Հովս. հձ, 235 1058 թ., Կիլիկիա),* մարճ *իմ (ԺԴ հձհ 27, 1304 թ., Կիլիկիա),* ճարպետ<*հայրապետ (նույն հիշատակարանում չորս անգամ նույն ձևով. ԺԴ հձհ 421—422, 1356 թ., Ղրիմ),* կարղաf<*կարդայք (Ն. տ. 686 1201 թ., Երզնկա), պշոգիքն* վարէ *(Մխ. Հեր. 24ա), Գրիգորիսի մոտ՝ երկայն*>յերկաճf, *փայծաղն,*>փածաղ, *վայթել*>

---

[1] *Այդ բանը նկատելի է նաև գրավոր աղբյուրներում, երբ, օրինակ,* այ>ա *հնչյունափոխության դեպքեր են արձանագրվում այնպիսի վայրերում, որտեղ այդ երկբարբառի փոփոխության հիմնական օրինաչափությունը* այ>է *անցումն է: Օրինակ, Վայոց ձորի գրավոր հուշարձանները հիմնականում արձանագրում են* այ>է *հնչյունափոխությունը, բայց այստեղ երբեմն հանդիպում են նաև* այ>ա *փոփոխության օրինակներ, այդ թվում նաև այս կարգի անցման հնագույն վկայությունը 931 թվականից՝* կարղաf<կարդայf *(ԴՀՎ 3-րդ պր., Վայոց ձոր, էջ 14):*

վաքել, լայնք>լանf, վայր>վar, այս>աս և այլն։ Ամիրդովլաթ Ամասիացու ստեղծագործություններում (այդ թվում՝ հատկապես նրա «Օգուտ բժշկության» հեղինակային ձեռագրում), որտեղ այ>ա հնչյունափոխությունը վկայվում է բազմաթիվ օրինակներով. այլ>ալ, այծ>ած, այն>ան, այնր>այնոr>անոr, այս>աս, այսr>այսոr>ասոr, այր(իկ)>արիկ, երկայն>յերկան, երկայնութին>յերկանութին, ծայր>ծar, ձայն>ձան, մայr>մar, վայr>վar, վայrել>վarել և այլն, և այլն։ Այն հանգամանքը, որ նշված սկզբնաղբյուրներում բերված բառերը, բացի ավանդական գրության ձևերից, ունեն միայն և միայն վերը նշված հնչյունափոխությամբ առաջացած ձևեր (բայց ոչ երբեք այ>է փոփոխությամբ), խոսում է հենց այն մասին, որ այ>ա փոփոխությունը օրինաչափ ու տիպական էր այս վայրերի հայերենների համար։

Այ>է հնչյունափոխությունն արձանագրվում է նույն ժամանակներում։ Թեև նրա վկայությունները չեն կապվում առանձին հեղինակների կամ առանձին ստեղծագործությունների հետ, բայց վկայվում են այնպիսի գրավոր աղբյուրներում, որոնք որոշակիորեն տեղայնացված են։ Այ>է հնչյունափոխության համար փաստեր են տալիս հատկապես Վասպուրականի, Սյունիքի, Արարատյան գավառի, Վայոց ձորի և Արևելյան Հայաստանի այլ վայրերում ընդօրինակված ձեռագրերը, նրանց հիշատակարանները և վիմական արձանագրությունները։ Ըստ որում, այս փոփոխությունն այս վայրերի լեզվի համար այնքան տիպական է, որ վկայվում է բազմաթիվ օրինակներով։ Մյուս կողմից՝ հնչյունափոխության օրինաչափ լինելը հաստատվում է նաև նրանով, որ այդ նույն վայրերին այդ օրինաչափությունը հատուկ է նաև այսօր՝ այսօրվա բարբառներին։ Բերենք օրինակներ. հերենիf<հայրենիք (ԴՀՎ 2, Հաղբատ, 52, 1265 թ.), Գնեցի զԱստծի էգին (>այգին)... ով զէգին հիրատանէն հանէ (ԿՂ Սան. 162, 1275 թ.) իմ հերենի էգոյն (Ն. տ. 166 1291 թ.), ... հալալ գանձով գնեցի ի հերենէտիրաց (ԴՀՎ 1, Անի, 63, 1215 թ.), զմեր հերնի (<հայրենի) գեղն զԱկող ի վաննս սբ ուխտ տվաք հերենիf (ԴՀՎ 3, Վայոց ձոր, 51, 1259 թ.) կարդայր>կարդէf (Ն. տ. 46, 1200 թ., 37, 1283 թ., 30, 1341 թ., 25, 1305 թ. և այլն), ոչ որդի ունէր ոչ աղբէr<եղբայր (Ն. տ. 59, 1296 թ.,), որ կարդէf կամ օրինակէք (ԺԴ ՀՁՀ, 70, 1310 թ. Վան), ցանկէr (<ցանկայր) փրկագործ սուրբ աւետարանիս (ԺԴ ՀՁՀ 207, 1223 թ., Սյունիք), շատ աշխատեցայ, էնոr (<այնոր<այնր) համար որ կէս բանին աւելի գեռ ի տեղն էր (Ն. տ. 522, 1377 թ., Աղթամար), մեք էլ (<այլ) գերեզման հատաք (ԴՀՎ 3, Վայոց ձոր, 144, 1267 թ.), զԳազարափոսին էգին (Ն. տ. 56, 1346 թ.), տուաք ի մեր հալալ հայրենեաց... էգին (Ն. տ. 81, 1348 թ.) յիշեցէք զտէfr (<տայգր) իմ (ԺԵ ՀՁՀ II, 128, 1459 թ., Աղթամար), զհայր իմ զԴաւիթ և զՄելիք՝ իմ մէr (<մայր) (ԺԵ ՀՁՀ I, 38, 1403 թ., Առաքել Սյունեցի), երեք հարիւր ու քսան տունքս, որ

ի սմա կէր (<կայր) (ն. տ. նույնի), Հայրապետ>Հէրապէտ (ն. տ. 73, 1407 թ., Գր. Տաթևացի), էլ (>այլ) մարդոյ հաղ ու դաւ ... չկայ (ն. տ. 109, 1410 թ., Ստ. Թավրիժեցի), գեղնցիքն էլ կու ցանկան, թէ զմեզ էլ մասն լինի յայս գիրքս (ն. տ. 150—151, 1413 թ., Մոկաց երկիր), Հայրապետ<Խէրպէտ (ժե հձհ II, 70, 1456 թ., Բաղեշ), հէրպէտութիւն (ն. տ. 87, 1457 թ., Յիպնա վանք), եւ ձէն (<ձայն) ընդաւ քաղաքս (ն. տ. 169, 1462 թ., Տփխիս) և այլն, և այլն։

Այս վայրերի լեզվի համար տիպական է նաև այ>է հնչյունափոխությունը բառավերջում, երբ ք հոդակերտի կամ հոդերի հավելմամբ ըստեղծվում է փակ վանկ։ Այսպես. եթե արևմտյան տարբերակների համար, ասենք, տղայ<տղա բառի հոգնակին կարող է լինել տղաք, որոշյալ առումով ձևը՝ տղան, ապա արևելյան այն բարբառներում, ուր առկա է այ>է հնչյունափոխությունը, կլինի տղէք, տղէն, մի երևույթ, որ հարատևել է մինչև մեր օրերը և տիպական է նույն վայրերի այսօրվա բարբառների համար։ Բերենք մի քանի օրինակներ սկզբնաղբյուրներից. «յիշեցէք և զեղբայրս մեր զԹումայ կրաւնաւոր... մինչ Թումէս զմեզ աստ հանդոյց» (ժԴ հձհ 114, 1315 թ., Լիմ կղզի), ողորմագութ պարոնէքս (ն. տ. 140, 1318 թ., Եղիվարդ), մեռաւ Թումէն (ժե հձհ I, 114, 1410 թ.), գեղո տղէքն գերի թափեցին (ԴՀՎ 3, Վայոց ձոր, 146, 1367 թ.), միաբանեցան ծերք և տղէք (Ձեռ. 8030, 1341 թ., 59 բ, Տէրտեր Երևանցի), քհնէք (<քահանայք)... տանտիկնէք (ն. տ. 70ա) և այլն։ Նույնիսկ կան օրինակներ, երբ այ>է հնչյունափոխությունը ընդգրկել է ոչ երկբարբառային գիրքերը. ինչպես օրինակ՝ տային>տէին, երթային>երթէին և այլն, որոնք հանդիպում են, օրինակ, վերը նշված 8030 ձեռագրում, Վայոց ձորի գրավոր աղբյուրներում և այլն։

Այն հանգամանքը, որ այ>ա և այ>է հնչյունափոխությամբ բառաձևերը հանդիպում են զուգահեռաբար նույն ժամանակներում (բայց տարբեր սկզբնաղբյուրներում), ինչպես՝ աղբար||աղբէր, մար||մէր, հարպետ||հերպետ||խերպետ, կարդաք||կարդէք, ալ||էլ, ան||էն, անոր||էնոր, ձան||ձէն և այլն, և որոշակիորեն տեղայնանում են, դա ինքնին նշանակում է, որ այստեղ մենք գործ ունենք բարբառային տարբեր օրինաչափությունների հետ։ Չնայած այն բանին, որ վկայությունները առատորեն արձանագրվում են միայն XII—XIII դարերից սկսած, բայց դա երբեք էլ չի կարող նշանակել, թե այդ փոփոխությունները վկայության շրջանի ծնունդ են։ Վերը բերված Թումայն>Թումէն, տղայք>տղէք, քահանայք>քահանէք և նման ձևերը ապացույց են այն բանի, որ այ>է հնչյունափոխությունը հին երևույթ է։ Նկատենք, որ այ-ով վերջացող բազմավանկ բառերում այս նույն ժամանակներում յ-ն համր տառ էր (չէր արտասանվում), ուստի և տղայ, քահանայ, Թումայ (<Թովմայ) բառերը արտասանվում էին տղա, քահանա, Թումա: Քանի որ այս և նման

օրինակներում բառավերջում հին այ-ի դիմաց է գրությունը ոչ թե ա>է հնչյունափոխության, այլ երկբարբառի փոփոխության արդյունք է, ուստի և պետք է ընդունել, որ այ>է հնչյունափոխությունը ավելի հին երևույթ է, քան բաց վանկում բառավերջի յ-ի անկումը տղայ, ֆանանայ, Թովմայ և նման ձևերում։ Այլ կերպ ասած, այս գրքում այ>է հնչյունափոխությունը կատարվել է դեռևս այն ժամանակներում, երբ այ-ը փակ վանկում ուներ երկբարբառի արժեք և, որ ավելի կարևոր է, բառավերջի բաց վանկում նրա յ բաղադրիչը դեռևս չէր ընկել։ Իսկ եթե հաստատված է, որ այս գրքում յ-ի անկման առաջին վկայությունները հասնում են մինչև VI դարը, ապա այ>է հնչյունափոխությունը ավելի ուշ ձևավորված չի կարող լինել, քան յ-ի բառավերջյան անկումը։

Այ երկբարբառի պատմական փոփոխությունը կապված չէ շեշտի և նրա բնույթի փոփոխության հետ, քանի որ այն շեշտազրկությունից չէր հնչյունափոխվում և կարող էր հանդես գալ ինչպես շեշտի տակ, այնպես էլ նախաշեշտ վանկերում։ Այստեղ բնորոշ է հենց այն, որ այ<ա և այ>է անցումները գիտելի են բոլոր պայմաններում ու դիրքերում։

Այ երկբարբառի այս երկու հիմնական փոփոխություններից դուրս կան նաև հնչյունափոխության մասնակի այլ դեպքեր, որոնց մի մասը արդեն կատարված փոփոխությունների հետագա զարգացումն է, մյուս մասը նախանշում է փոփոխությունների մի այլ ընթացք, որը սակայն զարգացման ու տարածման հեռանկարներ չունենալով՝ սահմանափակվել է առանձին խոսվածքներում կամ դրանցում էլ՝ առանձին բառերում։ Վերը, օրինակ, այ>է հնչյունափոխության համար բերված վկայություններում կար այգի>էգի բառաձևը, որի մեջ կատարված փոփոխությունը միանգամայն օրինաչափ է այն բարբառների ու խոսվածքների համար, որտեղ այ-ով բառերը ենթարկվում են այ<է փոփոխությանը։ Սակայն այդ նույն բարբառների մի մասում, այդ նույն այգի բառի դիմաց ունենք նաև իգի (Մեղրի, Կարճևան և այլն), իքի (Արարատյան բարբառի որոշ խոսվածքներում), որոնք փաստորեն էգի ձևից զարգացած ձևեր են։ Այս նոր փոփոխությունը կարելի է բացատրել կամ ետին շարքի ձայնավորների՝ դեպի առաջին շարքը անցնելու ձգտման ընդհանուր միտումով (ա>ա̈>է>ի), կամ պարզապես ետընթաց առնմանությամբ, երբ էգի բառաձևի մեջ բառասկզբի է-ն փոխվել է ի-ի՝ բառավերջի ձայնավորի ազդեցությամբ (էգի>իգի)։ Թերևս ավելի հավանական է երկրորդ ուղին։ Այդ փոփոխության վերաբերյալ վկայություններ արձանագրվում են Արևելյան Հայաստանի տերիտորիայում ստեղծված գրավոր աղբյուրներում՝ սկսած XIII դարից։ Օրինակ՝ ... տնկեցի ... իգիս վայելուչս (ԴՀՎ 2, Սյունիք, Հալիձոր, 52, 1265 թ.), Ես Սիմիանս տվի զմեր հայրենի իգին (ԴՀՎ 3, Վայոց ձոր, Թանատի վանք, 76, 1309 թ.), Եւ տվիք զմեր գնած իգին Սխտորալեզ (Ն. տ. 82, 1353 թ.)։

Մատենագրության մեջ վկայություններ կան նաև բարբառային այնպիսի բառաձևերի վերաբերյալ, որոնց մեջ շեշտից առաջ գտնվող այ երկբարբառը սղվել կամ փոխվել է ը-ի։ Նման օրինակներ են հետևյալները. լաւ ըստայ (<այստեղ) ամաչել, քան յահեղ ատեանն հրապարակի (ԺԵ ՀՁՀ, I, 151, 1413 թ., Մոկաց երկիր), ըստեղս հասայ (ԺԵ ՀՁՀ, II, 360, 1474 թ., Վայոց ձոր), Ես Դաւիթ՝ իմ վանացս եղբաւմս վկայ եմ այս գրոյս (Գ. Հովս. ՀՁ, 251, 1067 թ.), Ես Տիրապետ Հրպետի որդիս վկայ եմ (ԺԴ ՀՁՀ, 330, 1341 թ.)։ Այս բառաձևերը հետաքրքիր են նրանով, որ նրանցում շեշտից առաջ գտնվող այ-ի հնչյունափոխությունը կրկնում է այն, ինչ արձանագրվում է և այսօրվա բարբառներում։

Մատենագրության մեջ տեղեկություններ կան նաև այ>ո հնչյունափոխության մասնակի դրսևորումների վերաբերյալ։ Ժամանակակից բարբառներում ևս այս փոփոխությունը հանդես է գալիս առանձին բառերում։ Թերևս հենց այդ բառերն են, որ ավանդված են հնից։ Թե դրանցում հնչյունափոխական ինչ հիմքի վրա է առաջացել այ>ո փոփոխությունը, հայտնի չէ։ Կարելի է միայն ենթադրել, որ դրանք բարբառային հին գոյացություններ են, որոնք, սակայն, մեզ ավանդվել են միջին հայերենի շրջանից։ Իսկապես. այնպիսի հնչյունափոխական երևույթ, ինչպիսին է այ~ո համապատասխանությունը մի քանի բառերում, որոնք փաստորեն շեղվում են այ>ա և այ>է հիմնական օրինաչափություններից, այլ կերպ չեն կարող բացատրվել, քան ենթադրելով բարբառային մի այլ հիմք։ Ահա այդ բառերը. Ողորմեա Դշխունին և Պոծաունին (<Պայծառ) (Գ. Հովս. ՀՁ, 820—821, 1222 թ., Սեբաստիա), Նա թէ գայ յայն անուանեալ պոմանն ... բայց թէ չգայ ի դարպասն և ոչ ի պոմանն (Անս. 13. այս աշխատության մեջ այս բառը առհասարակ օգտագործված է այս ձևով շատ անգամ. տե՛ս էջք 15, 47, 59, 71, 77, 81 և այլն), ինչպես նաև սրանից կազմված պոմնըուխտ<պայմանաթուղթ (Անս. 75) բարդության մեջ։

Այսպիսով, եթե նկատի ունենանք այ երկբարբառի հնչյունափոխության բոլոր դեպքերը, ապա դրանց մեջ, որպես առավել ընդհանրական օրինաչափություններ արձանագրվում են այ>ա և այ>է անցումները։ Ըստ որում այդ անցումները օրինաչափ ու ընդհանրական են համարվում ոչ միայն ըստ մատենագրական, այլև ըստ ժամանակակից հայ բարբառների տվյալների։

Միջին գրական հայերենում (հատկապես նրա կիլիկյան տարբերակում) այ>ա հնչյունափոխությունը գրական լեզվի նորմայի աստիճանի չի բարձրանում, բայց նրանում հավասարապես օգտագործվում են նաև հնչյունափոխված ձևեր։ Դա նրանից է, որ միջին գրական հայերենը նորմավորված լեզու չէ։

Մի քիչ այլ է պատկերը նոր գրական հայերենի երկու տարբերակնե-

րում։ Արևելյան գրական հայերենը առավելապես ավանդապահ է։ Այն բացարձակապես մերժում է այ>է հնչյունափոխություն ունեցող բառերը՝ որպես բարբառայնություններ։ Գիտական, հրապարակախոսական, վարչական, պաշտոնական և այլ կարգի բարձր ոճերում բացառվում են հնչյունափոխված ժողովրդական ձևերի կիրառությունները։ Այստեղ ամենուրեք հին այ-ով բառերը հանդես են գալիս իրենց երկհնչյունային այ արժեքով, որը և հանդիսանում է գրական արևելահայերենի ուղղախոսական նորման։ Կան նաև եզակի բացառություններ, ինչպես օրինակ, հին տայգր բառի դիմաց տեգր հնչյունափոխված ձևը, կամ՝ էլի, էլ բառաձևերը, որոնք գրական լեզվի մեջ են մտել ժողովրդախոսակցական լեզվից՝ իրենց հիմքում ունենալով արևելահայ բարբառների հնչյունափոխական օրինաչափությունը։

Գրական լեզվի միջին ոճերում, հատկապես գեղարվեստական գրականության մեջ և մասնավորապես՝ արձակում, ավելի շատ են ժողովրդական լեզվից վերցվող հնչյունափոխված ձևերը։ Այստեղ հատկապես այս, այդ, այն դերանունների էս, էդ, էն և դրանցից կազմվող բարդ ու ածանցավոր ձևերը որոշակի տարածում ունեն գեղարվեստական արձակի ոճերում։ Որոշ հեղինակներ այդ ձևերի հետ միասին օգտագործում են նաև ներ, մեր, աղբեր և նման այլ հնչյունափոխված ժողովրդական ձևեր, նպատակ ունենալով իրենց ստեղծագործություններում դրանց միջոցով տիպականացնել վիպական հերոսներին։ Այլ հեղինակներ էլ այդ կարգի բառերը օգտագործում են՝ իրենց լեզվին ժողովրդականի կերպարանք տալու նպատակով։ Սակայն դրանք, այնուամենայնիվ, դիտվում են որպես բարբառայնության արտահայտություններ և մերժվում գրական լեզվի կողմից։

Արևելահայ գրական լեզվի բանավոր դրսևորումներում դրությունը նույնն է գիտական, հրապարակախոսական ու պաշտոնական այլ կարգի ոճերում, սակայն սովորական՝ ընտանեկան ու կենցաղային հաղորդակցման, ինտիմ հարաբերությունների մեջ անհամեմատ ավելի շատ են ժողովրդախոսակցական լեզվի տարրերը, այդ թվում նաև այ>է հնչյունափոխությամբ օգտագործվող բառերը։ Այստեղ, իհարկե, առաջին հերթին այս, այդ, այն դերանունների և նրանցով կազմված ժողովրդական ձևերի առատությունն է (էս, էդ, էն, էսպես, էդպես, էնպես, էսքան, էդքան, էնքան, էսօր, էգուց և այլն)։

Արևմտահայ գրական լեզվում դրությունը մի քիչ այլ է։ Այստեղ ժողովրդական լեզվից թափանցած ձևերը ավելի առատ են։ Եվ առհասարակ, այս տեսակետից, արևմտահայ գրական լեզուն ավելի մոտ է կանգնած ժողովրդական լեզվի ակունքներին, քան արևելահայերենը։ Այստեղ աչքի է ընկնում հետևյալ երևույթը։ Եթե գրական լեզուն այնուամենայնիվ ձգտում ունի հին գրական հայերենի բառաձևերի դրությանը համապատաս-

խան պահպանել նաև նրանց արտասանությունը (խոսքը այստեղ, իհարկե, այ երկբարբառով բառերի մասին է), ապա ժողովրդական լեզվից մուտք գործած որոշ հնչյունափոխված ձևեր մնում են նույնությամբ և շատ հաճախ ստեղծվում է նույն արմատական ձևի տարբեր արտահայտություններ։ Այսպես, օրինակ. գրական լեզուն առավելապես հակում ունի օգտագործելու այս, այդ, այն դերանունները (թեև դրանց զուգահեռ գործածում է նաև աս, ատ, ան), սակայն սրանց հոլովական ձևերում պահպանում է հնչյունափոխված անոր, անով, ադոր‖ատոր, ասոր ձևերը։ Հնչյունափոխված ձևերը պահպանվում են նաև այն բարդություններում, որոնք ժողովրդախոսակցական լեզվի կազմություններ են և որպես այդպիսիք գրական լեզվում գործածվում են որպես նրա անբաժանելի տարրերը։ Այդպես են, օրինակ՝ ասդին, անդին և նման բառերը, որոնք կազմված են աս, ան դերանուններից և դի(ն) «կողմ» բառից։ Կան նաև հնչյունափոխված այլ ձևեր, ինչպես՝ վայր>վար, եղբայր>աղբար և այլն։ Արևմտահայ գրական լեզվում ևս այլ-ի մակբայական կիրառության ժամանակ օգտագործվում է ժողովրդախոսակցական լեզվի հնչյունափոխված ալ ձևը։

Ինչպես կարելի է նկատել, արևմտահայ գրական լեզվի հնչյունափոխված այդ ձևերը գալիս են արևմտահայ բարբառներից, որոնց մեջ օրինաչափ էր այ>ա փոփոխությունը, այն դեպքում, երբ արևելահայ գրական հայերենում գործածվող ժողովրդախոսակցական բառաձևերը ունեն այ>է փոփոխությունը, որը իր հերթին արևելահայ բարբառներին հատուկ օրինաչափություն էր։ Այս մի ավելորդ անգամ ցույց է տալիս մեր ժամանակակից երկու գրական լեզուների երկու տարբեր բարբառային հիմքերի վրա խարսխված լինելը։

ԵԱ-Ի ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մենք վերը արդեն ասել ենք, որ եա երկբարբառը դասական հայերենում հանդես էր գալիս շեշտի տակ և որ շեշտազրկությունից հնչյունափոխվում էր՝ վերածվելով ե պարզ ձայնավորի։ Եա երկբարբառի պատմական զարգացումը ևս գնում է դեպի մենաբարբառացում։ Այդ երևում է մի կողմից՝ պատմական շրջանի գրական հուշարձանների տվյալներից, մյուս կողմից՝ ժամանակակից հայ բարբառների համեմատական ուսումնասիրությունից։ Այդ համեմատությունը ցույց է տալիս, որ այն բառերը, որոնք դասական հայերենում ունեին եա երկբարբառը, ժամանակակից բարբառներում այդ եա-ի դիմաց ունեն պարզ ձայնավոր։ Բատ որում, ինչպես այդ արձանագրվեց այ երկբարբառի պատմական զարգացման քննության ժամանակ, այստեղ ևս եա-ի զարգացումը ամբողջ հայերենում նույնական չէ։ Նկատելի է, որ եա>ե փոփոխությանը զուգահեռ գործել է նաև եա>ա փոփոխությունը։

Հնչյունափոխական այս երկու երևույթներից ավելի կենսունակ է եղել եա>ե օրինաչափությունը։ Այն այժմ էլ գործում է բարբառների մի մեծ մասում և մատենագրական աղբյուրներում էլ առավել շատ վկայություններ կան այս հնչյունափոխության համար։ Ժամանակագրորեն ևս եա>ե հնչյունափոխությունը հին է։ Այն, ինչպես արդեն ասվել է, վկայվում է դասական հայերենի շրջանում (ընկենուլ բայի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի ընկէց ձևում)։

Հետագա գրավոր աղբյուրներից հնագույնը համարվում է Բագարանի եկեղեցու շինարարության 631 թվականի արձանագրության մեջ ամսեան բառաձևի փոխարեն ամսեն գրությունը[2]։ Հայտնի է, սակայն, որ ակադ. Հովս. Օրբելին այս արձանագրության հավաստիության նկատմամբ թերահավատ էր և կարծում էր, թե այն մեզ հասել է աղավաղումներով։ Ըստ որում այդ ենթադրությունն էլ անում էր ուղղագրական ու քերականական շեղումների հիման վրա, այդ թվում նաև ամսեն բառաձևի, որի մեջ ա-ի բաց թողումը վերագրում էր գրողի (գրչի) անփութությանը[3]։

Սակայն անկախ այս վկայությունից՝ առաջին իսկ սկզբնագիր ձեռագրերը և նրանց ժամանակակից վիմական արձանագրությունները արդեն բավարար տեղեկություններ են տալիս եա>ե հնչյունափոխության մասին։ Ըստ որում այդ հնչյունափոխությունը հետևողականորեն արձանագրվում է բոլոր այն դիրքերում, որտեղ եա-ն հանդես է գալիս բառական ուղիղ կամ թեքված ձևերում, քերականական ձևույթներում ու թեքույթներում։ Այս հանգամանքը ևս խոսում է այն մասին, որ եա երկբարբառի մենաբարբառացման պրոցեսը սկսվել էր վաղուց, որ կարողացել էր արդեն XI—XII դարերում ընդգրկել նրա կիրառության բոլոր ոլորտները։

Համառոտակի անդրադառնանք այդ փոփոխության կոնկրետ դրսևորումներին։

ա) Հնչյունափոխությունը տեղի է ունեցել բառային ուղիղ ձևերում, այսպես. ցորեան>ցորէն (Լևոն Գ-ի 1288 թ. դաշնագրում), ոչ էի տեղեկ (<տեղեակ) բայից և բառից (Գ. Հովս. Հձ 680, 1201 թ.), գրեցաւ մատենս (<մատեանս) այս (ԺԴ ՀձՀ 20, 1303 թ.), նման է իւր շտերն ի կորեկ (<կորեակ) (Գրիգ. 35, 40 և այլն), մի սիրէք զաշխարհս ու զկենֆըս (<զկեանֆս) (Ձեռ. 8029, 1376 թ.), մուտ ի սենեկ (<սենեակ) քո (Ձեռ. 8030, 1341 թ.), վա՜յ ինձ, որդեկ (<որդեակ) իմ (Ն. տ.) և այլն։

բ) Նույն հնչյունափոխական երևույթը դիտելի է նաև եար‖նեար հոգնակերտի մեջ, որը միջնադարյան բնագրերում օրինաչափորեն հան-

---

[2] Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 205։

[3] *И. А. Орбели*, Избранные труды, Ереван, 1963, стр. 393.

դես է գալիս եր||ներ ձևով։ Ըստ որում, եթե ետդասական հայերենում այս հոգնակերտով հանդես եկող հատ ու կենտ բառերը, այնուամենայնիվ, պահպանում են երկբարբառի գրությունը (օր. ճողեար՝ ԴՀՎ 1, Անի, 44, 1036 թ.), ապա միջին հայերենի շրջանում այն բացառապես հանդես է գալիս հնչյունափոխված ձևով, ինչպես՝ ...շինեցաւ գունոս եւ բրջներս (ԴՀՎ 1, Անի, 7, 1206 թ.), Հաղբատա գեղերն ... այս գեղերս (ԿԴ Հաղբ. 168—169, 1210 թ.), խաչորկանն ճողերն... բազում ճողեր գնած... բոլոր տներ (ԴՀՎ 1, Անի, 63, 1215 թ.), երկու դաս որբերն (Գ. Հովս. հձ 857, 1227 թ.), համբարձման ատեր (ն. տ. 873, 1231 թ.) զբազում քաղաքս և զբերդերս էառ (ն. տ. 906, 1236 թ.), եկին ամէն շներն (ԺԴ հձհ 276, 1335 թ.), յամէն տաւներս (Սմբ. դատ. 13), ամէն մարդոյ գետներ (ն. տ. 16), զայրուկնոջ բաներն (ն. տ. 20), ամենայն վաներն (Սմբ. Տար. 14), յամուր բերդերս (ն. տ. 26), առաքեաց առ կոմսերն (ն. տ. 154), զամենայն ճայերն (ն. տ. 171)։ Այսպես նաև Մխ. Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» աշխատության հնագույն ձեռագրում (№ 416, ընդօրինակված 1279 թ.)՝ ոտներ, դեղեր, ճիւանդութեններ, կաքներ, նիւքեր և այլն. Անսիզք-ում՝ եորտեր, լներ, ատեր, որբեր, իրաւներ, ծայրեր և այլն։ Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդո...» աշխատության մեջ՝ ներեր, զաներ, լարեր, շտեր, ազգեր, խոցեր, մաշկեր, կոպեր, մաղձեր, ծնկներ, աչեր, կոներ և այլն։ Առհասարակ միջին հայերենյան բնագրերում եր-ի գործածությունը միավանկ բառերի հոգնակիում ընդհանուր օրինաչափություն է։

գ) եա > ե հնչյունափոխությունն արտահայտվում է նաև քերականական ձևերում և այնտեղ, որտեղ գոյականի կամ դերանվան հոլովական վերջավորության մեջ եղել է եա, հնչյունափոխվել է ե-ի։ Այստեղ հատկապես նշելի է դերանունների, տոհմանունների (ազգանունների) և վերացական գոյականների սեռական-տրական հոլովներում եա > ե հնչյունափոխության օրինաչափությունը։ Միջնադարյան սկզբնաղբյուրները բավական առատ փաստեր են տալիս նման փոփոխությունների համար։ Այսպես, օրինակ՝ իւրեանց, իւրեան ձևերի դիմաց արձանագրվում են իրենց, իրեն ձևերը։ Նույն օրինաչափությամբ ունենք ամենեսեան > ամենեսեն, միմեանց > միմենց: Հայրենիք բառի սեռական-տրական ճայրենեացի դիմաց՝ ճայրենեց (Անս. 19, 23, 45, 47, 51, 53 և այլն), ճերենեց (ԴՀՎ 3, Վայոց ձոր, 80, 1336 թ.)։ Այսպես նաև գալստեան > գալստեն (ն. տ. Վայոց ձոր, 76, 1307 թ.), ճախնեաց > ճախնեց (ԿԴ Սան. 118, 1271 թ.) և այլն։ Այս ձևերից այժմ գրական լեզուներում կենդանի են մնացել միայն իրեն, իրենց ձևերը։ Ըստ որում դրանք ավելի հարազատ են արևմտահայ գրական լեզվին։ Արևելահայերենում իրեն, իրենց ձևերը արմատացել են վերջին հիսնամյակի ընթացքում։ Այստեղ ավելի

գերադասելի էին իրան և իրանց ձևերը՝ առաջացած եա>ա հնչյունափոխությամբ:

Ազգ ու տոհմանունների սեռական-տրական -եաց||-եանց վերջավորության մեջ ևս ունենք եա>ե փոփոխությունը: Միջնադարում այս ձևերը շատ հաճախական են և XIII—XIV դարերում վկայվում են բազմաթիվ օրինակներով՝ ամենատարբեր սկզբնաղբյուրներում: Այսպես՝ Հոփսիմենց (ԿՂ Սան. 158, 1289 թ.), ...Սմբատուրենց... Հոնենց... Գաւռոխոննեց... Մշակունեց... պապենց... Բեխենց (ԴՀՎ 1, Անի, 63, Տիգրան Հոնենցի եկեղեցու 1215 թ. արձանագրության մեջ), Աւրպէլենց (ԴՀՎ 3, Վայոց ձոր, 55, 1317 թ.), Վարդապետենց (Ն. տ. 56, 1318 թ.), զՄազմանենց և զԱւանշենց (Ն. տ. 81, 1348 թ.) և այլն, և այլն: Սրանք նույնպես ժողովրդական խոսակցական լեզվից անցնելով գրական լեզվին՝ այժմ գրական հայերենում ընդունված ու նորմատիվ ձևեր են: Վերջապես եա>ե փոփոխություն ունի նաև -ութիւն ածանց ունեցող վերացական գոյականների սեռական-տրական վերջավորությունը, ինչպես՝ խոշորութեան>խոշորութեն, հայրապետութեան>հայրապետութեն, ուրախութեան>ուրախութեն և այլն, և այլն:

դ) Եա>ե հնչյունափոխությունը հետևողականորեն կատարվել է նաև հին հայերենի անցյալ դերբայում: Ըստ որում հնչյունափոխությունը առկա է դերբայի բոլոր կիրառություններում, ինչպես գոյականական, ածականական ու մակբայական, այնպես և բայական: Այսպես՝ տվի ի սուրբ առաքէլս (<առաքեալս) (ԴՀՎ 1, Անի, 13, 1008 թ.), ապաւինել (<ապաւինեալ) յողորմութիւնն Այ (Ն. տ. 43, 1050 թ.), գոռոզ ազգն իսմայէլի գլխակորել (<գլխակորեալ) ընկրկեցան... եւ հետամուտ եղել (<եղեալ) մինչև ի մուտս արևու (ԺԴ ՀձՀ 24, 1304 թ.) դարձել (<դարձեալ) ասէ (8030, 68ա, 1341 թ.), վասն ծովացել (<ծովացեալ) մեղաց մերոց (ԴՎՀ 3, Վայոց ձոր, 145, 1367 թ.)... շինել էր (ԿՂ Սան. 145 ԺԳ դ.), զի քահանայ անունս եղել, զահագին աւրն չեմ յիշել, ոչ տէր մեղայ եմ ասացել, զերթ խող ի տիղմ եմ թաւալել (ԺԴ ՀձՀ 22, 1304 թ.), զգիրքս է կապել (Ն. տ. 34, 1305 թ.), աւգնել են ի սուրբ աւետարանս (Ն. տ. 50, 1307 թ.), հնազանդել էին (8030, 38բ, 1341 թ.), զարմացել եմ (Ն. տ. 40բ), զիւր հնկակն տվել է (Սմբ. Դատ. 13), առաքեալքն են սահմանել (Ն. տ. 19), ասցել են (Անս. 19), կալել եմ... մեռել է (Ն. տ. 23), շատ մարդ է մեռել (Գրիգ. 50), ջուր էր բերել ի վանքս ու ի յանտիրութենէ խաղտել էր ու կտրել (ԴՀՎ 1, Անի, 64, 1310 թ.), ի փորացաւութեան դուռըն յիշել եմ (Մխ. Հեր. 30բ) և այլն, և այլն:

ե) Այսպես է նաև ե խոնարհման բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի -եաց վերջավորության մեջ (-եաց<-եց): Այս փոփոխությունը միջին հայերենի շրջանում ամենուրեք կատարված իրողություն էր, որը արտահայտվում է նաև գրությամբ, թեև սրանց հետ զուգահե-

ռաբար օգտագործվում են նաև հին ձևերը։ Այնուամենայնիվ, հնչյունափոխված ձևերը իրենց հաճախականությամբ գերակշռում են։ Բերենք մի քանի օրինակներ. **աւետեց** (<**աւետեաց**) *տաւնն (ԿՂ Սան. 116, 1181 թ.)*, **գնեց** (<**գնեաց**) *զայս սուրբ աւետարանս (Գ. Հովս. հձ 569, 1193 թ.)*, **սպասաւորեց** (<**սպասաւորեաց**) *մեզ (Ն. տ. 718, 1204 թ.)*, **ընծայատրեց** *(Ն. տ. 716, 1204 թ.)* **ստեղծեց... պատուեց** *(8029, 233բ)*, **հրամայեց, յաւրինեց, խաբեց, հրապուրեց** *(Ն. տ. 284 ա)*, **ծաղկեց** *զաւետարանս և* **գլխագրեց** *(ԺԴ հձհ 28, 1304 թ.)*, **փրկեց** *(Ն. տ.)*, **աւերեց** *(Ն. տ. 121, 1316 թ.)*, **աւգնեց, յղրկեց, գնեց, լսեց** *(Ն. տ.)*, **ուզեց** *(Անս. 35)*, **հաստատեց** *Ա աւր պատարագ (ԴՀՎ 3, Վայոց ձոր, 37, 1292 թ.) և այլն, և այլն։*

գ) **եա**<**ե** *հնչյունափոխություն կատարվել է նաև* **ե** *խոնարհման բայերի բուն հրամայականի եզակի ձևերում, թեև այս դեպքում* **եա**-*ն գտնվում է բառավերջի բաց վանկում։ Գրությամբ այդ հնչյունափոխությունն արտահայտվում է ոչ թե* **ե**-*ով, այլ՝* **է**-*ով։ Գրության այս ձևը, անշուշտ, հնչյունական արժեք չունի, այլ զուտ ուղղագրական է։ Ահա մի շարք օրինակներ. որ կարդաք տ̅ր* **ողորմէ՛** (<**ողորմեա**) *ասացէք (ԴՀՎ 3, Վայոց ձոր, 14, 931 թ.), ընդ իրար* **խառնէ՛** *(Մխ. Հեր. 32ա), առ կարոսի ունդ, աղա և* **մաղէ՛** *(Ն. տ. 33ա), զմարմինն* **սրբէ** (<**սրբե՛ա**) *խիարի շամբարով (Ն. տ. 39բ), զայտ զամէնտ* **հաւաքէ՛** *(Ն. տ. 43բ), գնա գլուխ* **գնէ** *(ԺԴ հձհ 275, 1335 թ.),* **սիրէ** *դու զքո կնիկն* (8029, 227ա) *և այլն։*

Հայերենի զբաղեցրած համարյա այն նույն տարածքում, որտեղ պատմական շրջանում կատարվել էր **եա>ե** *հնչյունափոխությունը, այսօր* **եա**-*ի դիմաց արձանագրվում են ոչ միայն* **է**, *այլև* **ի** *պարզ ձայնավոր և երկբարբառ* **իէ(ե)**: *Ըստ որում դրանք այն բարբառներն են, որոնց մեջ այդ նույն հնչյունափոխությունը կատարվել է* **ե** *ձայնավորի հետ։ Այս նշանակում է, որ հայերենի սույն տարբերակներում այսօր* **եա**-*ի դիմաց գրանցվող* **ի, իէ** *համապատասխանությունները գալիս են ոչ թե անմիջապես* **եա** *երկբարբառից, այլ նրանից հնչյունափոխված* **ե**-*ից։ Այլ կերպ ասած՝ պատմական շրջանում եղել է մի էտապ, երբ* **եա**-*ից հնչյունափոխված* **ե**-*ն և հին* **ե**-*ն համընթաց են եկել հնչյունական նույն որակով* (e) *և այդ* **ե** (e)-*ն է, որ հետագայում ենթարկվել է հնչյունափոխության՝ փոխվելով* **ի**-*ի կամ վերածվելով երկբարբառային* **իէ**-*ի։ Այսօր էլ մեր մի շարք բարբառներ իրենց մեջ պահում են այդ անցումների ընդհանուր պատկերը։*

Մենք վերը նշեցինք, որ **եա** *երկբարբառի հնչյունափոխությունը ամբողջ հայերենում միասնական չէր և որ* **եա>ե** *անցումը* **եա** *երկբարբառի մենաբարբառացման միակ ուղին չէր։ Նշվեց նաև, որ* **եա>ե** *անցմանը զուգահեռ արձանագրվում է նաև* **եա>ա** *փոփոխություն։ Վերջինիս հա-*

մար վկայությունները մատենագրության մեջ այնքան էլ առատ չեն (համեմատությամբ եա>ե անցման բառերի), սակայն եղած օրինակները, ինչպես նաև մեր ժամանակակից որոշ բարբառներում կատարված նույնատիպ փոփոխությունները վկայում են, որ այդ հնչյունափոխությունը (եա>ա) հայերենի որոշ տարբերակների համար եղել է միանգամայն օրինաչափ: Արդեն իսկ միջին հայերենի շրջանում վկայվում են սենեակ>սենակ ((ԴՀՎ 1, Անի, 33, 1040 թ.)՝ վերը նշված սենեակ>սենեկ փոփոխությանը զուգահեռ: Կամ՝ ճայկազան (<ճայկազեան) թուականի (ԺԴ ՀձՀ, 96, 1313 թ.) և սրան զուգահեռ՝ ի թվականութեանս ճայկազենս սեռի (Ն. տ. 92, 1313 թ.), գեղագունաց (<գեղարքունեաց) (Գ. Հովս. Հձ 710, 1204 թ.) և այլն. ինչպես նաև ազգանունների և տոհմանունների մեջ՝ հակառակ վերը նշված եա>ե օրինաչափության, այստեղ գործում է եա>ա փոփոխությունը, ինչպես՝ Համազասպանց (ԿՂ Սան. 128, 1211 թ., 130, 1229 թ., 109, 1258 թ.), Ձնելանց (Ն. տ. 139, 1291 թ.), Աբեսալմանց (Ն. տ. 122, 1214 թ.) և այլն: Այսօր էլ, հատկապես տոհմանունների սեռական-տրականի ձևերում բարբառները տարբերվում են իրարից, երբ մի վայրում (վայրերում) ունենք, ասենք, Գրիգորենց, մի այլ վայրում (վայրերում)՝ Գրիգորանց:

Բարբառային այդ տարբերությունը և առհասարակ հին հայերենի եա երկբարբառի փոփոխության երկվությունը շատ լավ երևում է մեր ժամանակակից բարբառներում: Եա>ե հնչյունափոխության համար փաստարկներ բերել և այդ նպատակով բարբառներին դիմել, մեզ թվում է՝ անհրաժեշտ չէ, քանի որ հնչյունափոխական այդ երևույթը լայնորեն տարածված է արդի բարբառներում և դրանց արմատներն էլ տեսանք միջին հայերենյան բնագրերում: Այդ երկբարբառի պատմական զարգացման երկվությունը ցույց տալու համար ավելի ճիշտ կլինի դիմել այնպիսի բարբառների, որոնց մեջ եա>ե-ի փոխարեն եա-ի զարգացումը գնացել է դեպի եա>ա փոփոխությունը: Այս բանը ցույց տալու համար վերցնենք, օրինակ, Սյունիքի տարածքից Կարճևանի բարբառը: Այլ բարբառների -եր հոգնակերտի փոխարեն այստեղ գործածվում է ար‖ա̈ր որ ստանում են միավանկ բառերը, ինչպես՝ ֆար–ֆա՛րար, ծառ–ծառար, սար–սարար, oնf–oնfար և այլն: Այդ հոգնակերտի ա̈ր տարբերակի ա̈ ձայնավորի քմայնացածությունը պայմանավորված է բառարմատի ձայնավորի որակից. եթե այն առաջնային շարքի է, ապա հոգնակերտի ձայնավորը ևս դառնում է առաջնային շարքի ա̈ ինչպես՝ այծ>ա̈ծ—ա̈ծա̈ր, գայլ>գ՛ա̈լ—գ՛ա̈լա̈ր և այլն: Այնպես որ ար-ը և ա̈ր-ը նույն եար հոգնակերտից առաջացած տարբերակներ են: Կարճևանի բարբառում եա-ի դիմաց, շեշտից դուրս, օրինաչափորեն ա է նաև հին հայերենի անցյալ դերբայի -եալ վերջավորության մեջ, այսպես՝ սիրալ, դատալ, թաղալ և այլն, որոնք համապատասխանում են եա>ե հնչյունափո-

խումբյունն ունեցող բարբառների սիրել, դատել, թաղել վաղակատար դերբայի ձևերին։ Ըստ որում Կարճևանի բարբառում ևս այդ դերբայական ձևերով կազմվում են ժամանակային բայաձևեր (բայց ոչ վաղակատարի, այլ անցյալ կատարյալի իմաստով՝ սիրալ ըմ «սիրեցի», սիրալ ըս «սիրեցիր» և այլն, քանի որ այս բարբառը չի պահպանել անցյալ կատարյալի ժամանակային պարզ ձևերը և դրանց իմաստը արտահայտում է վերը նշված բաղադրյալ ձևերով)։ Հնչյունափոխական նույն երևույթը տեսնում ենք նաև նույն բայերի բուն հրամայականի եզակիի ձևերում, երբ վերջավորություններում հանդես եկող եա երկբարբառը շեշտից հետո (շեշտը այստեղ վերջընթեր է) հնչյունափոխվում է ա-ի, ինչպես՝ սի՛րա (<սիրեա), դատա (<դատեա), թա՛ղա (<թաղեա) և այլն։ Օրինաչափորեն նույն եա>ա հնչյունափոխական երևույթը դրսևորվում է նաև որոշ հոլովական վերջավորությունների մեջ։ Այսպես, օրինակ. այլ բարբառների իւրեան դերանվան տրական հոլովի իրեն ձևի փոխարեն այստեղ ունենք ո̈րա̈ն (իւ>ո̈ և եա>ա հնչյունափոխությամբ։ Ա-ի փոխարեն ա̈-ն այստեղ ո̈-ի ազդեցությամբ է), ինչպես նաև ո̈րա̈ց (=իրենց)։ Վերջապես Կարճևանի բարբառում ազգանունների ու տոհմանունների հին եաց-ի դիմաց ունենք աց (այլ բարբառների ենց-ի փոխարեն) ինչպես՝ Արշակաց, Մարութաց, Մըրադաց և այլն (միայն շեշտի տակ՝ ե, Ըղեց), որը իր փոփոխության ընթացքով լրիվ հակադրվում է այլ բարբառների Արշակենց, Մարութենց, Մուրադենց ձևերին։ Սրանց վըրա կարելի է ավելացնել կորեակ>կօ՛րակ բառում կատարված փոփոխությունը, որը նույնպես համընթաց է վերը բերված բառաձևերի մեջ կատարված փոփոխության հետ։

Այս բոլորը խոսում են այն մասին, որ հենց սկզբից եա-ի փոփոխության ընթացքը եղել է տարբեր։ Եա>ե հնչյունափոխությանը զուգահեռ, հայերենի որոշ բարբառներում, այդ երկբարբառի փոփոխությունը գնացել է եա>ա ուղղությամբ։ Մենք բերեցինք Կարճևանի բարբառի օրինակը, որ միակը չէ իր այդ օրինաչափությամբ։ Նույն տարածքի մի շարք խոսվածքներ այս կամ այն չափով ունեն այդ հատկությունը։

Ճիշտ է, հայերենի այս տարբերակներում եա>ա հնչյունափոխությունը կատարվում է ոչ թե շեշտի տակ, այլ նրանից հետո ընկած դիրքում, և այս տեսակետից կարծես չի կարող հանդիպադրվել եա>ե ընդհանուր փոփոխությանը, բայց այդ հակասությունը անմիջապես վերանում է, երբ նկատի ենք ունենում այն բարբառները (օր. Արարատյան), որոնց մեջ թեև շեշտը վերջընթեր է, բայց եա-ն դարձել է ոչ թե ա, այլ՝ ե(է)[4]։ Այս դեպքում արդեն, միևնույն պայմաններում ունենք եա-ի հնչյունափոխության երկու տարբեր արտահայտություններ։

---

[4] Կարևոր է նաև ընդգծել, որ եթե եա>ա հնչյունափոխությունը հատուկ է միայն

Մենք վերը տեսանք, որ եա>ա հնչյունափոխությունը արձանագըրվում է նաև միջնադարյան գրավոր հուշարձաններում (թեև ոչ մեծ հաճախականությամբ)։ Բայց միջնադարյան աղբյուրներում այդ փոփոխությունների վերաբերյալ վկայությունները կարող էին վստահություն չներշնչել, եթե այդ նույն օրինաչափությունը այդքան հստակորեն չարտահայտվեր մեր ժամանակակից բարբառներից մի քանիսում։ Այո, միայն այսօրվա բարբառներում այդ փոփոխության օրինաչափ լինելն է վստահելի դարձնում գրավոր աղբյուրների միջոցով մեզ հասած հատ ու կենտ վկայությունները և այս դեպքում է արդեն, որ նրանք կարող են հիմք տալ որոշելու այդ երևույթի առաջացման մոտավոր ժամանակը։ Եա>ա հնչյունափոխության հնագույն վկայությունը համարվում է յիշել բայի յիշեա հրամայականի հնչյունափոխված յիշա ձևը՝ արձանագրված Վանի միջնաբերդի խաչարձանի հիշատակագրության մեջ՝ «զԳուրգեն յիշա իՔս» ձևով, որ բերում է Ս. Ավագյանը վերը հիշատակված աշխատության մեջ[5]։ Այս և վերը բերված օրինակները վկայում են, որ եա>ա հնչյունափոխությունն արդեն VIII—IX դարերից սկսած, հայերենի որոշ բարբառներում, մտել էր իր իրավունքների մեջ։

Այժմ մի քանի խոսք այն մասին, թե ինչպես է դրսևորվում հին հայերենի եա երկբարբառը ժամանակակից գրական հայերենում։ Այստեղ հին եա-ն ունի երկու արտահայտություն՝ ե(e) պարզ ձայնավորի և յա երկհնչյունի։ Դրանցից առաջինը գալիս է ժողովրդախոսակցական լեզվից, ավելի ճիշտ՝ բարբառային այն հիմքից, որի վրա բարձրացել է արևելահայ աշխարհաբարը։ Երկրորդը գալիս է հին գրական հայերենից և հիմնված է նրանում եա-ի ավանդական արտասանության վրա։ Քանի որ նոր գրական լեզվի հիմքում ընկած բարբառներում հին եա-ն հնչյունափոխվել է ե(e)-ի, ուստի և եա ունեցող բոլոր բառերը, որոնք բարբառներից են անցել գրական լեզվին, իրենց մեջ ունեն եա>ե հնչյունափոխությունը։ Սրան հակառակ՝ գրական լեզվի մեջ գործածվող այն բառերը, որոնք անմիջապես գալիս են հին հայերենից՝ եա-ի դիմաց ունեն ya երկհնչյուն։

Այս ձևով ժամանակակից գրական հայերենը ժողովրդախոսակցական լեզվից ունի -եր, -ներ հոգնակերտները (հինը՝ -եար, -նեար), վաղակատար դերբայը իր -ել վերջավորությամբ՝ գրել եմ, կարդացել եմ (հինը՝ գրեալ, կարդացեալ), ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքի -եց վերջավորությունը՝ գրեց, սի-

---

վերջընթեր շեշտ ունեցող բարբառներին, նշանակում է մատենագրության մեջ եա>ա հնչյունափոխության վկայությունները նաև ապացույց են այն բանի, որ այդ ժամանակներում, հայերենի որոշ տարբերակներում, շեշտը վերջընթեր էր։

5 Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, էջ 206։

րեց (*հինը՝* -եաց, գրեաց, սիրեաց), ինքն *անձնական դերանվան թեքված՝* իրեն, իրենք, իրենց *ձևերը, մի շարք ընդհանուր գործածության բառեր, ինչպես՝* լեռ (<լեառն), կոrեկ (<կոrեակ), շեմք (<սեամ), սև (<սեաւ) վառեկ (<վառեակ), ցոrեն (<ցոrեան)[6] *և այլն։* եա>ա *հնչյունափոխությամբ գրական լեզուն ունի* իրար *փոխադարձ դերանունը* (*հինը՝* իրեար)։

Մյուս բոլոր դեպքերում գրական լեզվում առկա է եա-*ի հին հայերենյան ավանդական արտասանությունը, որը ըստ արևելահայ արդի ուղղագրության կանոնների արտահայտվում է* յա *տառակապակցությամբ։ Այդ արտասանությունը արտահայտված է՝ փոխադարձ դերանվան* միմյանց (*հինը՝* միմեանց) *ձևում,* յու∼յա (իւ∼եա) *հերթագայությամբ հոլովվող ներգրական հոլովման թեք ձևերում՝* սյուն-սյան (սիւն-սեան) ձյուն-ձյան (ձիւն-ձեան), անկյուն-անկյան (անկիւն-անկեան), *ինչպես նաև* -ություն (-ութիւն) *վերջավորությամբ գոյականների թեք հոլովներում՝* մեծություն-մեծության-մեծությամբ (մեծութիւն-մեծութեան-մեծութեամբ), յա (<եա), յան (<եան) *ածանցներում՝* երկաթյա (<երկաթեա(յ)), հավիտյան (<յաւիտեան), Մամիկոնյան (<Մամիկոնեան) *և, առհասարակ, այն բառերում, որոնք որպես գրական փոխառություններ անմիջապես գալիս են նախորդ շրջանի գրական լեզուներից, ինչպես՝* արքանյակ (<արքանեակ), լյարդ (<լեարդ), ատյան (<ատեան) կյանք (<կեանք), մատյան (<մատեան), որդյակ (<որդեակ), պատանյակ (<պատանեակ), սարյակ (<սարեակ), սենյակ (<սենեակ) *և այլն։*

Այս ձևով էլ նոր գրական լեզուն հնից վերցրել է մի շարք բայերի անցյալ դերբայի ձևերը, դրանց հիմնականում տալով ածականական ու մակբայական կիրառություններ։ Այս ճանապարհով է, որ նոր գրականում ունենք սառուցյալ (<սառուցեալ), հանգուցյալ (<հանգուցեալ), կորուսյալ (<կորուսեալ) *և նման ձևերը։ Այստեղ հետաքրքիր է նշել այն, որ հին հայերենյան նույն դերբայական ձևը նոր գրական լեզու ընկնելով տարբեր ճանապարհներով (ժողովրդախոսակցականից և հին գրական լեզվից) և ըստ այդմ ենթարկվելով տարբեր հնչյունափոխությունների, նոր գրական լեզվում բառային ինքնուրույն միավորի արժեք է ստանում. համա., օրինակ՝ հին հայերենի* կատարեալ, *նոր հայերենում՝* կատարել (կատարել եմ, կատարել ես *և այլն*) *և* կատարյալ (կատարյալ մարդ, անցյալ կատարյալ ժամանակաձև), մեռեալ>մեռել *և* մեռյալ (մեռյալ կետ), տուեալ>տվել *և* տվյալ (տվյալ պահին, կեղծ տվյալներ), դար-

---

6 Ժամանակակից գեղարվեստական գրականության մեջ որոշ հեղինակներ գործածում են նաև այս բառերի գրաբարյան ձևերը (ցոrյան, լյառն *և այլն*) *նպատակ ունենալով իրենց խոսքին տալ ոճական (բանաստեղծական կամ պատմական) գունավորում։*

ձեալ>դարձել և դարձյալ (դարձյալ եկել է), բանտարկեալ>բանտարկել և բանտարկյալ և այլն։

Այսպիսով՝ ժամանակակից գրական հայերենը եա-ի արժեքավորման հարցում միասնական օրինաչափություն չունի։ Այդ երկբարբառը նա ընկալում է մեկ դասական հայերենի ավանդական արտասանությամբ, մեկ բարբառային հիմքից եկող արտասանությամբ, նայած թե տվյալ բառի ու բառաձևի ակունքը որն է։

ԱՒ-Ի ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Երկբարբառների մեջ ամենաընդհանրական փոփոխությունը, որ կատարվել է ամբողջ հայերենում և գնացել մի միասնական օրինաչափությամբ, դա աւ երկբարբառի օ պարզ ձայնավորի փոխվելն է։ Այն հանգամանքը, որ այդ փոփոխությունը հայերենի ժամանակակից բոլոր տարբերակներում ունի միասնական ընթացք, հիմք է տալիս կարծելու, որ այն հին երևույթ է, ավելի հին, քան նրա առաջին մատենագրական վկայությունները են։ Հատկանշական է այն, որ եթե մյուս երկբարբառների փոփոխությունները չէին խախտում հին հայերենի երկբարբառների գրային արտահայտությունը իրենց երկհնչյունային արժեքավորմամբ, ապա աւ երկբարբառի փոփոխությունը իր ընդհանրականությամբ ու միասնականությամբ իր մեջ է առնում նաև դասական հայերենի արտասանությունը և այստեղ, կարծես թե, դասական հայերենը համընթաց է քայլում իր բանավոր տարբերակների հետ։ Իսկապես. եթե, ասենք, այ երկբարբառը հայերենի բանավոր-խոսակցական տարբերակներում հընչյունափոխվում էր ա-ի կամ է-ի, և ըստ այդմ այդ տարբերակներում վերանում էր այդ երկբարբառի գիտակցումը, ապա հին տեքստերի ավանդական վերարտադրության ժամանակ (այդ տեքստերի բառերի արտասանության մեջ), ինչպես նաև ժամանակակից գրական հայերենում, այդ այ-ը, եթե չի գիտակցվում որպես երկբարբառ, ապա վերարտադրվում է որպես երկհնչյուն ay։ Այդպես է նաև մյուս երկբարբառների դեպքում, երբ բանավոր-խոսակցական լեզվում կատարված նրանց փոփոխությունները ոչնչով չեն ազդում գրական լեզուներում (և՛ հին, և՛ նոր) նրանց երկհնչյունային արժեքավորման վրա (եա=յա, իւ=յու, ոյ=ույ)։ Սակայն այդպես չէ աւ երկբարբառի դեպքում։ Աւ-ի օ արժեքավորումը միասնական է ոչ միայն հայերենի բանավոր-խոսակցական բոլոր դըրսևորումների, այլև գրական լեզուների համար։ Այդ հնչյունափոխության գիտակցությունը այնքան միասնական, ամբողջական ու հարազատ է, որ նույնիսկ գրաբարի համար մոռացվել է աւ-ի երկբարբառային (կամ նույնիսկ երկհնչյունային) արժեքը։ Այդ նրանից է, որ հայերենի բանավոր-խոսակցական տարբերակների մեջ տեղի ունեցած հնչյունական փո-

փոխությունը տարածվել է նաև գրաբարյան տեքստերի արտասանության վրա՝ ընդգրկելով աւ երկբարբառի գործածության բոլոր ոլորտները. աւր>օր, աւձ>օձ, աւրաւր>օրօր, աւրինակ>օրինակ, աւրհնել>օրհնել, աւգուտ>օգուտ, ամաւթ>ամօթ, արաւտ>արօտ, արաւր>արօր, խաւսել>խօսել, կարաւտ>կարօտ և այլն: Այդ փոփոխությունը սկսվում է տարածվել նաև հոլովական վերջավորությունների վրա, հատկապես այն դիրքերում, որտեղ ստեղծվում էր փակ վանկ: Օրինքը մասնավորապես ընդգրկում է գործիական հոլովի հոգնակի թվի -աւք և -եաւք վերջավորությունները (հրամանաւք>հրամանօք, հրապարակաւք>հրապարակօք, այգեաւք>այգեօք, պատանեաւք>պատանեօք և այլն): Հատկանշական է, որ նույն գործիական հոլովի եզակի թվում աւ-ը մնում էր անփոփոխ (հրամանաւ), նույնիսկ այն դեպքում, երբ հոդի հավելմամբ ստեղծվում էր փակ վանկ (հրամանաւն): Հավանական է, որ այս դեպքում աւ-ը գիտակցվում էր որպես երկհնչյուն կամ պարզապես՝ որպես ա ձայնավորի և ւ բաղաձայնի կապակցություն: Եզակի թվի գործիականում աւ-ի անհնչյունափոխ մնալը ոմանց առիթ է տվել ենթադրելու, թե հոգնակի թվում ևս -աւք, -եաւք վերջավորությունների մեջ աւ-ը երկբարբառ չի եղել և որ այդ դիրքում աւ-ի փոխարեն օ գրությունը՝ աւ-ի՝ այլ դիրքերում կատարված փոփոխության անալոգիկ արտահայտությունն է: Բայց պետք է կարծել, որ այս դեպքում աւ-ը իսկապես երկբարբառային արտասանություն ուներ, մի բան, որ հաստատվում է ժամանակակից հայերենի որոշ բարբառների տվյալներով: Օրինակ, Արաբկիրի բարբառում գործիական հոլովի ընդհանուր վերջավորությունը օֆ է (ձեռօֆ «ձեռքով», ըսելօֆ «ասելով»)[7], որը, անշուշտ, ծագում է հին հայերենի գործիականի հոգնակի թվի աւք վերջավորությունից: Չի կարելի մտածել, թե այդ օք-ը առաջացել է կեղծ ու ինքնահնար աւք>օք գրության ձևից:

Աւ երկբարբառի հնչյունափոխության մեջ ամենայն հավանականությամբ կարևոր դեր է խաղացել նրա երկրորդ բաղադրիչը՝ ւ-ը, որը որպես շրթնային (կամ երկշրթնային) ոչ վանկարար ձայնավոր ազդել է առաջին բաղադրիչի վրա և նրան տվել շրթնայնության երանգ: Այդ երանգը աստիճանաբար աճել և գերակշռող է դարձել ա-ի մեջ: Հետևանքը եղել է այն, որ աւ-ի դիմաց առաջացել է օ:

Ժամանակագրական տեսակետից աւ>օ հնչյունափոխությունը ետդասական ժամանակաշրջանում կատարված իրողություն է: Առաջին իսկ ձեռագրերի մեջ տվյալներ կան կատարված այդ փոփոխության մասին: Տեղի ունեցած հնչյունափոխությունը «մատնում են» գրության այնպիսի ձևերը, որոնք շեղվում են ընդհանուր ուղղագրական կանոններից:

Այն, որ աւ-ը հնչյունափոխվել էր օ-ի, երևում է նրանից, որ գրու-

7 Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 142:

թյան մեջ աւ-ին երբեմն փոխարինում է ո-ն, այսինքն, երբ ըստ հնչյունական գրության, կատարված փոփոխությունը արտահայտվում է օ ձայնավորը արտահայտող տառանշանով (ո), կամ հակառակը, երբ ավանդական ո-ն արտահայտվում է աւ-ի միջոցով։

Այս կարգի ամենավաղ վկայությունները վերաբերում են IX դարին։ Լազարյան ճեմարանի 887 թ. գրչագիր ավետարանում հանդիպում են գրության նման ձևեր։ Այստեղ, օրինակ, առորոց սովորական ձևի փոխարեն գրչագրված է առաւրոց, դա նշան է այն բանի, որ աւ-ը ուներ օ ձայնավորի արժեք[8]։ Առաջին իսկ ձեռագրերում հանդիպում են նաև ենթակայական դերբայի աւղ և ող գրության զուգաձևություններ, որոնք նույնպես վկայում են աւ-ի և ո-ի հնչյունական նույնությունը։ Այն հանգամանքը, որ գրության նման զուգաձևությունները հանդիպում են բառային նույն միավորներում (ծնաւղ և ծնող), հիմք չեն տալիս ենթադրելու, թե աւղ-ը և ող-ը ունեն ծագումնաբանական տարբեր հիմքեր։

Հետագա դարերի գրավոր աղբյուրներում ավելի հաճախանում են գրության նման ձևերը. այստեղ ևս աւ-ը և ո-ն փոխարինում են մեկը մյուսին։ Ա. Ս. Աբրահամյանը՝ հայերենի պատմական հնչյունափոխության մի քանի երևույթների ուսումնասիրությանը նվիրված իր մի հոդվածում այս փոփոխության համար X դարից բերում է պաշտօնեայք և փառօք բառաձևերը՝ ավանդական պաշտաւնեայք և փառաւք ձևերի դիմաց[9]։ Այս նույն ժամանակներում վկայվում են նաև յոդւածոյ՝ փոխ. յաւդւածոյ (Գ. Հովս. հձ 152), յաւգնամեղ՝ փոխ. յոգնամեղ (Ն. տ. 153) ուղղագրական շեղումները։

Այսպիսով, X դարում աւ>օ հնչյունափոխությունն արդեն կատարված փաստ էր։ Ամենայն հավանականությամբ այն ձևավորվել էր ավելի վաղ, քան առաջին վկայություններն են, թերևս VII—VIII դարերում, երբ որոշակիորեն սկսել էին ուրվագծվել հայերենի նոր բարբառների առանձնահատուկ գծերը։

Այդ հնչյունափոխության վաղեմության ենթադրությունը կարող է հաստատվել նաև աւ-ի մի այլ կարգի փոփոխությամբ. դա աւ>ու հընչյունափոխությունն է։ Այս օրինաչափությամբ վկայվող օրինակները քանակով թեև սակավ են, բայց ուշագրավ են հենց միայն նրանով, որ դրանք՝ մեր ժամանակակից որոշ բարբառներում կատարված նույն կարգի հնչյունափոխության առաջին գրավոր վկայություններն են։ Ըստ որում՝ այդ օրինակներն էլ մեծ մասամբ արձանագրվում են Արևելյան Հայաստանի տարածքում ստեղծված սկզբնաղբյուրներում։ Դրանցից հնագույնը X դարից է՝ Վայոց ձորի վիմագիր հուշարձաններից մեկում՝

---

8 Ավետարան, Լազարյան ճեմարանի լուսատիպ հրատարակություն, 1899, էջ 9։

9 Ա. Ս. Աբրահամյան, Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր (հասարակական գիտություններ), 1957, 4, էջ 75։

«աստանուր (<աստանաւր) ածային նշանիւս յիշել զՀայր Սուփան» (ԴՀՎ 3, էջ 15)։ Այլ օրինակներ. սրտի յուժարութբ (<յաւժարութեամբ) տվի զիմ իգին (Ն. տ. 153, XII դար), միաբանք Ա ժամ սահմանեցին սբ Յակոբին տունին (<տաւնին) (Ն. տ. 51, 1289—1299 թթ.), մի յուժարիր (<յաւժարիր) զնոցայ խաւսքն լսել (8030 104ա, 1341 թ., գրիչ՝ Տերտեր Երևանցի), յիշեցէք .. .և զմուրուն (<մօրուն) զՄէլէք խաթուն (ԺԵ ՀձՀ II, 224, 1464 թ., Շատվան գ.)։

Այստեղ արձանագրվող հնչյունափոխությունը, անշուշտ, տեղի է ունեցել աւ>օ *փոփոխությունից հետո։ Որ* աւ *երկբարբառի դիմաց* ու *ձայնավորի առկայությունը պետք է բացատրել* աւ>օ *հնչյունափոխությունից հետո կատարված* օ>ու *փոփոխությամբ, դա երևում է նաև մեր ժամանակակից բարբառներում։ Այստեղ այդ անցումը կապվում է առհասարակ* ս>օ *ընդհանուր օրինաչափության հետ, որին հարում են ինչպես* աւ-*ից հնչյունափոխված* օ-*ն, այնպես և հին* ո-*ն։ Այսպես է, օրինակ, Սվեդիայի բարբառում, որտեղ առհասարակ (օ) հնչում գոյություն չունի, և* օ, ո *ձայնավորների դիմաց հավասարապես* ու *է. օրինակ՝* աւձ>օձ>ուծ, աւղակ>օղակ>ուղէգ, աւր>օր>ուր, յաւճf>յօճf>ուճf-վա, խաւսf>խօսf>խուսf ... լողալ>լուղիլ, գլոrել>կըլդուrիլ, ծով>ձուվ, կով>գուվ, fով>fուվ, կոճակ>գուչըգ *և այլն*[10]*։*

Նման օրինակներ տալիս են նաև Սյունիքի ու Արցախի տարածքի մի շարք խոսվածքներ, որոնց մեջ, թեև ոչ հետևողականորեն, արձանագրվում են աւ>օ>ու *հնչյունափոխության դեպքեր, մի երևույթ, որը համընթաց է այդ խոսվածքներում գործող* ո>ու *փոփոխության հետ։ Այսպես, մի կողմից ունենք՝* աղաւբf>աղուբկ, ամաւբ>ամուբ, անամաւբ>անամուբ, խելաւf>խէլուճկ, խուլուկ, աղաւճի>յըղուճի, ղուճի, ծանաւբ>ծանուբ, կաrաւտ>կաrուտ *և այլն, և մյուս կողմից՝* խոզ>խուզ, ծոմ>ծում, կոպ>կուպ, կոշտ>կուշտ, մոմ>մում, փոկ>փուկ *և այլն։*

Այս տեսակետից հետաքրքիր է նաև Ոզմի բարբառը։ Այստեղ բառասկզբի աւ-*ի դիմաց երկհնչյուն* վö *է, մի հնչյունափոխություն, որ հատուկ է հին* ո *ձայնավորին. այսպես՝* աւծել>վöծըճիլ, աւճ>վög, աւբ>վöբ, աւբաճ>վöբաճ, աւբիճակ>վöբիճակ, աւբհճել>վöխճիլ:

Այստեղ ոչ մի կասկած լինել չի կարող, որ այս վö-*ն զարգացել է* օ-*ից՝ հին* ո-*ի հետ մի ընդհանուր օրինաչափությամբ՝ այն բանից հետո, երբ կատարվել էր* աւ>օ *հնչյունափոխությունը։*

Այս փաստերը խոսում են այն մասին, որ որոշ վայրերում աւ-*ի դիմաց արձանագրվող* ու, վö *համապատասխանությունները առաջացել են հետագայում։ Եթե այս փաստերի լույսի տակ գնահատելու լինենք մա-*

---

10 Տ. Անդրեասյան, *Սվեդիայի բարբառը, էջ 11։*

տենագրության մեջ հանդիպող աւ>ու հնչյունափոխության օրինակները, ապա այստեղ էլ պետք է ընդունենք, որ այդ ու-ն կարող էր առաջանալ միայն աւ>օ փոփոխությունից հետո։ Դա նշանակում է, որ պետք է ընդունել նաև այդ հնչյունափոխության աւ>օ>ու հաջորդականությունը։ Եթե արդեն X դարում արձանագրվում են աւ>ու հնչյունափոխության օրինակներ, ապա ինքնին հասկանալի է, որ աւ>օ փոփոխության ըսկըզբնավորումն ու ձևավորումը պետք է վերագրել ավելի վաղ ժամանակների։

Զնայած վաղուց կատարված հնչյունափոխությանը (աւ>օ), մատենագրությունը շարունակում էր ըստ ավանդական ուղղագրության աւ գրել նաև այն դիրքերում, որտեղ այն արտասանվում էր օ: Գրության ու արտասանության միջև առաջացած այս հակասությունը որոշակի դժվարություններ էր ստեղծում աւ-ի ուղղագրության հարցում, մանավանդ որ բանավոր լեզվում աւ-ով և ո-ով արտահայտվող հնչյուններն իրենց արժեքով շատ դեպքերում համընկնում էին, իսկ գրավոր լեզվում պարտավոր էին դրանք ըստ ուղղագրության տարբերակել։ Այդ հակասությունը թերևս կարելի էր լուծել ո տառի միջոցով, նրանով արտահայտելով աւ-ից հնչյունափոխված օ-ն, բայց այդ բանը, հավանական է, չէր արվում ո-ի հնչյունական արժեքի մեջ կատարված փոփոխության պատճառով։

X դարի վերջերին հասունանում է աւ-ից հնչյունափոխված օ-ի համար նոր տառանշան գործածելու հարցը։ Այդ նպատակով վերցվում է լատինական այբուբենի o տառը։ Այդ գրով բառի առաջին վկայությունը վերաբերում է 1007 թ. Մակեդոնիայում գրված մի ձեռագրի հիշատակարանի, որի մեջ աղաւբք բառի աւ-ը արտահայտված է օ գրով. այսպես՝ յաղօրս յիշեցէք (Գ. Հովս. հձ 201)։ Հաջորդ օրինակը 1046 թ. գրված մի ձեռագրում Հայոց Պետրոս կաթողիկոսի հիշատակագրությունն է՝ մեծաւ փափագանօք եա գրել (Ն. տ. 231)։ Հետագա դարերում ավելի հաճախանում են աւ-ի փոխարեն օ գրությամբ բառերը։ Բայց այդ նորամուծությունը ամենուրեք և ամեն ոք չէ, որ ընդունում է։ Նկատելի է, որ նույն ժամանակներում տարբեր գրիչներ տարբեր վերաբերմունք են ցուցաբերում նորամուծության հանդեպ։ XIV—XV դարերում հանդիպում են ձեռագրեր, որոնց մեջ օ տառի գրությունը բացարձակապես մերժված է։ Բայց սրանց հակառակ կան ձեռագրեր, որոնց մեջ օ-ն աւ-ի փոխարեն գրվում է նույնիսկ այնպիսի դիրքերում, որտեղ բացառված էր նրա հընչյունափոխությունը։ Մենք այս երևույթի մասին այն կարծիքն ենք հայտնել[11], որ հայ լուսավորչական եկեղեցու հոգևորականությունը սրբապըղծություն է համարել սուրբ Մեսրոպյան այբուբենում նոր տառի, այն էլ

---

[11] Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Ա, Երևան, 1972, էջ 97։

լատինական տառի ընդունումը և թերևս այդ է եղել պատճառը, որ, նայած գրչի դավանաբանական պատկանելությանը, ձեռագրերում օգտագործվում կամ չի օգտագործվում օ գիրը։ Հիշենք նաև, որ Պետրոս (Գետադարձ) կաթողիկոսը բյուզանդական կողմնորոշում ուներ և պատմության մեջ հայտնի է որպես «Անիի վաճառման և Գագիկ Բ թագավորի գահընկեցության մեջ դավաճանական դեր կատարած» անձնավորություն[12]։ Հատկանշական է, որ օ-ի կիրառության առաջին վկայություններից մեկն էլ հենց գտնում ենք այս կաթողիկոսի գրած հիշատակարանում, մյուսը վկայվում է երկրից դուրս՝ Մակեդոնիայում գրված ձեռագրում։

Մենք վերը նշեցինք, որ ու>օ հնչյունափոխությունը ընդհանուր էր հայերենի համար և որ այս տեսակետից այն՝ բացառություններ չընդունող օրինաչափություն էր։ Այս դատողությանը չեն հակասում նաև այն դեպքերը, որոնց մեջ ու-ի դիմաց հնչյունական այլ համապատասխանություններ էին։ Այդտեղ էլ, ինչպես տեսանք, ու-ի ընդհանուր հնչյունափոխական կանոնից կատարվող շեղումները հետագայում առաջացած երևույթներ են, հետևաբար ու>օ անցումը նախապես եղել է բացառություններ չընդունող հնչյունական օրենք։

Բայց այդ բոլորից դուրս երկու բառ՝ նաւթ և աղաւնի, մնացել են անհնչյունափոխ, այն էլ գրական լեզուներում և մի շարք բարբառներում, չնայած այն բանին, որ այդ բառերում ու-ը գտնվում է այնպիսի դիրքում (երկու բաղաձայնների միջև), որ պետք է ընդհանուր օրինաչափությամբ փոխվեր օ-ի։ Ինչո՞վ կարելի է բացատրել այդ շեղումը։ Ընդունված է ասել, որ նաւթ և աղաւնի բառերում ւ-ից հետո արտասանվել է մի թույլ ը, որի պատճառով ւ-ը ընկնելով երկու ձայնավորների միջև (նաւըթ, աղաւընի), այլևս դադարել է երկբարբառի բաղադրիչ լինելուց, վերածվել է բաղաձայն v-ի, որը և կանխել է նաւթ և աղաւնի բառերում սպասվելիք հնչյունափոխությունը։ Այդ ենթադրությունը գալիս է դեռևս Հյուբշմանից, որը նման բացատրություն տալիս էր միայն աղաւնի բառին։ Աճառյանը այդ ենթադրությունը հաստատված է համարում՝ հատկապես նկատի ունենալով բարբառային՝ աղվընի (Ակն), աղվընը (Զեյթուն), աղվընիկ (Սեբաստիա, Խարբերդ, Տիգրանակերտ) յէղվընէգ (Ալաշկերտ) և նման ձևերը, որոնց մեջ ն-ից առաջ գտնվող ը-ն նրան հիմք է տվել աղաւնի բառի բարբառային այդ տարբերակների համար վերականգնելու *աղուանի կամ *աղաւընի նախատիպերը, գտնելով, որ միայն դրանցից կարող էին առաջանալ վերը բերված բարբառային ձևերը։ Եվ քանի որ հայերենի բարբառների մնացած մասում աղաւնի բառի ու-ը օրինաչափորեն փոխվել է օ-ի (և սրանից էլ՝ ու-ի. օրինակ՝ Ագլ. ըղօնի, Մղր.

12 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, 1948, էջ 244։

ըղօնէ, Ղրբ. լէղօնէզ՛, ղօնէզ՛, Երև. Ջուղ. աղունիկ, Գոր. Վան՝ յէղունիկ և այլն, որանց համար էլ որպես նախատիպ ընդունում է աղաւնի ավանդական բառաձևը։

Մենք կարծում ենք, որ ոչ մի անհրաժեշտություն չկա հայերենի բարբառների երկու հատվածների համար վերականգնել աղաւնի բառի տարբեր նախատիպեր։ Այդ բառի՝ բարբառներում արձանագրվող հնչյունական տարբերակները բոլորն էլ ծագում են նույն աղաւնի ձևից։ Արևմտյան բարբառների աղվընի, աղվընիկ և այլ ձևերը պետք է ոչ թե բխեցնել ինչ-որ ենթադրյալ աղաւընի-ից, այլ հայերենի համար ընդհանուր աղաւնի բառից, իսկ բարբառային ձևերում կատարված փոփոխությունը բացատրել միջնավանկի ա ձայնավորի սղմամբ, ինչպես այդ հատուկ է առհասարակ արևմտյան բարբառների մեծագույն մասին։ Ըստ որում՝ պետք է կարծել, որ աղաւնի բառում միջնավանկի ձայնավորի անկումը (կամ հնչյունափոխվելը ը-ի) կատարվել է դեռևս այն ժամանակ, երբ աւ>օ հնչյունափոխությունը իր իրավունքների մեջ չէր մտել։ Այս դեպքում պարզ է, որ աղաւնի<աղըվնի փոփոխությունից հետո այդ բառը պետք է դուրս մնար աւ>օ հնչյունափոխության ընդհանուր ոլորտից։

Այն, որ վերը բերված բարբառային ձևերում ը-ն գտնվում է վ-ից հետո (և ոչ նրանից առաջ, ինչպես պահանջվում է)՝ չի կարող հիմք տալ ենթադրելու, թե իբր պետք է անպայման գոյություն ունենար մի աղաւընի նախնական ձև, որպեսզի նրա հնչյունափոխությունից ստացվեր աղվընի։ Պետք է նկատել, որ բարբառային աղվընի, աղվընիկ և այլ բառաձևերում ը-ն ոչ թե նախնական է, այլ այդ դիրքում հայտնվել է դրափոխությամբ (աղաւնի>աղըվնի>աղվընի), ինչպես այդ ցույց են տալիս, օր. Մալաթիայի բարբառի աղըվնի, Սվեդիայի բարբառի աղըվնա բառերը, որոնց մեջ ը-ն օրինաչափորեն միջնավանկի հնչյունափոխված ա-ի տեղում է։

Ինչ վերաբերում է գրական լեզվի աղաւնի ձևին, ապա նրա անփոփոխ մնալը նույնպես բացատրելի է։ Հին գրական հայերենում աւ-ի դիմաց սկսվել է օ հնչվել միայն այն բառերում, որոնց աւ-ը կենտրոնական բարբառներում հնչյունափոխվել էր օ-ի։ Քանի որ աղաւնի բառի վրա աւ>օ հնչյունափոխությունը չէր տարածվել, ուստի և այն գրական լեզվի մեջ չէր կարող մտնել *աղօնի ձևով։ Գրական լեզուն մերժել էր նաև աղըւնի հնչյունափոխված ձևը որպես աղաւնի բառի բարբառային արտահայտություն և այդ հիմունքով էլ վերականգնել էր սղված ա-ն կամ պարզապես շարունակել էր հին ձևով օգտագործել այդ բառը։

Նաւթ բառի բացատրությունը համեմատաբար ավելի հեշտ է։

Այսօրվա բարբառներում նաւթ բառի դիմաց մի կողմից ունենք նօթ, մյուս կողմից՝ նաֆթ (նաֆտ, նըֆթ)։ Հազվադեպ է վ-ով (նավթ) ձևի կիրառությունը, որը ակնհայտորեն նոր գրական փոխառություն է։

Բարբառների մի մասում այսօր արձանագրվող նօբ ձևը միանգամայն օրինաչափ է՝ ու>օ հնչյունափոխության տեսակետից։ Այդ հնչյունափոխությունը գործում է Սյունիք-Արցախ տարածքի բարբառներում։ Մյուս բոլոր վայրերում (չնչին բացառություններով) նաւբ բառի դիմաց բարբառային մյուս տարբերակն է՝ նաֆբ։

Բարբառային այս երկու ձևերի համեմատությունը ցույց է տալիս, որ նաւբ բառի հնչյունափոխության ընթացքը որոշել է աւ երկբարբառի ձայնորդ տարրի որակը։ Այն բարբառներում, որոնց մեջ ունենք նաֆբ, աւ>օ հնչյունափոխությունը չի կատարվել, որովհետև երկբարբառի երկրորդ բաղադրիչը (ւ-ը) բ խուլ բաղաձայնի ազդեցությամբ արտասանվել է խուլ շփական (ֆ), այսինքն՝ աւ-ը այլևս դադարել է երկբարբառ լինելուց։ Հատկանշական է, որ այս փոփոխությունը կատարվել է բոլոր այն բարբառներում, որոնք իրենց բաղաձայնական համակարգում ունեն ֆ խուլ շփական բաղաձայնը։

Սյունիք-Արցախ տարածքի բարբառներում նաւբ բառի դիմաց նօբ է, որ նշանակում է, թե այս դեպքում գործել է աւ>օ հնչյունափոխությունը։ Այստեղ տվյալ բառում բ խուլի ազդեցությամբ երկբարբառի ւ-ը չի խլացել, որովհետև այս տարածքի բարբառներին խորթ է շրթնատամնային խուլ շփական ֆ-ի արտասանությունը։ Այս բարբառներում այսօր էլ օտարլեզվյան ֆ-ն ընկալվում է որպես փ (փայտօն, փէրմա, փիզիկա և այլն)։ Այս է պատճառը, որ նշված վայրերում նաւբ բառի աւ-ը պահպանելով իր երկբարբառային որակը՝ ենթարկվել է ընդհանուր աւ>օ հնչյունափոխության։

Այսպիսով՝ գրական լեզվում նաւբ (նավբ) բառում աւ-ի անփոփոխ մնալը (կամ երկհնչյունային արտասանությունը) պայմանավորված է կենտրոնական և հարակից շրջանների բարբառներում աւ երկբարբառի ւ բաղադրիչի մեջ կատարված հնչյունափոխությամբ։ Այս դեպքում մեզ չպետք է շփոթեցնի նաւբ բառի ավանդական ուղղագրությունը, որի տակ կարող է թաքնված լինել ւ-ի խլացած արժեքը։ Այսօր էլ մեր գրական լեզվում այդ բառը իր հնչմամբ տատանվում է նավբ և նաֆբ արտասանությունների միջև։

Բարեբախտաբար նաւբ բառի նաֆբ հնչման վերաբերյալ մենք որոշ տվյալներ ունենք հին գրավոր աղբյուրներում։ Օրինակ, Սմբատ Սպարապետի Տարեգիրք աշխատության մեջ այդ բառը մի քանի անգամ գործածված է՝ այն էլ նաֆբ գրությամբ. այսպես՝ ...կապեաց յինքն նաֆբ Գ շիշ և կապեաց թուղթ ի ծայր ըռմբին (Սմբ. Տար. 52), հրամայեաց նաֆբիւ բորբոքել զսայլսն (ն. տ. 95)։ Սմբատ Սպարապետը ապրել ու ստեղծագործել է XIII դարում, համարյա նույն դարի գրչությամբ է հասել մեզ նաև նրա Տարեգիրքը (խոսքը վերաբերում է 1956 թ. վենետիկ-

յան հրատարակությանը)։ Բայց ւ>ֆ հնչյունափոխությունը, անշուշտ, կատարվել է ավելի վաղ, համենայն դեպս՝ ֆ տառը հայերենի այբուբենի մեջ մուծելուց շատ առաջ։ Իսկ ավելի ճշգրիտ՝ ւ>ֆ փոփոխությունը պիտի որ կատարված լիներ VII—VIII դարերից առաջ, քանի որ այդ ժամանակից է սկսվում աւ>օ հնչյունափոխությունը։

Ասենք նաև, որ նաւթ բառը ունի իրանական ծագում, ավանդված է դասական շրջանից, ուստի և փոխառություն է համարվում պհլ. *naft ենթադրյալ ձևից. սակայն այն առկա է նաև նոր պարսկերենում՝ naft[13]։ Կարելի է նաև ենթադրել, որ հայերենում, պարսկերենի ազդեցությամբ, այդ բառը ունեցել է նաֆթ արտասանությունը (թեև ըստ ուղղագրության հնարավորության գրվել է նաւթ) և այդ արտասանությունն է, որ շարունակվել ու հետագայում կանխել է աւ>օ փոփոխությունը այդ բառում։

ՈՅ-Ի ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Այսօրվա գրությամբ հին հայերենի ոյ-ի դիմաց մի կողմից ունենքույ երկհնչյուն՝ գրական լեզուներում և մյուս կողմից՝ պարզ ու, ի ձայնավորներ՝ բարբառներում։ Վասպուրականի և մի քանի այլ տարածքների բարբառներում ոյ-ի դիմաց գրանցվում են՝ երկբարբառ ո(uo), պարզ ձայնավոր օ և երկհնչյուն այ։

Երկհնչյունային ույ արտասանությունը ժամանակակից գրական հայերենում (լոյս>լույս, գոյն>գույն, բոյս>բույս և այլն) հիմնված է հին հայերենի ոյ-ի՝ պատմականորեն առաջացած, ավանդական արտասանության վրա և նոր գրական հայերենում փաստորեն փոխառություն է հին հայերենի նորօրյա «ուղղախոսությունից»։ Հասկանալի է, որ հին հայերենում նման արտասանություն չի եղել և ձևավորվել է հետագայում, երբ հայերենի բանավոր-խոսակցական տարբերակներում երկբարբառների վերացմամբ՝ հին երկբարբառները ըստ իրենց գրային արտահայտության ընկալվել են որպես երկհնչյուններ։ Պետք է կարծել, որ ոյ երկբարբառի մեջ ո-ն ունեցել է u ձայնավորի թույլ արտահայտված երանգ, որը և հիմք է տվել հետագայում uy երկհնչյունային արտասանությանը։ Գրական լեզվում ոյ-ի uy արտասանությունը ամենայն հավանականությամբ արդեն ձևավորված է եղել X—XI դարերում։ Այդ մասին են վկայում այն հատ ու կենտ տվյալները, որ արձանագրվում են ժամանակի գրավոր աղբյուրներում։ Ամենահին վկայությունը թերևս Վայոց ձորի Կարմրաշեն գյուղի մոտ ընկած մի խաչքարի վրա լուսոյ բառի լոյսո գրությունն է. առնել զսա զանպար լոյսո (ԴՀՎ. 3, 42)։ Ճիշտ է, լուսանկարում յ-ն շատ թույլ է գծագրվում, բայց տողի տառերի դասավո-

[13] Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան։

թյունը և նրանց բաշխման համաչափությունը կասկած չեն թողնում, որ այդ բառը գրված է գրական ույ արտասանությամբ։ Խաչքարի ճակատին թվագրված է այն կանգնեցնելու ժամանակը՝ 990 թ.։ Մեզ հետաքրքրող բառաձևը գտնվում է խաչքարի թիկունքին փորագրված արձանագրության մեջ, որը ժամանակի տեսակետից մի քիչ ավելի ուշ է (XI դար)։ Մի այլ օրինակ ունենք վկայված Հաղբատի արձանագրություններից մեկում։ Այստեղ ոյ *երկբարբառի գրական* ույ *հնչումը արտահայտված է* fույr *բառի գործիական հոլովի մեջ։ Ահա արձանագրության այդ հատվածը. «Ես՝ Մարիամ, դուստր Կիւրիկէի արքաի, իմ* fույ-rաւ... *միաբանեցա (ԿԴ, Հաղբ. 176, 1200 թ.)։*

Գրական լեզվում ոյ-*ի* uy *հնչումը երևում է նաև օտար բառերի հայերեն տառադարձություններում։ Միջին հայերենի շրջանում կիլիկյան գրական հայերենում ֆրանսերեն այնպիսի անունների տառադարձությունը, ինչպիսիք են, օրինակ,* Louis→Լույս, Baldouin→Պաղտոյն *և այլն*[14], *անվերապահորեն հավաստում են, որ գրական հայերենում* ոյ-*ը ուներ* uy *երկհնչյունի արժեք։*

Սակայն ոյ *երկբարբառի պատմական փոփոխությունը* ույ *երկհնչյունի վերածվելը չէ։ Բոլոր երկբարբառների նման* ոյ-*ն էլ հայրենի բանավոր-խոսակցական տարբերակներում պարզվել ու փոխվել էր պարզ ձայնավորի։*

ա) Ոյ-*ի մենաբարբառացման մեջ առավել տիպականը* ոյ>ու *հնչյունափոխությունն է։ Ժամանակակից բարբառների մեծագույն մասում այսօր* ոյ *երկբարբառի դիմաց ունենք* ու *կամ առաջնային շարքի* ö։ *Սրանցից մեկի կամ մյուսի գոյությունը չի պայմանավորված հնչյունական միջավայրով։ Պարզապես մի որոշակի տարածքի բարբառներում (Գողթն, Սյունիք, Արցախ)* ոյ-*ի դիմաց զարգացել է առաջնային շարքի* ö. *ինչպես՝* բոյր>բօ̈ր, պօ̈ր, պօ̈րնը, բոյն>բօ̈ն, պօ̈ն, բոյլ>բօ̈լ, լույս>լօ̈ս, ծոյլ>ծօ̈լ, շոյտ>շօ̈տ, շօ̈դ, գրոյց>գօ̈րօ̈ց, քոյր>քօ̈ր *և այլն, իսկ մի այլ տարածքի բարբառներում (Պոլիս, Երզնկա, Կարին, Մուշ, Տիգրանակերտ և այլն)՝* ու. *ինչպես՝ գոյն>գուն, կուն, լոյս>լուս, խոյլ>խուլ, քոյր>քուր, թոյլ>թուլ, կապոյտ>կապուտ, գապուտ, ոյժ>ուժ և այլն։*

Հնչյունական այս երևույթը բավական հին է։ Նրա առաջին վկայությունները հասնում են մինչև X դարը։

Կատարված հնչյունափոխությունը գրավոր աղբյուրներում արտահայտվում է երկու եղանակով։ Մի դեպքում ոյ-*ի* u *արժեքը պարզապես դրսևորվում է* ու *գրով. երկրորդ դեպքում՝ կատարված հնչյունափոխության մասին մենք իմանում ենք ավանդական* ու-*ի փոխարեն* ոյ *գրու-*

---

14 Karst, *նշվ. աշխ., էջ 25։*

թյունից։ Այսպես, օրինակ. Սյունիքի և Վայոց ձորի վիմական արձանագրություններում ու ձեռագրերի հիշատակարաններում հանդիպում ենք Սյունյաց իշխաններից մեկի անվանը, որը բազմաթիվ անգամներ վկայվում է Բուրթէլ գրությամբ։ Եվ հանկարծ մի հիշատակարանում այդ անունը գրված է Բոյրթէլ (ԺԴ ՀձՀ 167, 1321 թ., ՏաթԵ)։ Հասկանալի է, որ այստեղ ոյ-ը ունի ու-ի արժեք։ Նման տառադարձությունը հնարավոր է եղել հենց այն պատճառով, որ ոյ-ը փոխվել էր ու-ի։

Ոյ>ու հնչյունափոխության վկայություններ հանդիպում են արդեն իսկ X—XI դարերի գրավոր աղբյուրներում. սկզբում սակավ, իսկ հետագայում՝ ավելի հաճախ։ Ըստ որում՝ հնչյունափոխությունը արձանագրվում է ոչ միայն բառակազմ ուղիղ ձևերում, այլև հոլովական վերջավորություններում։ Այսպես՝ X—XI դարերից հասած վկայություններ են. եկեղեցուս՝ փոխ. եկեղեցւոյս (941 թ.), հոգուս՝ փոխ. հոգւոյս (X դար)՝ փորագրված Թալինի Քրիստափորի տաճարի արձանագրություններում[15], զքուրն (<քոյր) զՏիկին (Գ. Հովս. հձ 235, 1058 թ.)՝ գրված մի ձեռագրի հիշատակարանում։ Հետագա դարերում օրինակները հաճախանում են, որը պայմանավորված է ոչ այնքան տվյալ երևույթի գործածության ծավալմամբ, որքան գրավոր աղբյուրների առատությամբ. օր. սրբամատուց<սրբամատոյց (Գ. Հովս. հձ 364, 1254 թ.), յուժ (<յոյժ) տառապանաւք (Ն. տ. 555, 1190—91 թթ., Այրիվանք), Աստուած ողորմի Առուծին հոգուն (<հոգւոյն) և Աղբարկանն որդուն (<որդւոյն) (Ն. տ. 569, 1193 թ.), մերձ ի յայս սրբուհուն (<սրբուհւոյն) Մանէ (Ն. տ. 681, 1201 թ.), զգիր անփութ (<անփոյթ) արնէ (Ն. տ. 976, 1246 թ.), մեր յուս (<յոյս) Ք̅ս̅ է (ԴՀՎ 3, Վայոց ձոր, 149, 1251 թ.), յերեկուն (<երեկոյն) տուր զայս դեղս (Մխ. Հեր. 1279 թ. № 416 ձեռ., 42բ) և այլն։

Հնչյունափոխությունն ընդգրկել էր նաև բառավերջի բաց վանկը. այսպես՝ զվանս առաքու (<առաքոյ) Երուսաղէմի (Գ. Հովս. հձ 774, 1215 թ., Երուսաղեմ), ի իշխանութեանս մերոյ Վահրամա որդոյ Արեւգունի, որու (<որոյ) տէր Յիսուս ողորմեսցի (Ն. տ. 803, 1219 թ.)։ Որ այս դեպքում հոլովական վերջավորության մեջ ու-ն առաջացել է ոյ-ից (և ոչ ու հոլովիչից), երևում է այնպիսի օրինակներում, որոնց մեջ նույն բառը նույն հոլովաձևում գրվում է և ու-ով, և ոյ-ով. այսպես՝ ... եղբաւր թագաւորին Հայոց Հեթմոյ ... գրեցաւ ... ի թագաւորութեանն Հայոց Հեթմու (Գ. Հովս. հձ 953, 1244 թ.), ողորմեսցի ... և Աստուածատրու ... ի փրկութիւն կենաց իմձ և եղբաւր իմոյ Աստուածատրոյ (Ն. տ. 686, 1201 թ.), իշու կաթն տուր խմելոյ... դու սկիզբն յիշոյ կաթն արա (Մխ. Հեր. 1279 թ. 416 ձեռ. 39բ) և այլն։

---

15 Ս. Ավագյան, նշվ. աշխ. էջ 179։

Սկսած այս ժամանակներից՝ ոյ>ու հնչյունափոխության ենթարկված բառերի օրինակները, ինչքան մոտենում ենք մեր ժամանակներին, այնքան ավելի առատանում են։ XIII—XV դարերի միջին հայերենյան բնագրերում (գեղարվեստական գրականություն, բժշկագիտություն, իրավագիտություն և այլն) այս փոփոխությունը արձանագրվում է համարյա այն բոլոր բառերում, որոնց մեջ ոյ-ը ենթակա է այս փոփոխությանը. այսպես՝ անոյշ>անուշ, ոյժ>ուժ, երեկոյ>երեկուն, իրիկուն, ընկոյզ>ընկուզ, թոյլ>թուլ, լոյս>լուս, շոյտ>շուտ, խոյլ>խուլ, լոյծ>լուծ, զրոյց>զրուց, յոյս>յուս և այլն։ Սրանցից հատկապես առաջին երկուսը (անուշ և ուժ) միջին հայերենյան բնագրերում առավելապես հանդես են գալիս հնչյունափոխված տեսքով և ընկալվում են որպես գրական լեզվի ձևեր։ Դա թերևս նրանից է, որ այդ բառերում ոյ>ու փոփոխությունը կատարվել է ավելի վաղ, քան մյուս բառերում։ Մխ. Հերացու «Ջերմանց մխիթարության» վերը նշված 1279 թ. ձեռագրում, օրինակ, հետևողականորեն գրված է ուժ, վատուժ, այն դեպքում, երբ ոյ>ու հնչյունափոխությամբ այլ բառերի գործածությունը այդ ձեռագրում շատ սակավ է։ Այս տեսակետից ավելորդ չէ հիշել նաև ոյժ բառի հնչյունափոխությունը Մեղրի-Գորիս տարածքի այսօրվա խոսվածքներում։ Թեև այս վայրերում ոյ-ի օրինաչափ փոփոխությունը ոյ>ö անցումն է, բայց ոյժ բառը շեղվելով այդ օրինաչափությունից՝ սպասվածին հակառակ, ունի ոյժ>օժ հնչյունափոխությունը։ Այս շեղումը միանգամայն հասկանալի կլինի, եթե նկատի ունենանք, որ ոյժ>օժ փոփոխությունը կատարվել է ոյժ>ուժ անցումից հետո։ Եվ իսկապես. ու>o փոփոխությունը այս վայրերի խոսվածքներին բնորոշ հնչյունական օրենք է (ութ>օթ, ուղել>օղէլ, ուռ>հօռ, ուռչել>օռչիլ, ուս>օս, թուխ>թօխ, թուղբ>թօխպ, թօղբ, թուղթ>թօխտ, թումբ>թօմբ, թուշ>թօշ, թուր>թօր, թուփ>թօփ և այլն, և այլն)։ Այստեղից կարելի էր եզրակացնել, որ տվյալ բարբառներում ու>o հնչյունափոխության գործառության շրջանում ոյժ բառի ոյ-ը արդեն հնչյունափոխվել էր ու-ի և այդ պատճառով էլ այդ բառում չի գործել ոյ>ö ընդհանուր օրինաչափությունը։ Այս փաստը կարևոր է դառնում հատկապես նրանով, որ այն կարող է օգնել ոյժ բառի մեջ կատարված ոյ>ու փոփոխության վաղեմությունը գնահատելու հարցում։

բ) Ոյ-ի մենաբարբառացման մյուս ընթացքը գնում է դեպի ոյ>ի փոփոխությունը։ Այսօրվա դրությամբ այս հնչյունափոխությունը հայտնի է Արարատյան բարբառի (Երևան, Աշտարակ, Փարպի, Օշական), Վայոց ձորի, Ուտիքի և Լոռու տարածքի խոսվածքներում։ Սակայն այս դեպքում էլ, սրանցից և ոչ մեկում այդ օրինաչափությունը չի գործում անխառն կերպով։ Ամեն տեղ էլ ոյ>ի անցմանը զուգահեռ առկա են նաև ոյ>ու փոփոխությամբ բառեր։

Տվյալ օրինաչափությունն ունեցող բարբառների լեզվական նյութի համեմատությունից երևում է, որ ոյ>ի փոփոխությունն ունեն որոշակի բառեր, որոնք են՝

բոյթ>բիթ, պիթ	պատրոյգ>պադրիք
գրոյց>գըրից	պատրոյս>պադրիս
թոյլ>թիլ	պտոյտ>պըտիտ
լոյս>լիս	քոյր>քիր
կապոյտ>կապիտ	

Այս օրինաչափությանը առհասարակ չեն ենթարկվել հետևյալ բառերը՝

անոյշ>անուշ	շոյտ>շուտ, շուդ
բոյն>բուն, պուն	ոյժ>ուժ
բոյս>բուս	սովորոյթ>սօվօրութք, սօվօրուտկ

(Այստեղ հաշվի չեն առնվում գրական լեզվից կատարված փոխառությունները)։

Ոյ-ի պատմական փոփոխության մեջ այս երկվությունը թերևս կարելի է բացատրել ժամանակագրորեն իրար հաջորդած երկու հնչյունափոխական երևույթների գործառությամբ։ Դրանցից առաջինը, ամենայն հավանականությամբ, եղել է ոյ>ու օրինաչափությունը, ինչպես և վկայում են մատենագրական տվյալները։

Ոյ>ի փոփոխության համար գրավոր աղբյուրները շատ քիչ բան են տալիս և այն էլ՝ ավելի ուշ շրջանից։ Առայժմ դրանց մեջ հնագույնը Հաղբատի վանքի 1273 թվականի մի արձանագրության մեջ հանդիպող քիրենց (ԿԴ Հաղբ. 196) օրինակն է, որից ենթադրելի է, թե այս վայրերի հայերենում կատարվել էր քոյր<քիր հնչյունափոխությունը։ Ավելի հավաստի է 1474 թ. Վայոց ձորում գրված մի ձեռագրի հիշատակարանի վկայությունը, որի մեջ քոյր>քիր հնչյունափոխությունը արձանագրվում է այդ բառի ուղիղ ձևում։ Ահա հիշատակարանի այդ հատվածը. «...իմ քիրն մեռաւ, իմ շքիլոն կոտրեցաւ. ինքն գլուխս ման երեկ ու քիրն յերաղի տեսայ և խիստ դառնացայ» (ԺԵ հձհ, 360)։ Այս նույն հիշատակարանում հանդիպում է նաև մի այլ օրինակ։ Դա թուլանալ բայի անցյալ կատարյալ թուլացաւ բայաձևի կողքին նրա բարբառային թիլացաւ ձևի գործածությունն է՝ «Մեզաւորս հէնձ դառնացաւ, Որ ձեռս թիլացաւ» (Ն. տ.), որը նույնպես խոսում է ոյ>ի (թոյլ>թիլ) օրինաչափության գոյության մասին։ Հատկանշական է նաև այն, որ այս հնչյունափոխությունը այսօր էլ՝ արձանագրվում է նույն տարածքի բարբառներում։

գ) Բարբառների մի այլ խմբում հին հայերենի ոյ-ի դիմաց այժմ ունենք երկբարբառային ո(ô) կամ պարզ օ(ö) ձայնավոր։ Առաջինը հիմնականում հատուկ է Վասպուրականի տարածքի բարբառներին (Վան, Շատախ, Խոյ-Ուրմիա և այլն), իսկ երկրորդը՝ Փոքր Ասիայի մի շարք

բարբառների (Մալաթիա, Խարբերդ, Հաչըն և այլն)։ Երկու տարածքներում էլ ոյ>ո(ո̂), օ(ö) հնչյունափոխությունը առկա է միավանկ բառերում։ Բազմավանկ բառերում ոյ-ի դիմաց ու ձայնավոր է։ Այդ բանը շատ լավ երևում է Վանի և Մալաթիայի բարբառներից բերվող հետևյալ օրինակներում։

Վանի բարբառ

բոյթ>պո̂թ	կոյր>կոր	անոյշ>անուշ
բոյն>>պո̂ն	շոյտ>շոտ	երեկոյ>իրիկոն
գոյն>կ՛ո̂ն	ույժ>վոժ	նմոյշ>նըմուշ
թոյլ>թո̂լ	քոյր>քո̂ր	պատրոյգ>պատրուք՛ պատրոյս>պատրուս
լոյս>լո̂ս		վարագոյր>վա̈րա̈կուռ[16]

Մալաթիայի բարբառ

բոյթ>փօթ	աշխոյժ>աշխուժ	կապոյտ>գաբուդ
բոյն>փօն	անոյշ>անուշ	ծկոյթ>ջուգութ
գոյն>քօն	անդամալոյծ> անթամալուծ	պատրոյգ>բադրուք
թոյլ>թօլ		պատրոյս>բադրուս[17]
(ող)կոյզ>գօզ	զգոյշ>ուսկուշ	
լոյս>լօս	գլոյց>գուլուց[17]	
քոյր>քօր		

Վասպուրականի բարբառներում ոյ-ի դիմաց երկբարբառային ո(ո̂)-ի առկայությունը նոր երևույթ է, առաջացած o>uo ընդհանուր հնչյունափոխությամբ՝ կատարված այն բանից հետո, երբ ոյ-ը պարզվել ու վերածվել էր o ձայնավորի։ Այդ ապացուցվում է նրանով, որ եթե Մալաթիայի բարբառում ոյ>օ անցումը իր արդյունքով համընկնում է ո>օ փոփոխության հետ, ապա այստեղ նույնպես ոյ-ի երկբարբառացումը համընկնում է ո ձայնավորի նման փոփոխության հետ։ Հմմտ. օրինակ՝

Վան	Մալաթիա
լոյս>լո̂ս	լոյս>լօս
թոյլ>թո̂լ	թոյլ>թօլ և այլն,

և նույն օրինաչափությամբ՝

հող>խող	հող>հօղ
կոկ>կոկ	կոկ>գօգ
կոթ>կոթ	կոթ>գօթ
պորտ>պոռտ	պորտ>բօրդ և այլն։

16 Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, էջ 52։

17 Թ. Դանիելյան, Մալաթիայի բարբառը, 1967, էջ 43։

Այս բոլորից արվելիք եզրակացությունն այն է, որ ժամանակագրորեն ավելի հին երևույթ է ոյ>օ հնչյունափոխությունը. ոյ-ից առաջացած ձայնավորի երկբարբառացումը ետին է և ժամանակի տեսակետից համընկնում է ո>uo փոփոխության հետ։

Վանի և Մալաթիայի տարածքի բարբառներում կատարված այս հնչյունափոխության վերաբերյալ մատենագրական տեղեկություններ չկան։ Դա թերևս բացատրվում է նրանով, որ այդ փոփոխությունները որպես խիստ բարբառային, մերժվել են գրավոր լեզվի կողմից։ Անշուշտ, որպես այս հնչյունափոխության դրսևորում չպետք է համարել գրավոր վաղ աղբյուրներում՝ բառավերջի դիրքում ոյ-ի դիմաց ո գրության դեպքերը (Աշոտ-Աշոտո՝ փոխ. Աշոտոյ և այլն), որոնք ոչ թե ոյ երկբարբառի մենաբարբառացման, այլ պարզապես բառավերջի յ-ի անկման արդյունք են։

դ) Հին ոյ երկբարբառի դիմաց երկհնչյունային այ-ը հատուկ է Անտիոքի շրջանի բարբառներին և մասնավորապես Սվեդիայի բարբառին։ Այս փոփոխությունը այստեղ ևս արձանագրվում է միայն միավանկ բառերում. այսպես՝

բոյթ>պայնտ
բոյն>պայն
բոյս>պայս
թոյլ>թայլ
լոյս>լայս

կոյս>գայս
(ող)կոյզ>գայզ
կոյր>գայր
(քոյր բառը այստեղ լինում է մի փոքր շեղումով՝ քուայր)

Բազմավանկ բառերում օրինաչափությունը թեև մի քիչ խախտված է, բայց, այնուամենայնիվ, հիմնականում գերակշռում են ոյ>է հնչյունափոխությամբ բառերը՝

ընկոյզ>ունգէզ
կապոյտ>գաբբէդ
հօրաքույր>հուրքէր

պատրոյս>բադրէս
գրոյց>գըրէյց
շոյտ>ուշէդ (վերջինըս՝ բառասկզբի ու-ի հավելումից հետո որպես երկվանկ բառ)

Սրանց մեջ միայն գրոյց>գըրէյց բառն է, որ ոյ-ի դիմաց սպասվելիք է-ի փոխարեն ունի երկհնչյուն էյ։

Եթե հաշվի առնենք, որ Սվեդիայի բարբառում հին հայերենի ի-ն հնչյունափոխվել է է ձայնավորի կամ էյ երկհնչյունի, ինչպես այդ արձանագրվում է բազմաթիվ բառերում՝ ամիս>ա̈մէս, անկողին>անգուղէն, բամբին>պիժէն, գետին>կիդէն, գին>կէն կամ կէյն, գիր>կէր կամ կէյր, դեղին>տիղէյն, թռչիր>թինէր, խաւիծ>խավէց, խին>խէչ և այլն, և այլն, ապա բազմավանկ բառերում ոյ-ի դիմաց է ձայնավորի կամ էյ երկհնչյունի առկայությունը լրիվ բացատրելի կլինի։ Պարզ է, որ

դրանք առաջացել են ոյ>ի հնչյունափոխությունից հետո, երբ սկսել է գործել ի>է, էյ ընդհանուր օրինաչափությունը։ Այլ կերպ ասած՝ այս տարածքի բարբառներում նախ կատարվել է կապոյտ>գաբբիդ, պատ-րոյս>բադրիս, զրոյց>զըրից փոփոխությունը և հետո միայն այդ ձևերից՝ ամիս>ա̈մէս, անկողին>անգուղէն և նման բառերի հետ միա-սին ընդհանուր օրինաչափությամբ դարձել գաբբէդ, բադրէս, զըրէյց և այլն։

Անհասկանալի է մնում միայն միավանկ բառերում կատարված փոփոխությունը։ Կարելի է միայն ենթադրել, թե այդ այ-ը զարգացել է նույն ճանապարհով՝ ոյ>ի>է հնչյունափոխությունից հետո՝ բարբա-ռային էյ-ից կամ է-ից, մանավանդ որ այստեղ բառավերջի բաց (ավելի քիչ հաճախականությամբ նաև փակ) վանկում հին ի-ի դիմաց ունենք ավելի լայն բացվածքի ձայնավորներ՝ ա կամ ա̈ օրինակ՝ ագի>ակա, այգի>իկկա, անօրի>անուրա, բարի>պա̈րա̈, գարի>կարա, գինի> կինա, զօդի>կուդա և այլն, ինչպես նաև՝ բոինչ>փըռա̈նչ, երկինք> իրգա̈նք. թի>թա̈ն, թրիք>թըրա̈ք, ինն>ա̈ննը, ինքն>ա̈նք, խլինք> խըլա̈նք, կծիկ>գըձա̈ք, ճիճղ>ճա̈նգ, տիկ>դա̈գ, քրտինք>քըրդա̈նք և այլն։ Ի-ից մինչև այ երկհնչյունի անցման օրինակներ տալիս է Մեղրի-Կարճևան-Ագուլիս տարածքի հայերենը։ Այս նույն կարգի բա-ռերում Մեղրու բարբառը ի-ի դիմաց ունի է[18], Կարճևանի բարբառը՝ ա(ա̈), Ագուլիսի բարբառը՝ այ երկհնչյուն. այսպես՝

Հին հայերեն	Մեղրի	Կարճևան	Ագուլիս
հինգ	(հինգ)	հանգ՛	հայնգ
միս	մէս*	մա̈ս	մայս
միտք	մէթք	մաթք՛	մայտք
կիր	կէր*	կ՛ա̈ր	կայր
տիկ	տէկ	տագ՛	տայգ՛
կին(իկ)	կընէկ՛	կընագ՛	կընայգ
կծիկ	կըծէկ՛*	կըծագ՛	կըծայկ՛
խլինք	խըլէնք՛	խըլանք՛	խըլայնք[19]
ծիծ	ծէծ*	ծա̈ծ	ծայծ և այլն։

Եթե իսկապես ի-ից կարող է զարգանալ երկհնչյուն այ, ապա ոյ-ով միավանկ բառերի հնչյունափոխությունը Սվեդիայի բարբառում կարող էր ընթացած լինել հենց այդ ուղիով՝ ոյ>ի>է>ա>այ։ Սա թեև են-թադրություն է, բայց կարծում ենք, որ բավական հավանական։

---

18 Մեղրու բարբառի համար աստղանիշով բերված օրինակներում է ձայնավորը է. Աղայանի կողմից տառադարձված է ըէ ձայնավորով, որը է-ի արտասանական ազատ տարբերակն է։

19 Աճառյանի մոտ (Քննություն Ագուլիսի բարբառի) գրական՝ խըլինք ձևով։

Այսպիսով, եթե ընդհանրացնելու լինենք ոյ երկբարբառի պատմական փոփոխությունների վերը նկարագրված բոլոր դեպքերը, ապա դրանց մեջ պետք է առանձնացնել հիմնականում երեք, իրարից անկախ զարգացած, օրինաչափություններ (ոյ>օ, ոյ>ու, ոյ>ի), որոնցից և հետագայում առաջացել են մյուս համապատասխանությունները։ Սրանց մեջ, ամենայն հավանականությամբ, ամենից առաջ կատարվել է ոյ>ու հնչյունափոխությունը՝ սկզբնական շրջանում ընդգրկելով համեմատաբար քիչ թվով բառեր։ Որ իրոք ոյ>ու հնչյունափոխությունը սկզբնապես կատարվել է մի խումբ բառերում (նախքան այն, որ կսկսեին գործել հնչյունափոխական մյուս օրինաչափությունները՝ ոյ>ի, ոյ>օ), երևում է նրանից, որ վերը նշված երեք հնչյունափոխությունների գործառության սահմաններում ամենուրեք էլ հիմնական օրինաչափությունից շեղվում են նույն բառերը, որոնք փոխանակ ենթարկվելու այդ վայրերին հատուկ ընդհանուր օրինաչափությանը, ենթարկվում են մի միասնական ոյ>ու փոփոխության։ Դրանով է պայմանավորված նաև այն, որ մատենագրության մեջ ամենավաղ վկայությունները վերաբերում են ոյ>ու փոփոխությանը և որ XII—XIII դարերի գրավոր աղբյուրներում այդ բառերից մի քանիսի գրության մեջ գրական լեզվի համար սովորական են դառնում հնչյունափոխված ձևերը (ուժ, անուշ, շուտ), որ այդ նույն բառերը հայերենի բարբառների մի մասում ենթարկվում են ոչ թե ոյ երկբարբառի՝ այդ վայրերին հատուկ փոփոխությանը, այլ ու ձայնավորին բնորոշ հնչյունափոխությանը (ուժ>օժ, անուշ>անօշ)։ Այս բոլորը միասին վերցրած բավարար ապացույցներ կարող են լինել՝ տեղական հնչյունափոխություններից այդ մի խումբ բառերում կատարված շեղումները բացատրելու համար։

Իւ (Եւ)-Ի ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Վերն արդեն ասվել է (տե՛ս էջ 148), որ հին գրական հայերենում իւ և եւ երկբարբառները հնչյունական նույն դիրքում ու շրջապատում հանդես էին գալիս որպես նույն հնչույթի ազատ տարբերակներ և առանց իմաստային տարբերակման փոխարինում էին միմյանց (ալիւր‖ալեւր, արիւն‖արեւն, աղբիւր‖աղբեւր, ճարիւր‖ճարեւր, երկիւղ‖երկեւղ և այլն)։ Սրանցից եւ-ով ձևերը համարվում են ավելի հին։ Բայց պետք է կարծել, որ իւ-ով և եւ-ով գրության ձևերի տակ նախապես թաքնված են եղել բարբառային հնագույն տարբերություններ, որոնք այնուհետև համահարթվել են (թերևս հենց գրական լեզվի պատմության սկզբում)՝ բարբառներում թողնելով միայն որոշ հետքեր։ Այդ բանը երևում է ինչպես գրավոր աղբյուրներում, այնպես էլ ժամանակակից բարբառներում այդ երկբարբառների կրած փոփոխություններում։

ա) Իւ երկբարբառը հենց սկզբից իր մեջ կրում էր փոփոխության ենթարկվելու երեք պոտենցիալ հնարավորություն։ Նրա մեջ կատարված փոփոխությունների հիմնական ազդակը եղել է հնչերանգը։ Բարձրացող հնչերանգով իւ-ը կարող էր վերածվել (և վերածվել է) երկհնչյուն yu-ի՝ պահպանելով միայն երկրորդ բաղադրիչի ձայնավորական հատկանիշը։ Իւ-ի երկհնչյունային այդպիսի արժեքավորում կատարվել է դեռևս նախամիջինհայերենյան շրջանում, երբ գրաբարը դադարել էր այլևս խոսակցական լեզու լինելուց։ Եվ քանի որ հայերենի բանավոր-խոսակցական բոլոր տարբերակներում իւ երկբարբառը (ի թիվս այլ երկբարբառների) պարզվել ու վերածվել էր պարզ ձայնավորի և այդ հիմքի վրա վերացել էր իւ-ի երկբարբառային արտասանությունը, գրությանը համապատասխան, գրական լեզվում ձևավորվում է նրա երկհնչյունային արտասանությունը։

Մատենագրության մեջ թեև շատ հազվադեպ, բայց հանդիպում են այս փոփոխությունը արձանագրող օրինակներ։ Այն նախ՝ արտահայտվում է իւ-ի փոխարեն իու գրությամբ, երբ գրական լեզվում ձևավորված երկհնչյունային արտասանությունը անմիջապես դրսևորվում էր ըստ հնչյունական գրության։ Այդ բանը շատ որոշակիորեն արտահայտված է միւս բառի բազմաթիվ կիրառություններում, մի հանգամանք, որ բացառում է նման գրության պատահական լինելը։ Այսպես, օրինակ. 1341 թվականի գրչությամբ մեզ հասած մի Ճառընտիրում (գրիչ Տերտեր Երեվանցի) շատ հաճախ միւս բառի դիմաց գրված է միուս. այսպես՝... զմիուսն սիրիցէ, կամ զմինն մեծարիցէ, զմիուսն արհամարիցէ (Ձեռ. 8030, էջ 53ա, 53բ), ի քո միուս անկամ գալստեանդ (ն. տ. 70ա), միուս անգամ գալուստն (ն. տ. 100ա)։ Նույնը նաև հիշատակարաններում՝ ... ի միուս անգամ գալստեան (ԺԵ ՀՁՀ I, 325, 1424 թ.) և այլն։ Իւ-ի մեջ կատարված նույն փոփոխությունը մատնվում է նաև գրության այնպիսի ձևերում, երբ երկհնչյունի յ-ն դրափոխությամբ փոխել է իր տեղը։ Օրինակ, Ամիրդովլաթ Ամասիացու «Ուսումն բժշկության» հեղինակային ձեռագրում հանդիպում է արիւն բառի այրուն գրչությունը. «Եւ հանց որ այրունն ի ծիծն եփի (Ձեռ. 8871, էջ լե), Եւ ինքն զայրունին զմրուրն ինք քաշէ (ն. տ. իդ)։ Ոչ մի կասկած չի կարող լինել, որ այրուն բառաձևը առաջացել է արյուն գրական արտասանությունից՝ րյ>յր դրափոխությամբ։ Նման օրինակներ հանդիպում են նաև «Անսիզք» օրենքների գրքում. Գայ զայրին (Անս. 33), ...այրոյն չլինի եղած (ն. տ. 61) և այլն, թեև սրանց մեջ ս ձայնավորը արտահայտված է իւ, ոյ տառակապակցություններով[20]։

---

20 Ոմանց մոտ կա այն թյուր կարծիքը, թե այրոյն, սրոյն գրության ձևերում կատարվել է իւ>ոյ հնչյունափոխություն և որ իբր այդ դեպքում իւ-ը փոխվել էր սy երկ-

Իւ երկբարբառի երկհնչյունային արտասանությունը, որ այս ժամանակներում ձևավորվել էր գրական հայերենում, հարատևում է մինչև մեր օրերը։ Ահա այդ արտասանությունն է, որ այսօր ընկած է մեր գրական լեզվի ուղղախոսության հիմքում։ Գրական լեզվում իւ-ի արտասանական այդ առանձնահատկության հաշվառմամբ էլ 1922 թվականի ուղղագրական բարեփոխումների ժամանակ որոշվեց այն գրել ըստ իր հնչման՝ յու, ալյուր, արյուն, աղբյուր, երկյուղ և այլն։

Սակայն գրական լեզվից դուրս, հայերենի բանավոր-խոսակցական տարբերակներում իւ-ի փոփոխությունը ընթացել է այլ ուղղությամբ։ Այն ենթարկվել է երկբարբառների փոփոխության ընդհանուր օրենքին, այն է՝ գնացել է միաբարբառացման ուղիով։

բ) Հայերենի բարբառներում արձանագրվում են իւ-ի երկու կարգի փոփոխություններ՝ իւ>ու ու̈ և իւ>ի։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկու դեպքում էլ դրանք զարգացել են նույն նախահիմքից։ Ըստ որում՝ իւ-ի փոփոխության ուղղությունը պայմանավորված է եղել նրանում կիրառված հնչերանգի բնույթով։ Բարձրացող հնչերանգը իւ երկբարբառին հնարավորություն է տվել ոչ միայն հնչվելու որպես երկհնչյուն յու, այլև վերածվելու իր երկրորդ բաղադրիչի որակին (ü), իսկ որոշ դեպքերում էլ՝ առաջին բաղադրիչի ազդեցությամբ, փոխելու իր արտաբերության շարքը (ü)։ Այս երկու փոփոխություններն էլ այսօր արձանագրվում են մեր բարբառներում։ Իւ> ու̈ համապատասխանությունը հատուկ է մասնավորապես Վասպուրական-Սյունիք-Արցախ տարածքի բարբառներին (1), այն դեպքում, երբ իւ>ու փոփոխությունը տեղի է ունեցել Մուշ-Սասուն-Երզնկա-Ակն-Մալաթիա-Շապին-Գարահիսար-Կարին տարածքի բարբառներում (2). այսպես՝

	1	2
ալիւր>	ա̈լու̈ր	ալուր
արիւն>	ա̈րու̈ն	արուն
ձիւն>	ձու̈ն, ծու̈ն	ձուն, ծուն
սիւն>	սու̈ն	սուն
հարիւր>	հա̈րու̈ր, հÖրու̈ր	հարուր և այլն

Իւ երկբարբառի այս փոփոխությունը բավական հին է։ Այն վկայվում է սկսած X դարից[21]։ Կատարված հնչյունափոխությունը արտա-

---

հնչյունի։ Դա ճիշտ չէ։ Այդ բանը շատ լավ երևում է հենց բերված օրինակներում, երբ յ-ի դրափոխությունից հետո էլ ü-ն արտահայտված է իւ-ով և ոյ-ով։

21 Ս. Ավագյանը իր վերը հիշատակված աշխատության մեջ որպես հնագույն վկայություն բերում է Տաթևի Պողոս-Պետրոս եկեղեցու 895 թ. շինարարական արձանագրության Սունեաց ձեր (էջ 193), բայց դա, ցավոք, վրիպակ է։ Արձանագրության գծագրում այդ բառը ճիշտ չի ընդօրինակված, թեև տպագիր բնագրում այն վերարտադրված է ճիշտ՝ Սիւնեաց։ Արձանագրությունն ունի լուսանկար և նրանում շատ պարզ երևում է այդ բառի Սիւնեաց գրությունը։

հայտված է մի կողմից՝ ըստ հնչյունական գրության՝ ու գրի միջոցով, և մյուս կողմից՝ հին ւ ձայնավորը իւ-ով արտահայտելու միջոցով (քանի որ իւ>ւ հնչյունափոխությունից հետո ւ-ն կարող էր արտահայտվել նաև իւ-ի միջոցով)։ Ամենահին (հավաստի) վկայությունն է Անիի 944 թվականի արձանագրություններից մեկում զուգակից բառի զիւգակից գրչությունը. այսպես՝ «Ես՝ Շուշան, տիկնաց տիկին, զիւգակից Գրիգո-րոյ իշխանի» (ԴՀՎ 1, 32)։ Հակառակ գրության այսպիսի ձևեր հանդի-պում են նաև հաջորդ դարերի գրավոր աղբյուրներում. այսպես՝ ... զիւ-գակից Գրիգորի (ԴՀՎ 1, Անի, 55, 1210 թ.), ...նեղեր, որ ի յայս ան-դամունքս ընծային՝ այս են. կայ որ ի ձիւն (=ձուն) լինին, և են, որ ի յերանքն (Գրիգ. 164. նույն էջում կրկնված երկու անգամ) և այլն։

Իւ>ւ հնչյունափոխության վկայությունները առավել հաճախ ներ-կայանում են ու գրի միջոցով, որի տակ, որոշ վայրերի համար, պետք է հասկանալ նաև առաջնային շարքի (քմայնացած) ü ձայնավոր, ինչպես այդ հատուկ է Վասպուրական-Արցախ տարածքի այսօրվա բարբառներին։ Բերենք իւ>ու հնչյունափոխության մի շարք օրինակներ. «...ստուած թուղու զուր (<զիւր) զյանցանքն» (Գ. Հովս. հձ 235, 1058 թ.), զնեց այս սուրբ աւետարանս ... ուր (<իւր) յիշատակ ուր ծնողած (Ն. տ. 569, 1193 թ.), ... ողորմի Առուծին (<Առիւծին) հոգուն (Ն. տ. 569, 1193), Եւ զնոյն բուրայպատիկ (<բիւրապատիկ) եւս արարին (Ն. տ. 381, 1170 թ.)։ Վկայությունները ավելի հաճախանում են հաջորդ դարերում՝ ... նաւթ եւ կուպրն՝ ձութն (<ձիւթն) եւ ապակին (Սմբ. Դատ. 16), ... նայ որ պառկիլն դժարանայ, եւ երբ նստի և ի յոտն ելնէ՝ դուրանայ (<դիւրանայ) ... եւ շնչուն ելնելն դուր (<դիւր) լինի (Գրիգ. 107), ... արի և քաջ վարդապետին Սունեաց (<Սիւնեաց) եպիսկոպոսին (ԺԵ հձհ I, 63, 1406 թ.), Գրեցաւ ի վանս զՍտաթև, յերկիրս Սունեաց (Ն. տ. 87, 1408 թ., Տաթև), ... եղեւ զրաւ սորա ի յութհարուր (<ութ-հարիւր) թվականի եւ յիսուն եւ եւթն յաւելորդի (Ն. տ. 89, 1408 թ.), Ով պատուական եղբայրք, ընտրեալք ի բուրոց (<բիւրոց) (Ն. տ. 112, 1410 թ. Սարկավագանց վանք), Ես՝ վերջին ստացող, խուսն (<հիւսն) Ներսէս... խուսն Խոցդեղին (Ն. տ. 125, 1411 թ.), ... յիշեցէք... զխուսն Թումէն (ԺԵ հձհ II, 313, 1471 թ., Աղթամար)։ Այսպես նաև Ամիրդով-լաթի «Ուսումն բժշկության» հեղինակային ձեռագրում՝ առուն>արին, առունել<արինել, ձուն<ձին, սուն<սին, հարուր<հարիւր, հուսու-սային<հիւսիսային և այլն։

գ) Իւ>ի փոփոխությունը կատարվում է իջնող հնչերանգի դեպքում, երբ երկբարբառի պարզեցման ընթացքում վանկարարի դերը իր վրա է վերցնում առաջին բաղադրիչը (ի-ն)։ Այս հնչյունափոխության առաջին

(հավաստի) վկայությունները վերաբերում են X դարին[22]։ Դրանցից ամենահինը, հավանաբար, Գնդեվանքի (Վայոց ձորում) արձանագրություններում Սիւնեաց բառի մեջ վկայվող փոփոխությունն է։ Ահա այդ արձանագրությունները. «Ես՝ Սոփի, Սինեաց տիկին, Դերանկին դուստր, կին Սմպատա, որդի Աշոտի Սինեց իշխանի, շինեցի զեկեղեցիս» (ԴՀՎ 3, 13, 931 թ.), «Մատանի էր անակն, եդիր Սոփի Սինեաց տիկին» (ն. տ.)։ Առաջին արձանագրության տակ հրատարակիչ Ս. Բարխուդարյանը ունի հետևյալ ծանոթագրությունը. «Սինեաց և Սինեց բառերը հավասարապես նշանակում են Սիւնեաց. չենք ուղղում և լրացնում, որովհետև Սյունյաց նահանգի արձանագրությունների մեջ նման գրություն հանդիպում է այլ վայրերում ևս. կարծում ենք, որ դա ժողովրդական արտասանություն է»։

Ձեռագրերում այլուր, և հատկապես նրանց կից հիշատակարաններում ևս, հանդիպում են հնչյունափոխված նման ձևեր (ճիշտ է, սակավ), բայց դրանց մեջ ավելի հաճախական են իւր դերանվան հիմքով կազմըված ձևերի վկայությունները. օրինակ՝ ...բերէ գիր (<գիւր) պէտքն (Անս. 27), պատեհ է, որ ավտան իր (ն. տ. 25), ի յիրենց շընին ընկաւ (ն. տ. 33), ...աշօգիքն վարէ յիրմէն (Մխ. Հեր. 24ա), ...իրենց որդուն (ԴՀՎ 1, Անի, 64, 1310 թ.) և այլն։ Իւր-ից հնչյունափոխված իր-ը այս ժամանակներում գիտակցվում է որպես գրական լեզվի նորմային համապատասխան բառաձև և այդ պատճառով էլ բնագրերում գործածվում է մեծ հաճախականությամբ։

Իւ>ի հնչյունափոխությունն այժմ արձանագրվում է հիմնականում Արարատյան բարբառի խոսվածքներում (Երևան, Աշտարակ, Օշական, Փարպի, Լոռի և այլն) և մյուս կողմից՝ արևմտյան տարածքի մի շարք բարբառներում (Մալաթիա, Խարբերդ, Տիգրանակերտ և այլն)։ Ընդ որում՝ արևելյան տարածքում օրինաչափությունն ընդգրկում է և՛ միավանկ, և՛ երկվանկ բառերը հավասարապես՝ ալիւր>ալիր, արիւն>արին, հարիւր>հարիր, գիւր>գիր, ձիւն>ձին, սիւն>սին.) թեև կան նաև բացառություններ՝ աղբիւր>ախպուր, ձիւթ>ձութ, հիւսել>հուսել[23]։

Արևմտյան տարածքի բարբառներում իւ>ի հնչյունափոխությունը հիմնականում ընդգրկում է երկվանկ բառերը՝

ալիւր>ալիր	հիւսել>հիսէլ
աղբիւր>ախպիր	նիւրիւն>նէրին
արիւն>արին	հիւսիս>հիսուս
հարիւր>հարիր	

---

22 Այստեղ նկատի չենք առնում ուղղագրական այնպիսի շեղումները, որոնք կարող են գրչագրական պատահական վրիպումներ լինել։

23 Այս և մյուս դեպքերում, հիմնական օրինաչափությունները որոշելիս, նկատի չենք առնում բացառությունները, որոնք ամեն դեպքում էլ կան։

Միավանկ բառերում իւ-ը ենթարկվում է այլ փոփոխության (իւ>o)՝ ձիւն>ծօն,ցօն, սիւն>սօն, ձիւք>ծօք:

Ուշադրության է արժանի այն, որ այս բարբառներում (Մալաթիա, Խարբերդ) միավանկ բառերի մեջ կատարված հնչյունափոխությունը համընկնում է ոյ երկբարբառի ոյ>o փոփոխության հետ (բոյն>փօն, պօն, գոյն>fօն, կօն, բոյլ>բօլ և այլն): Սա ոմանց հիմք է տվել կարծելու, թե հին ձիւն, սիւն, ձիւք և նման բառերը այս բարբառներում նախ դարձել են ձոյն, սոյն, ձոյք և ապա՝ ոյ-ի ընդհանուր հնչյունափոխությամբ փոխարկվել o-ի: Սակայն ավելի տրամաբանական կլինի ենթադրել, որ այս տարածքի բարբառների հիմքում ընկած հայերենում, հիշյալ բառերում, նախապես եղել է ոչ թե իւ, այլ ոյ երկբարբառ, այլ կերպ ասած, մենք այստեղ անպայմանորեն գործ ունենք բարբառային հնագույն տարբերությունների հետ՝ ձիւն–ձոյն, սիւն–սոյն, ձիւք–ձոյք տարբերակներով: Ի միջի այլոց այս օրինաչափությամբ Մալաթիան և Խարբերդը միայնակ չեն. սրանց հարում են նաև այն բարբառները, որոնց մեջ թեև երկվանկ բառերի իւ-ը հնչյունափոխվում է ի-ի, բայց նշված միավանկ բառերի իւ-ը փոխվում է ու-ի (ինչպես և ոյ երկբարբառը): Այդպես է, օրինակ, Տիգրանակերտի բարբառում՝

ալիւր>ալիր բայց՝ դիւր>թուր
արիւն>արին ձիւն>ցուն
հարիւր>հարիր սիւն>սուն,
խիւր>խիր ինչպես և ոյ երկբարբառ ունեցող բառերում՝ բոյն>փուն, բոյլ>բուլ և այլն:

դ) Իւ երկբարբառի հնչյունափոխությունը տարբերություններ է ցույց տալիս նաև հին -ութիւն ածանցում: Բարբառների մի մասում այն համընթաց է իւ>ու, իւ>ի ընդհանուր հնչյունափոխությանը: Այդպես է, օրինակ, արևմտյան տարածքի բարբառների մի մասում (Երզնկա, Շապին-Գարահիսար, Ակն. արևելքում՝ Ղարաբաղի բարբառի որոշ խոսվածքներ), որտեղ ի>ու հնչյունափոխությունը ընդհանուր է (ալիւր<ալուր, ալյուր ձիւն>ծուն, ծ՚ուն և եղբայրութիւն>ախպարութուն, ախպըրութուն, ըխպըրութուն): Խարբերդի բարբառում էլ ընդհանուր է իւ>ի հնչյունափոխությունը (ալիւր>ալիր և եղբայրութիւն>ախպարութին):

Մյուս վայրերում օրինաչափությունը միանման չէ: Բարբառների մի մասում՝ տվյալ վայրին հատուկ իւ>ի ընդհանուր օրինաչափությունը հակադրվում է -ութիւն ածանցում կատարվող իւ>ու փոփոխությունը (ալիւր>ալիր, բայց՝ եղբայրութիւն>ախպէրութուն, ախպարութուն). Այդպես է, օրինակ, Մալաթիայի, ինչպես նաև Արարատյան բարբառի մի շարք խոսվածքներում (Փարպի, Օշական, Աշտարակ, Լոռի, Վայոց ձորի

րոշ խոսվածքներ)[24]: Բարբառների մյուս մասում էլ իւ>ու ընդհանուր հնչյունափոխությանը հակադրվում է -ութիւն ածանցի իւ>ե, է փոփոխությունը (ալիւր>ալուր, բայց եղբայրութիւն>ախպրութեն, ախպրութէն): Այս օրինաչափությունն էլ հատուկ է Վանի, Շատախի, Սասունի, Դիադինի, Մուշի, Կարինի և հարակից վայրերի խոսվածքներին: Մի այլ տարածքում իւ>ո̈ ընդհանուր օրինաչափությանը հակադրվում է նույն ածանցի իւ>ի փոփոխությունը (ալիւր>ա̈լո̈ր, բայց եղբայրութիւն>ըխպըրօթին): Այս էլ հատուկ է Ագուլիս—Մեղրի—Ղարաբաղ տարածքի խոսվածքների մեծ մասին:

Պետք է կարծել, որ բոլոր այդ դեպքերում մենք գործ ունենք բարբառային հին տարբերությունների հետ, որոնցից զարգացել են արդի գավառական ձևերը: Պետք է ենթադրել, որ այդ ածանցը մի վայրում ունեցել է իւ, մի այլ վայրում եւ երկբարբառ (գողութիւն-գողութեւն, եղբայրութիւն-եղբայրութեւն, fաջութիւն-fաջութեւն և այլն) և այդ երկու նախաձևերի հիմքի վրա էլ հետագայում առաջացել են այդ բառերի արդի բարբառային տարբերակները: Ըստ որում՝ այդ ածանցի իւ-ով տարբերակից զարգացել են մի կողմից՝ գրական լեզվի յու երկհնչյունային (-ություն), և մյուս կողմից՝ բարբառային ու ,ո̈ ձայնավորային (-ութուն, ութո̈ն) արժեքները (ներառյալ նաև այն բարբառները, որոնց մեջ -ութիւն ածանցից դուրս, այլ բառերում, իւ-ի դիմաց ի է)[25], իսկ եւ-ով տարբերակից՝ բարբառների մյուս մասի ե, է, ի հնչումները: Այս վերջինում, ըստ ժամանակային հաջորդականության, նախ կատարվել է եւ> ե(է) փոփոխությունը, որից հետո այդ ե-ից Ագուլիսի—Մեղրիի—Ղարաբաղի տարածքի խոսվածքներում զարգացել է ի (եղբայրութեւն>ախպէրութեն>ըխպըրօթին): Այդ բանը հաստատվում է նշված վայրերին հատուկ ե>ի հնչյունափոխության օրինաչափությամբ[26]:

Այս բոլորից դուրս կան նաև ընդհանուր օրինաչափությունից շեղվող մի քանի այլ բառեր, որոնք նույնպես հանդես են բերում հին բարբառային տարբերություններ: Դրանցից են, օրինակ, հին գեւղ‖գիւղ տարբերակների դիմաց հայերենի բարբառներում այսօր հանդես եկող գեղ, գէղ, կեղ, կէղ համապատասխանությունները, որոնք, անտարակույս, ծագում են գեւղ տարբերակից (երկբարբառի պարզեցմամբ): Գրական լեզ-

---

24 Արարատյան բարբառի Երևանի խոսվածքում -ութիւն ածանցի իւ-ի դիմաց յու երկհնչյուն է (գողություն>գ՛օղություն), որը, կարծում ենք՝ գրական լեզվի ազդեցություն է:

25 Այդ շեղումը այնքան էլ հասկանալի չէ: Դա կամ գրական լեզվի մասնակի ազդեցության հետևանք է, կամ պայմանավորված է -ություն ածանցով բառերի ձևաբանական առանձնահատկությամբ:

26 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Է. Աղայան, Բարբառային հնագույն տարբերությունները հայերենում, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1958, № 5, էջ 74—78:

վում այդ նույնի դիմաց ունենք գյուղ՝ ժառանգված գիւղ ձևի ավանդական արտասանությունից։

Մատենագրության մեջ այդ բառի գրչագրական տարբերակները ավելի բազմազան են։ Այստեղ հանդիպում են հետևյալ գրչությունները՝ գեւղ, գեղ, գեաւղ, գիւղ, գուղ: Բերենք դրանցից մեկական օրինակ՝ ... ի գեւղս Խոռինանց (ԺԴ ՀՁՀ 133, 1317 թ.), ի գեղն Մուշեղկայ (Գ. Հովս. ՀՁ 405, 1117 թ.), ի գեաւղս, որ կոչի Խորվագետ (ԺԴ ՀՁՀ 157, 1319 թ.), ի գիւղս, որ կոչի Աւանս (Ն. տ. 132, 1317 թ., նույն հիշատակարանում նաև՝ գեւղս), ի գուղս եկեղեցի իսկի չկար շինած (ԴՀՎ 3, Վայոց ձոր, 192, 1264 թ.) և այլն։ Սրանցից գեւղ և գիւղ տարբերակները հնագույն գրական ձևեր են, որոնք ավանդաբար շարունակվում են կիրառվել ձեռագրերում և ոչինչ չեն կարող ասել նրանցում կատարված փոփոխությունների մասին։ Գուղ, գեղ, գեաւղ (որ գրվում է նաև գեօղ) բառաձևերը նույն բառի բարբառային տարբերակներն են, որոնցում մի դեպքում կատարված է իւ>ու, մի այլ դեպքում եւ>ե փոփոխություն։ Գեաւղ (գեօղ) գրության մեջ եաւ (եօ)-ն ամենայն հավանականությամբ ներկայացնում է քմայնացած ö ձայնավոր՝ առաջացած գիւղ>գուղ>գօղ հաջորդական փոփոխություններով։ Բարբառային այս տարբերակներից ավելի հաճախ հանդիպում է գեղ ձևը՝ սկսած X դարի վերջերից։ Ամենահին վկայությունը թերևս Մարմաշենի վանքի կառուցողական արձանագրության մեջ հանդիպող օրինակներն են. «Աւանդեցաք ի սա գեղս եւ ագարակս գանձագինս, զԲագարանի գեղ եւ զիւր ագարակն...»[27]։ Վանքի շինարարությունը սկսված և ավարտված է 988—1029 թթ. ընթացքում, հետևաբար գեղ բառի գործածությունը սովորական էր արդեն X դարում։

Մյուսը եւղ||իւղ բառն է, որը բարբառներում առավելապես հանդես է գալիս յեղ, յէղ, յիղ (յըղ) ձևերով, երբեմն նաև յուղ տարբերակով, որը փաստորեն գրական լեզվում օգտագործվող տարբերակն է՝ առաջացած հին գրականի իւղ բառաձևից։ Գավառական ձևերը, անշուշտ, ծագում են հնագույն եւղ տարբերակից։

Հնչյունափոխական այս երևույթը արտահայտված է նաև միջնադարյան ձեռագրերում, որտեղ այդ բառի ավանդական եւղ||իւղ գրություններին զուգահեռ կան նաև եւ>ե հնչյունափոխությամբ վկայություններ. օրինակ՝ ... կովն լիտր մի եղ տայ պարոնին (Սմբ. Դատ. 13), Ա լիտր եղ, Բ մեղր (ԺԵ ՀՁՀ I, 71, 1407 թ)։ Հին ձեռագրերում հնչյունափոխական նույն երկվությունը հանդես է բերում նաև երկեւղ||երկիւղ բառը, որը բացի ավանդական ձևերից, վկայվում է նաև երկիղ և երկեղ հնչյունափոխությամբ։ Այս դեպքում ևս երկիղ-ը ծագում է երկիւղ, երկեղ-ը՝ երկեւղ

---

[27] И. А. Орбели, Избранные труды, 1963, 442.

նախաձևերից (հմմտ. երկիղ.—Անս. 29, Մխ. Հեր. 20ա, բ. 26 և այլն, ճերկեղ.— Հովհ. Երզնկ. 185, 1376 թ. գրչությամբ ձեռագրում)։

Որոշակի հետաքրքրություն ներկայացնում են նաև ճիւղ բառի այն համապատասխանությունները, որոնք հանդես են գալիս հայերենի տարբեր դրսևորումներում։ Ձեռագրերում այդ բառը հանդիպում է ճիւղ, ճեւղ, ճուղ գրչություններով, որոնցից միայն վերջինն է, որ ակնարկում է տեղի ունեցած հնչյունափոխության մասին։ Մյուս երկուսը հին հայերենից ավանդված զուգագրություններ են։ Բարբառներում դրանց համապատասխան ունենք տարբեր արտահայտություններ։ Այսպես՝ արևմտյան տարածքի մի շարք վայրերում (Երզնկա, Մալաթիա, Խարբերդ) այդ բառը ունի չէղ||ճէղ արտահայտությունը։ Եթե այն դիտելու լինենք ծագումնաբանորեն, ապա չէղ||ճէղ չեն կարող սերել ճիւղ տարբերակից, քանի որ այդ բարբառներում իւ երկբարբառը կրում է այլ փոփոխություններ. Մալաթիա-Խարբերդում՝ իւ>ի (պլիւր>պլիր), իսկ Երզնկայում՝ իւ>ու (պլիւր>պլուր)։ Այս նշանակում է, որ այս բարբառներում չէղ||ճէղ բառաձևերը ծագում են ոչ թե ճիւղ, այլ ճեւղ տարբերակից։ Հատկանշական է, որ այս բարբառներում նույն եւ>է փոփոխությանն են ենթարկվել նաև գեւղ, եւղ բառերը (կէղ, fէղ, յէղ)։ Այս բոլորից կարելի է անել այն հետևությունը, որ նշված բառերի՝ հնչյունափոխական ընդհանուր օրինաչափությունից ունեցած շեղումը բարբառային հին տարբերությունների արտահայտություն է։

Արևմտյան և արևելյան բարբառների զբաղեցրած մի մեծ տարածքում (Մուշ, Սասուն, Ակն, Շապին-Գարահիսար, Կարին, Դիադին, Արարատյան բարբառի խոսվածքներ և այլն) օգտագործվում են ճիւղ բառի ճուղ, ճուխկ (կամ ճուխf), չուղ տարբերակները։ Դրանցից միայն արևմտյան բարբառներում է, որ գործում է իւ>ու ընդհանուր օրինաչափությունը, հետևաբար և այդ բարբառներում ճուղ, չուղ ձևերը կարող էին առաջանալ ճիւղ տարբերակից։ Արարատյան բարբառի խոսվածքներում արձանագրվող ճուխկ(ճուխf) բառաձևը, եթե բացառություն չէ ընդհանուր օրինաչափությունից (որովհետև այստեղ թեև իւ-ը օրինաչափորեն փոխվել է ի-ի, բայց կան նաև իւ>ու փոփոխություն ունեցող բառեր՝ աղբիւր>ախպուր, ձիւթ>ձութ), ապա ու-ով ձևը կարող է լինել նաև նախնական։ Այդպիսի ենթադրություն ինքնին մակաբերվում է մի այլ խմբի բարբառներում առկա օրինաչափությունից։ Դա Վասպուրական—Սյունիք—Արցախ տարածքի բարբառներում այդ բառի ճօղ, ճօղնը, ճօղուն արտահայտություններն են։ Հատկապես Սյունիքի ու Արցախի բարբառներում այդ օ-ն չի կարող ծագել ոչ իւ և ոչ էլ եւ երկբարբառներից (դրանք այստեղ օրինաչափորեն փոխվում են իւ>ü, է, եւ>է ձայնավորների)։ Այդ օ-ն կարող էր առաջանալ միայն ու ձայնավորից, քանի որ այստեղ օրինաչափ է ու>օ հնչյունափոխությունը (հմմտ. ճուտ>

ճօտ, քուք>քօք, շուն>շօն, տուն>տօն *և այլն)։ Հետևաբար* ճօղ, ճօղը, ճօղուն *ձևերը ենթադրում են բարբառային հին* ճուղ(ն) *տարբերակը, որից և* ու>օ *հնչյունափոխությամբ առաջացել են վերը նշված ձևերը։ Վասպուրականում թեև այս օրինաչափությունը* (ու>օ) *չի գործում, բայց այստեղ էլ* ճօղ *բառի* օ-*ն չի կարող բացատրվել* իւ-*ի կամ* եւ-*ի հնչյունափոխությամբ։ Այստեղ այդ բառաձևը* (ճօղ) *կարող է թափանցած լինել Հարևան Սյունիք—Արցախի տարածքի բարբառներից։ Այսպիսով* ճիւղ *բառի համար կարելի է վերականգնել բարբառային երեք հին տարբերակներ, որոնցից էլ զարգացել են հետագա բոլոր ձևերը՝ դրանք են՝* ճեւղ, ճիւղ, ճուղ(ն)։

Վերը բերված փաստերից արվող ընդհանուր եզրակացությունը կարող է լինել այն, որ, ինչպես ցույց են տալիս մեր ժամանակակից բարբառները, գրավոր աղբյուրներում իւ *և* եւ *երկբարբառներով վկայվող զուգագրությունները այլ բան չեն կարող լինել, քան բարբառային հին տարբերություններ։*

ԻԱՅ (ԻԱ). ԵԱՅ, ԻՈՅ, ԵԱՒ ԵՌԱԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրաբարի մասնագետները իրավացիորեն իա *կապակցությունը որպես երկբարբառ չեն դիտում՝ նկատի ունենալով այն, որ բոլոր այն դեպքերում, երբ* ի *և* ա *ձայնավորները հանդիպում են մի վանկում, շեշտի տակ, փոխարկվում են* եա *երկբարբառի (օր.* որդի+ակ=որդեակ, աղաւնի+ակ=աղաւնեակ)։ *Եվ քանի որ սա էլ, իր հերթին, շեշտազրկությունից հնչյունափոխվում է* ե-*ի, ինչպես այդ հատուկ է այդ երկբարբառին ընդհանրապես (օր.* այգի+ա+գործ=այգեագործ=այգեգործ, ճոգի+ա+հանգիստ=ճոգեհանգիստ, մի+ա+կին *(վերջինս՝ ածանց)=* մեկին, *որից և* մեկնել, մեկնութիւն *և այլն,* մի+ա+տասան=մետասան, մի+ա+կոյս+ի=մեկուսի *և այլն), ուստի և շեշտյալ* իա-*ն կարող է դիտվել որպես* եա-*ի հնչյունական տարբերակ։ Այս նշանակում է նաև, որ շեշտից առաջ գտնվող* իա *կապակցությունը այնպիսի բառերում, ինչպիսիք են՝* ճիանալ, ճիացումն, միամիտ, միաձայն, միաւոր, դիակիր, դիակոյտ, թիաւոր *և այլն, երկբարբառ չէ ոչ միայն այն պատճառով, որ* իա-*ն այդ բառերում չի ենթարկվել վերը նշված* (իա>եա>ե) *փոփոխությանը, այլև՝ որ նշված բառերում* ի *և* ա *ձայնավորները չեն միավորվում մի վանկում, ինչպես այդ հատուկ է երկբարբառների բաղադրիչներին, այլ բաշխվում են տարբեր վանկերի վրա*[28]*։ Նույնը վերաբերում է*

28 *Տարօրինակ է, որ հնչյունական համարյա նույն պայմաններում և բառային նույնատիպ բաղադրություններում զուգահեռաբար ունենք և հնչյունափոխված և չհնչյունափոխված ձևեր։ Համա. օրինակ, բերված՝* մեկուսի, մետասան *և* միամիտ, միաձայն *և*

նաև դիակ(ն), թիակ, միակ բառերին, որոնց մեջ թեև արտաքնապես թվում է, թե ունենք իա երկբարբառ (այն էլ շեշտի տակ), բայց այստեղ էլ ի և ա ձայնավորները բաշխվում են տարբեր վանկերի վրա։ Պարզ է, որ իա-ն երկբարբառ լինելու դեպքում՝ այդ բառերը կլինեին միավանկ։ Այսպես էր դասական հայերենում։

Պատմական շրջանում հայերենի արևմտյան տարածքի մի շարք բարբառներում այս իա-ն որոշ բառերում ընկալվում է որպես եա-ին մոտ արտասանություն ունեցող բարդ հնչյուն և հանդես բերում եա երկբարբառին հատուկ փոփոխություն։ Այդ օրինաչափությանը ենթարկված ամենատարածված բառը, թերևս, մի թվականի միակ ածանցված ձևն է, որից և առաջացել է մեկ‖մէկ թվականը։ Այս բառը բազմաթիվ վկայություններով արձանագրվում է արդեն իսկ միջինհայերենյան բնագրերում. այսպես, օրինակ՝ ... մէկ լիտր... եփէ, ցուր ջուրն հատանի (Մխ. Հեր. 48ա. այսպես նաև 53բ, 55ա և այլ էջերում), ... ղտնաւրինականքն ղամէն մէկ մէկ յիւր տեղն եմ հանել (ԺԵ ՀՁՀ I, 49, 1405 թ., Երևան), Մէկ կայ, որ հազար աժէ, հազար կայ, որ մէկ մի չաժէ, Այն մէկն, որ հազարն աժէ, մօտ յանգետին փող մի չաժէ (Հ. Երզն. 154), Յանկարծակի մէկ մի տեսայ (Հ. Թլկ. 148. նաև 152, 167, 182 էջերում) և այլն։

Միջնադարյան ձեռագրերում նույնպիսի հնչյունափոխություն արձանագրվում է նաև Մարիամ անձնանվան մեջ։ Այստեղ էլ ենթադրելի է իա-ի միջանկյալ երկբարբառային եա արտասանություն, որից և եա> է(ե) փոփոխությամբ՝ Մարէմ(Մարեմ)։ Ահա օրինակները՝ ... յիշատակ ինձ և Մարէմ տիկնոջ ... զՄարէմ տիկին ... յիշման արժանի արասջիք (Գ. Հովս. հձ 155—156, 1190 թ.), Մարէմ (Ն. տ. 1015, 1250 թ.), ...զծընաւղսն իւր զՎարդան և զՄարեմ (ԺԵ ՀՁՀ I, 96, 1409 թ., Մոկք), ... յիշեսջիք ... զՅոհաննէս և զՄարեմ (Ն. տ. 166, 1414 թ., Ոստան քաղաք), ... զՊօղոս քահանայ և զՄարեմ (Ն. տ. 388, 1428 թ.) և այլն։

Այսպիսով՝ իա-ն վերոհիշյալ բառերում հանդես է գալիս որպես եա երկբարբառի ազատ տարբերակ և հնչյունափոխվում նույն օրինաչափությամբ։

Մի փոքր այլ է իայ եռաբարբառի հարցը։ Հին հայերենում շեշտի տակ այն թեև հանդիպում է լոկ միայն բառում, բայց ածանցված ու բառաբարդված ձևերում այն հանդես է բերում փոփոխության անկայունություն՝ մեկ մնում է անփոփոխ, մեկ հնչյունափոխվում է ե-ի։ Այսպես, օրինակ, զուգահեռաբար վկայվում են (շատ հաճախ նույն սկզբնաղբյուրում)՝ միայնանալ և մենանալ, միայնակեաց և մենակեաց, միայնաստան և մենաստան, միայնութիւն և մենութիւն և այլն։ Եթե նկատի ունենանք,

---

այլ ձևերը։ Պետք է կարծել, որ այստեղ մենք գործ ունենք կամ բարբառային տարբերությունների, կամ ժամանակային տարբեր կտրվածքներում առաջացած երևույթների հետ։

որ ըստ վերը նշված հնչյունափոխական կանոնի իա կապակցությունը շեշտից առաջ դառնում է եա, իսկ վերջինս էլ նույն դիրքում փոխվում է ե-ի (հմմտ. օրինակ՝ այգի+ա+գործ=այգեագործ>այգեգործ), ապա նախաշեշտ դիրքում իայ-ի կրած փոփոխությունը նույնպես օրինաչափ կարելի է համարել (այսպես՝ միայնութիւն>մեայնութիւն>մեյնութիւն>մէնութիւն կամ մենութիւն): Հենց այսպես էլ բացատրում է Հ. Աճառյանը կատարված փոփոխությունը և զուգահեռ ձևերի գոյությունը արդարացնելու համար ընդունում է, որ «մեն- ձայնափոխությունը տեղի էր ունեցած Ոսկեդարից էլ առաջ. այնպես որ Ե դարում գործածվում էր իբրև գավառական ձև»[29]։

Հին ձեռագրերում հանդիպում են նաև միայն բառի մէն գրության ձևեր, որտեղ իայ>է հնչյունափոխությունն ունենք շեշտի տակ։ Սա արդեն մի այնպիսի երևույթ է, որ չի կարող միայն-ի հետ միասին համատեղվել մի համակարգում, այն էլ՝ ժամանակային նույն կտրվածքում։ Դրանցից մեկը անպայմանորեն պետք է լինի բարբառային։ Մենք կարծում ենք, որ բարբառայինը ոչ թե նախագրային, այլ ետին շրջանի գոյացություն է։ Այն, որ հին ձեռագրերում զուգահեռաբար հանդիպում են նույն բառի եռաբարբառային ու մենաբարբառային գրությամբ ձևեր, դեռևս փաստարկ չի կարող լինել այդ հնչյունափոխության հնության համար, որովհետև այդ զուգաձևությունները կարող էին առաջանալ նաև ձեռագրերի հետագա ընդօրինակությունների ժամանակ, գրիչների միջամտությամբ, մի բան, որ շատ սովորական երևույթ է միջնադարյան գրչության արվեստի պրակտիկայում։ Մյուս կողմից՝ իայ>է(ե) հնչյունափոխությունն ունեցող բառաձևերը ավելի հաճախական են միջնադարում ստեղծված գրավոր աղբյուրներում և տիպական նաև ժամանակակից բարբառների համար, այն դեպքում, երբ դրանք հին հայերենի համար բնորոշ չեն և հակասում են ընդհանուր օրինաչափությանը։

Ինչ որ է, բացի վերը նշված բառերից (մենաւոր, մենութիւն, մենակեաց‖մենակեց, մենամարտ, մենաստան և այլն), որոնք առավելապես գրական լեզվի բառաձևեր են, միջինհայերենյան բնագրերում հանդիպում են նաև ժողովրդախոսակցական լեզվի բառաձևեր, նույնպես առաջացած միայն նախաձևից։ Ահա մի քանի օրինակներ։ Նախ միայն>մէն հնչյունափոխության օրինակներ, որոնք խիստ տիպական են միջնադարյան բնագրերի լեզվին։ «Մարդ որ մարդ պրկէ՝ ամէնն զինչ կենա՝ պրկաւղինն է, եւ զբեհն մէն (<միայն) պարոնին (Սմբ. Դատ. 12, 17, 28 և այլն), Յետ իր մահուն ավագ որդին ժառանկէ պապենի ապրանքն մէն (Անս. 19, 59, 79 և այլն), ... պարզն մէն ասի իւր էութեամբն (Մխ. Հեր. 52ա), ...յարենէն մէն լինի (Ն. տ. 58բ), ...զանձնըդ տըւիր վասն օրինաց, Մէն

29 Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան։

կանկնելով հազրի դիմաց (Հ. Թլկ. 198), Ու ի հետ տարոյն ու աւուրն մենակ (<միայնակ) յետ գայ, առանց ոչինչ դիմախոսութեան առնու զապրանքն (Անս. 13), ... ծիւուրն այնէ մինակ (Ն. տ. 17), ... իր որդիքն մինակ... կարեն գալ: (Ն. տ. 23), մենակ ի դարպասն չդիմէ (Ն. տ. 31), մենակ կարճ համէ, որ կովին (Ն. տ. 33), մենակ մարդ ի ներս ածէ (Սմբ. Դատ. 8, 21 և այլն), Առաւօտուն սկսնոյր մինակ Պաշտէր անուշ քաղցր եղանակ (Ն. Շնորհ, ԲՋ 565), Յաշխարհս խօրոտիկ գէմ դու մինակ չե՞ս (Հ. Թլկ. 152) և այլն:

Այս ձևերը այժմ էլ կենդանի են ժամանակակից հայերենի բարբառներում: Դրանք խոսակցական լեզվից մուտք են գործել նաև արդի գրական հայերենի մեջ: Դրանցից մենակ-ը՝ արևելահայ, մինակ-ը՝ արևմտահայ գրական հայերենում: Գրական լեզվում օգտագործվում է նաև մեն-մենակ հարադրությունը, որը փաստորեն կրկնավոր է և ունի սաստկական իմաստ:

Եայ եռաբարբառի պատմական փոփոխությունը համընկնում է եա երկբարբառի բառավերջյան հնչյունափոխության հետ: Այս դեպքում ևս եայ-ը փոխարկվում է e կամ a պարզ ձայնավորների, որոնք գրությամբ արտահայտվում են է տառով կամ այ տառակապակցությամբ (վերջինիս մեջ յ-ն համր հնչյուն է): Ըստ որում՝ գրության առաջին ձևը (է-ով, և ոչ ե-ով) պետք է բացատրել ոչ թե եայ>եյ>է անցմամբ և այդ անցման մեջ յ-ի ունեցած դերով (ինչպես այդ անում են ոմանք), այլ այն պետք է պարզապես համարել ուղղագրական հանրահայտ այն կանոնի արտահայտությունը, ըստ որի e-ն բառավերջում գրվում է միայն է-ի միջոցով: Հետևաբար եայ-ի պատմական զարգացումը գնացել է ոչ թե վերը նշված ընթացքով, այլ եայ>եա>է(ե) կամ եայ>այ>ա հաջորդականությամբ: Անցման միջանկյալ օղակը ընկած է գրական լեզվի ավանդական արտասանության հիմքում: Այս դեպքում բառավերջի յ-ի անկմամբ և եա երկբարբառի երկհնչյունային արժեքավորմամբ ունենք՝ քրիստոնեայ-քրիստոնեա-քրիստոնյա (արդի ուղղագրությամբ), պաշտօնեայ-պաշտօնեա-պաշտոնյա, երկաթեայ-երկաթեա-երկաթյա և այլն:

Այսպիսով, եռաբարբառի մենաբարբառացումը խորթ է գրական լեզվին և ընդհակառակը՝ հատուկ է հայերենի բանավոր խոսակցական տարբերակներին: Այդ փոփոխությունը այսօր առկա է նաև ժամանակակից բարբառներում: Այն վկայվում է նաև միջնադարյան գրավոր աղբյուրներում:

Մենաբարբառացումը արձանագրվում է բառավերջի և՛ բաց, և՛ փակ վանկերում: Միջնադարյան բնագրերում այդ հնչյունափոխությունը օրինաչափորեն արտահայտված է քրիստոնեայ բառի մեջ, որի դիմաց ձեռագրերը ունեն քրիստոնէ. այսպես՝ ... եթէ քրիստոնէ զքրիստոնէ կա-

մուք սպանէ (Սմբ. Դատ. 11), ... ապա թէ քրիստոնէ այլ լինի սպանածն (Ն. տ. 31), Դու երդվիր զետ քրիստոնէ (Անս. 25), ... կոտորեաց բազում թուրք և քուրդ և քրիստոնէք (Գ. Հովս. հձ 878, 1213 թ.) և այլն: Սրան զուգահեռ ունենք նաև եայ>ա(յ) հնչյունափոխությամբ վկայվող քրիստոնայ բառաձևը. ...սաէ թէ ես քրիստոնայ եմ (Ձեռ. 8030, 86ա), Ով որ քրիստոնայ է՝ թէ մահ հանդիպի յիշոցաւք ոչ հայհոյէ զքրիստոնէն (Ն. տ.. վերջին օրինակում է-ն կարող է լինել ինչպես եայ-ի, այնպես էլ այ-ի հնչյունափոխությունից): Այս նույն փոփոխությունը վկայվում է նաև ճրեայ բառում. Եթէ ճրէք, եթէ հեթանոսք (Ձեռ. 8030, 49ա, 45 բ և այլն): Բերենք այլ բառաձևեր եայ>է հնչյունափոխությամբ. «Ես Յովաննէս Շաքեո երէց սուրբ նշանիս պաշտաւնէք յաղաւթս յիշեց(էք) (ԴՀՎ 2, Սյունիք, 98, XIII դար), ... ի յաղաւթս յիշեցէք Ստեփանոս քահանա, եկեղեցոյս պաշտաւնէս, որդի Յուսիկ երիցո (Ն. տ. 133, 1045) թ.), ... այս իմ գիր է խոռենա, որ տվի զիմ հայերենիքն ա̅ծածնիս, ուքաւրէքն յայտնութ̅ե ժամն Դաւթի (ԴՀՎ 3, Վայոց ձոր, 119, XIII դարի վերջը), ... Ես Կուկոր, որդի մեծ Ախթամարին, կանգնեցի զխաչս եղբաւր իմո Փալկա, որ կիսաւրէ փոխեցաւ ի Ք̅Ս. թվիս ՉԼԴ (1285) (Ն. տ. 242) և այլն:

Եայ>է հնչյունափոխություն արձանագրվում է նաև ի-ի հանգող անձնանունների սեռական-տրական հոլովաձևի եայ վերջավորության մեջ: Նախամիջինհայերենյան շրջանում, հայերենի որոշ տարբերակներում, հին Եսայի–Եսայեայ տիպի հոլովման հիմքի վրա ձևավորվում է ի-ի հանգող անձնանունների վերջադրական եայ հոլովումը (Թագուհի-Թագուհեայ, Սրբուհի-Սրբուհեայ, Տիրուհի-Տիրուհեայ և այլն) իսկ այդ վերջավորությունը հայերենի այդ նույն տարբերակներում, արդեն միջին հայերենի շրջանում, հնչյունափոխվում է է-ի՝ Թագուհեայ>Թագուհէ, Սրբուհեայ>Սրբուհէ, Տիրուհեայ>Տիրուհէ և այլն: Այս երևույթը առավել ընդգծվածությամբ արտահայտված է վիմական արձանագրություններում՝ Սոփի (ուղղ.)-Սոփէ (Սեռ.—տրակ.), Շատբարի-Շատբարէ, Սէվնի-Սէվնէ, Գէորգի-Գէորգէ, Տուտի-Տուտէ, Սիթի-Սիթէ և այլն[30]: Ժամանակակից հայերենի բարբառներում նման հոլովում հայտնի չէ, թեև նրանցում այլ կարգի բառերում արտացոլված է եայ>է հնչյունափոխությունը: Այն լավ է արտահայտված հատկապես հարաբերական ածականների եայ ածանցի մեջ, ինչպես՝

---

30 Այս մասին տե՛ս Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, էջ 230: Ավելի մանրամասն՝ նույն հեղինակի «Ի հանգող անձնանունների սեռական, տրական հոլովների կազմությունը Ժ—ԺԳ դարերի վիմական արձանագրություններում» հոդվածը՝ «Մառը և հայագիտության հարցերը» (Երևան, 1968) ժողովածուում:

Կարին	Շատախ	Ուրմիա (Խոյ)
փայտեայ>փէդէ,փադե	*ք՛արէ*	*փետէ*
ըըրթէ	*խօտէ*	*էրկըթէ*
բամբըգէ	*էրկթէ*	*մըսէ*
քարէ	*մըսէ*	*պա̈մկ՛է*
մամըռէ	*կավէ*	*կավէ և այլն*[31]։

Ժամանակակից գրական հայերենում զուգահեռաբար գործածելի են այս ածանցով ածականների երկու ձևեր՝ երկաթյա և երկաթէ (<երկաթեայ), փայտյա և փայտէ (<փայտեայ), *առաջինը գալիս է հին գրական լեզվից և հիմնված է նրա ավանդական արտասանության վրա. երկրորդը գալիս է ժողովրդախոսակցական լեզվից, որում կատարվել է* եայ>է *հնչյունափոխությունը։*

Ւոյ *եռաբարբառը հին հայերենում հանդես էր գալիս բառավերջի* ի*-ով վերջացող բառերի սեռական-տրական հոլովաձևերի վերջավորության մեջ (ոսկի-ոսկւոյ(ն), բարի-բարւոյ(ն), մատանի-մատանւոյ(ն) և այլն)։ Ենթադրելի է, որ* ո *վերջադրական հոլովման* ւ*-ով ձևերը մեսրոպյան հայերենում մի հին համակարգի արտահայտություններն էին, որ պահպանվել էին* ի*-ի հանգող բառերի հոլովման մեջ։ Թերևս այդ է պատճառը, որ ետդասական շրջանում սրանք շատ շուտով իրենց տեղը զիջում են բաղաձայնահանգ վերջավորությամբ բառերի* ո *հոլովմանը։ Այսինքն՝* բարւոյ(ն), մատանւոյ(ն) *ձևերին փոխարինելու են գալիս* բարոյն, մատանոյն *ձևերը։ Ետդասական շրջանից սկսած հաճախանում են այս տիպի հոլովման բառերի սեռական-տրական հոլովաձևերի վերջավորության մեջ* ւ*-ի բաց թողման դեպքերը։ Դրա առաջին վկայությունը վերաբերում է VI—VII դարերին, երբ Դավիթ Գնթունու տապանաքարի հիշատակագրության մեջ դասական հայերենի* որդւոյ *բառաձևի փոխարեն փորագրված է* որդո՝ *առանց* ւ*-ի (և* յ*-ի)։ Ահա այդ հիշատակագրությունը. «Այս է հանգիստ Դաւթի Գըթունեաց,* տ̅ն որդո Վասակա *բարէպա(շտ)ի» (Հայ. արձ. առարկաներ, 50)։ Հետագա դարերից ունենք հետևյալ օրինակները՝ «...ի թագաւորութեան Սմպատա* որդո Վասակա» *(ԴՀՎ 3, Վայոց ձոր, 41, 990 թ.), ...խաչս Սարգիս առաջնորդի* եկեղեցոյս *է (Ն. ա. 14, X դար), ... ի թագաւորութեան Սմպատա* որդո *Աշոտո (ԴՀՎ 2, Տաթև, 19, 1043 թ.), Ես Գրիգոր վասն իմ մեղուցեալ* հոգոյս *(ԴՀՎ 1, Անի, 13, 1008 թ.), ետու զիմ* որդոյն *զԱպուխամրի ոգեբաժին (Ն. ա. 32, XI դար) և այլն։*

Հոլովական վերջավորության մեջ ւ*-ի անկմամբ՝ այս կարգի բառերի հոլովումը նույնանում է* ո *վերջադրական հոլովման հետ և այդ է պատ-*

---

[31] *Օրինակները վերցված են՝* Հ. Մկրտչյան, *Կարնո բարբառը,* Մ. Մուրադյան, *Շատախի բարբառը,* Մ. Ասատրյան, *Ուրմիայի (Խոյի) բարբառը ուսումնասիրություններից։*

ճառը, որ սրանց հոլովական վերջավորության հնչյունափոխությունն էլ համընկնում է ոյ երկբարբառի փոփոխության հետ։ Միջին հայերենի շըրջանում այս կարգի բառերը սեռական-տրական հոլովներում հանդես են բերում ու հոլովիչ՝ առաջացած ոյ երկբարբառի հնչյունափոխությունից։ Ահա մի քանի օրինակներ իրենց վկայություններով. ... յաստընվորս ենք կարատ յերկնից ի բարուն (Ձեռ. 8029, 231ա, 1376 թ.), ... վասն.. իրենց ողոուն Զաքարի եւ վասն մեր հոգուս յիշատակ բերաք ջուրս (ԴՀՎ 1, Անի, 64, 1310 թ.), ... յանուն սրբոհու ածածնին (ԴՀՎ 2, Տաթև, 30, 1365 թ.) և այլն։ Հենց այս հիմքի վրա է, որ հայ բարբառների մեծ մասում և դրանց ազդեցությամբ նաև գրական նոր հայերենում, ի-ի հանգող բառերի սեռական-տրականում ունենք ու հոլովիչ՝ մատանի-մատանու, այգի-այգու, աշակերտուհի-աշակերտուհու, հոգի-հոգու և այլն։

Հին հայերենում եաւ հնչյունակապակցությունը եռաբարբառի արժեք ուներ միայն փակ վանկում, երբ եաւ-ին հաջորդում էր բաղաձայն հնչյուն։ Իսկ այն դեպքում, երբ եաւ-ը բառավերջի բաց վանկում էր, նրա ձայնորդ ւ տարրը արժեքավորվում էր որպես շփական բաղաձայն (v) և եռաբարբառը փոխարկվում էր եա երկբարբառի։ Այսպես է, օրինակ, սեաւ, առաջեաւ, հովանեաւ, մատանեաւ, թզենեաւ, թռեաւ, կոrեաւ, փախեաւ և նման այլ բառերում ու բառաձևերում (հիմնականում ո-ա խառը հոլովման պատկանող բառերի գործիական հոլովում և ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի անցյալ կատարյալի երրորդ դեմքում)։

Եաւ-ը վերը նշված երկու դիրքերում կրում է պատմական տարբեր փոփոխություններ։ Բառավերջի բաց վանկում (բառական ուղիղ և հոլովական ձևերում) եաւ-ը փոխվում է եւ-ի։ Իրականում այստեղ կատարվում է եա>ե հնչյունափոխություն, երբ ւ-ը գիտակցվում է որպես բաղաձայն։ Այդպես են կատարվել սեաւ>սեւ, առաջեաւ>առաջեւ>առջեւ, հովանեաւ>հովանեւ և նման բառաձևերում առկա փոփոխությունները։ Բայական ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի թռեաւ, կոrեաւ, փախեաւ ձևերի եաւ-ի դիմաց ունենք աւ (թռաւ, կոrաւ, փախաւ)։ Այստեղ, անշուշտ, գործ ունենք ոչ թե եաւ>աւ պատմական հնչյունափոխության հետ, այլ տվյալ դեպքում առկա է անալոգիական վերափոխություն (համահարթում), որ կատարվել է ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի անցյալ կատարյալի վերջավորություններում՝ կատարյալի կրավորաձև վերջավորությունների նմանությամբ (մեռաւ, գողացաւ, զարմացաւ և նման բայաձևերի օրինակով)։

Եաւ>եւ հնչյունափոխության վերաբերյալ մատենագրական վկայություններ ունենք սկսած միջին հայերենի շրջանից։ Այդ փոփոխությունը արձանագրվում է ինչպես բառական ուղիղ ձևերում, այնպես էլ հոլովական վերջավորություններում։ Օրինակներ. ... սեւ մազձ (Մխ. Հեր. 52բ և այլն. միջին հայերենի բնագրերում սեաւ բառի դիմաց հիմնակա-

նում գործածական է **սեւ** ձևը), **առջեւ** երկու լիճ ճորտու (Անս. 11, 23, 33, 41 և այլն), ...այլ **յերջեւ** գնացին ի տունն Կարապետին (ԺԴ ՀՁՀ 275, 1335 թ.), **յերջեւ** ղմսկին Ներսիսուկս (Ն. տ. նույն էջում), ընդ **նովանեւ** սուրբ Գրիգորի (Ն. տ. 117, 1315 թ.) և այլն։ Սրանցից միայն սև, առջև բառերն են, որ հնչյունափոխված ձևով այժմ էլ օգտագործվում են բարբառներում, որտեղից և անցել են գրական լեզվին։ Սրանց վրա կարելի է ավելացնել նաև **բարեւ** (<**բարեաւ**) բառը։

Բաղաձայնից առաջ **եաւ** եռաբարբառը ենթարկվել է այլ փոփոխության։ Այս դեպքում հնչյունափոխությունը ընդգրկել է եռաբարբառի վերջին երկու բաղադրիչը (աւ-ը), որը գիտակցվելով որպես երկբարբառ՝ փոխվել է օ-ի (աւ>օ)։ Այսպիսով եաւ-ի դիմաց ունենք երկհնչյունային **եօ**՝ **արդեաւք**>**արդեօք**, **այգեաւք**>**այգեօք**, **մատանեաւք**>**մատանեօք** և այլն։ Գրության նման ձևեր արձանագրվում են հին հայերենի միջնադարյան ընդօրինակություններում, և հնարավոր չէ պարզել՝ դրանք անալոգիական կազմություննե՞ր են, թե՞ սպառմական հընչյունափոխության արտահայտություններ, մանավանդ որ հոլովական այդ վերջավորությունները արտահայտված չեն ոչ ժամանակակից բարբառներում և ոչ էլ նոր գրական հայերենում։ Արդի գրական հայերենում օգտագործվող որոշ բառեր ու արտահայտություններ էլ (**արդեաւք**>**արդեօք**-**արդյոք**, **ընտանեաւք**>**ընտանեօք**-(**հանդերձ**)-**ընտանյոք** և այլն) փոխառություններ են հին գրական հայերենից։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենի բաղաձայնական համակարգը նրա պատմական զարգացման բոլոր փուլերում, անկախ նրա տարբեր դրսևորումներում արձանագրվող տարբերություններից, բնութագրվում է պայթական ու պայթաշփական հնչյունների եռաստիճանությամբ, շփականների երկաստիճանությամբ և ձայնորդների միաստիճանությամբ։ Ըստ որում, եռաստիճանությունն արտահայտվում է. մի կողմից՝ ձայնեղության և ոչ ձայնեղության (խլության) և մյուս կողմից՝ շնչեղության ու ոչ շնչեղության հատկանիշների հակադրությամբ, իսկ շփականների երկաստիճանությունը՝ միայն ձայնեղության և խլության հակադրությամբ։

Հայերենի բաղաձայնական համակարգի նման բնորոշումը որոշ չափով վերացական է, քանի որ այդ բնորոշմամբ անտեսվում են ինչպես համաժամանակյա, այնպես և տարժամանակյա կտրվածքներում հայերենի առանձին դրսևորումներում առկա ոչ միայն համակարգային տարբերությունները, այլև նույն համակարգի ներսում առանձին միավորների կրած պատմական փոփոխությունները։ Իրականում, հայերենը, ինչպես իր զարգացման անցյալ փուլերում, այնպես և ժամանակակից կենդանի դրսևորումներում, հանդես է բերում միևնույն դիրքում լծորդ հնչյունների տարբեր համապատասխանություններ, որոնք և յուրաքանչյուր դեպքում ստեղծում են նորփակ, առանձին համակարգեր։ Պայթական ու պայթաշփական բաղաձայնների լծորդական այդ համապատասխանությունները մասնագիտական գրականության մեջ հայտնի են «բաղաձայնների տեղաշարժեր» անունով։

Հայերենի շփականները և ձայնորդները, մասնակի բացառություններով, ամբողջ պատմական շրջանում համակարգային փոփոխություններ հանդես չեն բերում։ Այստեղ արձանագրվող փոփոխությունները վերաբերում են սոսկ հնչյունական առանձին միավորների (ավելի մանրամասն հետագա շարադրանքում)։

Հայերենի բաղաձայնների պատմական քննության ժամանակ նույնպես որպես համեմատության եզր օգտագործում ենք հին հայերենից

ավանդված լեզվական ձևերը։ Բայց այստեղ՝ ուսումնասիրության ընթացքում, հետազոտական այս կամ այն եղանակի ու համեմատության եզրի ընտրությունը շատ անգամ թելադրվում է ոչ այնքան առաջադրվող նպատակներով, որքան քննարկվող երևույթի առանձնահատկություններով և ընտրված մեթոդի նպատակահարմարությամբ։ Բոլոր այն դեպքերում, երբ մենք գործ ունենք գրավոր աղբյուրներից քաղված լեզվական փաստերի հետ, յուրաքանչյուր հնչյունի բնութագրում ինքնին նշանակում է նաև այն արտահայտող տառի հնչյունական արժեքի բացահայտում։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՁԱՅՆՈՐԴՆԵՐԸ

Հայերենի ձայնորդ հնչյունները թեև բնորոշվում են մենաստիճանությամբ, բայց այդ բնորոշումը նրանց համար այնքան էլ բնութագրական չէ, քանի որ այդ արվում է պայթականների ու շփականների դասակարգման համար ընդունված հատկանիշների չափանիշներով։ Իրականում ձայնորդները ևս ունեն հակադրվող զույգեր, միայն թե այս դեպքում այդ հակադրությունների հիմքում ընկած են ոչ թե ձայնեղության ու խլության, շնչեղության ու ոչ շնչեղության հատկանիշները, այլ հնչարտաբերական այլ առանձնահատկություններ[1]։

Ժամանակակից գրական հայերենի բաղաձայնների մեջ որպես ձայնորդներ սովորաբար առանձնացվում են լ, մ, յ, ն, ռ, ր հնչյունները։ Սրանք բնութագրվում են որպես հնչյունաբանական այնպիսի միավորներ, որոնք թեև ունեն ձայնավորներին և բաղաձայններին հատուկ հատկանիշներ, բայց ամբողջությամբ չեն հարում ոչ մեկին, և ոչ էլ մյուսին։ Հիմնականում լինելով բաղաձայններ, նրանց մեջ ձայնը այնուամենայնիվ գերակշռում է աղմուկի նկատմամբ։ Իրենց այդ հիմնական հատկանիշով հակադրվելով մնացած բոլոր հնչյուններին, ձայնորդները միաժամանակ խմբավորվում են մ : ն, ռ : ր իրար հակադրվող զույգերում, որոնցից առաջինները կոչվում են ռնգայիններ, երկրորդները՝ թրթռուններ։ Ռնգայինների ներքին հակադրությունը ստեղծվում է դրանց հնչարտաբերման ժամանակ առաջացող փակվածքի տեղի տարբերու-

[1] Ժամանակակից գրական հայերենի ձայնորդների հնչյունական, հնչույթաբանական, ֆիզիկական ու կազմախոսական առանձնահատկությունների մանրամասն բնութագիրը տրվում է *А. А. Хачатрян, В. Н. Айрапетян,* Экспериментальное исследование согласных армянского языка (Ереван, 1972), աշխատության մեջ, որը կատարված է գրական հայերենի կենդանի խոսքի փորձառական ուսումնասիրությամբ։

թյամբ։ Մ-ի արտաբերմանը հատուկ է շրթնային փակվածք, իսկ Ն-ին՝ լեզվատամնային[2]։ Ռ և ր թրթռունները միմյանց հակադրվում են լեզվի ծայրի թրթռման հաճախականությամբ (ռ)։ Ժամանակակից հայերենի մյուս ձայնորդները՝ լ-ն և յ-ն նման հակադրություններ չեն ստեղծում։ Լ-ն բնութագրվում է որպես լեզվատամնային-կողքային, իսկ յ-ն՝ միջնալեզվային, ամենավերին բարձրացման ի-ի արտաբերությանը մոտ մի հնչյուն[3]։

Ժամանակակից հայերենի ձայնորդները, չնչին բացառություններով (որոնց մասին խոսք կլինի հետագայում) նույնն են հայերենի բարբառներում։ Սակայն հին հայերենի շրջանում՝ գրավոր լեզվի առաջին փուլում, հայերենի ձայնորդների կազմը մի փոքր այլ էր։ Այստեղ արձանագրվում են հետևյալ միավորները՝ լ, ղ, մ, յ, ն, ռ, ր, ւ, որոնք խմբավորվում են հետևյալ զույգերում՝ լ : ղ, մ : ն, ռ : ր. առանձին են մնում յ և ւ հնչյունները։

Ինչպես կարելի է նկատել՝ ժամանակակից հայերենի համեմատությամբ ձայնորդ հնչյունները այստեղ ութն են։ Այդ շարքից այսօր հայերենին անծանոթ են ւ-ը և ղ-ն (վերջինս՝ որպես ձայնորդ)։ Դեռ ավելին. հայերենի արդի էտապում, նրա գրավոր ու բանավոր խոսքի բոլոր դրսևորումներում (գրական, խոսակցական, բարբառներ) ղ-ով արտահայտված հնչյունը ետնալեզվային ձայնեղ շփական բաղաձայն է և ոչ ձայնորդ հնչյուն։

Կարևոր է նշել նաև, որ դեռևս դասական հայերենի շրջանում հայերենի ձայնորդները առավելապես բաղաձայն հնչյուններ էին և չունեին իրենց երբեմնի (հնդեվրոպական միասնության շրջանի) ձայնորդներին հատուկ վանկարարական հատկությունը։ Դրանցից միայն յ և ւ գրերով արտահայտված միավորներն էին, որ դեռևս պահում էին ձայնորդ հնչյուններին հատուկ գործառության որոշ հատկանիշներ։ Բացի այն, որ նրանք մյուս ձայնորդների նման բառի մեջ կարող էին բաղաձայնական կիրառություն ունենալ, ունեին նաև վանկարարական ֆունկցիա, երբ ձայնավորների հետ հանդես էին գալիս երկբարբառների ու եռաբարբառների կազմում (այ, եայ, ոյ, իւ, աւ, եաւ և այլն)։

Լ : Ղ — Հին հայերենի շրջանում այս տառերով արտահայտված հնչյունները ներկայացնում էին l-ի արտասանական տարբեր որակներ։ Ղ-ն այստեղ դեռևս չուներ ետնալեզվային ձայնեղ շփական բաղաձայ-

---

2 Այստեղ և հետագայում՝ մյուս բաղաձայնների նկարագրության ժամանակ մենք վերանում ենք նրանց արտաբերությանը հատուկ մյուս հատկանիշներից։

3 Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 70։ Է. Բ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967, էջ 143—144։

նի այն արժեքը, որ հատուկ է նրան այսօր։ Ծագումնաբանորեն այն հանգում էր հնդեվրոպական l-ին, ինչպես այդ ցույց են տալիս համեմատական քերականության տվյալները։ Այդ բանը կարելի է տեսնել հետևյալ օրինակներում. աղ<*sald, եղն<*elno, եղևին<*elew, ուղի<*ul և այլն։ Ղ-ի l արժեքը երևում է նաև փոխառյալ բառերում։ Այստեղ նույնպես փոխատու լեզվի l-ն հայերենում արտահայտված է ղ-ով, ինչպես, օրինակ, հունական հետևյալ անձնանունների գրադարձություններում. Աղեքսանդր<Αλεξανθρος, Ղազար<Λαζαρος, Ղուկաս<Λουκα և այլն։ Ղ-l համապատասխանությունը երևում է նաև հին հայերենից վրացերենին անցած բառերում, երբ հայերենի ղ-ն վրացերենում համապատասխանաբար տառադարձված է l-ով, ինչպես՝ աղխս—վրաց. ալիզի, աղանձ—վրաց. ալանձվա «բովել», աղքատ—վրաց. ալքատի «մուրացկան» և այլն։ Այսպիսով, ոչ մի կասկած չի հարուցում այն հարցը, թե հայերենի գրի առման շրջանում հնչյունական ինչ արժեք ուներ ղ գիրը։ Վերը բերված համապատասխանությունները միանգամայն բավարար են համոզվելու, որ այն ուներ ձայնորդ l-ի արժեք։ Տարակույս կարող է առաջացնել միայն այն հանգամանքը, որ այբուբենի մի ուրիշ տառ ևս՝ լ-ն, նույնպես հանդես է բերում նույն համապատասխանությունները։ Այն, մի կողմից, ծագումնաբանորեն սերում է հնդեվրոպական l-ից (լայն<*plāt-no,լաւ<*lab, լակ «շան կամ ուրիշ անասունի ջրալի կերակուր»<*lak, լաստ<*lazda, լափ «շան կերակուր»<*laph, լուանալ<*plu և այլն), իսկ մյուս կողմից, այս նույն լ-ն համապատասխանում է օտար լեզուների l-ին (հմմտ. լապտեր<հուն. λαμπτηρ, ալփաբետ<հուն. αλφαβητος, լափ>վրաց. լափի և այլն[4])։ Ստացվում է, որ նույն հնչյունի համար հայերենում ստեղծված էր երկու տա՞ռ (լ և ղ)։ Անշուշտ ոչ։

Բերված փաստերից բխող ամենատրամաբանական հետևությունն այն է, որ հին հայերենն ուներ երկու տեսակ l, որոնք իրարից տարբերվում էին իրենց արտասանական, հնչյունական ու հնչույթաբանական առանձնահատկություններով։ Դրա լավագույն ապացույցներն են,

ա) հայերենի այբուբենում դրանց համար հատկացվել են առանձին տառեր. բ) այդ երկու հնչյունների պատմական զարգացման ընթացքի մեջ կան էական տարբերություններ. գ) այդ հնչյունների գոյության որոշակի հետքերը պահպանված են նաև մեր ժամանակակից բարբառներում։

ա) Նախ՝ այբուբենում դրանց առանձին տառեր հատկացնելու

---

4 Օրինակները քաղված են Հ. Աճառյանի Հայերեն արմատական բառարանից։

հարցի մասին։ Այբուբենում առանձին տառերով նշանակելը ինքնին նշանակում էր, որ այդ երկու ɫ-երը գիտակցվում էին որպես տարբեր ու ինքնուրույն հնչույթներ, և այդ հիմքի վրա է, որ ստեղծվում էին նվազագույն այնպիսի հակադրություններ, որոնց մեջ այդ հնչույթները կատարում էին իմաստատարբերակիչ դեր. հմմտ. օրինակ՝ աղի : ալի, կաղ : կալ, ցող : ցոլ և այլն։

Բացի այդ՝ լ-ն և ղ-ն իրենց կիրառություններում որոշ գրքերում բացառում էին իրար։ Նկատելի է, որ լ-ն բառի մեջ հանդես էր գալիս համարյա բոլոր գրքերում և առավել հաճախակի՝ բառասկզբի գրքում, այն դեպքում, երբ ղ-ի կիրառության մեջ նկատելի են որոշ սահմանափակումներ։ Այն բառամիջում ու բառավերջում կիրառվում էր առավելապես բաղաձայնների հարևանությամբ (աղբ, աղտ, բուղբ, յաղթել, աստղ, աղջիկ, եղբայր և այլն), իսկ յ-ից հետո ընկած դիրքում նրա գործածությունը բացառվում էր։ (Այդ դիրքում հանդես էր գալիս լ-ն՝ այլ, գայլ, կայլակ, սայլ, փայլ, fայլ, բոյլ, բոյլ, խոյլ, ծոյլ, ձոյլ, յոյլ և այլն)[5]։

Ղ-ի համար բացառված դիրք էր նաև բառասկիզբը։ Հատկանշական է, որ բնիկ հայերեն (հնդեվրոպական ծագման) բառերը երբեք ղ-ով չեն սկսվում։ Եթե հնդեվրոպական բառասկզբի l-ն հայերենում տվել է ղ, ապա այդ ղ-ից առաջ անպայմանորեն ավելացել է ա կամ ե ձայնավոր (աղանձ<*lṇdh, եղուկ<*lug[2]. այդպիսի նախահավելված ունեն նաև եղբայր<*bhratēr, աղբիւր<*bhrevr̥ բառերը որոնց ղ-ն r-երի տարնմանության արդյունք է)։ Այնպես որ՝ բոլոր այն բառերը, որոնք հայերենի գրի առման շրջանից մեզ ավանդված են բառասկզբի ղ-ով, ծագմամբ օտար են (փոխառություններ են)։ Այս միաժամանակ նշանակում է, որ ղ-ի գործածությունը բառասկզբի դիրքում հայերենի արտասանական բաղային խորթ էր նույնիսկ հին հայերենի դասական շրջանում։ Թերևս հենց այդ է պատճառը, որ նման բառերի մեծ մասը (իսկ դրանք քանակով մեծ չեն) շատ հաճախ ավանդված են կրկնակի գրությամբ՝ և՛ ղ-ով, և՛ լ-ով. այսպես՝ լամբար և ղամբար (հուն.

---

5 Հայագիտության մեջ այն կարծիքն է հայտնվել, թե այլ, գայլ, փայլ, բոյլ և առհասարակ յ-ից հետո լ ունեցող այս կարգի բառերի հնագույն (այսինքն՝ դասական) ձևեր պետք է համարել ղ-ով արտահայտվածները՝ այղ, գայղ, փայղ, բոյղ և այլն։ Այդ ենթադրությունը արվել է հնագույն ձեռագրերում գրության նման ձևերի առկայության պատճառով։ Մեր կարծիքով նման գրչությունները պարզապես ուղղագրական շեղումներ են ավանդված այն շրջանից, երբ հայերենում սկսում են չտարբերակվել լ-ով և ղ-ով արտահայտվող ɫ-երը։ Իսկ որ այլ, գայլ, բոյլ և նման բառերում ճիշտն ու սկզբնականը լ-ով ձևերն են՝ ապացուցում են մեր ժամանակակից բարբառները, որոնք բոլորն էլ այդ բառերը ներկայացնում են միայն լ-ով՝ այլ>ալ, էլ, գայլ>գալ, գէլ, բոյլ>բուլ, բիլ և այլն, և այլն։

λαμπας, ալփաբետ և աղփաբետ (հուն. ἀλφάβητος), ելեփանդական և եղեփանդական «*բորոտություն ունեցող*» (*հուն.* ἐλέφας, *սեռ.* ἐλέφαντος-*ից*) *և այլն։ Այս զուգորդությունների մեջ էլ ղ-ով ձևերը ավելի հին են։*

բ) Դասական հայերենի լ-ի և ղ-ի ինքնուրույն հնչույթներ լինելու ամենամեծ կռվանը նրանց՝ պատմական զարգացման ընթացքում արտասանական տարբեր որակի հնչյունների հանգելն է։ Հին լ-ն ամենուրեք, մեր լեզվի պատմության բոլոր էտապներում, նրա գրավոր ու բանավոր դրսևորման բոլոր տարբերակներում մնացել է որպես լեզվատամնային կողքային ձայնորդ, այն ժամանակ, երբ ղ-ով արտահայտված հնչյունը հայերենի այդ նույն դրսևորումներում, ներառյալ նաև հայերենի ժամանակակից բարբառները, դարձել է ետնալեզվային բաղաձայն։

գ) Եվ վերջապես (որ նույնպես կարևոր է)՝ լ-ի և ղ-ի որպես ինքնուրույն հնչույթներ գիտակցվելու և l*-ի տարատեսակները լինելու օգտին են խոսում մեր բարբառներում պահպանված այն բառաձևերը, որոնք մերթ* l*-ով, մերթ* γ*-ով հանդես են գալիս տարբեր վայրերում։ Այսպես, օրինակ՝* ջիղ—ճիլ, պղոճ—բլոչ, եղած—էլած(լած), եղել—էլել (լալ, լէլ), ճող—ճոլ(իկ), ծիղ—ծիլ, տիղմ—տիլ, մղել—մլել, շաղ—շալ(շօլ) *և այլն։ Տարակույս լինել չի կարող, որ այս բառաձևերում՝ այնտեղ, որտեղ այսօր ունենք* l, *այդ հնչյունը գալիս է հին լ-ից, իսկ որտեղ այսօր* γ *է, սա էլ զարգացել է հին ղ-ից։*

Հայերենում երկու l*-երի տարբերակումը ամենայն հավանականությամբ կատարվել է հնդեվրոպական լեզվավիճակից հայերենին անցնելու ճանապարհին, երբ աստիճանաբար ձևավորվում ու կայունանում էր նախահայերենի արտասանական բազան։ Այն հանգամանքը, որ դասական հայերենի շրջանից մեզ ավանդված են ծագումնաբանորեն նույն արմատից սերած, բայց արդեն իմաստային տարբեր երանգներ ունեցող բառեր, որոնք հակադրվում են իրար միայն* լ-ի *կամ ղ-ի գրությամբ, խոսում է հենց այդ երկու հնչույթների խոր հնության մասին (հմմտ. օրինակ՝* այլ *արմատից՝* աղաւաղ, թոյլ-*ից՝* թող, կուլ-*ից՝* ընկլընուլ *և* ընկղմել *և այլն)։*

Պետք է կարծել նաև, որ այդ հնչյունները նախապես ունեին գործառության որոշակի տարբերակված ոլորտներ, որոնք, սակայն, պատմական շրջանի սկզբում արդեն խախտված էին։

Իսկ թե ինչ հնչարտաբերական առանձնահատկություններ ունեին այդ հնչյունները և ինչով էին իրարից տարբերվում, այսօր, 1600 տարվա հեռավորությունից, եթե չասենք անհնար, ապա, համենայն դեպս, դժվար է ճշգրիտ բան ասել։ Հայագետների մեծ մասը հակված է կարծելու, որ ղ-ն առաջնալեզվային լ-ին հակադրվում էր իր կատկային

(լեզվի ետին մասի) կոշտ արտասանությամբ։ Այդ արտասանության հիմքի վրա է, որ ղ-ի արտաբերման բուն աստիճանաբար տեղափոխվում է ավելի ետ և դրանով պայմանավորում ետնալեզվային շփական բաղաձայնի (γ) առաջացումը։

Մեր լեզվի պատմության միջին հայերենյան էտապում ղ-ն արդեն ուներ ետնալեզվային ձայնեղ շփական γ-ի արժեք և որպես այդպիսին՝ լծորդվում էր նույն շարքում արտաբերվող խուլ շփական խ-ի հետ։

Հայագիտության մեջ ընդունված է ասել, որ ղ ձայնորդի վերահնչույթավորումը ետնալեզվային ձայնեղ շփական γ բաղաձայնի՝ ժամանակագրորեն կատարվել է մոտավորապես IX—X դարերի սահմաններում։ Այդ հարցին նվիրված ամենալիակատար ու ամբողջական ուսումնասիրությունը պատկանում է Հ. Աճառյանին, որի եզրակացությունները հանգում են հետևյալին։ «Իմ ենթադրությամբ՝ Գ ձայնը (նկատի ունի ղ ձայնորդի հնչումը.— Հ. Մ.) նախ երևան եկավ հյուսիսում, Աղվանքի սահմանակից հայոց մեջ Թ դարի սկզբից (Կաղանկայտուացի), ապա իջավ հարավ. Ժ դարի կեսին գեռ տատանյալ գրության մեջ է (Դրասխանակերտցի), իսկ ԺԱ դարում ամբողջ երկրում տարածված է (Ասողիկ)»[6]։

Աճառյանն իր այս եզրակացությունն անում էր գրավոր աղբյուրներից քաղած փաստական նյութի քննությամբ. և թեև նրա օգտագործած աղբյուրները սկզբնագրեր չեն, բայց և այնպես հիմնականում ճիշտ է կռահում երևույթի առաջացման մոտավոր ժամանակը։

Հարցի լուսաբանման տեսակետից կարևոր ենք համարում ուշադրություն դարձնել նաև հնչյունաբանական մի շարք այլ երևույթների վրա, որոնք դիտարկվում են հատկապես սկզբնագիր աղբյուրների քննության ընթացքում։

ա) Ուշագրավ են առաջին հերթին ղ-ով արտահայտված հնչյունի լծորդական այն տատանումները, որոնք արձանագրվում են սկզբնագիր աղբյուրներում։ Այստեղ մենք մի կողմից ունենք լ∼ղ, իսկ մյուս կողմից՝ ղ>խ փոխանցումները։ Այսինքն՝ այստեղ հանդիպում են ուղղագրական կանոնների այնպիսի շեղումներ, երբ մի դեպքում ավանդական լ-ի փոխարեն գրվում է ղ, իսկ մի այլ դեպքում ղ-ն լծորդվում է ոչ թե լ-ի, այլ ետնալեզվային խուլ շփական խ-ի հետ։ Եվ որ կարևոր է՝ լծորդական այդ տատանումները կատարվում են ժամանակային տարբեր կտրվածքներում։

Այն որ լ-ի փոխարեն ղ գրությունն ունեն այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ՝ փայղ (փայլ), Կիղիկիա (Կիլիկիա), տեսեաղ (տեսեալ) և այլն, որոշակիորեն մատնանշում են, որ մենք այստեղ գործ ունենք

6 Հ. Աճառյան, Ե՞րբ Լ դարձավ Ղ, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1948, № 5, էջ 40։

նույն l հնչյունի արտահայտման մի այլ ձևի հետ։ Դա ինքնին հասկանալի պիտի լինի, եթե նկատի ունենանք, որ հին հայերենի դասական շրջանում ղ-ն և լ-ն լծորդ հնչյուններ էին։

Տվյալ դեպքում լ-ի և ղ-ի ուղղագրության այդ անկայունությունը մեզ համար կարևոր է նրանով, որ դրանով հաստատվում է, թե դրանց գրի առման ժամանակներում ղ-ն դեռևս չէր ստացել ետնալեզվային շփական γ բաղաձայնի արժեք, հակառակ դեպքում նա չէր կարող փոխարինել լ-ին։

Այդ տառերով արտահայտված հնչյունների լծորդական փոխանցումները ավելի են իմաստավորվում, երբ խորամուխ ենք լինում մյուս՝ ղ=խ փոխանցման էության մեջ։ Այստեղ ունենք, օրինակ՝ թուխք (<թուղթ), շխթայ (<շղթայ), յախթել (<յաղթել) և գրության այլ ձևեր, որոնց մեջ ղ-ն լծորդվում է ետնալեզվային խուլ շփական խ-ի հետ, իսկ այս դեպքում ղ-ի փոխարեն խ գրությունը այլ կերպ չի կարող մեկնաբանվել, քան ետնալեզվային ձայնեղ շփական γ-ի խլացումից առաջացած մի հնչյուն, քանի որ անիմաստ կլիներ խ-ն դուրս բերել ձայնորդ l-ից։ Հետևաբար գրության այդ ձևերը ակնարկում են, որ դրանց գրառման ժամանակներում ղ-ն արդեն ունեցել է ետնալեզվային ձայնեղ շփականի արժեք և այդ γ-ն է, որ խուլ պայթականի (տվյալ դեպքում՝ թ-ի) առնմանությամբ կորցնելով իր ձայնեղությունը՝ վերածվել է խ-ի։

Արդ, եթե մեզ հաջողվի սկզբնագիր աղբյուրների օգնությամբ որոշել ժամանակագրական այն սահմանները, որոնց մեջ գործառում էին l-ղ և ղ>խ փոխանցումները, դրանով իսկ պարզած կլինենք նաև այն հարաբերական ժամանակը, որի ընթացքում կատարվել է ղ-ի վերահնչույթավորումը։

Լ-ի և ղ-ի գրության շփոթը արձանագրվում է մեզ հասած առաջին իսկ ձեռագրերում։ Գրության այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ թոյղ (թոյլ), գայղ (գայլ), այղ (այլ), ձեղեաղ եին (ձեղեալ էին) և այլն, արդեն հանդիպում են Լազարյան ճեմարանի 887 թվականի գրչությամբ հասած Ավետարանում։ Գրության մեջ նման փոխանցումներ այնուհետև պատահում են նաև այլ ձեռագրերում՝ ընդհուպ մինչև XII դարի վերջերը։ Գրության այդ ձևերը ավելի տիպական և հաճախակի են հատկապես IX—XI դարերի ընթացքում գրված կամ ընդօրինակված ձեռագրերում։ Ավելի ուշ շրջանում ստեղծված գրավոր աղբյուրներում այդ երևույթը ունի եզակի արտահայտություն, որը պարզապես նախորդ շրջանի ուղղագրական անկանոնությունների կույր ընդօրինակության արդյունք է, մանավանդ որ այդ նույն ժամանակներում երևան է գալիս ղ-ի l արժեքը ժխտող ղ>խ փոփոխությունը, այսինքն՝ երբ հին հայերենից ավանդված բառերում ղ-ի փոխարեն սկսվում է գրվել նաև խ։

Ուղղագրական շեղման այդպիսի մի փաստ մեզ տալիս է 1170 թվականին ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարան, որտեղ օգտագործված թուղթ բառը երկու անգամ գրանցված է թուխտ և մեկ անգամ՝ թուխթ ձևով. բոլորի մեջ էլ ավանդական ղ-ի դիմաց խ (օրինակները տե՛ս Գ. Հովս. հձ. 37, 38, 45)։ Հետաքրքիր է նաև այն, որ այդ նույն հիշատակարանում ունենք նաև հակառակ գրությունը, այսինքն, երբ ավանդական խ-ի փոխարեն գրված է ղ. այսպես՝ փաղչել՝ փոխանակ փախչել (Գ. Հովս. հձ 42), որը նույն հնչյունափոխական երևույթի դրսևորման մի այլ արտահայտությունն է[7]։

Ժամանակագրական տեսակետից այս երևույթները գնահատելիս հաշվի պետք է առնել, որ այս վկայություններից առաջ եղած ձեռագրերում նման փաստեր չեն արձանագրվում, մի բան, որ պատահական չպետք է համարել, մանավանդ որ այդ նույն ժամանակներում ավելի տիպական է լ–ղ փոխանցումը։ Մյուս կողմից, XII դարի վերջերից սկսած՝ ձեռագրերում շատ սովորական է դառնում ղ-ի և խ-ի գրության շփոթը։

Այս դիտարկումների հիմքի վրա կարելի է մոտավորապես կողմնորոշվել ղ-ի վերահնչույթավորման ժամանակի հարցում։ Այսպես, եթե նկատի ունենանք, որ նշված երևույթների առաջացման ու կայունացման համար անհրաժեշտ պիտի լիներ առնվազն 100—150 տարի ժամանակ, ապա ղ-ի ետնալեզվային բաղաձայնի վերածվելու ժամանակը 1170 թվականից կարելի է տանել մինչև XI դարի սկիզբը։

բ) Հին հայերենի ղ ձայնորդի՝ ետնալեզվային շփականի վերածվելու ժամանակի որոշման համար պետք է ուշադրություն դարձնել նաև այլ լեզուներից հայերենի մեջ մուտք գործած բառերի գրության ձևերի վրա։ Եթե հայերենը այդ բառերի տառադարձման ժամանակ օտարլեզվյան γ-ի դիմաց դնում է մեսրոպյան այբուբենի ղ տառը, ապա այդ նշանակում է, որ մեր ղ-ն արդեն ուներ ետնալեզվային ձայնեղ շփական բաղաձայնի արժեք, իսկ եթե ոչ, ուրեմն ղ-ն դեռևս չէր ստացել γ-ի արժեք։

Աճառյանը հենց այս չափանիշով էլ առաջնորդվում է, երբ որոշում է ղ ձայնորդի ետնալեզվային ձայնեղ բաղաձայնի վերածվելու ժամանակը։ Նա դրա համար նախ վերցնում է արաբական ոստիկան Buγa-ի անունը։ Այս ոստիկանը Հայաստան է արշավել 850 թվականին, և նրա

---

7 Այդպիսի մի փոխանցման հին վկայություն կարելի էր համարել 909 թվականին վերագրվող մի ձեռագրի հիշատակարանում հանդիպող թուղթ բառում ղ-ի փոխարեն խ-ի գրությունը («Գտաւ թուխթ ի հնագրեանս Տիգրանա Պահլաւունոյ թն ՅԾԸ թ. առաքեաց Փոտ Պատրիարգն Կոստանդնուպոլիս» Գ. Հովս. հձ 107), բայց այս հիշատակարանում արձանագրվող թուխթ գրչությանը չի կարելի վստահել, քանի որ հիշատակարանը անթվական է, հետևաբար և բացառված չէ նրա՝ հետագա դարերում գրված լինելը։

մասին հայ մատենագրության մեջ ամենավաղ հիշատակությունը պարունակում է Հովհաննես Դրասխանակերտցու Պատմությունը, որտեղ այդ անունը տառադարձված է Բուղայ (որոշ ձեռագրերում նաև Բուխայ) ձևով: Հենց այս թվականն էլ դրվում է ղ-ի վերահնչույթավորման ժամանակի որոշման հիմքում: Սակայն Աճառյանը այդ օրինակի հավաստիության վերաբերյալ թերահավատ է, քանի որ այդ անունը պարունակող ձեռագրերը մեզ հասել են ուշ շրջանից, որոնց մեջ, հավանական է, որ Buγa բառի նախնական Բուխայ գրությունը սրբագրվել է ըստ հետագա արտասանության ու գրության հնարավորության: Այս պատճառով էլ Աճառյանը իր ժամանակագրական ճշգրտումը կատարում է մի այլ անձնանվան (նույնպես արաբական) օգնությամբ: Դա Կաղանկատվացու Պատմության մեջ հիշատակվող Բաղողի ամիրայի անվան տառադարձությունն է, որը հանդիպում է միայն ղ-ով: Լեզվական այս փաստի մասին Աճառյանը ասում է. «Բաղողի կամ Բաղղիս այնպիսի անսովոր անուն է, որ կարելի չէ մտածել, թե որևէ գրիչ սրբագրած լինի Բուղայ անվան նման: Ուստի նա անշուշտ հարազատ է, և ղ=γ տառադարձությունը տանում է Թ դարի կեսը»[8]:

Աճառյանը անդրադառնում է նաև այլ բառերի (արաբերենից փոխառյալ և հայերենից անցած վրացերենին), որոնք որևէ նոր բան չեն ավելացնում ղ-ի վերահնչույթավորման ժամանակի որոշման հարցում, այլ միայն մի անգամ ևս ցույց են տալիս մեր լեզվի տարբեր փուլերում ղ-ի ունեցած հնչյունական տարբեր արժեքները:

Ղ-ի վերահնչույթավորման ժամանակի որոշման հարցում ողջակի փաստեր տալիս են վիմական արձանագրությունները, որոնց հավաստիության վերաբերյալ կարող ենք միանգամայն վստահ լինել: Այստեղ արդեն ամենավաղ հուշարձաններում ունենք արաբական γarīb անձնանվան տառադարձությունը Խարիբ ձևով, որի մեջ օտարլեզվյան γ-ի դիմաց հայերենը դրել է խ: Այդպես է 991 թվականին գրված մի խաչքարի վրա. «...ես Խարիբ կանգնեցի սուրբ Քրիստափորս (հոգույն), զիս յիշեցեք» (Հայերեն արձանագրությամբ առարկաներ, էջ 51): Նույն բառից բաղադրված կա նաև Abu-ul-γarīb անձնանունը, որը Հաղբատի և Սանահինի վանքերի XI դարի սկզբներին գրված արձանագրություններում տառադարձված է Ապլխարիփ (Հաղբատ, 1021 թ.) և Աբլխարիփ (Սանահին, XI դար): Այս բոլոր տառադարձություններում էլ օտարլեզվյան γ-ի դիմաց հայերենը դնում է խ: Բայց այս նույն անձնանունը Անիում արդեն տառադարձված է Ապլղարիպ (ԴՀՎ 1, Աբլղարիբ Պահլավունու եկեղեցու արձանագրություններում, էջ 46, 1035 թ.), որտեղ ղ-ին արդեն տրված է γ-ի արժեք: Նույն ժամանակներում Անիի մի

[8] Հ. Աճառյան, «Ե՞րբ Լ դարձավ Ղ», էջ 36:

այլ պատմական հուշարձանի՝ Առաքելոց եկեղեցու արձանագրություններից մեկում նույնպես ունենք γ=ղ համապատասխանությունը, իշխանաց իշխան Վահրամի որդի Աբողամրի անվան գրության մեջ (ԴՀՎ 1, Անի, 12, 1031 թ.)։

Այս տառադարձությունների մեջ մենք, թերևս գործ ունենք այն «տատանյալ ձևի» հետ (Աճառյանի բառերով ասած), երբ ղ-ի վերահնչույթավորման ընթացքում γ հնչյունի գրությունը դեռևս կայունացած չէ և այն գրվում է մերթ խ-ով ու մերթ՝ ղ-ով։

Վերը բերված փաստերից կարելի էր անել նաև մի այլ հետևություն. օտարլեզվյան γ-ի փոխարեն խ գրությունը ոչ թե արտահայտությունն է այն բանի, որ ղ-ն դեռևս չէր վերածվել ետնալեզվային ձայնեղ շփական γ-ի, այլ արդյունք է հետագայում (ղ-ի վերահնչույթավորումից հետո) կատարված հնչյունափոխության, նման թուղթ>թուխթ բառում արձանագրվող ղ>խ փոփոխության։ Բայց այդ ենթադրությունը իրական կարող էր լինել այն դեպքում միայն, եթե ղ-ն գտնվեր ոչ ազատ դիրքում (տվյալ դեպքում՝ ոչ բառասկզբում), այլ լիներ կախյալ վիճակում, այսինքն՝ խուլ բաղաձայնի հարևանությամբ։

Բառասկզբի օտարլեզվյան γ-ի դիմաց խ գրությունը կարող է ստանալ նաև մի այլ մեկնաբանություն, եթե նկատի ունենանք այդ հնչյունի դրսևորման տարբերությունները հայերենի ժամանակակից բարբառներում։

Աճառյանի այն պնդումը, թե հայերենի բարբառներում հին ղ-ի դիմաց այսօր ամենուրեք ետնալեզվային ձայնեղ շփական γ է, ճիշտ է միայն մասամբ, այն էլ միայն բառամիջի և բառավերջի դիրքերի համար։ Իսկապես, այսօր ամենուրեք հին աղ, աղալ, խաղալ, խաղաղ և նման բառերում ղ-ին տրվում է ետնալեզվային ձայնեղ շփական γ-ի արժեք, մի բան, որ խոսում է այդ դիրքերում ղ-ի վերահնչույթավորման միասնական գործընթացի մասին։

Միանգամայն այլ է պատկերը բառասկզբում։ Ճիշտ է, հին հայերենում բառասկիզբը ղ-ի համար բացառված դիրք էր, որի հետևանքով էլ մենք չունենք բառասկիզբը ներկայացնող համապատասխան օրինակներ (բնիկ բառերի իմաստով), բայց այդ նույն ժամանակներից մեզ ավանդված են ղ-ով փոխառյալ անուններ, որոնք հանդես են բերում բնիկ բառերին հատուկ նույն հնչյունական օրինաչափությունը։ Այստեղ էական է այն, որ ինչպես հնից ավանդված բառերի, այնպես և արաբերենից փոխառված γ-ով բառերի համապատասխան հնչյունները մեր բարբառներում հանդես են բերում նույն օրինաչափ անցումները։ Դիտելի է, որ բոլոր այն դեպքերում, երբ ժամանակակից գրական հայերենում և նրա բարբառների մի մասում բառասկզբում ունենք ղ(γ), բարբառների գրաված մի այլ տարածքում դրան համապատասխանում է

ետնալեզվային պայթական կ, իսկ մի այլ տարածքում՝ ետնալեզվային խուլ շփական խ[9]։ Այլ կերպ ասած՝ մենք ունենք բարբառներ, որոնց խորթ է γ-ի բառասկզբային արտասանությունը և այդ պատճառով էլ օտար այդ հնչյունի դիմաց դնում են կ կամ խ։ Այդ բանը շատ լավ երևում է հետևյալ երեք սյունակների բառերի բառասկզբի հնչյունների համեմատությունից։ Յուրաքանչյուր սյունակը ներկայացնում է մի բարբառախումբ։

Ղազար	Կազար	Խազար
Ղուկաս	Կուգազ	Խուգազ
ղարիբ	կարիբ	խարիբ
ղասաբ	կասաբ	խասաբ
ղամմազ	կամմազ	խամմազ և այլն։

Բառազկզբի դիրքում նույն հնչյունի դրսևորման նման տարբերություններ նկատելի են նաև պատմական շրջանի գրավոր աղբյուրներում, հատկապես միջին հայերենի շրջանի գրավոր հուշարձաններում։

Հին հայերենում օտարլեզվյան γ-ի տառադարձությունը մի քիչ այլ էր։ Այստեղ այն արտահայտվում էր կ-ով (ոչ բառասկզբի դիրքում նաև գ-ով. հմմտ. օր. ասոր. qadsa=կաթսայ կամ կատսայ «պղնձյա մեծ աման», պրսկ. moq=մոգ և այլն)։ Միայն հետագայում է, սկսած արաբական փոխառությունների շրջանից, որ կ-ով տառադարձություններին զուգահեռ հանդիպում են նաև խ-ով ու ղ-ով գրված ձևեր. ինչպես, օրինակ՝ արբ. γalat>խալաթ, ղալաթ «սխալ, վրիպակ», արբ. qantar>խանթար, ղանթար «քաշի տեսակ» և այլն։ Ըստ որում՝ ղ-ով ձևերը հանդես են գալիս ավելի ուշ, երբ այդ տառը արդեն ի վիճակի էր արտահայտելու ետնալեզվային ձայնեղ շփական բաղաձայնի որակը։ Վերը բերված տառադարձություններից երևում է նաև, որ արաբերենի غ և ق հնչյունները հայերենում հավասարապես արտահայտվում են խ և ղ տառերով։ Այսպիսով, միջին հայերենի շրջանում օտարլեզվյան նույն հնչյունը արտահայտվում էր ոչ միայն ղ-ով, այլև խ-ով ու կ-ով (օր. qarura=ղարուրայ, խարուրայ, կարուրայ «միզաման, որ օգտագործվում էր բժշկության մեջ» (տե՛ս Ամիրդովլաթի ստեղծագործություններում)։ Հասկանալի է, որ տառադարձության նման տարընթացությունը արդյունք է տարբեր բարբառային հիմքերի։

Արդ, եթե ելնելու լինենք մեր ժամանակակից բարբառներում առկա վիճակից և պատմական հուշարձաններում օտարլեզվյան γ-ի տառա-

---

9 Որոշ բարբառներ այս համապատասխանությունների դիմաց հանդես են բերում կոկորդային ղ̂, կ պայթական ու պայթաշփական բաղաձայններ, որոնց նշումը այս դեպքում վճռական նշանակություն չունի տվյալ հարցի քննության համար։

դարձման տարբերությունից, ապա կարելի էր ենթադրել, որ վիմական արձանագրություններից վերը բերված խարիպ, Ապլխարիփ *բառաձևերում γ-ի դիմաց* խ *գրությունը բարբառային այն առանձնահատկության արտահայտությունն է, երբ բառասկիզբը տվյալ վայրում բացառված դիրք է γ-ի համար։*

Սակայն այդ ենթադրությունը ճիշտ կարող է լինել միայն այն վայրերի բարբառների համար, որոնք իսկապես ունեն դիրքային այդ սահմանափակումը։ Այդ բանը անվերապահորեն չի կարելի ասել, օրինակ, Սանահնի և Հաղբատի պատմական հուշարձաններից քաղած բառաձևերի մասին, որովհետև այդ վայրերի լեզվին հատուկ չէ γ-ի դիրքային որևէ սահմանափակում։ Այստեղ այսօր ետնալեզվային ձայնեղ շփական ղ-ի գործածությունը բառամիջի ու բառավերջի դիրքերից բացի հավասարապես կիրառելի է նաև բառասկզբի դիրքում, և ղ-ն այս դեպքում երբեք չի փոխարինվում ոչ խ*-ով և ոչ էլ* կ*-ով։*

Մյուս կողմից՝ ուշադրություն պետք է դարձնել նաև հետևյալ հանգամանքի վրա։ Վերը բերված բառաշարքերից յուրաքանչյուրում առկա բառերի համար թեև օրինաչափությունն ընդհանրական է (մի վայրի ղ-ին մի այլ վայրում համապատասխանում է կ*-ն կամ* խ*-ն), բայց բերված բառերի ծագումնաբանական հիմքերը տարբեր են։ Եթե դեռևս* ղարիբ, ղասաբ, ղամմազ, կարիբ, կասաբ, կամմազ, խարիբ, խասաբ, խամմազ *համապատասխանությունների հիմքում ընկած է օտարլեզվյան γ-ն, որից սպասելի էր անցումը դեպի ետնալեզվային* խ *և* կ *բաղաձայնները, ապա այդ նույնը չի կարելի ասել* Ղազար : Կազար : Խազար, Ղուկաս : Կուգազ: Խուգազ *բառաձևերի մասին։ Չի կարելի, որովհետև այս անունների բառասկզբի հնչյունները ծագումնաբանորեն գալիս են օտար* l*-ից, որը հին հայերենում, ճիշտ է, ընկալվել ու գրանցվել է որպես ձայնորդ* ղ, *բայց միանգամայն անտրամաբանական ու ոչ գիտական կլինի նշված բառերի բարբառային* խ, կ *հնչյունները բխեցնել ձայնորդ* l*-ից։ Այդ բառերում նախնական* l*-ի դիմաց պատմականորեն առաջացած* խ, կ *հնչյունները կարող են արդարացվել միայն այն ժամանակ, եթե մենք ընդունենք, որ այդ բառերի* l*-ն էլ ենթարկվել է* ղ *ձայնորդի վերահնչույթավորման ընդհանուր օրինաչափությանը։*

Այսպիսով՝ այս բոլորից արվող ընդհանուր եզրակացությունն այն է, որ հին հայերենի ղ *ձայնորդի վերահնչույթավորումը ետնալեզվային ձայնեղ շփական γ-ի ամբողջ հայության համար եղել է միասնական, որ այն ընդգրկել է հայերենի բանավոր-խոսակցական բոլոր տարբերակները և որպես ընդհանրական օրինաչափություն՝ գործել է ղ-ի՝ բառի մեջ գրաված բոլոր դիրքերում։ Միայն թե հայերենի որոշ տարբերակներում, որտեղ բառասկզբի դիրքում այդ հնչյունի արտասանու-*

թյունը խորթ է եղել տվյալ վայրի խոսվածքի արտասանական բաղային, γ-ն ընկալվել է որպես նույն շարքի k *կամ* x*։*

Ղ-ի վերահնչույթավորման պրոցեսը ժամանակագրորեն ավարտված կարելի է համարել X դարի վերջերին, երբ վիմական արձանագրություններում մեջ օտարլեզվյան γ-ի դիմաց, խ *գրի փոխարեն, սկսում են հանդիպել* ղ*-ով գրության ձևեր։*

Ղ ետնալեզվային ձայնեղ շփականի կրած փոխազդեցական հնչյունափոխության քննությունը թողնելով բաղաձայններին նվիրված բաժնին, այստեղ անդրադառնանք լ *ձայնորդի մի մասնակի փոփոխությանը։ Վերը խոսք գնաց այն մասին, որ այս հնչյունը հայերենի ամբողջ պատմության ընթացքում մնում է անփոփոխ և այսօր էլ գրական լեզվում ու բարբառներում հին* լ*-ի դիմաց ամենուրեք ունենք* l *հնչյուն։ Դա ճիշտ է ընդհանրապես, երբ* լ*-ի պատմական ընթացքը դիտարկում ենք* ղ*-ի փոփոխության (վերահնչույթավորման) հենքի վրա։*

Լ*-ն ենթարկվում է միայն մի մասնակի փոփոխության, այն էլ հայերենի բարբառների մի փոքր մասում, երբ նա ձեռք է բերում փափուկ արտասանություն։ Նման հատկությամբ օժտված* լ *ունեն այժմ Սյունիքի ու Արցախի տարածքի խոսվածքների մեծ մասը, որոնց մեջ թեև փափուկ* լ'*-ն հանդես է գալիս որպես սովորական* լ*-ի ազատ տարբերակը* (լ'ավ<լաւ, գ'իրիլ' <գրել *և այլն), բայց այն արժանի է ուշադրության հենց միայն նրա համար, որ այդ տարածքի բարբառների մի մասում նման փափուկ* լ'*-ի հիմքի վրա բայի ձևաբանական որոշ միավորներում կատարվել են հնչյունական փոփոխություններ։ Մեր խոսքը այստեղ մասնավորապես վերաբերում է հայ բարբառների, այսպես կոչված, Կիսճյուղի խոսվածքների անկատար դերբայի բարբառային տարբերակներին, որոնց մեջ կատարված ձևափոխությունները կապվում են դերբայական վերջավորության մեջ* լ*-ի կրած փոփոխության հետ։ Այդ վերջավորության մեջ* լ*-ի փափուկ արտասանությունն է եղել պատճառը, որն իր հետևից բերել է այդ դերբայի հետագա փոփոխությունների մի ամբողջ շարք* (մնալ — մնալ' —մընալ'իս — մընայիս— մընայս — մնաս)[10] *Անցման այդ օղակները այժմ էլ կենդանի են այսօրվա մի շարք խոսվածքներում։*

Մ : Ն — *Մեր լեզվի գրի առման շրջանում* մ *և* ն *տառերով արտահայտվում էին հայերենի ռնգային ձայնորդները։ Այդ տառերին տրվող հնչյունական արժեքների մասին մենք գաղափար ենք կազմում ոչ միայն նրանց այսօրվա արժեքներով, այլև հնդեվրոպական նախալեզ-*

10 *Ավելի մանրամասն տե՛ս Հ.* Մուրադյան, *Կարճևանի բարբառը, Երևան, 1960, էջ 8—9։*

վից ժառանգած բառերի և այլ լեզուներից կատարած փոխառությունների օգնությամբ։ Երկու դեպքում էլ հայերենի մ և ն տառերը հնչյունաբանորեն հանգում են M և N ունդայիններին։ Այսպես, օրինակ, հնդեվրոպական են՝ մայր, մատն, մեf, մանր, մարտ, մարդ, մարի, մարմին, մաfի, մեղf, մեղու, մեղր, մոզի և մ–ով սկսվող այլ շատ բառեր, որոնց մ–ն համապատասխանում է հնդեվրոպական լեզվի M-ին (օրինակ՝ մայր<máter, մատն<māt, մեք<mes, մանր<mənu և այլն)։ Նույնը վերաբերում է նաև ն-ին. այստեղ նույնպես՝ նաւ, նետ, նոր, նիզ, նուրբ, ներ և այլ բառեր հանդես են բերում ն=N համապատասխանությունը (նաւ<nau, նետ<nedo, «եղեգ» բառից և այլն)։

Նույնպիսի համապատասխանություն գոյություն ունի նաև փոխառյալ բառերում։ Այսպես, օրինակ՝ հուն. Μηχανή>մեքենայ, մեքենայ, μνας>մնաս, «կշռի չափ», μεταλλον>մետաղ, ասոր. magalləθa>մագաղաթ, պհլ. mātak>մատակ ··· պհլ. nāmak>նամակ, naft>նաւթ, naz>նազ և այլ բառերում օտարլեզվյան ռնգայինները համապատասխանաբար արտահայտված են հայերենի մ, ն տառերով։

Հատկանշական է, որ հայերենի ռնգայինները նախապատմական ու պատմական շրջանների բոլոր էտապներում հանդես են բերել արտակարգ կայունություն։ Մասնակի այն շեղումները, որ արձանագրվում են առանձին բառերում ու հնչյունական որոշակի դիրքերում, կարող են բացատրվել ծագումնաբանորեն կամ փոխազդեցական հնչյունափոխությամբ։ Այսպես, օրինակ, հայերենում մեղկ բառը ստուգաբանորեն կապվում է հնդ. նախլեզ. *nog^{u} արմատի հետ, բայց այստեղ նախաձևի N-ի դիմաց հայերենում ունենք մ։ Ընդ որում, հնդեվրոպական բոլոր լեզուները այդ արմատի N-ն պահպանել են, միայն հայերենն ու իրանյաններն են, որ N-ի դիմաց ունեն M[11]։ Այս դեպքում, երևի, պետք է ենթադրել հնդեվրոպական բարբառային մի տարբերակի գոյությունը հայերենի և իրանյանների համար։

Հին հայերենի անուն բառի դիմաց ժամանակակից բարբառների մի մասում (Արցախ, Սյունիք և այլուր) այժմ ունենք անում, անըմ ձևերը, որոնց մեջ գրական լեզվի բառավերջի ն-ի դիմաց մ է։ Սակայն այս դեպքում էլ առկա է ոչ թե հնչյունափոխություն, այլ հնաբանություն։ Բանն այն է, որ անուն բառը ծագում է հնդեվրոպական *nōmn նախաձևից, ուստի և բարբառային անում, անըմ ձևերում մ–ն համարվում է հնդեվրոպական m-ի արտահայտությունը (Մեյե)։ Հետևաբար գրական լեզվում նորմայի աստիճան բարձրացված անուն ձևում հին m-ի դիմաց ն–ի առկայությունը կամ առնմանության կամ m-ի անկման արդյունք է։

Ռնգայինների այլ կարգի փոփոխությունները վերաբերում են ոչ

11 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան։

այնքան պատմական, որքան փոխազդեցական հնչյունափոխության ոլորտին։ Այստեղ պետք է նշել հատկապես ն-ի առնմանական փոփոխությունը շրթնային պայթականի մոտ, որի արդյունքում ն-ն փոխվում էր մ-ի։ Բացի հայերեն կազմություններից (ան+բիծ=ամբիծ, տուն—տան—տանբ>տամբ) առնմանական նույն երևույթը կատարվում էր նաև փոխառյալ բառերում. հմմտ. օրինակ՝ պհլ. anbar=ամբար, anbārtāvan>ամբարտավան, anbārtak>ամբարտակ, anboh>ամբոխ և այլն[12]։

Ռ : Ր— Մեր լեզվի պատմության սկզբում ռ և ր թրթռուն ձայնորդները որպես ինքնուրույն հնչույթներ միմյանց հակադրվում էին միայն բառամիջի ու բառավերջի դիրքերում (առու : արու, ուռ : ուր, սեռ : սեր, վառ : վար և այլն)։ Բառասկիզբը երկուսի համար էլ բացառված դիրք էր։ Հին հայերենից ավանդված այն բառերը, որոնք բառասկզբում ռ ունեն, ծագմամբ օտար են՝ փոխառված եբրայերենից (ռաբբի, ռաբունի), պահլավերենից (ռազմ, ռազմիկ, ռոճիկ), հունարենից (ռետին)։ Միայն ռունգն բառն է, որ որպես հնդեվրոպական ծագման բառ (*srungh) բառասկզբում ունի ռ։ Եվ եթե նկատի ունենանք, որ այս բառի հնդեվրոպական ծագումն էլ թեական է, ապա պարզ կլինի, որ հայերենում բառասկիզբը ռ-ի համար իսկապես եղել է բացառված դիրք։ Նույնը վերաբերում է նաև ր-ին։ Հնդեվրոպական բառասկզբի r-ն հայերենում միշտ ստանում է նախահավելված (ա, ե, ո ձայնավորներից որևէ մեկը)։ Այն հատ ու կենտ բառերն էլ, որոնք բառասկզբում ր ունեն, ծագմամբ օտար են, հիմնականում փոխառություններ են հունարենից։ Բառարաններում ու միջնադարյան չափածո ստեղծագործություններում կարելի է հանդիպել նաև բառասկզբի ր-ով արհեստական ձևերի,՝ սարքված՝ կա՛մ ռ-ով սկսվող բառերից (ռաբբունի—րաբբունի), կա՛մ էլ հայերեն բառերից՝ նախավանկի հապավմամբ (տրուպ—րուպ)։ Դրանք առանձին գրողների կողմից արհեստականորեն շինված բառաձևեր են, որոնց միջոցով նպատակ է դրվել չափածո ստեղծագործություններում, հատկապես ակրոստիքոսներում, տողասկզբի ր-ի համար ունենալ ր-ով բառեր։ Բայց սրանք ավելի ուշ շրջանի երևույթներ են և որևէ կապ չունեն կենդանի լեզվի օրինաչափությունների հետ։ Բառասկզբի ր-ով բառերից կենդանի է միայն րոպե բառը, որը հունական փոխառություն է (ροπη)։

Ոչ բառասկզբի դիրքի ռ-ն և ր-ն հավասարապես սերում են հնդեվրոպական r ձայնորդից և r բաղաձայնից։ Նկատելի է, որ հնդեվրոպական r-ի արտահայտությունը հայերենում առհասարակ ր է, իսկ ռ-ն նրա դրսևորումներից մեկն է, երբ գտնվում է ն-ից առաջ (առնել, բեռն,

12 Այս և նման օրինակները, որպես փոխազդեցական հնչյունափոխության երևույթներ, քննվում են գիտական քերականություններում։

դուռն, ծիծեռն, ձմեռն, ընթեռնուլ, գառն և այլն)[13]։ Կան, իհարկե, նաև բացառություններ, ինչպես՝ բոռ, դեռ, ծուռ, կռունկ, մեռանիլ, ճեռի, փեռեկել, առեծ։ Սրանց մեջ, ինչպես կարելի է նկատել, ռ-ն չի գտնվում ն-ից առաջ։ Սրանց մի մասի մեջ հավանական է, որ ռ-ն գալիս է՝ ինչ-որ մի ժամանակ ն-ից առաջ գտնվելու պատճառով։ Այդ ենթադրությունը կարելի է անել հատկապես բոռ ու ծուռ բառերի վերաբերյալ, որոնց ն-ով ձևերը մինչև այժմ էլ պահպանված են մեր մի շարք բարբառներում։ Այսպես, օրինակ, բոռ բառի դիմաց Ղարաբաղի տարածքի խոսվածքները ունեն պօռնը կամ պուռնը ձևերը, իսկ ծուռ բառի ծուռն կամ ծուռը ձևերը պահպանված են Երևանի, Նոր Ջուղայի և այլ բարբառներում։ Այստեղ նույնիսկ կան դրանից բաղադրված ծռնություն, ծուռնումուռ ձևերը։ Թեև մյուս բառաձևերում (դեռ, կռունկ, մեռանիլ, ճեռի, փեռեկել, առեծ) ռ-ի գոյությունը բացատրող փաստարկներ չկան, բայց անկախ դրանից էլ, երևում է, որ հնդեվրոպական r-ի հիմնական (եթե ոչ միակ) ռեֆլեքսը հայերենում եղել է ր-ն, իսկ ռ-ն հետագա գոյացություն է՝ հայկական հիմքի վրա, պայմանավորված ր-ի դիրքային որոշ կիրառություններով (թերևս նաև արտաքին հանգամանքներով)։

Մեր լեզվի պատմության ամբողջ ընթացքում ռ և ր ձայնորդները մընում են որպես ինքնուրույն հնչույթներ և իրարից տարբերվում են հիմնականում թրթռունության աստիճանով։

Միաժամանակ պատմության ամբողջ ընթացքում բառասկիզբը ր-ի համար մնում է բացառված դիրք։ Այդ նույն դիրքում ռ-ի կիրառությունը հայերենի զբաղեցրած մի մեծ տարածքում աստիճանաբար դառնում է սովորական, հավանաբար պահլավերենից անցած այն բառերի շնորհիվ, որոնք այնքան հարազատ տարր են հայերենում։ Թերևս հենց այս հիմքի վրա էլ հետագա դարերում նոր փոխառությունների բառասկզբի r-ն հայերենում միշտ տառադարձվում է ռ-ով և ոչ երբեք ր-ով (արբ. rasm=ռասմ, rayis=ռայիս, ըռայիս), այն դեպքում, երբ բառամիջի ու բառավերջի օտարլեզվյան r-ն արտահայտվում է ր-ի միջոցով. օրինակ՝ արբ. mahr=մահր, ṣadr=սատր, ḍarba=տարպայ, buhrān=բուրհան, qurs=կուրս, buxār=պուխար, xabar=խապար, thadbir=թատպիր. պրսկ. čarak=չարեկ, khahruba=քահրբայ, čarx=չարխ, sarhang=սրահանգ, bahar=բահար, bidar=բէտար, bimār=բիմար, gulbašakhar=գուլբայշաքար. հին. ֆր. privilge=բրվլեճ, marc=մարկ, banier=պաներ,

[13] Հայերենի մի շարք բարբառներ մինչև այժմ էլ պահել են հին հայերենի այդ հատկությունը։ Այստեղ էլ ն-ից առաջ ր-ն փոխվում է ռ-ի։ Հմմտ. օրինակ, Մեղրու, Կարճևանի բարբառներում (և այլուր)՛ արիւնել>ըռնիլ, որդն>öռնը, որդնել>öռնիլ, որ(ն)>հուռնը, գորտ(նուկ)>գöռնուկ և այլն։

baron=պարոն, frére=ֆրեր, prince=բրինծ, sire=սիր *և այլն, և այլն։ Միայն հունարենից կատարված փոխառություններում է, որ այդ լեզվի* r-*ն հայերենում տառադարձվում է* ռ-*ով, նշանակում է թե այն, մյուս լեզուների* r-*երի համեմատությամբ, ունի ավելի կոշտ արտասանություն։ Ահա մի քանի հունական փոխառություններ՝* ἀφημερινος=աֆիմեռինոս, λογαριασις=լողոռիաս, προίξ=պռոյզ *և այլն։ Այս օրինակները միաժամանակ ցույց են տալիս, որ միջին հայերենի շրջանում ևս* ռ *և* ր *հնչյունները պահպանում էին իրենց ինքնուրույնությունը՝ յուրաքանչյուրն իր հնչույթային արժեքով։*

Բառասկզբի ռ-*ի համար պետք է ավելացնել նաև հետևյալը։ Եթե հայերենի զբաղեցրած մի որոշ տարածքի բարբառներում նշված դիրքում* ռ-*ի արտաբերումը աստիճանաբար դառնում է սովորական, ապա մի այլ տարածքում բառասկզբի նրա կիրառությունը բացառվում է (ինչպես հնում)։ Այս դեպքում օտարլեզվյան* ռ-*ի տառադարձության ժամանակ* ռ-*ից առաջ որպես հենարան արտասանվում է մի թույլ* ը*։ Բառասկզբի* ռ-*ից առաջ* ը-*ի արտասանությունը, որ շատ սովորական է այսօրվա արևմտահայ մի շարք բարբառներում, արձանագրվում է նաև միջնադարյան որոշ բնագրերում. օրինակ, վերը նշված* ըռայիս *բառում, կամ՝ արբ.* rub=ըռուպ, rafiq=ըռաֆիկ *և այլն։*

Այս բոլորից դուրս ռ *և* r *ձայնորդները որոշ վայրերում կրում են նաև մասնակի փոփոխություններ։*

ա) Դրանցից մեկը արտահայտվում է նրանում, որ վերանում է ռ *և* r *հնչյունների միջև եղած արտասանական տարբերությունը, որի հետևանքով էլ այդ երկու ձայնորդները միավորվում են մի հնչյունի մեջ՝* r-*ի արտասանական-հնչական որակով։ Այդպիսի երևույթ արձանագրվել է Թիֆլիսի բարբառի համար։ Նման բան առկա է նաև Ղարաբաղի բարբառի Տումիի խոսվածքում։ Այստեղ գոյություն չունի* ռ *հնչյունը։ Հայերենի համար ընդհանուր այնպիսի բառերում, որոնք իրենց մեջ* ռ *ունեն, Տումիի խոսվածքում այդ* ռ-*ն արտասանվում է* r. *ինչպես՝* դուռն>տօrնը, տօrը, տեառն>տէrը, մեռել է>մըէrալ ա, գոռգոռալ>կ՛ըրկ՛ըrալ *և այլն*[14]*։*

Այս երևույթը ամենայն հավանականությամբ բավական հին է։ Այն արձանագրվում է նաև միջնադարյան գրավոր աղբյուրներում։ Դրա առաջին վկայությունը թերևս կարելի է համարել Անիի Գրիգոր Պահլավունու եկեղեցու արձանագրություններից մեկում առնել *բայի* ռ-*ի փոխարեն* r-*ի գործածությունը։ Արձանագրությունը թվագրված է 1040 թ., հետևաբար երևույթը կարելի է սկզբնավորված համարել առնվազն X դարում։ Ահա*

---

14 *Օրինակները վերցված են Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» աշխատությունից, էջ 67, 285 (բնագիր)։*

արձանագրության այդ հատվածը. «...զամէն ուրբաթ ի սբ (Ստեփանոս) ժամն իմ մաւրն Շուշանա արասցեն եւ զշաբաթն իմ հաւրն Գրիգորո եւ ի սբ Քրիստափոր զամէն ուրբաթ իմ քեռն Սեդաի։ եւ զշաբաթն իմ եղբաւրն արճէ(ճ) Համզէի» (ԴՀՎ 1, էջ 33)։ Գրության այս ձևը (արճէճ բառաձևը նախադասության սկզբում բերվող արասցեն գրաբարյան բայաձևի ժողովրդական տարբերակն է), վրիպակ չպետք է համարել, քանի որ այն կրկնվում է նաև հետագայի մի շարք արձանագրությունների մեջ, այն էլ ոչ միայն գրված Անիում, այլև Հաղբատում ու Սանահինում։ Բացի այդ, ռ>ր հնչյունափոխության փաստը հաստատվում է նաև ձեռագրերում հանդիպող այլ բառաձևերի գրության մեջ։ Այդպիսի օրինակներ հանդիպում են բժիշկ Գրիգորիսի «Քննութիւն բնության մարդո և նորին ցաւոց» աշխատության մեջ՝ արողջ՝ փոխ. առողջ, արողջեալ՝ փոխ. առողջեալ, արողջութեան՝ փոխ. առողջութեան (տե՛ս Գրիգ. 45,47 և այլն), այսպես նաև՝ մորացայ՝ փոխ. մոռացայ (ԺԴ ՀձՀ 38, 1305 թ.) և այլն։

բ) Հայերենի ժամանակակից բարբառներում արձանագրվում է նաև հակառակ երևույթը, երբ ր-ի դիմաց արտասանվում է ռ: Այդ բանը այս կամ այն չափով առկա է բոլոր այն բարբառներում, որոնց մեջ գոյություն ունի ր-ի և ռ-ի հակադրությունը։ Թե կոնկրետ ինչ պայմաններում է կատարվում այդ փոփոխությունը՝ դժվար է ասել։ Այստեղ ամենատարբեր պատճառներով և առանց պատճառների առանձին բառերում ր-ն փոխված ենք տեսնում ռ-ի։ Այդ փոփոխության մեջ, այնուամենայնիվ, մի օրինաչափություն որոշակի է. այդ այն է, որ ր-ի դիմաց ռ արձանագրվում է հիմնականում բաղաձայնից առաջ։ Այդ օրինաչափությունը տարբեր վայրերում դրսևորվում է տարբեր բաղաձայններից առաջ և վերջիններիս քանակն ու կազմն էլ վայրից վայր տարբեր է։ Բայց դրանց մեջ ընդհանուրն այն է, որ ր>ռ անցումը դիտվում է անմիջապես բաղաձայնից առաջ ընկած դիրքում և այս դեպքում այդ անցման հաճախականությունը միջձայնավորային դիրքի համեմատ բավական մեծ է։ Այնուամենայնիվ, տարբեր վայրերում այդ օրինաչափությունը դրսևորվում է յուրովի։ Վանի բարբառում, օրինակ, ըստ Աճառյանի հավաստմամբ, ր-ն ռ է դարձել ծ, ճ, շ, չ, վ, ց, փ բաղաձայններից առաջ[15]։ Ըստ Մ. Ասատրյանի՝ Ուրմիայի (Խոյի) բարբառում այդ նույն օրինաչափությունը առկա է տ, ծ, ձ, ց, չ, թ, փ բաղաձայններից առաջ[16]։ Լոռու խոսվածքում (նույն հեղինակի վկայությամբ) օրինաչափությունը գործել է թ, ծ, ց, չ, շ, ժ, տ, դ, ճ, ս, ճ բաղաձայններից առաջ[17]։ Եթե համեմատելու լինենք բաղաձայնական այդ շարքերը՝ կտեսնենք, որ բարբառային այդ երեք միավորներում դրանք

15 Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, էջ 91։

16 Մ. Ասատրյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, էջ 55։

17 Մ. Ասատրյան, Լոռու բարբառը, էջ 83։

իրար հետ չեն համընկնում։ Միայն ծ և ց բաղաձայններն են, որ երեքում էլ ընդհանուր են։ Իրար չեն ծածկում նույնիսկ առանձին զույգերը։ Վանի և Ուրմիայի համար ընդհանուր են միայն երեք բաղաձայն, Վանի և Լոռու համար՝ 5-ը, Ուրմիայի և Լոռու համար՝ 4-ը։ Այս նշանակում է, որ այս օրինաչափությունը ինչ-որ առանձին բաղաձայններով չի պայմանավորված։ Բացի այդ. եթե մյուս բաղաձայնները օրենքին չեն մասնակցում, այդ դեռ չի նշանակում, թե դրանցից առաջ r-ն մնում է անփոփոխ։ Այդ բաղաձայններից շատերը պարզապես r-ից հետո կիրառություններ չունեն, իսկ մյուսներն էլ՝ եթե տվյալ բարբառում բացակայում, ապա մի այլ բարբառում մասնակցում են օրինաչափությանը։

Այս ընդհանուր դիտողությունից արվող եզրակացությունը պետք է լինի այն, որ r>ռ անցման հիմնական աղբյուրը անշուշտ եղել է նախաբաղաձայնական դիրքը։ Ամենայն հավանականությամբ հին հայերենում (նաև բարբառներում) ն-ից առաջ գործող r>ռ փոխանցման օրինաչափությունն է, որ ընդհանրացել ու տարածվել է այլ բաղաձայններից առաջ գտնվող r-ի վրա։ Պատմական շրջանում սկսված այս անցումը չի հասել իր ավարտին և այդ իսկ պատճառով տարբեր վայրերում դրսևորվում է տարբեր նախաբաղաձայնական դիրքերում։

Այս երևույթի առաջին արձագանքները վկայվում են գրավոր աղբյուրներում նույնպիսի անկանոնությամբ, ինչպես որ ժամանակակից բարբառներում. օրինակ՝ խռեն՝ փոխ. խորեն (անձնանուն), շուրջառ՝ փոխ. շուրջառ, առպնճան՝ փոխ. ապարանջան (դրափոխությունից հետո) և այլն։

գ) Ր-ի փոփոխության մի այլ արտահայտությունն էլ նրա, այսպես կոչված, «փափուկ» արտասանությունն է, որը, նայած փափկության աստիճանին, տարբեր վայրերում հասցնում է տարբեր արդյունքների։ Այդպիսի սովորական մի փափուկ արտասանություն, երբ r-ի արտաբերման ժամանակ լեզվի ծայրը ոչ թե թրթռում, այլ թեթևակի շփվում է լնդերին, արձանագրվում է, օրինակ, Նորքի խոսվածքում։ Նման արտասանություն ունի r-ն նաև ճար'<ճայր, մար'<մայր, տար'<տէր բառերում՝ Մեղրու, Կարճևանի և այս տարածքին հարող այլ խոսվածքներում։

«Փափուկ» արտասանության ժամանակ, երբ r-ն սկսում է արտաբերվել լեզվածայրի որոշ փոխվածքով ու գոգավորությամբ, ձայնորդը փոխարկվում է շշական շփականի, որը նայած հնչյունական շրջապատին, կարող է հանդես գալ որպես շփական ժ կամ շ։ Այսպես է, օրինակ, Համշենի բարբառում, ուր r-ն դ, թ ատամնայիններից առաջ դառնում է շ. ինչպես՝ մաrդ>մաշտ, մոrթել>մօշտուշ, կաrդալ>գաշըուշ, եr-թալ>էշտուշ, խոrթ>խօշտ>խօշթ, եrղնով>էշտվրննուշ, եrդումն>

չշքվունf և այլն, և այլն[18] Իսկ երբ r-ի արտասանության ժամանակ մասնակցում է նաև լեզվի միջնամասը, ապա ձայնորդ r-ի փոխարեն արտաբերվում է միջնալեզվային շփական յ: Այդպիսի փոփոխություն արձանագրվում է նույն Համշենի բարբառում, որտեղ այն յ-ի է փոխվում մի շարք բաղաձայններից առաջ (Աճառյանը բերում է այդ բաղաձայնների հետևյալ շարքը՝ զ, ժ, լ, ծ, ձ, ց, ճ, շ, չ, ն, ս, տ), ինչպես՝ զերծանել>զէյձնուշ, արծաթ>այձաթ, բարձր>պայյուրը, ճարցանել>ճայցօնուշ, կարճ>գայճ, արչ>այշ, զարնել>զայնուշ, շորս>շօյս, արտ>այդ, սիրտ>սիյդ և այլն, և այլն[19] Այս օրենքը գործում է նաև Հաջընի, Զեյթունի և այլ բարբառներում։ Հաջընում, օրինակ, օրենքը գործում է միջձայնավորային դիրքում ու բառավերջում, ինչպես՝ ուրագ>ույօկ, ուրախ>ույօխ>շարել>շայիէլ, պարապ>բայօբ, ջրի>ճիյի... fար>fօյ, ալիւր>էլիյ, օր>էյ, ջուր>ճույ, շոր>շուէյ, ճոր>փոէյ և այլն, և այլն[20]։

Ր>յ հնչյունափոխության այս երևույթը դրսևորվում է նաև Ղարաբաղի բարբառի Տումիի խոսվածքում, որտեղ նույնիսկ r-ից առաջացած յ-ն որոշ դեպքերում բառից դուրս է ընկնում։ Բերենք օրինակներ երկու դեպքերի համար էլ։ Ր>յ փոփոխությամբ՝ դրել>տըյալ, երես>իյիս, r>յ>∅ փոփոխությամբ՝ արաւ>ըրավ>ըավ, պատռճ>պատըուն «պարկուճ», արիւն>աուն, վերայ>յըրա>յըա, փօըմը «փորում, փորի մեջ» և այլն[21]։

Այս երևույթի համար որպես հնագույն վկայություն Ս. Ավագյանը մատնանշում է XIII դարի մի խաչարձանի հիշատակագրության մեջ վկայվող բարբառային երեւ «տվեց» բայաձևի եյետ գրությունը։ Ահա այդ հատվածը. «Եւ վանայկանխս զատիկ շաբաթ աւրին պատարագն ին֊ եյետ»[22]։ Այդ նույն հնչյունափոխության արտահայտությունը կարելի է համարել նաև առնել բայի արնել ձևի կողքին վկայվող այնել տարբերակը։ Վերջինս բազմիցս վկայվում է Մխ. Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» աշխատության հնագույն ձեռագրում (ընդօրինակված 1279 թվականին)։ Շատ հավանական է, որ այնել բայաձևը հեղինակային գրչություն լինի. այդ դեպքում վկայության ժամանակը կհասնի մինչև XII դարի կեսերը։

3—Մենք վերը ասացինք, որ ձայնորդներից միայն յ-ն և ւ-ն էին, որ հայերենի գրի առման շրջանում ինչ-որ չափով դեռևս պահում էին

18 Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947, էջ 65։

19 Նույն տեղում, էջ 64—65։

20 Հ. Գասպարյան, Հաջընի բարբառը, Երևան, 1966, էջ 52։

21 Օրինակները վերցված են Կ. Դավթյանի վերը հիշված գրքի 85-րդ էջի բնագրից։

22 Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, էջ 307։

ձայնորդական իրենց հին հատկությունը: Իսկապես, եթե այս երկուսը համեմատելու լինենք լ, ղ, մ, ն, ռ, ր ձայնորդների հետ, ապա կտեսնենք, որ սրանք բոլորն էլ բացառապես հանդես են գալիս միայն բաղաձայնական գործառությամբ, այն դեպքում, երբ ւ-ն և յ-ն, բացի բաղաձայնական ֆունկցիայից, լրացուցիչ կերպով կատարում էին նաև կիսաձայնավորական դեր, երբ ձայնավորների հետ միասին՝ երկբարբառների ու եռաբարբառների կազմում մասնակցում էին վանկակազմությանը: Որ նրանք այդ կապակցություններում կիսաձայնավորական դեր էին կատարում, երևում է հենց միայն նրանից, որ՝ եթե մյուս ձայնորդների ձայնավորական կապակցությունները պատմական շրջանի ընթացքում որևէ փոփոխության չէին ենթարկվում, ապա ւ-ի և յ-ի մասնակցությամբ կազմված կապակցություններում (երկբարբառներում) փոփոխությունը կատարվում էր ոչ թե նրանցից յուրաքանչյուրի մեջ առանձին-առանձին, այլ ամբողջ բարդության մեջ միանգամից, երբ բարդ ձայնավորները (երկբարբառները) վերածվում էին պարզ ձայնավորների: Սա կարևոր հատկություն է, որ պետք է հաշվի առնել հին հայերենի յ և ւ ձայնորդները բնութագրելիս:

Յ-ն բառի մեջ հանդես էր գալիս բոլոր դիրքերում՝ բառասկզբում (յաւէտ, յիսուն), բառամիջում (զգայարան, խնայեմ), բառավերջում (արքայ, երեկոյ): Ըստ որում՝ այդ բոլոր դիրքերում էլ ուներ հնչյունական նույն արժեքը. արտասանվում էր որպես միջնալեզվային կիսաձայն յ:

Յ տառի հնչյունական արժեքը երևում է հարևան լեզուներից կատարված փոխառությունների մեջ հայերենի յ-ին տրվող արժեքով. այսպես՝ ունենք բառասկզբի դիրքում՝ յաւէտ<պհլ. yāvēt, յազեմ<պհլ. yazēm, յասմիկ <պհլ. yāsmik (yāsmin) և այլն, որոնց մեջ ունենք յ=y համապատասխանությունը: Այսպես է նաև հունարենից կատարված փոխառություններում՝ յովտ < ιωτα «հունարեն ι տառի անունը», յակինթ< ιακινθος[23], յասպիս «ազնիվ քարի տեսակ» < ιασπις, յամբիկոն» ոտանավորի չափ» <ιαμβικον և այլն, որոնց մեջ հունարենի ι-ն հայերենում արտահայտված է յ-ի միջոցով, քանի որ ι-ն ձայնավորից առաջ ուներ y-ի արժեք:

Հայերենի յ-ի ծագումնաբանական հիմքը այնքան էլ պարզ չէ: Եթե մյուս ձայնորդները իրենց որոշակի համապատասխանություններն ունեն հնդեվրոպական նախալեզվում, ապա այդ նույնը չի կարելի ասել հայերենի յ-ի մասին: Համենայն դեպս հին հայերենի այն բոլոր բառերը, որոնք բառասկզբում յ ունեն, այդ յ-ն չեն սերում հնդեվրոպական y-ից: Ընդհակառակը՝ հնդեվրոպական y-ն այդ դիրքում վերածվում է ջ-ի

23 Այլ լեզուներում վկայված է նաև բառասկզբի h-ի հավելմամբ, ինչպես՝ լատ. hyacinthus, գերմ. Hyacinth և այլն: Բառի ծագումը ենթադրվում է միջերկրական արեալից (տե՛ս Հ. Աճառյան, Հայերենի արմատական բառարան):

(*yuro>ջուր *և այլն) կամ* լ-*ի* (yug'o>լուծ, yēk²r̥t>լեարդ. *միայն այս երկու օրինակում*)[24]։

Հայերենի յ-*ն ակնհայտորեն ունի ծագումնաբանական այլ հիմք։ Նկատելի է, որ մի շարք բառերում այդ* յ-*ն զուտ հայկական գոյացություն է՝ զարգացած* ի *նախդիրից (թեև սա էլ իր հերթին գալիս է հնդեվրոպական* in-*ից)։ Այսպես՝* յաւելուլ *առաջացել է* աւել *արմատից՝* ի *նախդիրով, այսպես նաև* ի-*ի հավելումով ունենք՝* յածիլ *«ման գալ, թափառել»՝* ած *արմատից,* յանգ *(յանգել)՝* անկ *արմատից,* յառնել *«վեր կենալ, հարություն առնել»՝* առ *արմատից (ինչպես այդ երևում է հրամայականի* արի՛ *ձևից),* յարնչիլ, յարմար, *որոնք ծագում են հնդեվ.* ar-*արմատից (ածանցմամբ),* յօդ *«մարմնի անդամների կապը»՝ հնդեվ,* au-dh *արմատից և այլն*[25]։

Հնդեվրոպական ծագման մյուս բառերում բառասկզբի յ-*ի գոյությունը կապում են նախալեզվի* P-*ի կամ* S-*ի հետ։ Ըստ որում՝ այս համապատասխանությամբ բառերի թիվը առանձնապես մեծ չէ, եթե, իհարկե, նկատի ենք ունենում* P-*ի և* S-*ի օրինաչափ մյուս փոփոխությունները։ Դիտարկենք նախ* P-*ից սերող օրինակները։ Այստեղ ունենք ընդամենը չորս համապատասխանություն. դրանք են՝* յոլով, յղի, յատակ, յիսուն։ *Սրանց հակառակ՝ հնդեվրոպական* P-*ի հիմնական արտահայտությունը հայերենում* հ-*ն է (29 արմատ) կամ ոչինչը, այսինքն՝* P-*ի անկումը (31 արմատ)։ Աճառյանը այս համապատասխանության մասին նշում է.* P-*ն «...թե որ դեպքում պիտի դառնա* յ *կամ ջնջվի, այդ դեռ լավ պարզված չէ։ Ոմանք կարծեցին, թե* P *շեշտյալ վանկում լինում է* հ, *անշեշտ վանկում՝* յ։ *Օրինակ՝* *penk²e>հինգ *և* *penk²ek'omt>յիսուն. *և կամ թե կարճ բառի մեջ լինում է* հ, *երկար բառի մեջ՝* յ։ *Այս բոլորը հերքվում է սույն օրինակներով, որոնց մեջ միևնույն բառը ստանում է թե* հ, *թե* յ *և թե՝ մինչև անգամ ոչինչ»*[26]*։ Աճառյանը բերում է այդ օրինակները՝* *pəter —հայր, հօրու, յօրայ. *pau>հաւ, յաւ *(ծայր)*, *pedo>հետք, հետ, յետ, ետ։ *Մեզ թվում է որ վեճի առարկա հարցի լուծման համար այս օրինակները հարմար չեն։ Շատ հնարավոր է, որ դրանք նույն բառի գրչագրական տարբերակներն են՝ ավանդված հատկապես պատմական շրջանի այն էտապներից, երբ* յ-*ն բառասկզբի դիրքում արդեն ստացել էր* հ-*ի արժեք և հետևաբար, գրության մեջ կարող էր փոխարինել ավանդական* հ-*ին։ Այդ օրինակներին չի կարելի վստահել առաջին հերթին հենց այն*

---

24 *Հնդեվրոպական* y *ձայնորդի ձայնավորական տարբերակները* (i, ī) *հայերենում տալիս են* ի *ձայնավոր, ուստի այստեղ հարկ չկա դրանք քննելու*

25 *Օրինակները քաղված են Հ. Աճառյանի Հայերեն արմատական բառարանից։*

26 *Հ.* Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի հ,. 6, Երևան, 1971, էջ 519։*

պատճառով, որ դրանք պարունակող ձեռագրերը բուն սկզբնագրեր չեն, այլ հետագա դարերի գրչությամբ հասած ընագրեր, որոնց մեջ ուղղագրական շեղումները արդեն սովորական երևույթ են[27]։ Իրենց ուղղագրությամբ ավելի վստահելի են վերը բերված չորս բառերը (յոլով, յղի, յատակ, յիսուն), որոնք չունեն հ-ով զուգահեռ տարբերակներ։ Բայց սրանց մեջ էլ՝ հնարավոր է, որ յ-ն ծագում է ոչ թե հնդեվրոպական P-ից, այլ հավելական է, ինչպես վերը նշված մի շարք հնդեվրոպական ծագման բառերում, միայն այն տարբերությամբ, որ այս չորս բառում յ-ի հավելումը դեռևս բացատրելի չէ։ Կարելի է ենթադրել միայն, որ այդ բառերում յ-ի հավելումը կատարվել է հնդեվրոպական P-ի անկումից հետո՝ հնդեվրոպական ձևերից հայերենին անցնելու ժամանակաշրջանում։ Որ դա պիտի այդպես լինի, կարող է հաստատվել ոչ միայն նրանով, որ P>յ «փոփոխությունը» փաստորեն բացառություն է P-ի հիմնական ու օրինաչափ փոփոխության համեմատությամբ (4 արմատ՝ 29+31=60-ի դիմաց), այլև նրանով, որ մեր ժամանակակից բարբառների մի մասում մինչև այսօր էլ պահպանված են առանց յ-ի ձևերը։ Բարբառագիտական ուսումնասիրություններում սովորաբար նման բառերի համար նշվում է, որ դրանք կորցրել են հին հայերենի բառասկզբի յ-ն։ Մեր կարծիքով, ավելի հավանական պետք է համարել այն, որ այդ բառերը առհասարակ նախապես յ չեն ունեցել և իրենց ծագմամբ հարում են հնդեվրոպական ծագման՝ P-ով սկսվող այն բառերին, որոնք կորցրել են այդ հնչյունը բառասկզբում։ Բարեբախտաբար այդ չորս բառերից երեքը պահպանված են մեր բարբառներում, որտեղ դրանց դիմաց մի դեպքում ունենք՝ հղի, հատակ, հիսուն կամ հ՛իցուն (զարգացած յղի, յատակ, յիսուն ձևերից) և մի այլ դեպքում՝ ըղի, ատակ, իսուն կամ իցուն՝ զարգացած յ-ի հավելում չունեցող նախնական ձևերից[28]։ Հետաքրքիր է նաև նշել, որ այդ շարքի բառերից յղի բառաձևը հայերենի մի շարք բարբառներում մինչև այսօր էլ պահպանում է բառասկզբի յ-ի արտասանությունը (այսինքն՝ այդ բառում չի գործել յ>հ հնչյունափոխությունը), այն դեպքում, երբ մյուս բառերում բառասկզբի յ-ն կամ բացակայում է, կամ փոխված է հ-ի։ Այս հանգամանքը նույնպես խոսում է յ-ի հավելական լինելու մասին։

---

27 Հին ձեռագրերում հանդիպող գրչագրական շեղումների մի մանրամասն ուսումնասիրություն միայն կարող է վերջնականապես լուծել այս հարցը։

28 Այլ օրինակների վրա կանգ չենք առնում, որոնք ակնհայտորեն դրչագրական տարբերակներ են։ Այսպես, օրինակ՝ հատ-յատ և սրանցից առաջացած (կամ որպես ձայնդարձային տարբերակներ) հօտ-յօտ՝ հօտել-յօտել «կտրել ճյուղերը», որոնք հիմնականում արձանագրվում են միջնադարյան երկերում (Գիրք վաստակոց)։ Թեև հատ-ը ստուգաբանված չէ, բայց վերը նշված երևույթը այստեղ էլ առկա է։ Այստեղ ևս հ, յ հնչյունների դիմաց բարբառները ունեն դրանց բացակայությամբ ձևեր՝ էտ, էտել, օտ, օտել «ճյուղերը կտրել»։

Բառասկզբի հնդեվրոպական S*-ի դիմաց հայերենում միայն երկու բառարմատ կա յ-ով՝* յագ(ենալ), յեռ(ուլ) *«շարել», այն դեպքում, երբ այդ նույն* S*-ի դիմաց բառասկզբում* ճ *ունենք հինգ բառ* (ճեծանել, ճեղք ճին, ճիւթ, ճուպ) *և 35 բառարմատ էլ կորցրել են բառասկզբի* S*-ն: Իզուր չէ, որ Մեյեն ու Բոնֆանտեն, ինչպես վկայում է Աճառյանը, կասկածանքով են վերաբերվում* S>ճ, յ *փոփոխությանը և այդ յ-ն ծագած են համարում ոչ թե հնդեվրոպական* S*-ից, այլ համարում են հետագայում առաջացած հավելում: Ցավոք այդ բառերը այսօր չեն պահպանվել մեր բարբառներում (մեզ, գոնե, հայտնի չեն) և չենք կարող ասել, թե նրանցում բառասկզբի այդ յ-ն զարգացման ինչ ընթացք է ստացել: Բայց անկախ այդ հանգամանքից, ավելի տրամաբանական է հայերենում ընդունել հնդեվրոպական* S*-ի անհետացումը, քան յ-ի փոխարկվելը:*

Այսպիսով, եթե ընդհանրացնելու լինենք բառասկզբի դիրքի համար արված քննության արդյունքները, ապա միանգամայն որոշակի է, որ այդ դիրքում յ կիսաձայնը ոչ թե անմիջապես գալիս է հնդեվր. P*-ից կամ* S*-ից, այլ այն հայերենի նախապատմական շրջանում առաջացած հավելում է, որ վերը նշված բառերում կատարվել է այդ* (P,S) *բաղաձայնների անկումից հետո:*

Ինչ վերաբերում է մյուս դիրքերի յ-ի կիրառությանը, ապա պետք է ասել հետևյալը: Բառամիջի միջձայնավորային դիրքում յ-ի գործածությունը պայմանավորված է կամ երկու ձայնավորների միջև առաջացող հորանջի կանխման պահանջով, կամ պարզապես այդ յ-ն բառավերջյան յ-ն է, որ ածանցման ու բառաբարդման ժամանակ պահպանվում է նույնությամբ (արքայ—արքայութիւն, արքայական)*: Բառավերջի դիրքում այն հանդիպում է միայն* ա *և* ո *ձայնավորներից հետո, թեև ենթադրվում է, որ առհասարակ այն բառավերջում եղել է բոլոր ձայնավորներից հետո, միայն թե* ե*-ից հետո այն միանալով ձայնավորին՝ տվել է* է, *իսկ* ի *և* ու *ձայնավորներից հետո ձուլվել է նրանց:*

Այս դիրքում հանդես եկող յ-ի ծագումը ևս շատ որոշակի չէ, թեև որոշ բառերում նրա գոյությունը կապում են հնդեվրոպական t,s *և այլ բաղաձայնների հնչյունափոխության հետ: Մի բան որոշակի է, որ այդ յ-ն իր բառավերջի կիրառությամբ նույնպես հայկական գոյացություն է, քանի որ հին փոխառությունների մեջ այդ յ-ն առկա է նույնիսկ այն դեպքում, երբ փոխատու լեզվում բացակայում է այդ հնչյունը:*

Հայերենի պատմության ընթացքում թեև վերը նշված դիրքերում պահպանվում է յ-ի ուղղագրությունը, բայց նրա արտասանության մեջ տեղի են ունենում փոփոխություններ: Դա հատկապես վերաբերում է բառասկզբի և բառավերջի դիրքերին: Բառամիջում, երկու ձայնավորների միջև, յ-ի արտասանությունը պահպանվում է անփոփոխ:

Բառասկզբի դիրքում յ-ի արտասանության մեջ աստիճանաբար թանձրանում է կոկորդային շունչը, որին սկզբնական շրջանում, հայերենի բարբառների մի որոշակի տարածքում, դեռևս ուղեկցում է յ կիսաձայնի արտասանությունը։ Սակայն այս արտաբերության ընթացքում յ-ն աստիճանաբար կորցնում է իր միջնալեզվային ձայնորդի հատկանիշները և ձեռք է բերում կոկորդային խուլ հ հագագի արժեք։ Այսպիսով, հին յղի, յատակ, յիշել, յաղթել, յիշոց և նման այլ բառերի բառասկզբյան յ-ի հնչյունափոխությամբ առաջանում են այդ նույն բառերի հղի, հատակ, հիշել, հաղթել, հիշոց բառաձևերը։ Այդ դիրքում յ-ի արժեքի մեջ կատարված փոփոխությունը հայերենի բանավոր-խոսակցական տարբերակներից անցնում է գրական լեզվին դեռևս միջին հայերենի շրջանում և հետագայում էլ՝ ժառանգորդաբար փոխանցվում է նոր հայերենի գրական տարբերակներին։

Բառասկզբի դիրքում յ-ի մեջ կատարված փոփոխությունը գրավոր աղբյուրներում տեսանելի է տարբեր կողմերից։

ա) Առաջին հերթին այն դրսևորվում է հենց այն հնչյունն արտահայտող տառի միջոցով, որին նա փոխարկվել էր, այսինքն՝ հ տառի միջոցով։ Ձեռագրերը, թեև ժլատ, բայց տալիս են գրության նման ձևեր, երբ բառասկզբի ավանդական յ-ն արտահայտված է հ-ի միջոցով։ Այսպես, օրինակ՝ ձեռագրերի հիշատակարաններում ունենք վկայված յատակ բառի հատակ գրությունը, յոգնամեղ բառի փոխարեն՝ հոգնամեղ, յորչորչեալ բառի դիմաց՝ հորչորչեալ և այլն։ Թերևս ամենահնագույն վկայությունը կարելի է համարել Երերուքի 1028 թ. մի արձանագրության մեջ ի(յ) նախդիրի փոխարեն, ըստ արտասանության, հ գրությունը. այսպես՝ «...ազատեցի Հերերվաց (<յԵրերուայ) թաստակս»[29]։

բ) Կատարված հնչյունափոխությունը առաջացնում է յ-ի և հ-ի ուղղագրության շփոթ, որը արտահայտվում է հետևյալ ձևով։ Կատարված հնչյունափոխության հետևանքով h հնչյունը արտահայտվում է երկու տարբեր գրերով (յ և հ)։ Ոչ հմուտ գրիչը չի կարողանում ճիշտ կողմնորոշվել այդ երկուսի ավանդական ուղղագրության մեջ և ինչպես որ ըստ հնչման՝ յ-ի փոխարեն գրում էր հ, այնպես էլ ավանդական հ-ի փոխարեն գրում է յ։ Այս է պատճառը, որ ձեռագրերում այս ու այն տեղ հ-ի փոխարեն հանդիպում են յ-ով գրված բառեր։ Այսպես. ձեռագրերի հիշատակարաններում հանդիպում են՝ Յաքերֆ՝ փոխ. Հաքերֆ (տեղանուն՝ Արցախում), յէնց՝ շատ սովորական հայնց, հանց, հէնց ձևերի կողքին, յարստութիւն՝ փոխ. հարստութիւն (1341 թ. գրչությամբ Ծառընտիր) և այլն։

գ) Բառասկզբի յ-ի հնչյունափոխության փաստը կողմնակի կերպով

---

29 Տե՛ս Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, էջ 325։

հաստատվում (կամ երևում) է նաև նոր փոխառությունների միջոցով, երբ փոխատու լեզվի բառասկզբի y հնչյունը հայերենում արտահայտելու անհրաժեշտություն է առաջանում։ Այդ հնչյունը, հակառակ ընդունված ավանդության սկսում է արտահայտվել ե ձայնավորի միջոցով։ Դա տեղի է ունենում այն պարզ պատճառով, որ յ>հ հնչյունափոխության պատճառով յ-ն այլևս չէր կարող արտահայտել y-ի արժեք։ Եվ իսկապես, եթե հին փոխառություններում (իրանական, հունական) օտարլեզվյան բառասկզբի y-ն հայերենում արտահայտվում էր յ-ով, ապա միայն այն պատճառով, որ այն կարող էր արտահայտել այդ հնչյունը։ Միջնադարում յ>հ հնչյունափոխությունից հետո՝ օտարլեզվյան բառերը յ-ով տառադարձվելու դեպքում, այդ յ-ն պետք է վերարտադրվեր որպես հ, մի բան, որ հակասում էր իրական վիճակին։ Օտարլեզվյան y-ի արժեքը ավելի լավ կարող էր արտահայտել ե-ն, որպես յոտացիայի ենթարկված ձայնավոր։ Այդ ձևով ավանդված ունենք բազմաթիվ բառեր՝ փոխառված նոր պարսկերենից, արաբերենից և այլ լեզուներից. ինչպես՝ **Եար, Եասաման, Եաղուբ, Եոլտաշ, Եուսուֆ** (վերջին երկուսը որպես հատուկ անձնանուններ) և այլն։

Մենք վերը ասացինք, որ յ-ի հնչյունափոխությունը սկսվում է նրա մեջ հագագային տարրի հավելմամբ, որը այդ հնչյունին աստիճանաբար տալիս է խուլ շփական հ-ի արժեք։ Հայ բարբառների մի այլ մասում այդ խուլ հ-ին այսօր հակադրվում է ձայնեղ հ՛-ն, որի հետևանքով շփականների շարքում ավելանում է մի նոր զույգ՝ իր ձայնեղ ու խուլ լծորդներով (այս մասին տե՛ս ստորև)։

Բառավերջի դիրքի համար ամբողջ հայերենում գործում է մի ընդհանուր օրինաչափություն։ Այստեղ յ-ն, որ հանդես էր գալիս ո-ից և ա-ից հետո, աստիճանաբար սկսում է ընկնել մեկից ավելի վանկ ունեցող բառերում (**արքայ>արքա, երեկոյ>երեկո, զարմացայ>զարմացա** և այլն), թեև ուղղագրության մեջ դեռևս երկար ժամանակ յ-ն շարունակվում է գրվել որպես յուրօրինակ «համր հնչյուն»։

Բառավերջի ա-ից և ո-ից հետո հանդես եկող յ-ի անկման երևույթը ամենայն հավանականությամբ արդեն սկսվել էր հին գրական հայերենի դասական շրջանում, որտեղ մի շարք բացառություններ արդեն խախտել էին յ-ի բառավերջյան գրության օրենքը (տե՛ս էջ 60)։ Այդ մասին են խոսում նաև մեզ հասած առաջին իսկ գրավոր աղբյուրների տվյալները։ Սրանց մեջ վկայություններ կան արդեն իսկ VI դարից։ Կասկած չի կարող լինել, որ եթե դրանք վկայվում են VI դարում, ապա կային նաև նախորդ՝ V դարում։ Հնագույն վկայությունները, որոնց մեջ արձանագրվում է բառավերջյան յ-ի անկումը, վերաբերում են գոյականների ա և ո հոլովման սեռական հոլովի վերջավորություններին, որոնց գրաբարյան այ և (ւ)ոյ վերջավորությունների փոխարեն գրության մեջ ու-

նենք առանց յ-ի ձևեր։ Հնագույն վկայությունը մեզ տալիս է VI դարի մի տապանաքարի բնագիր, որի վրա կարդում ենք. «Այս է հանգիստ Դաւթի Գրթունեաց տ͞ն որդո Վասակա բարէպա(շտ)ի» (Հայ. արձ. առ. 50)[30]։ Ինչպես կարելի է նկատել՝ հին որդւոյ Վասակայ ձևերի դիմաց գրված է որդո Վասակա, այսինքն՝ ըստ հնչյունական արտասանության գրության մեջ բաց է թողնված բառավերջի յ-ն։

Ւ Հին գրական հայերենի ձայնորդներից է նաև ւ-ը։ Թե նախապես հնչյունական ինչ արժեք էր թաքնված այդ տառի տակ, դժվար է ասել։ Խնդրի բարդությունը կայանում է նրանում, որ այսօրվա դրությամբ ւ-ը տարբեր դիրքերում հանդես է գալիս գործառական տարբեր արժեքներով, որոնք կարող են և չհամընկնել նրա նախնական արժեքի հետ։ Այսօր միջձայնավորային և բառավերջի ետձայնավորային դիրքերում ւ-ը հնչվում է որպես շրթնատամնային ձայնեղ շփական V (աւագ, աւազ, աւետարան, երեւելի, հիւանդ, ճիւաղ, անիւ, թեւ, թիւ, սպատիւ, հաւ և այլն) և իր այդ արժեքով նույնանում է վ տառով արտահայտված հնչյունի որակի հետ (հմմտ. ժողով, սովորել, կով, ծով, գետով և այլն)։ Մյուս կողմից՝ ւ-ը իւ երկբարբառի կազմում հնչվում է որպես պարզ u ձայնավոր (արիւն>*արիուն—արյուն, ալիւր—ալյուր, սիւն սյուն,—ձիւն—ձյուն և այլն)[31], այն դեպքում, երբ աւ(եաւ) երկբարբառում ա ձայնավորի հետ միասին փոխակերպված ենք տեսնում օ պարզ ձայնավորի (աւր-օր, աւձ-օձ, արաւր-արօր, արդեաւք-արդէօք և այլն)։ Բացի այդ, ւ-ը ո-ի հետ զուգակցված արտահայտում է հայերենի u ձայնավորը (ջուր, դուր, հուր, ձուկն, մուկն, գարուն և այլն) և այս դեպքում հնչյունական որևէ արժեք չունի, այլ կատարում է պայմանական նշանի դեր։

Գործառական այս կիրառություններից միայն առաջինում է, որ ւ-ը հանդես է գալիս առավել անկախ վիճակում, երբեմն միայն հերթագայվելով վ-ի հետ։ Այս դեպքում էլ նկատելի է, որ ւ-ը և վ-ը հանդես են գալիս փոխադարձաբար բացառող դիրքերում։ Այնտեղ, որտեղ կիրառվում է վ-ն, ւ-ի գործածությունը բացառված է, ինչպես նաև ւ-ի զբաղեցրած դիրքերն էլ բացառված են վ-ի համար։ Այսպես. բառամիջում և բառավերջում վ-ը հանդես է գալիս միայն ո ձայնավորից, իսկ ւ-ը՝ ա, ե, ի ձայնավորներից հետո[32]։ Ըստ որում՝ բացի միջձայնավորային ու բառավերջի ետձայնավորային դիրքերում ունեցած բաշխումնային այդ ա-

30 Այս օրինակի վրա առաջին անգամ մատնացույց է արել Ա. Ա. Աբրահամյանը։ Տե՛ս նրա «Փաստեր հայերենի պատմական հնչյունաբանության», ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1957, № 4, էջ 80։ Համապատասխան օրինակներ բերված են նաև «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության մեջ, էջ 139։

31 Այստեղ նկատի չենք ունենում բարբառներում կատարված փոփոխությունները։

32 Ը և ու ձայնավորներից հետո ւ-ը և վ-ը կիրառելի չեն։

տանձնահատկությունից, վ-ն և ւ-ը բաշխական նման հարաբերության մեջ են նաև բառասկզբի և ոչ բառասկզբի դիրքերում: Բառասկզբում գործածվում է միայն վ-ն, իսկ ւ-ը՝ միայն բառամիջում ու բառավերջում (վերը նշված ուղղագրական շեղումով, երբ ո-ից հետո գրվում է միայն վ):

Դիրքային նման բաշխվածությունը նկատի ունենալով է, որ ոմանք ենթադրում են, թե ւ-ը և վ-ը ունեցել են հնչյունական տարբեր արժեքներ: Ընդ որում՝ վ-ին համապատասխանում է շրթնատամնային ձայնեղ շփական V բաղաձայնի, իսկ ւ-ին՝ շրթնային (կամ երկշրթնային) ձայնորդ W-ի արժեք: Բայց թե դա իրո՞ք այդպես էր, դժվար է ասել: Համենայն դեպս, փոխառյալ բառերը, ինչպես նաև հայերենից այլ լեզուների անցած բառերի օտար տառադարձությունները այդ չեն ապացուցում: Վերցնենք, օրինակ, իրանական հին (հատկապես պահլավերենից կատարված) փոխառությունները: Այստեղ միջձայնավորային դիրքում ու բառավերջում (ձայնավորից հետո) փոխատու լեզվի բաղաձայն v-ն հայերենում արտահայտված է ւ-ի (և ոչ վ-ի) միջոցով: Այսպես օրինակ՝ āvāč=աւաչ, āvār=աւար, *āvart=աւարտ (համմ. մանիք. anāvard «անվերջ, անվախճան, հավիտյան», gavāzan=գաւազան, gāvars=գաւարս (համմ. պրսկ. gāvars «կորեկ»), dēv=դեւ (համմ. պրսկ. dēv), dēvān=դիւան (համմ. պրսկ. divan), kārāvān, kārvān=կարաւան, hāvan=հաւան/ (համմ. ընդ. hāvana, պրսկ. hāvanկամ havān) և այլն[33]:

Հայերեն բառերը նույնպիսի համապատասխանություններ ունեն նաև վրացերենում: Այդ համապատասխանությունները թեև ի հայտ են գալիս հիմնականում իրանական ծագում ունեցող բառերում, բայց դրանց մեծ մասը վրացերենին են անցել հայերենի միջնորդությամբ, հետևաբար հայերենի ւ-ն է, որ վրացերենում տառադարձված է v բաղաձայնով: Այսպես ունենք՝ հայերեն ամբարտաւան բառի դիմաց (որի տակ ենթադրվում է պհլ. *anbārtavan ձևը) վրացերեն ampartavani, աւազակ՝ վրաց. avazaki avazakoba «ավազակություն», աւազան—avazani «ավազան, լվացարան», աւար—avari, գաւազ<պրսկ. gavaz>վրաց. gavazi «բազե» համբաւ--hambavi և ambavi, հարաւ—aravi և այլն: Այս բոլոր օրինակները մի բան են հաստատում, որ հայերենի ւ-ը համապատասխանում էր իրանական ու վրացական v-ին: Ըստ որում՝ այդ համապատասխանությունը բերված օրինակներում առկա է բառամիջի միջձայնավորային ու բառավերջի հետձայնավորային դիրքերում, այն դեպքում, երբ բառասկզբում այդ նույն լեզուների v-ն հայերենում արտահայտվում է վ-ի միջոցով, ինչպես՝ պհլ. vāčar=վաճառ>վրաց. vačari, պհլ. vang=

33 Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

վանգ, վանկ, vaxš=վաշխ, varāz=վարազ (*հմմտ. պրսկ.* varāz), varž =վարժ, vars=վարս (*հմմտ՝ սոգդ.* vars) *և այլն*[34]*։*

Այս բոլոր օրինակների համադրությունը միայն մի բան կարող է ապացուցել, որ՝ չնայած գրության տարբեր ձևերին, վ-ն և ւ-ը արտահայտում էին նույն բաղաձայն հնչյունը։ Միայն մի բան պարզ չէ, թե ինչու էր նույն հնչույթը տարբեր գրքերում ստանում գրային տարբեր արտահայտություն։ Եթե դեռևս ինչ-որ չափով հասկանալի կարելի է համարել ո-ից հետո v *բաղաձայնի արտահայտումը վ-ի միջոցով (քանի որ այդ դիրքում* v*-ն ւ-ով արտահայտելու դեպքում կունենայինք* ու *տառակապակցությունը, որը կընկալվեր որպես ձայնավոր* u*), ապա անհասկանալի է բառասկզբի ու բառավերջի դիրքերում նույն հնչույթի արտահայտման տարբերությունների պատճառը։ Ստացվում է, որ հայերենը առհասարակ բառամիջում ու բառավերջում* v *բաղաձայն չի՞ ունեցել, կամ եթե ունեցել է, ապա միայն ո-ից հետո՞... Բայց չէ որ իրանական փոխառություններում այդ նույն ւ-ը համապատասխանում է փոխատու լեզվի* v *բաղաձայնին, ինչպես որ իրանական այդ նույն* v *հնչյունը հայերենում բառասկզբի դիրքում արտահայտվում է վ-ի միջոցով, որ նշանակում է, թե հայերենին, այնուամենայնիվ, խորթ չէր բաղաձայն* v *հնչյունի արտասանությունը։*

Հարցը ավելի է բարդանում, երբ նկատի ենք ունենում մի այլ կիրառություն ևս՝ ձայնավորից առաջ ընկած դիրքում v *բաղաձայնը դրսևորվում է* ու(u)*-ի միջոցով։ Գրության այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ բառի մեջ* ուա, ուո, ուէ, ուի *ձայնավորական զուգորդությունները, որոնք ոմանց կողմից դիտվում են որպես երկբարբառներ*[35]*, այսօր փաստորեն արտասանվում են որպես* va, vo, ve, vi *հնչյունակապակցություններ։ Ընդունված է ասել, որ այդ դեպքում ձայնավորից առաջ* ու*-ն պատմականորեն փոխվել է* v *բաղաձայնի, բայց դա հազիվ թե այդպես լինի։ Այստեղ պարզապես, ըստ ընդունված ուղղագրական կանոնների, ձայնավորից առաջ հնչվող* v*-ն հայերենում արտահայտվել է* ու*-ով։ Որ դա այդպես է, երևում է հետևյալ փաստերից։*

Այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ՝ ազնիւ, անիւ, թիւ, հաշիւ, պատիւ *և այլն (այսինքն՝ բառավերջում* իւ *ունեցող), որոնք բառաթեքման, ածանցման ու բառաբարդման ժամանակ* իւ*-ի փոխարեն հանդես են բերում* ու*, ինչպես՝* ազնիւ—ազնուի, ազնուաց *կամ* ազնուից, ազնուաբար, ազնուաբարոյ, ազնուագոյն, ազնուական, ազնուանամ, անիւ—անուոյ, անուոց *կամ* անուի, անուաց, անուաձև, անուաշրջիկ, անուաւոր. թիւ—թու-

---

34 *Նույն տեղում։*

35 *Տե՛ս* Հ. Մուրադյան, *Երկբարբառներ էին արդյո՞ք* ուա, ուէ, ուի... *կապակցությունները գրաբարում։ Պատմա-բանասիրական հանդես, 1971, № 4։*

ոյ, քուոց, քուական, քուականութիւն, քուակից. ճաշիւ—ճաշուի, ճաշուակից, ճաշուեմ, պատիւ—պատուոյ *կամ* պատուի, պատուոց, պատուաբեր, պատուական, պատուակից, պատուասէր, պատուատր, պատուեմ *և այլն,* *այդ* ու-*ն ձայնավորից առաջ այսօր արժեքավորում են որպես բաղաձայն* v*։ Եթե նկատի ունենանք այս բառերի ավանդական արտասանությունը, ապա կատարված հնչյունափոխությունը կարելի է համարել միանգամայն օրինաչափ, որը և արտահայտված է համապատասխան ուղղագրական կանոնով։ Այսպես. եթե ընդունենք, որ* պատիւ *բառը արտասանվել է որպես* pativ, *իսկ* պատուոյ *կամ* պատուի *ձևերը՝* patvo *կամ* patvi, *ապա ակնհայտ է, որ սեռական-տրականի ձևերում* ի-*ն է, որ շեշտազրկությունից սղվել է, իսկ* v-*ն արտահայտվել* ու-*ի միջոցով* (pativ—patvo, *ինչպես այդ հատուկ է հայերենին. հմմտ.* սիրտ—սրտի *և այլն)։ Այսպես նաև մյուս բառաձևերում՝* պատիւ=պատիվ—պատվաբեր, պատվական, պատվասեր *և այլն (արդի ուղղագրությամբ)։ Սրանից կարելի է անել մի ընդհանուր եզրակացություն. ձայնավորից առաջ գտնվող* v-*ն արտահայտվում էր* ու-*ի միջոցով։ Այս եզրակացությունը, եթե դեռևս ինչ-որ չափով կարող է համոզիչ չթվալ հայերեն բառերում, ապա լիովին հաստատվում է փոխառյալ բառերում, որտեղ նույնպես* v-*ն ձայնավորից առաջ արտահայտվում է* ու-*ի միջոցով։ Վերցնենք, օրինակ, իրանական ծագման հետևյալ բառերը իրենց բնօրինակներով.* դժուար dušvar *կամ* duṣaϑa[36], նուէր—nivēδ, Նուարդ—navārd *կամ* nav vard, նուագ—nivāg *և այլն։ Այս օրինակներն արդեն կասկած չեն թողնում, որ* ու-*ն նշված դիրքում իրոք արտահայտում էր բաղաձայն* v-*ի արժեք։*

Եթե ընդհանրացնելու լինենք բոլոր դիրքերի մասին ասվածները, ապա ստացվում է, որ v *բաղաձայնը հայերենում ուներ արտահայտության երեք ձև.* վ՝ *բառասկզբում և* ր-*ից հետո.* ւ՝ *բառամիջում ու բառավերջում* (ա, ե, ի) *ձայնավորներից հետո և* ու՝ *ձայնավորներից առաջ։ Ինչո՞վ էր պայմանավորված սա. միթե ավելի հեշտ ու ճիշտ չէր լինի, եթե բոլոր դիրքերում էլ* v-*ն արտահայտվեր միևնույն տառով։*

Հայերենում v *բաղաձայնը արտահայտելու համար տարբեր դիրքերում տարբեր տառանշանների դիմելը, մեր կարծիքով, կատարվել է հունարենի ուղղագրական կանոնների հետևողությամբ։*

36 *Այս բառի դիմաց հայերենի բարբառները այսօր ունեն* դըժա̈ր, դիժար, **դըժվար** *և սրանցից զարգացած հնչյունական այլ տարբերակներ* տըժար, տիժա̈ր *և այլն)։ Դրանցից վերջինը* (դժվար) *համապատասխանում է հին հայերենից ավանդված* դժուար *տարբերակին՝ զարգացած իրան.* dušvar *ձևից. Բարբառային* դըժար, դիժա̈ր (տըժար, տիժա̈ր) *ձևերը (որոնք արդեն իսկ միջին հայերենի շրջանից վկայվում են ձեռագրերում) գալիս են իրանական* dušaϑa *տարբերակից։ Հայերենում շեշտից առաջ գտնվող* ա-*ն երկու դեպքում էլ օրինաչափորեն հնչյունափոխվել է* ը-*ի (որից առնմանությամբ նաև* ի-*ի), իսկ* š-*ն* d-*ի մոտ ձայնեղացել է (ըստ հայերենի բաղաձայնների զուգորդելիության օրենքի)։*

Հին հունարենը, քանի որ չի ունեցել շրթնատամնային ձայնեղ շփական V, բնականաբար չի ունեցել նաև այն արտահայտող տառանշան։ Ենթադրելի է, սակայն, որ հայ գրերի ստեղծման շրջանում հունարենում արդեն ձևավորվել էր այդ հնչյունը և մի շարք բառերում դրսևորվում էր որպես այլ ձայնավորների պատմական հնչյունափոխության արդյունք։ Այդ բառերում արտահայտվող հնչյունի օրինակով էլ տառադարձվում էր օտար բառերում հանդիպող V-ն։ Այսպես. բառասկզբի դիրքում, ձայնավորից առաջ, V-ն արտահայտվում էր ο և υ տառերի կապակցությամբ, որոնք միասին վերցրած (ου) անկախ դիրքում (երկու բաղաձայնների միջև) ունեին u ձայնավորի արժեք (ինչպես և հայերենում)։ Այդ համապատասխանությունը շատ լավ երևում է Ագաթանգեղոսի հունարեն թարգմանության մեջ Վաղարշապատ հայկական տեղանվան Ουαλαρςάπατ տառադարձության մեջ, որտեղ հայերեն V-ն դրսևորվել է ου-ի միջոցով[37]։ Ուղղագրական նույն սկզբունքը, ինչպես տեսանք վերը, կիրառված է նաև հայերենում՝ բառամիջի նախաձայնավորական դիրքի համար (հմմտ. օրինակ՝ թուական, պատուական, ազնուական ճաշուեմ և նման բառաձևերը)։ Բառասկզբի նախաբաղաձայնական դիրքում օտարեկվյան V-ն հունարենը արտահայտել է υ (իփսիլոն) տառի միջոցով, ինչպես այդ վկայվում է Վշտասպ, Վրկան և նման օտար անունների հունական տառադարձություններում՝ Υστασπης, Υρκανια։ Բառամիջում ու բառավերջում, ետնաձայնավորային դիրքերում, հունարենը օգտվում էր նույն υ տառից, որը ձայնավորների հետ փակ վանկում կազմում էր նաև երկբարբառներ՝ αυ, ευ, ηυ (հար և նման հայերենի աւ, եւ, իւ երկբարբառներին։)

Այսպիսով V բաղաձայնը արտահայտելու համար հունարենի երկու տառանշաններին (υ, ου) դիմաց հայերենը օգտագործում էր երեքը (վ, ւ, ու), որոնցից ւ-ը և ու-ն ճշտիվ համապատասխանում էին հունարենի υ և ου տառերի արժեքներին։ Տարբերությունը միայն վ-ի մեջ էր, որը բացակայում էր հունարենում, իսկ հայերենում էլ կիրառվում էր միայն բառասկզբում և ո-ից հետո եկող դիրքում։

Ինչո՞վ կարելի է բացատրել այս մասնակի տարբերությունը։

Հետևելով հունարենի ուղղագրությանը և V-ն ձայնավորից հետո արտահայտելով ւ-ի միջոցով, Մեսրոպ Մաշտոցը նկատեց, որ այդ նույն բանը չի կարելի անել ո-ից հետո եկող դիրքում։ Հունարենը չուներ ov հնչյունախումբ և այդ հիմքի վրա էլ ου տառակապակցությունը ընդունել էր որպես u պարզ ձայնավորի նշան։ Հետևելով հունարենին և u

37 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 296։ Հին հունարենի մասնագետ Ա. Մուրադյանի հավաստմամբ նման արտասանություն վկայվում է նաև հունարեն բառերում. օր. ουᾶτοεις «երկարականջ (նապաստակ)», որտեղ ձայնավորից առաջ ου-ն հնչվում է որպես V։

ձայնավորը արտահայտելով ո և ւ տառերի կապակցությամբ (ու), այլև հնարավոր չէր հայերենի ov հնչյունախումբը արտահայտել ո-ի և ւ-ի զուգորդությամբ։ Ամենահիմնական պատճառը, թերևս, եղել է այս, որ Մաշտոցը հայերենի տառատեսակների մեջ ստիպված է եղել ավելացնել նաև վ տառը, հատկապես ո-ից հետո եկող v բաղաձայնը նշելու համար։ «Բայց մեկ տառ ունենալ այբուբենի մեջ միայն մի դեպքում գործածելու համար,— նրբորեն նկատում է Է. Աղայանը,— շատ մեծ շռայլություն էր, և Մեսրոպը որոշեց այդ տառը գործածել նաև բառասկզբում...»[38]։

Վ-ի գրությունը բառասկզբում արդարացվում է նաև հնչյունաբանորեն։ Հայերենում բաղաձայնով սկսվող բառասկիզբը միշտ էլ ձայնավորից առաջ ընկած դիրք է, քանի որ հայերենը երկու և ավելի բաղաձայնով բառ չի սկսում։ Հունական ուղղագրությանը հետևելով՝ մի դեպքում բառասկզբի v-ն պետք էր արտահայտել ու-ի միջոցով, ասենք՝ *Ուաղարշապատ (ինչպես տեսանք հունական տառադարձության մեջ)։ Սակայն այդպիսի ուղղագրություն չէր կարելի ընդունել, քանի որ ւ-ը երկու ձայնավորների միջև կստանար բաղաձայնի արժեք։ Նման գրությունը անհնար էր դառնում հատկապես գաղտնավանկ ը-ից առաջ, որը սովորաբար գրությամբ չէր արտահայտվում։ Այս դեպքում վկայ, վկայութիւն և նման բառերը պետք է գրվեին *ուկայ, *ուկայութիւն և այլն, որոնց մեջ ու-ն կընկալվեր որպես ձայնավոր հնչյուն։ Այդ թյուրիմացությունից խուսափելու համար անհրաժեշտ կլիներ այլուր երկու բաղաձայնների միջև չգրվող ը-ն այս դեպքում արտահայտել՝ *ուըկայ, ուըկայութիւն, որը նույնպես, ինչպես առաջին դեպքում, ւ-ին կտար բաղաձայն հնչյունի արժեք (ինչպես աւագ, յաւէտ և նման բառերում)։ Բառասկզբի դիրքում հարմար չէր նաև ւ-ի կիրառությունը, քանի որ, ըստ ընդունված ուղղագրական կանոնների, ձայնավորից առաջ նրա գործածությունը բացառվում էր։ Այնպես որ բառասկզբի համար ավելի հարմար էր վ-ի ընդունումը, քանի որ այն արդեն կիրառվում էր ո-ից հետո եկող դիրքում։

Ու-ով ձայնավորական կապակցությունների երկբարբառ լինելու վարկածի հիմնավորման համար բերվում են սուին, Դուին բառերի սեռական-տրական սունոյ, Դունայ ձևերը, որոնց մեջ իբր թե երկբարբառի (ուի) հնչյունափոխությունից ունենք պարզ ձայնավոր ու։ Բառարաններում բերվում են նաև այդ նույն սուին «տեգ» բառից բաղադրված սունակ «փոքր, կարճ տեգ», սունաւոր «տեգավոր», սունակոթ «տեգի կոթ» բառերը, որոնց մեջ նույնպես շեշտից առաջ ուի-ի դիմաց ու է։ Սրանց մեջ պետք է հիշել նաև տիւ բառի տունջեան սեռական-տրականը։ Բայց գրու-

---

38 Է. Աղայան, Գրաբարի քերականություն, հ. 1, գ. Ա, 1964, էջ 360։

թյան այս ձևերը խիստ կասկածելի են։ Ձեռագրերում հանդիպում են այս բառերի նաև սւնաւոր, սւնակոթ, տուրնջեան կամ տըւրնջեան գրչությունները և այժմ դժվար է ասել, թե դրանցից որն է նախնականը։ Իրերի պարզ տրամաբանությունը և այդ բառերի մեջ մշակված ավանդական արտասանությունը ասում են, որ ճիշտը և նախնականը սընաւոր, սընակոթ, տուրնջեան կամ տըրնջեան գրչություններն են, որովհետև դրանց մեջ է, որ օրինաչափորեն արտահայտված է ու-ի v արտասանությունը ձայնավորից առաջ։ Վերոբերյալ սխալ ձևերը արդյունք են այն բանի, որ ձայնավորից առաջ հանդես եկած ու-ի v արժեքը վերագրված է ու-ին նաև այն դեպքում, երբ հաջորդող ձայնավորը ընկել է (svin—svnoy)։

Հայտնի է, որ Հյուբշմանը աւ, եւ, իւ կապակցությունները միայն բաղաձայնից առաջ ընկած դիրքում էր դիտում որպես երկբարբառներ։ Մյուս դեպքերում՝ բառավերջում և միջձայնավորային դիրքերում Հյուբշմանը ւ-ին տալիս էր բաղաձայն v-ի արժեք։ Աճառյանը չի ընդունում այդ տեսակետը, որովհետև նրա համար տարօրինակ է նույն v-ի համար վ և ւ տառերի գոյությունը և հակված է կարծելու, որ ւ-ը բոլոր դիրքերում էլ ուներ նույն ձայնավորային արժեքը։ «Մենք կկարծենք, որ աւ, եւ, իւ ամեն պարագայի մեջ ալ հնչված են au, eu, iu (ա՛ու, ե՛ու, ի՛ու), և ոչ բնավ av, ev, iv, նույնիսկ բառերու վերջը, ապա թե ոչինչ պատճառ ուներ Ս. Մեսրոպ չգրելու ճաշիվ, այլ ճաշիւ։ Եթե առարկվի, թե նա հետևվեր է հունարենին, այսինքն՝ կուրացած է հույն ուղղագրության ոճով, այս ժամանակ ինչու՞ բառասկիզբն ալ հունարենի համեմատ գրած չէ ւ, այլ վ։ Որչափ որ մեր շրջակա լեզուներու տառադարձությունները անկարող են խնդիրը պարզելու, այնուամենայնիվ ունինք վրացերեն երկու պատվական օրինակ, որոնց մեջ վերջաձայն աւ տառադարձված է աօ (խաօ<խաւ, գիրաօ<գրաւ) և հայտնի կերպով կցուցնեն, որ վերջաձայն աւ կհնչվեր աու»[39]։

Մենք վերը տեսանք, որ օտար փոխառությունները շատ որոշակիորեն ցույց են տալիս ւ-ի բաղաձայնական արժեքը։ Ինչ վերաբերում է հայերեն՝ խաւ և գրաւ բառերի խաօ և գիրաօ տառադարձությանը վրացերենում, ապա դրանք ոչնչով չեն օգնում պարզելու աւ-ի բառավերջում ունեցած երկբարբառային արտասանությունը, քանի որ վրացական ձևերում այդ բառավերջյան օ-ն ոչ այլ ինչ է, եթե ոչ վրացերենին հատուկ դոյականական ցուցիչ, որ ավելանում է բաղաձայնով վերջացող օտար բառերի վրա[40]։ Ամենայն հավանականությամբ այդ բառերը նախապես

---

39 Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 326—327։

40 Վրացերենում ավելի հաճախակի է ի-ի հավելումը բառավերջում՝ աւազակ—avazaki, ոսպն—ospi, ոստիկան—ostikani, խրամ—xrami, հրովարտակ—roartaki, պղինձ—pilinji և այլն։

եղել են xavo և giravo և միայն հետագայում է, որ v-ն որպես շրթնային ձուլվել է o-ի մեջ: Կարելի է բերել հայերենից վրացերենին անցած և այլ բառեր, որոնց մեջ նույնպես բառավերջում ավելացել է o. ինչպես՝ **ուռն** >uro: Դեռ ավելին. վրացերենում հանդիպում են նաև այնպիսի բառաձևեր, որոնք v ունեն հայերենի այն ւ-ի դիմաց, որը հանդես է գալիս որպես երկբարբառի բաղադրիչ և կարծեք թե պետք է ունենար ձայնավորային արտասանություն: Իրոք, եթե հայերեն **բաւթ**(>**բօթ**) բառի դիմաց վրացերենը դրել է bavthi, ապա այդ չի՞ նշանակում, թե ւ-ը ունեցել է v բաղաձայնի արժեք, չէ որ հակառակ դեպքում այդ բառը պիտի որ գոնե ունենար *bauthi, *baothi և նման մի տառադարձություն:

Միանգամայն անընդունելի է ւ-ին բոլոր դիրքերի համար միանշանակ ձայնավորական կամ ձայնորդային արժեք տալը: Եթե այդ այդպես լիներ, ապա այն բոլոր դեպքերում, երբ բառի մեջ կատարված հնչյունափոխությամբ ձայնավորի և ւ-ի կապակցությունը հանդես գար փակ վանկում, նա պետք է ունենար երկբարբառի արժեք և հետագայում հնչյունափոխվեր պարզ ձայնավորի (**Դաւիթ—Դաւթի**, բայց ոչ *Դօթի): Իրականում այդպես չէ: Այնտեղ, որտեղ ւ-ը ունեցել է բաղաձայն հնչյունի արժեք, միշտ էլ պահել է իր բաղաձայնական արժեքը, ներառյալ նաև հայերենի բարբառներում (**Դաւիթ>Դավիթ—Դավթի**):

Մենք չենք ժխտում հայերենի ւ-ի ձայնորդային արժեքը, բայց նա այդ արժեքը ունեցել է միայն երկբարբառների ու եռաբարբառների կազմում: Մյուս բոլոր դիրքերում ւ-ը ունեցել է բաղաձայն հնչյունի արժեք: Երկբարբառների կազմում ւ-ի ձայնորդային արժեքը հաստատվում է ամենից առաջ նրանով, որ **աւ, եւ, իւ** կապակցությունները պատմության ընթացքում ենթարկվել են միանգամայն տարբեր փոփոխությունների, նայած թե եղել են փա՞կ, թե՞ բաց վանկերում: Այսպես. հայերենի բարբառներում **աւ, եւ, իւ** կապակցությունները որպես երկբարբառներ պարզվել ու դարձել են պարզ հնչյուններ (**աւր>օր, գեւղ>գեղ, գէղ, սիւն>սին, սուն**), այն ժամանակ, երբ այդ նույն կապակցությունները բաց վանկում պահել են իրենց av, ev, iv արտասանությունը (**նաւ>նավ, նավֆ, խավֆ, նաշիւ>նաշիվ, թեւ>թէվ**):

Քննարկված դիրքերում ւ-ի և **ու**-ի v արժեքը հաստատվում է նաև մատենագրական տվյալներով: Ճիշտ է, V դարից ձեռագրեր մեզ չեն հասել, բայց հետագա դարերից վկայվող օրինակները հաստատում են, որ v բաղաձայնի տարբեր դիրքերում տարբեր տառերով արտահայտվելը պայմանավորված է եղել միմիայն ուղղագրությամբ: Այդ վկայություններից առաջինը կարելի է համարել Սիսիանի Սյունի վանքի հնագույն արձանագրություններից մեկում ւ-ի փոխարեն **վ**-ով գրության օրինակները: Ահա այդ արձանագրության պատառիկը: «Սուրբ Գրիգոր ողորմեա Արտավանայ գործիվ երայի» (Դհվ. 2,87): Այս արձանագրությունը ունի իր

լուսանկարը, որի վրա պարզորոշ երևում է վ-ն Արտավանայ և գործիվ բառերում։ Արձանագրությունը, որ ժամանակակից է վանքի կառուցմանը, հատկացվում է VI դարին, այսինքն՝ մեկ դար հայ գրության հիմնադրումից հետո։ Կարծում ենք, որ մեկ հարյուրամյակը այնքան էլ մեծ ժամանակամիջոց չէ, որ կարողանար հայերենի հնչյունական համակարգում ցակավ փոփոխություններ մտցնել։ Մենք համոզված ենք, որ նման օրինակներ ավելի հաճախական կլինեին, եթե մեզ հասած լինեին վաղ շրջանի ձեռագրեր։ Սկսած IX դարից, երբ առատանում են մեզ հասած ձեռագրերը և վիմագրերը, հաճախանում են նաև այդ երևույթի գրավոր վկայությունները։ Այսպես, օրինակ՝ ւ-ի փոխարեն վ ունենք Արուճի 869 թ. մի արձանագրության մեջ, որտեղ Քրղաւագ բառը փորագրված է որպես Քրքավաք (Ավիշ. Այր. 144, Շահխթ. 61, Վիմ. Տար. 3)։ X դարից վկայված ունենք. «...երետ Աշոտ յԱվանէ (փոխ.՝ յԱւանէ) պջաղացն» (Ալիշ. Այր. 146, Վիմ. Տար. 9, 981 թ.), «Ես Դավիթ (փոխ.՝ Դաւիթ) Վարդա որդի... զԴավթի զայգին... վասն Դավթի հոգւոյն» (Ալիշ. Շիր. Վիմ. Տար. 10, 992 թ.), «...շնորհիվ (փոխ.՝ շնորհիւ) ամենակալին աստուծոյ կատարեցավ ավետարանս (փոխ.՝ կատարեցաւ աւետարանս) (Գ. Հովս. հձ. 1021, 966 թ.) և այլն։ Էլ չենք խոսում միջին հայերենի շրջանի մասին, որտեղ շատ սովորական է ւ-ի փոխարեն վ գրությունը։ Բերենք մի նմուշ պարոն Կոստանդնի 1271 թ. դաշնագրից՝ «...մենք չէաք ի հավնել (<հաւանել)... հանց հավնեցաք... լինի հաստատուն յավիտեան (<յաւիտեան)... մեծահարկի ձիավորացն (<ձիաւորացն)։

Զայնավորից առաջ v հնչվող ու-ի փոխարեն վ ունենք առաջին իսկ գրավոր աղբյուրներում։ Այսպես, օրինակ։ Վարդենիսի շրջանի Մազրա բնակավայրի խաչքարերից մեկի վրա, որի գրությունը թվագրված է 881 թ., կարդում ենք. «ՅԼ թվականութեանս հայոց, Ես Գրիգոր Արտներսեհեան, Սիմնեաց եւ Աղվանից իշխան» (Դհվ 4, 334)։ Այստեղ, ինչպես տեսնում ենք, թուականութեանս և Աղուանից բառերի կանոնիկ ձևերի (ըստ ուղղագրական կանոնների) փոխարեն, ըստ հնչման, ունենք վ-ով ձևեր։ Հարկ է նշել նաև, որ սկսած X դարից՝ թուականութիւն (կամ թիւ) բառը արտահայտվում է շատ հաճախ հապավված Թվ ձևով, որով և ւ-ի և ու-ի արտասանությունը տրվում է նույնական արժեք։

Միջին հայերենի շրջանում այս դեպքի համար ևս կան բազմաթիվ օրինակներ։ Շատ հաճախ նույն բառը հանդես է գալիս ուղղագրական երկու, երեք տարբերակներով, որոնց մեջ նույն հնչյունի արժեքով հերթագայվում են վ, ւ, ու տառերը։ Այսպես. տուի, տւի և տվի, տուաք, տւաք և տվաք, քուերորդի, քւերորդի և քվերորդի, պատուական և պատվական, ճաշուել և ճաշվել և այլն, որոնք ապացույց են այն բանի, որ ու-ն ձայնավորից առաջ ուներ v-ի արժեք և որ այդ նույն արժեքին հարում էր նաև ւ-ը։ Մի օրինակ պատմական Վայոց Ձորի Հերհերի արձանագրություննե-

րից. «Ի Թվականիս Հայոց ՇՂԸ (1149 թ.) նվաղեցաւ Հոգի իմ ի դառն արտասվայց... եւ զառաքումն Սարգսի վերակացվի ժողովոյս» (ԴՀվ 3, 49), որի մեջ ձայնավորից առաջ ու-ն բոլոր դեպքերում արտահայտված է վ-ի միջոցով, նույնիսկ վերակացուի>վերակացվի բառում, ուր ու-ն հոլովիչ ձայնավորից առաջ է:

Միջին հայերենի շրջանում արձանագրվում են նաև այնպիսի բառեր, որոնք ունեն գրչագրական չորս տարբերակներ՝ վ-ով, ւ-ով, ու-ով, ֆ-ով. օրինակ՝ ինչվի, ինչւի, ինչուի, ինչֆի: Հասկանալի է, որ ֆ-ն կարող էր առաջանալ միայն v-ից՝ ձայնեղության կորստով, հետևաբար և նախորդ երեք ձևերի մեջ էլ առկա է նույն v հնչույթը:

Սկսած միջին հայերենի շրջանից, երբ հայերենի բանավոր-խոսակցական տարբերակներում հին երկբարբառները և եռաբարբառները պարզվում ու վերածվում են պարզ ձայնավորների, ւ-ն էլ կորցնելով իր ձայնորդային արժեքը դուրս է ընկնում գործածությունից: Ճիշտ է, այն մինչև ուղղագրական բարեփոխումները շարունակում է գրային իր դերը, բայց այդ դեպքում էլ այն ունի բաղաձայնի կամ ձայնավորի արժեք և ոչ երբեք՝ ձայնորդի (հմմտ. օրինակ՝ աւագ, աւազան, արիւն, ալիւր և այլն): Այսօր արևելահայ գրական լեզվում ւ-ը դուրս է մղված գործածությունից և մնում է միայն որպես ու տառի բաղադրիչ մաս:

Հայերենի այսօրվա բարբառներից մի քանիսում արձանագրվում է երկշրթնային արտասանություն ունեցող w հնչյուն, որը ոմանց կողմից նույնացվում է հին ւ-ի հետ: Բարբառագիտական գրականության մեջ այդ հիմքի վրա էլ այն ընդունված է տառադարձել ւ-ով: Սակայն դա հին ւ-ը չէ և ծագումնաբանորեն էլ չի կապվում նրա հետ: Այս ձայնորդը (եթե այն կարելի է ձայնորդ համարել) հանդես է գալիս որոշակի դիրքերում որպես ո ձայնավորի պատմական փոփոխությունից՝ երկբարբառացումից առաջացած շրթնային տարր (հմմտ. ոսկի>ուօսկի, աւօսկի, որ տառադարձվում է՝ ասկի):

* * *

Ինչպես կարելի էր նկատել ձայնորդների պատմական փոփոխությունների ընդհանուր շարադրանքից, որակական փոփոխությունների ենթարկվել էին ոչ բոլոր ձայնորդները: Դրանցից միայն երկուսն էին, որ կորցրել էին իրենց ձայնորդային հատկությունը և դուրս ընկել ձայնորդների կազմից: Մեկը, ինչպես տեսանք, ւ-ն էր, իսկ մյուսը՝ ղ-ն, որը վերահնչույթավորվելով՝ ձայնորդից վերածվել էր ետնալեզվային ձայնեղ շփական բաղաձայնի: Այսպիսով՝ պատմական զարգացմամբ հին հայերենի ութ ձայնորդներից մնացել էին վեցը՝ մ, ն, ր, ռ, լ, յ, որոնք որպես յուրօրինակ բաղաձայններ իրենց ձայնաբանական հատկանիշներով ոչ հարում են ձայնավորներին (թեև նրանցում ձայնը գերակշռում է աղմուկին) և ոչ էլ նույնանում են ձայնեղ բաղաձայններին:

ՀԱՅԵՐԵՆԻ ՇՓԱԿԱՆՆԵՐԸ

Վերը արդեն ասվել է, որ պատմական շրջանի սկզբում հայերենի բաղաձայնական համակարգում շփականները երկաստիճան էին, որտեղ նրանք հակադրվում էին իրար ձայնեղության ու խլության հատկանիշներով։ Ըստ որում՝ հին հայերենը չուներ շփականների լծորդական այն շարքերը, որոնք արձանագրվում են ժամանակակից գրական հայերենում ու նրա բարբառներում։ Հին հայերենի շփական բաղաձայններն էին՝ զ, ժ, խ, ճ, շ, ս, վ։ Դրանցից ձայնեղության ու խլության հակադրությամբ հանդես էին գալիս միայն ժ : շ, զ : ս զույգերը։ Մյուսները չունեին իրենց լծորդ զուգակիցները։ Միայն հետագայում՝ պատմական շրջանում, ձայնեղ շփական վ-ի կողքին առաջանում է նրա խուլ լծորդը՝ ֆ-ն, իսկ խուլ շփական խ-ի և ճ-ի կողքին՝ նրանց ձայնեղ ղ և ճ՛ լծորդները (վերջինը միայն բարբառներում)[1]։

Շփականների լծորդական շարքերի համալրումը տեղի է ունենում հայերենի հնչույթային համակարգի ներքին օրինաչափությունների հիմքի վրա, որի մեջ հիմնական դերը պատկանում է բաղաձայնական համակարգի միջուկը հանդիսացող պայթականների ու պայթաշփականների տարբերակիչ հատկանիշներից մեկին՝ ձայնեղության ու խլության հակադրությանը, որի հիման վրա էլ լրացվել են շփականների հակադրությունների ազատ վանդակները։

ժ : Շ — Դասական հայերենի շրջանից ավանդված ժ և շ ունեցող բառերի ճնշող մասը իրենց ծագմամբ օտար են։ (Խոսքը, անշուշտ, վերաբերում է ստուգաբանված բառերին)։ Այսպես. ժ հնչյունն ունեցող բառերը բացառապես իրանական են. օրինակ՝ ժամ, ժանգ, ժառանգ, ժանտ, ժիր, դաժան, բաժ, բաժակ, բաժանել, բիժ, բոյժ, բժիշկ և այլն։ Միակ բացառությունը, որտեղ ժ-ն օտար ծագում չունի, համարվում է իժ բառը, որ հանվում է հնդեվր. *ēg^{2}hi ենթադրյալ ձևից։ Դրանից էլ հայերենում սպասելի էր ոչ թե իժ, այլ *եգ կամ *եջ։ Կարելի է ենթադրել, որ նախնական *եգ ձևը անցել է քմայնացման և ապա պայթաշփականի պարզեցման ուղիով՝ *եգ>*եջ>իժ։ Համենայն դեպս այս բառում ժ-ն կարելի է համարել հետագա գոյացություն, առաջացած այն ժամանակներում, երբ իրանական փոխառությունների հիմքի վրա ժ-ն հայերենում գիտակցվել է որպես հնչույթ։ Բացառված չէ նաև իրանական ձե-

[1] Այստեղ ավելորդ ենք համարում շփականները արտահայտող մեսրոպյան տառերի հնչյունական արժեքին անդրադառնալը։ Դրանք համընկնում են իրենց ունեցած այսօրվա արժեքներին, որ հաստատվում է այս գլխում օգտագործված փաստական նյութով։

վերի ազդեցությունը (համմտ. օրինակ, նույն բառի իրանական համապատասխանությունները՝ զենդ. aži, պհլ. až, պարսկերենի Մինչաի բրբռ. yiž)[2]:

Շ-ով բառերը հիմնականում իրանական կամ ասորական ծագման են: Իրանական են, օրինակ՝ շահապետ, շապիկ, շատ, շէն, շնորհ, շտապ, աշակերտ, աշխարհ, աշկարայ, աշտեայ, բաշխել, գուշակ և այլն: Ասորական են՝ շաբաթ, շափղ, շղթայ, շուշան, շպար և այլն: Հնդեվրոպական ծագման բառերում շ-ի գործածությունը խիստ սահմանափակ է: Շ ունեն հետևյալ հնդեվրոպական ծագման արմատները՝ գարշ, գիշեր, էշ, բարշամ (բորշոմ), լպիրշ, խարշել, մաշել, մառաղաշ, շեղ(շիլ), շուն: Եթե նկատի ունենանք, որ սրանցից մառաղաշ բառաձևը վկայված է միջին հայերենի շրջանից (կազմված մատաղ բառից և աշ մասնիկից), ապա մյուսներում շ-ն կամ աճական է, կամ ծագում է հնդեվրոպական S-ից: Շ-ն աճական է համարվում, օրինակ, հետևյալ բառերում՝ լպիրշ (*(s)libr արմատից. համմ. լիրբ<լպիր+շ), խարշել (*qar արմատից. խար+շ): Մյուս բառերում շ-ն ծագում է կամ հնդեվրոպական S-ից, ինչպես՝ գարշ *ghars, բարշամ/բորշոմ<*tṛs, մաշել<*mṛs (որը հայերենում նախ տվել է* մարշ/ալ/ և ապա ր-ի անկմամբ՝ մաշել), կամ k'w-ից՝ ek'wo >էշ, *k'wōn>շուն: Այստեղ էլ հավանական է նախ K'>S և ապա հայ. շ: Գիշեր<*vespero և շեղ || շիլ<*sqel բառերում շ-ն պետք է որ զարգացած լինի S-ից, թեև գիտնականները հակված են այն հանելու զ-ից (տե՛ս Արմատական բառարան):

Ինչպես տեսնում ենք, այս բոլոր դեպքերում էլ շ-ն ուղղագծորեն չի գալիս հնդեվրոպական նախալեզվից, այլ այն զարգացել է հնդեվրոպական վիճակից հայերենին անցնելու ժամանակաշրջանում:

Այս բոլորից կարելի է հետևցնել, որ նախահայերենում սկզբնապես չեն եղել ծ և շ հնչյունները, որ դրանք մեր լեզվի մեջ մտել են նախ՝ օտար լեզուներից կատարված փոխառյալ բառերի միջոցով և հետո միայն՝ հայերենում արժեքավորվել որպես հնչույթներ: Ըստ որում՝ այդ փոխառություններն էլ կատարվել են նախապատմական շրջանում, ամենայն հավանականությամբ դեռևս այն հեռավոր ժամանակներում, երբ կազմավորվում էր հայ ժողովուրդը: Դրա լավագույն ապացույցը, թերևս, կարող է լինել այն, որ ծ և շ բաղաձայնները մեր լեզվի պատմության հենց սկզբնական փուլում արդեն գիտակցված են որպես «բնիկ» հնչյուններ, և Մեսրոպ Մաշտոցն էլ նրանց համար ստեղծել է համապատասխան տառեր: Նրանց հնության և հայերենին հարազատ լինելու վկայություն կա-

---

2 Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան:

րող է լինել նաև այն, որ այդ հնչյունները ընդհանուր են հայերենի բոլոր դրսևորումներում (այդ թվում նաև ժամանակակից բարբառներում) և իրենց կիրառություններով ոչ մի բանում չեն զիջում «բնիկ» բաղաձայններին:

Ժ և շ շփականներն իրենց կիրառությունների մեջ դիրքային որևէ սահմանափակություն չունեն. հանդես են գալիս ինչպես բառասկզբում, այնպես էլ բառամիջում ու բառավերջում, ինչպես միջձայնավորային դիրքերում, այնպես էլ բաղաձայնների հարևանությամբ: Այսպես.

ժամ	բաժանել	վարժ
ժայռ	բաժակ	բիժ
ժանգ	արժել	իժ
ժառանգ	բուժել	կուժ
ժողով	բժիշկ	գոյժ և
		այլն:

Միայն նկատված է, որ բառամիջի ու բառավերջի դիրքերում շ-ն առավելապես զուգորդվում է խուլ, իսկ ժ-ն՝ ձայնեղ բաղաձայնների հետ, ինչպես՝ դժգոյն, դժգոհ, աժդահակ, աշտանակ, աշտարակ, դաշտ, յաշտ, տաշտ, աշտեայ, աշկարայ և այլն[3]:

Ժ և շ շփականները հայերենի պատմության ընթացքում համակարգային փոփոխությունների չեն ենթարկվել (ինչպիսի փոփոխություն հատուկ է հայերենի պայթականներին ու պայթաշփականներին): Սրանց մեջ կատարված լծորդական կամ այլ բնույթի հնչյունափոխության առանձին դեպքերը (օրինակ՝ շուրջ > ժուռ, շարժ > ժաժ, շրջան > սրջան, թշուառ > չվառ և այլն), որոնք արձանագրվում են հայերենի բանավոր-խոսակցական տարբերակների առանձին դրսևորումներում, փոխազդեցական հնչյունափոխության հետևանք են և ոչ մի չափով չեն խախտում այդ բաղաձայնների կայունությունը: Այդ կայունությունը չի խախտվում նաև այն մի քանի բառերով, որոնց մեջ ավանդական ժ-ի դիմաց առկա են ջ կամ ճ պայթաշփականներ: Դրանք ամենայն հավանականությամբ հին բարբառային բառաձևեր են և որպես այդպիսիք նախապես տարբեր վայրերում հանդես են եկել շփական ու պայթաշփական բաղաձայնների հակադրությամբ: Այդ բառերից են, օրինակ՝ վարժապետ, պատիժ (և սրանցից ածանցվածները):

Սրանցից առաջինը թեև պահլավական ծագում ունի և հայերենի ժ-ն էլ դրանում համընկնում է փոխատու լեզվի հնչյունի հետ (պհլ. varž արմատից), սակայն ժամանակակից բարբառների մի մասում այդ ժ-ի դիմաց այժմ առկա է ջ կամ ճ. ինչպես՝ վառջաբեդ (Մուշ), վաջաբեդ

---

3 Այս երկու շփականների դիրքային կիրառությունների մանրամասն քննությանը կարելի է ծանոթանալ Հ. Աճառյանի Լիակատար քերականության մեջ:

(Ն. Նախիջևան), վարչըբէդ *(Համշեն)*, վարճապըիտ *(Մարաղա) և այլն։ Այսինքն՝ այս բառում փոխատու լեզվի պարզ բաղաձայնի փոխարեն հիշյալ բարբառները ունեն բարդ հնչյուն։ Թեև հայերենի համար օրինաչափ է համարվում պայթաշփականի փոխարկումը շփականի, բայց, ինչպես տեսնում ենք, բացառված չէ նաև հակառակ երևույթը՝ շփականի փոխարկումը պայթաշփականի։*

Ավանդական պատիժ *բառի* ժ*-ի դիմաց կա մի շարք բարբառներում* ջ *կամ* ճ *է։ Ըստ որում, առաջինի համեմատությամբ այս բառաձևը բարբառներում ավելի տարածված է* ջ *կամ* ճ *պայթաշփականով, քան շփականով. այսպես՝* պատիճ *(Ագլ. Ախց, Երև. Կր. Մկ. Մրղ. Ջղ. Վն)*, պադիջ *(Ալշ. Մշ)*, բադիջ *(Ջթ, Ննխ. Պլ. Ռ. Սեբ.)*, բադինջ *(Ակն) և այլն*[4]*։ Չնայած այն բանին, որ* պատիժ *բառի ծագումն անհայտ է և ըստ այդմ՝ չենք կարող ասել, թե քննված ձևերից որն է նախնականը, բայց պետք է ենթադրել, որ այս դեպքում էլ, նախորդ բառի նման, ունենք բարբառային մի այնպիսի զուգաբանություն, որի մեջ* ժ*-ով և* ջ(ճ)*-ով բառաձևերը հանդիպադրվում են որպես նույնիմաստ բառերի հնչյունական տարբերակներ։ Ուշագրավ է, որ* պատիճ *բառաձևը վկայվում է նաև գրավոր հին աղբյուրներում։ Նման բառաձև նկատված է XV դարի հիշատակարաններում. ինչպես՝ «Եւ ով որ սուտ տէր կանգնի կամ ծախելոյ կամ խոտելոյ կամ պակասութիւն ենելոյ՝* զպատիճն *ի սուրբ Աստուածածնէն առնու» (ԺԵ ՀՃՀ 2, 1564 թ., Բասեն), «...խաչահանողացն առցէ և* զպատիճն *Յուդայի» (Ն. տ. 449, 1480 թ.)։*

Գ. Ս *Թեև բնիկ հայերեն բառերում սուլականները հիմնականում սերում են հնդեվրոպական պայթականներից* (k´*-ից և* g´h*-ից), բայց այնուամենայնիվ, նրանք* (ս*-ն և* զ*-ն) հայերենում հին հնչարտաբերական ժառանգություն են հնդեվրոպական միասնության շրջանից։ Դա հաստկապես հաստատվում է* Տ*-ի օրինակով։ Վերջինս թեև հայերենում հիմնականում ընկնում է* (*sāld>աղ, աղծ, աղտ, *səm̥ē-r̥>ամառն *և այլն) կամ փոխվում* հ*-ի* (*seno>հին, *selk>հեղգ *և այլն), բայց և խուլ բաղաձայնների հարևանությամբ մնում է անփոփոխ։ Այդպես են, օրինակ՝* սխալ, սպառնալ, ստանալ, ստեղծել, ստեղն, ստերջ, ստև, ստինք, ստոյգ, ստորի *և այլն բառերը, որոնց* ս*-ն նախնական (հնդեվրոպական) է։*

Հնդեվրոպական նախալեզվում z *ձայնեղ շփականի առկայությունը թեական է։ Ենթադրվում է, որ այն* Տ*-ի դիրքային տարբերակն էր և հանդես էր գալիս հատկապես ձայնեղ հպականների հարևանությամբ, մի հատկություն, որը, ինչպես կտեսնենք, հատուկ էր նաև հին գրական հայերենի սուլականներին։*

---

[4] *Տե՛ս Հ.* Աճառյան, *Հայերեն արմատական բառարան,* Պատիժ *բառի տակ։*

Ծագումնաբանորեն հայերենի զ-ն գալիս է հնդեվրոպական g´h-ից (օր. զ նախդիր<gh´o, դէզ<dheig´h, եզն<eg´h և այլն)։ Սրանցից դուրս հայերենը զ և ս ունի նաև փոխառյալ բառերում։

Մեր լեզվի գրավոր պատմության հենց առաջին փուլում զ և ս տառերով արտահայտված հնչյունները հանդես էին գալիս որպես ինքնուրույն հնչույթներ՝ հակադրվելով միմյանց ձայնեղության ու խլության հատկանիշներով։ Այդ բանը շատ լավ երևում է հետևյալ բառազույգերում. զարդ: սարդ, զով : սով, զատ : սատ, զուր : սուր, զրահ : սրահ, նազ : նաս, յոզ : յոս և այլն, որոնց մեջ, յուրաքանչյուր զույգի ներսում, իմաստների տարբերակումը իրականացվում է զ և ս հնչույթների հակադրության միջոցով։ Իսկ որ դրանց տարբերակիչ հատկանիշը ձայնեղությունն ու խլությունն է և, որ զ, ս տառերով արտահայտված հնչյունները ներկայացնում էին Z և S սուլական բաղաձայնները, առաջինը՝ ձայնեղի, երկրորդը՝ խուլի արժեքով, դա երևում է այլ լեզուներից հայերենին անցած այն բաղմաթիվ բառերում, որոց մեջ այդ հնչյունները հանդիպադրվում են որպես այդպիսիք։ Բերենք մի քանի օրինակներ իրանական փոխառություններից. զէն(ք)<zēn, զնդան<zindān, զուր<zūr, զրահ<zrāh. զոհ<zōhr, վարազ<varāz, ռազմ<razm, մարզպան<marzəpan, նազ<nāz, նիզակ<nēzak, ··· սահման<sāmān, *sahmān, սեաւ<siyāh, *siyāv, սպիտակ<spētak, սպարապետ<spāhpat, Ոստան<ōstān, պատուաստ <patvastan, պատուհաս<pātufrās, վարս<vars, վնաս<vinās, հանդէս<handēs և այլն։ Անշուշտ, այս բառերը հայերենին են անցել նախապատմական շրջանի տարբեր փուլերում, բայց դրանց մեջ միշտ էլ հայերենի զ և ս տառերով արտահայտված են փոխատու լեզուների Z և S հնչյունները։ Դեռ ավելին. զ և ս տառերը իրենց այդ արժեքը գրավոր աղբյուրներում պահպանում են նաև հայերենի պատմական շրջանի բոլոր գրավոր հուշարձաններում, որ նշանակում է, թե նրանցում համակարգային փոփոխություններ չէին կատարվել։ Արաբերենից, նոր պարսկերենից, թուրքերենից և այլ լեզուներից կատարված փոխառություններում ևս այդ լեզուների Z-ն հայերենում արտահայտվում է զ, S-ն՝ ս տառերով[5]։

Զ և ս բաղաձայնների՝ բառում ունեցած դիրքային բաշխման օրինաչափությունները հիմնականում ընդհանուր են։ Եվ զ-ն, և ս-ն կարող են հանդես գալ բառի մեջ բոլոր դիրքերում (բառասկզբում, բառամիջում, բառավերջում), այսպես.

5 Ավելի մանրամասն տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության մեջ. հ. 1, էջ 126—127։

զագիր	ազատ	երազ
զամբիկ	ազբն	ճեզ
զամբիւղ	բազուկ	մազ
զայրանամ	գաւազան	յովազ
զանազան	եզր	վարազ
զանգ	նիզակ	տարազ և
		այլն,
սագ	ամուսին	ամիս
սար	ասեմ	կարաս
սիրտ	ասեղն	կոյս
սեր	աստղ	միս
սպանանեմ	բուսանիմ	ուս
սուգ	ուսումն	պակաս և
		այլն:

Բաշխման որոշակի սահմանափակություն գոյություն ունի միայն բաղաձայնից առաջ ընկած դիրքում: Այս դեպքում ս-ն անպայմանորեն հանդես է գալիս խուլ բաղաձայններից առաջ, իսկ զ-ն՝ ձայնեղ բաղաձայններից, այդ թվում նաև ձայնորդ հնչյուններից առաջ: Այսպես.

ազբն	զբոսնիմ	զլանամ
ազգ	զգալի	զղջամ
ազդ	զգայական	զմայլիմ
ազդր	զգաստ	զմուռ
ազն	զգեստ	զնդան
եզն	զգոյշ	զննեմ
եզր	զգօն	զրկեմ
զբաղիմ	զգուիմ	զրոյց և
		այլն,
ասպ	ճաստ	ասպիտակ
աստ	ոստան	ստեղծանեմ
աստիճան	սաստիկ	ստեպ
աստղ	սխալ	ստինք
դուստր	սկեսուր	ստոյգ
զիստ	սկիզբն	ստոր
զուսպ	սկունդ	տատասկ
լաստ	սպառնամ	փախուստ
		և այլն:

Անշուշտ, կան նաև բացառություններ, բայց դրանք չեն հակասում նշված օրինաչափությանը և, որ չափազանց կարևոր է, բացատրելի են: Դրանք մի դեպքում պարզապես հին ուղղագրական կանոններից կատարված շեղումներ են՝ պայմանավորված հետագա դարերում բաղաձայնների մեջ տեղի ունեցած փոփոխություններով, ինչպես օրինակ, ունենք որոշ ձեռագրերում վկայվող սգայական, սգայութիւն, սգաստ *և այլ գրչությունները, որոնց նախնական և ճիշտ ձևերն են՝* զգայական, զգայութիւն,

զգաստ: Մյուս կողմից՝ խուլի ու ձայնեղի կամ ձայնեղի ու խուլի հանդիպումներ առաջանում են ձայնավորների հնչյունափոխության հետեվանքով: Այս դեպքում զ-ն և ս-ն, բնականաբար, պահում են իրենց նախնական արժեքը: Այստեղ ունենք այսպիսի դեպքեր: Ս-ն հանդես է գալիս ձայնեղից առաջ (օրինակ՝ սգակից, սգաւոր, սգաւորիմ և այլ բառերում), քանի որ այդ բաղաձայնները պահպանում են իրենց նախնական՝ ստուգաբանական արժեքը: Մի այլ դեպքում զ-ն է հանդես գալիս խուլից առաջ, ինչպես՝ զստիկ, զսպիմ, զտեմ և այլն: Այս դեպքում էլ խուլերն են պահում իրենց նախնական արժեքը, քանի որ բերված բառերը հնչյունափոխված են զիստ, զուսպ, զուտ արմատական ձևերից, և զ-ի հանդիպումը խուլ բաղաձայնի հետ կատարվում է ու, ի ձայնավորների հնչյունափոխության հետևանքով:

Մի այլ դեպքում էլ խուլերից առաջ զ-ն պարզապես սաստկական ածանց է և որպես այդպիսին պահպանում է իր ձայնեղությունը, ինչպես՝ զքափ առնեմ, զկծագոյն, զհետ, զմտածիմ, զչարանամ, զփախչիմ և այլն:

Առանձին են մնում զկեռ, զկճի, զկրկտանք բառերը: Սրանցից վերջինը մատենագրության մեջ հանդիպում է մեկ անգամ՝ այն էլ անստույգ նշանակությամբ: Առաջինը ավանդված է հին շրջանից և ձեռագրերում վկայվում է տարբեր գրչություններով (ըզկեռ, զկեռ, սգեռ, սկեռ, զղեռ, զղեար), որոնք ենթադրում են տարբեր բարբառային հիմքեր: Սրանց համապատասխանությունները արձանագրվում են նաև ժամանակակից հայ բարբառներում, այսպես՝ զըկչռ, սըկչռ (Ղարաբաղ, Գորիս), զղեռ (Համշեն), ցըքըէռը՝ զ-ի դիմաց ց (Մեղրի, Կարճևան): Ցավոք այս բառը ստուգաբանված չէ, ուստի և հնարավոր չէ պարզել, թե սրանցից որն է նախնականը: Մի բան պարզ է, որ բոլոր տարբերակների հիմքում ընկած են զգեռ, սկեռ, զղեռ բարբառային հին ձևերը, որոնց մեջ խուլ և ձայնեղ բաղաձայնների զուգորդումները միանգամայն օրինաչափ են:

Ինչ վերաբերում է զկճի «հետևը, հետևից» բառին, ապա, քանի որ այն կազմված է կինճ «ոտքի ներբան, հետք» արմատից և զ նախդիրից, այստեղ էլ գործ ունենք ստուգաբանական զ-ի ուղղագրության պահպանման հետ. հետևաբար այս բառում էլ զկ կապակցությունը ընդհանուր օրինաչափությունից շեղում չպետք է համարել:

Պատմական շրջանում զ և ս բաղաձայնները համակարգային փոփոխություններ հանդես չեն բերում: Մասնակի այն դեպքերը, որոնք արձանագրվում են առանձին բառերում, հիմնականում կապվում են վերը նշված օրինաչափության հետ: Այսպես. երբ այս կամ այն պատճառով ձայնեղ պայթականները խլանում են, ապա նրանցից առաջ գտնվող զ-ն ևս ձայնեղության կորստով դառնում է ս: Սակայն այս երևույթը համահայկական չէ և դրսևորվում է եզրային որոշ բարբառներում: Այն առկա է, օրինակ, Անտիոքի շրջանի խոսվածքներում՝ ազբն>ուսպ, ազբել>աս-

պիլ (Սվեդիա), Վասպուրականի ու Արցախի տարածքի մի շարք խոսվածքներում, ինչպես՝ ազգ>ասկ, ազգական>ասկական, ազգասէր>ասկասէր (Վան, Շատախ), ազբափայտ>ըսպափէտ, ազբն>ասպ, ազգ>ասկ, ազգական>ասկական (Գորիս, Ղարաբաղի խոսվածքներ)։ Այս տարածքում գտնվող Մեղրու և Կարճևանի բարբառներում խլացման երևույթը առկա է միայն բառասկզբում, ինչպես՝ զգենուլ>սիգ՛էնիլ, զգեստ>ըսկէստ, զգօն>սըկօն. բառամիջում բաղաձայնների ձայնեղությունը պահպանվում է՝ ազբարել>ըզբարիլ, ազբափայտ>ըզբափէտ, ազբն>ազբ, ազգ>ազգ, ազգական>ազգական։

Ինչպես կարելի է նկատել՝ զ-ի խլացումը առկա է այն բարբառներում, որոնց մեջ տեղի է ունեցել նաև ձայնեղ պայթականների ու պայթաշփականների խլացում, և այս հիմքի վրա էլ այդ բաղաձայններից առաջ գտնվող զ-ն դարձել է խուլ ս։ Մեղրու և Կարճևանի բարբառներում թեև ձայնեղ պայթականների համակարգում նման փոփոխություն չի կատարվել, բայց վերը նշված բառերում առկա են նույն անցումները։ Պետք է կարծել, որ դրանք այն տարածքի բարբառների ազդեցության հետևանք են, որոնց շրջապատում նրանք գտնվում են (Վասպուրական—Արցախ)։ Զգենուլ>սիգ՛էնիլ բառում սպասվելիք կ-ի փոխարեն գ-ն պետք է որ առաջացած լինի երկրորդաբար՝ զգ>սկ հնչյունափոխությունից հետո, միջձայնավորային դիրքում կրկին ձայնեղանալով (զգենուլ>սկէնիլ>սիկէնիլ>սիգ՛էնիլ)։

Բառասկզբի նախաբաղաձայնական դիրքում զ-ի խլացման հնագույն օրինակներ հանդիպում են հենց առաջին իսկ գրավոր աղբյուրներում։ Այսպես, օրինակ, հայերեն ձեռագրերի հիշատակարաններում ունենք. «...արտաքին սգայութեանս ...սգայութիւն ի սգալեաց, եւ սգայութեամբ էիցն տրամակայիլ (Գ. Հովս. հձ. 226, 1046 թ.), «...սպեցեալ ձայն» (ն. տ. 229, 1046 թ.), կասպուրիչ (ն. տ. 363, 1154 թ.), սպուշացուցանէ (ն. տ. 42,1170 թ.), «...վշտատես ասգս հայոց» (ն. տ. 813, 1221 թ.), եմքսբաղեալք (ն. տ., 866, 1230 թ.), ի պատճառս սգաստութեան (ԺԴ հձհ 18, 1303 թ.), ճգնասգեստ կրաւնաւորի (ն. տ. 52, 1307 թ.), զհինգ սգարանս<զգայարանս (ն. տ. 140, 1318 թ.), մեծագին սգեստիք զարդարեցին զնայ... եւ ետուն զամենայն պէտս սգեստից (ն. տ. 141, 1318 թ.), սգաստութիւն սգարանաց (Ձեռ 8030, 34ա, 1341 թ.), զխորտակեալս կասպուրեսցեն (ն. տ. 36ա, տե՛ս նաև այս ձեռագրի 42ա, 47ա, 53բ և հաջորդ էջերը) և այլն։ Ինչպես կարելի է նկատել, այստեղ բերված օրինակներում զբ, զգ, զդ... կապակցություններում խուլով արտահայտված է միայն զ-ն (ս գրով)։ Այս իհարկե, չի նշանակում, թե զ-ն խլացել էր ձայնեղների հարևանությամբ։ Գրությամբ միայն զ-ի խլացումը նշելը պայմանավորված է նրանով, որ տվյալ համակարգում ձայնեղ և խուլ

պայթականների տեղաշարժի հետևանքով բ, գ, դ տառերը այստեղ արդեն արտահայտում էին համապատասխան խուլ հնչյունները (p, k, t), ուստի և անհրաժեշտություն չկար նրանց խլացումը գրով արտահայտելու։ Այլ էր զ-ի վիճակը։ Ձ-ն և ս-ն համակարգային փոփոխությունների չէին ենթարկվել, ուստի և նրանց դիրքային փոփոխությունները անհրաժեշտ էր արտահայտել համապատասխան հնչյունի տառերով։ Այդ հիմունքով էլ զ-ի խլացումը արտահայտվում էր ս-ով։ Այնպես որ վերը բերված օրինակները արտահայտում են քննած օրինաչափությունը, երբ խուլ բաղաձայնի առնմանությամբ իր ձայնեղությունը կորցնում է նաև զ-ն։

Այլ դիրքերում զ-ի հնչյունափոխության փաստեր արձանագրվում են շատ հազվադեպ։ Եզակի օրինակներ են՝ Աստուազդ անձնանվան Աստուաս գրչությունը (դ-ի անկմամբ), որ հանդիպում է 1204 թ. Մուշում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում (տե՛ս Գ. Հովս. հձ 718), կամ վիմական արձանագրություններում Ազնաւոր անձնանվան Ասնաւոր գրչությունը[6]։ Կարող են լինել նաև նման այլ օրինակներ, սակայն դրանք խիստ հազվադեպ են և որևէ օրինաչափություն չեն ներկայացնում։

Զ-ի դիմաց ծ է արձանագրվում մարզպան∼մարծպան բառում, որտեղ ծ-ն, հավանաբար, ուներ ձայնեղ ձ-ի արժեք։ Օրինակը վկայված է վիմական արձանագրություններում։ Տե՛ս, օրինակ, Սանահինի 1191 թ. արձանագրության մեջ[7]։ Քանի որ մարզպան բառը իրանական փոխառություն է և զ-ն նրանում նախնական է, ուստի և այստեղ մենք գործ ունենք զ>ծ(ձ) հնչյունափոխության (պարզ հնչյունի բարդացման) հետ։

Հակառակ զ-ի, ս-ն փոփոխությունների չի ենթարկվում։ Նա համեմատաբար կայուն հնչյուն է։ Ըստ որում այդ կայունությունն այն աստիճան հաստատուն է, որ նա (ս-ն) իր խլությամբ կասեցնում է հաջորդ պայթականի ձայնեղացումը։ Ս-ի դիրքային այս վարքը շատ լավ երևում է հատկապես այն բառերում, որոնց մեջ հին խուլ պայթականներն ու պայթաշփականները փոխվում են համապատասխան ձայնեղ հնչյունների և միայն ս-ից հետո ընկած դիրքում է, որ այդ փոփոխությունը տեղի չի ունենում։ Այսպես, ընդհանուր օրինաչափությամբ՝ կացին>գացին, կարօտ>գարօդ, պատ>բադ, պարապ>բարաբ և այլն, բայց ս-ի մոտ՝ աստառ>աստառ, աստուած>աստված, ճասկանալ>ճասկընալ, սպանանել>ըսպանել և այլն, այսինքն՝ իրար հակադրվում են ս-ից հետո ընկած և մյուս կարգի ազատ դիրքերը։ Նույնիսկ այն դեպքում, երբ ս-ին հաջորդող խուլ պայթականները, այնուամենայնիվ, ձայնեղանում են, այս դեպքում էլ սրանց ձայնեղությունն անպար է ինչ-որ չափով ազդելու ս-ի վրա և սա մնում է անփոփոխ։ Այսպես է, օրինակ, Սվեդիայի բարբառում, որտեղ խուլ պայթականների ու պայթաշփականների ձայնե-

[6] Տե՛ս Ս. Ավագյան, նշված աշխ. էջ 290։

[7] Տե՛ս Կ. Ղափադարյան, Սանահինի վանքը... էջ 106։

ղացումը բոլոր դիրքերում համատարած բնույթ է կրում, ներառյալ նաև ս-ից հետո ընկած դիրքը՝ **աստառ>ասդուռ, աստղ>ասդղ, աստուած> ասդուձ, խոստովանել>խուսդըվանիլ, հասկ>հուէսգ, հասկանալ> հասգընիլ, հաստ>հէուստ, նստել>նըսդիլ, սկեսուր>ըսգիսէր, սկիհ> ըսգէհ, սպանանել>ըսբանիլ, սպիտակ>իսբիդըգ, ստել>սըդիլ** և այլն[8], որտեղ ս-ն այն աստիճան պահպանողական է, որ անփոփոխ է մնում նույնիսկ խուլերի համատարած ձայնեղացման պայմաններում:

Ս-ի ձայնեղացման առանձին դեպքերը՝ բառում առկա խուլերի տարնմանության հետևանք են: Այս կարգի օրինակներ հին ձեռագրերում հանդիպում են շատ հազվադեպ: Դրանցից են, օրինակ, **Սուքիաս>Զուքիաս** (Գ. Հովս. հձ 759, 1212 թ.) և **Արտաշես>Արտաշէզ** (Ն. տ. 22, 1254 թ.) անձնանունները, որոնց մեջ **ս>զ** փոփոխությունը կարելի է դիտել որպես խուլ հնչյունների տարնմանության արդյունք: Թե ինչքանով են այս օրինակները տիպական նման մի օրինաչափության համար, դժվար է ասել: Դրանք կարող են լինել նաև անհատական արտասանության արտահայտություններ:

Ագուլիսի բարբառում արձանագրվում է մի այսպիսի հետաքրքիր հնչյունափոխական երևույթ: Այստեղ մի քանի բառերում **ս** սուլականի դիմաց առկա է խուլ շփական **հ**: Այդպիսի փոփոխություն ունենք, օրինակ, հայերենի համար շատ սովորական **ասել** և **տեսանել** բայերում, որոնք Ագուլիսում համապատասխանաբար լինում են **ահիլ** կամ **նահիլ** (**ն**-ն հավելական է) և **տիհիլ**, ինչպես նաև սրանց վաղակատար ու հարակատար դերբայներում՝ **ահալ, ահած** (**>ասել, ասած**), **տա̈հա̈լ, տա̈հած** (<տեսել, տեսած)[9]: Հետաքրքիր է նաև այն, որ այս նույն բարբառում **ա** խոնարհման բայերի վաղակատար և հարակատար դերբայների **ց**-ի դիմաց ևս գտնում ենք **հ**, որը ամենայն հավանականությամբ վերը նշված օրինաչափության (**ս>հ** անցման) մի այլ դրսևորումն է **ց>ս** հնչյունափոխությունից հետո: Այդ կարգի բառերում ունենք, օրինակ, **մընահալ** (<մնացեալ) **մընահած** (<մնացած)՝ **մընօլ** (<մնալ) բայից, **մըռահալ** (<մոռացեալ), **մըռահած** (<մոռացած)՝ **մըռանիլ** (<մոռանալ) բայից, **նա̈հա̈լ** (<գնացեալ), **նա̈հա̈ծ** (<գնացած)՝ **նօլ** (<**գնալ**) բայից և այլն: Հնչյունափոխական այս երևույթը արձանագրվում է նաև Մեղրու և Կարճևանի բարբառներում, միայն այն տարբերությամբ, որ եթե Կարճևանի բարբառում այդ փոփոխությունը հետևողականորեն արտահայտված է և՛ վաղակատար, և՛ հարակատար դերբայներում, ապա Մեղրու բարբառում այն առկա է միայն հարակատար դերբայում (վաղակատարը պահ-

---

8 Օրինակները քաղված են Տ. Անդրեասյանի Սվեդիայի բարբառը գրքի բառացանկից:

9 Տե՛սնել բայի համապատասխան **տէհալ, տէհէլ, տէհած** ձևերը կան նաև այլ բարբառներում:

պանում է ց-ն՝ մրաճած, բայց մրաջալ)։ Եթե նկատի ունենանք այս բարբառների տերիտորիալ բաշխվածությունը (Ագուլիս—Կարճևան—Մեղրի), ապա կարելի է ենթադրել, որ նորաբանության կենտրոնը եղել է Ագուլիսի տարածքը, որտեղից և այն Կարճևանի վրայով անցել է դեպի Մեղրի։ Այս ս>ճ հնչյունափոխությունը հիշեցնում է հնդեվրոպական Տ-ի նույնպիսի փոփոխությունը հայերենում (*seno<ճին, *sub<ճում)։

խ : (Դ) Ինչպես արդեն նշվել է, հին հայերենը խռնալեզվայինների շարքում ուներ միայն մեկ շփական բաղաձայն, այն էլ խուլի արտասանությամբ (խ)։ Թեև հնդեվրոպական ծագման բառերում այս խ-ն համապատասխանում է նախալեզվի kh-ին (հմմտ. օր. խայր<*khait, խայծ, խայտ<*khaid, խանդ, խաճձ<*khn̥d խաչ<*khet և այլն), սակայն հայերենի գրավոր պատմության հենց սկզբում խ-ն մեզ ներկայանում է որպես խռնալեզվային խուլ շփական x, որի արժեքը հաստատվում է դասական հայերենի շրջանից ավանդված օտար փոխառությունների միջոցով։ Այսպես, օրինակ. իրանական ու ասորական ծագման բառերում փոխատու լեզուների x-ի դիմաց հայերենը դնում է ոչ այլ ինչ, քան խ. այսպես՝ խան «ափսե, սինի» <պհլ.xuān, խանութ «կրպակ» >ասոր. xānūθā, խարակ «ապառաժ» «պհլ. xārāk, խարամանի «դե, սատանա» <ասոր. xarmāna «օձ», խաւար «մութ<պհլ. x[u]āpar, պրսկ. xāvar և այլն։

Մյուս կողմից՝ հայերենի խ-ն որպես ինքնուրույն հնչույթ հակադրվում է (արտաբերման տեղով) իրեն մերձավոր հնչույթներին՝ կ-ին և f-ին. այսպես՝ խայծ : կայծ, ծախել : ծակել, խաղ : fաղ : կաղ, խոյր: կոյր : fոյր և այլն։

Այս բոլոր փաստերը միասին խոսում են այն մասին, որ խ-ի խռնալեզվային խուլ շփական x հնչույթի արժեք ունենալը կասկածի տակ չի կարող լինել։

Խ-ն իր կիրառությամբ գիրքային խիստ սահմանափակում չուներ։ Այն հանդես էր գալիս բառի մեջ գրաված բոլոր դիրքերում. այսպես՝

խայծ	ախտռ	բարախ
խանձ	երեխայ	ծուխ
խաչ	ծախել	կանուխ
խիղճ	կախել	ձախ
խունկ	փոխել	վախ և այլն։

Նկատելի է միայն, որ բառամիջում՝ բաղաձայնների մոտ, առավելապես լինում էր խուլի հարևանությամբ, ինչպես՝ բախտ, իշխան, ճշխարf, աշխարհ, տախտակ, փախչիլ և այլն։

Հնագույն շրջանում խ-ն ամենայն հավանականությամբ լծորդվում էր ճ-ի հետ։ Դրա ապացույցը կարող է լինել ոչ միայն այն, որ ժամանա-

կակից մի շարք բարբառներում հին հայերենի ճ-ի դիմաց այսօր ունենք խ (ճայր>խէր, ճաց>խաց, ճաւ>խավf, ճարսանիf>խառնիս և այլն), այլև դրա հակառակ երևույթը, երբ այլ բարբառներում էլ ճ-ն է հանդես գալիս հին խ-ի փոխարեն։ Այստեղ մենք նկատի ունենք ոչ միայն հին խ-ի փոխարեն ճ ունեցող այնպիսի բառեր, որոնց մեջ ճ-ն կարող է մեկնաբանվել որպես տարնմանության արդյունք (ինչպես՝ խաղ>ճաղ, խաղող>ճաղող, ճավող, խեղճ>ճեղճ, և այլն), այլ երբ ճ-ն ստուգաբանական խ-ի դիմաց է և չի կարող տարնմանության հետևանք լինել. այդ բառերում ճ-ի գոյությունը այլ կերպ չի կարող բացատրվել, քան որպես ճ : խ հին լծորդական հակադրության յուրօրինակ արտահայտություն։ Տարնմանությամբ բացատրվող օրինակներում էլ խ-ի դիմաց ճ-ի առկայությունը պետք է մեկնաբանել ճ : խ հակադրության ազդեցությամբ, քանի որ, հակառակ դեպքում, խ-ն տարնմանությամբ պարտադիր չէ, որ փոխվեր ճ-ի, այն կարող էր փոխարկվել այլ բաղաձայնների, թեկուզև նույն շարքի կ-ի կամ f-ի, որոնք արտաբերության տեղով մոտ են խ-ին։

խ>ճ անցումը առավել ընդգծվածությամբ դրսևորվում է Ագուլիսի բարբառում։ Աճառյանը Ագուլիսի բարբառին նվիրված իր մենագրական ուսումնասիրության մեջ արձանագրում է խ-ի հետևյալ դիրքային փոփոխությունները.

«Բառասկզբին՝ խառնել>հառնիլ, խոր>հուր, խուրձն>հÖռղնը, խռով>հռօվ, խռովիլ>հռավիլ, խրատ>հրօտ, խրատել>հրատիլ։

Բառամիջում՝ ախոռ>ահուռ, ծախել>ծահիլ, ճախարակ>ճհարակ, նախիր>նահիր, փախել>փահիլ, փոփոխել>փըհփըհատիլ։

Բառավերջում՝ կախ>կօհ, (որից կախել>կօճ տօլ՝ իբրև «կախ տալ», իսկ կաճիլ<կոխել), ծուխ>ծօհ, գոխ>գüհ «վառյակ», ձախ>ձÖհ, մարախ>մարահ, քացախ>քացահ (որից քացախիլ>քըցահիլ), փոխ>փուհ, փարախ>փարահ, տրեխ>տրէհ, սոխ>սուհ, գլուխ>գ՚ըլüհ (որից գլխաւոր>գ՚իլհüվüր, գլխացաւ>գ՚իլհüցÖվ), թաթախ>թաթահ(որից թաթախել>թըթահիլ, թաթախումն>թըթահում)»[10]։

·Աճառյանը բերում է նաև մի շարք այլ օրինակներ, որոնց մեջ այդ ճ-ն ընկած է (կամ ընկնում է) բառաթեքման ժամանակ, ինչպես՝ արիւնթաթախ>ըրընթըթüրü, գլխիվայր>գ՚ըլըվեր, գլուխ>գ՚ըլüճ, բայց հոգն. գ՚üլüճեր, անանուխ>ճանուճ, բայց սեռ. ճանըլի և այլն[11]։

---

10 Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն Ագուլիսի բարբառի, Երևան, 1935, էջ 103—104։

11 Նույն տեղում։ Աճառյանը այստեղ թեև աշխատում է խ-ի կրած փոփոխությունների համար որոշակի օրինաչափություններ սահմանել, սակայն, մեր կարծիքով, դա նրան չի հաջողվում։ Այն կանոնները, որ նա ձևակերպում է առանձին դիրքերի համար, բոլորն էլ ունեն ոչնչով չարդարացվող բացառություններ, մի հանգամանք, որ իջեցնում է սահմանվող օրինաչափության կանոնական արժեքը։

Ագուլիսի բարբառում արձանագրվող այս կարգի բառերի մի մասը հին իրանական ու կովկասյան փոխառություններ են, որոնք ինչպես հին հայերենում, այնպես և փոխատու լեզուներում ունեն x. ինչպես՝ խրատ< պհլ. xrat, ծուխ<կովկ. cux, վրաց. cuxva, ախոռ<պրսկ. āxūr, պհլ. axvar, ճախարակ<պհլ. čarxak, čarx արմատից, մարախ<պհլ. maδax և այլն։ Այս նշանակում է, որ Ագուլիսի բարբառում ընդհանուր հայերենի խ-ի դիմաց ճ-ն նախնական չէ, այլ հնչյունափոխություն է՝ կատարված պատմական շրջանում։

Մատենագրության մեջ, թեև հազվադեպ, բայց վկայություններ կան հնչյունափոխական այս երևույթի վերաբերյալ։ Նրա առաջին գրավոր արձագանքները հասնում են մինչև վաղ միջնադար։ Նման մի վկայություն է, օրինակ, Մլքե թագուհու ավետարանի նվիրատվական հիշատակագրության մեջ հանդիպող ծախք բառի ծախաւք թերված ձևի փոխարեն ծաճաւք գրությունը, որտեղ առաջին անգամ վկայվում է խ>ճ հնչյունափոխությունը։ Հիշատակագրությունը արված է 912 թվականին, այսինքն՝ X դարի սկզբներին, որ նշանակում է, թե տվյալ երևույթը բացառված չի կարելի համարել նաև IX դարում։ Ահա հիշատակարանի այդ հատվածը. «Ես, Մլքէ՝ աղախին Քրիստոսի եւ Հայոց թագուհի, ՅԿԱ թվականիս եաու զաւետարանս ի Վարագի սուրբ Աստուածածինս, վոր իմ ձեռամբս եւ ծաճաւք եմ շինեալ» (Գ. Հովս. հձ 109)։ խ>ճ հնչյունափոխությամբ նման օրինակներ հանդիպում են XII դարի մի այլ հիշատակարանում։ Այդ բառերն են՝ անճոճչ (<անխոճչ), ճեղամուտ (<խեղամուտ) (Ն. տ. 612—613, 1198 թ.)։ Հետաքրքիր է նշել, որ այս նույն հիշատակարանում կան նաև ճ>խ հնչյունափոխության օրինակներ (խլու<ճլու, ժախաճոտ<ժաճաճոտ), որոնք լավագույն ապացույց են այն բանի, որ խ>ճ և ճ>խ հնչյունական անցումները արդյունք են ճ : խ լծորդական շարքի միավորների հակադրության։

Պատմական շրջանի հետագա փուլերում (սկսած X—XI դարերից), երբ հին ձայնորդ ղ-ի արտասանության մեջ արդեն կայունացել էր ետնալեզվային ձայնեղ շփական γ բաղաձայնի արժեքը, խ-ն սկսում է լծորդվել ղ-ի հետ՝ որպես վերջինիս խուլ լծակիցը։ Այս դեպքում արդեն խ-ի դիրքային փոփոխությունները տեղի են ունենում իր նոր լծորդական ոլորտում։ Հենց այս հիմքի վրա է, որ միջնադարյան մատենագրության մեջ սկսում են հանդիպել ավանդական խ-ի փոխարեն ղ-ով գրված բառեր։ Ահա մի քանի վկայություններ. «...շատ էր սղալն (փոխ. սխալն (Գ. Հովս. հձ. 857, 1227 թ.), «...վասն խոշորութեան եւ սղալանաց... աղաչեմ անմեղադիր լինել» (ԺԴ հձհ 56, 1308 թ.) «...սղալանաց անմեղադիր լերուք» (Ն. տ. 88, 1312 թ.), «...անսղալ գոլով» (Ն. տ. 131, 1317 թ.), սղալանք (Սմբ. Դատ. 27), փաղչել (փխ.փախչել) (Գ. Հովս. հձ 42, 1170 թ.) և այլն։

Գրության նման ձևերը ներկայացնում են ոչ միայն խ>ղ հնչյունափոխությունը (պայմանավորված խուլերի տարնմանությամբ), մի բան, որ թեև հազվադեպ, բայց արձանագրվում է նաև այսօրվա բարբառներում (Երևան, Թիֆլիս, Ջուղա և այլուր), այլև ապացարարում է խ : ղ լծորդության առկայության և ղ-ի գրքային նոր փոփոխության հնարավորության մասին։

Վերն արդեն ասվել է, որ հայերենի բաղաձայնների գրքային կիրառության առանձնահատկություններից մեկն այն էր, որ խուլ բաղաձայնի մոտ սովորաբար հանդես էր գալիս խուլ, ձայնեղի մոտ՝ ձայնեղ բաղաձայն։ Այդ օրինաչափությանը չէին ենթարկվում ձայնորդ հնչյունները, որոնք կարող էին գործածվել ինչպես խուլերի, այնպես և ձայնեղների հարևանությամբ։ Այսպես, օրինակ՝ խուլերից առաջ. աղտ, ուղտ, աստղ, յաղթել, թուղթ, աղքատ, քաղցր, բողկ, խունկ, ծունկն, ամպ, այտնոյ... ձայնեղներից առաջ՝ աղբ, աղբիւր, եղբայր, աղջիկ, դաղձն, խեղդել, տանձ, գանձ, ամբար, այգ և այլն։ Ձայնորդները իրենց այդ հատկությունը պահել են հայերենի ամբողջ պատմության ընթացքում՝ ընդհուպ մինչև մեր օրերը։

Հին հայերենի ձայնորդ ղ-ն, երբ վերահնչույթավորվում և վերածվում է շփական բաղաձայնի, բնականաբար, կորցնում է ձայնորդներին հատուկ հատկանիշները, այդ թվում նաև նրանց գրքային կիրառության ազատությունը։ Ղ-ն սկսում է ենթարկվել բաղաձայների (հատկապես՝ շփականների, պայթականների ու պայթաշփականների) բաշխական ընդհանուր օրինաչափությանը, մասնավորապես՝ հնչյունների զուգորդելիության օրինաչափությանը։ Այս հիմքի վրա, բոլոր այն դեպքերում, երբ ետնալեզվային ձայնեղ շփական ղ-ն գտնվում է խուլ բաղաձայնից առաջ, ըստ բաղաձայնների զուգորդելիության ընդհանուր կանոնի, փոխարկվում է խուլ շփական խ-ի։ Այս ճանապարհով է, որ հայերենի բարբառների մեծ մասում, այդ թվում նաև գրական լեզվում, խուլ բաղաձայնից առաջ գտնվող ղ-ն արտասանվում է որպես խ, ինչպես՝ քախց (<քաղց), քախցր (<քաղցր), ախքատ կամ ախկատ (<աղքատ), թուխթ կամ թուխտ (<թուղթ), բոխկ (<բողկ), ճախթել կամ ճախտել (<յաղթել) և այլն։ Բացառություն են կազմում միայն այն բարբառները, որոնց մեջ խուլ պայթականները դարձել են ձայնեղ և նրանց հարևանության մեջ գտնվող ղ-ն էլ պահպանել է իր ձայնեղությունը, որ միանգամայն օրինաչափ է ըստ բաղաձայնների զուգորդելիության օրենքի։ Այսպես է արևմտահայ այն բոլոր բարբառներում, որոնց մեջ խուլ պայթականներն ու պայթաշփականները տեղաշարժվել են դեպի ձայնեղների շարքը. աղտ>աղդ, աղտոտ>աղդօտ, բողկ>պօղգ, խղճմտանք>խըղջմտանք և այլն։

Սակայն ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ դեպքում լինում են նաև բացառություններ, որոնք պայմանավորված են հնչյունաբանական այլ հանգամանքներով։ Օրինակ, գրական լեզվում (նաև որոշ բարբառներում) ուղտ բառում ղ-ն չի փոխվել խ-ի, թեև գտնվում է տ խուլից առաջ։ Սպասվելիք փոփոխությունը չի կատարվել թերևս այն պատճառով, որ ղ>խ փոփոխությամբ այդ բառը կշփոթվեր ուխտ բառի հետ։ Այստեղ հնչյունափոխությունը կանխվել է բառային տարնմանությամբ։

Խուլ պայթականներից առաջ ղ-ի խլացման երևույթը ժամանակագրորեն բավական հին է։ Նշված դիրքում ղ-ի խլացումը կատարվել է, թերևս, այն ժամանակներում, երբ ղ-ն ձայնորդների շարքից անցում էր կատարում դեպի շփականների կարգը։ Առաջին վկայությունները վերաբերում են թուղթ բառին և արձանագրվում են XII դարի ձեռագրերի հիշատակարաններում։ Ըստ որում սկսած այդ ժամանակներից թուղթ բառը շատ հաճախ է հանդիպում թուխթ կամ թուխտ գրչություններով, որ որոշ չափով հասնում է նորմայի աստիճանի։ Ահա մի շարք օրինակներ. «...թխտոյս շարադրութիւն (Գ. Հովս. հձ. 37, 1170 թ.), Եւ գրեցան ըստ խնդրողացն պիտոյից թուխթ ԽԴ» (Ն. տ. 38), «...թուխտս առաջին խոստովանութեան (Ն. տ. 45)։ Հետագա դարերի գրավոր աղբյուրներում ավելի հաճախ են երևում նման բառաձևեր, վկայվելով այլևայլ սկզբնաղբյուրներում, ինչպես՝... կայեալ է ի շխթայս<շղթայս (ԺԴ հձհ 144, 1318 թ.), «...անյախթ (<անյաղթ) հռետորի» (Ն. տ. 136, 1317 թ.) և այլն։

Ժամանակակից գրական հայերենում և նրա բարբառների մեծագույն մասում ղ-ն խ-ի է փոխվել նաև ձայնեղ պայթականներից ու պայթաշփականներից առաջ։ Ըստ որում՝ վերջիններս էլ իրենց հերթին այդ դիրքում ձայնեղազրկվել են։ Բարբառագիտական գրականության մեջ այդ փոփոխությունը դիտվում է միասնության մեջ և ձևակերպվում է որպես հնչյունական օրենք. «Եթե ղ-ից հետո գալիս է խուլ բաղաձայն (պարզ կամ թավ) ղ-ն դառնում է խ»[12]։ Այդ օրինաչափության համար այնուհետև բերվում են այնպիսի բառեր, որոնց մեջ ղ-ն դարձել է խ՝ բարբառային խուլերից առաջ։ Ըստ որում այդ խուլերը ոչ միայն նախնական են, այլև խուլեր են՝ առաջացած հին հայերենյան ձայնեղներից, այսինքն՝ ոչ միայն աղքատ>ախքատ, ախկատ, բողկ>բօխկ, թաղկել>թախկել, թուղթ>թուխթ, թուխտ, խեղճ>խէխճ, ճէխճ, մեղք>մէխկ, մէխք և այլն, այլև աղբ>ախպ, աղբիւր>ախպուր, եղբայր>ախպէր, ախպար, աղջիկ>ախճիկ, ողջ>վօխչ, խեղդել>խէխտել,

---

12 Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1952, էջ 70։

ղեղձ>ղեխց, մաղձ>մախց և այլն։ Բերված օրինակները, ինչպես նաև դրանց հիման վրա ձևակերպված օրենքը ցույց են տալիս, որ ղ-ի փոփոխությունը արդյունք է նրան հաջորդող խուլ բաղաձայնի ազդեցության։ Իսկ այդ նշանակում է, որ վերը բերված բառերում նախ կատարվել է ձայնեղ պայթականների խլացում և հետո միայն, խուլերի մոտ, ղ ձայնեղ շփականի արտասանական համարեցում։ Այսպես է իրացվում բաղաձայնների զուգորդելիության օրենքը. խուլը՝ խուլերի, ձայնեղները՝ ձայնեղների հետ։

Գրավոր աղբյուրներում վկայություններ կան նաև այս դիրքում ղ-ի մեջ կատարված փոփոխության վերաբերյալ։ Ճիշտ է, միշտ չէ, որ գրությամբ արտահայտված ենք գտնում նրա խլացումը։ Վաղ ձեռագրերում նրա խլացման գրավոր արտահայտությունը հազվադեպ է հանդիպում, իսկ նրան հաջորդող բաղաձայնն էլ պահում է իր ավանդական՝ ձայնեղի ուղղագրությունը։ Բայց անկախ դրանից, ղ-ի փոխարեն խ գրությունը ինքնին նշում է կատարված հնչյունափոխության մասին։ Ըստ որում արտահայտության նման եղանակից չպետք է կարծել, թե ղ>խ հնչյունափոխությունը կատարվել է ձայնեղ պայթականից առաջ։ Այդ օրինակներում ձայնեղ պայթականների խլացումը պարզապես գրով չի արտահայտված։ Ինքնին հասկանալի է, որ ղ>խ փոփոխությունը կատարվել է ղ-ին հաջորդող խուլի հարևանության պայմաններում։ Բերենք երկու օրինակ։ Վայոց Ձորի 1292 թ. արձանագրություններից մեկում ունենք այսպիսի վկայություն։ «Մեք... Հասան ու Խոցադեղ, մեր ախբաւր որդաւքս ...զմեր հայրենի հողն ի Խուլաքարին տվաք ի սբ Ստեփանոս» (ԴՀՎ 3, 37)։ Այս հատվածում եղբայր բառի բարբառային թեքված (ախբաւր) ձևում ղ-ն արտահայտված է խ-ով՝ ըստ վերը նշված հնչյունափոխական կանոնի, թեև գրության մեջ նրան հաջորդող բաղաձայնը արտահայտված է ձայնեղի տառով։ Նման մի օրինակ է նաև Նորաբողբոջ բառում ղ-ի փոխարեն խ գրությունը՝ Նորաբոխբոջ, որ հանդիպում է ձեռագրերի հիշատակարաններում (ԺԵ ՀՁՀ 1, 50, 1405 թ.)։

Ավելի ուշ շրջանի գրավոր աղբյուրներում ղ-ի հետ միասին խուլ հնչյունի գրով է արտահայտվում նաև նրան հաջորդող պայթականը։ Օրինակ, Լոռի տարածքում գրված վիմական արձանագրություններում բազմիցս հանդիպում է Հաղբատ տեղանունը, որ շատ անգամ գրչագրվում է որպես Հախպատ։ Ահա մի քանի վկայություններ. «...բաժինքն ի դօռն տվինք Հախպատա սբ նշ» (ԿԴ, Հաղբ. 142), «...վախմ տվի դուռն Հախպատայ սբ նշ-ին» (Ն. տ. 224), «Սուետիս եպսկ հախպատցի ...Յակոբս տվի ի դուռն Հախպատա» (Ն. տ. 225) և այլն։

Մենք վերը արդեն նշել ենք (էջ 216), որ հայերենի այն տարբերակ-

ներում, որոնց մեջ բառասկզբում անհնար էր γ-ի արտասանությունը, հին հայերենի ղ-ի վերահնչույթավորումից առաջացած ետնալեզվային ձայնեղ շփական γ-ն ընկալվում է որպես k *կամ* x*։ Այդ երևույթն այսօր թեև առավելապես տիպական է փոխառյալ բառերին* (կալմակալ‖խալ-մախալ, կասաբ‖խասաբ, կայիմ‖խայիմ *և այլն), իսկ որոշ վայրերում էլ միայն բառասկզբի դիրքին, բայց ենթադրելի է, որ այդ երևույթը (γ-ի* կ *կամ* խ *արտասանությունը) որոշ բարբառներում նախապես ընդհանուր է եղել ոչ միայն բոլոր դիրքերի, այլև ղ-ի համար ընդհանրապես՝ ներառյալ նաև հայերեն բառերը։ Թերևս հետագայում է (պատմական շըրջանի երկար ու ձիգ ժամանակամիջոցում), որ հայերենի բարբառների մեծագույն մասի ղ-ի հնչյունափոխության ազդեցությամբ (որոնց մեջ ամենուրեք ղ-ն ընկալվել է որպես γ) ղ-ն աստիճանաբար վերականգնել է իր ընդհանուր հայերենյան հնչումը բառամիջի ու բառավերջի դիրքերում։ Որ դա իրոք այդպես կարող է եղած լինել, երևում է նրանից, որ այդ նույն բարբառներում բառամիջի ու բառավերջի ազատ դիրքերում մինչև այսօր էլ որոշ բառերում պահպանված է ղ-ի* խ *հնչումը։ Օրինակ, Մշո բարբառի որոշ խոսվածքներում արձանագրված են (Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերում)* տէխեր *փոխ.* տեղեր, ասեխ, *փոխ.* ասեղ *և այլն։ Մատենագրության մեջ ևս հատ ու կենտ օրինակներ կան այս դիրքում կատարված փոփոխության մասին, ինչպես, օրինակ, ունենք ձեռագրերի հիշատակարաններում* Մուշեղ *անձնանվան* Մուշէխ *(«Ճարգաւորէ* Մուշեխ.— *Գ. Հովս. հձ. 87),* աստղ *բառի* աստխ *(«...ի սոռա ւուր գիսաւոր* աստխ *երեւեցաւ»— Ն. տ. 88)*[13], *ասեղն բառի* ասեխ *գրչությունները։*

Վ : (Ֆ) *Հին հայերենի շփականների մեջ* v*-ն միակ շրթնաատամնային բաղաձայնն էր։ Այն ուներ ձայնեղ հնչյունի արժեք և ըստ ընդունված ուղղագրության արտահայտվում էր* վ, ւ, ու *տառերով, ինչպես, օրինակ՝* վարազ, ժողովել, ծով, գաւազան, նաւ, դժուար, նուէր *և այլն։ (Այս մասին տե՛ս ւ ձայնորդի քննությանը նվիրված բաժնում)։* v*-ի մերձավորագույն լծորդ* f*-ն բացակայում էր հին հայերենի հնչյունական համակարգում։ Բոլոր այն դեպքերում, երբ օտար փոխառություններում հանդիպում էր* f*, հայերը այն, ըստ իր ձայնական հատկանիշի, կամ նույնացնում էին երկշրթնային շնչեղ խուլ պայթականի հետ և ըստ այդմ ներկայացնում* փ*-ով (ինչպես այդ բանը մինչև այժմ էլ արվում է Արցախի ու Սյունիքի տարածքի բարբառներում), կամ ընկալում էին* w *ձայնորդ-բաղաձայնին մոտ հնչյուն։*

---

13 Աստղ>աստխ *բառում կարծեք թե* ղ>խ *փոփոխությունը տեղի է ունենում* ա *խուլից հետո, բայց իրականում այդպես չէ։* Տ*-ից հետո ունենք գաղտնավանկային* ը (աստըղ), *հետևաբար և* ղ>խ *փոփոխությունը եռաձայնավորային դիրքում է։*

Օտարլեզվյան f-ի՝ հայերենում ունեցած փ համապատասխանության մասին են վկայում հետևյալ օրինակները՝ փաղանգ<հուն. φάλαγξ, փառք<պհլ. farr, պրսկ. farr, փասեան (թռչուն)<հուն. φασιανός, փարսախ<պհլ. frasang, հն. պհլ. frasāx, փիլիսոփայ<ասոր. filōsōfā <հուն. φιλόσοφος, փոս<հուն. φόσσα, փուռն<հուն. φοῦρνος, լատ. furnus և այլն: Սրանց կողքին, ինչպես ասվեց, մի շարք բառերում օտարլեզվյան f-ն ներկայանում է ւ-ով: Նկատելի է, որ այդ տեղի է ունենում հիմնականում այն բառերում, որոնց մեջ f-ով ձայնավորական կապակցությունները գտնվում են փակ վանկում: Այստեղ ունենք, օրինակ, իրանական հետևյալ փոխառությունները. նաւթ<պհլ. naft, դրաւշ<պհլ. drafš, զնդ. drafša, պրսկ. dirafš, կաւշիկ<պրսկ. kafš, պհլ. *kafšik, տաւթ <պրսկ. taft, պհլ. tāftan, աւշարակ<պրսկ. afšara, պհլ. *afšarak, աւրհնել<պրսկ. afrin և այլն: Այս դեպքում էլ, ինչպես տեսնում ենք, օտարլեզվյան f-ն նույնացել է շրթնատամնային (երկշրթնային) ւ հնչյունի հետ:

Անկախ այս բոլորից, կարելի է անառարկելի համարել, որ շրթնատամնային խուլ շփական f-ի բացակայությունը և այս հիմքի վրա օտարլեզվյան f-ն փ-ով արտահայտելու օրինաչափությունը հայերենի բոլոր տարբերակների համար նախապես եղել է ընդհանուր և, որ f-ի գործածությունը հայերենի այսօրվա բարբառների մի մասում պատմական զարգացման արդյունք է: Այս միտքը հաստատվում է ներկա այն իրավիճակով, երբ հին փոխառյալ բառերի օտարլեզվյան f-ի դիմաց ամենուրեք ունենք փ, ներառյալ նաև ժամանակակից այն բարբառները, որոնց համար այսօր այլևս խորթ չէ ֆ հնչյունը: Պարզ է, որ եթե հին հայերենի բանավոր խոսակցական տարբերակների մի մասում լիներ այդ հնչյունը, ապա սպասելի էր, որ վերը հիշատակված և նման այլ փոխառյալ բառերում այսօր ինչ-որ տեղ ունենայինք ֆ-ով արտասանություն:

Շրթնատամնային խուլ շփական f-ն հայերենում առաջացել է պատմական շրջանում՝ հայերենի հնչյունական համակարգի ներքին հնարավորությունների հիմքի վրա: Նրա առաջացմանը նպաստել է այն հանգամանքը, որ հայերենի բաղաձայնական համակարգին հատուկ էր միևնույն շարքի ու տեղի արտաբերություն ունեցող լծորդ հնչյունների հակադրություն՝ ըստ ձայնեղության ու խլության հատկանիշի (բ : պ, դ : տ, գ : կ, ջ : ճ, ձ : ծ, զ : ս, ժ : շ): Սա պոտենցիալ հնարավորություն էր ստեղծում լրացնելու համակարգում առկա բաց վանդակները: Այդպիսի բաց վանդակներ շփականներից ունեին միայն վ-ն և խ-ն: Եվ ահա պատմական շրջանում ղ-ն վերահնչույթավորվելով՝ ձայնորդից անցնում է շփականների շարքը՝ լրացնելով խուլ շփական խ-ի ձայնեղ լծորդ γ-ի ազատ տեղը: Նույնպիսի պոտենցիալ հնարավորություն կար նաև ձայ-

նեղ շփական v-ի խուլ լծորդ f-ի համար։ Վերջինիս առաջացման համար բավական էր միայն v-ի ձայնեղության կորուստ։ Ձայնեղության կորուստ բառում կարող էր կատարվել նախ՝ հարևան հնչյունների ազդեցությամբ։ Հայերենում հենց այդպես էլ լինում է, եթե դատելու լինենք մատենագրության մեջ հանդիպող առաջին օրինակներով. ֆ-ով գրության առաջին վկայությունները, որոնք արձանագրվում են հայերեն բառերում, հանդիպում են ավանդական ւ և վ տառերի փոխարեն, մի բան, որ կարելի է բացատրել ւ(վ)-ին հարևան խուլ բաղաձայնների ազդեցությամբ։ Այսպես, օրինակ, ունենք հետևյալ վկայությունները. նաւթ> նաֆթ, ինչւի, ինչվի>ինչֆի, շնորհաւոր>շնոհւոր>Շնոֆոր և այլն։

Հետագայում, որոշ բարբառներում, v-ի խլացում արձանագրվում է նաև բառասկզբի կամ բառավերջի անկախ դիրքերում (որս>վորս> ֆորս, հարաւ>հարաֆ)։ Վերջին դեպքում v-ի խլացումը պայմանավորված է արտասանության ավարտին ուղեկցող ձայնալարերի գործունեության դադարով։

Այսպիսով, շրթնատամնային խուլ շփական f-ն հայերենում առաջանում է ոչ թե շրջապատի օտար լեզուների ազդեցությամբ (ինչպես կարծում են ոմանք), այլ բուն հայկական հողի վրա։ Առաջանալով հայերենի տարբերակների մի մասում, նա միաժամանակ հիմք է տալիս այդ տարբերակներում ընկալելու նաև օտարլեզվյան f-ն։ Ընդհակառակը, հայերենի բանավոր խոսակցական լեզվի այն տարբերակները, որոնց մեջ այդ փոփոխությունը տեղի չի ունենում, f-ն մնում է որպես խորթ տարր և օտարլեզվյան f-ն էլ հին ձևով շարունակվում է վերարտադրվել որպես շնչեղ խուլ պայթական փ։

Խուլ շփական ֆ-ի գրավոր առաջին վկայությունները վերաբերում են XIII դարին, երբ գրավոր աղբյուրներում, արդեն որպես գիտակցված հնչյուն, f-ն սկսում է արտահայտվել լատիներենից նոր փոխ առած ֆ տառի միջոցով[14]։

Հատկանշական է, որ ֆ-ով բառերի առաջին վկայությունները ար-

---

14 Որ Ֆ տառի գործածության սկիզբը պետք է համարել XIII դարը, կարող է հաստատվել նաև հետևյալ փաստով. Մաշտոցի անվան մատենադարանում պահվող № 416 ձեռագիրը, որը պարունակում է Մխ. Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» աշխատության 1279 թվականին կատարված ընդօրինակությունը, օտար բառերի f-երի դիմաց հիմնականում գնում է փ։ Նկատելի է, սակայն, որ որոշ դեպքերում այդ փ-երը ջնջված և վրայից դարձված են ֆ։ Այս ձեռագրի ընդօրինակությունը եթե նույնիսկ չի կատարված հեղինակային օրինակից (Հերացին իր աշխատությունը գրել է 1184 թ.), համենայն դեպս այն արված է մի այնպիսի բնագրից, որի մեջ օտար f-երը ներկայացված են եղել փ-ով։ Այս ձեռագրում նախնական արտագրության փ-երի փոխարեն օտար բառերում ֆ-երի վերականգնումը հենց ապացույց է այն բանի, որ ֆ տառը նոր էր գործածության մեջ դրվել (XIII դար), մանավանդ որ ձեռագրի շարունակության մեջ օտարլեզվյան f-ն արդեն արտահայտված է։

ձանագրվում են հատկապես կիլիկյան սկզբնաղբյուրներում՝ Պարոն Կոստանդինի դաշնագրում, Լևոն Գ-ի արտոնագրում, Սմբատ Գունդըստաբլի աշխատություններում, մանր ժամանակագրություններում և այլուր, որ նշանակում է, թե այդ հնչյունի առաջացումը կապվում է արևմըտյան տարածքի բարբառների հետ։

Ինքնին հասկանալի է, որ f*-ի ընկալումը և գիտակցումը, հետևաբար նաև նրա կիրառումը հայերենի բանավոր խոսակցական տարբերակների մի մասում կատարվել էր ավելի վաղ, քան նրա առաջին գրավոր արտահայտություններն են։ Անշուշտ, որոշակիորեն դժվար է ասել, թե այդ տարբերակներում երբ է սկսվել* f*-ի գործառությունը, քանի որ այդ մասին անմիջական տեղեկություններ չկան։ Սակայն, հնչյունափոխական ընդհանուր օրինաչափություններից շեղվող առանձին բառերի քննությամբ կարելի է որոշ կռահումներ անել։*

Այսպես. դիտարկումների հետաքրքիր նյութ է տալիս, օրինակ, պարսկերենից հայերենին անցած Afšin *արական անձնանունը։ Մեր մատենագրության մեջ այն հանդիպում է տարբեր գրչություններով՝* Աւշին, Օշին, Ոշին, Ափշին: *Սրանցից առավել տարածված և ձեռագրերում հաճախակի հանդիպող ձևերը առաջին երկուսն են։ Ըստ որում՝ երկրորդը* (Օշին) *ակնհայտորեն զարգացել է առաջինից* (Աւշին)՝ աւ *երկբարբառի ընդհանուր պատմական* աւ>օ *հնչյունափոխության նմանությամբ։ Երրորդը* (Ոշին), *քննարկվող հարցի տեսակետից, հետաքրքրություն չի ներկայացնում, քանի որ նույն* Աւշին>Օշին *հնչյունափոխված ձևի մի այլ գրչությունն է, որտեղ* ո*-ն ունի* օ*-ի արժեք։ Այս երեքից նախնականը, անշուշտ,* Աւշին *բառաձևն է, քանի որ դա է, որ առավելապես համապատասխանում է փոխատու լեզվի* Afšin *ձևին։ (Տարբերությունն այստեղ միայն այն է, որ օտար* f*-ի դիմաց հայերենը գրել է* ւ*)։ Գրչագրական վերջին տարբերակը՝* Ափշին*-ը, օտար* f*-ի դիմաց ունի* փ, *որտեղ խախտված է հին հայերենի տառադարձման սկզբունքը. փակ վանկում* f*-ն պետք է արտահայտվեր* ւ*-ով։ Այսպիսով, քննարկվող բառի վերարտադրման ժամանակ հայերենում հանդես է բերված երկու տարբեր մոտեցում.* f*-ի դիմաց մի դեպքում դրված է* ւ, *մի այլ դեպքում՝* փ:

Ինչո՞վ բացատրել նույն բառի մեջ օտար f*-ի արտահայտման նման երկվությունը։ Չէ՞ որ նման բառերում, ինչպես տեսանք վերը, օտարլեզվյան* f*-ի դիմաց հայերենը դնում էր* ւ*։*

Աճառյանը ենթադրում է, որ Ափշին *տառադարձությունը հայոց մեջ հատուկ է եղել Բագրատունիների շրջանին, իսկ* Աւշին (Օշին)*-ը՝ Ռուբինյանների շրջանին*[15]*։ Բայց դա հազիվ թե այդպես է։ Ստեփանոս Օրբելյանը, օրինակ, որ Բագրատունիների ժամանակակիցը չէ, այդ անձ-*

---

15 *Տե՛ս* Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան, հ.* Ա*,*

նանունը գրում է Ափշին և ոչ Աւշին կամ Օշին ձևերով[16]։ Օրբելյանը XIII դարի հեղինակ է, ժամանակակից Ռուբինյանների հարստությանը, քաջածանոթ իր և նախորդ շրջանի կիլիկյան մատենագրությանը, որտեղ այդ անձնանունը գրվում էր Աւշին (հետագայում նաև՝ Օշին) ձևով։ Հետևաբար սպասելի էր, որ նա էլ հետևեր գրական ավանդույթին և գրեր Աւշին, բայց ոչ՝ Ափշին։ Ուրեմն բանն այստեղ ժամանակների մեջ չէ։

Մեր կարծիքով, քննարկվող բառի արտասանական տարբերությունը պայմանավորված է եղել ոչ թե ժամանակային, այլ տարածական գործոններով։ Ավելի պարզ ասած՝ դրանք տարբեր վայրերի հնչյունական օրինաչափություններ են։ Օրբելյանը Սյունեցի էր, որի լեզվին խորթ էր f հնչյունը (ինչպես որ մինչև այսօր էլ այն խորթ է այդ տարածքի բարբառներին) և բնական է, որ Afšin օտար անունը նրա մոտ ստացել է Ափշին և ոչ Աւշին արտահայտությունը։ Ըստ որում՝ նրա տառադարձության մեջ փ-ն հանդես է եկել որպես հակադրություն այդ բառում այլ վայրերում առկա f արտասանության։

Այս տեսակետից մոտենալով հարցին, պետք է ենթադրել, որ արևմտյան տարածքի սկզբնագրերում հանդես եկող Աւշին ձևում ւ-ը ներկայացնում էր f հնչյունը, քանի որ հայերենի այբուբենում դեռևս բացակայում էր այդ հնչյունը արտահայտող տառը։ Եթե մեր այս ենթադրությունը ճիշտ է, ապա այդ բառի առաջին վկայությունների ժամանակ արևմտյան տարածքի խոսվածքների մի մասին f հնչյունը այլևս խորթ չէր[17]։

Աւշին անունը հայոց մեջ գործածված է սկսած IX դարից։ Այս անունով հայտնի առաջին անձը արաբ ոստիկան Afšin Haidar-ն էր, որը 833—842 թթ. ընթացքում կառավարել է Հայաստանում։ Հետագայում այս անվամբ հայտնի են նաև մի շարք կիլիկյան իշխաններ։

Եթե նկատի ունենանք Աւշին բառի ժամանակագրական այս սահմանը, ապա ենթադրելի է, որ հայերենի այս տարբերակներում (արև-

16 Ահա Օրբելյանի մոտ այդ անունը պարունակող հատվածները. «Իսկ թագաւորն Աշոտ յետ հինգ ամի թագաւորութեան իւրոյ վախճանի, և պայազատէ զթագաւորութիւն նորա որդին իւր Սմբատ, զոր հրամանաւ Ափշինի օծանեն զնա թագաւոր Հայոց կաթողիկոսն Սիւնեաց Յովհաննէս «(175—176), ...«Ապա յետ բազում անցից ընդ աշխարհս Հայոց գնայ Ափշին անդ (=Բաղդադ—ՀՄ) (176), «Մեծարէ Ափշինն զՎասակ Սիւնի՝ թագ կապեալ» (299)։

17 Ինչ վերաբերում է Աւշին սկզբնաձևի Օշին գրչագրական տարբերակին. ապա մենք վստահորեն չենք կարող ասել, թե այդ բառում իրոք կատարվել է աւ>օ հնչյունափոխություն։ Գրության նման ձև (Օշին) ձեռագրերում կարող էր առաջանալ նաև աւ>օ հնչյունափոխության ենթարկված բառերի նմանությամբ։ Ձեռագրերում հանդիպում են ոչ քիչ դեպքեր, երբ հայերեն բառերի աւ-ը փոխարինված է օ-ով նույնիսկ այնպիսի դիրքերում, որտեղ այն երկբարբառ չէ և նման հնչյունափոխության չէր կարող ենթարկվել (մեռօ–մեռաւ, եկօ–եկաւ և այլն)։

մրտյան, կիլիկյան) f հնչյունը արդեն գիտակցված էր VIII—IX դարե-րում։

Այս ենթադրությունը հաստատվում է նաև մի այլ օրինակով։ Դա ճաւք *բառն է։ Սա հայերենի այն երկու բառերից մեկն է (մյուսը՝* աղաճի*), որի մեջ բարբառների մեծագույն մասում (և այդ հիմքի վրա նաև գրական լեզվում) չի կատարվել* աւ>օ *հնչյունափոխությունը, թեև աւ-ը գտնվում է երկու բաղաձայնների միջև և պետք է որ գիտակցվեր որպես երկբարբառ։*

Այն բարբառներում, որտեղ այդ հնչյունափոխությունը տեղի չի ունեցել, բառս հնչվում է ւ-ի խլացմամբ՝ նաֆթ։ Խլացումը, անշուշտ, կատարվել է առնմանությամբ, բառավերջի խուլ բաղաձայնի ազդեցությամբ։

Այս բառը մեզ կարող է օգնել ճշգրտելու ֆ-ի առաջացման և հայերենի մեջ նրա գործածության մոտավոր ժամանակը։

Այսպես. եթե աւ>օ *հնչյունափոխությունը արձանագրվում է արդեն IX դարում, իսկ* ճաւք *բառը չի ենթարկվել ընդհանուր օրինաչափությանը (քանի որ* ւ*-ը* ք*-ի ազդեցությամբ հնչվում էր f), ապա պետք է եզրակացնել, որ հայերենի արևմտյան տարածքի տարբերակներում f-ի գիտակցումը ավելի հին երևույթ էր, քան այն արձանագրվում է գրի միջոցով և* ւ>ֆ *փոփոխությունը կատարվել է ավելի շուտ, քան* աւ>օ *հնչյունափոխությունը։ Ժամանակագրորեն սա համընկնում է Աւշին անվան տառադարձման ժամանակին (VIII—IX դդ.)։ Այսպիսով՝ հավանական կարելի է համարել այն ենթադրությունը, որ հայերենում f-ն որպես հնչյուն գիտակցվել է նախ արևմտյան տարածքի բարբառներում, ոչ ուշ, քան VIII դարը, և հետագայում միայն սկսել է տարածվել դեպի* ճարակից շրջաններ*, չընդգրկելով, սակայն, ամբողջ հայերենը։*

Հ: (ճ՛) Հին հայերենի շփականներից էր նաև ճ *տառով արտահայտված հնչյունը, որը ամենայն հավանականությամբ հնում էլ ուներ հագագային նույն հնչյունի որակը, ինչպես այսօր է գրական հայերենում* (ճաց, ճայր, ճուր, ճին *և այլն)։*

Հ տառի արժեքի մասին կարելի է դատել հաշվի առնելով հետևյալ հանգամանքները։

ա) Հայերենի բարբառների մեծագույն մասում այս ճ*-ն այժմ ներկայանում է որպես կոկորդային խուլ շփական շունչ, որպիսի հնչում համընկնում է, մի կողմից,* ճ*-ի ավանդական արտասանության հետ, մյուս կողմից, օտար լեզուների համապատասխան հնչյունի հետ։ Նույնիսկ այն բարբառներում, որոնց մեջ այս* ճ*-ի դիմաց* խ *է* (ճաց–խաց) *և կամ խուլ* ճ*-ի կողքին կա նաև ձայնեղ* ճ՛ *(ƒ), հին* ճ*-ն և նրանից առաջացած* խ*-ն երբեք չեն շփոթվում ձայնեղ* ճ՛*-ի հետ։*

բ) Ավելի կարևոր է այն, որ օտար լեզուներից (պարսկերենից, հունարենից, ասորերենից) կատարված հին փոխառություններում այդ լեզուների h-ն հայերենում արտահայտվել է հ տառով (հազար<պհլ. hazār, հանգոյն «նման, պես»<պհլ. hangōn, հանդարտ<պհլ. *handart, հեշմակ<պհլ. hešmak «դև, սատանա», հեգ<ասոր. həγa, հեթանոս<ասոր. hetnos կամ hetanos<հուն. ἔθνος, հիւղ || հիւլէ<հուն. ὕλη<լատ. hyle և այլն), որ նշանակում է, թե հայերենի հ տառով արտահայտված բաղաձայնը համապատասխանաբար ունեցել է նշված լեզուների h հնչյունի արժեքը։

գ) Այս նույն համապատասխանությունն առկա է նաև հայերենից վրացերենին անցած բառերում (համբաւ>համբավի, ամբավի, հանի>հանի, հասակ>հասակի, ասակի և այլն), թեև միշտ չէ, որ հայերենի հ-ն վրացերենում արտահայտվում է դրով։ Բայց անկախ դրանից, եղած համապատասխանությունները խոսում են այն մասին, որ հայերենի հ-ի տակ պետք էր հասկանալ կոկորդային խուլ շփական հնչյուն։

դ) Կարևոր է նշել նաև, որ հայոց լեզվի հետագա ողջ պատմության ընթացքում հ տառը գրական հայերենում պահպանում է նույն հնչյունական արժեքը։ Դա շատ լավ երևում է արաբերենից, նոր պարսկերենից, հին ֆրանսերենից, թուրքերենից և այլ լեզուներից կատարված փոխառություններում։ Դրանցում օտարլեզվյան h-ն ներկայացված է հայերենի հ տառով. այսպես՝ արբ. hunar>հունար, արբ. harāmi>հարամի, պրսկ. hu>հու «շարավալից արյուն» պրսկ. gunāhk'ār>գունահքար «մեղավոր», հ. ֆր. harnais>հառնէզ «կարասիք» և այլն։

Այսպիսով, կասկած չի կարող լինել, որ հայերենում հ տառով արտահայտվել է h հնչյունը՝ նրա պատմական զարգացման բոլոր փուլերում։

Սակայն այս նույն հ-ի դիմաց բարբառների մի մասում (ինչպես արդեն ասվել է) ունենք խ, որը հանդես է գալիս բառի մեջ գրված բոլոր դիրքերում՝ բառասկզբում, բառամիջում, բառավերջում (հաց>խաց, հարսանիք>խարսնիս, պահել>պախել, պատուհան>պատխան, բահ>պախ, մահ-մախ և այլն) և ընդգրկում է այն բոլոր բառերը, որոնք հին հայերենից ավանդված են հ-ով[18]։

Հ—խ համապատասխանությունը տարածական լայն ընդգրկում ու-

18 Անշուշտ բարբառից բարբառ կան տարբերություններ, երբ այս կամ այն պատճառով որոշ հին բառեր դուրս են մնում օրինաչափությունից։ Օրինակ. Բաղեշի նահանգի Խուլթիկ գյուղի խոսվածքում այդ օրինաչափությանը չեն ենթարկվել անձնանունները (Հայկ, Հայկազ, Համազասպ, Սրհակ, Գուհար և այլն)։ Այս մասին տե՛ս Է. Տառոնյան, Բաղեշի նահանգի Խուլթիկ գյուղի բարբառը, Անթիլաս, 1961, էջ 22։ Եվ դա ինքնին հասկանալի է, քանի որ անձնանունները որպես պաշտոնապես տրվող անվանումներ հնչյունաբանորեն անընդհատ «վերանորոգվում են»։ Նման շեղումները, որոնք ունեն արտալեզվական պատճառներ, ոչնչով չեն խախտում ընդհանուր օրինաչափությունը և հ>խ համապատասխանության պատմական քննության համար էական նշանակություն չունեն։

նի։ Նրա սահմանները անցնում են Ոզմ, Մոկս, Շատախ, Վան, Ուրմիա, Մարաղա, Թավրիզ, Սալմաստ, Խոյ, Մակու, Բայազետ, Դիադին, Մանազկերտ բնակավայրերով և այնուհետև Վանա լճի հյուսիս-արևմտյան ծովեզրով ձգվում դեպի հարավ՝ ներառնելով Արճեշ, Արծկե, Խլաթ, Բաղեշ բնակավայրերը։

Պատմական քերականության համար կարևոր է պարզել, թե ճ–խ *փոփոխությունը որ ժամանակի ծնունդ է և ծագումնաբանական ինչ ակունքներ ունի։*

Երևույթն, անշուշտ, հին է։ Այն, որ ճ>խ *փոփոխության օրինակներ հանդիպում են միջնադարյան գրավոր աղբյուրներում, արդեն խոսում են նրա հնության մասին։ Կան նաև անմիջական տեղեկություններ։ Հատկապես ձեռագրերի հիշատակարաններում, որտեղ գրիչները խնդրում են ներող լինել հնարավոր ուղղագրական սխալների համար, նշում են նաև* ճ-*ի և* խ-*ի գրության հնարավոր վրիպումների մասին*[19]։ *Գրավոր առաջին նման տեղեկությունը կա Մագիստրոսի «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ, որտեղ հայերենի բարբառներում առկա հնչյունական շեղումների շարքում նշվում է նաև* ճ-*ի փոխարեն* խ-*ի գործածությունը*[20]։ *Մագիստրոսը XI դարի հեղինակ է, ուստի պետք է ընդունել, որ* ճ>խ *անցումը XI դարից առաջ կատարված երևույթ է։*

Ավելի վաղ ժամանակներից թեև տեղեկություններ չկան, բայց ենթադրվում է, որ ճ>խ *փոփոխությունը, որպես բարբառային հին երևույթ, կյանքի է կոչվել դեռևս հայերենի նախագրային շրջանում։ Մի շարք գիտնականներ* ճ–ի *դիմաց* խ-*ի առկայությունը համարում են ենթաշերտային երևույթ, որպես ուրարտերեն լեզվի ազդեցություն։ Այսպիսի միտք արտահայտել է դեռևս* Ա. Ղարիբյանը[21]։ *Նման կարծիքի հակված է նաև* Գ. Ջահուկյանը, *երբ գրում է. «...բառասկզբի* ճ-*ի դիմաց* խ-*ի առկայությունը, անշուշտ, ենթաշերտային, թերևս, ինչպես կարծում են, ուրարտական ազդեցության արդյունք է, մանավանդ որ այդ երևույթը տարածված է հատկապես Վասպուրականում և Պարսկահայքում»*[22]։

Այս վարկածը, ինչպես տեսնում ենք, խարսխված է սոսկ այն դիտողության վրա, որ նշված երևույթը հատուկ է ուրարտերեն լեզվին և որ նույն օրինաչափությունն ունեցող հայ բարբառների զբաղեցրած տարածքը հիմնականում համընկնում է Ուրարտական պետության և նրան հարակից շրջանների հետ։ Կարծում ենք, որ այդքանը բավարար հիմք

---

19 Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Երևան, 1972, էջ 133։

20 Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, հ. 2, էջ 383։

21 Ա. Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, 1953, էջ 131։

22 Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, 1972, էջ 267։

չի կարող ծառայել նման մի ծանրակշիռ եզրակացության համար։

Հարցի լուսաբանման տեսակետից հետաքրքիր են այն տվյալները, որոնք տալիս են ժամանակակից հայ բարբառները։ Ուշագրավ է հատկապես այն, որ h>խ օրինաչափությունը ժամանակագրորեն գործում է մինչև արաբական տիրապետության շրջանը՝ իր մեջ առնելով h ունեցող ինչպես հնդեվրոպական ու անհայտ ծագման բառերը, այնպես էլ հին փոխառությունները (պհլ. hazār>հայ. հազար—Մկ. Ոզմ. Սլմ. Վն. Մրղ. Բայզ. և այլն>խազար, պհլ. hamār>համար>բրբ. խամար, խամբրանճ, պհլ. hāvasār>հաւասար>բրբ. խավսար, խավասար և այլն)։

Արաբական տիրապետության շրջանից սկսած պատկերը փոխվում է։ Այս շրջանից հետո կատարված փոխառությունները, այն է՝ արաբական, նոր պարսկական ու թուրքական ծագման բառերը, պահում են h-ն։ Միայն հատ ու կենտ բառեր են, այն էլ արաբական ու նոր պարսկական ծագման, որ h-ի փոխարեն ունեն խ։

Այդ բառերից կարելի է հիշել, օրինակ՝ խալալ<արբ. halal, խասրաթ<արբ. hasrat, խարամ<արբ. haram, խինա<արբ. hina, խավաս<պրսկ. havas, խունար<պրսկ. hunar և այլն։

Նկատի ունենալով այս բառերում առկա փոփոխությունը, Աճառյանը h>խ, հնչյունափոխությունը դնում է արաբական արշավանքներից հետո և թուրքական տիրապետությունից առաջ ընկած շրջանում։ Այդ միտքը որոշակի պարզությամբ արտահայտված է նրա Վանի բարբառի քննությանը նվիրված ուսումնասիրության մեջ։ Բերելով իր կողմից դրանցված արաբական, նոր պարսկական և թուրքական փոխառյալ բառերի ցանկերը, Աճառյանը դրանց վիճակագրական հաշվումներից անում է հետևյալ եզրակացությունները։ «Արաբերեն փոխառյալ 32 բառերից 6-ը խ-ով է, մյուսները h-ով կամ առանց h-ի, պարսկերենից փոխառյալ 9 բառերից 3-ը խ-ով է, 6-ը h-ով, թուրքերենից բոլոր 9 բառերն էլ h-ով են, խ չկա։ Այս հարաբերությունը ցույց է տալիս, որ ա) Վանի բարբառում h>խ ձայնափոխությունը իրոք հին է և տեղի է ունեցած արաբների արշավանքից հետո և թուրքերի տիրապետությունից (ԺԱ դար) ավելի առաջ։ Այս շրջանին են պատկանում այն փոխառությունները, որոնք ցույց են տալիս h>խ ձայնափոխությունը»[23]։

Աճառյանի մեկնաբանության մեջ անհասկանալի է, թե ինչո՞ւ արաբապարսկական բառերի մի մասի մեջ է միայն կատարվել h>խ փոփոխությունը։ Եթե օրինաչափությունը գործել է արաբական ու թուրքական տիրապետությունների միջև ընկած շրջանում, ապա h-ն խ-ի փոխվելու հնչյունական օրենքը պետք է տարածվեր արաբական շրջա-

---

23 Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, 1952, էջ 67։

նից փոխառած բոլոր բառերի վրա։ Աճառյանի կարծիքով դա տեղի չի ունեցել այն պատճառով, որ արաբերեն այդ բառերը հայերենին են անցել Թուրքերենի միջնորդությամբ։ Այսինքն՝ ħ ունեցող բառերը արաբական տիրապետության շրջանում դեռևս հայերենին չէին անցել, որի պատճառով էլ չեն ենթարկվել ħ>խ փոփոխության, իսկ եթե անցել էլ էին, ապա Թուրքերենի ազդեցությամբ է, որ դրանք հայերենի հիշյալ բարբառներում պահպանել են ħ-ն։ Այս մեկնաբանությունը այնքան էլ համոզիչ չէ։ Եթե դա իսկապես այդպես եղած լիներ, սպասելի էր, որ Թուրքերենի ազդեցությամբ ħ ունենային նաև շատ տարածված ու սովորական այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ, ħալալ, ħարամ, ħասրաթ և այլն, որոնք սակայն, այս տարածքի բարբառներում ħ-ի դիմաց միշտ ունեն խ։

Մենք կարծում ենք, որ նույն լեզվից կատարված փոխառություններում ħ հնչյունի դրսևորման այդ երկվությունը պետք է բացատրել ժամանակագրական գործոններով։ Հավանական պետք է համարել այն, որ ħ>խ հնչյունափոխությունը գործել է այնպիսի ժամանակահատվածում, որի ավարտի ժամանակ դեռևս շատ քիչ արաբական բառեր կային հայերենում և դրանք են, որ ընկել են ħ>խ հնչյունական օրենքի տակ։ Հ–ով արաբապարսկական ծագման մյուս բառերը այս տարածքի բարբառներում մուտք են գործել այդ հնչյունական օրենքի գործառության դադարից հետո և, բնականաբար, ħ-ն չեն փոխել խ-ի։ Այս, և միայն այս է պատճառը, որ նշված տարածքի բարբառներում ստեղծվել է տարբերակված ḣ-ի դրսևորման երկվություն։

Անկախ այս բոլորից, քանի որ ħ>խ հնչյունափոխությանը ենթարկվում են հին հայերենից ħ-ով ավանդված բոլոր բառերը, այդ թվում նաև հին փոխառությունները, ինչպես նաև արաբական փոխառությունների մի մասը, հիշյալ հնչյունական օրենքը ժամանակագրորեն ավելի հին լինել չի կարող, քան արաբական տիրապետության սկիզբն է։

Ուշագրավ է նաև այն, որ այս օրինաչափությանը ենթարկվել են նաև մի քանի այնպիսի բառեր, որոնք գրական լեզուներում բառասկզբում ħ չունեն։ Այսպես, օրինակ. բառասկզբի խ-ով են հանդես գալիս հին հայերենի **ագանել, ալեւոր, ուրոր** բառերը՝ **խաֆնել||խայնել, խալիվոր, խուրոր**։ Այս բառաձևերը ենթադրել են տալիս հնում ħ–ով նախաձևերի գոյությունը, որ հաստատվում է ոչ միայն ħ>խ հնչյունափոխությամբ, այլև այլ բարբառներում ħ-ով ձևերի (**ħաֆնել, ħալիվոր||ħըլիվուր, ħուրոր**) գոյությամբ։

Այնուհետև. հայտնի է, որ հին իրանական փոխառություններում հայերենի բառասկզբի ħ-ն ոչ միայն համապատասխանում է փոխատու լեզվի h-ին, այլև f-ին, երբ վերջինս r-ից առաջ է. այսպես. պհլ. frēštak> **ħրեշտակ**, պհլ. framān >հրաման և այլն։ Այս դեպքում

էլ մեր բարբառները բառասկզբի ſ-ի դիմաց ունեն խ: Բայց ինքնին հասկանալի է, որ բարբառային խ-ն այս բառերում գալիս է ոչ թե պահլավերեն ſ-ից, այլ հայերեն հ-ից։ Այս ևս մի ապացույց է այն բանի, որ հ>խ հնչյունափոխությունը զուտ հայկական երևույթ է՝ կատարված որոշակի տարածքում, լեզվի պատմական զարգացման որոշակի փուլում։

Հ>խ հնչյունափոխության գործառության մոտավոր ժամանակը կարելի է դնել VI—VIII դարերի սահմանագծում։ Եվ քանի որ, ինչպես վերը նշվեց այն ընդգրկում է նաև որոշ թվով արաբական ու նոր պարսկական բառեր, հետևաբար պատմական շրջանում կատարված երևույթ է և ճիշտ չի լինի այն բացատրել ուրարտերենի ազդեցությամբ։

Այստեղ հարկ է անդրադառնալ նաև հ-ի մի այլ համապատասխանության, որը թեև լայն ընդգրկում չունի, բայց իր բնույթով և երևույթի մեկնաբանությամբ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում լեզվի պատմության համար։

Խոսքը վերաբերում է բառասկզբում հո հնչյունակապակցություն ունեցող մի շարք բառերի, որոնք բարբառներում հ-ի դիմաց հանդես են բերում վ կամ ֆ։ Այդ բառերն են՝ հորթ, հոգի, հող, հոտ, հոր, որոնք մի շարք բարբառներում համապատասխանաբար ունեն վորթ‖վորթիկ‖վէրթ–ֆորթ‖ֆօրթ, վոգի‖վօգի–ֆոգի‖ֆօգի, վէղ–ֆող‖ֆօղ, վէտ–ֆոտ‖ֆօտ, վէր–ֆոր‖ֆօր արտահայտությունները։ Սրանց է հարում նաև որս բառը, որը թեև գրական լեզվում զուրկ է բառասկզբի հ-ից, բայց բարբառներում հանդես է բերում նույն համապատասխանությունը՝ հորս–վէրս–ֆօրս[24],

Արևմտյան տարածքի մի շարք բարբառներ՝ արևմտահայ գրական հայերենի հոս, հոդ, հոն ցուցականների հ-ի դիմաց նույնպես ունեն ֆ՝ ֆոս, ֆոդ, ֆոն կամ ֆէս, ֆէդ, ֆէն: Այս դեպքում, ինչքան էլ դա տարօրինակ լինի, բացակայում են վ–ով բարբառային ձևերը։ Դա բացատրվում է նրանով, որ նման ցուցականներ խորթ են արևելյան տարածքի բարբառներին։ Սակայն անկախ սրանից, հոս, հոդ, հոն բառերի ֆ-ով ձևերը դուրս չեն ընդհանուր օրինաչափությունից[25]

24 Հասկանալի է, որ այս բառերը վայրից վայր ունեն նաև իրենց ածանցված ձևերը (հողել, հոտել, հորել, որսալ, որսորդ և այլն), որոնք հանդես են բերում իրենց արմատական հիմքի հնչյունական համապատասխանությունը (հողել–վէղել–ֆողել), բացի այդ սրանք հանդես են գալիս և այլ ձայնավորմամբ (ֆէղ, ֆէտ, ֆէր և այլն)։

25 Մատենագրությամբ սրանք վկայվում են միջին հայերենի շրջանից և բացի ա-ով գրչությունից, ունեն նաև աւ-ով և օ-ով տարբերակներ (հաւս, հաւդ, հաւն և հօս, հօդ, հօն): Պետք է կարծել, որ այս գրչությունների մեջ նախնականը (ստուգաբանականը) ա-ով ձևերն են, իսկ մյուսները՝ դրանց ուղղագրական տարբերակները, որոնք գործածվել են այդպես՝ կապված (ո) ձայնավորի երկբարբառային կամ մենաբարբառային արտասա-

Մեզանում ընդունված է ասել, որ հ-ի դիմաց հանդես եկող ֆ և վ հնչյունները արդյունք են հ-ի հնչյունափոխության: Նման մեկնության հանդիպում ենք, օրինակ, Աճառյանի մոտ: Իր «Հայ բարբառագիտության» մեջ, Կարնո բարբառի հնչյունական համակարգի նկարագրության մեջ, Աճառյանը գրում էր. «Բառասկզբի հ ձայնը հաջորդական ո-ի քով կդառնա ֆ. ինչպես. ֆող՝ հող, ֆոտ՝ հոտ, ֆոր՝ հոր, ֆոս՝ հոս, ֆոդ՝ հոդ, ֆոն՝ հոն. սակայն օ-ի քով այս փոփոխությունը տեղի չունենար, ինչպես կցուցնե հօր՝ հօր ձևը: Նկատելի է, որ այս ձայնափոխությունը հատուկ է գյուղացոց լեզվին. քաղաքացիք հ ձայնը անփոփոխ կպահեն և ասոր պատճառն ալ հետևյալն է: Ինչպես վերը տեսանք, ֆ ձայնին ծագման պատճառը ո-ի երկբարբառային ուօ արտասանությունն է, քանի որ օ-ի քով այսպիսի փոփոխություն տեղի չունենար: Արդ՝ քանի որ քաղաքացիք զուրկ են ո ձայնեն և ղայն օ կհնչեն, բնականաբար զուրկ պիտի ըլլան նաև այս տեսակ ֆ-են»[26]:

Այս հարցին Աճառյանը անդրադառնում է նաև իր այլ աշխատություններում: Մասնավորապես իր «Հայոց լեզվի պատմություն» գրքի մեջ, երբ քննում է հայ բարբառների ծագման և նրանցում առկա բարբառային հնաբանությունների հարցը, անդրադառնալով հ հավելում ունեցող բառերի խնդրին, հորթ բառի կապակցությամբ նկատում է. «Այսօր մեր բարբառները այս որթ բառի կողմից բաժանվում են երկուսի. մի խումբը գիտե որթ, մյուսը՝ հորթ: Այսպես՝ Վան, Մոկս, Սալմաստ, Մարաղա, Ագուլիս ունեն որթ, որթիկ ձևը, իսկ Ախալցխա, Կարին, Ալաշկերտ, Մուշ, Խարբերդ, Տփղիս, Սվեդիա, Ասլանբեկ, Համշեն, Արդվին ունեն հորթ, հորթուկ: Երևան, Սուչավա, Սեբաստիա, Խրիմ ունեն ֆորթ, որ առաջանում է հորթ ձևից, ուրեմն նրանք էլ պատկանում են երկրորդ խմբին: Ղարաբաղ ունի վըէրթ, որ անորոշ է և կարող է ծագել թե որթ և թե հորթ ձևից. հմմտ. մի կողմից ոսպ>վըէսպ, որձ>վըէրց և մյուս կողմից՝ հող>վըէղ»[27]:

Աճառյանի այս մեկնաբանությունը հետագայում որդեգրվում է այլ լեզվաբանների կողմից:

Նույն կարծիքը, ավելի պարզեցված ձևով, արտահայտել է Ա. Ղարիբյանը. «Հ բաղաձայնը,— գրել է նա իր «Հայ բարբառագիտության» մեջ,— վերածվում է ֆ հնչյունի ո ձայնավորից առաջ Արարատյան (Երևան), Կարնո, Հաճընի և Սեբաստիայի բարբառներում. օրինակ՝ հող>

վորման հետ: Նախնական ո-ի օգտին են խոսում բարբառային ֆոս, փող, ֆոն ձևերը, որոնց ֆ-ն կարող էր առաջանալ ո-ից, բայց ոչ երբեք ու-ից կամ օ-ից:

26 Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով): Էմինյան ազգագրական ժողովածու, Մոսկվա—Նոր Նախիջևան, 1911, էջ 105:

27 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, 1951, էջ 411:

ֆօղ, հոր>ֆօր, հոգի>ֆօքի (*Երևան, Կարին*), ֆուէղ<հող, ֆուէդ<հոտ (*Հաճըն*), ֆորթ<հորթ, ֆող<հող (*Սեբաստիա*)։

Ղարաբաղի բարբառում նույն ո *ձայնավորից առաջ* հ *բաղաձայնը վերածվում է ատամնաշրթնային* վ *ձայնեղ բաղաձայնի, այսինքն՝ Երևանից տարբերվում է միայն ձայնեղացմամբ. օրինակ՝* հող>վըէղ, հոր>վըէր *և այլն։ Ղարադաղի բարբառում* հո *կապակցությունն արտասանվում է* վը̊. *օրինակ.* հող>վը̊ղ, հոտ>վը̊տ, հոր>վը̊ր»[28]։

Խնդրին մի փոքր այլ մոտեցում է ցուցաբերում Ռ. Բաղրամյանը։ «Հ. Աճառյանը և Ա. Ղարիբյանը,— գրում է նա,—այս ֆ*-ի առաջացման միջոցներից մեկը համարում են բառասկզբի* հ*-ն, որը «հաջորդական* ո*-ի քով կդառնա* ֆ*»: Այս բացատրությունը Ռ. Բաղրամյանը համոզիչ չի համարում և տալիս է իր բացատրությունը։ «*ֆ*-ն ստացվել է բնական հնչյունափոխությամբ, երբ բառասկզբի* հ*-ն իր շունչը տալով հաջորդական* ո*-ից առաջացած* վօ, վո *հնչյունախմբի* վ*-ին, սա դարձնում է* ֆ *և ինքը ջնջվում (այս փոփոխությունը տեղի չի ունենում* ո *երկբարբառ չունեցող և* հո>հօ *փոփոխություն ունեցող բարբառներում, որովհետև այստեղ նման ձևերում* վ *չկա. հմմտ.* հոր>ֆոր, հոգի>ֆուէգի, հող>ֆող, որթ>հորթ>ֆորթ *և* հոր>վըէր, հոգի>հօքի, հող>հօղ>վըէղ)»[29]:

Այստեղ Ռ. Բաղրամյանը փաստորեն աշխատում է ավելի առարկայական դարձնել Աճառյանի պատկերացումները ֆ*-ի առաջացման վերաբերյալ, հատկապես հենվելով Աճառյանի՝ վերը բերված այն մեկնության վրա, ըստ որի* ֆ*-ն առաջանում է* ո*-ի երկբարբառային* ուօ *արտասանությունից։*

Մեզ հետաքրքրող հարցին այստեղ առնչվում է Ռ. Բաղրամյանի դատողությունների հատկապես այն մասը, որտեղ նա փորձում է բացատրել ո*-ից առաջ գտնվող* հ*-ի կրած «փոփոխությունը»։ Բաղրամյանի մեկնաբանմամբ* հ*-ին հաջորդող* ո*-ի մեջ նախ կատարվել է երկհնչյունային փոփոխություն, որի հետևանքով* ո*-ն վերածվել է* վօ, վո*-ի (ասենք՝* հողը *դարձել է* *հվօղ *կամ* *հվող) *որից հետո բառասկզբի* հ *խուլ հագագի ազդեցությամբ* վ*-ն խլացել է ու դարձել շրթնատամնային խուլ շփական* ֆ (հող>*հվող>ֆող), *այսինքն այս դեպքում էլ* ֆ*-ի առաջացման համար վճռական դերը տրվում է* հ*-ին։*

Նման բացատրությունը խիստ առարկելի է, որովհետև այս դեպքում հաշվի չի առնված, որ բարբառներում բառամիջի ո*-ն չի ստանում երբեք* վօ *կամ* վո *երկհնչյունային արտասանություն*[30]։

---

28 Ա. Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն, էջ 132։*

29 Ռ. Բաղրամյան. *Հնչյունախոսություն (հայերեն բարբառների), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատություններ, 1965, № 1, էջ 161։*

30 *Ավելի մանրամասն տե՛ս Հ. Մուրադյան, «Բառասկզբի* հո *հնչյունակապակցու-*

Մեր կարծիքով տվյալ երևույթն ունի ավելի պարզ ու հասարակ բացատրություն։

Բառասկզբի հո-ի դիմաց հո(խո) *և* վէ, ֆո[31] *հնչյունական համապատասխանությունները առաջացել են երկու հնագույն բարբառային նախաձևերի հիմքի վրա, որոնցից մեկում այդ բառերը ունեցել են* հ-*ով, մյուսում՝ առանց* հ-*ի բառասկիզբ։ Առաջինից հետագայում զարգացել են արդի բարբառների մի մասի* հ-*ով և* խ-*ով, երկրորդից՝* վ-*ով և* ֆ-*ով բառաձևերը։*

Հատկապես բարբառների այն մասում, որոնց մեջ քննարկվող բառերի բառասկզբի հ-*ի դիմաց* խ *է* (հոգի–խոք'ի, հող–խող *և այլն*), հ–խ *համապատասխանությունը գոյություն ունի ոչ միայն հիշյալ բառերում, այլև հին հայերենից ավանդված* հ *ունեցող բոլոր բառերում* (հարսն–խարս, հին–խին, հաց–խաց, պահել–պախել, բահ–պախ *և այլն*)*։ Այս նշանակում է, որ* հ–*ի համապատասխանությունը համակարգային երևույթ է և* հո–խո *անցումն էլ, որպես ընդհանուր օրինաչափության դրսևորումներից մեկը, ինքնին հասկանալի մի բան է։*

Այլ է վ-*ի և* ֆ-*ի հարցը։* Հո–վէ, հո–ֆո *համապատասխանությունները ոչ միայն համակարգային չեն և հանդես են գալիս միայն սահմանափակ թվով բառերում, այլև* հ–վ, հ–ֆ *«անցումները» հնչյունաբանորեն անհասկանալի են։ Հատկանշական է այն, որ* հ–*ի դիմաց* ֆ–*ն հանդես է գալիս հենց այն բառերում, որոնց մեջ այլ վայրերում* վ *է։ Սա հիմք է տալիս եզրակացնելու, որ քննարկվող բառերում* վ-*ն և* ֆ–*ն ունեն ընդհանուր ծագում և այս ելակետից պետք է գնալ դեպի դրանց բացատրությունը։*

Ավելի մոտիկից քննենք այդ բառերը։

Եթե դիտարկելու լինենք, օրինակ, հորթ, հող, հոտ, հոր *բառերի բարբառային արտահայտությունները Ղարաբաղի ու Ղարադաղի տարածքի խոսվածքներում, որտեղ* հո-*ի դիմաց առկա են* վէ, վըէ, վը̊ *հնչյունակապակցություններ, ապա դրանց բառասկզբի* վ-*ն անմիջապես հիշեցնում է* ո–*ով սկսվող բառերի ընդհանուր պատմական հնչյունափոխությունը, երբ հին հայերենի բառասկզբի* ո–*ն այս տարածքի խոսվածքներում ստացել է* վէ, վըէ, վը́ *հնչյունական արտահայտությունը։ Իսկապես.* ոչխար>վէխճար, ոչիլ>վէչիլ, ոսկի>վէսկի, որդի>վէրթի, որձ>վէրց *և նման բառերի համեմատությունը* վէրթ *«հորթ»* վէղ *«հող»* վէտ *«հոտ»* վէր *«հոր» բառերի հետ՝ հուշում է, որ վերջիններս, առաջինների նման, զարգացել*

թյան հ–*ի դիմաց բարբառներում առկա համապատասխանությունները» «Լրաբեր» հաս. գիտ. 1981, № 6։*

31 *Հո-ի դիմաց տարբեր վայրերում հանդես են գալիս* հուօ‖հօ‖հու, խուօ‖խուէ‖խօ, վէ‖վըէ‖վ ը̊ ֆուօ‖ֆուէ‖ֆէ‖ֆօ *և այլ հնչյունական համապատասխանությունները։ Շարադրանքում տեքստը չծանրաբեռնելու նպատակով դրանք ներկայացնում ենք* հո, խո, վէ, ֆո *սիմվոլներով։*

են այնպիսի բառաձևերից, որոնք բառասկզբում ունեցել են ռ: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ բարբառային վէռթ, վէղ, վէռ, վէտ բառերը առաջացել են ոչ թե ճոռթ, ճող, ճոռ, ճոտ, այլ ոռթ, *ող, *ոռ, *ոտ նախաձևերից:

Այդ բանը հաստատվում է մի շարք լեզվական փաստերով:

Նախ, հենց վերը նշված ճոռթ բառը ավանդված է մեզ ոռթ ձևով և դա է, որ ընկած է Ղարաբաղի ու Ղարադաղի տարածքի խոսվածքների վէռթ, վըէռթ, վը́ռթ բառաձևերի հիմքում:

Այս բառի ճ-ով ձևը (ճոռթ) փաստորեն գավառական մի տարբերակ է, որ գործածվում է բարբառների գրված մի այլ տարածքում (այդ թվում նաև արդի գրական հայերենում): Հատկանշական է, որ հայերենի այն տարբերակներում, որտեղ ճ՛-ի դիմաց այսօր խ է, ճոռթ-ի դիմաց առկա են վոռթիկ, տոռթէկ բառաձևերը (Վան, Շատախ, Մոկս, Խոյ, Ուրմիա, Սալմաստ, Մակու և այլն), որ նշանակում է, թե դրանց հիմքում էլ ընկած է եղել ոռթ տարբերակը: (Հոռթի դեպքում պիտի ունենայինք *խոռթ):

Այնուհետև, ճռ հնչյունակապակցության դիմաց, նրան զուգահեռ, բառասկզբի ռ-ով նախատիպի օրինակ է նաև ոռս բառը: Վերջինս թեև հին, միջին և նոր գրական հայերեններում օգտագործված է միայն բառասկզբի ռ-ի վօ արժեքավորմամբ, սակայն այս բառը մեզ հետաքրքրող հնչյունական համապատասխանությունների ոլորտում, գրական և բարբառային վօռս, վէռս ձևերի կողքին հանդես է բերում նաև բարբառային ճօռս և ֆոռս ձևերը, որոնք միանգամայն համահունչ են ճոռթ—վէռթ—ֆոռթ շարքի օրինաչափությանը: Այս նշանակում է, որ այստեղ էլ նախապես ունեցել ենք ճ-ով (ճոռս) և առանց ճ-ի (ոռս) ձևեր:

Երրորդ օրինակը, որ հանդես է բերում բառասկզբի ճ–ով և առանց ճ–ի տարբերակներ և ավանդված է հին հայերենից, ճոգի–ոգի բառն է: Այս երկուսը այժմ թեև ունեն իմաստային որոշ տարբերակվածություն և կիրառական տարբեր ոլորտներ, սակայն հին հայերենում դրանք հավասարապես օգտագործվում էին նույն իմաստով: Շատ հաճախ երկու ձևն էլ օգտագործվում են զուգահեռաբար հենց նույն գրական հուշարձանում: Այսօրվա բարբառներում առավել գործածականը գրական արտասանության մոտ ճ-ով ձևն է (ճօքի), թերևս որպես կրոնական ոլորտի բառ: Սակայն անկախ սրանից՝ այս բառը ևս բարբառներում հանդես է բերում նույն ճօքի, խոք՚ի, վօքի, ֆոքի օրինաչափությունը, որոնք սերում են վերը նշված ճոգի և ոգի տարբերակներից:

Առանց բառասկզբի ճ-ի՝ ռ-ով սկսվող տարբերակ ենթադրելի է նաև ճող բառի համար, որից և պիտի զարգանային Ղարաբաղի տարածքի խոսվածքներին հատուկ վ-ով ձևերը: Ճիշտ է, նման բառաձև առանձին վկայված չէ մատենագրության մեջ, բայց նրա գոյությունը ենթադրվում է ոչ միայն արդի բարբառային ձևերի առկայությամբ, այլև մի այլ բառի

օգնությամբ։ Դա այգողf բառն է։ Հայկազյան բառարանում այս բառը բացակայում է։ Այն վկայված է Առձեռն բառարանում, որտեղ տրված է նրա հետևյալ մեկնությունը. «Մեռելին էգուց եղած պաշտոնը»։ Ակնհայտ է, որ տվյալ բառը բաղադրյալ է՝ կազմված այգ և ողf բաղադրիչներից։ Առաջին եզրում, կարելի է կռահել, որ այգ «առավոտ» բառն է, քանի որ այն որոշակիորեն առնչվում է բարդ բառի ընդհանուր իմաստի հետ։ Բայց երկրորդ մասը անորոշ է։ Այն կարող է լինել և՛ ածանց, և՛ բառարմատ։ Որպես ածանց կարող է առնչվել ենթակայական դերբայի վերջավորության հետ. սակայն, եթե այգողf ենթակայական դերբայ լիներ, ապա նրա ցույց տված գործողությունը պետք է հարաբերեր այն կատարող անձանց հետ։ Սակայն բառի այդ իմաստը չի համընկնում Առձեռն բառարանում բերված բացատրության հետ։ Այդտեղ խոսքը ոչ թե գործողության հետ առնչվող անձանց մասին է, այլ մի երևույթի մասին, որը կատարվում է առավոտյան՝ մեռելի գերեզմանի վրա։ Ստեղծված անորոշությունը վերանում է, երբ նկատի ենք ունենում մեր բարբառներում նույն իմաստը արտահայտող հետևյալ բառերը. էգնաճօղ, իգնաճողէf, ինfնաֆող, նիգնավէղ և այլն։ Նախ՝ սրանք ունեն «Թաղման հաջորդ օրը առավոտյան հանգուցյալի գերեզմանին կատարվող այց-ծիսակատարություն» իմաստը, որ համընկնում է Առձեռն բառարանում այգողf բառի համար բերված իմաստի հետ։ Այնուհետև, բարբառային բառաձևերի համեմատական քննությունը ցույց է տալիս, որ դրանք զարգացել են հնից ավանդված այգողf, այգաճողf ձևերից, ըստ յուրաքանչյուր բարբառի հնչյունափոխական կանոնների։ Այդ բառերում թեև բարդության առաջին բաղադրիչը կորցրել է իր երբեմնի «առավոտ» իմաստը ներկայացնող մասի (այգ) հնչյունական կերպարանքը (առաջին երեքում դրանք դեռևս ակնառու են՝ իգնաճողէf, էfնաճօղ, ինfնաֆող. հմմտ. օր. այգի>իգի>իfի, այգուց>էfուց բարբառային ձևերի հետ), սակայն երկրորդ մասը շատ որոշակիորեն բացահայտում է իրեն՝ ներկայացնելով ճող բառի բարբառային՝ վերը նշված համապատասխանությունները (իգնա-ճողէf, ինf-նա-ֆող, նիգնա-վէղ)։ Այս նշանակում է, որ այգողf բառի երկրորդ բաղադրիչը ճող բառի առանց ճ-ի՝ ող տարբերակն է[32], որից և զարգացել են **բարբառային** վէղ, վըէղ, վ՛ըղ ձևերը։

Այսպիսով քննարկվող վեց բառարմատներից չորսը բառասկզբի ճ-ով

---

32 Այս մասին տե՛ս նաև Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. Ա., որտեղ Այգ արմատի գավառական ձևերի բաժնում Աճառյանը բերում է նաև այգողf բառի բարբառային տարբերակները։ Այդ առթիվ նա անում է հետևյալ դիտողությունը. «այս բոլորը (նկատի ունի այգողf բառի գավառական ձևերը—Հ. Մ.) գործ են ածվում «այգողը» նշանակությամբ և իրենց ձևով ցույց են տալիս, որ բառը կազմված է ոչ թե—ող մասնիկով, այլ հող բառից և հետևաբար այգողf էր հնապես այգաճողf>այգճողf, ինչպես ունի Առաք. պատմ. 417 այգաճող»:

ձևեր՝ (**հոգի, հորթ, հորս, հող**) կողքին ունեն նաև առանց **հ**-ի (**ոգի, որթ, որս, ող**) վկայություններ։ Մյուս երկու բառերի (**հոտ** և **հոր**) համար բառասկզբի **ո**-ով գրավոր վկայություններ թեև չկան, բայց բարբառային **վէտ, վէր** ձևերի առկայությունը խոսում է նման նախաձևերի գոյության մասին (երբ դրանք հատկապես դիտարկում ենք վերը բերված մյուս բառերի օրինաչափ փոփոխությունների ֆոնի վրա)։

Հարցի պարզաբանման տեսակետից կարևոր է նաև այս բառերի ծագումնաբանական քննությունը։ Նշված վեց բառերից հինգը ստուգաբանված են և ունեն հնդեվրոպական ծագում։ (Ստուգաբանված չէ **հոր** բառը)։ Ըստ որում այդ հինգից չորսը հնդեվրոպական նախաձևի բառասկզբում ունեն p հնչյուն. այսպես՝ **հող**<*pol, **հոգի, ոգի**<*pou, **որթ, հորթ** <*porthu, **որս, հորս** <*pork՛o և միայն **հոտ** բառն է, որի համար վերականգնվում է *od, բառասկզբի o ձայնավորով ձևը։

Հայտնի է, որ հնդեվրոպական p-ն հայերենում բառասկզբում տալիս է **հ** կամ ընկնում է։ Արդ, հենց այս բառերում էլ միանգամայն կանոնիկ կերպով դրսևորվել է p-ի անցման օրինաչափությունը, երբ մի դեպքում այն փոխվել է **հ**-ի, մյուս դեպքում՝ ընկել։ Դատելով այս բառերում առկա փոփոխությունից, պետք է կարծել, որ հնդեվրոպական p-ի անկումը կամ **հ**-ի փոխարկվելը եղել է ոչ թե ընդհանուր հայկական օրինաչափություն, այլ հայերենի երկփեղկված բարբառային օրինաչափություն։ Այլ կերպ ասած, այս փոփոխությունը հանդես է եկել որպես հայերենի հնագույն բարբառային տարբերություն, երբ հնդեվրոպական հնչյունական համակարգից հայերենին անցնելու ժամանակ հայոց մի մասում p-ն տվել է **հ**, մի այլ մասում՝ ընկել։

Ինչ վերաբերում է հնդեվրոպական *od նախաձևին, ապա նրանից հայերենի բարբառներում առաջացած **վէտ**-ը միանգամայն օրինաչափ է վերը բերված բառերի պատմական հնչյունափոխության ֆոնի վրա։ Այստեղ առարկություն կարող է վերցնել միայն նրա **հոտ** տարբերակը։ Այս դեպքում էլ, եթե **հ**-ն, մյուսների նման, չի գալիս մի հին p-ից, ապա, համենայն դեպս, նախապատմական շրջանի գոյացություն է։ Հայտնի է, որ հայերենում կան ոչ քիչ թվով բառեր, որոնք հնդեվրոպական նախաձևերի համեմատությամբ հանդես են բերում նախահավելվածային **հ**: Ենթադրվում է, որ այդ **հ**-ն կարող է լինել հնդեվրոպական կոկորդայինների արտահայտություն[33]։

Նույն բանը կարելի է ենթադրել նաև հնդեվրոպական նախալեզվի *od-ի դիմաց հայերենում հանդես եկող **հոտ**-ի համար։ Սակայն անկախ

---

[33] *Джаукян Г. Б.* Очерки по истории дописьменного периода армянского языка. Ер., 1967 г., с. 238—243. Симонян Н. М. Индоевропейские архаизмы армянских диалектов *թեկնածուական դիսերտացիայի ավտոռեֆերատը, էջ 10.*

18—687

ային բանից, թե հ-ն այստեղ հնդեվրոպական կոկորդայինի արտահայտությունն է, թե հավելական մի հնչյուն, հոտ-ը, մյուս բառերի նման, նախապատմական շրջանում ունեցել է բարբառային երկու տարբերակ, մեկը հ-ով, մյուսը՝ առանց հ-ի։

Ահա բառասկզբում հ չունեցող այդ տարբերակներից են հետագայում զարգացել բարբառների վ-ով և ֆ-ով ձևերը։ Սրանցից նախնականը, անշուշտ, վ-ով ձևերն են, քանի որ սրանք են, որ անմիջապես առնչվում են ո ձայնավորի պատմական հնչյունափոխության հետ[34]։

Ինչ վերաբերում է այս նույն բառերի ֆ-ով ձևերին, ապա մենք կարծում ենք, որ ֆ-ն դրանց մեջ առաջացել է ոչ թե հո հնչյունակապակցության փոփոխությամբ, այլ պարզապես բառասկզբի ո-ի հնչյունափոխությունից առաջացած վ-ից։ Այլ կերպ ասած՝ ո-ից զարգացած վո, վօ, վէ կապակցությունների վ-ն է, որ ձայնեղության կորստով բարբառների մի մասում դարձել է ֆ։ Ըստ որում այդ փոփոխությունն էլ մենք դիտում ենք ոչ որպես պատմական հնչյունափոխությամբ կատարված երևույթ (որովհետև այդ դեպքում ո-ից առաջացած բոլոր վո-երը պիտի փոխված լինեին ֆո-ի), այլ մի փոփոխություն, որ տեղի է ունեցել հնչույթաբանական մակարդակում, անհրաժեշտաբար, այն էլ միայն մի խումբ բառերում։ Այս դեպքում մեզ թվում է, որ այդ փոփոխության մեջ դեր է խաղացել տվյալ տարածքի բարբառներում պատմական հնչյունափոխության մի շարք երևույթների հետևանքով առաջացած բառային նույնանուններից ազատվելու ձգտումը։ Այսպես. բառասկզբի ո-ի երկհնչյունային արտասանության, բառավերջի հ-ի անկման, ձայնեղ բաղաձայնների խլացման հետևանքով հին հայերենից ավանդված ողն, ոտն, որդն բառերը ստացել էին վող, վոտ, վորթ արտասանությունը և իրենց հնչմամբ նույնացել հող, հոտ (հ)որթ բառերի՝ առանց հ-ի տարբերակների պատմական փո-

---

34 Ո-ի վո, վօ, վէ փոփոխության համար ազդակ է ծառայել նրա արտասանության մեջ առաջացած երկբարբառացման երանգը, որի հիմքի վրա հետագայում զարգացել են ուօ, ուէ երկբարբառները։ Փաստերը ցույց են տալիս, որ ո-ի երկբարբառացումը տարբեր տարածքներում ու ժամանակային տարբեր կտրվածքներում ընթացել է ոչ համաչափորեն ու ոչ միանշանակ։ Մի կողմ թողնելով դրանց մեջ արձանագրվող տարարնույթ փոփոխությունների քննությունը, այստեղ նշենք միայն, որ ուօ, ուէ երկբարբառների արտասանական հիմքի վրա են զարգացել մեզ հետաքրքրող վօ, վէ հնչյունական կապակցությունները։ Մասնավորապես Ղարաբաղի տարածքի խոսվածքներում այսօր հին ո-ի դիմաց արձանագրվող վէ-ն զարգացել է հենց այդ կարգի (ուէ) երկբարբառային արտասանությունից. դրա լավագույն ապացույցը կարող է լինել նաև բառամիջի դիրքի ո-ի դիմաց մի շարք բառերում է ձայնավորի առկայությունը (ինչպես՝ բագատր>բըֆավէր, ծիատր>ծիավէր, բողկ-պէխկ և այլն), որ առաջացել է ուէ երկբարբառի պարզեցումից (նման ուօ երկբարբառի փոփոխությանը, երբ բառասկզբի ուօ>վօ անցման կողքին բառամիջում առկա է ուօ>օ համապատասխանությունը՝ ոչխար>ուօչխար>վօչխար, բայց խոտ>խուօտ>խօտ)։

փոխությամբ առաջացած՝ *ող>վող, *ոտ>վոտ, որբ>վորբ ձևերի արտասանության հետ։ Այս իր հերթին առաջացրել էր տարբեր նախահիմքերից եկող բառերի նույնանունների շարք, որով և խախտվել էր այդ բառերի ֆունկցիոնալ հավասարակշռությունը։ Այս հիմքի վրա առաջանում է նույնանունները տարբերակելու անհրաժեշտություն, որը և տվյալ դեպքում լուծվում է սրանց մի մասի բառասկզբի վ-ի փոփոխությամբ[35]։ Այդ բառերի բառասկզբի վ>ֆ անցումը տեղի է ունենում ֆ հնչույթի գոյության պայմաններում, այսինքն՝ XI—XII դդ. հետո ընկած ժամանակաշրջանում։ Ըստ որում այդ անցումը նախապես կարող էր կատարված լինել մեկ-երկու բառում. հետագայում միայն՝ այն կարող էր տարածվել նաև այլ բառերի վրա, որոնք գտնվում են բառասկզբի նույն ճ–խ–վ հակադրության մեջ[36]։

Ղարաբաղի և նրան հարող վայրերի խոսվածքներում այդ պրոբլեմը չի առաջանում ոչ միայն այն պատճառով, որ նրանցում բացակայում է ֆ հնչույթը, այլ հիմնականում այն բանի հետևանքով, որ այստեղ գործած պատմական հնչյունափոխության երևույթները հիշյալ բառերի մեջ չէին առաջացնում այնպիսի փոփոխություններ, որոնցով նրանք նույնանային մյուսների հետ (որբ>վէրբ և որդն>վէրդնը, վէտ «հոտ» և ոտն>վէննը միանգամայն տարբերակվում էին իրենց արտասանությամբ)։

Այսպիսով գրական հայերենի վերը բերված բառերի բառասկզբի ճո-ի դիմաց արդի բարբառներում արձանագրվող հնչյունական տարբեր արտահայտությունները արդյունք են նախապատմական շրջանի բարբառային երկու տարբեր բառասկիզբների (ճ-ով և առանց ճ-ի) պատմական զարգացման, որը և հասցրել է տարբեր արդյունքների, այս իսկ տեսա-

---

35 Բարբառներից կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, երբ պատմական հնչյունափոխության կամ փոխառության հետևանքով առաջացած նույնանունությունը կանխվում է տվյալ բարբառի (կամ բարբառախմբի) հնչյունական համակարգի ներքին հնարավորություններով։ Նկատելի է, օրինակ, որ հատկապես այն բարբառներում, որոնց հնչյունական համակարգը հարուստ է ձայնավորներով, այդ հակասությունը լուծվում է ձայնավորների փոփոխության միջոցով։ Օրինակ. Սյունիքի տարածքում խուլերից հետո օրինաչափ է ու>օ հնչյունափոխությունը, ինչպես տուն>տօն, շուն>շօն, բուր>բօր, սուր>սօր և այլն։ Այսպես պիտի լիներ նաև բուզ բառում։ Բայց քանի որ այդ բառի բուզ>բօզ հնչյունափոխությամբ՝ բօզ-ը համընկնում է նույնահունչ բօզ «փոշի» փոխառյալ բառի հետ, օրինաչափ օ-ի փոխարեն ունենք քմային ö բուզ>բöզ։ Կատարվել է երկու նույնահունչ բառերի հնչյունական տարբերակում։ Ընդհակառակն, այն բարբառներում, որտեղ ձայնավորական համակարգը աղքատ է, նման տարբերակիչ դեր կատարում են բաղաձայնները։ Վ–ֆ անցումը մեր քննարկած բառերում հենց այդ երևույթի դրսևորումներից մեկն է։

36 Այսպես է առաջացել ֆ հնչյունը ֆոն(<ճոյն) բառի մեջ՝ Լոռու և Նոյեմբերյանի շրջանի խոսվածքներում, երբ Ղարաբաղի տարածքում սպասելի վ-ով ձևի փոխարեն ունենք ճöն (ոյ>ö օրինաչափ փոփոխությամբ)։

կետից էլ դրանցից որևէ մեկը չի կարող համարվել մյուսի ծագումնաբանական հիմքը։

Հայերենի ժամանակակից բարբառների մի մասում, բացի խուլ շփական ճ բաղաձայնից, կա կոկորդային մի հնչյուն ևս, որը ընկալվում է որպես ձայնեղ շունչ։ Բարբառագիտական աշխատություններում այդ հնչյունը արտահայտված է ƒ կամ ճ՛ տառերով։ Այդպիսի հնչյուն ունեն մասնավորապես Կարնո, Մշո, Բայազետի և մի քանի այլ բարբառների խոսվածքներ։ Այդ բաղաձայնը գործածվում է բացառապես բառասկզբի դիրքում և որոշ վայրերում հանդես է գալիս, մի կողմից, հին հայերենի բառասկզբի յ-ի դիմաց (յիշատակ>ճ՛իշատակ), մյուս կողմից որպես հավելական հնչյուն՝ բառասկզբի ձայնավորից առաջ (արջ ճ՛առչ) (տե՛ս էջ 314)։ Հնչարտաբերական և լսողական տեսակետից այս բաղաձայնը վայրից վայր ունի արտասանական տարբերություններ։ Այդ տարբերությունները արտահայտվում են նրանում, որ, եթե որոշ խոսվածքներում այն արտասանվում և ընկալվում է որպես ձայնորդ յ-ին մոտ հնչյուն, որը, սակայն, իր մեջ ունի նաև ձայնեղ շնչի զգալի երանգ (ելավ>ճ՛էլավ), ապա այլ վայրերում այն հաճախ ընկալվում է որպես ուժեղ ու կոպիտ ձայնեղ շունչ, ինչպես այդ արտահայտվում է, օրինակ, Կարնո բարբառի մի շարք խոսվածքներում, իսկ երբեմն էլ, այլ վայրերում, այդ հնչյունի ձայնեղ շնչի արտաբերությունը այնքան է թուլանում, որ այդ ճ-ն համարյա նույնանում է գրական հայերենի ճ-ի հետ[37]։ Այսօր արդեն, գրական լեզվի ազդեցությամբ, այդ բաղաձայնը կորցնում է (կամ սկսում է կորցնել) իր շնչեղ-ձայնեղությունը և ստանում է սովորական ճ-ի արտասանություն։

Ինչպես արդեն ասվեց, հայերենի բարբառներում այս ճ՛-ն, մի կողմից, համապատասխանում է հին հայերենի բառասկզբի յ-ին, մյուս կողմից, պարզապես հավելական հնչյուն է, որ հանդես է գալիս բառասկզբի ձայնավորից առաջ (առու>ճառու, ուր>ճո՛ւր, ելանել>ճ՛էլնել)։ Արդ, պատմության համար հույժ կարևոր է պարզել այս ճ՛-ի ոչ միայն ծագումը, այլև առնչությունը հին հայերենի բառասկզբի յ-ի հետ։

Որոշակի հիմքեր կան պնդելու, որ ձայնեղ ճ՛-ն հայերենի բարբառներում պատմական գոյացություն է։ Դրա լավագույն ապացույցներից մեկը կարող է լինել այն, որ հավելական ճ՛ ունեն ոչ միայն բնիկ բառերը (անձրև>ճ՛անձրէվ, ակն>ճ՛ագ, ականջ>ճ՛անգաչ), այլև, որ չափազանց կարևոր է, փոխառյալ բառերը (աշակերտ>ճ՛աշկէրդ, ռեհան>ճ՛ռէչան, օղա>ճ՛օղա «սենյակ» և այլն)։ Ուշագրավ է հատկապես, որ հավելական ճ՛-ն առկա է թուրքական ծագման բառերում, որ նշանակում

37 Հնարավոր են հնչարտաբերական և այլ տարբերակներ։

է, թե երևույթը, իրոք, հին չէ և կատարվել է միջին հայերենի շրջանում, թերևս XII—XIII դարերի սահմաններում։

Հավելական հ՛-*ի ոչ խոր հնության մասին է խոսում նաև հետևյալ իրողությունը։ Ձայնեղ* հ՛ *ունեցող բարբառներում առկա են նաև (թեև սակավ) խուլ* հ-*ի հավելումով բառեր։ Սրանց* հ-*ն երբեք չի շփոթվում ձայնեղ* հ՛-*ի հետ և արտասանվում է այնպես, ինչպես* հ-*ն* հաց, հայր, հարս(ն) *և նման բառերում։ Բայց, մյուս կողմից, բարբառների այն տարածքում, ուր առկա է* հ>խ *հնչյունափոխություն,* խ-*ի է վերածվում նաև այդ հավելական՝ խուլ* հ-*ն, այն ժամանակ, երբ ձայնեղ* հ՛-*ն նման փոփոխության չի ենթարկվում։ Այսպես, օրինակ՝—Կարնո բարբառի* հ-*ով բառերը* (ակն>հ՛ագ. ամրանալ>հ՛ամրնալ, անտեր>հ՛անդէր. աչք>
>հ՛աչք, առիք>հ՛առիք, արիւն>*հ՛արունք և այլն)՝* հ>խ *հնչյունափոխությունն ունեցող բարբառներում պահպանում են* հ՛-*ի ձայնեղությունը, մինչդեռ նույն Կարնո բարբառի* հաքնել *(*<ագանել), հալիվոր *(*<ալեւոր*) բառերի* հ-*ն, որ խուլ հնչյուն է, վերը նշված տարածքում դարձել է* խ (խաքնել, խալիվոր)։ *Այս փաստը խոսում է ոչ միայն հավելական խուլ* հ-*ի հնության, այլև ձայնեղ* հ՛-*ի նորաբանության մասին։ (Ավելի մանրամասն տե՛ս էջ 315)։*

Ինչ վերաբերում է ձայնեղ հ՛-*ի առնչությանը հին հայերենի բառասկզբի* յ-*ին, ապա պետք է ասել հետևյալը։ Մի շարք փաստեր հիմք են տալիս ենթադրելու, որ հին հայերենի բառասկզբի* յ-*ի տակ կարելի է հասկանալ այսօրվա բարբառների ձայնեղ* հ-*ի ինչ-որ տարբերակը։*

Ձայնեղ հ՛-*ի և հին* յ-*ի առնչակցության օգտին խոսող փաստարկներից մեկը կարող է համարվել այն, որ այսօր* յ-*ի դիմաց* հ *կամ* հ՛ *հագագի առկայությունը տրամաբանական կարող է լինել, եթե հին հայերենի բառասկզբի* յ-*ի մեջ ենթադրվի շնչեղության գոյությունը, մի բան, որի օգտին խոսում են նաև լեզվական այլ փաստեր։*

Այս տեսակետից ուշագրավ է այն, որ հին հայերենից բառասկզբի հ-*ով ավանդված մի շարք բառեր ունեն նաև* յ-*ով ձևեր, որոնք ծագումնաբանորեն նույն հիմքից սերելով, տարօրինակորեն հնչյունական տարբեր արտահայտություններ ունեն։ Այսպես.* հինգ *բառի կողքին ունենք* յիսուն, հայր *բառի կողքին* յօրայ, հաւ-*ի կողքին՝* յաւ, հետք-*ի կողքին՝* յետ*։ Խոսելով հնդեվրոպական* p-*ի հայերենյան համապատասխանությունների մասին Հ. Աճառյանը այսպես էր գնահատում խնդրո առարկա երևույթը. «Ընդհանուր հայացք գցելով վերի օրինակների վրա, կտեսնենք, որ* p *առհասարակ դառնում է բառասկզբում* հ, *բառամիջում* ւ(վ), *բայց թե ո՞ր դեպքում պիտի դառնա* յ *կամ ջնջվի, այդ դեռ լավ պարզված չէ, ոմանք կարծեցին, թե* p *շեշտյալ վանկում լինում է* հ, *անշեշտ վանկում՝* յ. *օրինակ՝* *penk^{2}e>հինգ *և* *penk^{2}ēk'omt>յիսուն, *և կամ թե կարճ բառի*

մեջ լինում է ճ, երկար բառի մեջ՝ յ: Այս բոլորը հերքվում է սույն օրինակներով, որոնց մեջ միևնույն բառը ստանում է թե ճ, թե յ և թե՝ մինչև անգամ ոչինչ»[38]։ Այնուհետև Աճառյանը բերում է վերը նշված բառերը (ճայր, ճաւ, ճետ՝ յ-ի իրենց տարբերակներով)։ Արդյոք բերված օրինակներում յ-ն չէ՞ր արտահայտում ճ հագագի մի այլ տարբերակը, որը խուլ ճ-ից տարբերվում էր ձայնեղ շնչով, ինչպես որ այսօր է հայ բարբառներում։ Գուցե և այդպես էր, մանավանդ որ հին հայերենի և՛ ճ-ն և՛ յ-ն, տվյալ դեպքում, սերում են հնդեվրոպական բառասկզբի նույն p հնչյունից։ Այս դեպքում թերևս արդեն տարօրինակ չթվա, որ հայերենում հնդեվրոպական բառասկզբի p-ի դիմաց ճ օրինաչափ համապատասխանության կողքին կան նաև նույն p-ից սերած յ-ով մի քանի ձևեր (*pol> յոլով, *ple>յղի, *pəd>յատակ, *penk²ēk'omt>յիսուն)[39], որոնց անկանոնությունը այս մեկնաբանությամբ լուծված կարող է համարվել։

Հետաքրքիր է նաև այն, որ ձայնեղ ճ՛-ն հիմնականում առկա է այն բարբառներում, որոնք ունեն շնչեղ ձայնեղ բաղաձայններ։ Ըստ որում դրանցում ճ՛-ն նույնպես հանդես է գալիս միայն բառասկզբի դիրքում։ Եվ եթե այսօր հին գրական հայերենի բաղաձայնական համակարգին վերագրվում են շնչեղ ձայնեղներ, ապա սպասելի՞ չէր արդյոք այդտեղ նաև ձայնեղ ճ՛-ի առկայությունը։ Չէ որ նման միտքը հուշվում է հենց բառասկզբի հին յ-ի այսօրվա ճ՛ համապատասխանությամբ։

Սակայն այս բոլորը ինչքան էլ տրամաբանական լինեն, լոկ ենթադրություններ են[40] և կարիք ունեն լուրջ հիմնավորման, մանավանդ որ ունեն նաև հակաթեզեր (տե՛ս 314 և հաջորդ էջերը)։

* * *

Հայերենի շփականների պատմական զարգացման մեջ հիմնականը եղել է ձայնեղության և խլության հակադրության պահպանումը, մի հատկանիշ, որ մինչև այժմ էլ հատուկ է հայերենի բաղաձայնական համակարգին։ Թերևս զարգացման այդ միտման շնորհիվ է, որ շփականների կազմում ամենուրեք ստեղծվել են ձայնեղ և խուլ լծորդ հնչյունների հակադրություններ։

Մենք վերը տեսանք, որ մեր լեզվի պատմության նախնական էտապում շփականներից միայն սուլականներն ու շշականներն էին, որ հանդես էին գալիս ձայնեղի և խուլի հակադրությամբ (զ∼ս, ժ∼շ)։ Մյուս

---

38 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, էջ 519։

39 Նույն տեղում էջ 518։

40 Նման կարծիք առաջ է քաշել բ. գ. թ. Ա. Հաննյանը, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի 1979 թ. հաշվետու գիտական նստաշրջանում կարդացած իր զեկուցման մեջ։ Մենք այստեղ այդ թեզը ներկայացրինք լրացուցիչ հավանական փաստարկներով։

շփականները՝ վ-ն, խ-ն և ճ-ն չունեին իրենց համապատասխան լծորդ հնչյունները։ Դրանք, այսպես կոչված «բաց վանդակներ» էին, որոնք պատմության ընթացքում աստիճանաբար համալրվեցին նոր հնչյուններով՝ մի դեպքում՝ վերահնչույթավորելով հները (յ>ճ՛, ?. ղ (l)>ղ (γ), մի այլ դեպքում՝ կյանքի կոչելով նորը՝ (ֆ)։

Այսօրվա դրությամբ, ամբողջ հայերենում, շփականները հանդես են գալիս համակարգային լրիվությամբ՝ վ–ֆ, ժ–շ, զ–ս, ղ–խ, ճ՛–ճ։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՅԹԱՇՓԱԿԱՆՆԵՐԸ

Հին հայերենի բաղաձայնական համակարգի մեջ ավանդաբար ընդունված է ճանաչել պայթական ու պայթաշփական հնչյունների այնպիսի եռաշարք խմբեր, որոնք իրար հակադրվում են ձայնեղության, խլության ու շնչեղության հատկանիշներով։ Նման հակադրությամբ առանձնացվում են մեսրոպյան այբուբենի հետևյալ տառաշարքերը.

բ, գ, դ, ձ, ջ
պ, կ, տ, ծ, ճ
փ, f, թ, ց, չ

Սրանցից առաջին շարքի միավորներին հատկացվում է b, g, d, j, ǰ ձայնեղ բաղաձայնների, երկրորդ շարքի միավորներին՝ p, k, t, c, č խուլ բաղաձայնների և երրորդին՝ ph, kh, th, ç, ç̌ շնչեղ խուլ բաղաձայնների արժեք։ Թե ճշգրտորեն ինչպես էին դրանք հնչվում այբուբենի հորինման շրջանում, այժմ դժվար է ասել։ Դրանց հնչյունական արժեքների որոշման համար փնտրականները դիմում են կողմնակի միջոցների։ Մասնավորապես հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները։

ա) Հայտնի է, որ հայերենի և վրացերենի տառերի այբուբենական կարգը կատարված է հունարենի օրինակով, ըստ վերջինիս այբուբենում առկա տառերի դասավորության։ Քանի որ այս երեք լեզուների այբուբենների մեջ մտնող տառերը ունեն նույն դասավորությունը և իրար հաջորդում են նույն հերթականությամբ, դրանից եզրակացվում է, որ իրար հանդիպադրվող տառերը ունեն հնչյունական նույն (կամ նույնականին մոտ) արժեքը։

բ) Հայերը V դարում, իրենց այբուբենը ստեղծելուց հետո, հունարենից թարգմանել են Դիոնիսիոս Թրակացու «Քերականության արվեստ» աշխատությունը։ Հայերեն թարգմանության մեջ, հունարենի օրինակով, տրված է հայերենի հնչյունական համակարգի դասակարգումը և նրա

միավորների նկարագրությունը։ Դա ևս հնարավորություն է տալիս գաղափար կազմելու հայերենի գրերի հնչյունական արժեքի մասին։

գ) Հին հայերենը իր գրի առման շրջանում օտար լեզուներից ուներ բազմաթիվ փոխառություններ։ Այդ լեզուների բառերի տառադարձումները հայերենում և օտար հնչյունների դիմաց հայերենում այս կամ այն տառի օգտագործումը բացահայտում է այդ տառի հնչյունական արժեքը։

դ) Նույն ձևով՝ այլ լեզուներում գործածված հայերեն բառերի տառադարձությունները (կամ գրադարձությունները) օգնում են պարզելու հայերեն տառերի հնչյունական արժեքները[1]։

Այս եղանակով կատարված հետազոտությունները հավաստում են, որ հին հայերենը իր գրի առման շրջանում իրոք ուներ պայթական ու պայթաշփական բաղաձայնների եռաստիճան խմբեր, որոնք իրար հակադրվում էին ձայնեղության, խլության և շնչեղության հատկանիշներով։

Վերը նշված միջոցներով կատարված հետազոտությունից մի բան միայն պարզ չէ, թե այդ համակարգի ձայնեղները պա՞րզ հնչյուններ էին, թե ձայնեղության հետ ունեին նաև շնչեղության հատկանիշ։ Նման հարց առաջանում է մանավանդ այն պատճառով, որ հայերենի մի շարք բարբառներում այսօր հին հայերենի ձայնեղների դիմաց արձանագրվում են շնչեղ ձայնեղներ, մանավանդ որ դրանք արձանագրվում են հենց այն բարբառներում, որոնց գրաված տարածքում խոսված հայերենի հիմքի վրա է գրի առնվել հին գրական հայերենը։ Մյուս կողմից՝ շնչեղ ձայնեղներ վերականգնվում են նաև հնդեվրոպական նախալեզվի համար, որոնց առնչությունը ինչպես հին հայերենի բաղաձայնների, այնպես էլ ժամանակակից հայերենի որոշ բարբառների շնչեղ ձայնեղների հետ պարզ չէ։ Ինքնին հասկանալի է, որ այդ առնչությունների լուսաբանումը չափազանց կարևոր է հայերենի բաղաձայնական համակարգի պատմական փոփոխությունների բացատրության համար։

Մինչև այժմ մեզանում ընդունված է եղել հին հայերենի բաղաձայնական համակարգը համարել պարզ ձայնեղներով, խուլերով և շնչեղ խուլերով բնութագրվող համակարգ։ Դա համարվել և այժմ էլ շատերի կողմից շարունակվում է համարվել այն նախահիմքը, որից սկսվում են հետագա պատմական փոփոխությունները։ Այդ հիմունքով էլ մեր լեզվի պատմության հաջորդական փուլերի գրավոր և բանավոր տարբերակների (հատկապես բարբառների) բաղաձայնական համակարգերի ուսումնասիրության ժամանակ որպես համեմատության եզր վերցվում է այդ եռաստիճան համակարգը, և, ըստ այդմ, կատարված փոփոխությունները նկարագրվում և մեկնաբանվում են այդ համակարգի համեմատությամբ։

Ինքնին հասկանալի է, որ պատմական շրջանում կատարված փոփո-

---

1 Ավելի մանրամասն տե՛ս Հ. Աճառյան, Հայոց գրերը, 286 և հաջորդ էջերը։

խությունների մեկնաբանությունները կփոխեին իրենց բնույթը, եթե այդ եռաստիճանության մեջ ձայնեղ բաղաձայններին տրվեր շնչեղության հատկանիշ։ Դեռ ավելին, այդ փոփոխությունների պատկերը միանգամայն այլ տեսք կստանար, եթե որպես համեմատության եզր վերցվեր հնդեվրոպական նախալեզվի բաղաձայնական համակարգը։ Այս նշանակում է, որ հայերենի բաղաձայնական համակարգի պատմական ուսումնասիրության համար կարևոր է դառնում այն հարցը, թե ինչպիսի փոխհարաբերության մեջ են ժամանակակից բարբառների բաղաձայնական համակարգերը հին հայերենի և մյուս կողմից՝ հնդեվրոպական բաղաձայնական համակարգերի նկատմամբ։ Այս հարաբերությունների բացահայտումը, գնահատումը և դրանից արվող եզրակացությունները կօգնեն ճիշտ պատկերացում կազմելու քննարկվող առարկայի պատմական զարգացման ընթացքի մասին։

Քանի որ պայթականների ու պայթաշփականների պատմական փոփոխությունների քննությունը անմիջապես առնչվում է բաղաձայնների այն տեղաշարժերին, որոնք այսօր արձանագրվում են հայերենի բարբառներում, հարկ է ավելի մոտիկից ծանոթանալ այդ փոփոխություններին։

ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՅԹԱԿԱՆ ՈՒ ՊԱՅԹԱՇՓԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայերենի պայթական ու պայթաշփական բաղաձայնները ժամանակակից բարբառներում հանդես են բերում արտասանական և դիրքային կիրառության մի շարք առանձնահատկություններ, որոնց քննությունը կարևոր է պատմական փոփոխությունների ընթացքը ճիշտ հասկանալու համար։

Սկսենք շնչեղ խուլերից։ Սրանք թեև արտասանական տարբերություններ չեն ներկայացնում և ամենուրեք էլ արտաբերվում են գրական հայերենի համապատասխան հնչյունների նման, բայց իրենց կիրառությամբ միասնական են միայն բառասկզբի դիրքում, որտեղ բոլոր բարբառներում էլ պահում են իրենց շնչեղությունը (փ, t, p, ց, չ)։ Բառամիջի և բառավերջի դիրքերում, բարբառների մի մասում, շնչեղ խուլերը փոխում են իրենց արտասանական որակը։ Ըստ որում՝ այդ փոփոխությունը վերաբերում է ոչ թե փոխազդեցական հնչյունափոխության այն դեպքերին, երբ հարևան բաղաձայնի ազդեցությամբ շնչեղ խուլը կորցնում է իր շնչեղությունը և վերածվում պարզ խուլի (խօսf>խօսկ, մեղf>մէխկ և այլն), այլ ապաշնչեղացման այն ընդհանուր երևույթին, երբ բառամիջի և բառավերջի դիրքերում, անկախ հնչյունական միջավայրի բնույթից, շնչեղ խուլերը համատարած ենթարկվում են շնչեղազրկման գործընթացին։ Այդ երևույթը վայրից վայր արտահայտված է

ավել կամ պակաս ընդգծվածությամբ, որը փաստորեն ներկայացնում է կատարված փոփոխության առանձին աստիճանները: Երևույթն այժմ որոշակի ընդգծվածությամբ արձանագրվում է Մշո, Սասնո, Համշենի բարբառների մի շարք խոսվածքներում, որը արդյունք է շնչեղ-խուլերի նախնական յուրահատուկ արտասանության: Ահա մի քանի օրինակներ Համշենի բարբառի Տրապիզոնի խոսվածքից՝ չափել > չապուչ, կանեփ > գօնէպ, ճարսանիք > ճայսնիկ, մեք > մէկ, կթել > գըտուչ, թուք > թուտ, փչել > փըճուչ, խաչ > խաճ *«եկեղեցի»*, խնոցի > խընօծի, ծոց > ձօծ *և այլն: Այս խոսվածքում փաստորեն բառամեջը և բառավերջը շնչեղ խուլերի համար բացառված դիրք է, որտեղ հանդես եկող շնչեղ խուլը ներկայանում է պարզ խուլի որակով: Այսպես է նաև նոր և նորագույն փոխառություններում.* քօկ *«արմատ»* կապադ *«կափարիչ»* դօն *«խոյ»* սիմինկի յէղ *«արևածաղկի ձեթ» և այլն: Միայն եզակի դեպքերում է, որ բառամիջում ու բառավերջում հանդիպում են շնչեղ խուլեր. սակայն սրանք էլ զուգահեռաբար ունեն նաև պարզ խուլով արտասանություն: Տրապիզոնի խոսվածքում այս երևույթը դարձել է գործուն օրինաչափություն, արտասանական մի յուրօրինակ ունակություն, որը մերժում է բառամիջի և բառավերջի դիրքերում շնչեղ-խուլ հնչյունի գոյությունը:*

Ծագումնաբանորեն այդ երևույթին կարելի է տալ երկու կարգի բացատրություն: ա) Մի դեպքում ենթադրելի է, որ հայերենի բարբառների մի մասում բառամեջը և բառավերջը շնչեղ խուլերի համար առհասարակ եղել է բացառված դիրք և այդ հատկությունը որպես հնից եկող երևույթ եղել է այդ խոսվածքները կրողների արտասանական ապարատի առանձնահատկությունը: Ուրեմն՝ այս հիմքի վրա է, որ շնչեղ խուլերը վերածվել են պարզ խուլերի: Այս մեկնաբանությամբ շնչեղ խուլ արտաբերելու իրենց անկարողությունը այս խոսվածքները բերել են հնից և շարունակում են մինչև մեր օրերը (քանի որ այդ նույն ապաշնչեղացմանն են ենթարկվում նաև նորագույն փոխառությունների շնչեղ խուլերը): բ) Մյուս կողմից, կարելի է ենթադրել, որ բառամիջի և բառավերջի ապաշնչեղացումը նոր երևույթ է՝ առաջացած պատմական շրջանում և հետո միայն՝ ձևավորված որպես արտասանական ունակություն: Այս ենթադրությունը, թերևս, ավելի հավանական կարելի է համարել, եթե նկատի ունենանք բարբառներում արձանագրված ապաշնչեղացման տարբեր աստիճանները (ամենաթույլից մինչև շնչեղության լրիվ կորուստ):

Սակայն անկախ այս բոլորից, այսօրվա դրությամբ, իրականն այն է, որ շնչեղ խուլերը հայերենի բարբառներում միասնական-միանշանակ արտասանություն ունեն միայն բառասկզբի դիրքում, բառամիջում և բառավերջում նրանց արտասանական որակը վայրից վայր տատանվում է՝ թույլ շնչեղությունից մինչև ապաշնչեղացում:

Խուլ պայթականներն ու պայթաշփականները բարբառներում արտասանական տեսակետից որևէ յուրահատկություն հանդես չեն բերում, բացի նրանից, որ մի շարք բարբառներում ենթարկվել են պատմական փոփոխությունների՝ հիմնականում վերածվելով պարզ ձայնեղների։ Այս տեսակետից էլ, իրենց կիրառությամբ, խուլերը դիրքային որևէ սահմանափակում չունեն. հանդես են գալիս ինչպես բառասկզբում, այնպես էլ բառամիջում։ Նկատելի է միայն, որ բարբառների մեծ մասում ռնգայիններից հետո նրանց (խուլերի) կիրառությունը բացառվում է։ Այնուհետև, մի քանի բարբառներում (Կարին, Ախալքալաք, Ախալցխա և այլն) բառավերջի դիրքում խուլ պայթականների ու պայթաշփականների արտասանության մեջ խլությունը այնքան էլ հստակ չէ։ Դրանք իրենց արտաբերությամբ տատանվում են խուլի և ձայնեղի միջև, առավելապես հակվելով դեպի խուլը (մատն>մատ, պատն>պատ, մուկն>մուկ, ձուկն>ձուկ և այլն), թեև ձայնավորի հավելման դեպքում նրանց արտասանության մեջ որոշակիորեն դերակշռում է ձայնեղության հատկանիշը (մուկ–մուգը, պատ–պադը, մատ–մադը, ձուկ–ձուգը և այլն)։ Սա էլ թերևս գալիս է այն բանից, որ այս բարբառներում միջձայնավորային դիրքում խուլերը ձայնեղանում են։

Ձայնեղ պայթականների և պայթաշփականների արտասանության մեջ յուրահատուկն այն է, որ դրանք վայրից վայր տալիս են արտասանական տատանումներ։ Այդ տատանումները կատարվում են ձայնեղության և խլության հատկանիշների սահմաններում՝ հնչյունի գրաված համարյա բոլոր դիրքերում։ Անշուշտ, խոսքը այստեղ այն բարբառների մասին չէ (Կիլիկյան, Սյունիքի, Արցախի, Վասպուրականի և այլն), որոնց մեջ ձայնեղները պատմականորեն հնչյունափոխվել են խուլերի։ Խոսքը արևմտյան տարածքի մի շարք խոսվածքների մասին է, որոնցում ձայնեղ պայթականները ունեն այնպիսի մի արտասանություն, որը լսողությամբ ընկալվում է (հետևաբար և արտասանվում է) մերթ որպես ձայնեղ, մերթ որպես խուլ հնչյուն։

Թերևս արտասանական այդ տատանումներն են պատճառ դարձել, որ մի շարք բարբառների վերագրվել են շնչեղ ձայնեղներ, երբ իրականում դրանք այդպիսիք չունեն։ Այսպես է եղել, օրինակ, Դիադինի բարբառի հարցում, որին վերագրվել են շնչեղ ձայնեղ բաղաձայններ, այն դեպքում, երբ այստեղ ձայնեղները ունեն ձայնեղի և խուլի միջին արտասանություն և փաստորեն ներկայանում են որպես միջին օղակ՝ դեպի Վասպուրականի ձայնեղազուրկ բարբառների բաղաձայնական համակարգը[2]։ Այս տեսակետից հատկանշական է նաև, որ Դիադինի բարբա-

2 Ռ. Բաղրամյանը իր «Սևանի ավազանի բարբառները» ուսումնասիրության մեջ Դիադինի բարբառի բաղաձայնական համակարգը իրավամբ ներկայացնում է պարզ ձայնեղներով և ոչ շնչեղ ձայնեղներով։

ռում բառասկզբի ձայնեղ պայթականներին հաջորդող ա-ն քմայնանում է ինչպես Վանի բարբառում («Աճառյանի օրենք»), մի բան, որ խորթ է շնչեղ ձայնեղ բաղաձայններ ունեցող բարբառներին։

Շնչեղ ձայնեղ բաղաձայններ հատուկ են սակավաթիվ բարբառների։ Դրանք հիմնականում Հայաստանի կենտրոնական գավառների բարբառներ են՝ Արարատյան, Բայազետի, Մուշի, Կարնո։ Ձայնեղների շնչեղությունն այս բարբառներում շատ որոշակի է և դրանք իրենց արտասանությամբ արմատապես տարբերվում են ինչպես պարզ ձայնեղներից, այնպես և այն ձայնեղներից, որոնց արտասանությունը տատանվում է ձայնեղության և խլության միջև։ Մյուս կողմից, ի տարբերություն այլ բաղաձայնների, շնչեղ ձայնեղները հանդես են գալիս միայն բառասկզբի դիրքում[3]։

Պայթական և պայթաշփական բաղաձայնների վերը նկարագրված առանձնահատկությունները (շնչեղությունը, ձայնեղների և խուլերի հնչարտաբերական տատանումները) թեև չունեն հնչույթաբանական արժեք, բայց չափազանց կարևոր են պատմական փոփոխությունների ներքին օրինաչափությունները հասկանալու համար։

ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՅԹԱԿԱՆ ՈՒ ՊԱՅԹԱՇՓԱԿԱՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերենի ժամանակակից բարբառները, ինչպես հայտնի է, ծագումնաբանական նույն բառի սահմաններում հանդես են բերում պայթական ու պայթաշփական բաղաձայնների տարբեր համապատասխանություններ։

Եթե ընդհանուր գծերով, առանց համեմատության որևէ եզրի, ներկայացնելու լինենք այդ համապատասխանությունները՝ նկատի ունենալով հատկապես բառասկզբի դիրքը, ապա կարելի է ասել հետևյալը։

Բարբառների մի խմբի բառասկզբի շնչեղ ձայնեղներին նույն պայմաններում մի այլ խմբում հատուկ են պարզ ձայնեղներ, մի երրորդ խմբում՝ պարզ խուլեր, չորրորդում՝ շնչեղ խուլեր (բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛ ~ բ, գ, դ, ձ, ջ ~ պ, կ, տ, ծ, ճ ~ փ, ք, թ, ց, չ)։ Այլ կերպ ասած, բարբառների այս չորս խմբերում բառասկզբի դիրքի նույն պայթական ու պայթաշփական բաղաձայնները հանդես են բերում լծորդական չորս տարբեր արտահայտություններ (դ՛ուռ–դուռ–տուռ–թուռ)։

Այնուհետև. բարբառների մի մասի բառասկզբի պարզ խուլերին մյուս մասում համապատասխանում են պարզ ձայնեղներ (պ, կ, տ, ծ,

3 Աճառյանը Նոր Ջուղայի բարբառում շնչեղ ձայնեղներ է տեսնում նաև բառամիջի դիրքում, մի բան, որ ստուգման կարիք ունի։ Հարկ է նշել նաև, որ վերջին տարիների ուսումնասիրությունները հերքեցին մի շարք բարբառների՝ այդ թվում Խարբերդի, Երզնկայի, Համշենի, Դիադինի բարբառներին շնչեղ ձայնեղներ վերագրելու տեսակետը։

ն ~ բ, գ, դ, ձ, ջ)։ Այս անգամ էլ նույն բառում բառասկզբի պայթականը մի դեպքում խուլ է, իսկ մյուս դեպքում՝ ձայնեղ (կատու ~ գադու)։ Ըստ որում այս համապատասխանությունների մեջ խուլ-ձայնեղ հակադրության միավորները չեն շփոթվում առաջին՝ շնչեղ ձայնեղ-ձայնեղ-խուլ-շնչեղ խուլ հակադրության միավորների հետ։

Կա նաև մի երրորդ համապատասխանություն, երբ բառասկզբի դիրքում բոլոր բարբառներում էլ, նույն բառերի սահմաններում, ունենք շընչեղ խուլ բաղաձայններ (փ, f, p, ց, չ)։

Այս համապատասխանությունները ավելի բովանդակալից են դառնում, երբ դրանք կատարվում են համեմատության որևէ եզրի հաշվառմամբ։

Այսպես. եթե վերը նշված համապատասխանությունները գնահատելու լինենք հին հայերենի բաղաձայնական համակարգի ավանդական արժեքավորմամբ ապա դիտելի է, որ ա) այդ համակարգի համեմատությամբ միայն շնչեղ խուլերն են, որ բոլոր բարբառներում էլ պահպանվել են անփոփոխ. բ) հին պարզ խուլերը, եթե բարբառների մի մասում մնում են անփոփոխ (նակատ > նակատ), ապա մյուս մասում փոխվում են ձայնեղների (նակատ > ջագատ), գ) հին ձայնեղները եթե բարբառների մի մասում մնում են անփոփոխ (բերան > բէրան), ապա մի այլ մասում դրանք վերածվում են շնչեղ ձայնեղների (բերան > բ՛երան), մի երրորդ մասում՝ պարզ խուլերի (բերան > պէրան), չորրորդում՝ շնչեղ խուլերի (բերան > փէրան)։

Անշուշտ, կատարվող համեմատությունները ինքնանպատակ չեն։ ժամանակագրական տարբեր փուլերի լեզվական միավորների համեմատությամբ նպատակ է դրվում բացահայտելու և գնահատելու եղած համապատասխանությունների ծագումնաբանական հիմքերը, հասկանալու կատարված փոփոխությունների ներքին իմաստը, տալու դրանց առաջացման բացատրությունը։

Այս տեսակետից, եթե դեռ ինչ-որ չափով հասկանալի է հին խուլերի՝ բարբառների մի մասում ձայնեղանալու երևույթը, որ հնչյունաբանորեն միանգամայն ընդունելի է,— ապա այնքան էլ պարզ չէ ձայնեղների տարբերույթ փոփոխությունների մեխանիզմը։ Այստեղ ձայնեղները հանդես են գալիս չորս տարբեր արտահայտություններով. մի տեղ շնչեղանում են, մի այլ տեղ կորցնում ձայնեղությունը, այնուհետև, ձայնեղներից առաջացած խուլերը նորից շնչեղանում են։ Մի խոսքով, զարգացման գործընթացը միասնական չէ և անհասկանալի են մնում այդ փոփոխությունների ներքին շարժառիթները։

Դրությունը ոչնչով չի փոխվում, երբ ժամանակակից հայերենի բարբառների բաղաձայնական համակարգերի համեմատության եզրը դարձվում է հնդեվրոպական միասնության շրջանի լեզվի բաղաձայնական

համակարգը։ Համեմատության այս եզրի ընդունման դեպքում էլ, երբ բարբառների մի մասում շնչեղ բաղաձայնների գոյությունը դեռևս կարող է բացատրվել հնդեվրոպական նախալեզվում դրանց գոյությամբ, ապա բարբառների մյուս խմբակցություններում այդ նույն բաղաձայնների դիմաց պարզ ձայնեղների, խուլերի և շնչեղ խուլերի առկայությունը նորից առեղծում է նույն դժվարությունը, քանի որ անհասկանալի է մնում, թե դրանք պատմական ինչ փոխհարաբերության մեջ են հնդեվրոպական շնչեղ ձայնեղների հետ։

Հայերենի բարբառներում պայթական ու պայթաշփական բաղաձայնների բառասկզբի դիրքում ունեցած լծորդական տարբերությունները արդեն իսկ խոսում են նրանցում կատարված պատմական փոփոխությունների մասին։ Ըստ որում այդ փոփոխությունները երևան են գալիս համեմատության ամեն եզրի դեպքում։

Հայ լեզվաբանական գրականության մեջ այդ փոփոխությունները ընդունված է անվանել «տեղաշարժեր», նկատի ունենալով, որ ձայնեղ ու խուլ հակադրության մեջ հանդես եկող պայթական ու պայթաշփական բաղաձայնների տվյալ շարքի միավորները փոխարկվում են մի այլ շարքի միավորների (բ, գ, դ, ...>պ, կ, տ... կամ՝ փ, ք, թ... և պ, կ, տ...> բ, գ, դ...)։ Այդ փոխարկումները՝ ձայնեղից խուլի||շնչեղ խուլի և խուլից ձայնեղի դրսևորվում են այն աստիճան հետևողականորեն ու օրինաչափորեն, որ դառնում են լեզվական տվյալ տարածքը բնութագրող էական հատկանիշ։

Հայերենի բարբառների հենց այդ առանձնահատկությունը նկատի ունենալով էր, որ Ա. Ղարիբյանը կատարեց հայ բարբառների հնչյունական իր դասակարգումը՝ տերիտորիալ խոսվածքները դասդասելով յոթ խմբերի մեջ։ Այդ դասակարգման ընթացքում ամեն մի խմբում միավորվում էին հին գրական հայերենի բաղաձայնական համակարգի համեմատությամբ նույն փոփոխությունն ունեցող բարբառները։ Հետագայում Ա. Ղարիբյանը իր հնչյունական դասակարգման հիմքում, որպես համեմատության եզր, դրեց հնդեվրոպական նախալեզվի բաղաձայնական համակարգը և հենվելով այդ դասակարգման տվյալների վրա փորձեց բացատրել հայերենի բարբառների ծագումը և նրանց առաջացման հաջորդականությունը։ Նրա պատկերացմամբ, օրինակ, լեզվական հին վիճակ ներկայացնում էին այն բարբառները, որոնք հնդեվրոպական շնչեղ ձայնեղները ու պարզ ձայնեղները պահպանել են անփոփոխ։ Ըստ որում այդ բարբառները համարվում էին ավելի հին, քան հին գրական հայերենն էր, որովհետև նրանում շնչեղ ձայնեղների դիմաց պարզ ձայնեղներ էին, իսկ հնդեվրոպական ձայնեղների դիմաց խուլեր։ Ըստ որում, ըստ Ղարիբյանի պատկերացման, գրաբարյան բաղաձայնական համակարգը առաջացել է վերը նշված բարբառային համակարգից։ Իր միտքը հիմնա-

վորելիս Ղարիբյանը գտնում էր այսպես. «Այսպիսի համակարգը (խոսքը վերաբերում է Փոքր Հայքի բարբառների բաղաձայնական համակարգին, որոնք ունեն շնչեղ ձայնեղներ և ձայնեղներ հնդեվրոպական նույն հնչյունների դիմաց։—Հ. Մ.) չէր կարող զարգանալ հին հայերենի համակարգից, քանի որ նրանում բացարձակապես բացակայում են շնչեղ ձայնեղները, իսկ պարզ ձայնեղները փոխարինված են պարզ խուլերով»[4]։

Իր այս դասակարգման արդյունքները, ինչպես նաև հայ բարբառների ծագման ու զարգացման մասին արված եզրակացություններն ու դատողությունները Ա. Ղարիբյանը հրապարակեց Вопросы языкознания հանդեսի էջերում, որտեղ այնուհետև ծավալվեց լայն բանավեճ։ Բանավեճին մասնակցեցին ռուս, հայ և օտարազգի մի շարք անվանի լեզվաբաններ։ Բանավեճի ընթացքում ամենատարբեր կողմերից քննության առնվեցին հայերենի բաղաձայնական համակարգի հետ առնչվող բազմաթիվ հարցեր։ Հայերենի բարբառների բաղաձայնական համակարգի առաջացման վերաբերյալ արտահայտվեցին տարբեր, հաճախ նաև՝ իրարամերժ կարծիքներ, արվեցին նաև օգտակար առաջարկներ, կառուցվեցին հիպոթեզներ։ Բանավեճը միաժամանակ ցույց տվեց, որ հայ բարբառների բաղաձայնական համակարգերի ծագման ու զարգացման հետ կապված մի շարք հարցեր դեռևս կարոտ են լուրջ ուսումնասիրության[5]։

Բանավեճի առանցքային հիմնական խնդիրներից մեկը հին գրական հայերենի և բարբառների բաղաձայնական համակարգերի միմյանց և հնդեվրոպական համակարգի նկատմամբ ունեցած փոխհարաբերության հարցն էր։

Արտահայտված ուշագրավ կարծիքներից մեկն այն էր, որ հակառակ Ա. Ղարիբյանի, որը բացառում էր շնչեղ ձայնեղների գոյությունը հին հայերենում և գրաբարյան համակարգն էլ հաջորդած էր համարում շնչեղ ձայնեղներ ունեցող բարբառների համակարգին, մի շարք գիտնականներ (Բենվենիստ, Ջոդտ և այլք) գրաբարի ձայնեղ պայթականներին ու պայթաշփականներին ոչ միայն վերագրում էին շնչեղություն, այլև ժամանակակից բարբառների բաղաձայնական համակարգերում չէին տեսնում մի այնպիսի հնչյունական առանձնահատկություն, որը անհամատեղելի լիներ հին հայերենի բաղաձայնական համակարգին։

---

4 Տե՛ս ВЯ, 1959, № 5, էջ 82։

5 Բանավեճի նյութերի հետ կարելի է ծանոթանալ, «Հայկական կոնսոնանտիզմը միջազգային լեզվաբանության գնահատմամբ» տեղեկատու ժողովածուի մեջ, որը Ա. Ղարիբյանի նախաձեռնությամբ պատճենահանմամբ հրատարակվել է ՀՍՍՀ ֆունդամենտալ գրադարանը և հասարակական գիտությունների գծով գիտական ինֆորմացիայի սեկտորը, 1976։

Հին գրական հայերենի բաղաձայնական համակարգի ձայնեղ պայթականներին շնչեղություն վերագրելը, իհարկե, նորություն չէր։ Այդ միտքը արծարծել էր դեռևս Հոլգեր Պեդերսենը իր «Հայերեն և դրացի լեզուները» աշխատության մեջ։ Նկատելով հայերենի բարբառներում ձայնեղների խլացման և խուլերի ձայնեղացման երևույթները և դրանց փոփոխության համար այլ մեկնաբանություն չգտնելով, քան այն, որ հին հայերենի բ, գ, դ, ձ, ջ գրերով արտահայտված հնչյուններին պետք է հատկացնել շնչեղության հատկանիշ, Պեդերսենը գրաբարի բ, գ, դ, ձ, ջ բաղաձայնները ներկայացնում էր որպես շնչեղ ձայնեղ bh, gh, dh, jh, ǰh հնչյուններ[6]։

Այս նույն միտքը գտնում ենք նաև Մեյեի մոտ, նրա «Հնդեվրոպական բարբառները» աշխատության մեջ։ «...Ապացուցելու համար,— գրում էր Մեյեն,— որ դասական հայերենի p, t, k հնչյունները b, d, g-ով ներկայացնող բարբառներում դասական հայերենի b, d, g հնչյունները պետք է ներկայացված լինեն p, t, k-ով (կամ ph, th, kh-ով), ամենաբնականն է ընդունել, որ ընդհանուր հայերենի b, d g հնչյուններն օժտված էին հնդեվրոպական շնչեղ ձայնեղներին բնորոշ առանձնահատկության հետ համատեղելի հատկանիշով»[7]։

Հին հայերենի ձայնեղ պայթականներին ու պայթաշփականներին նման հատկանիշ վերագրում էր նաև Հ. Աճառյանը։ «V դարում բ, գ,դ, ձ, ջ հնչվել են bh, gh, dh..., ինչպես հնչում է հայ ժողովրդի մեծագույն մասը, ապա բարբառների մի մասի մեջ նրանք դարձել են փ, f, թ, մի մասի մեջ՝ բ, գ, դ, մի երրորդ մասի մեջ՝ պ, կ, տ, իսկ Պոլսում ռամիկ արտասանության մեջ՝ բ, գ, դ կամ պ, կ, տ, գրական արտասանության մեջ՝ փ, f, թ»[8]։

Սակայն ինչպես Աճառյանը, այնպես և նրա նախորդները, հին գրական հայերենի ձայնեղ պայթականներին վերագրելով հանդերձ շնչեղություն և այդ համակարգի փոփոխությամբ բացատրելով ժամանակակից բարբառների բաղաձայնական համակարգերի տարբերությունները, այնուամենայնիվ այդ փոփոխությունների բացատրության համար չէին ներկայացնում որևէ հիմնավորված մեկնաբանություն։

Այս տեսակետից ուշագրավ է նորվեգացի հայագետ Ֆոգտի մեկնաբանությունը։

Դասական հայերենի համար նա ընդունում է պայթական ու պայթաշփական բաղաձայնների երեք շարք, որոնք շարադրանքի հեշտության

6 Հ. Պետերսեն, Հայերեն և դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 7—8։

7 Ա. Մեյե, Հնդեվրոպական բարբառները (1922), «Հայագիտական ուսումնասիրություններ» ժողովածուում, 1978, էջ 60։

8 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, 1971, էջ 626։

համար նշանակում է B, P, PH սիմվոլներով։ Անմիջական ապացույցների բացակայության պատճառով դժվարանում է ասել, թե դրանք ինչպես էին արտասանվում, բայց նկատի ունենալով հայերենի ներքին համակարգերը և դրանց փոփոխությունները, Ֆոգտը գտնում է, որ PH-ն շնչեղ խուլ (ph) հնչույթ էր, և որ B-ի և P-ի տարբերության համար որոշակի դեր էր խաղում ձայնեղությունը։ Մի կողմ թողնելով դասական հայերենի բաղաձայնական համակարգը և դիմելով հայ բարբառների բաղաձայնական համակարգերին, Ֆոգտը նկատում է, որ այստեղ պայթականները, ըստ Աճառյանի նկարագրության, ունեն 1) եռանդամ համակարգ և 2) երկանդամ համակարգ։ Ըստ որում, եռանդամ համակարգը, որին հարում է նաև դասական հայերենի համակարգը, իրենից ներկայացնում է հնդեվրոպական քառանդամ համակարգի ռեդուկցիան, իսկ երկանդամը՝ այդ եռանդամի երկրորդական ռեդուկցիան։ Այլ կերպ ասած՝ հնդեվրոպական համակարգից առաջանում է եռանդամ համակարգը և սրանից երկանդամը։ Եռանդամ համակարգը Ֆոգտը ներկայացնում է հետևյալ կերպ.

I խումբ (Երևան, Ջուղա, Մուշ և այլն)
II խումբ (Կարին, Երզնկա և այլն)
III խումբ (Ագուլիս, Մեղրի և այլն)

III խմբի համակարգը Ֆոգտը դիտում է որպես հարավ-կովկասյան լեզուների ազդեցությանը ենթարկված համակարգ (որը, իհարկե, ճիշտ չէ), և այդ պատճառով էլ քննության ոլորտից դուրս է թողնում։ I և II խմբերը, որպես բուն հայկական, հետևյալ կերպ է հանդիպադրում հնդեվրոպական համակարգին։

Հնդեվրոպական	[ph]	հայերենում ներկայացնում է	[ph]
	[bh]		[bh]
	[b][9]		[b] կամ [p][10]

Այնուհետև հետևում են հետևյալ դատողությունները։ Եթե դասական հայերենի B-ին տրվի b արժեք, ապա պետք է եզրակացնել, որ կենտրոնական բարբառների համապատասխան շնչեղ ձայնեղները ավելի հին են, քան դասական հայերենինը. այսինքն՝ առաջինները ավելի մոտ են հնդեվրոպական վիճակին։ Կամ պետք է գալ այն եզրակացության, որ ձայնեղ B-ն, որ ծագում է շնչեղ ձայնեղից, հետադարձ փոփոխությամբ նորից դարձել է շնչեղ ձայնեղ bh։

Սակայն այդ երկու հիպոթեզներն էլ հանդիպում են զգալի դժվա-

[9] Հնդեվրոպական խուլը հայերենում ներկայացված չէ։ Այն կամ փոխվում է շփականի, կամ զրոյի։

[10] *Г. Фогт*, Заметки по армянскому консонантизму, ВЯ, 1961, № 3, стр. 40.

րությունների։ Հարցի ավելի հեշտ լուծումը կլինի, եթե ընդունենք. որ հնդեվրոպական շնչեղ ձայնեղ bh-*ն մնացել է անփոփոխ Հայաստանի կենտրոնական բարբառներում և ըստ այդմ հայերենի այբուբենի* բ, գ, դ, ձ, ջ *տառերը պետք է տառադարձել* bh, gh, dh, jh, ǰh*։ Ելնելով իր այդ վարկածից, Ֆոգտը եզրակացնում է.* «դասական հայերենում գոյություն է ունեցել այնպիսի եռանդամ համակարգ, որի շնչեղները (ձայնեղ և խուլ) հակադրվում էին ոչ շնչեղ հնչույթին։ Ըստ որում՝ վերջինիս ձայնեղությունը կամ խլությունը չուներ հնչույթաբանական նշանակություն[11]։ *Այդ համակարգը ներկայացվում է այսպես.*

B [bh] : PH [ph] :: P [p]

Ֆոգտը թեև դժվարանում է որոշել ոչ շնչեղ տարրի հնչույթային ճիշտ արժեքը, բայց անկասկած է համարում նրա խուլ լինելը։ Սակայն, մյուս կողմից, նկատի ունենալով այն, որ այդ հնչույթը արևելյան-կենտրոնական բարբառներում ներկայանում է որպես b, *իսկ արևմտյան-կենտրոնական բարբառներում՝* p, *այն համարում է թույլ խուլ հնչույթ։ Երկու դեպքում էլ այդ հնչույթը հակադրվում է իր ոչ շնչեղությամբ։*

Հին համակարգի վերը նշված մեկնաբանությունից հետո Ֆոգտը բացատրում է եզրային բարբառներում կատարված փոփոխությունները։ Այսպես. եզրային բարբառներում (ինչպես արևելյան, այնպես և արևմտյան) շնչեղ ձայնեղները կորցնելով իրենց շնչեղությունը՝ ձուլվել են ոչ շնչեղացած էլեմենտի հետ, արևելքում p-*ին և արևմուտքում՝* b-*ին Այդ գործընթացը ներկայացվում է այսպես.*

դաս. հայերեն		կենտր. արևլ. բարբ.		արևել՝ եզր. բար. Ղարաբաղ, Վան և այլ
[bh]	>	[bh]		
[p]	>	[p]	>	[p]
[ph]	>	[ph]	>	[ph]

դաս. հայերեն		կենտր. արևմտ. բարբ.		արևմտ. եզր. բարբ. (Տրապիզոն և այլն)
[bh]	>	[bh]		
[p]	>	[b]	>	[b]
[ph]	>	[ph]	>	[ph]

Բոլոր դեպքերում էլ հնչույթաբանական հակադրությունը մնում է նույնը. շնչեղությունը հակադրվում է ոչ շնչեղությանը։ Ըստ որում՝ ոչ շնչեղ տարրը իրացվում է կամ որպես խուլ, կամ որպես ձայնեղ։

Այս հիպոթեզից արվող ընդհանուր եզրակացությունն այն է, որ «անհրաժեշտ է անպայմանորեն դասական հայերենը ընդունել որպես ժամանակակից բարբառների ակունքը»[12]։

---

11 *Նույն տեղում, էջ 41։ Ընդգծումը մերն է։*

12 *Նույն տեղում, էջ 42։*

Պետք է համաձայնել Ֆոգտի հետ, որ նրա առաջադրած հիպոթեզը աչքի է ընկնում ոչ միայն պարզությամբ, այլև կիրառությամբ։ Այն հնարավորություն է տալիս բացատրելու նաև B (բ)-ի անցումը ph-ի Ռոդոսթոյի և Մալաթիայի բարբառներում։

Դաս. հայերեն		Մալաթիա
B [bh] }		
PH [ph] }	>	[ph]
P [p]		[b][13]

Հնչյունաբանական տեսակետից, ինչպես, այս անցումը դժվար է բացատրել։

Հետաքրքիր են նաև այս բոլորից արված եզրակացությունները։

Ճիշտ չէ հայերենի բաղաձայնական համակարգի փոփոխությունները դիտել որպես տեղաշարժ՝ նման գերմանական համակարգին։ Հնդեվրոպական համակարգի համեմատությամբ հայերենում պահպանվել են շնչեղ ձայնեղները և շնչեղ խուլերը. պարզ խուլերը վեր են ածվել շփականների կամ դուրս ընկել. նրանց տեղը գրավել են ձայնեղներից առաջացած խուլերը։ Այս հիմքի վրա է առաջացել եռաստիճան համակարգը։

Ֆոգտի հիպոթեզի ամենաօգտակար հատիկը՝ հայերենի բաղաձայնական համակարգի հիմնական հատկանիշի՝ շնչեղության ու ոչ շնչեղության հակադրության բացահայտումն է։ Ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, այդ հիմքի վրա է, որ ձայնեղությունը և խլությունը որպես ոչ էական հատկանիշներ, ծայր են տվել պատմական փոփոխությունների։

Սակայն Ֆոգտի մեկնաբանության մեջ, մեր կարծիքով, ամեն ինչ չէ, որ հստակ է ու հասկանալի։ Ճիշտ չէ, օրինակ, նրա այն պնդումը, թե b, p, ph եռաստիճան համակարգը, որը ընկած է նաև արևելահայ գրական հայերենի հիմքում, իբր թե կազմավորվել է հարավ-կովկասյան լեզուների ազդեցությամբ։ Ինչպես կտեսնենք՝, այդ համակարգը հայերենի ընդհանուր համակարգի անբաժանելի մասն է, և առանց նրա գոյության հնարավոր չէ բացատրել բարբառներում առկա այլ համակարգերի գոյությունը։

Հիմնավոր չէ նաև որոշ գիտնականների կողմից առաջ քաշվող այն միտքը, թե հայերենի բաղաձայնական համակարգը իր պայթաշփական բաղաձայնների առատությամբ և ձայնեղ, խուլ ու շնչեղ խուլ բաղաձայնների լծորդական լրիվ շարքերով արդյունք է կովկասյան ենթաշերտի ազդեցության։ Թերևս այս տարածված մտայնության մի դրսևորումն է նաև Ֆոգտի վերը բերված տեսակետը։ Ինչպես b, p, ph եռաստիճան

13 Նույն տեղում։ Տպագրված է P, պետք է լինի b։

համակարգը, այնպես և առհասարակ հայերենի բաղաձայնական համակարգում եռաստիճանության լրիվ դրսևորումը պայթականների ու պայթաշփականների շարքերում, զուտ հայկական գոյացություն է՝ ձևավորված հայոց լեզվի նախապատմության երկար ու ձիգ ժամանակաշրջանում։ Նախապատմությունն ընդգրկող հազարավոր տարիների ընթացքում հայերենի բաղաձայնական համակարգը կատարելագործվել ու համալրվել է նոր միավորներով՝ լրացնելով այն բաց վանդակները, որոնք կային հնդեվրոպական վիճակից հայերենին անցնելու՝ հնչյունական փոփոխությունների ընթացքում։ Եվ երբեք էլ տարօրինակ չէ, այլ ընդհակառակն, օրինաչափ է, որ ǰ *(ջ)-ի կողքին հայերենում առաջացել է* č (ճ)-*ն,* j (ձ)-*ի կողքին* c *(ծ)-ն։ Չէ որ հնդեվրոպական ժառանգ լեզուների այսօրվա բաղաձայնական համակարգերին խորթ չեն* ǰ, ç̌, j, ç *պայթաշփականները։ Հայերենը ինչու՞ պիտի բացառություն կազմեր։ Եվ եթե հայերենը այնուամենայնիվ առանձնանում է* č *և* c *բաղաձայնների առկայությամբ, ապա դրանց գոյությունը միանգամայն արդարացվում է պայթականների* b, g, d ~ p, k, t — ph, kh, th *լծորդական շարքերի գոյությամբ, և եռաստիճանությունը տարածվում է նաև պայթաշփականների վրա։ Հայերենի բաղաձայնական համակարգի մեջ նման զարգացում մենք տեսնում ենք նաև պատմական շրջանում, երբ շփականների կազմում տեղի է ունենում բաց վանդակների համալրումներ և ետնալեզվային խուլ շփական խ-ի կողքին առաջանում է նրա ձայնեղ լծորդը՝* γ-*ն, իսկ շրթնատամնային ձայնեղ* վ-*ի կողքին նրա խուլ լծույգ* ֆ-*ն։*

Միանգամայն ճիշտ համարելով կենտրոնական բարբառներից եզրային բարբառների բաղաձայնական համակարգերի առաջացման Ֆոգտի վարկածը, միաժամանակ պետք է նշել, որ այդ հիպոթեզը այն ձևով, ինչ ձևով կիրառվում է, թույլ չի տալիս մի միասնական սկզբունքով բացատրելու հայերենի բոլոր բարբառների բաղաձայնական համակարգերի առաջացումը։ Այդ հակասությունը առկա է հենց Մալաթիայի, Ռոդոսթոյի և նմանատիպ բարբառների բաղաձայնական համակարգերի առաջացմանը տված բացատրության մեջ։ Իսկապես, եթե բաղաձայնական մյուս համակարգերի բացատրության ժամանակ կիրառված է մի միասնական սկզբունք, այն է՝ շնչեղության կորուստ, որից մի դեպքում ապաշնչեղացած ձայնեղը հարում է խուլին, մյուս դեպքում՝ ձայնեղին, ապա այս դեպքում (Մալաթիայի բարբառի բաղաձայնական համակարգը բացատրելիս) սկզբունքը փոխվում է։ Փոփոխության հիմքում մի կողմից դրվում է ձայնեղության կորուստը, իսկ մյուս կողմից՝ խուլի ձայնեղացումը։ Կիրառվող սկզբունքը չի բացատրում նաև կիլիկյան բարբառներին հատուկ բաղաձայնական համակարգի առաջացումը, որտեղ տեղի է ունենում ոչ միայն շնչեղության կորուստ (քանի որ հին հայերենյան համակարգի

ձայնեղներին վերագրում ենք շնչեղություն), այլև ձայնեղների խլացում և խուլերի ձայնեղացում։ Այլ կերպ ասած կիլիկյան համակարգի առաջացումը հին հայերենի շնչեղ ձայնեղներ ունեցող եռաստիճան համակարգից չի բացատրվում մի միասնական սկզբունքով։ Այնուհետև. կիլիկյան համակարգը թեև նույնպես եռաստիճան է, բայց պատմականորեն չի նույնանում այսպես կոչված, «հարավ-կովկասյան» համակարգի հետ։

Այս հակասությունները հնարավորություն չեն տալիս հայերենի ժամանակակից բարբառների բաղաձայնական համակարգերի առաջացումը բացատրելու մի միասնական օրինաչափությամբ։ Ակնհայտ է, որ դասական հայերենի բաղաձայնական համակարգով (շնչեղ ձայնեղների առկայությամբ՝ bh, p, ph) կարող են բացատրվել բարբառների միայն մի մասի բաղաձայնների փոփոխությունները. մյուս մասը այդ նախահիմքից հնչույթաբանորեն դժվար է բացատրել։ Իսկապես, բոլոր բարբառների համար այդ բաղաձայնական համակարգը հիմք ընդունելու դեպքում, անհասկանալի ու անբացատրելի են մնում, թե ինչպես շնչեղ-ձայնեղների դիմաց մի դեպքում պարզ ձայնեղ հնչյուններ են, մի այլ դեպքում՝ պարզ խուլեր, մի երրորդ դեպքում՝ շնչեղ խուլեր։ Եթե այսպես կոչված՝ տեղաշարժի առաջմղիչ ուժը եղել է շնչեղության կորուստը, ապա արդյունքում պետք է լինեին միայն պարզ ձայնեղներ և պարզ խուլեր (կապաշնչեղանայքն նաև շնչեղ խուլերը), իսկ եթե փոփոխության ազդակը եղել է ձայնեղության կորուստը, ապա պիտի ստացվեին միայն շնչեղ խուլեր և պարզ խուլեր։ Երկու ազդակները միասին նույն համակարգում միաժամանակ չէին կարող գործել, քանի որ արդյունքում կառաջանար բաղաձայնների մի շարք։

Ժամանակակից բոլոր բարբառների բաղաձայնական համակարգերի բացատրության համար բավարար հիմք չէ նաև դասական հայերենի համար բաղաձայնների ավանդական համակարգի ընդունումը (b, p, ph)։ Այդպիսի համակարգի ձայնեղների, խուլերի և շնչեղ խուլերի միջոցով կարող են բացատրվել միայն բարբառների մի մասի բաղաձայնների փոփոխությունները, ըստ որում՝ այն բարբառների, որոնք դուրս են մնում առաջին բացատրությունից։ Համեմատության այս եզրի դեպքում էլ անհասկանալի է, թե ինչպես նույն ձայնեղների դիմաց մի դեպքում շնչեղ ձայնեղ է, մի այլ դեպքում՝ շնչեղ խուլ։

Այսպիսով, ստացվում է, որ ժամանակակից բարբառների բաղաձայնական համակարգերի առաջացումը կարելի է բացատրել, եթե ճիշտ հաշվի առնենք նրանց սերող համակարգերը։

Վերը բերված փաստերի համադրումից կարելի է անել մի կարևոր հետևություն։ Եթե ժամանակակից բարբառների մի մասի բաղաձայնական համակարգերի ծագումը բացատրվում է bh, p, ph եռաստիճան հա-

մակարդով, իսկ մյուս մասինը՝ b, p, ph *համակարգով, նշանակում է, որ արդի բարբառների բոլոր համակարգերի բացատրությունը ճիշտ չէր լինի բխեցնել մի ընդհանուր նախահիմքից։ Հետևաբար ժամանակակից բարբառների բաղաձայնական համակարգերը առաջացել են ինչ-որ ժամանակ՝ զուգահեռաբար գոյություն ունեցած* bh, p, ph, *և* b, p ph *համակարգերից, նրանց մեջ կատարված հետագա փոփոխություններով։ Ավելի հանգամանորեն անդրադառնանք այդ հարցին։*

Մենք գիտենք, որ հին հայերենի բ-*ի դիմաց հայերենի ժամանակակից բարբառները այսօր ներկայացնում են* bh, b, p, ph *հնչյուններ*[14]*։ Եթե սրանք դասավորելու լինենք ըստ շնչեղության և ոչ շնչեղության հատկանիշների, ապա կունենանք* bh, ph *և* b, p *զույգերը, որոնց մեջ մտնող միավորները իրար հակադրվում են նույն հատկանիշներով՝ ձայնեղության ու խլության հատկանիշներով։ Դժվար չէ նկատել, որ այդ զույգերից յուրաքանչյուրի մեջ մտնող միավորները ծագումնաբանական կապի մեջ են միմյանց հետ և որ դրանցում խուլ հնչյունները առաջացել են համապատասխան ձայնեղներից՝ դրանց ձայնեղության կորստով։ Իսկապես, այնտեղ, որտեղ ձայնեղները շնչեղացած են, ձայնեղության կորստից առաջացած պայթականը պահպանել է շնչեղությունը և վերածվել շնչեղ խուլի։ Իսկ այնտեղ, որտեղ ձայնեղ պայթականները շնչեղություն չեն ունեցել, ձայնեղության կորստով առաջացած խուլերը ստացել են պարզ խուլի արտասանություն։ Այդ գործընթացը կարելի է ներկայացնել այսպես.*

BH→PH B→P

Այսպիսով, ամբողջ հայերենի համար, հին ձայնեղ պայթականների պատմական փոփոխությունների հիմքում ընկած է եղել հնչույթաբանական մի հիմնական ազդակ՝ ձայնեղ պայթականների ձայնեղության կորուստը կամ, ավելի ճիշտ, ձայնեղ պայթականների ապաձայնեղացումը։

Այս բացատրության առավելությունը ոչ միայն այն է, որ իր էությամբ պարզ է ու ընդհանրական, այլև որ հնարավորություն է տալիս ճիշտ հասկանալու պայթականների կազմում կատարված բոլոր փոփոխությունները։ Չէ որ ձայնեղներից բացի պատմական փոփոխությունների էին ենթարկվել նաև խուլ պայթականները։ Ինչո՞վ կարելի է բացատրել խուլերի փոփոխությունը։ Ինչպես պարզվում է, այն պայմանավորված է եղել ձայնեղների ապաձայնեղացման երևույթով։ Ձայնեղ պայթականների ապաձայնեղացումը հնչույթաբանական մակարդակում առաջացրել է հնչյունների գործառական ներքին հավասարակշռության խախտման

---

14 *Քանի որ խոսքը բաղաձայնական շարքերի համակարգային փոփոխությունների մասին է, շարադրանքի պարզության համար, ամբողջ շարքերը ներկայացնում ենք* բ, պ, փ *կամ* bh(b), p, ph *պայմանանշաններով (սիմվոլներով)։*

վտանգ։ Ահա այդ վտանգը կանխելու և ներքին հավասարակշռությունը պահպանելու ձգտմամբ է պայմանավորվել ապաձայնեղացմանը հակադրող գործընթացը՝ խուլերի ձայնեղացումը։ Այսպիսով, հայերենի պայթական ու պայթաշփական բաղաձայնների պատմական փոփոխությունների ներքին շարժման ազդակները եղել են ապաձայնեղացման և ձայնեղացման երևույթները, որպես մի միասնական հնչույթաբանական գործընթացի հակադիր բևեռներ։

Վերը շարադրվածից հետևում է նաև, որ մեր բարբառների բաղաձայնական համակարգերի մեջ կատարված փոփոխությունների հիմքում նախապես եղել են երկու տարբերակ։ Դրանք իրարից առանձնապես չեն տարբերվել։ Տարբերությունը եղել է միայն ձայնեղ տարրի շնչեղության և ոչ շնչեղության մեջ, որը հանդես գալով տարբեր տարածքներում՝ հնչույթաբանական արժեք չի ունեցել։ Պարզապես հայոց լեզվի գրաված մի տարածքում բառասկզբի ձայնեղները ունեցել են շնչեղության երանգ, այն դեպքում, երբ մյուս տարածքում այդ նույն բաղաձայնները զուրկ են եղել այդ երանգից։ Այդ երկու համակարգերը, որոնց հետագա փոփոխություններից (ապաձայնեղացմամբ ու ձայնեղացմամբ) առաջացել են ժամանակակից բարբառների բաղաձայնական համակարգերը, կարելի է ներկայացնել այսպես.

I	[bh]	II	[b]
	[p]		[p]
	[ph]		[ph]

Քանի որ բաղաձայնների փոփոխությունները արձանագրվում են դեռևս հայերենի պատմության առաջին փուլում (V դ.), ուստի և այս երկու համակարգերի գոյությունը պետք է վերագրել նախապատմական շրջանին։

Նախահայերենում այս երկու՝ իրար շատ մոտ համակարգերի առաջացումը կարելի է բացատրել երկու կերպ. ա) ենթադրելի է, որ հնդեվրոպական համակարգից հայերենին անցնելու ընթացքում որոշ վայրերում պահպանվել է հին շնչեղ ձայնեղների շնչեղությունը, իսկ այլ վայրերում՝ անհետացել. բ) կարելի է նաև ենթադրել, որ հնդեվրոպական շրջանից ժառանգած շնչեղ ձայնեղները հայերենում նախապես ունեցել են համահայկական բնույթ և միայն հետագայում է, որ բարբառների մի մասում (թերևս եզրային, ինչպես ցույց են տալիս փաստերը) այդ ձայնեղները ապաշնչեղացել են։

Առաջին ենթադրությանը խանգարում է այն հանգամանքը, որ հայերենի այն բարբառները, որոնց առաջացումը բխեցվում է երկրորդ (b, p, ph) տարբերակից, բառամիջի և բառավերջի որոշ դիրքերում (միջձայնավորային և r-ից հետո) հին բ, գ, դ...ի դիմաց համապատաս-

խանաբար ունեն շնչեղ խուլեր, որոնք, բնականաբար, պարզ ձայնեղներից առաջացած չէին կարող լինել։ Եվ քանի որ դրանք կարող էին առաջացած լինել միայն շնչեղ ձայնեղներից, ապաձայնեղացման ճանապարհով, ուստի և նախապատմական շրջանի 2-րդ համակարգում ձայնեղների ապաշնչեղացումը սկզբնական համարել չի կարելի։ Հետևաբար ավելի հավանական է դառնում այդ տարբերակի առաջացման երկրորդ ուղին։

Առհասարակ պետք է կարծել, որ նախապատմական շրջանում, սկզբնապես, հայերենը ունեցել է բաղաձայնական միասնական մի համակարգ, որի մեջ շնչեղ ձայնեղների արտասանությունը հայերի համար եղել է որպես հնդեվրոպական միասնության շրջանից ժառանգած հնչարտաբերական ունակություն։ Այդ համակարգում, ինչպես նշում է Ֆոգտը, էական դեր էր կատարում շնչեղության և ոչ շնչեղության հակադրությունը։ Ըստ որում այդ հակադրության պայմաններում հնդեվրոպական պարզ ձայնեղները դրսևորվում էին ոչ հստակ տարբերակվածությամբ. նրանք հավանաբար ունեին ձայնեղի և խուլի միջին արտասանություն, մի հատկություն, որ հնարավորություն էր տալիս նրանց դրսևորվելու մերթ ձայնեղության և մերթ խլության դերակցիս հատկանիշով։

Միասնության շրջանում ապաձայնեղացման ենթարկվում են նախ բառամիջի և բառավերջի միջձայնավորային և ր-ից հետո ընկած դիրքերի շնչեղ ձայնեղները։ Այդ է պատճառը, որ ձայնեղների դիմաց շնչեղ խուլերի առկայությունը համընդհանուր հայկական երևույթ է՝ բացառությամբ մի քանի վայրերի (Մեղրի, Ագուլիս և այլն)։ Այս գործընթացից հետո է, որ եզրային բարբառներում շնչեղ ձայնեղները սկսում են կորցնել իրենց շնչեղությունը։ Բայց մինչ այդ, ձայնեղների շնչեղության կորուստ կատարվել էր բառամիջի և բառավերջի դիրքերում՝ ընդգրկելով համարյա ամբողջ հայերենը։ Դա հաստատվում է այն փաստով, որ ժամանակակից այն բարբառները, որոնք ունեն շնչեղ ձայնեղներ, դրանք իրացնում են միայն բառասկզբի դիրքում. բառամիջում ու բառավերջում այդ բարբառներում շնչեղ ձայնեղներ չեն արտասանվում։ Այս տեսակետից բացառություն է թերևս Նոր Ջուղայի բարբառը, որի համար նշվում են շնչեղ ձայնեղներ նաև բառամիջի ու բառավերջի դիրքերում[15]։ Եթե դա իրոք այդպես է, ապա հաստատվում է, որ ինչ-որ մի ժամանակ շնչեղ ձայնեղները հանդես են եկել բոլոր դիրքերում։

Հայերենի տարբերակների մի մասում բառասկզբի ձայնեղների շընչեղության կորստով էլ ստեղծվում են բաղաձայնական համակարգերի այն երկու տարբերակները, որոնցից այնուհետև զարգանում են ժամանակակից հայերենի բարբառների բաղաձայնական համակարգերը։

Ինչ վերաբերում է հին գրական հայերենին, ապա պետք է ընդունել,

15 *Տե՛ս Հ.* Աճառյան, *Քննություն Նոր Ջուղայի բարբառի։*

որ նրա հիմքում ընկած է եղել բաղաձայնական համակարգի առաջին տարբերակը։ Այդ նշանակում է, որ նրանում մեսրոպյան այբուբենի բ, գ, դ, ձ, ջ տառերով արտահայտված հնչյունները ունեին շնչեղ ձայնեղների արժեք։ Եվ դա ինքնին հասկանալի է, քանի որ (բացի վերը բերված փաստարկներից) հայերենի այն տարբերակը (կամ տարբերակները), որի վրա բարձրացել է հին գրական հայերենը, եղել է Կենտրոնական Հայաստանի՝ Տարոնի, Այրարատի, Կարինի տարածքում խոսվող լեզուն։ Այսօր էլ այդ նույն վայրերի (Մուշ, Կարին, Ջուղա, Արարատյան) արդի բարբառները պահպանում են բաղաձայնների շնչեղ ձայնեղներով համակարգը։

Վերը մենք ասացինք, որ հայերենի ձայնեղ պայթականների ապաձայնեղացման երևույթը հին է։ Լեզվական որոշակի տվյալներ կան այն մասին, որ հին գրական հայերենի գրի առման շրջանում, նրան զուգահեռաբար գոյություն ունեցող տարբերակներում, ձայնեղ բաղաձայնների շարքը արդեն ենթարկվել էր փոփոխությունների։ Այդ մասին, օրինակ, խմանում ենք Դիոնիսիոս Թրակացու «Արվեստ քերականության» աշխատության հայերեն թարգմանության մեջ բաղաձայնների դասակարգման մեջ թույլ տված մի վրիպումից, երբ դասակարգման մեջ շփոթված են ջ-ի և ճ-ի տեղերը (ջ-ն դրված է խուլերի շարքում, ճ-ն՝ ձայնեղների)։ Կատարված փոփոխությունը մակաբերվում է նաև հունաբան դպրոցի ստեղծած որոշ ածանցների ու կաղմությունների քննությունից։ Այսպես, օրինակ. հունաբանական բաղ և փաղ նույնիմաստ ածանցների գոյությունը փաստորեն նշում է ձայնեղազրկման երևույթի առկայությունը։ Այդ նույն բանն է ապացուցում նաև հունաբանների ստեղծած ապաբարց բառը, որը կազմված լինելով ապա և բարց բաղադրիչներից, իր բարց մասով ստուգաբանորեն կապվում է դարձ արմատի հետ։ Ուստի և ապադարձ բառաձևի փոխարեն ապաբարցը ապացույց է այն բանի, որ այստեղ մենք գործ ունենք ապաձայնեղացման հետ. ըստ որում այդ գործընթացին ենթարկված հնչյուններն էլ եղել են շնչեղ ձայնեղներ և այդ պատճառով է, որ ձայնեղազրկման արդյունքում շնչեղ խուլեր են։

Մի քիչ ավելի ուշ՝ Անանուն Մեկնիչի (VII դար) բազուկ, պազուկ, փազուկ բառաձևերը ակնհայտորեն ցույց են տալիս այն պատմական փոփոխությունները, որ առաջացրել է ապաձայնեղացումը մեր բարբառներում։ Ընդ որում՝ Անանունի շարքի մեջ արդեն առկա են փոփոխությունների երկու ուղղություններն էլ (bh>ph, b>p)։

Այս փաստերը խոսում են այն մասին, որ bh>ph և b>p անցումները հին երևույթներ են և ժամանակագրորեն հասնում են նախապատմական շրջանին, թեև բացառված չեն նաև այնպիսի դեպքեր, երբ փոփոխությունները կատարված լինեն պատմական շրջանում[16]։

16 Տե՛ս նաև Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն։

* * *

Մինչև այժմ մեր խոսքը եղել է ձայնեղ պայթականների բառասկզբի դիրքում կրած փոփոխություններին։ Այս դիրքը համարվում է անկախ և ուժեղ (իրականում էլ այդպես է), քանի որ այս դիրքում է, որ պայթականները առավել հետևողականորեն են դրսևորում իրենց օրինաչափ, համակարգային փոփոխությունները։ Բառամիջի ու բառավերջի դիրքերում պայթականների կրած փոփոխությունների ուսումնասիրությունը հետազոտողների կողմից անտեսվել ու թողնվել է հենց այդ պատճառով։ Այդ դիրքերում արձանագրվող փոփոխություններն իրենց տարընթացություններով հաճախ այնպիսի տպավորություն են թողնում, որ թվում է, թե դրանք հակասում են բառասկզբի դիրքի օրինաչափություններին։

Իրականում պայթականների բառամիջի և բառավերջի փոփոխությունները չեն հակասում բաղաձայնների հնչյունափոխական ընդհանուր օրինաչափություններին, թեև ինչ խոսք, որ այդ օրինաչափությունները այստեղ չեն դրսևորվում նույնպիսի հետևողականությամբ և ամենուրեք չէ, որ բառամեջն ու բառավերջը համընթաց են բառասկզբի փոփոխություններին։ Այնուամենայնիվ կան առանձին բարբառներ ու բարբառախմբեր, ուր ձայնեղ պայթականները տարբեր դիրքերում հանդես են բերում նույն օրինաչափությունը։ Այսպես, օրինակ. Ագուլիսի, Մեղրու, Կարճևանի խոսվածքներում ձայնեղ պայթականները իրենց ձայնեղությունը պահպանում են ոչ միայն բառասկզբի, այլև բառամիջի ու բառավերջի դիրքերում։ Ձեռ ավելին, այս խոսվածքներում ձայնեղները պահպանվում են այնպիսի դիրքերում (օրինակ՝ ր *ձայնորդից հետո), որը բացառված է այլ բարբառներում։ Այսպես, ունենք՝* արդի>ñըրդä, ñըրդö, բöրդ>բöրդ, արջ>առջ̌, օռջ̌, խաբել>խöբիլ, ձագ>ձէգ, մարդ>մարդ, մօրդ, շաբաթ>շէբöթ, վարդ>վöրդ, ուռձ>ուրձ *և այլն*[17]*։ Այս նշանակում է, որ օրինաչափությունն այստեղ ընդհանրական է և բառասկզբի և ոչ բառասկզբի դիրքերի համար հավասարապես։ Նույնը կարելի է ասել նաև այլ խմբակցությունների խոսվածքների մասին։*

Այսպես է նաև արևմտյան տարածքի այն բարբառներում (Տիգրանակերտ, Մալաթիա, Ռոդոսթո և այլն), որոնք հին ձայնեղների դիմաց շնչեղ խուլեր ունեն ոչ միայն բառասկզբի, այլև բառամիջի ու բառավերջի դիրքերում (բան>փան, դադար>թաթար, գարի>քարի, ջորի>չորի, ձի>ցի *և* խաբել>խափել, ագի>աքի, կարդալ>գարթալ, ոջիլ>օչիլ, ուռձ>օրց *և այլն)։*

---

17 *Այս նույն խոսվածքների բարբառաշարում հանդիպող առանձին բառերը, որոնց մեջ արձանագրվում են բառամիջի ու բառավերջի ձայնեղների խլացում կամ շնչեղ խլացում, այլ բարբառներից (կամ գրական լեզվից) անցած փոխառություններ են և ոչնչով չեն խախտում նշված օրինաչափությունը։*

Այսպիսով բարբառների ձայնեղ պայթականների բառասկզբի փոփոխության օրինաչափությունները հիմնականում տարածվում են նաև բառամիջի և բառավերջի դիրքերի վրա։ Հարցը այստեղ միայն այն է, որ եթե բառասկզբի դիրքում այդ անցումները խիստ օրինաչափ են և ընդգրկում են հայտնի բոլոր օրինակները, ապա որոշ դեպքերում (բարբառից բարբառ տարբեր ուժգնությամբ) բառամիջի ու բառավերջի դիրքերում այդ օրինաչափությունը խախտվում է ի հաշիվ․ շնչեղ խուլերի։

Եվ եթե այդ երևույթը (բ>ph) ինքնին հասկանալի բան է համարվում բառասկզբում շնչեղ ձայնեղներ (կամ համապատասխանաբար՝ շնչեղ խուլեր) ունեցող համակարգերում (բուրդ>բ՛ուրթ, փուրթ և մարդ>մարթ), ապա այդ նույն բանը այլ համակարգերում կարծես թե ինչ-որ չափով հակասում է ընդհանուր օրինաչափությանը։ Այդ հակասությունը, ինչպես նաև բառամիջի և բառավերջի դիրքերում ձայնեղների տարաբընույթ փոփոխությունները արդյունք են այն բանի, որ դարերի ընթացքում շատ հաճախ միևնույն կամ նմանատիպ բառերում շերտավորվել են տարբեր բնույթի հնչյունափոխական օրինաչափություններ։ Այս տեսակետից բառամիջի և բառավերջի ձայնեղների շնչեղ խլացումը թերևս այլ հնչյունափոխական երևույթների մեջ ամենահինն է, որ տեղի է ունեցել դեռևս այն ժամանակներում, երբ ձայնեղները շնչեղ արտասանություն ունեին նաև բառամիջի և բառավերջի դիրքերում։ Թերևս այս երևույթի խոր հնությամբ պետք է բացատրել նրա լայն տարածվածությունը տարբեր բաղաձայնական համակարգեր ունեցող բարբառներում[18]։

* * *

Մինչև այստեղ մեր խոսքը հայերենի ձայնեղ պայթականների շուրջն էր։ Բայց հայտնի է նաև, որ ժամանակակից բարբառներում փոփոխության ենթարկվել են ոչ միայն ձայնեղները, այլև խուլերը։ Ճիշտ է, սրանց փոփոխություններին հատուկ չէ այն բազմազանությունը, որ բնորոշ է ձայնեղներին, բայց համենայն դեպս, այստեղ ևս գործում են որոշակի օրինաչափություններ։

Ինչպես արդեն վերը ասվել է, հին հայերենի և հնդեվրոպական բաղաձայնական համակարգերի փոխհարաբերության հարցերի քննարկման ժամանակ առաջ է քաշվում նաև այն վարկածը, թե գրաբարյան պ, կ, տ, ծ, ճ, տառերով արտահայտված հնչյունները, քանի որ հնդեվրոպական ձայնեղների համեմատ կատարել էին մի լրիվ տեղաշարժ, ուստի և այն բարբառները, որոնց մեջ հին հայերենյան խուլերին (կամ հնդեվրո-

18 Մենք այստեղ նկատի չունենք շնչեղության դրսևորման մասնակի այն դեպքերը, որոնք որպես արտաքին ազդեցությունների հետևանքներ (հարևան բարբառներից, գրական լեզուներից) շատ սովորական են լեզուների պատմության մեջ։

պական ձայնեղներին) համապատասխանում էին ձայնեղ հնչյուններ (b, g, d, ...), իրենցից ներկայացնում են ավելի հին համակարգ, քան գրաբարյան համակարգն էր։ Այլ կերպ ասած, ըստ այդ վարկածի, հին գրական հայերենի պ, կ, տ, ծ, ճ-ի դիմաց բարբառների մի մասում հանդես եկող b, g, d, j, ǰ բաղաձայնները համարվում են հնդեվրոպական ձայնեղների անմիջական շարունակությունը։

Արտաքնապես, իսկապես, այնպես է թվում, թե հայերենի բարբառների մի մասում հանդես եկող ձայնեղները հնդեվրոպական նույն հընչյունների արտահայտություններն են, երբ մանավանդ հաշվի են առնվում միայն հնդեվրոպական ծագման բառերը։ Այդ վարկածը ավելի հրապուրիչ է դառնում հատկապես այն դեպքերում, երբ նույն համակարգում առկա են նաև հնդեվրոպական շնչեղ ձայնեղները ներկայացնող հնչյունները։

Ինչքան էլ այդ «ցանկալի» լինի, իրականությունն այլ է։ Հնդեվրոպական ձայնեղների դիմաց բարբառների մի մասում ձայնեղների առկայությունը արդյունք է ետադարձ տեղաշարժի, որ կատարվել է հնդեվրոպական ձայնեղների խլացմամբ հայերենում և ապա՝ կրկին ձայնեղացմամբ՝ բարբառներում։ Այդ բանը շատ լավ երևում է հատկապես հին շրջանից վկայված փոխառյալ բառերի մեջ, երբ նրանցում առկա խուլ պայթականները լրիվ համընկնում են փոխատու լեզվի խուլերին, մինչդեռ հայերենի ժամանակակից բարբառների մի մասում դրանք հնչյունափոխված են ձայնեղների։ Բերենք մի քանի բնորոշ օրինակներ։ Այսպես. պատիւ <պհլ. *pativ, պանիր <պհլ. panīr, panēr, պահ (պահել) <պհլ. pahr, pas, տակ «հատակ, տակը» <պհլ. *tak, տաշտ <պհլ. tašt, տապակ (տապակել) <պհլ. tāpak, կաթողիկոս <հուն. καθολικός, կախարդ <զնդ. kaxvarəda «կախարդ», կաղանդ <հուն. κάλανδαι «ամանոր», կամ (կամենալ) <պհլ. kām «կամք», ծնծղայ <ասոր. şeşşəla, ծոբրին <ասոր. şaδrā, ծոմ <ասոր. şom, ճակատ <պհլ. čakāt, ճանկ ‖ ճանգ <պհլ. čang, ճար «հնար, միջոց, դարման» <պհլ. čar և այլն։

Ինչպես կարելի է նկատել, այս և նման բառերում, փոխատու լեզուների խուլ հնչյունները հայերենում համապատասխանաբար տառադարձվել են պ, տ, կ, ծ, ճ տառերով։ Նույնիսկ մի քանի դեպքերում թեև օտարլեզվյան հնչյունի տառադարձությունը հայերենում ճշգրիտ չէ (օրինակ պհլ. č -ն ճ-ով), սակայն այդ «խախտումը» առկա է խլության սահմաններում[19]։

Հայերենի այն բարբառները, որոնք իբր թե հնդեվրոպական ձայնեղները պահել են անվթար, վերը բերված փոխառյալ բառերի խուլերի դի-

---

19 Անշուշտ, բերված բառերը հայերենի մեջ են մտել տարբեր պատմական ժամանակներում, ուստի և բնական է, որ նրանք արտահայտում են փոխառման ժամանակի

մաց ևս ունեն ձայնեղ հնչյուններ. նույնիսկ այն բոլոր դեպքերում, երբ փոխատու լեզվում č-է կամ ş: Այնպես որ բարբառներում կատարված հետագա փոփոխությունները կարող են բացատրվել միայն հին հայերենյան արտասանական հիմքից ելնելով: Խարբերդի, Նոր Նախիջևանի, Պոլսի, Տիգրանակերտի, Սեբաստիայի, Ասլանբեկի, Հաճընի, Համշենի, Զեյթունի, Սվեդիայի և մի շարք այլ բարբառներ, որոնք հին հայերենի պ, կ, տ, ծ, ճ *տառերով արտահայտված հնչյունների դիմաց հանդես են բերում* b, g, d, j ǰ *ձայնեղ պայթականներ, նույնպիսի հնչյունափոխության են ենթարկում նաև փոխառյալ բառերի խուլ պայթականներն ու պայթաշփականները: Վերը նշված փոխառյալ բառերը հիշյալ բարբառներում ունենում են հետևյալ հնչյունական արտահայտությունը՝*
բաղիվ, բ^ա^ղիվ, բաղէվ. բաճիr, բաճեr, բէճիr. դաբգել, դաբգիլ. բաճել, բայէլ, բէճէլ, գաpօղիգօս, գաղաճդ, գաղաճp, գաղօճդ, գաղուճդ, գամf, գօմf, ձճձղա, ձճձղիգ, ձաprիճ, ձայճիճ, ձօմ, ջագաղ, ջագօդ, ջագուդ, ջաճգ, ջօճգ. ջաr, ջօյ[20]:

Ինչպես կարելի է տեսնել բերված օրինակներում, սրանք բոլորն էլ միասնական են մեզ հետաքրքրող կետում. բառասկզբի հնչյունները, որոնք փոխատու լեզուներում և հին հայերենում խուլ պայթականներ էին, այստեղ ներկայանում են որպես ձայնեղներ: Հետևաբար ոչ մի կասկած լինել չի կարող, որ այստեղ մենք գործ ունենք պատմական հնչյունափոխության հետ, երբ հին խուլերը պատմական զարգացման ընթացքում ձեռք են բերել ձայնեղություն: Եվ քանի որ հնչյունական օրենքները միասնական են և գործում են բոլոր բառերի համար, դրանից պետք է եզրակացնել, որ հնդեվրոպական b, g, d, ...*-ին համապատասխան հնչյուններն էլ հայերենում* (պ, կ, տ...) *խուլ էին, որոնք փոխառյալ խուլերի հետ միասին հետագայում ենթարկվեցին միևնույն փոփոխության:*

Այսպիսով, հայերենի համար պետք է ընդունել հնդեվրոպական պարզ ձայնեղների տեղաշարժը դեպի խուլերը:

* * *

Խուլերին հատուկ է միայն մի հնչյունական անցում. դա նրանց ձայնեղացումն է: Ըստ որում այս անցումն էլ իր հերթին համընդհանուր բնույթ չի կրում և վայրից վայր ունի դրսևորման տարբերություններ: Ընդհանուր օրինաչափությունն այն է, որ եթե բարբառների մի մասում հին խուլերը (պ, կ, տ, ծ, ճ) *ձայնեղացել են, ապա մյուս մասում մնում են անփոփոխ:*

հնչական առանձնահատկությունները (որոնց մասին մենք ճշգրիտ տեղեկություններ չունենք): Բայց նույնիսկ այս դեպքում էլ հին գրական հայերենում մեզ հետաքրքրող հնչյունները այնուամենայնիվ ներկայանում են որպես խուլեր:

20 *Նույն բառի հնչյունական տարբերակները հատուկ են տարբեր բարբառների:*

Փոփոխությունների հիմնական ազդակը պետք է տեսնել ձայնեղ պայթականների ապաշնչեղացման գործընթացի մեջ, որի հետևանքով բաղաձայնական համակարգում առաջացած (կամ առաջացող) հնչույթաբանական անհավասարակշռության վտանգը պատճառ է դարձել հակազդող մի այլ երևույթի առաջացմանը՝ խուլերի ձայնեղացմանը։ Հայերենի պատմական հնչյունաբանությունից կարելի է բերել նման շատ օրինակներ (ճ>խ անցմանը հակազդող խ>ճ փոփոխության դեպքերը, լայն արտաբերություն ունեցող ձայնավորների աստիճանական նեղացմանը հակազդող հակառակ երևույթը՝ նեղից դեպի լայն արտաբերության անցումը և այլն), որտեղ փոփոխությունները ուղեկցվում են երկու հակադիր ազդակների միջոցով։

Այս մեկնաբանությունից հետևում է նաև, որ խուլերի ձայնեղացումը հաջորդում է ձայնեղների խլացմանը։ Ըստ որում՝ հակադարձ շարժումը (խուլերի ձայնեղացումը) սկսվել է նախ բառամիջում՝ հիմնականում միջձայնավորային դիրքում։ Հնչյունաբանական առումով այս դիրքում խուլերի ձայնեղացումը ինքնին հասկանալի մի բան է։ Հնչյունական շղթայում խուլ բաղաձայնի արտաբերմանը նախորդող և հաջորդող պահերին ձայնավորների ձևավորմանը մասնակցող ձայնալարերի աշխատանքը անընդմեջ շարունակվում է նաև խուլ պայթականի արտաբերման ժամանակ, որի հետևանքով էլ բաղաձայնը ստանում է ձայնեղ արտասանություն։ Այս տեսակետից ուշագրավ է այն փաստը, որ մի շարք բարբառներում (Ախալքալաք, Ախալցխա, Բոգդանովկա և այլն), որտեղ բառամիջի դիրքում խուլերի ձայնեղացումը օրինաչափ երևույթ է, բառավերջում այդ նույն բաղաձայնները արտաբերվում են առավելապես խուլին մոտ հնչմամբ և միայն բառի թեքման ժամանակ, երբ այդ խուլ բաղաձայնը հայտնվում է երկու ձայնավորների միջև, արտասանվում է ձայնեղ հնչյունի որակով (մատ–մադի)։ Նման երևույթ արձանագրվում է նաև խոսքի հնչյունական շղթայում, երբ, նույնիսկ բառասկզբի խուլ պայթականը, որը անկախ դիրքում (բառասկզբում) պահպանում է իր խլությունը, ձայնավորների կամ ձայնեղ հնչյունների հաջորդելիս՝ ձայնեղանում է (տուն, բայց՝ էգա դուն)։ Խոսքի հնչյունական շղթայում կատարվող նման երևույթ արձանագրված է մի շարք բարբառներում (Երզնկա, Ակն, Շապին-Գարահիսար և այլն)[21]։

Խուլերի բառամիջյան ձայնեղացումը կանխվում է խուլ շփականներից հետո ընկած դիրքում (ճասկանալ>ճասկնալ), որ նշանակում է, թե խուլերի ձայնեղացումը հնչյունաբանորեն իսկապես պայմանավորված է արտասանական շղթայում նրանց գրաված տեղով։

Որ խուլերի ձայնեղացումը հետևանք է ձայնեղների խլացման, որ-

---

21 Տե՛ս, օրինակ, Կոստանդյան Դ., Երզնկայի բարբառը, Երևան, 1979, էջ 34։

պես վերջինիս հակադրող մի երևույթի և որ այն սկսվում է բառամիջի և բառավերջի դիրքերում, շատ լավ երևում է Ղարաբաղի և Սյունիքի տարածքի բարբառներում։ Հայտնի է, որ նշված վայրերում ձայնեղ պայթականներն ու պայթաշփականները բառի մեջ գրաված բոլոր դիրքերում խլացել են (բան>պան, պէն)։ Խուլերը այս դեպքում հիմնականում անփոփոխ են։ Բայց եթե իրենց այդ հատկությունը հետևողականորեն պահպանում են բառասկզբում, ապա այդ նույնը չի կարելի ասել բառավերջի դիրքի համար, որտեղ հանդիպում են խուլերի ձայնեղացման ոչ սակավ դեպքեր (ծաղիկ>ծաղէգ, կծիկ>կըծէգ, տիկ>տեգ և այլն)։

Կարևոր է նաև նշել, որ հայերենի այսօրվա բարբառներում կարելի է տեսնել խուլերի ձայնեղացման գործընթացի համարյա բոլոր փուլերը։ Որոշ վայրերում այն մնացել է իր սկզբնական-նախնական վիճակում, ընդգրկելով միայն բառամիջի դիրքի խուլերը, այն էլ հատ ու կենտ բառերում։ Զարգացման հաջորդ փուլում ձայնեղացումը ընդարձակում է իր ազդեցության ոլորտը՝ ներառնելով բառամիջի և բառավերջի բոլոր դիրքերը, բացառությամբ խուլ շփականներից հետո ընկած դիրքը։ Այնուհետև խուլերի ձայնեղությունը դառնում է գերակշռող երևույթ և այն տարածվում է նաև բառասկզբի դիրքի վրա։ Այս երևույթի բարձրագույն կատարյալ վիճակը այն է, երբ խուլերի ձայնեղացման երևույթը ընդգրկում է, առանց բացառության, բոլոր դիրքերը, այդ թվում նաև խուլ շփականներից հետո ընկած դիրքը։ Այսպիսի «կատարյալ» ձայնեղացմամբ ներկայանում են Անտիոքի տարածքի խոսվածքները։

* * *

Հայերենի բաղաձայնների մեջ կատարված պատմական փոփոխությունների մասին դատում ենք ոչ միայն ժամանակակից բարբառների բաղաձայնական համակարգերի համեմատական քննությամբ, այլև գրավոր աղբյուրներում պահպանված անմիջական տեղեկությունների կամ նրանցում արձանագրված լեզվական փաստերի միջոցով։

Խուլերի ձայնեղացման գործընթացը ենթադրվում է, որ պիտի կատարված լինի պատմական շրջանում։ Նկատի ունենալով այն, որ Անանուն Մեկնիչի կողմից բերվող բազուկ, պազուկ, փազուկ բառաձևերի մեջ բառավերջի փոփոխություն չի արձանագրվում, դրանից եզրակացվում է, որ խուլերի փոփոխությունը դեպի ձայնեղները սկսվել է այդ վկայությունից հետո ընկած շրջանում (VII դ. հետո)։ Սա, իհարկե, լուրջ փաստարկ լինել չի կարող, քանի որ Անանունի նպատակն է եղել նշելու բառասկզբի լծորդական անցումների գոյությունը։

Առաջին իսկ ձեռագրերն ու վիմական արձանագրությունները տալիս են ձայնեղ ու խուլ պայթականների ու պայթաշփականների ուղղա-

գրական այնպիսի շեղումներ, որոնք վերաբերում են հենց նրանցում կատարված փոփոխություններին։ Միևնույն բառերի գրության այնպիսի ձևեր, ինչպիսիք են, օրինակ՝ Սմբատ և Սմպատ, Աբլղարիբ և Ապլղարիպ (արբ. Abu-ul- γarib), ցանկացող և ցանգացող, ընտանի և ընդանի, գանձ և գանծ, բուրջ և պուրճ (պրսկ, արբ. būrj և այլն, և այլն), որտեղ լծորդվում են բ : պ, գ : կ, դ : տ, ձ : ծ, ջ : ճ ձայնեղ ու խուլ պայթականներն ու պայթաշփականները, խոսում են այն մասին, որ բաղաձայնների տեղաշարժեր կատարված էին նաև բառամիջի ու բառավերջի դիրքերում։ Բերված օրինակներից հատկապես փոխառյալ բառերի տարբեր գրչությունները շատ որոշակիորեն արտահայտում են մեզ հետաքրքրող երևույթը։ Իսկապես, արբ. պրսկ. būrǰ բառի հայերենյան բուրջ և պուրճ տառադարձություններից առաջինը, եթե իր գրությամբ համընկնում է մայր ձևի հետ, ապա երկրորդը արձանագրում է ոչ թե b և ǰ հնչյունների խլացումը, այլ ընդհակառակը՝ պ-ի և ճ-ի ձայնեղացումը, որովհետև վերջիններս տվյալ համակարգում ունեին ձայնեղ հնչյունների արժեք և արտահայտում էին b և ǰ բաղաձայնները։

Միջին հայերենի շրջանում այս կարգի ուղղագրական շեղումները շատ առատ են և իրենց մեջ պարունակում են համարյա այն բոլոր փոփոխությունները, որոնք արձանագրվում են մեր այսօրվա բարբառներում։

Խուլերի՝ բառամիջի ու բառավերջի դիրքերում կրած օրինաչափ փոփոխությունների մասին են վկայում նաև այն համակարգային ընդհանուր փոփոխությունները, որոնք առհասարակ արձանագրվում են հայերենի բաղաձայնական համակարգում՝ միջին հայերենի շրջանում։ Այդ փոփոխությունները այստեղ դրսևորվում են ուղղագրական շեղումների և տառադարձական անկանոնությունների միջոցով, որոնք արտաքնապես ոչ մի օրինաչափության չենթարկվող ու քաոսային երևույթների տպավորություն են թողնում։ Բայց իրականում այդպես չէ։ Թե ինչ ձևով ու եղանակներով կարելի է իմաստավորել միջնադարյան գրավոր աղբյուրներում արձանագրվող ուղղագրական այդ շեղումներն ու տառադարձական անկանոնությունները, այդ մասին մանրամասնորեն խոսվում է «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության»[22] աշխատության «Հնչյունաբանություն» բաժնում, որտեղ այդ եղանակների կիրառմամբ ու առանձին սկզբնաղբյուրների լեզվական նյութի քննությամբ մեր լեզվի պատմության միջին փուլի համար առանձնացվում են մի շարք բաղաձայնական համակարգեր։ Այդ համակարգերի համառոտ նկարագրությունն այստեղ լրացուցիչ լույս կսփռի պայթականների ու

---

22 «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», 1972, էջ 111—112։

պայթաշփականների ոչ միայն բառասկզբի, այլև բառամիջի ու բառավերջի փոփոխությունների վրա։

Այդ համակարգերից մեկը, որը ընկած է նաև կիլիկյան գրական հայերենի հիմքում, հանդես է գալիս մի այնպիսի եռաստիճանությամբ, ուր հին ձայնեղ պայթականները փոխվել էին խուլերի, իսկ խուլերը՝ ձայնեղների։ Այսպես՝

[b]<պ [p]<բ [ph]<փ

Այս համակարգի գոյությունը երևում է հետևյալ օրինակներից, երբ մի կողմից ունենք տառադարձված՝ տուպլ<double, պարոն<baron, և մյուս կողմից՝ բլայր<plaid, բրվլին<privilge և այլն[23]։

Առանձնանում է նաև եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական մի համակարգ, որի մեջ ձայնեղ, խուլ ու շնչեղ խուլ հպականները պահպանվել էին անփոփոխ։

[b]<բ [p]<պ [ph]<փ

Այս համակարգը թեև իր արտահայտման ձևերով համընկնում է ավանդականի հետ, բայց վերը նկարագրված կիլիկյան բաղաձայնական համակարգի ֆոնի վրա, որտեղ ձայնեղներն ու խուլերը գրության մեջ արտահայտվում էին իրենց հին արժեքներին հակառակ գրանշաններով, այս եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական համակարգը իրեն բնութագրում է նրանով, որ օտարլեզվյան հնչյունները ներկայացնում է հայերենի գրերի հին համապատասխանություններով։ Այսպես, baron>բարոն (Վայոց ձորի արձանագրություններում), bürǰ>բուրջ, duc>դուկ (Անիի արձանագրություններում), gunahkhar>գունահքար և այլն, և այլն։ Սա բաղաձայնական այն համակարգն է, որ այսօր ընկած է արևելահայ նոր գրական լեզվի հիմքում։

Երրորդ բաղաձայնական համակարգը ևս բնութագրվում է եռաստիճանությամբ, բայց նախորդից տարբերվում է նրանով, որ այստեղ, բառասկզբում՝ ձայնեղի դիմաց ունենք շնչեղ ձայնեղ, իսկ բառամիջում ու բառավերջում՝ միայն պարզ ձայնեղ՝ առաջացած հին ձայնեղից ու խուլից։ Հետևաբար եռաստիճանությունը դրսևորվում է միայն բառասկզբի դիրքում.

[bh]<բ [p]<պ [ph]<փ

բառամիջի դիրքում՝

[b]<բ, պ [ph]<փ

Բառասկզբի և բառամիջի ձայնեղների արտասանական տարբերությունը դրսևորվում է այդ երկու դիրքերում օտարլեզվյան ձայնեղների

---

23 Շնչեղ խուլերի համար օրինակներ չեն բերվում, որովհետև դրանք ամեն տեղ էլ բառասկզբում մնում են անփոփոխ։

տարբեր տառադարձություններով. բառասկզբում՝ հին ձայնեղներն արտահայտող տառերի, բառամիջում ու բառավերջում՝ խուլերը արտահայտող տառերի միջոցով. այսպես՝ բեխապար<bixabar, բետար<bidar, բիմար<bimar, դովլաթ<duvlath և այլն, բայց և թաճ<taǰ, ղալպ <qalb, մեճլիս<maǰlis, ջալատ<ǰallad և այլն, և այլն։

Եթե այս տառադարձությունների մեջ օտարլեզվյան ձայնեղ պայթականները արտահայտված են հայերենի խուլերի միջոցով, այդ նշանակում է, որ այդ խուլերը (տառերը) այս գրքում ունեին ձայնեղ հնչյունների արժեք։ Մյուս կողմից՝ եթե այդ նույն ձայնեղները (օտարլեզվյան) բառամիջի և բառավերջի գրքերում չէին արտահայտվում հայերենի ձայնեղների (տառերի) միջոցով՝ այդ նշանակում է, որ այս երկու գրքերի ձայնեղ հնչյունները իրենց բնույթով տարբեր էին։ Հակառակ դեպքում ոչ մի անհրաժեշտություն չկար տարբեր գրքերում կիրառել տառադարձության տարբեր սկզբունքներ։ Այդ տարբերությունը այլ բան լինել չէր կարող, քան ձայնեղ պայթականների շնչեղության և ոչ շնչեղության տարբերությունը։

Այսպիսի համակարգ արձանագրվում է, օրինակ, Կոստ. Երզնկացուց մեզ հասած տաղերի վաղ ընդօրինակություններում։ Այսօր այդ համակարգը պահպանված է օրինակ. Մշո, Կարնո, Արարատյան բարբառի որոշ խոսվածքներում։

Եվ վերջապես՝ չորրորդ համակարգը, որը հնարավոր է լինում առանձնացնել ըստ գրավոր աղբյուրների լեզվական նյութի, դա երկաստիճան խլացուրկ մի այնպիսի համակարգ է, որտեղ կան ձայնեղներ՝ առաջացած հին խուլերից և կան շնչեղ խուլեր, որ մի կողմից հին շնչեղ խուլերի շարունակությունն են և մյուս կողմից առաջացել են հին ձայնեղներից։ Այսպես՝

[b]<պ [ph]<բ, փ

Նման համակարգ պարունակող ձեռագրերը օտար բառերի տառադարձման ժամանակ, մի կողմից՝ այդ լեզուների ձայնեղ բաղաձայնները ներկայացնում են հայերենի խուլերի միջոցով (պուրճ<būrǰ, պապ< bab, պուխար<buxar, ճուլապ<julab և այլն), իսկ մյուս կողմից օտարլեզվյան շնչեղ խուլը երբեմն-երբեմն (շփոթմությամբ) արտահայտում են հայերենի ձայնեղի միջոցով (thaza>դաժա, thathar>դադար «թաթար ժողովրդի անունը», hakhim>ճագիմ և այլն. զուգահեռաբար նաև թաժա, թաթար, ճաքիմ)։ Նույն բանը նկատելի է նաև հայերեն բառերում՝ բցուն՝ փոխ. փցուն («փցուն գրիչ»), Դադեոս՝ փոխ. Թադեոս։ Կամ կատարված հնչյունափոխությունը պարզապես արտահայտվում է ըստ տառի իրական արժեքի. Թաւիթ (<Դաւիթ), Քրիգոր (Գրիգոր) և այլն։

Այսպիսի համակարգ բացահայտվում է, օրինակ, միջնադարյան նշանավոր բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացու աշխատությունների ձեռագրերում։ Այսօր այս համակարգը առկա է Մալաթիայի, Ռոդոսթոյի, Տիգրանակերտի և այլ բարբառներում։ Այդ համակարգը ընկած է նաև արևմտահայ գրական լեզվի արտասանության հիմքում։

Այս համակարգերի նկարագրությունը ինքնին ցույց է տալիս, որ խուլերն ու ձայնեղները օրինաչափ փոփոխությունների ենթարկվել էին ոչ միայն բառասկզբի, այլև բառամիջի ու բառավերջի դիրքերում։ Կարծում ենք, որ Անանունի բագուկ, պագուկ, փագուկ փաստի մեջ ոչ միայն պետք է տեսնել բառասկզբի դիրքի փոփոխությունները, այլև բոլոր դիրքերում՝ որպես համակարգային օրինաչափություն։ Այն, որ Անանունի օրինակներում բառավերջի հին խուլի փոփոխությունը գրով արտահայտված չէ, դա դեռ ոչինչ չի նշանակում, քանի որ հեղինակը տվյալ դեպքում նպատակ է ունեցել շեշտել բաղաձայնների բուն փոփոխության փաստը և շեշտը դրել է բառասկզբի բ∼պ∼փ հերթագայության վրա, որպես դրանց առավել տիպական դրսևորման վրա։

Վերը նկարագրված համակարգերը (որոնք, իհարկե բոլորը չեն. միջին հայերենի շրջանում պետք է ենթադրել բոլոր յոթ համակարգերի գոյությունը) ապացուցում են, որ բաղաձայնների լծորդական փոփոխությունը հայերենում հին երևույթ է և ամենայն հավանականությամբ, որպես համակարգային փոփոխություններ դրանք լրիվ ձևավորվել են հին գրական հայերենի ետդասական շրջանում։ Այդ միտքը հուշվում է հենց այն պարզ իրողությամբ, որ նախ՝ դասական հայերենում գրանցված բառերը պահպանում են պայթականների ու պայթաշփականների ձայնեղ արտասանությունը բառի մեջ գրաված բոլոր դիրքերում, մինչդեռ միջին հայերենի հենց առաջին շրջանում դրսևորվում են դրանց համակարգային փոփոխությունները[24]։

Այսպիսով, ինչպես գրավոր աղբյուրները, այնպես էլ ժամանակակից բարբառների համեմատական ուսումնասիրության արդյունքները գալիս են հաստատելու, որ հայերենի պայթական ու պայթաշփական բաղաձայնների մեջ կատարված փոփոխությունները (համակարգային և ո՛չ մասնակիորեն արտահայտված) պատմականորեն առաջացած երևույթներ են։

---

24 Գ. Բ. Ջահուկյանը իր «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ V դարի հայ բարբառների բաղաձայնական համակարգերում արդեն տեսնում է ձայնեղների խլացման բոլոր աստիճանները։ Խուլերի ձայնեղացումը ընդունում է որոշ վերապահությամբ, այն էլ բառամիջի և բառավերջի դիրքերում՝ ր-ին հաջորդելիս, ձայնավորների միջև և բառավերջում՝ ետձայնավորային դիրքում։ Այս նշանակում է, որ բառասկզբի խուլերի ձայնեղացումը Ջահուկյանը համարում է միջին հայերենյան հատկանիշ։ Տե՛ս նշվ. աշխ. էջ 163—164։

Պայթականների ձայնեղ ու խուլ շարքերի փոփոխությունների ընդհանուր պատկերը ներկայացնելուց հետո՝ ավելորդ չենք համարում տալ այդ փոփոխությունների ժամանակագրական հաջորդականությունն այնպես, ինչպես այն պատկերացնում ենք։

Նախապատմական շրջանի ամենահին վիճակը, որից հետագայում սկսվել են փոփոխությունները, եղել է եռաստիճան համակարգը (ձայնեղներ, խուլեր, շնչեղ խուլեր), որտեղ ձայնեղները բառի մեջ գրաված բոլոր դիրքերում ունեցել են շնչեղ ձայնեղ արտասանություն։ Ըստ որում՝ շնչեղության հատկանիշը հնդեվրոպական միասնության շրջանից ժառանգած արտասանական առանձնահատկություն էր, որը տարածվում էր նաև փոխառյալ բառերի ձայնեղների արտասանության վրա։ Այսօր էլ, այն բոլոր բարբառները, որոնք բառասկզբի դիրքում ունեն շնչեղ ձայնեղներ, այդ դիրքում ձայնեղները արտաբերում են շնչեղությամբ՝ անկախ բառի ծագման և փոխատու լեզվում ձայնեղների հնչման բնույթից[25]։

Եռաստիճանության մյուս շարքում հանդես են եկել շնչեղ խուլերը (որոնք համապատասխանում էին հնդեվրոպական շնչեղ խուլերին ph > ph)․ սրանք շնչեղ ձայնեղներին հակադրվել են միայն իրենց խլությամբ (ոչ ձայնեղությամբ)։

Պայթականների այս երկու շարքերի համեմատությամբ՝ երրորդ շարքը իր արտասանական որակով առավելապես հակվել է դեպի խլությունը և առաջին երկու շարքերին հակադրվել է իր ոչ շնչեղությամբ։ Ծագումնաբանորեն այս շարքի միավորները գալիս են հնդեվրոպական պարզ ձայնեղներից։

Եռաստիճան այս համակարգի (bh : ph :: P) մեջ փոփոխության առաջին միտումները սկսվում են հայերենի գրավոր շրջանին անմիջապես նախորդած փուլում։ Այդ միտումը նախ սկսվում է բառամիջի միջձայնավորային և r-ից հետո ընկած դիրքերում, որտեղ շնչեղ ձայնեղները աստիճանաբար կորցնում են իրենց ձայնեղությունը և փոխարկվում շնչեղ խուլերի։ Հայերենի գրի առման պահին այդ երևույթը դեռևս շատ մասնակի բնույթ ուներ և հավանաբար սկսվել էր ոչ գրավոր լեզվի հիմքում ընկած տարբերակում։ Սակայն դատելով մեր այսօրվա բարբառների տվյալներով, որոնց մեջ, անկախ բառասկզբի բաղաձայնի

25 Շնչեղ ձայնեղներ ունեցող բարբառներում, բառասկզբի դիրքում, շնչեղ ձայնեղների կողքին պարզ ձայնեղների ընդունումը, որոնք իբր թե բաշխվում են՝ առաջինները հնդեվրոպական ծագման, իսկ երկրորդները՝ փոխառյալ բառերում, ճիշտ չէ։ Նման տարբերակման նպատակն է եղել հիմնավորել շնչեղ ձայնեղների հնդեվրոպական ծագումը։ Իրականությունն այն է, որ բառասկզբի բոլոր ձայնեղ պայթականները, անկախ նրանց ծագումից, հիշյալ բարբառներում ունեն շնչեղացած արտասանություն՝ որպես տվյալ արտասանական բազայի առանձնահատկությունը։

պատմական փոփոխության բնույթից, բառամիջի ու բառավերջի դիրքերում հին ձայնեղների դիմաց ունենք շնչեղ խուլեր, պետք է կարծել, որ այս ապաձայնեղացման երևույթը հետագայում ունեցել է տարածքային լայն ընդգրկում։ Ըստ որում այդ փոփոխության ժամանակ ձայնեղները շնչեղ էին բառի մեջ գրաված բոլոր դիրքերում, բացառությամբ այն վայրերի, որտեղ խոսվել են Ջուղայի, Մեղրու, Ագուլիսի, Կարճևանի[26] և նման այլ բարբառների նախատիպերը։ Ինչպես հայտնի է Նոր Ջուղայի բարբառում շնչեղ ձայնեղները պահպանվել են նաև բառամիջի դիրքում, իսկ Ագուլիսի, Մեղրու և Կարճևանի բարբառները նույն դիրքերում պահում են ձայնեղների ձայնեղությունը (առանց շնչեղության)։ Հետևաբար այս տարածքում ապաձայնեղացման երևույթ տեղի չի ունեցել։

Այս ընդհանուր գործընթացից հետո հայերենի բոլոր բարբառներում բառամիջի ու բառավերջի ձայնեղները կորցնում են իրենց շնչեղությունը։ Ձայնեղների այս հատկանիշի կորուստը այնուհետև տարածվում է նաև բառասկզբի դիրքի վրա՝ եզրային մի շարք բարբառներում։ Այս փոփոխությունից հետո է, որ հայերենում ավելի ինտենսիվորեն սկսվում է դրսևորվել ապաձայնեղացումը՝ ընդգրկելով ինչպես շնչեղ ձայնեղները, այնպես և պարզ ձայնեղները։ Այս փոփոխության ժամանակ՝ այն վայրերում, որտեղ բառասկզբում կային շնչեղ ձայնեղներ, վերջիններիս ապաձայնեղացմամբ առաջանում են շնչեղ խուլեր (bh > ph), իսկ այնտեղ, որտեղ բառասկզբում պարզ ձայնեղներ էին, սրանց ապաձայնեղացմամբ առաջանում են պարզ խուլեր (b > p)։ Այս փոփոխությունն արդեն կատարված ու ավարտված է մ. թ. VII դարում։ Բացառություն այս դեպքում կազմում են այն բարբառները, որոնք մինչև այսօր էլ շարունակում են պահպանել բառասկզբի ձայնեղները (ինչպես շնչեղ, այնպես և պարզ)։ Այլ կերպ ասած՝ ապաձայնեղացման երևույթը չի տարածվել այս վայրերի բարբառների վրա։

Վերն արդեն խոսվել է ապաձայնեղացմանը հակադրվող՝ խուլերի ձայնեղացման երևույթի մասին, որը կյանքի է կոչվում հնչյունական համակարգում առաջացող հնչույթաբանական անհավասարակշռության վտանգը կանխելու համար։ Խուլերի ձայնեղացման միտումը նախապես սկսվում է բառամիջում, հիմնականում՝ միջձայնավորային դիրքում։ Այնուհետև այն տարածվում է նաև բառասկզբի դիրքի վրա։ Անշուշտ, այս երևույթը համատարած բնույթ չի կրում։ Բացառություն են կազմում Վասպուրականի և Սյունիք-Արցախի տարածքի բարբառները, որոնց մեջ, հակառակ ձայնեղների խլացման ընդհանուր գործընթացին, խուլերը ձայնեղացման չեն ենթարկվել, թեև Սյունիք-Արցախի տարածքում նկա-

---

26 Այս կամ այն բարբառի վկայակոչումը չի նշանակում, թե երևույթը սահմանափակվում է միայն նշվածների շրջանակում։

տեղի է խուլերի ձայնեղացման սկսված, բայց կանխված միտում՝ բառամիջի և բառավերջի դիրքերում։ Այս տարածքում խուլերի ձայնեղացման երևույթի չտարածվելը բացատրվում է նրանով, որ հիշյալ վայրերում հնչույթաբանական անհավասարակշռության վտանգի կանխման համար գտնվել են այլ հավասարակշռող միջոցներ (օրինակ՝ ձայնավորների քմայնացումը կամ ետին շարքի ու լայն ձայնավորների արտասանության նեղացումը և այլն)։

Այսպիսով, մենք կարծում ենք, որ հայերենի բարբառների բաղաձայնական շարքերի մեջ կատարված պատմական փոփոխությունները արդյունք են իրար հակադիր երկու հնչույթաբանական միտումների՝ ձայնեղների ապաձայնեղացման և խուլերի ձայնեղացման միաժամանակյա ազդեցության, որը նայած պայմաններին ու հանգամանքներին, տարբեր վայրերում գործել է տարբեր ինտենսիվությամբ՝ առաջացնելով ժամանակակից բարբառների բաղաձայնական համակարգերի տարբերությունները։ Այդ փոփոխությունների պատկերը կարելի է տեսնել հաջորդ էջի աղյուսակում։

Ետնալեզվային պայթականների քմայնացումը

Հայերենի բարբառները ունեն նաև քմային բաղաձայններ։ Ըստ որում՝ քմայնության հատկանիշով հանդես են գալիս միայն ետնալեզվային գ, կ, ք պայթականները։ Մյուս պայթականները, ինչպես նաև պայթաշփականները, այսպես կոչված «փափուկ» արտասանություն, առավել ևս՝ «քմայնություն» չունեն[27]։

Քմային գ, կ, ք պայթականները իրենց հերթին հանդես են գալիս ոչ բոլոր բարբառներում։ Սրանք առավելապես հատուկ են եզրային բարբառներին և խիստ տարածված են Վասպուրական—Սյունիք—Արցախ տարածքի և հարակից բարբառներում։

Քմայինների առկայությունը այս բարբառներում մի դեպքում միանգամայն հասկանալի ու բացատրելի է։ Դա հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ գ, կ, ք ետնալեզվայիններին հաջորդում են առաջնային շարքի ձայնավորներ և բնականաբար, այդ ձայնավորների արտաբերության ժամանակ գ, կ, ք պայթականների արտաբերությունը

27 Ոմանք ձգտում են «քմային» արտասանություն վերագրել նույնիսկ պ, տ՛, ծ, ճ... պայթականներին ու պայթաշփականներին, նկատի ունենալով Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պä ն<բան, ծöր<ծոր և նման կարգի բառերում պայթականների արտասանությունը, իրականում ձայնավորների քմայնացումը վերագրելով բաղաձայններին։ Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Դ. Մուրադյան, Ինչպե՞ս հասկանալ «Աճառյանի օրենքը», Բանբեր Երևանի համալսարանի, 1973, № 2, էջ 161—170, նույնի՝ Աճառյանի բարբառագիտական ժառանգությունը, «Լեզվի և ոճի հարցեր», հ. 5։

չեզվի ետին շարքից տեղափոխվում է միջին մասը և բաղաձայնները ստանում են քմային արտասանություն։ Այսպես, օրինակ, ունենք

Հայերենի բարբառների պայթական ու պայթաշփական բաղաձայնների պատմական փոփոխությունների աղյուսակ

Մալաթ.	Արդիալ	Մուշ	Նախապատմական		Մեղրի	Պոլիս	Կիլիկ.	Վան
			կենտր.	եզր.				
ph	bh	bh	<bh	b>	b	b	p	p
kh	gh	gh	<gh	g>	g	g	k	k
th	dh	dh	<dh	d>	d	d	t	t
ç	jh	jh	<jh	j>	j	j	c	c
č	ǰh	ǰh	<ǰh	ǰ>	ǰ	ǰ	č	č
b	b	p	<p	p>	p	b	b	p
g	g	k	<k	k>	k	g	g	k
d	d	t	<t	t>	t	d	d	t
j	j	c	<c	c>	c	j	j	c
ǰ	ǰ	č	<č	č>	č	ǰ	ǰ	č
ն	ույ	նը	<ph	ph>	ն	ույ	նը	
			<kh	kh>				
			<th	th>				
			<ç	ç>				
			<č	č>				

գ՛öլիս, կ՛ա̈լիս (<գալիս), բ՛ին̈ա̈լիս (<գնալիս), ք՛իշէր (<գիշեր), կ՛ա̈րուն̈ք (գարուն), և նման բառաձևեր, որոնց մեջ գ՛, կ՛, ք՛ քմայինների գոյությունը պայմանավորված է նրանց հաջորդող ձայնավորների բնույթով։ Սակայն այս նույն տարածքի բարբառներում հանդիպում են քմային գ՛, կ՛, ք՛ բաղաձայնների կիրառության այնպիսի դեպքեր, երբ նրանց գոյությունը պայմանավորված չէ նրանց հաջորդող ձայնավորի բնույթով։ Դեռ ավելին. Սյունիք-Արցախ տարածքի բարբառներում հիշյալ քմայինները հանդես են գալիս նաև բառավերջի դիրքում, երբ այլևս բաղաձայնին հաջորդող ձայնավոր չկա և թվում է, թե բառի արտասանության ավարտով պիտի կանխվեր նաև բաղաձայնի քմայնացումը։ Բայց այդպես չէ։ Այս դիրքում հանդիպում են բառեր, որոնք բառավերջում ունեն գ՛, կ՛, ք՛ քմայիններ, որոնց գոյությունը այլևս պայմանավորված չէ հնչյունական դիրքով։ Ահա մի քանի օրինակներ՝ կծիկ>կըծէգ՛, կըծագ՛, կնիկ>կըն̈էկ՛, կըն̈ագ՛, մեք >միք՛ և այլն։ Այս տարածքի՝ Մեղրու և Կարճևանի բարբառներում բառավերջի ք-ն միշտ քմայնացած է բայերի հոգնակի թվի առաջին ու երկրորդ դեմքերի դիմային վերջավորություններում (գ՛ին̈էք՛, «գընանք», մըն̈աք՛ «մնանք» և այլն)։

Բառասկզբի f-ի ուժեղ ու արտահայտված քմայնացում կա Վանի,

Մոկսի Դիադինի և հարակից այլ վայրերի բարբառներում, որոնց մեջ ք-ի քմայնացումը չի պայմանավորված տվյալ բաղաձայնին հաջորդող ձայնավորի բնույթով: Այս դեպքում հաջորդող ձայնավորը ետին շարքի է և ունի ավելի ստորին արտաբերություն, քան գրական հայերենի ա-ի արտասանության մեջ է: Նման արտասանություն ունենք, օրինակ, հետևյալ բառերում՝ ք՛ամի<քամի, ք՛աճի<քաճի, ք՛աշեմ<քաշեմ, ք՛առի<քեռի և այլն: Նման բաղաձայնի արտասանությունը, որը պայմանավորված չէ հնչյունական դիրքով ու պայմաններով, կարող է բացատրվել ենթաշերտային կամ այլ կարգի, մեզ անհայտ, պատճառներով:

Ետնալեզվային գ, կ, ք պայթականները մի շարք վայրերի խոսվածքներում ենթարկվում են մի այլ փոփոխության ևս: Դա նրանց փոխարկումն է ջ, ճ, չ պայթաշփականների: Այս փոփոխությունը ևս կատարվում է քմայնացման միջոցով՝ առաջնային շարքի ձայնավորներից առաջ ընկած դիրքում: Այս քմայնացումը, անշուշտ, եղել է այնքան ուժեղ, որ հիշյալ բաղաձայնների արտասանության ժամանակ արտաբերության բովը միջնալեզվայինից տեղափոխվել է դեպի ավելի առաջ, որի հետևանքով էլ պայթականները վերածվել են պայթաշփականների: Այս երևույթը արձանագրվում է, օրինակ, Աշտարակի և Սևանի Նորատուս գյուղի խոսվածքներում: Հատկապես վերջինում՝ առաջնային շարքի ձայնավորից առաջ գտնվող բառասկզբի գ, կ, ք պայթականները համատարած կերպով փոխվել են ջ, ճ, չ-ի: Ահա համապատասխան օրինակներ՝

գազար>ջազար
գայլ>ջէլ
գետ>ջէդ
գետին>ջէտին
գերան>ջէրան
գերանդի>ջէրընդի
գերեզման>ջէրէզման
գեղ>ջէղ
կայծակ>ճէծակ
կեանք>ջանք
կեղծաւոր>ճէխծավոր
կենդանի>ճէնթանի
կեռ>ճէռ
կեռաս>ջէլլաղ (գիլաղ ձևից)
կերակուր>ջէրակուլ
կէս>ճէս
կիպ>ճիփ
կիրակի>ճիրաճի
կրեայ>կօր—ճիրիր (բրբ. կոտ—կիրիրա ձևից)

գէշ>ջէշ
գին>ջին
գինի>ջինի
գինձ>ձինձ, ծինձ (նախ՝ ջինձ, ապա ձ-ի առնմանությամբ՝ ձինձ, հետո ձ-երի տարնմանությամբ՝ ծինձ)
գիշեր>ջիշէր
գիտել>ջինալ
սկեսուր>ճիսուր (<կեսուր)
քաղել>չէլալ
քարաճիկ>չէրէջիգ (բրբ. քերեճիկ ձևից)
քենի>չէնի
քեռի>չէռի
քերել>չէրել
քէն>չէն
քիթ>չիթ
քոյր>չիր (բրբ. քիր ձևից)[28]

---

[28] Օրինակները քաղված են Ռ. Բաղրամյանի «Հայերենի բարբառներ, Սևանա լճի ավազանի խոսվածքները» գրքի (1972) բառացանկից:

Այն հանգամանքը, որ այս օրինաչափությանը ենթարկվել են որոշ փոխառյալ բառեր (գազար՝ բրբ. գ՛ազ՛ր արտասանությամբ), բարբառային կազմություններ (կոտ կիrիrա «կրյա»), պատմական հնչյունափոխության ենթարկված բառեր (գայլ>չէլ, գեւղ>չէղ, fայլել>չէլալ, կայծակ>ճէծակ), խոսում է այն մասին, որ քմայնացման այս գործընթացը խոր հնություն ունենալ չի կարող։ Հատկապես պատմական հնչյունափոխություն ունեցող գայլ, fայլել, կայծակ բառերը արդեն հավաստում են, որ դրանցում գ, կ, f>չ, ճ, շ փոփոխությունը կատարվել է այդ բառերում այ երկբարբառի այ>է հնչյունափոխությունից հետո։

Մատենագրության մեջ այս փոփոխության մասին հավաստի տեղեկություններ և վկայություններ չկան։ Վայոց ձորի ձեռագրերից մեկի 1474 թ. գրված մի հիշատակագրության մեջ կարդում ենք, «Շնհաւոր շիrդուն՝ իմ քիրն մեռաւ, իմ շքիլոն կոտրեցաւ, թողութիւն արարէք» (ԺՆ ՀձՀ, II, 360)։ Եթե այս հիշատակարանում հիշվող շիrդուն բառաձևը կապվում է fիr<շիr հնչյունափոխության հետ, ապա կարելի է ընդունել, որ մեզ հետաքրքրող երևույթը արդեն վկայված է XV դարում, բայց այդ բառը կարող է լինել նաև որպես հատուկ անուն և առնչություն չունենալ fոյr>fիr բառի հետ։ Ինչ որ է, անկախ սրանից, բարբառներում առկա հնչյունափոխությունը խոսում է այն մասին, որ հայերենի բարբառների մի մասում գ, կ, f բաղաձայնների քմայնացումը հասել էր այն աստիճանի, որ դրանք փոխարկվել էին պայթաշփականների։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽԱԿԱՆ ԱՅԼ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Պատմական հնչյունափոխության այն երևույթները, որոնք նկարագրվեցին ձայնորդ, շփական, պայթական և պայթաշփական բաղաձայնների քննության ժամանակ, ունեին համակարգային փոփոխությունների բնույթ, որով և ստանում էին հնչյունական օրենքի արժեք։ Այդ օրենքները գործել են որոշակի ժամանակահատվածում և որոշակի տարածքներում՝ ընդգրկելով տվյալ հնչյունի համանման բոլոր դիրքերը։

Այս բոլորից դուրս՝ հայերենի բարբառներում արձանագրվում են նաև հնչյունափոխական այլ երևույթներ, որոնք արտահայտվում են առանձին բառերում կամ բառախմբերում հնչյունների հավելմամբ, անկմամբ, դրափոխությամբ, պարզեցմամբ կամ բարդեցմամբ։ Սակայն սրանք առաջինների նման այլևս համակարգային փոփոխությունների

արժեք չունեն և հաճախ ժամանակագրորեն էլ սահմանափակված չեն մի որոշակի հատվածում։

Պատմական բարբառագիտության գործն է մեկ առ մեկ քննել ու բացատրել այսօրվա բարբառներում արձանագրվող նման փոփոխությունները։ Մենք այստեղ կբավարարվենք միայն այն երևույթների քննությամբ, որոնք լեզվի պատմության համար ունեն առավել հետաքրքրություն։

ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՄ

Բարբառային բառերի ու բառաձևերի համեմատական քննության ժամանակ նկատելի է, որ մի շարք բառեր, հին հայերենից վկայված իրենց նախատիպերի համեմատությամբ, բարբառների մի մասում ունեն այս կամ այն «հավելական» հնչյունը։

Ելնելով այն իրողությունից, որ հին հայերենը ժամանակագրորեն նախորդում է այսօրվա բարբառներին (այն էլ 1500 տարվա վաղեմությամբ) և ներկայացնում է մեր լեզվի պատմության ամենավաղ վիճակը, կարելի էր ընդունել, որ այսօրվա բարբառներում այդ հնչյունները իսկապես հավելական են և տվյալ բառերում ավելացել են լեզվի պատմական զարգացման ընթացքում։ Այս դատողությունը թեև տրամաբանական է, բայց կարիք ունի փաստական հիմնավորման, քանի որ միշտ չէ, որ ժամանակագրորեն ավելի վաղ շրջանից վկայված բառաձևերը իրենց հնչյունական կաղապարով ավելի հին են, քան ավելի ուշ շրջանից վկայվածները։ Քիչ չեն այն դեպքերը, երբ բարբառները իրենց մեջ պահում են լեզվական հնատիպ գծեր։

ՀԱՎԵԼԱԿԱՆ Հ||Հ՛

Հավելական հնչյունների մեջ առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում h *հագագը։ Հայտնի է, որ հայերենի մի շարք բարբառներ որոշակի խմբի բառերի բառասկզբի ձայնավորից առաջ ունեն մի շունչ (*h*), որը բացակայում է հին հայերենից ավանդված բառերում։ Ճիշտ է, այդ շունչը բարբառից բարբառ ունի արտասանական տարբերություններ, բայց եթե վերանալու լինենք ոչ էական տարբերություններից, ապա դրանց մեջ շատ որոշակիորեն առանձնանում են երկու հնչական դրսևորումներ (որակներ)։ Այդ հագագներից մեկը պարզապես խուլ շունչ է և իր որակով համընկնում է այսօրվա գրական հայերենի կոկորդային խուլ շփական* **հ** *բաղաձայնի արտասանության հետ (ինչպես* **հաց, հայր, հարցնել, հարս, հուր, հուփ, հեր** *և նման բառերում է)։ Մյուսը ձայնեղ շունչ է, նույնպես կոկորդային արտաբերությամբ, որի արտասանության*

ժամանակ ձայնալարերը թրթռում են։ Այս բաղաձայնը հանդես է գալիս միայն բառասկզբի դիրքում (աչք>հ՛աչկ, արջ>հ՛առչ, ելանել>հ՛էլնէլ և այլն)։

Հայոց լեզվի պատմական ու պատմահամեմատական ուսումնասիրության հարցերին նվիրված մի շարք աշխատություններում այս երկուսը նույնացվում են՝ դիտվելով որպես միևնույն հնչույթի դրսևորման տարբեր արտահայտություններ և հնդեվրոպական ծագման բառերում սերված են համարվում նախալեզվի P կամ S հնչյուններից[1]։ Որոշ դեպքերում, երբ հայերեն բառի բառասկզբի հ-ն և յ-ն չեն համապատասխանում նախալեզվի մի որոշակի հնչյունի, դրանք առաջացած են համարվում հնդեվրոպական ենթադրյալ կոկորդայիններից[2]։

Մեր նպատակը չէ այստեղ անդրադառնալ ու քննել այդ հնչյունների ծագումնաբանական հիմքերը։ Հարկ ենք համարում միայն ուշադրություն հրավիրել մի կարևոր իրողության վրա, որը, թերևս, լրացուցիչ լույս կսփռի խնդրո առարկա հարցի վրա և ինչ-որ չափով կօգնի նրա լուսաբանմանը։

Բանն այն է, որ հայերենի ժամանակակից բարբառներում ձայնեղ կամ խուլ հ-ի հավելումը արձանագրվում է հայերենի գրաված տարածքի տարբեր հատվածներում, միանգամայն տարբեր բառախմբերում և պետք է կարծել նաև՝ ժամանակագրական տարբեր կտրվածքներում։ Այս հանգամանքները կասկածի տակ են դնում այդ երկու հնչյունների նույնացման և ծագումնաբանորեն նույն ակունքից սերված լինելու մոտեցումը։

Հայ բարբառագիտությանը վաղուց հայտնի է, որ հավելական ձայնեղ և խուլ հագագների գործածությունը ունի տարածքային բաշխվածություն։

Խուլ հ-ի հավելումը տիպական է արևելյան՝ առավելապես Սյունիք-Արցախի բարբառներին, որոնցում այն իր հնչական որակով նույնանում է ընդհանուր հայերենյան հ-ի հետ (հաց>հաց և ացի>հա̈ց՚ին, հա̈քի բառերը ունեն նույն որակի հ)։ Այս տարածքում ձայնեղ հ՝-ն բացառված հնչյուն է։

Ձայնեղ հ՛-ի հավելումը հատուկ է մի այլ տարածքի՝ Արարատյան, Կարնո, Մշո, Բայազետի և հարակից այլ շրջանների բարբառներին։ Սրանց մի մասում հ՛-ն համապատասխանում է նաև բառասկզբի հին յ-ին (Յակոբ>Հ՛ակոփ)։ Այս տարածքի բարբառները ձայնեղ հ՛-ի կող-

1 Տե՛ս Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն, II մաս* էջ 410—414։

2 Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Երևան, 1972, էջ 265—266, Ն. Սիմոնյան, *Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունները*, «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր» ժողովածուում, Երևան, 1979, էջ 211—224։

քին ունեն նաև ընդհանուր հայերենյան խուլ ճ, որը երբեք չի շփոթվում ձայնեղ ճ'-ի հետ։ Այստեղ հիմնական հավելական հնչյունը ձայնեղ ճ'-ն է։

Այնուհետև, կարևոր է նշել, որ այս երկու տարածքները իրարից սահմանազատվում են նաև հավելման ենթարկված բառերի տարբերությամբ։ Հազվադեպ են այն դեպքերը, երբ երկու տարածքներում էլ նույն բառերն են ստանում շնչի հավելումը։ Հիմնական օրինաչափությունն այն է, որ դրանք տարբեր տարածքներում բաշխվում են տարբեր բառերի վրա։

Մեր ասածը ավելի առարկայական դարձնելու նպատակով վերցնենք այդ երկու հավելումները ներկայացնող մեկական բարբառ, Սյունիք-Արցախի տարածքից՝ Կարճևանի, արևմտյան տարածքից՝ Կարնո բարբառը։ Առաջինում առկա են խուլ հ-ի, երկրորդում ձայնեղ ճ'-ի հավելումով հետևյալ բառերը։

Կարճևանի բարբառ	Կարնո բարբառ[4]
Ագարակ>Հիգ'էրակ	ակն>հ'ագ
ագի>հա̈գ'ին	ամբար>հ'ամբար
ալևոր>հիլէվուր	ամբանալ>հ'ամըրնալ
ամաչ>համանչ[3]	ականջ>հ'անգանջ
անիծ>հանիծ	անտեր>հ'անդէր
անկան>հինգ'էնակ	անձրև>հ'անձըրէվ
արբենալ>հա̈րբիլ	աշակերտ>հ'աշգէրդ
եղիճ>հաղինջ	աչք>հ'աչք
երանեակ>հըրէնակ	առաւօտ(ուն)>հ'առդուն
երբ>հիբ	ափք>հ'ափք
երդ>հա̈րդ	առաջին>հ'առջի
երինջ>հէրինջ	արտասուք>հ'արդըսունք
ինչ>հինչ	արիւն>հ'արունք
ո, ով>հու,հուվ	ետև>հ'էդէֆ
ոլր>հա̈ւր	երդիկ>հ'էրթիգ
ոլոր>հիլլՕր	այգուց>հ'էքուց
որմն>հըէրմը	ընկնաւոր>հ'ընգնավօր
ոչիլ>հա̈չա̈լ	ընկեր>հ'ընգէր
ուլ>հՕլ	իջանել>հ'իջնէլ
ուլունք>հՕլինք	երեկոյ>հ'իրիգուն
ուղեղ>հըղօղ	երեք>հ'իրէք
ուղի>հըղի	ուղեղ>հ'ղուղ

3 Չեն բերվում նույն արմատից ածանցված ձևերը (ամաչել>ճրմանշիլ, ամաչկոտ>ճրմանշկոտ և այլն)։

4 Օրինակները բերված են Հ. Մկրտչյանի Կարնո բարբառը ուսումնասիրության բառացանկից։

ուշ>հüշ
ուռ>հօռնը
ուր>հօր
ուրագ>հÖրäգ
ուփի>հուփի

եղունգ>հ'ղունգ
երախ>հ'ռէխ
որտեղից>հ'ուրդից
ուրիշ>հ'ուրիշ

Այս երկու բառացանկերի համեմատությունից երևում է, որ չնայած բառային որոշ հանդիպումների, խուլ հ-ի և ձայնեղ ɦ'*-ի գործածության ոլորտները միանգամայն տարբեր են: Այդ տարբերությունը կմնա նաև այն դեպքում, եթե ցուցակների մեջ մտցնենք առհասարակ բարբառներից հայտնի* ɦ‖ɦ' *հավելում ունեցող բոլոր բառերը*[5]*: Ճիշտ է, այդ դեպքում համապատասխանաբար երկու տարածքներում էլ կավելանա ձայնեղ և խուլ* ɦ‖ɦ' *ունեցող բառերի քանակը, բառեր, որոնք կկրկնվեն երկու տարածքներում էլ, բայց դա միանգամայն բնական է, քանի որ երկու դեպքում էլ հավելումը տեղի է ունենում բառասկզբի ձայնավորից առաջ, ուստի և բացառված չէ, որ հենց նույն բառերում կատարվի հավելումը: Ինչպես կարելի է նկատել վերը բերված բառաշարքերի համեմատությունից, այդտեղ կան բառեր, որոնք երկու բարբառներում էլ ունեն հավելական շունչ, Կարճևանում արտահայտված խուլով* (երդ>ɦä րդ, ուղեղ>ɦըղօղ)*, Կարնո բարբառում՝ ձայնեղով* (երդ>ɦ'էրթիգ, ուղեղ>ɦ'ղուղ)[6]*: Բայց դրանք քանակային առումով որակ չեն կազմում և ոչնչով չեն խախտում վերը նշված բաշխման օրինաչափությունը:*

Պետք է կարծել, որ ժամանակագրական առումով ևս այս տարածքներում կատարված հավելումները նույնական չեն: Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ դրանք կատարվել են հայոց լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերում և որ ձայնեղ ɦ'*-ի հավելումը խուլի համեմատությամբ ավելի նոր երևույթ է: Այս տեսակետից ուշագրավ են հետևյալ փաստերը:*

ա) խուլ ɦ*-ի հավելումը արձանագրվում է միայն հնից ավանդված բառերում, այն է՝ հնդեվրոպական, ասորական, պարսկական և առհասարակ մինչև արաբական ազդեցությունը՝ հին հայերենի բառապաշարի մեջ մտնող բառերում, այն դեպքում, երբ ձայնեղ* ɦ'*-ի հավելումը՝ այս բոլորից բացի, ընդգրկում է նաև արաբական ու թուրքական ծագման բառերը: Հենց վերը բերված Կարնո բարբառում ձայնեղ* ɦ*-ի հավելում է արձանագրվում արաբաթուրքական հետևյալ բառերում.*

ɦ'առըգ
ɦ'ըշըբ *«արդյոք»*
ɦ'ռէան *«ռեհան, շահասպրամ»*
ɦ'րախի *«օղի»*
ɦ'օղա *«սենյակ»*

---

5 Այս բառացանկերը բերված են 315 էջի տողատակում նշված աշխատություններում:

6 Սյունիք-Արցախի այլ բարբառներում ընկեր *բառը ևս խուլ* ɦ*-ի հավելմամբ (հընգէր) հանդիպադրվում է Կարնո բարբառի* ɦ'ընգէր *ձևին, որը ձայնեղ* ɦ'*-ով է: Տարածքները լրիվ համեմատելու դեպքում կարող են լինել և այլ օրինակներ:*

Եթե սրանցից ɦ'ըշըբ բառի ɦ'-ն դեռևս ինչ-որ չափով կարելի է համարել արաբերենի բառասկզբի ع-ի (عجب) յուրօրինակ դրսևորումը, ապա մյուսներում ɦ'-ի հավելական լինելը որևէ կասկածից դուրս է։

Բառասկզբում ɦ' ունեցող այս օտար բառերը կարող են ɦ'-ի հավելման հարաբերական ժամանակը որոշելու հարցում ուղենիշ ծառայել։ Իսկապես. եթե ձայնեղ ɦ'-ի հավելումը տարածվել է նաև արաբական ու թուրքական փոխառությունների վրա, ուրեմն երևույթը սկսվել է X—XI դարերից ոչ շուտ։ Այնուհետև այդ օրինաչափությունը հարատևել է մինչև մեր օրերը։ Որոշ վայրերում ձայնեղ ɦ'-ն երևում է նաև նորագույն փոխառություններում (օրինակ, Ալաշկերտի որոշ խոսվածքներում՝ ɦ'ռադիօ «ռադիո»), որը, թերևս, անալոգիական երևույթ է։

բ) Ձայնեղ ɦ'-ի համեմատությամբ հավելական խուլ ɦ-ի հնությունը երևում է նաև հետևյալից։

Արևմտյան տարածքի այն բոլոր բարբառները, որոնց ներկայացնում էր Կարնո բարբառը, ձայնեղ ɦ'-ին զուգահեռ ունեն նաև խուլ ɦ, որն իր ծագմամբ և հնչական որակով նույնանում է գրական հայերենի (և հայերենի բարբառների մեծագույն մասի, այդ թվում նաև արևելյան բարբառների) հ հագագի հետ (ինչպես ɦայր>ɦէր, ɦաց>ɦաց և նման բառերում է)։ Արդ, այս տարածքի բարբառներում կան նաև խուլ ɦ-ի հավելմամբ մի քանի բառեր, որոնք ուշագրավ են նրանով, որ նույնությամբ կամ ավելի ճիշտ՝ նույն որակի ɦ-ով արձանագրվում են Սյունիք-Արցախ տարածքի բարբառներում։ Այդ բառերն են՝ արբենալ>ɦարբիլ, ɦարփէլ, ագանել>ɦաֆնիլ, ալեւոր>ɦալիվօր, արօր>ɦարօր։ Այս բառերում ɦ-ի հավելումը, անշուշտ, հին երևույթ է, և այդ ոչ միայն այն պատճառով, որ այդ բառերը երկու տարածքների համար էլ ընդհանուր են, այլև այն պատճառով, որ այն բարբառներում (Բայազետ, Դիադին և այլն), որոնց մեջ արձանագրվում է հին ɦ-ի ɦ>խ հնչյունափոխություն (ɦաց>խաց, ɦայր>խէր, ɦարսն>խարս և այլն), այս հավելական ɦ-ի դիմաց ևս ունեն խ (արբենալ>խարփէլ, ագանել>խաֆնել, ալեւոր>խալիվօր, արօր>խարօր)։ Հասկանալի է, որ այս բառերը հիշյալ բարբառներում բառասկզբի դիրքում ունեն ոչ թե հավելական խ, այլ այդ խ-ն ունեն ընդհանուր ɦ-ի դիմաց, ինչպես այդ կա հայերենի մյուս բարբառներում։

Ուշագրավ է նաև այն, որ այս չորս բառերը իրենց ծագմամբ հնդեվրոպական են, ուստի և գալիս են շատ հնից։ Սրանցից արբենալ և ալեւոր բառերի համար նախալեզվում վերականգնվում են *srbh—(արբենալ) և *plii̯o (ալի-ւոր) ձևերը, որոնց բառասկզբի p-ի և s-ի դիմաց բարբառային ɦ-ի գոյությունը արդարացվում է, քանի որ հնդեվր. p-ն և s-ն հայերենում բառասկզբում տալիս են ɦ (կամ ընկնում)։ Հետևաբար ենթադրելի է, որ p-ն և s-ն հայերենի բարբառների մի մասում

եթե ընկել են (**արբենալ, ալեւոր**), *ապա մյուս մասում ավել են* **ɦ** (**ɦարբել, ɦալիվոր**)։

Մյուս երկու բառերի համար արդի բարբառային բառաձևերում **ɦ**-*ի գոյությունը ծագումնաբանորեն մնում է անբացատրելի, քանի որ դրանց համար հնդեվրոպական նախալեզվում վերականգնվում են ձայնավորասկիզբ ձևեր* (*ou´>**աք**-*անել և* *arā-trom<**արաւր**)[7]։

Առհասարակ, բարբառային ձևերում հավելական **ɦ**-*ի գոյությունը հնդեվրոպական* **p**-*ով և* **s**-*ով բացատրելը մի վարկած է, որը, թեև հիմնված է հնչյունական որոշակի համապատասխանության վրա, բայց կարող է նաև պատահական զուգադիպության հետևանք լինել։ Չէ որ հավելական նույն հնչյունը ունեն նաև փոխառյալ բառերը, ինչպես նաև հնդեվրոպական ծագման այն բառերը, որոնք ձայնավորական սկիզբ ունեն։ Սրանց հավելական հ-ն այլևս* **p**-*ով և* **s**-*ով չի կարող մեկնաբանվել։ Հարց է առաջանում. եթե փոխառյալ բառերում* **ɦ**-*ի հավելումը իրական փաստ է, ապա միթե հնարավոր չէ՞, որ վերը նշված բոլոր դեպքերում էլ* **ɦ**-*ն լինի հավելական և այս հիմքի վրա բարբառային* **ɦարբել** *և* **ɦալիվոր** *ձևերի* **ɦ**-*ի հանդիպումը հնդեվր.* **p**-*ի և* **s**-*ի հետ լինի դիպվածային։*

Պետք է կարծել, որ հայերենի նախապատմության ինչ-որ շրջանում, արևելյան տարածքի բարբառներում բառասկզբի ձայնավորից առաջ եղել է խուլ **ɦ**-*ի հավելման մի որոշակի միտում, որը հետագա զարգացում է ապրել միայն սահմանափակ տարածքում (ըստ այսօրվա տվյալների՝ մոտավորապես Սյունիք-Արցախ տարածքում)։ Այդ փոփոխության ենթարկված որոշ բառեր թափանցել են նաև այլ վայրեր՝ ներառյալ կենտրոնական գավառների խոսվածքները։ Հենց այդ ներթափանցման արտահայտություն կարող է լինել* **արբենալ, ագանել, ալեւոր, արաւր** *բառերի հավելական* **ɦ**-*ով (կամ դրանից հնչյունափոխված* **խ**-*ով) ձևերը հայերենի բարբառների մեծագույն մասում։ Միայն թե այս դեպքում* **ɦ**-*ով ձևերի ներթափանցումը կենտրոնական բարբառներ չէր կարող կատարվել պատմական շրջանից առաջ։ Նախապատմական շրջանում դրանց գոյության դեպքում՝ հավելական հ-ով ձևերը կարձանագրվեին նաև հին գրական հայերենում։ Պատմական շրջանի սկզբում այդ երևույթի առաջին ծիծեռնակները կարելի է համարել* **ոգի‖ɦոգի, ամբար‖ɦամբար** *և նման կարգի զուգադրությունները։*

Տարածականորեն, գործառման իր ոլորտով և ժամանակագրորեն առանձնացնելով հավելական խուլ **ɦ**-*ն ձայնեղ* *հ´-ից, հարկ է նաև անդրադառնալ վերջինիս մի այլ համապատասխանությանը։*

---

17 *Այս դեպքում է, որ բարբառային* **ɦ**-*ն* (**ɦագնել, ɦարօր**) *մեկնաբանվում է որպես հնդեվրոպական ենթադրյալ կոկորդայինների արտահայտություն։*

Հայտնի է, որ հայերենի բարբառներում (անշուշտ, նրանց մի մասում) ձայնեղ ñ'-ն գործառում է ոչ միայն որպես հավելական հնչյուն, այլև մի շարք բառերում համապատասխանում է հին հայերենի բառասկզբի յ-ին։ Այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ, հին՝ յխուն, յըստակ, յարդ և նմանները, այս տարածքի որոշ վայրերում արտասանվում են ñ'իծուն, ñ'իցծուն, ñ'իստագ, ñ'էրթ ձևերով՝ բառասկզբի հին յ-ի դիմաց հանդես բերելով ձայնեղ ñ'։ Թե այս ñ'-ն ինչ ծագում ունի, արդյոք գալիս է յ-ի՞ց, թե պարզապես հավելական հնչյուն է և ավելացել է բառասկզբում այն բանից հետո, երբ ընկել է յ-ն, որոշակիորեն դժվար է ասել։ Բանն այն է, որ հենց այս նույն տարածքի բարբառներում, ուր ենթադրվում է բառասկզբի յ-ի օրինաչափ անցում ñ'-ի, հին հայերենից ավանդված մի շարք բառեր հանդես են գալիս բառասկզբի յ-ի կորստով (յաղթել>ախտել, յաջողիլ>աչօղել, յօնք>ունք և այլն)։ Ուշագրավ է նաև այն, որ նույն տարածքի տարբեր խոսվածքներում յ=ñ' համապատասխանությունը գործում է ոչ բոլոր բառերում։ Մի տեղ, եթե ñ'իծուն (<յխուն) է, ապա մյուսում ունենք իցծուն, այսպես նաև՝ ñ'իստագ և իստագ։ Դեռ ավելին. արևմտյան տարածքում կան բարբառներ, որոնց մեջ բառասկզբի յ-ի կորուստը (անկումը) օրինաչափ երևույթ է։ Այստեղ որպես կանոն բառասկզբում յ ունեցող բառերը հանդես են գալիս առանց այդ հնչյունի։ Այդպես է, օրինակ, Տիգրանակերտի բարբառում, որտեղ միայն յոյս>ñուս, յոյժ>ñուժ բառերն են, որ յ-ի դիմաց ունեն հ։ Սրանք էլ կարող են գրական փոխառություններ լինել։ Մնացած բոլոր բառերում բառասկիզբը ձայնավորական է, առանց յ-ի[8]։

Նույն բանը նկատելի է նաև արևելյան տարածքի բարբառներում, որոնց մեջ այս ու այնտեղ հին յ-ից զարգացել է խուլ հ (յաղթել>ñախտել), սակայն ոչ հետևողականորեն, այլ միայն հատ ու կենտ բառերում։ (Սրանք նույնիսկ կարող են լինել գրական փոխառություններ)։ Այս տարածքի բարբառներին առավելապես բնորոշ է յ-ի կորուստ, իսկ առանձին բառերում նաև յ-ի պահպանում։ Այդ ձևով ունենք. յ-ի անկմամբ՝ յաղթել>ախտել, յաջողումն>աչօղում, յատակ>ատակ, Յարութիւն>Արութուն, Արուն, յիշատակ>իշատակ, շատակ, յիշոց>ուշունց, յիսուն>իցցուն, յուզել>ուզէլ, յստակ>իստակ, յօնք>ունք, օնք, յօրանջել>բրըշտօտալ։ Յղի բառի դիմաց արևմտյան տարածքի բարբառներում առկա է առանց յ-ի ձև՝ ըղի, իսկ արևելյան տարածքում, հատկապես Սյունիք-Արցախի բարբառներում՝ յըղի, յըղէ, բառասկզբի ձայնորդի պահպանմամբ։ Ղարաբաղի որոշ խոսվածքներում բառասկզբի

---

8 Ս. Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, Երևան, 1978, էջ 193։

յ-ն պահպանվում է նաև այլ բառերում, ինչպես՝ յաղթել>յախտէլ, յէխտէլ, յէխնէլ, յիշատակ>յիշատակ:

Այսպիսով, բառասկզբի հին յ-ի դիմաց կան երեք տարբեր վիճակներ. որոշ բառերում յ-ն պահպանված է. մի այլ դեպքում առկա է յ-ի կորուստ. երրորդ դեպքում յ-ի դիմաց խուլ կամ ձայնեղ (հ, հ՛) հագագ է, որ նույնպես համատարած բնույթ չի կրում:

Վերը նշված մի քանի բառերում յ-ի պահպանումը այլ կերպ չի կարելի բացատրել, քան որպես հին վիճակի արտահայտություն: Այդ օրինակները միաժամանակ ցույց են տալիս, որ հին յ-ի տակ բոլոր դիրքերում պետք է հասկանալ ձայնորդ y հնչյուն:

Մյուս բառերում յ-ի բացակայությունը տարբեր մեկնությունների տեղիք կարող է տալ: Ավելի հավանական կարելի է համարել, որ բառասկզբի հնչյունը անհետացել է յ>հ հնչյունափոխության ընթացքում՝ խուլ հ-ի թույլ արտասանության հետևանքով: Հավանաբար հենց այս ուղիով են առաջացել յիսուն>հիսուն>իցցուն, յատակ>հատակ>ատակ, յաղթել>հախտել>ախտել և նման ձևերը: Եվ եթե այս անցումը ճիշտ է, ապա ենթադրելի է նաև, որ այս նույն բառերի բառասկզբի ձայնեղ հ՛-ն մյուս տարածքի բարբառներում ոչ թե յ-ի հնչյունափոխության անմիջական արտահայտությունն է, այլ յ>հ փոփոխությունից և թույլ հ-ի անկումից հետո՝ ձայնեղ հ՛-ի հավելման արդյունք:

Անկախ վերը արված ենթադրություններից, ավելի կարևոր են հետևյալ հետևությունները:

ա) Այն հանգամանքը, որ ձայնեղ և խուլ հ-երի հավելումը արձանագրվում է տարբեր տարածքներում և տարբեր խմբի բառերում, իրավունք է տալիս եզրակացնելու, որ այդ հավելումները կատարվել են իրարից անկախ, յուրաքանչյուր վայրում իր ներքին օրինաչափություններով:

բ) Ձայնեղ հ՛-ի հավելումը ժամանակագրորեն հաջորդել է խուլ հ-ի հավելմանը, եթե նկատի ունենանք, որ ձայնեղ հ՛-ի հավելում առկա է նաև նոր փոխառություններում:

գ) Ագանել, ալեւոր, արբենալ, արօր բառերում հավելական խուլ հ-ի ընդհանուր լինելը երկու տարածքների բարբառների համար հիմք է տալիս պնդելու բ կետում արված ենթադրությունը: Այստեղ պետք է նկատի ունենալ նաև այն, որ այն բարբառները, որոնք հայերենյան հ-ի դիմաց հանդես են բերում խ (հաց>խաց), նույն հնչյունափոխությունը երևան են բերում նաև ագանել, ալեւոր, արբենալ և արօր բառերում, այն դեպքում, երբ ձայնեղ հ՛-ի հավելումով բառերը խ-ով համապատասխանություններ չունեն:

Ինչ վերաբերում է ժամանակակից գրական հայերենում բառասկզբի յ-ի հ համապատասխանությանը, ապա այն, որպես գրական լեզվի

ավանդական արտասանություն, մշակվել է դեռևս միջին հայերենի շըրջանում, երբ բառասկզբի յ>ճ հնչյունափոխությունը ընդհանուր օրինաչափություն էր։

ՀԱՎԵԼԱԿԱՆ Ն

Հավելական հնչյունների մեջ ուշադրության է արժանի նաև ռնգային ն-ն։ Ն-ի հավելումը առավել տիպական է բարբառներին, այն էլ բառավերջում՝ բաղաձայնից հետո և բառամիջում՝ բաղաձայնից առաջ։ Երկու դեպքում էլ այդ հավելումները ունեն տարածքային սահմանափակություն և ոչ բոլոր բարբառներում է, որ կատարվում են։ Գրական լեզվի մեջ ն-ի հավելմամբ գործածական են միայն մի քանի բառեր, այն էլ բառամիջի հավելումով։

Նախ բառավերջում բաղաձայնից հետո կատարված հավելման մասին։

Ժամանակագրորեն այս երևույթը հայերենում նոր չէ։ Դեռևս մեր լեզվի գրավոր շրջանի սկզբում արձանագրվում են բաղաձայն+ն վերջավորությամբ բառեր, որոնք ունեն հոլովման յուրահատուկ տիպ (ա պարզ և ի—ա խառը ներգրական հոլովումներ)։ Հոլովման համակարգում այս բառերի առանձնակի դիրքը, հատկապես նրբքին թեքման պատկանելը, այն էլ ներգրական երկու տարբեր հոլովումների մեջ բաշխվելը, խոսում է այն մասին, որ այս բառերում ն-ն բավականին հին է, նույնքան հին, որքան այդ բառերի հոլովումը։

Հիշյալ բառերում ն-ի նախնականության մասին կարելի է դատել դրանց ծագումնաբանական քննությամբ։ Ն-ահանգ կառուցվածք ունեն ինչպես հնդեվրոպական ծագման ու փոխառյալ, այնպես և անհայտ ծագման բառերը։ Ինքնին հասկանալի է, որ չստուգաբանված բառերը ոչինչ չեն կարող տալ դրանցում ն-ի գոյության պարզաբանման համար։

Ինչ վերաբերում է հնդեվրոպական բառերին, ապա սրանց մեջ ն-ի ծագումը միշտ չէ, որ պատճառաբանված է, թեև ընդունված է, որ «ն-ով հիմքերն ընդհանուր առմամբ արտացոլում են հնդեվրոպական *n-ով հիմքերը (-n̥, -mn̥, -en -ēn և այլն)։ Զգալի մասով դրանք գալիս են հնդեվրոպական չեզոք սեռից, որոնց ուղղական-հայցականի նույնությունը փոխանցվել է և հայերենին։ Որոշ մասը ծագում է հնդեվրոպական արական և իգական սեռի հիմքից՝ հայցականի վերջավորության տարածմամբ ուղղականի վրա։ Այս բառերի գերակշռող մեծամասնությունը ծագում է հնդեվրոպական զանազան ածանցավոր մասնիկներով կազմված հիմքերից»[9]։

---

9 Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 254։

Սակայն միշտ չէ, որ վերջնահանգ ն-ն կարելի է բացատրել հնդեվ-րոպական նախաձևի n-ով կամ m-ով։ Կան հնդեվրոպական ծագման այնպիսի բառեր, որոնց վերջնահանգ ն-ն չի բացատրվում վերը հիշատակված և ոչ մի ձևով։ Այս դեպքում ն-ն այլ բան չի կարող լինել, քան հավելական հնչյուն[10]*։*

Փոխառյալ բառերում վերջնահանգ ն-ն հիմնականում գալիս է փոխատու լեզվից, ինչպես, օրինակ, գուռն*<ասոր.* gurna, դաշն*<պհլ.* dašn, մազդեզն*<պհլ.* mazdēsn, Ներոն*<հուն.* Νέρων *և այլն։ Բայց այստեղ էլ կան բառեր, որոնց բառավերջի ն-ն չի գալիս փոխատու լեզվից, ինչպես՝* բուրգն*<ասոր.* būrga, գագաթն*<բաբլ.* gaggadu*։ Հետևաբար այս դեպքում էլ ն-ն հավելական է։*

Առհասարակ, եթե նկատի ունենանք հնդեվրոպական և փոխառյալ այն բառերը, որոնց ն-ն չունի համոզիչ պատճառաբանվածություն, պետք է ընդունել, որ դրանցում բաղաձայն+ն *զուգորդումը նախապատմական շրջանում առաջացած երևույթ է՝ ստեղծված հնդեվրոպական և փոխառյալ նմանատիպ բառերի օրինակով։*

Հայտնի է, որ հայերենի պատմական զարգացման հետագա փուլերում, բարբառների մի մասում, այդ բառերը կորցնում են իրենց վերջնահանգ ն-ն (այս մասին տե՛ս էջ 330) և միայն մի որոշակի տարածքում է, Արցախ-Սյունիքի բարբառներում, որ մինչև այսօր էլ պահպանվել է ն-ն։ Միայն թե այստեղ այդ ն-ն այլևս բառավերջում չէ. նրանից առաջ գտնվող ձայնավորի ը-ն (ձուկըն) *տեղափոխվել է բառավերջ, ստեղծել վանկային նոր հատույթավորում՝ ն-ն թողնելով բառամիջում. այսպես՝* եզն>յէզնը, իզնը, գառն>գ'öռնը, կ'ö̈ռնը, ձուկն>ձուկնը, ծ'ö̈կնը, մուկն>մօկնը *և այլն։*

Ահա այս նույն տարածքում է, որ այսօր հանդիպում են ն-ահանգ և այլ կարգի բառեր, որոնք հին հայերենից ավանդվել են առանց ն-ի։ Հատկանշական է, որ սրանք ինչպես հին հայերենում, այնպես և ժամանակակից բարբառների մեծ մասում, ունեն առանց ն-ի (բաղաձայնավոր) վերջավորություն և միայն Սյունիք-Արցախ տարածքի բարբառներում է, որ բառավերջում ունեն նը*։ Դիտարկենք այդ բառերը։*

ախոռ>ախուռնը<պհլ. āxūr
ածուխ>անձօղնը

---

10 Ջահուկյանը գտնում է «որ ն-ի տարածման համար նշանակություն է ունեցել նաև ուրարտական ազդեցությունը, այսինքն՝ հայցականի և չեզոք սեռի m-ի (<n) տարածումն ու ընդհանրացումը կապված է դրա՝ ուրարտերենի ուղղ. հոլովի ni վերջավորության հետ համընկնելով»։ Նույնի վկայությամբ «Ֆ. Ցեյդլին իր անտիպ հոդվածում ն-ն կապում է ն որոշիչ-ցուցական հոդի հետ»։ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 267։

*անդամ>անդամնը, անդէմնը «աղդր» <պհլ. andām, գնդ. handāman
անթեղ>անթէղնը <վրաց. antheba «կրակ վառել», anthebul «վառած»
աստղ>աստէղնը<հնդեվր. *ster
*արջառ>աչառնը, աչէռնը, աջէռնը
*բծիծ>պըծէղնը, պըծէսնը, պըտէղնը
բոռ>պօռնը, պուռնը <հնդեվր. *bher
*բորբոս<փուփուսնը, փըրփօսնը, փըրփէշնը
*բուինչ>բըռէշնը, պըռէշնը, փըռէշնը, բըռաշնը, պըռաշնը, ծառը՝ բը-ռըշնի, պըռըշնի, փըռըշնի
*գորտ>գ՛առնուկ, գ՛օռնուկ, ք՛ունթռուկ<հնդեվր. wordo
*գկեռ>գըկէռնը, սկէռնը, ցքէռնը
գմուռ>գմբուռնը, գըմբէռնը<հուն. σμύρρα
թուզ>թօզնը, թöզնը<միջերկրական փոխ. անհայտ լեզվից. հուն. հո-մեր-συκον, լատ. ficus
թութ>թօթնը<ասոր. tūtā
թրթուր>թըրթօռնը<հնդեվր. *tor-(կրկնությամբ)
խէժ ‖ խիժ>խէժնը, խըժնը «նոր ծնած կովի կաթ»
*խուրձ>խօրղնը, խարթնը, հօռզնը
ծառ>ծառնը<հնդեվր. *gɾso-
ծիլ ‖ ծիղ>ծըէղնը, ծէղնը
կանթեղ>կանթէղնը<հուն. κάνδηλα «կանթեղ, ջահ»
կանկար>կանգառնը<պրսկ. kangar
կեմ>կէմնը<հուն. κημος
հակ>հակնը, հօկնը «բեռ, կապոց»
ճիմ>ճումնը<չաղաթ. čim «գուղձ»
*ճիւղ ‖ ճուղ>ճօղնը, ճէղնը (նաև ճօղուն)
մամուռ>մամուռնը, մամօռնը
որթ>վէրթնը «խաղողի որթ»<հնդեվր. *porthu
ուլ>հöլնը<հնդեվր. *polo, համտ. հուն. πωλιον հրգ. fulin
ուռ>հօռնը, ծառը՝ հըռնի
*սինձ>սէզնը, սազնը
սիպեղ>սիբէղնը
*սունկ, սնկոյ } սօնգըն, սօնգուն, սօկօն<հնդեվր. *spongos
սունկն, սնկան }

Ի՞նչ կարելի է ասել այս բառերի մասին։

Նախ՝ հարկ է նշել, որ սրանցից ոչ բոլորն են, որ Սյունիք-Արցախի տարածքի բարբառներում ամեն տեղ ունեն նույն վերջավորությունը։ Խոսվածքից խոսվածք դրանք տալիս են տարբերություններ՝ մի տեղ ն-ով, մի այլ տեղ՝ առանց ն-ի։ (Առավել տարածվածները նշված են աստղանիշով)։

Այնուհետև. միշտ չէ, որ հնարավոր է պարզել, թե համեմատվող բառաձևերից որն է նախնականը, մանավանդ, երբ այդ բառերը ստուգաբանված չեն։ Դրանցից մի քանիսը, ինչպես օրինակ, բոինչ, սիպեղ, նույնիսկ վկայված չեն հին հայերենի բառապաշարը ներկայացնող բառարաններում (Հայկազյան, Առձեռն)։

Փոխառյալ և հնդեվրոպական ծագման բառերում բարբառային ն-ն, պետք է կարծել, որ զուտ հայկական գոյացություն է, միայն առանձին դեպքերում է, որ այդ հնչյունը կարող է դիտվել նախնական կամ օտարամուտ։ Այսպես, օրինակ՝ ուլ>նօլնը բառի դիմաց թեև հնդեվրոպական վերականգնվող նախաձևում (*polo) ն-ն բացակայում է, բայց հուն. πωλον, հրգ fulin բառերում, եթե -ion, -in ածանցներ են, ապա դրանք կարող էին արտացոլված լինել նաև հայերենում։ Հայերեն անդամ>անդամնը, անդէմնը որպես իրանական փոխառություն պահլավերենում վկայված է andām, իսկ զենդերենում handāman ձևերով։ Կարելի է ենթադրել, որ հայերենում ն-ով և առանց ն-ի ձևերը գալիս են տարբեր աղբյուրներից։ Առաջինից ունենք գրական հայերենի և բարբառների մի մասի անդամ, երկրորդից՝ բարբառների մյուս մասի անդամն>անդամնը, անդէմնը բառաձևերը։ Այս տեսակետից հետաքրքիր է նշել, որ Հայկազյան բառարանում անդամ բառով կազմվող բազմաթիվ բարդությունների շարքում արձանագրված է նաև անդամնաւորիմ «անդամներով ձևավորվել, արբունքի հասնել» եզակի օրինակը, որտեղ առկա է մեզ հետաքրքրող ն-ն։ Եթե նկատի ունենանք, որ այս բառը վկայված է XIII դարից, ապա այս բառի բարբառային ն-ով ձևերը ավելի հին կարելի է համարել։

Պետք է կարծել, որ արդեն իսկ պատմական շրջանի սկզբում հայերենում զուգահեռաբար կային ն-ով և առանց ն-ի բառեր, որոնք, թերևս, ներկայացնում էին տարբեր բարբառների օրինաչափություններ։ Դա շատ լավ երևում է սունկ բառի օրինակում։ Հայկազյան բառարանը սունկ և սունկն (ն-ով և առանց ն-ի) բառաձևերը, որպես նույն բառի համարժեք տարբերակներ, բերում է նույն բառահոդվածում՝ առանց դրանցից որևէ մեկին նախապատվություն տալու։ Չպետք է կարծել, թե սրանցից առաջինը եկել է՝ առաջացած երկրորդից, վերջնահանգ ն-ի անկմամբ, ինչպես այդ հատուկ է հետագա շրջանում հանդիպող բառերին։ Այդ միտքը ժխտվում է հենց միայն այն իրողությամբ, որ տարբերակներից ամեն մեկը ունի առանձին հոլովում. առաջինը ենթարկվում է վերջադրական ո հոլովման (սունկ-սնկոյ), երկրորդը ունի ներդրական ա հոլովում (սունկն-սնկան)։ Եթե սունկ-ը առաջացած լիներ սունկն ձևից՝ ն-ի կորստով, ապա պահպանած պիտի լիներ սունկն նախաձևի ներդրական ա հոլովումը, ինչպես այդ առկա է բոլոր այն բառերում, որոնք այսօր բարբառներում, չնայած կորցրել են վերջնահանգ ն-ն, բայց պահպանել

են իրենց հին հոլովումը (մուկ–մկան, ձուկ–ձկան և այլն)։ Այդ բանը շատ լավ երևում է նաև հին հայերենից ավանդված խուրձ բառում։ Չնայած նրանում ն-ի բացակայությանը, սեռականի խրձան ձևը հուշում է, որ նախաձևը եղել է խուրձն, և որ ն-ի անկումը հետագայի երևույթ է։ Այնպես որ սունկ–սնկոյ և սունկն–սնկան ձևերի առկայությունը խոսում է ն-ով և առանց ն-ի զուգահեռ բառաձևերի գոյության մասին։

Վերջնահանգ ն-ի հավելական բնույթը լավ երևում է հատկապես փոխառյալ բառերում և մասնավորապես այն դեպքերում, երբ փոխատու լեզվում բացակայում է այդ ն-ի որևէ արտահայտությունը։ Այսպես, օրինակ. պհլ. āxūr>ախոռ>բրբ. ախուռնը, հուն. σμύρνα>զմուռս>բրբ. զմբեռնը, զմբուռնը, ասոր. tūtā>թութ>թօթնը, հուն. κανδήλα>կանթեղ>կանթեղնը և այլ բառերը կասկած չեն թողնում, որ հայերեն բարբառային ձևերում վերջնահանգ ն-ն հայկական գոյացություն է։ Նույնիսկ այնպիսի մի բառում, ինչպիսին է ճակ>ճակնը, ճօկնը, ն-ն հավելական լինելու հիմքեր ունի (թեև այն ստուգաբանված չէ), երբ նկատի ենք ունենում այդ նույն արմատից սերված բառերը (ճակել, ճակառակ, ճակումն և այլն), որոնք ընդհանուր են բարբառներում և գրական լեզուներում՝ առանց վերջին ն-ի։

Եթե ընդհանրացնելու լինենք հին հայերենում և արդի բարբառներում պահպանված ն-ահանգ բառերի քննության արդյունքները, թերևս կարելի է գալ այսպիսի եզրակացության։ Բաղաձայն+ն զուգորդությունը զուտ հայկական գոյացություն է՝ առաջացած նախապատմական շրջանում հնդեվրոպական և փոխառյալ որոշ բառերի նման վերջավորությունների հիմքի վրա։ Նախապատմական շրջանի ինչ-որ փուլում այս երևույթը եղել է ընդհանուր ամբողջ հայերենի համար, թեև բացառված չէ նաև որոշ վայրերում այս կամ այն բառի շեղումը ընդհանուր օրինաչափությունից (սունկ–սնկոյ, սունկն–սնկան)։ Այնուհետև, նկատի ունենալով այն, որ մեր լեզվի պատմական շրջանում մի շարք վայրերում վերոհիշյալ ն-ահանգ բառերը աստիճանաբար սկսում են կորցնել իրենց ն-ն, այն դեպքում, երբ Սյունիք-Արցախի տարածքի բարբառները այն ոչ միայն պահպանում են, այլև տարածում են այլևայլ նոր բառերի վրա, սրանից թերևս կարելի է եզրակացնել, որ Սյունիք-Արցախի տարածքը եղել է բաղաձայն+ն զուգորդման գործընթացի հիմնական խառնարանը և այս հիմքի վրա է, որ այստեղ առավել ուժգնությամբ է դրսևորվել այս երևույթը։

Ն-ի գիրքային մյուս հավելումը, որ նույնպես հատուկ է այսօրվա բարբառներին, արձանագրվում է բառամիջում՝ բաղաձայնից առաջ։ Նկատելի է, որ այդ հավելումը կատարվում է պայթական ու պայթաշփական բաղաձայններից և առավել հաճախ՝ f, շ շնչեղ խուլերից առաջ։

Ահա բարբառներում այսօր հանդիպող նման բառերի ոչ լրիվ ցանկը։

աղիք>աղինք, աղէնք
ամաչել>հըմանչիլ, ամընչել
 ամընչնալ
արտասուք>ըրտասունք,
 արցունք
բառաչել>բըռընչալ
բարձր>պանցըր
բարձրանալ>պընցրանալ
եղիճ>յէղինչ, աղինչ, հաղինչ
թաթալ>թանթալ
թրիք>թըրինք, թըրէնք'
 թըրանք'
կամաց>կամանց
կամուրջ>կարմունջ
կանաչ>կանանչ
կանաչել>կընանչիլ, կանընչել
կեռիք>կ'էռինք
ճանաչ>ճանանչ
ճանաչել>ճընանչիլ
ճօճ>ճինջի
մեծ>մենձ, մինձ, վինձ
մեք>մենք, մինք, մունք
մէջ>մանջ, մանջին, «միջին»
յիշոց>ուշունց
նիգ>լինգ
շշել>շինչիլ, «սուլել»
չամիչ>չամինչ, չօմէնչ
տքոց>տընքօց, տընքուօց
փութ>փօնթ, փուօնթ

քիթ>քինթ, քինտ, քանթ

Այս հավելումը առավելապես հատուկ է Սյունիք-Արցախի տարածքի խոսվածքներին։ Արևմտյան տարածքի բարբառներում այս հավելումն ունեցող բառերի քանակը համեմատաբար քիչ է։ Այստեղ հանդիպում են՝ կամուրջ>կարմունջ, արտասուf>արցունf, ամաչել>ամընչնալ, կանաչ>կանանչ, կանաչել>կանընչել, մեf>մենf, տfոց>տընfուօց, փոր>փուօր, fիր>fինտ բառերը (թերևս լինեն էլի մի քանիսը), այն դեպքում, երբ Սյունիք-Արցախ տարածքի բարբառներում հանդիպում են բառացանկում բերված բոլոր բառերը (անշուշտ. առանձին բառերի գործածության տարածքային որոշակի սահմանափակությամբ)։

Ի՞նչ բացատրություն կարելի է տալ այս երևույթին։

Բերված բառերից մի քանիսում ձայնորդի հավելումը կարելի է վերագրել տվյալ բառի կազմում արդեն առկա ն-ի ազդեցությանը։ Դա լեզվահոգեբանական մի երևույթի արտահայտություն է, երբ բառի արտաբերման ժամանակ որևէ հնչյունի հոգեմտածական պատկերը դեռ որոշ ժամանակ շարունակվում է նրա արտասանությունից հետո և այդ պատճառով էլ այն կրկնվում է նաև հաջորդ վանկում։ Այդպիսի բացատրության տակ կարելի է դնել, օրինակ, կանաչ>կանանչ, ճանաչ>ճանանչ (և սրանցից բաղադրվածները), նիգ>*նինգ>լինգ բառերը։ Մյուսներում ն-ի հավելման պատճառները մնում են անհայտ։

Միջնադարյան գրավոր աղբյուրներում արդեն վկայություններ կան այս հավելման վերաբերյալ, որ նշանակում է, թե երևույթը շատ էլ նոր չէ։ Միջին գրական հայերենում, օրինակ, հին հայերենյան մեf դերանվան փոխարեն կանոնավորապես գործածվում է մենf ձևը՝ ն-ի հավելմամբ։ Այն հանդիպում է ամենատարբեր բնույթի գրավոր հուշարձաններում։ Բերենք միայն երկու վկայություն կիլիկյան սկզբնաղբյուրներից։

«...մենք ու ամենայն Մայստոն Ոսբիթլուն ֆրեր Իանն... մենք չէաք ի հանել... էկաք մենք ու վերոյանվանել Մայստոն ի վերոյանվանել տեղին... ու հայնց հավնեցաք մենք ու Մայստոն...» (Պար. Կոստ. 1271 թ. դաշնագիր), «Մենք կու առնունք ի մեր վերայ, որ մենք ծառայենք զքեզ» (Անս. 53) և այլն։

Ձեռագրերում քիչ չեն նաև այս դերանվան մեք ձևի կիրառության դեպքերը, որը կարող է ավանդականին տուրք տալու արտահայտություն լինել։ Սակայն, մյուս կողմից, բացառված չէ, որ առանց ն-ի ձևի հիմքում ընկած լինի նաև որոշակի խոսվածքի բառաձև։ Այսօր էլ հայերենի մի շարք բարբառներում շարունակվում է օգտագործվել մենք դերանվան հին հայերենյան ձևը՝ մեք, միք՛ (Համշեն, Մեղրի, Կարճևան և այլն)։

Հատկանշական է, որ հայերենի այն տարբերակները, որոնք գրաբարյան մեք-ի դիմաց այժմ ունեն մենք, ն-ի հավելում ունեն նաև բայերի հոգնակի առաջին դեմքի դիմային վերջավորության մեջ (ինչպես՝ գնամք>գնանք, զարմացեալ եմք>զարմացել ենք, գրեցաք>գրեցինք, ստացաք>ստացանք և այլն)[11], հակառակ այն բարբառների, որոնց մեջ մեք ձևի կողքին հավելում չկա նաև բայերի դիմային վերջավորություններում, ինչպես՝ մէք նստած իք=«նստած ենք», մէք մընացիք «մնացինք», մեք նըստաք» նստեցինք (Համշեն), միքյ՛ նըստած ըք, միք՛ մընահալ ըք, միք՛ նըստալ ըք (Կարճևան) և այլն։

Միջնադարյան նույն գրավոր հուշարձաններում մենք-ի հետ հանդիպում են նաև հավելական ն ունեցող դիմային վերջավորություններ. օրինակ՝ «...մենք եկել ենք ձեր առջև... ու սար ենք, որ զինչ ցեղ դուք համէք և պատէհ տեսնույք՝ մենք կեցցնենք» (Անս. 59)։

Ն-ի հավելմամբ վկայվում են նաև այլ բառեր, որոնք այսօր նույն ձևով պահպանված են մեր բարբառներում. այսպես. արտասուք>արտասունք, արցունք՝ «...լինի, որ հետն արտասունք ելնէ» (Գրիգ. 80), «...քրտինքն զէտ աչից արցունք աղի լինի» (Ամիրդ. Ուս. բժշկ. հզ), կանաչ>կանանչ՝ «Գոյնն լինի մքգոյն՝ ընդ կանանչ և ընդ սև ի մէջ» (Գրիգ. 44), «Տարէն ելուկ նման կանանչ ուտիկ ես» (Կ. Երզնկ. 150), ճանաչել>ճանանչել՝ «...այս նեղերս ի մաղձերոյն գունէն ճանանչեն» (Գրիգ. 42), կամուրջ>կարմունջ՝ «...ինչուրվի կարմունջն» (Դհվ, 1, 63), շիջանել>շինջանել՝ «...ճրագ, որ շինջանի» (Ձեռ. 8030, 80բ) և այլն։

Այս բառաձևերի միայն մի չնչին մասն է, որ ժողովրդախոսակցական լեզվից թափանցել է նոր գրական լեզվի մեջ. դրանք են՝ արցունք, եղինջ, մենք, տնքոց։

---

11 Արտաքնապես կարող է թվալ, թե բերված օրինակների մի մասում մ-ն է, որ փոխվել է ն-ի։ Սակայն դա միայն թվում է, քանի որ այդ հավելումը առկա է նաև դիմային այնպիսի վերջավորություններում, որոնց մեջ բացակայում է մ-ն։

Հայերենի ժամանակակից բարբառներում հավելյալ հնչյուններ արձանագրվում են և այլ բառերում։ Այստեղ հատկապես անհրաժեշտ է նշել միջբաղաձայնական դիրքերում բ, դ, տ պայթականների հավելման երևույթը, որը արդի բարբառներից բացի, վկայվում է նաև միջնադարյան գրավոր աղբյուրներում։

Բարբառներում առավել լայն տարածում ունի ն և ր հնչյունների միջև դ-ի հավելումը։ Այս երևույթը արձանագրվում է այնպիսի բառերում, ինչպիսիք են՝ թոնիր>թօնդիր, ծանր>ծանդըր, ծանրանալ>ծանդրանալ, ծընդրանիլ, ծանրութիւն>ծանդրութուն, ծընդրօթին, ծունր>ծունդըր, մանր>մանդըր, մանրուք>մանդրուք, մանրել>մանդրել, նրա>ընդրա, նրանք>ընդրանք, պանիր—պանրի>պանդրի և այլն։ Այս հավելումը արձանագրվում է նաև միջնադարյան սկզբնաղբյուրներում, որ նշանակում է, թե արդի բարբառներում դրանք նորաբանություններ չեն (միջին հայերենի համեմատությամբ)։ Բերենք օրինակներ գրավոր աղբյուրներից. ...զտաք հացն որ թոնտրէն[12] ելնէ, մի ուտել... և խորովուն, որ թոնտրէն ելնէ (Ամիրդ. Ուս. բժշկ. ծե), ...մի բեռանց ծանդր մատներ զտկարս (Ձեռ. 8030, 3բ), ...գլուխն և աչքն ծանդրանայ (Ամիրդ. Ուս. բժշկ. խզ), ... ծունդր դնէ... ծունդր դիր (Ձեռ. 8030, 91բ—100բ),... ծնդրադրական երկրպագութեամբ (Ն. տ. 7ա), ... թաժա և մանտր ձուկն նշի ձիթով տապկած (Մխ. Հեր. 2,1բ), ... պանդրի ջուրն, որ է շատ (Ն. տ. 44բ) և այլն։

Այսպիսով, այս երևույթի գրավոր առաջին վկայությունները հասնում են մինչև XII դարը։

Համեմատաբար ավելի սակավ են մ և ր հնչյունների միջև բ-ի հավելում ունեցող բառերը։ Սրանք այսօր էլ ժամանակակից բարբառներում առանձնապես մեծ տարածում չունեն։ Այս հավելումն ունեցող բառերից նշելի են՝ համարել>համբրել, հըմբարիլ, համարք>համբարք, արմաւ>ամբրավ. այսպես նաև օմր, ումր «կյանք»>օմբր, ումբր։ Որոշ բառերում բ-ի հավելումը կատարվել է մռ կապակցության մեջ, ինչպես՝ զմուռս>զմբէռնը, ճմռել>ճմբռել, ամառն-ամռան>ամբռան։ Փոխառյալ բառերից կարելի է եզրակացնել (արմաւ, օմր, զմուռս), որ բ-ն իրոք հավելական է։

Մատենագրությունը շատ քիչ վկայություններ է տալիս այս երևույթի համար, որ ինքնին նշանակում է, թե այն տարածված չլինելու հետ միասին նաև շատ էլ հին չէ։ Այստեղ ունենք փոխառյալ բառեր՝ արմաւ>ամբրաւ և թմրհնդի «հնդկարմավ»>թմբրհնդի, երկուսն էլ գործածված բժշկագիտական աշխատություններում. «... ռուպ, մեղր, ամբ–

---

12 d հնչյունը՝ արտահայտված է տ տառով։

ռաւ, սև չամիչ (Գրիգ. 36), ... ամբրաւ և գինի և թուղ (Ամիրդ. Ոււ. բժշկ. կզ), ... թմբրճնդոյ ջուր և նռան սքնկպին ի բանի պահէ (Մխ. Հեր. 32ա) և այլն։

Ժամանակակից բարբառներում արձանագրվում է նաև տ հնչյունի հավելում սր *հնչյունների միջև այնպիսի բառերում, ինչպիսիք են՝* սրա> ըստրա, ըստրանf, ըստուր, նոսր>նոստր *և այլն։ Բայց այս երևույթի համար մատենագրության մեջ օրինակներ չեն հանդիպում, մի բան, որ ստիպում է կարծել, որ տվյալ երևույթը նոր է։*

ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՈՒՄ

Հայերենի պատմական զարգացման ընթացքում բառերի հնչյունական կազմում կատարված փոփոխությունների մեջ ուշադրության արժանի երևույթ է նաև հնչյունների անկումը, մի բան, որ երբեմն զգալապես փոխում է բառի արտաքին պատկերը, հեռացնում նրան իր նախաձևից։

Դրա հետևանքները ավելի զգալի են այն դեպքում, երբ բառը բաղկացած է մի քանի հնչյուններից և հնչյունի կորստից բացի՝ նրանում տեղի են ունենում նաև այլ փոփոխություններ (հմմտ. օր. շարժ>շարժf ժաժf, արժան>էժան, տապ>տապf>տաf՝ *նման* թամբ>թամբf> թամf *բառում կատարված փոփոխությանը և այլն)։*

Անկման առավելապես ենթակա են ձայնորդները և դրանց մեջ հատկապես յ, ն, ր *հնչյունները։ Սրանցից* յ*-ի մասին արդեն խոսք եղել է ձայնավորների դիրքային կիրառությունների քննությանը նվիրված բաժնում, որտեղ ասվել է, որ* ա*-ից և* ո*-ից հետո գտնվող բառավերջի* յ*-ի անկման երևույթի սկիզբը դիտվում է արդեն V—VI դարերում։ Մյուս ձայնորդների մասին պետք է ասել հետևյալը։*

Ն-Ի ԱՆԿՈՒՄԸ

Ն-ի անկումը արձանագրվում է հին՝ բաղաձայն+ն *վերջավորությամբ բառերում, այսինքն՝ այն նույն բառերում, որոնց մի մասի մեջ* ն*-ն դիտվում է որպես հավելական հնչյուն (տե՛ս էջ 322)։*

Այս տեսակետից միանգամայն օրինական հարց կարող է առաջանալ։ Ճի՞շտ է, արդյոք, որ առանց ն*-ի բառերը պետք է դիտել որպես* բաղաձայն+ն *վերջավորությունից՝* ն*-ի անկմամբ առաջացած ձևեր։ Չէ որ դրանք կարելի է դիտել նաև որպես առանձին տարածքների առանձնահատկություններ, երբ մի վայրի* ն*-ահանգ վերջավորությանը համապատասխանում է մի այլ վայրի զերո վերջավորությունը (*ն*-ի բացակայությունը), մանավանդ որ արձանագրվող բառերի մի մասում այդ* ն*-ն նախնական չէ, այլ հավելական է։ Ավելի պարզ ասած՝ հին հայերենից*

ավանդված այնպիսի բառեր, ինչպիսիք են, օրինակ, գառն, եզն, ձուկն, մուկն *և նմանները, որոնք արդի բարբառների մեծագույն մասում ունեն* գառ, եզ, ձուկ, մուկ *ձևերը, դրանցում* ն*-ի բացակայությունը պետք է համարել նախնակա՞ն, թե՞ պատմական։*

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դասական հայերենի շրջանից ավանդված ն*-ահանգ բառերը իրենց կազմությամբ ամբողջ հայերենի համար նախապես եղել են ընդհանուր (չնչին բացառություններով)։ Միայն հետագայում է, որ որոշ վայրերի հայերեններ սկսել են կորցնել այդ* ն*-ն։*

Ն-ահանգ վերջավորության ընդհանուր հայկական լինելու հիմնական կռվանը կարելի է համարել այն, որ ա՛յն բարբառներում, որոնց մեջ ձուկն, մուկն *և նման բառերը հանդես են գալիս առանց բառավերջի* ն*-ի* (ձուկ, մուկ), *սեռական-տրական հոլովներում ունեն այնպիսի վերջավորություն, որը անմիջապես կապվում է այդ նույն բառերի գրաբարյան* ա *ներդրական հոլովման հետ։ Այլ կերպ ասած, այսօրվա բարբառների* գառ–գառան, եզ–եզան, ձուկ–ձկան, մուկ–մկան *հոլովումը ուղղածորեն գալիս է հին հայերենի* գառն–գառին, եզն–եզին, ձուկն–ձկան, մուկն–մկան *հոլովումից, միայն այն տարբերությամբ, որ այդ բառերը հին հայերենում պատկանում էին երկու տարբեր ներդրական հոլովումների* (ա *պարզ և* ի–ա *խառն), իսկ արդի բարբառներում այդ երկուսը միավորվել են մի հոլովման մեջ և այդ բառերի վերջնահանգ* ն*-ի կորստով՝ հին հերթագայության դիմաց առկա է հոլովական վերջավորություն։*

Ն-ի անկման առաջին օրինակները, ինչպես արդեն ասվել է, վերաբերում են հին հայերենի դասական շրջանին։ Այստեղ մի այնպիսի բառաձևի առկայությունը, ինչպիսին է խուրձ*-ը, որի ուղիղ ձևում չնայած բառավերջի ն-ի բացակայությանը, սեռական-տրականում ունենք* խրձան *հոլովաձևը, արդեն խոսում է նախնական* խուրձն, *այսինքն՝* ն*-ով ձևի գոյության մասին։ Հին հայերենում այն հանդես էր գալիս առանց* ն*-ի, որ նշանակում է, թե* ն*-ն նրանում ընկել էր։*

Այս նույն ժամանակներում հանդիպում է նաև ջերմն *բառի* ջերմ՝ *առանց* ն*-ի տարբերակը*[13], *որը ենթարկվում է նույն* ջերման *հոլովման։*

Ամենայն հավանականությամբ հին հայերենի բանավոր-խոսակցական տարբերակներում ն*-ի կորուստ ունեին* ն*-ահանգ և այլ բառեր, որոնց մասին այսօր ստույգ որևէ բան ասել հնարավո՛ր չէ։ Դրանց գոյության մասին կարելի է միայն դատել արդի բարբառների որոշ լեզվական փաստեր քննելով։*

13 *Ոմանք այդ ձևերի գոյությունը աշխատում են պատճառաբանել կիրառական՝ խոսքիմաստային տարբերությամբ։ Իբր թե* ջերմն *բառը ունի գոյականական, իսկ* ջերմ*-ը ածականական կիրառություն։ Եթե այդ ճիշտ կարող է լինել* ջերմն *բառի համար, ապա* ջերմ*-ի համար կարելի է բերել և այս և այն իմաստով կիրառության օրինակներ։*

Մենք վերը տեսանք, որ մեր ժամանակակից բարբառները, անկախ այն բանից պահե՞լ, թե կորցրել են ն-ահանգ բառերի բառավերջի ն-ն, շարունակում են պահել այդ բառերի հոլովումը։ Սակայն ուշագրավ է և այն, որ այդ բառերի շարքում մի քանիսը, որոնք շատ սովորական և հաճախական գործածություն ունեցող բառեր են և այդ տեսակետից պետք է ավելի պահպանողական լինեին, շեղվում են ն-ահանգ բառերին հատուկ հոլովումից։ Այդ բառերից են, օրինակ, ոտ||ոտք, մատ, ձեռ|| ձեռք, հարս, կաթ, որոնք բարբառների մեծ մասում ունեն ի հոլովում։ Կարելի է ենթադրել, որ այս բառերի հոլովափոխությունը (շեղումը) պայմանավորված է եղել սրանցում ն-ի կորստի խոր հնությամբ, երբ այս բառերը ն-ահանգ բառերից կտրել էին իրենց կապը։

Հին հայերենի շրջանում արդեն սկիզբ առած այս երևույթը հետագայում ավելի ծավալվում և ընդարձակում է իր ընդգրկման սահմանները։ Միջին հայերենում այս երևույթը արդեն վկայվում է բազմաթիվ բառերի օրինակով, որոնք արձանագրվում են տարբեր վայրերում գրված տարբեր լեզվական հուշարձաններում։ Բերենք մի շարք օրինակներ. «...տուաք ոռմով (<որմն) և ծառովք պտղաբերովք» (Դհվ 1, 48, 1036 թ.), «...երթան առ ինք (<ինքն) ... տեսնուն զինք ... չկարէ զինք այլ ոք նեղել ... չի ճանաչել ի յինք իրք ցաւ» (Անս. 25), «Զլինի ի հետն այլ ցեղ ջերմ ի բորբոսային ջերմեռոյն»[14] (Մխ. Հեր. 46բ), «Գիրս մնա, ձեռս գնա» (Ժգ ՀձՀ 130, 1317 թ.), «...կենդանարար ոտդ համբուրեմ» (Ձեռ. 8030, 7ա, 1314 թ.), «...ոչ ունել հարս և ոչ տալ» (Սմբ. Դատ. 30), «...ատար սերմի ծնունդ» (Ն. տ. 8), «Ջերխվարդ որ ձեռ բերիր և հեծար անվախ (Խաչ. Կեչ. 171), «...կու փշրէ կզակ ւ ատամ (Ֆր. 253), «...զերդ մարգարիտ ի բուդ ունիս» (Ն. տ. 272), «...մատս մանկաղով կտրել ի» (Ժե ՀձՀ II, 358, 1474 թ.), «մարդկան կապես բեռ ու շալակ» (Հովհ. Թլկ. 193), «...երակն զետ մոջիմ ժաժի» (Ամիրդ. Ուս. բժշկ. կգ), «...վայրի դաղձ (Ն. տ. ժբ), քաղցր նուռ» (Ն. տ. զբ), «...ասեղ մն անցնես» (Ամիրդ. օգ. բժշկ. 210), «կաթ կերած չլինի» (Ն. տ. 65), «ականջն որդ լինի» (Ն. տ. 226), «...աղի ձուկ ուտես (Ն. տ. 31) և այլն, և այլն։

Ինչպես արդեն ասվել է, հայերենի բարբառների զբաղեցրած մի որոշակի տարածքում (հիմնականում Սյունիք-Արցախի բարբառներում) վերջնահանգ ն-ի անկում տեղի չի ունեցել։ Բայց այնտեղ, որտեղ ն-ն ընկել է, բառավերջում տարբեր վայրերում թողել է տարբեր հետևանքներ։ Բարբառների մի մասում (հիմնականում արևմտյան) ն-ի անկու-

---

14 Այն որ ջերմ բառի հոգնակիի մեջ չի վերականգնվել ն-ն (ինչպես դա տեղի է ունենում ձուկ-ձկներ, մուկ-մկներ բառերում), նշանակում է, որ այս բառում ն-ի կորուստը իրոք կատարվել էր վաղ ժամանակներում, մինչև նոր հոգնակերտի կիրառությունը։

մից հետո բառավերջը մնացել է բաղաձայնահանգ (բեռն>բեռ, գառն>գառ և այլն), մյուս մասում (հիմնականում Լոռի, Նոյեմբերյան, Իջևան, Արարատյան բարբառ և այլն) ն-ի անկումից հետո՝ բառավերջում ը ձայնավոր է (բեռն>բեռը, գառն>գառը և այլն): Ըստ որում այս օրինաչափությամբ մի շարք բառեր (ինճն>ինճը, դառն>դառը, ինն>ինը, խառն>խառը, սառն>սառը, տասն>տասը) տարածվել են և այլ բարբառներում: Խոսակցական հայերենից դրանց մի մասը անցել է նաև գրական լեզվին:

Պետք է կարծել, որ ն-ի անկումից առաջացած այս երկու տարբեր բառավերջերը արդյունք են բաղաձայն+ն զուգորդության երկու տարբեր արտասանությունների:

Հայերենի տարբերակների մի մասում այդ զուգորդության մեջ բացակայել է գաղտնավանկը, այսինքն՝ բառավերջի ն-ն և նրան նախորդած բաղաձայնը արտասանվել են առանց միջանկյալ ձայնավորի: Այս դեպքում է, որ ն-ի անկումից հետո բառավերջը մնացել է բաղաձայնահանգ: Սրան հակառակ, հայերենի մյուս տարբերակներում, այդ նույն զուգորդության մեջ եղել է գաղտնավանկ. դեռ ավելին՝ գաղտնավանկը ուժեղ ընդգծվել է իր ը ձայնավորով (ձուկըն, մուկըն): Այս դեպքում էլ ն-ի անկումից հետո բառավերջը մնացել է ը-ով: Այս բացատրությունը թեև ենթադրություն է, բայց ունի իր հիմքերը: Այսօրվա վրացահայ տարածքի մի շարք խոսվածքներում ն որոշիչ հոդի կիրառման ժամանակ՝ նրա և նախորդ բաղաձայնի միջև գաղտնավանկային ձայնավոր չի արտաբերվում: Հնչյունական այդ դիրքը համընկնում է բաղաձայն+ն կազմությունների հետ, և պետք է կարծել, որ այս դեպքում ևս գաղտնավանկային ը չի եղել:

Ր-Ի ԱՆԿՈՒՄԸ

Ր ձայնորդի անկումը խիստ տարածված երևույթ է: Այն արձանագրվում է ոչ միայն ժամանակակից բարբառներում (տարբեր վայրերում տարբեր հաճախականությամբ), այլև մատենագրական աղբյուրներում: Այդ երևույթը դիտելի է առավելապես մերձբաղաձայնական դիրքերում՝ ամենատարբեր կազմության բառերում:

Մատենագրության մեջ ամենահին վկայությունը վերաբերում է ջրաղաց բառին, որից ր-ի անկմամբ ձևեր հանդիպում են սկսած XI դարից: Այն հանգամանքը, որ ժամանակակից բարբառներում արձանագրվող ձևերը համատարած կերպով առանց ր-ի են (ջաղաց, ջաղաջ, չաղաչ, ջէղաց, ճաղաց, ճէղաց և այլն) և մատենագրությամբ վկայվող օրինակներն էլ շատ հաճախական են, խոսում է ջաղաց բառաձևի ժողովրդախոսակցական բնույթի և հնության մասին: Բերենք մի շարք վկայություններ միջնադարյան սկզբնագիր աղբյուրներից. «...կէս ակն ջա-

ղաց… Գլխձորին ջաղաց» (ԴՀվ I, Անի, 63, 1215 թ.), «…ակն մի ջաղաց…ջաղացանոյն ծառութիւն (Ն. տ. 58, XII դար), …զերկու ակնի ջաղացն յԱռփա» (ԴՀվ 3, Վայոց ձոր, 246, 1279—90 թթ.), «…իւր ջաղցտեղն իւր է» (Գ. Հովս. Հձ 250, 1067 թ.), «…ջուր հանել ի գետոյ կամ ջաղցնոյ» (Սմբ. Դատ. 16), «Գնեցի զՀունիրս ջաղաց» (ԴՀվ 2, Սյունիք, 41, 1397 թ.), «Գնեցի զջաղացն Շամօյէն» (Ժե ՀձՀ, 475, 1437 թ., Արճեշ) և այլն, և այլն:

Ինչպես կարելի է դիտել վկայության վայրերից՝ ջաղաց բառաձևը միջնադարում տարածված էր շատ վայրերում և հանդես էր գալիս որպես ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ ձև:

Ջաղաց բառաձևը եղակի օրինակ չէ մատենագրության մեջ: Ր-ի անկմամբ վկայվում են նաև այլ բառեր, որոնք նույնպես առատորեն արձանագրվում են տարբեր վայրերում գրված տարբեր բնույթի գրավոր աղբյուրներում: Այդ բառերն են, օրինակ՝ արժան>աժան, արժել>աժել, այժել, արժենալ>աժենալ, դուրս>դուս, երբ>եբ, եփ, հրաման>համանք, հրամայել>համել, հրաւէր>հավէրք, շարժել>ժաժիլ, քարշել>քաշել և այլն:

Հարկ չենք համարում սրանցից ամեն մեկի համար մատենագրական վկայություններ բերելու, բավարարվենք միայն մի քանի օրինակներով. «Թող աժէ քանի ու այժէ» (Անս. 11), «…ի դուս ձգես ոչ» (Ժե ՀձՀ 1, 658, 1419 թ.), «…զդարբնի փուքսն, որ եբ ի յինքն քաշէ զբնիկ տաք աւդն» (Մխ. Հեր. 11բ), «Անհամանք է ելել ճորան» (Անս. 13), … եւ հավէրքն, որ պարոնն զճորտն հրաւիրէ» (Ն. տ. 9), «… յորժամ երակն զետ մոջիմ ժաժի» (Ամիրդ. Ոււ. բժշկ. կգ)[15] և այլն:

Ժամանակակից բարբառներում այս ձևերը մինչև այսօր էլ կենդանի են և տարբեր վայրերում հանդես են գալիս հնչյունական տարբեր կերպարանքներով՝ տվյալ բարբառի հնչյունափոխական օրինաչափությանը համապատասխան: Բարբառներում ր-ի անկմամբ արձանագրվում են և այնպիսի բառեր, որպիսիք վկայված չեն մատենագրությամբ. այսպես, օրինակ՝ բաղարջ>պաղաճ, բարձր>բ՛ացրը, պացրը, պառսը, բօձ̈ր՛ բորբոս> փո̈փո̈սնը, իրք>իք, խարշել>խաշել, խնդրել>խնդիլ, մանրել>մանդիլ, սերկևիլ>սիկիվիլ և այլն[16]:

Հարկ չկա կասկածելու, որ հիշյալ բառերում ր-ի անկումը պատմական շրջանում կատարված իրողություն է, քանի որ ր-ն ստուգաբանո-

---

15 Ավելի մանրամասն տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», էջ 144—146:

16 Սրանցից խաշել և քաշել բառերը որպես կանոնիկ ձևեր այժմ գործածվում են ժամանակակից գրական հայերենում: Մերժված չէ նաև երկրորդի ր-ով արմատը՝ քարշ տալ, քարշակ և այլն:

րեն նախնական է (հմմտ. օր. ջուր+աղաց=ջրաղաց>ջաղաց, **հնդեվր.** **dhur>դուռն>դուռս>դուռ**, *պհլ.* **framāy>հրամայել>համել**, *պհլ.* **framan>հրաման>համանք** և այլն)։

Ր-ի, ինչպես նաև այլ հնչյունների անկման կամ հավելման երևույթների արժեքը պատմության համար կարևոր է նրանով, որ հնչյունափոխական այլ երևույթների հետ միասին ուրվագծում են միջնադարի հայերենի խոսակցական տարբերակների ընդհանուր պատկերը՝ նրանց բարբառային բաժանվածությամբ ու աշխարհագրական տարածվածությամբ։

ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԴԵՑՈՒՄ ԵՎ ՊԱՐԶԵՑՈՒՄ

Խոսքը այստեղ վերաբերում է պայթական, շփական և պայթաշփական բաղաձայնների միջև կատարվող այն անցումներին, երբ հին շրջանից ավանդված բառի մեջ առկա պարզ հնչյունի փոխարեն պատմական շրջանում երևան է գալիս բարդ հնչյուն կամ, ընդհակառակն, բարդ հնչյունի փոխարեն՝ պարզը։ Այս երևույթը հետաքրքիր է այն առումով, որ նրա ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզելու, թե բաղաձայնները բացի քննարկված համակարգային փոփոխություններից այլ կարգի տեղաշարժերի չե՞ն ենթարկվում՝ հատկապես կապված նրանց արտասանության տեղի և բնույթի փոփոխության հետ։

Պատմության տարբեր շրջաններում նման հնչյունական հակադրություն ներկայացնող բառաձևերի գոյությունն ինքնին խոսում է նման փոփոխությունների գոյության օգտին։ Հարցը միայն այն է, թե ինչ մեկնաբանություն պետք է տալ դրան։

Նախ՝ պարզ հնչյունների բարդեցման մասին։ Այստեղ կարելի է առանձնացնել փոփոխությունների երկու տիպ։ Դրանցից մեկի ժամանակ բարդ հնչյուն առաջանում է կից երկու բաղաձայնների ձուլմամբ՝ մի նոր որակի արտասանությամբ, որը, սակայն, իր մեջ հնչյունաբանորեն ենթադրում է նախնական բաղադրիչները։ Այս փոփոխությունը միանգամայն հասկանալի ու բացատրելի է, եթե նկատի ունենանք, որ տվյալ բարդ հնչյունը առաջանում է այն բաղադրող մասերի ձույլ, միասնական արտասանությամբ։ Այդպես է առաջացել, օրինակ, հին **սեպուհ** բառից՝ ***սեպուհական>սեպհական>սեփական**, որտեղ **փ**-ն **պ** և **հ** հնչյունների միասնական, մի հնչյունի տևողությամբ ու որակով արտաբերվելու հետևանք է։ Նման երևույթ կատարվել է նաև **արտասուք>արտասունք>արցունք** բառում։ Այստեղ էլ նախ՝ ընկել է միջնավանկի ձայնավորը (**արտսունք**) և ապա **տս** հնչյունների ձուլմամբ ստացվել է **ց**։ Ըստ որում **արցունք** բառաձևը գալիս է դեռևս միջին հայերենի շրջանից և մինչև այժմ էլ կենդանի ու գործածական է ոչ միայն արդի գրական հայերենում, այլև բարբառների ճնշող մասում։

Միջին հայերենից հայտնի են նաև այլ բառեր, որոնց մեջ առկա են նույն փոփոխությունները։ Այսպես, օրինակ, կիլիկյան հայերենում պատասխան բառին զուգահեռ գործածվում է նաև պացխուն, կրտսեր>կրցեր, վարսուն>վացուն, վացսուն, բշուառ>չուառ, որոնց մեջ տս, քս, բշ բաղաձայնական զուգորդությունները տվել են ց և չ պայթաշփականներ։ Բերենք համապատասխան օրինակներ գրավոր աղբյուրներից. «Արցունքն սապոն լինի, սեւութիւնըն սիպտականայ» (Հով. Երզնկ. 149), «...աչից արցունքն աղի լինի» (Ամիրդ. Ուս. բժշկ. հզ), «...բերես զքո միգեղն և զինչ այլ պէտք ունիս, որ ի պացխուն այնես» (Անս. 43 և այլ էջերում), «... կրցեր եղբայրն իւր» (Մանր ժմնկ. 2, 49, XIII դար), «...ի թուականութեան Հայկազեան տոմարի Գ-երորդ վացունէրորդի երրորդի» (ժե հձհ 1, 163, 1414 թ.), «...չուառս քան զամենեսին» (Գ. Հով. հձ 517, 1187 թ.), «...զչուառս գրիչ՝ զՄխիթարիչ Անեցի» (Ն. տ. 675, ժԳ դար) և այլն։

Այս օրինակները օգնում են բացատրելու նաև բարբառներում հանդիպող նման բառաձևերը, որոնց մեջ կատարված հնչյունափոխական երևույթները անճանաչելիորեն փոխել են բառի նախնական կերպարանքը։ Այսպես, օրինակ. Կարճևանի բարբառում հին հայերենի տեսանել բայի դիմաց ունենք ցուլ բառը։ Արտաքնապես թվում է, թե ոչ մի կապ չկա այդ երկու բառերի միջև։ Բայց երբ հաշվի ենք առնում հնչյունափոխական այն օրինաչափությունները, որոնք տարբեր ժամանակներում գործել են այդ բառում, ապա ամեն ինչ ընկնում է իր տեղը։ Այսպես. հայտնի է, որ միջին հայերենի շրջանից մի շարք բայեր, այդ թվում նաև տեսանել բայը, հանդես են գալիս ու լծորդությամբ՝ տեսնուլ, իջնուլ, մտնուլ, գտնուլ և այլն։ Հետևաբար տեսնուլ բայաձևի մեջ արդեն կա Կարճևանի բարբառի ցուլ-ի լծորդությունը։ Կարճևանի բարբառի տարածքին հատուկ է նաև մի այլ առանձնահատկություն. այստեղ մի շարք բայեր ունեն անածանց կազմություններ, ինչպես՝ մտանել>մըտիլ, ելանել>իլիլ և այլն, այս թվում, ուրեմն նաև, տեսնուլ>տեսուլ բայը։ Ահա այս ձևում է, որ ընկել է ե ձայնավորը, որի հետևանքով տ-ն և ս-ն հայտնվելով իրար մոտ (*տսուլ)՝ տվել են ցուլ բայաձևը։

Բարդեցման մյուս տիպի ժամանակ՝ պարզ հնչյունի դիմաց պարզապես բարդ հնչյուն է։ Այստեղ բարդեցումը ոչ թե հետևանք է երկու կից հնչյունների միաձուլման՝ մի բարդ հնչյունի մեջ, այլ բարդ հնչյունը հանդես է գալիս մի՛ պարզ հնչյունի դիմաց։ Հնչյունաբանորեն այս երևույթը բացատրելի չէ։ Օրինակ, ինչո՞վ բացատրել հին վարժապետ բառի դիմաց արդի որոշ բարբառներում առկա վարչապետ-ը, որի մեջ հին ժ-ի դիմաց չ է։ Կամ պատիժ>պատիճ բառը, որի բարբառային ձևի ճ-ն նույնպես հանդես է գալիս հին ժ-ի փոխարեն։

Նման բառաձևեր հանդիպում են նաև պատմական շրջանի գրավոր աղբյուրներում։ Հենց վերը նշված պատին բառաձևը արձանագրվում է ձեռագրերի հիշատակարաններում, ինչպես, օրինակ, հետևյալ հատվածներում է. «Եւ ով որ սուտ տէր կանկնի կամ ծախելոյ կամ խաբելոյ կամ պակասութիւն ննելոյ զպատինն ի սուրբ Աստուածածնէն առնու» (ԺԵ ՀձՀ 2, 67, 1456 թ., Բասեն), «...խաչահանողացն առցէ և զպատինն Յուդայի» (Ն. տ. 449, 1480 թ.)։

Ավելի վաղ վկայություններ կան մարզպան>մարծպան, մարզել>մարձել բառերի համար։ Սրանց մեջ էլ նախնական զ-ի դիմաց ձ է։ (Պետք է կարծել, որ մարծպան բառում ծ-ով արտահայտված է j ձայնեղ պայթաշփականը)։ Ահա օրինակները. «Ես Քուրդս, Հասան, Համազասփ(պ), Սարգիս, որդիք Սմբատա, որդո Համազսպա մարծպանի» (ԿՂ Սան. 106, 1199 թ.), «...զմարմինն յուշիկ յուշիկ աճելով մարձէ» (Մխ. Հեր. 33ա)։

Հայերենի ժամանակակից բարբառներում ունենք նաև ճանց՝ առաջացած գրաբարյան ճան զ- կապակցությունից։ Պետք է ենթադրել, որ այդ կապակցության մեջ էլ զ-ն նախ դարձել է ձ, և հետո միայն՝ ց։ Այդ բառաձևը բազմաթիվ վկայություններով արձանագրվում է արդեն իսկ կիլիկյան հայերենի բնագրերում, նույնիսկ՝ գերակշռորեն գրաբար գրված բնագրերում։ Բերենք մի քանի օրինակներ. «Եւ ոչ կարէ եպիսկոպոսըն իւր եպիսկոպոսութեան ժառանգ դնել, ճանց զայն որ ընտրութեամբն Աստուծոյ եւ հայրապետին եւ ամենայն ժողովրդեանն արժանի այնեն» (Սմբ. Դատ. 24), «...ճանց կարեն հանել ու տանել խանդկով ընդ ամէն մարդոյ գետններ» (Ն. տ. 16), «...ճանց զսամորչէքն այլ իրք չտան... իրաւունք չտան ճանց սամորչէքն ի պըթէն» (Լևոն Գ-ի 1288 թ. արտոնագրում, Ղ. Հով.) և այլն։

Միջին հայերենում նման փոփոխություն ունի նաև գրաբարյան վասն>վանց նախադրությունը։ Այստեղ կատարվել է դրափոխություն (վասն>վանս) և ապա ս-ն փոխվել ց-ի (թերևս ճանց բառի համաբանությամբ)։ Վանց-ը ևս ունի վկայություններ և առավելապես հանդիպում է կիլիկյան սկզբնագրերում. «...շինել էին զիրէնց տունն վանց իրենց բայժուն» (Պարոն Կոստանդինի 1271 թ. դաշնագիր. տե՛ս Ղ. Հով.), «Եւ վանց վաճռկըներոյն, որ եփ կու գան՝ նա զիրենց սնդիկնին կու բանան» (Լևոն Գ-ի 1288 թ. արտոն) և այլն։

Պարզ հնչյունի բարդեցման այս երևույթը, անշուշտ, կատարվել է պատմական շրջանում։ Դա երևում է ոչ միայն ճան զ-, վասն բառերի օրինակում, այլև վերը նշված վարժապետ, մարզել, մարզպան բառերում, որոնց մեջ ժ, զ բաղաձայնները նախնական են։ Այս բառերը ծագումով

իրանական են և փոխատու լեզվում ունեն ž, z (varž, marz, marzəpan), *ինչպես ավանդված են հին հայերենից*[17]:

Բարդ հնչյունների պարզեցումը վերը նկարագրվածի հակառակն է: Այս դեպքում պայթաշփականները, որպես բարդ հնչյուններ, պարզվում և վերածվում են պարզ բաղաձայնների: Այս երևույթը արձանագրվում է հայերենի ժամանակակից համարյա բոլոր բարբառներում՝ տարբեր վայրերում տարբեր ինտենսիվությամբ:

Նախ բերենք նման հնչյունափոխությամբ հանդես եկող բառերի ցանկը (ցանկը վերջավոր չէ):

ածելի>ադըլի
ամաչկոտ>ամըշկոտ[18]
անձրև>ապրէվ
անցանել>անընիլ —
աչք>աշկ
երիցակին>իրիսկին
ինչքան>հիշքան
իջանել>իշնել
լուացք>լըվաւկ
խածանել>խադնէլ
խծպել>խըդպէլ
խղճմտանք>խըղժմտանք
խոցատել>խօսատել

խցկել>խըսկէլ
ծածկել>ծասկէլ
կծկել>կըսկէլ, կըդկէլ
կճպել>կըշպել
կոծկել>կօսկէլ, կօդկէլ
կոճակել>կօշկէլ, կօժկէլ
հեծանել>հէդնէլ
մէջք>մէշկ
միջնակ>միշնակ
ոջլոտ>վօշլօտ
վարձք>վարսկ
քացախել>քասխիլ

Այս բառերի մեջ կատարված փոփոխությունների մասին կարելի է ասել հետևյալը:

ա) Բարդ հնչյունի պարզեցումը տեղի է ունեցել նախաբաղաձայնական, ավելի ճիշտ՝ հպականներին նախորդած դիրքում: Բերված օրինակների մեջ միայն fացախել>fացխել>fասխիլ *բառում է, որ* ց>ս *անցումը կատարվել է շփականից առաջ, մյուս բոլոր դեպքերում պարզեցումը արձանագրվում է պայթականներից ու ձայնորդներից (հպականներից) առաջ:*

բ) Բերված օրինակների մի մասում պայթաշփականը ընդմիջարկված է ձայնավորով և անմիջապես չի գտնվում պայթականի կամ ձայնորդի հարևանությամբ, մի բան, որ հակասում է վերը բերված օրինաչափությանը: Բայց պետք է նկատի ունենալ, որ պայթաշփականի պարզեցումը կատարվել է այն բանից հետո, երբ այդ բառերում սղվել է միջնավանկի ձայնավորը, որի հետևանքով և պայթաշփականը հայտնվել է հպականից անմիջապես առաջ: Ուրեմն նախ՝ անցանել>անցնել, երիցակին>երից-

17 Պատիժ *բառը ստուգաբանված չէ, ուստի նրա մասին որոշակի բան ասել հնարավոր չէ:*

18 *Չեն բերվում նույն բառի բարբառային տարբերակները:*

կին, խածանել>խածնել, ճեծանել>ճեծնել և այլն, հետո միայն՝ անց-նել>անանիլ, երիցկին>իրիսկին, խածնել>խազնէլ և այլն։

գ) Պայթաշփականի պարզեցման հետևանքով առաջացող շփականը կամայական հնչյուն չէ. այն պարզեցման ենթարկված բարդ բաղաձայնի շփական բաղադրիչն է։ Պայթաշփականների պարզեցման մեջ դա պարտադիր պայման է։ Այսպես, օրինակ. աչf բառի չ-ի դիմաց շ-ի առկայությունը (աշկ) պայմանավորված է նրանով, որ շ-ն չ=(թ+շ) բարդ հնչյունի շփական բաղադրիչն է և որ չ-ի պարզեցումից կարող է լինել միայն շ և ոչ ուրիշ բաղաձայն։

Այս տեսակետից՝ կարող է թվալ, թե հակասություն կա այն բոլոր բառերում, որոնց մեջ պայթաշփականի և նրանից առաջացած շփականի միջև բացակայում է այդ համապատասխանությունը։ Սակայն այդ հակասությունը միայն երևութական է. ամեն ինչ դառնում է օրինաչափ, երբ հաշվի ենք առնում նաև հնչյունափոխական այլ օրինաչափությունները։ Այսպես, օրինակ. մէջf, իջնել, միջնակ, ոջլոտ, վարձf բառերի պայթաշփականների պարզեցման արդյունքում օրենքով պետք է ունենայինք ժ (առաջին չորսում) և զ (վերջինում), ոչ թե շ և ս: Այդ շեղման պատճառն այն է, որ պարզեցումը կատարվել է ոչ թե ջ-ից և ձ-ից, այլ չ-ից և ց-ից, այսինքն՝ այն բանից հետո, երբ հիշյալ բառերում ձայնեղները դարձել էին շնչեղ խուլեր։ Այսինքն, նախ՝ իջնել>իչնէլ, մէջf>մէչf, միջնակ>միչնակ, ոջլոտ>վօչլոտ, վարձf>վարցf և ապա միայն՝ իչնէլ>իշնէլ, մէչf>մէշկ, միչնակ>միշնակ, վօչլօտ>վօշլօտ, վարցf>վարսկ:

Նույն բացատրությունը պետք է տալ նաև այն բառերին, որոնց մեջ խուլ պայթաշփականների դիմաց ձայնեղ շփականներ են. ինչպես, օրինակ՝ խածանել>խածնել>խազնէլ, խղճմտանf>խըժմտանf, կոճակել>կոճկել>կօժկէլ և նման բառերում է։ Այստեղ էլ պարզեցումը կատարվել է այն բանից հետո, երբ խուլ պայթաշփականները դարձել էին ձայնեղ, այսինքն, նախ՝ կատարվել է խածանել>խաձնել, խղճմտանf>խղջմտանf, կոճակել>կօջկել փոփոխությունը, ապա միայն՝ խաձնել>խազնէլ, խղջմտանf>խղժմտանf, կօջկել>կօժկէլ անցումը։

Ի՞նչ բացատրություն կարելի է տալ այս փոփոխությանը։

Ինչու՞ պայթաշփականի պարզեցման արդյունքում միշտ լինում է շփական, բայց ոչ երբեք պայթական։ Ո՞րն է դրա պատճառը։ Կարծում ենք, որ պատճառը պարզ է։ Հանդես գալով հպականներից առաջ, պայթաշփականը զրկվում է իր պայթական տարրից. վերջինս չեզոքացվում է իրեն հաջորդող հպականի կողմից և արդյունքում մնում է շփականը։

Պայթաշփականների շփականացման երևույթը ակնհայտորեն պատմական շրջանում՝ այն էլ ոչ վաղ միջնադարում կատարված իրողություն է։ Դա հաստատվում է ոչ միայն նրանով, որ XI—XVI դդ. մատենագրու-

թյունը, որ այնքան շատ է հնչյունափոխական այլևայլ երևույթների արձանագրման մեջ, այս անգամ մասին լռում է, այլև նրանով, որ եթե պայթաշփականների՝ շփականների փոխարկվելու օրինաչափությունը գործել է բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորների անկման (անցանել>անցնել), խուլ պայթականների ձայնեղացման (ճեծանել>ճեձնել) փոփոխություններից հետո, ապա հասկանալի է, որ այս երևույթը խոր հնություն ունենալ չէր կարող։

Շփականների պայթաշփականացման և վերջիններիս շփականացման երևույթները միաժամանակ բնութագրում են պայթաշփականներին որպես բարդ հնչյուններ, որոնք կազմված են պայթական ու շփական բաղաձայնների այնպիսի զուգորդություններից, որոնց մեջ բաղադրիչները միավորվում են ըստ ձայնեղության (դ+ժ=ջ, դ+զ=ձ) ու խլության (տ+ս=ծ, տ+շ=ճ, թ+ս=ց, թ+շ=չ) հատկանիշների։ Հենց միայն այդ նկատի ունենալով այս հնչյունների համար ամենահարմար տերմինը պայթաշփական անվանումն է։

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայերենի պատմական հնչյունաբանության շարադրման ընթացքում մենք աշխատեցինք նկարագրել և, հնարավորության սահմաններում, նաև բացատրել մեր լեզվի հնչյունական համակարգի ներսում կատարված հիմնական պատմական փոփոխությունները, այդ նպատակով օգտագործելով ինչպես մատենագրական, այնպես էլ ժամանակակից հայերենի բարբառների մատչելի նյութը։ Որոշ դեպքերում, այս կամ այն հնչյունական երևույթի նկարագրությունը և մեկնաբանությունը հիմնվել է զուտ բարբառային նյութի վրա, որի պատճառը մատենագրական փաստերի բացակայությունն է։ Մասնագետ ընթերցողը կարող է նկատել, որ այստեղ ընդգրկված և նկարագրված երևույթները լրիվ չեն ներկայացնում գրավոր աղբյուրներում և բարբառներում հայտնի բոլոր դեպքերը։ Դա ինքնին հասկանալի է, քանի որ հայերենի բարբառների հնչյունական բոլոր առանձնահատկությունների քննությունը ոչ թե պատմական քերականության, այլ պատմական բարբառագիտության խնդիրն է, որը, ցավոք, առ այսօր բացակայում է մեզանում։

Ավելորդ է, թերևս, ասել, որ այս աշխատությունը հավակնություն չունի պատասխան տալու հայերենի հնչյունական համակարգի զարգացման հետ կապված բոլոր հարցերին։ Քննել հայերենի պատմական հնչյունաբանության բոլոր կողմերը, տալ դրանց սպառիչ նկարագրությունն ու մեկնաբանությունները, պատասխանել առաջադիր բոլոր հարցերին, մի խոսքով՝ ստեղծել հայերենի պատմական հնչյունաբանության կա-

տարյալ մի դասընթաց, մեր պատկերացմամբ, մի քանի սերունդների գիտնականների գործ է, եթե նկատի ունենանք ուսումնասիրության աղբյուրների այն հսկայածավալ գրավոր ժառանգությունը, որ դեռևս չի յուրացված և հայ բարբառների ընձեռած հարուստ նյութը, որ դեռևս սպասում է իր տարածական ու խորքային քննությանը։

Մեր աշխատանքը մեզ բերել է նաև մի շարք եզրակացությունների, որոնք վերաբերում են մեր լեզվի՝ պատմական շրջանում ունեցած փոփոխությունների հիմնական միտումներին։ Դրանք են։

ա) Հայերենի հնչյունական համակարգի զարգացման ներքին առաջմղիչ ուժերը եղել են իրար հակադրվող, բայց և դիալեկտիկական միասնության մեջ գտնվող հնչյունաբանական ու հնչույթաբանական այն երևույթները, որոնք իրենց հակադրությամբ ձգտել են հավասարակշռության մեջ պահել համակարգի բաղկացուցիչ մասերը։ Այդպիսի հակադրությունների օրինակներ կարող են լինել ձայնեղացման ու ապաձայնեղացման, ձայնավորների վերընթաց ու վայրընթաց փոփոխությունները, հ>խ, խ>հ անցումները, պայթաշփականների շփականացման և շփականների պայթաշփականացման երևույթները և այլն։

բ) Հնչյունական փոփոխությունները կատարվել են ժամանակի և տարածության մեջ։ Հայերենի պատմական (և նախապատմական) գոյության երկար ու ձիգ ժամանակաշրջանի ընթացքում, բնականաբար, տեղի են ունեցել տարբեր, շատ անգամ միանգամայն իրար հակասող հնչյունափոխական երևույթներ։ Քանի որ դրանք կատարվել են պատմության տարբեր փուլերում, ուստի և նույն բառերը կարող են ենթարկված լինել (և են) մի շարք փոփոխությունների։ Այլ կերպ ասած՝ այսօրվա բարբառներում առկա բառերը իրենց մեջ կրում են դարերի ընթացքում մեկը մյուսի վրա շերտավորված ամբողջ մի շարք փոփոխությունների կնիքը։ Այդպիսի օրինակներ կարելի է տեսնել Անտիոքի շրջանի բարբառներում, Գողթան ու Արևիք գավառների այսօրվա խոսվածքներում և այլն։

գ) Հայերենի հնչյունական համակարգի զարգացման կարևոր առանձնահատկություններից մեկը՝ հնչյունական փոփոխությունների անհամաչափ զարգացումն է։ Առաջանալով որոշակի վայրում՝ տվյալ հնչյունափոխական երևույթը նույն տարածքի տարբեր մասերում տարբեր զարգացում կարող է ապրել։ Որոշ վայրերում տվյալ երևույթը զարգացում չի ապրում և մնում է նույն մակարդակում. այլ վայրերում ծայր է առնում մի այլ փոփոխություն և այսպես շարունակ։ Այսպես է, օրինակ, ի ձայնավորի անցումները ի>է>ա̈>այ փոփոխություններով՝ Սյունիք-Արցախ-Գողթան տարածքում։ Այդպես է նաև բարբառներում ծայր առած ապաձայնեղացման երևույթը, որին հակազդող խուլերի ձայնեղացման գործընթացը մի շարք վայրերում չի գործել։ Սյունիքի տարածքի

որոշ խոսվածքներում խուլերի ձայնեղացումը ինչ-որ չափով սկսվել է բառավերջի դիրքում, բայց մնացել է անավարտ։

դ) Հայերենի պատմական հնչյունաբանության փաստերը խոսում են այն մասին, որ հնչյունափոխական հիմնական երևույթների գերակշիռ մասը ընկնում է եզրային բարբառներին։ Սրանց մեջ է, որ ինչպես բաղաձայնները (պայթականները և պայթաշփականները), այնպես էլ ձայնավորները ենթարկվել են խիստ փոփոխությունների։ Կենտրոնական, այսպես կոչված «միջերկրյա, ոստանիկ» խոսվածքները, ինչպես Արարատյան (սրա տակ հասկանալով բուն արարատյանը՝ Երևան, Էջմիածին, Աշտարակ), Մշո, Կարնո բարբառները, պահպանել են պատմական շրջանի սկզբի պայթական ու պայթաշփական բաղաձայնների արտասանությունը՝ դրանք մասնակի փոփոխությունների ենթարկելով միայն բառամիջի ու բառավերջի դիրքերում։ Կենտրոնական գավառների բարբառները իրենց նախնական վիճակին հարազատ են մնացել նաև ձայնավորական համակարգով։ Այն դեպքում, երբ եզրային բարբառներում այսօր, բացի հայերենի վեց ձայնավորներից, կան նաև առաջնային ու միջին շարքերի, շրթնայնացած ու այլ որակի նոր ձայնավորներ, կենտրոնական գավառների խոսվածքները ունեն միայն հայերենի վեց ձայնավորները և մերժում են եզրային բարբառների նոր ձայնավորները նույնիսկ փոխառյալ բառերում (օր. թուրք. sürü «ոչխարի հոտ»՝ եզրային բարբառներում և սուրու՝ կենտրոնական բարբառներում)։

Հաշվի առնելով հնչյունական փոփոխությունների տեսակարար կշիռը կենտրոնական ու եզրային բարբառներում, գալիս ենք այն եզրակացության, որ պատմական փոփոխությունների ընթացքը կենտրոնում եղել է ավելի դանդաղ ու չափավոր, քան հայերենի եզրային բարբառներում։ Նույն երևույթը կարող է վերաբերել նաև քերականական համակարգի փոփոխություններին, եթե կատարվի նրա հանգամանալից համեմատական ուսումնասիրությունը։ Նույնիսկ մակերեսային քննությունը եզրային բարբառներում երևան է բերում քերականական իմաստների արտահայտման այնպիսի նոր ձևեր, որոնք ոչ միայն հատուկ չեն կենտրոնական բարբառներին, այլև շատ հեռու են հին հայերենում նման իմաստներ արտահայտող ձևերից։ Այս դիտարկումները իրենց հերթին գալիս են վերանայելու տարածքային լեզվաբանության այն հանրահայտ թեզը, թե կենտրոնում՝ եզրերի համեմատությամբ, փոփոխությունները ավելի ինտենսիվ են և թե իրր կենտրոնի համեմատությամբ եզրերը պահպանում են ավելի հնատիպ (արխաիկ) գծեր։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) Օգտագործված սկզբնաղբյուրների

ԱՄԻՐԴ. ԱՆԳ. ԱՆԳ.—*Ամիրդովլաթի Ամասիացւոյ Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց, ի լոյս էած հանդերձ ծանօթագրութեամբ Կ. Յ. Բասմաջեան, Վիեննա 1926։*

ԱՄԻՐԴ. ՈՒՍ. ԲԺՇԿ.— *Ամիրդովլաթ Ամասիացու «Ուսումն բժշկութեան» հեղինակային ձեռագիր, Մաշտոցի անվան մատենադարանի № 8871 ձեռագիր, գրչ. թվ. 1459։*

ԱՄԻՐԴ. ՕԳ. ԲԺՇԿ.—*Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, խմբագրությամբ Ս. Մալխասյանցի, Երևան, 1940։*

ԱՆՍ.— Assises d' Antioche, *Անսիզ Անտիոքայ, Վենետիկ, 1876։*

Գ. ՀՈՎՍ.—ՀՁ.— *Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա (Ե դարից մինչև 1250), Անթիլիաս, 1951։*

ԳՐ. ԱՂԹ.—*Գրիգորիս Աղթամարցի, ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ Մայիս Ավդալբեգյանի, Երևան, 1963։*

ԳՐԻԳ.— *Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց, աշխատասիրությամբ Ա. Ս. Կծոյանի, Երևան, 1962։*

ԴՀՎ 1 — *Դիվան հայ վիմագրության, պրակ I, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966։*

ԴՀՎ 2 — *Դիվան հայ վիմագրության, պրակ II, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960։*

ԴՀՎ. 3 — *Դիվան հայ վիմագրության, պրակ III, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967։*

ԴՀՎ. 4.—*Դիվան հայ վիմագրության, պրակ IV, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1973։*

ԴՀՎ. 6 — *Դիվան հայ վիմագրության, պրակ VI, կազմեցին Ս. Ա. Ավագյան, Հռ. Ա. Ջանփոլադյան, Երևան, 1977։*

ԵԶ. ԿՈՂԲ.—*Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914։*

ԺԴ. ՀՁՀ — *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950։*

ԺԵ ՀՁՀ 1 — *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955։*

ԺԵ ՀՁՀ 2.— *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Բ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958։*

ԺԵ ՀՁՀ 3.— *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Գ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967։*

ԽԱՉ. ԿԵՉ.— *Խաչատուր Կեչառեցի, աշխատասիրությամբ Մ. Թ. Ավդալբեգյանի, Երևան, 1958։*

Կ. ԵՐԶՆԿ.— *Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրությամբ Ա. Սրապյանի, Երևան, 1962։*

ԿՂ ՀԱՂ.— *Կարո Ղաֆադարյան, Հաղբատ, ճարտարապետական կառուցվածքներ և վիմական արձանագրություններ, Երևան, 1963։*

ԿՂ ՀՈՎՀ.— *Կարո Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948։*

ԿՂ ՍԱՆ.— *Կարո Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957։*

ՀԱՅ. ԱՐՁ.— *Հայերեն արձանագրությամբ առարկաներ, աշխատասիրությամբ Եվգենե Մուշեղյանի, Երևան, 1964։*

ՀՈՎ. ԵՐԶՆԿ.— *Հովհաննես Երզնկացի, ուսումնասիրություն և բնագրեր, աշխատասիրությամբ Ա. Սրապյանի, Երևան, 1958։*

ՀՈՎ. ԹԼԿ.— *Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, աշխատասիրությամբ Էմ. Պիվազյանի, Երևան, 1960։*

ՁԵՌ. 7151.— *Մաշտոցի անվան մատենադարանի № 7151 ձեռագիր, գրչ. թվ. XIV դար, վայրը՝ Սյունիք։*

ՁԵՌ. 8030.— *Մաշտոցի անվան մատենադարանի № 8030 ձեռագիր, Ճառընտիր, գրչ. թվ. 1341, գրիչ՝ Տերտեր քահանա Երևանցի։*

ՁԵՌ. 3029— *Մաշտոցի անվան Մատենադարանի № 3029 ձեռագիր, գրչ. թվ. 1376։*

Ղ. ՀՈՎՆ.— *Ղևոնդ Հովնանյան, Հետազոտութիւնք նախնեաց ոտմկօրէնի վրայ, Վիեննա, 1897։*

ՄԱՆՐ ԺՄՆԿ. Ձ,— *Մանր ժամանակագրություններ (XIII—XVIII դդ.) հ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956։*

Մխ. ՀԵՐ.— *Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարութիւն, Մաշտոցի անվան մատենադարանի № 416 ձեռագիր, գրչ. թվ. 1279։*

Մ. ՂՐ.— *Մարտիրոս Ղրիմեցի, Բանաստեղծություններ, Երևան, 1965։*

ՆԵՐՍ ՇՆՈՐՀ. ԲՔ — *Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, ՌՄՀԹ։*

ՍՄԲ. ԴԱՏ.— *Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, հավաքական տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Գալստյանի, Երևան, 1958։*

ՍՄԲ. ՏԱՐԵԳ.— *Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956։*

ՎԻՄ. ՏԱՐ.— *Վիմական տարեգիր, ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց Հայոց, կազմեաց Կ. Կոստանեանց, Ս.— Պետերբուրգ, 1913։*

ՎՍՏԿ.— *Գիրք Վաստակոց, թարգմանութիւն նախնեաց յարաբացի լեզուէ, Վենետիկ, 1877։*

ՑՐ.— *Ցրիկ, Դիվան, Նյու-Յորք, 1952։*

բ) Լեզուների և նաև բարբառների

Ագլ.—Ագուլիսի բարբառ
ասոր.— ասորերեն
արբ.— արաբերեն
բաբել.— բաբելացերեն
Բայզ.—Բայազետի բարբառ
գերմ.— գերմաներեն
գրբ.— գրաբար հայերեն
եբր.— եբրայեցերեն
զենդ.— զենդերեն
թուրք.— թուրքերեն
ժամ. բրբ.— ժամանակակից հայերենի բարբառ
իտալ.—իտալերեն
իրան.— իրանական

լատ.— լատիներեն
Կաք.— Կաքավաբերդի բարբառ
Կես.— Կեսարիայի բարբառ
Կրճ.— Կարճևանի բարբառ
Կրն.— Կարնո բարբառ
հայ.— հայերեն
հբգ.—հին բարձր գերմաներեն
հնդեվր.—հնդեվրոպական նախալեզու
հս. պհլ.—հյուսիսային պահլավերեն
հուն.— հունարեն
հ. ֆր.—հին ֆրանսերեն
Մեղր.—Մեղրու բարբառ
միջ. հայ.— միջին հայերեն
Մկ.— Մոկաց բարբառ
Մշ.—Մշո բարբառ
Մրղ.— Մարաղայի բարբառ
ն. պհլ.— նոր պահլավերեն
Շատ.—Շատախի բարբառ
Շմխ.— Շամախիի բարբառ
Ոզմ.— Ոզիմի բարբառ
Ուրմ.— Ուրմիայի (Խոյի) բարբառ
չաղաթ.—չաղաթայերեն (հին թուրքերեն)
պազ.— պազենդերեն
պահլ, պհլ.—պահլավերեն
պարթ.— պարթևերեն
պարսկ, պրսկ.—պարսկերեն
Պոլ.— Պոլսի բարբառ
ռուս.—ռուսերեն
Սլմ.—Սալմաստի բարբառ
սոգդ.—սոգդիերեն
Սվ.—Սվեդիայի բարբառ
Վն.— Վանի բարբառ
վրաց.— վրացերեն

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Ուսումնասիրության առարկան 5
Ընդհանուր սկզբունքները 8
Աղբյուրները 12

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Հայերենի ձայնավորները և նրանց պատմական փոփոխությունները . . . 24

Գլուխ առաջին

Հայերենի ձայնավորները պատմական շրջանի տարբեր փուլերում . . 24
Հայերենի ձայնավորները պատմական շրջանի սկզբում 24
Ձայնավորները հայերենի բարբառներում 32
Հայերենի ձայնավորների ընդհանուր բնութագիրը 56
Բառի մեջ ձայնավորների դիրքային բաշխման օրինաչափությունները . 59
Շեշտը հայերենում 67
Ձայնավորների հնչյունափոխությունը կապված շեշտի հետ . . . 72

Գլուխ երկրորդ

Հայերենի ձայնավորների պատմական փոփոխությունները 84
Ձայնավորների փոփոխությունները ըստ շեշտի դրության . . . 85
Ձայնավորների անկումը կամ սղումը բառասկզբում 90
Աճառյանի օրենքը 92
Ձայնավորների երկբարբառացումը 93
Ձայնավորների համակարգային փոփոխությունները 106

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Հայերենի երկբարբառները, հին երկբարբառների պատմական փոփոխությունները 130

Գլուխ առաջին

Հայերենի երկբարբառները 130
Երկբարբառները հին գրական հայերենում 130
Երկբարբառները ժամանակակից հայերենի բարբառներում . . . 150

Գլուխ երկրորդ

Հին երկբարբառների պատմական փոփոխությունները 154
Այ-ի փոփոխությունը 155

Եա-ի փոփոխությունը 162
Աւ-ի փոփոխությունը 171
Ոյ-ի փոփոխությունը 179
Իւ (եւ)-ի փոփոխությունը 187
Իայ (իա), եայ, ւոյ, եաւ եռաբարբառների փոփոխությունները . . 196

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Հայերենի բաղաձայնները և նրանց պատմական փոփոխությունները . . . 204

Գլուխ առաջին

Ձայնորդները 205
Լ : Ղ 206
Մ : Ն 217
Ռ : Ր 219
Յ 224
Ի 231

Գլուխ երկրորդ

Հայերենի շփականները 241
Ժ : Շ 241
Զ : Ս 244
Խ : (Ղ) 251
Վ : (Ֆ) 257

Գլուխ երրորդ

Հայերենի պայթականները և պայթաշփականները 279
Հայերենի պայթական ու պայթաշփական բաղաձայնների ընդհանուր բնութագիրը 281
Հայերենի պայթական ու պայթաշփական բաղաձայնների պատմական փոփոխությունները 284
Ենթալեզվային պայթականների քմայնացումը 310

Գլուխ չորրորդ

Հնչյունափոխական այլ երևույթներ 313
Հնչյունների հավելում 314
Հավելական ճ||ճ՛ 314
Հավելական ն 322
Հնչյունների անկում 330
Ն-ի անկումը 330
Ր-ի անկում 333
Հնչյունների բարդեցում և պարզեցում 335
Վերջաբանի փոխարեն 341
Համառոտագրություններ 344

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴԱՎԹԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն

Հրատ. խմբագիր Ս. Ա. Անաստասյան
Գեղ. խմբագիր Հ. Ն. Գործակալյան
Նկարիչ Լ. Գ. Ղազարյան
Տեխ. խմբագիր Լ. Կ. Հարությունյան
Սրբագրիչ Ռ. Ս. Մանուկյան

ИБ № 655

Հանձնված է շարվածքի 21. 05. 1982 թ.։ Ստորագրված է տպագրության 15. 11. 1982 թ.։ ՎՖ 03205։ Չափը 60×90 1/16, թուղթ, № 1։ Տառատեսակ «գրքի սովորական», հարթ տպագրություն։ Տպագր. 21,75 մամուլ։ Հրատ.-հաշվարկ 21,13 մամուլ։ Տպաքանակ 1500։
Պատվեր № 687։ Հրատ. № 5741։ Գինը 3 ռ. 45 կ.։
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ։
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24 г.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Բարեկամության փ., 24։
Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24.

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
31	վ. 11	սկսում է կիրառել	սկսվում է կիրառվել
49	ն. 5	մ,	գʼöմ,
51	վ. 21	«Աճառյանի օրենքը»:	«Աճառյանի օրենքը»):
51	ն. 17	պես)	պես,
52	վ. 19	ու>ու	ու>ու̈
52	ն. 15	ձու<ձուն	ձու ~ ձուն
80	վ. 3	սէր-սիրոյի (ն)	սէր-սիրոյ (ն)
110	վ. 16	սանդ<սունդ, վանք<վունք, տանձ<տունձ	սանդ>սունդ, վանք>վունք, տանձ>տունձ
117	ն. 11	նա՝	նաև
119	վ. 12	երեկ>էրեկ,	երէկ>էրէկ,
166	վ. 12	եա<ե	եա>ե
224	վ. 12	ույօխ>	ույօխ,
267	ն. 13	ցուցակներ	ցուցականներ
300	ն. 16	հուն. καδολικος	հուն. καθολικος
300	ն. 13	արաբ. ṣaδra	արաբ. ṣaθrā
302	վ. 2	ապաշնչեղացման	ապաձայնեղացման

A II
68644